



Տ Ա Ր Ե Կ Ա Ն Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ,
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ԵՐԵՎԱՆ 2016

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, լիարժեք համապատասխանելով Մարդու իրավունքների ազգային հաստատությունների վերաբերյալ Փարիզյան սկզբունքներին, ունի «A» կարգավիճակ, ինչը վկայում է Պաշտպանի ինստիտուտի անկախության և անկողմնակալության բարձր մակարդակի մասին: Ավելին, Պաշտպանը հանդիսանում է նաև բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմ, որն իրակացնում է պլանային և արտապլանային այցելություններ փակ և կիսափակ հաստատություններ:

Քաղաքացիների բազմաթիվ դիմումներ, ահազանգերը, վերականգնված իրավունքներն ու պետական մարմինների հետ համագործակցության արդյունքում դրական լուծված գործերը, իրավապաշտպանների և փաստաբանների կողմից տրված գնահատականները վկայում են տարեց տարի Պաշտպանի ինստիտուտի դերի և դրա նկատմամբ վստահության մակարդակի բարձրացման մասին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ իր գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումն արտացոլում է 2015 թվականին արձանագրված, ինչպես նաև Պաշտպանի՝ նախորդ տարիներին հրապարակած տարեկան զեկույցներում բարձրաձայնված և 2015 թվականի դրությամբ լուծում դեռևս չստացած խնդիրները: Սույն հաղորդումը կազմվել է Պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր բողոքների, իրավասու պետական մարմինների տրամադրած պարզաբանումների, օրենսդրության վերլուծության, մամուլի արժանահավատ և չհերքված հրապարակումների, միջազգային և տեղական կազմակերպությունների, իրավապաշտպանների զեկույցների, տրամադրած նյութերի, ինչպես նաև վերջիններիս հետ հարցազրույցների արդյունքում ստացված և այլ տեղեկությունների հիման վրա:

Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականների ու ամփոփումների համար հիմք ծառայած առանձին բողոքներ կամ կոնկրետ աղբյուրներ որոշ դեպքերում վկայակոչված չեն՝ հաշվի առնելով անձնական տվյալների գաղտնիությունը, ինչպես նաև Պաշտպանին և աշխատակազմի աշխատակիցներին տեղեկություններ տրամադրած անձանց՝ իրենց տվյալները չհրապարակելու ցանկությունը:

Ընթացիկ տարում մարդու իրավունքների պաշտպանության որոշ ոլորտներում գրանցվել է դրական առաձընթաց, արձանագրվել են մի շարք ձեռքբերումներ, վերականգնվել են բազմաթիվ անձանց իրավունքներ, ինչի մեջ նշանակալից է եղել նաև Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը: Այնուամենայնիվ, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015 թվականին արձանագրվել են երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց, զինձառայողների, ազատությունից զրկված անձանց, կանանց, սոցիալապես անապահով և այլ անձանց իրավունքների խախտումներ:

Հասարակությանը շարունակել են անհագստացնել հավաքների ազատության անհամաչափ սահմանափակումների, արդար դատաքնության, խոսքի ազատության, անձնական ազատության իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման, կրթության իրավունքի իրացման, ընտանեկան բռնության, սելեկտիվ աբորտների, խտարականության դրսևորումների, սոցիալական ոչ բավարար երաշխիքների և այլ իրավունքների հետ կապված խնդիրները:

Հաղորդման մեջ ամփոփված մարդու իրավունքների խախտումները և արձանագրված դրական զարգացումներն օբյեկտիվ պատճառներով ներկայացված են ոչ սպառիչ ցանկով: Որպես կանոն հաղորդման մեջ զետեղվել են առավել հաճախ հանդիպող և համակարգային բնույթ կրող խնդիրները և աշխատակազմի գնահատմամբ առավել հատկանշական դրական զարգացումները:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմի աշխատակիցները պատրաստ են շարունակել համագործակցությունը բոլոր իրավասու մարմինների հետ սույն հաղորդման մեջ բարձրացված բոլոր խնդիրներին գործնական և օրենսդրական լուծումներ տալու ուղղությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I ԲԱԺԻՆ . ԻՐԱՎԱՊԱՀ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅՈՒՆ.....	6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	17
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	39
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ..	46
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ	57
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ	57
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.....	82
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	93
II ԲԱԺԻՆ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	97
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	97
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	107
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	130
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	143
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.....	148
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	154
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	165
III ԲԱԺԻՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ.....	169
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	169
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	176
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	192
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	195
IV ԲԱԺԻՆ. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	201
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	201
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ.....	204
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ.....	215
V ԲԱԺԻՆ. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ.....	231
VI ԲԱԺԻՆ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆ ԸՍՏ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ.....	241

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	241
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	249
ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	267
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	273
ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	282
ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	295
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	305
ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ	310
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	317
VII ԲԱԺԻՆ. ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ (ԲԿԱՄ) ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ	323

Ի ԲԱԺԻՆ . ԻՐԱՎԱՊԱՀ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ դատախազության (այսուհետ՝ Դատախազություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ: Դատախազության գործունեության ոլորտում դրական զարգացումներ արձանագրված չեն, քանի որ 2015թ.-ի հարցման համար Դատախազության կողմից չի տրամադրվել համապատասխան պատշաճ տեղեկատվություն:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Մի շարք դեպքերում անձը, որպես վկա հայտնած տեղեկությունների հիման վրա կարճ ժամանակ անց նույն գործով ներգրավվել է որպես կասկածյալ կամ մեղադրյալ, ինչի պատճառով խախտվել են վերջինիս լռելու իրավունքը, ինչպես նաև անմեղության կանխավարկածը:

Գործնականում դեռևս չի վերացել այն պրակտիկան, երբ անձի՝ որպես վկա հայտնած տեղեկությունների հիման վրա վերջինս նույն կամ մեկ այլ գործով ներգրավում է որպես կասկածյալ կամ մեղադրյալ: Նշված խնդրին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից անդրադարձ է կատարվել ինչպես 2013թ.-ի, այնպես էլ 2014թ.-ի զեկույցներում՝ նշվելով, որ նման պրակտիկան խախտում է անձի տարբեր իրավունքներ, այդ թվում՝ լռելու իրավունքը, ինչպես նաև անմեղության կանխավարկածը: Այնուհանդերձ, 2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն իրենց գործառույթներն իրականացնելիս կրկին արձանագրել են նույնանման խախտումներ:

Նշված պրակտիկայի առկայության մասին բարձրաձայնել են նաև մի շարք իրավաբաններ, իրավապաշտպաններ, փաստաբաններ: Օրինակ, դեպքերից մեկով ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանը զանգահարել է Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ և հայտնել, որ դատախազի որոշմամբ ապօրինաբար ձերբակալվել է քաղաքացին, և հայտնել Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջամտության անհրաժեշտության մասին: Պարզվել է, որ քաղաքացին հարուցված քրեական գործով ներգրավված է եղել որպես վկա, այնուհետև առանց համապատասխան ծանուցագիր ստանալու, բերման է ենթարկվել և ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով: Մտահոգիչ է, սակայն, որ դատախազի կողմից տվյալ գործողությունները գնահատվել են իրավաչափ:

Անձր, որը ստացել վկայի դատավարական կարգավիճակ պարտավոր է տալ ճշմարտացի ցուցմունքներ՝ հայտնել գործով իրեն ողջ հայտնի դարձածը, ինչպես նաև պատասխանել առաջադրված հարցերին¹: Մինչդեռ, մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձն իրավունք ունի, օրինակ, հրաժարվել ցուցմունքների տալուց²: Սակայն այն դեպքերում, երբ անձր վկայի կարգավիճակում, այդ թվում՝ հարկադրանքի կամ այլ մեթոդների կիրառման արդյունքում, տալիս է ցուցմունք, և դրանք օգտագործվում են վկային մեղադրանք առաջադրելու նպատակով, ապա այն կարող է գնահատվել որպես լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի³, ինչպես նաև անմեղության կանխավարկածի⁴ խախտում: Գործնականում ստացվում է այնպես, որ անձր, փաստացի չօգտվելով մեղադրյալի համար օրենքով սահմանված իրավունքներից, ցուցմունք տալով վկայի կարգավիճակում, հայտնում է տեղեկություններ, որոնք հետագայում դրվում են նույն անձին մեղադրանք առաջադրելու հիմքում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) բազմաթիվ գործերով վճիռներում անդրադարձել է կասկածյալի և մեղադրյալի՝ լռելու և ինքն իր դեմ վկայություն չտալու իրավունքին: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը նշել է, որ անձի լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքի խախտմամբ ձեռք բերված ապացույցները չեն կարող դրվել մեղադրանքի հիմքում և օգտագործվել որպես ապացույց՝ անձի մեղավորությունը հաստատելու համար: Ավելին, լռելու և ինքն իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը պետք է ուղղված լինի նրան, որ «անձը չվերածվի իր իսկ դատապարտման զենքի»⁵: Տվյալ վճիռների վերլուծությունը ցույց է տալիս նաև, որ նույնիսկ այն դեպքում, երբ անձը (օրինակ՝ վկան) կամովին է հայտնել իրեն հայտնի տեղեկությունները, այդ թվում՝ իր դեմ, դրանք ապացույց համարվել չեն կարող, եթե վկայում են այդ անձի հանցագործության կատարման մասին⁶:

Այսպիսով, անձի՝ վկայի կարգավիճակում հայտնած տեղեկությունների հիման վրա վերջինիս կարճ ժամանակ անց որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու պրակտիկան համահունչ չէ ՄԻԵԴ վերոնշյալ վճիռների և ներպետական օրենսդրության հետ:

Մտաշարկ. քացառել որպես վկա անձի հայտնած տեղեկությունների հիման վրա վերջինիս նույն կամ մեկ այլ գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավելու պրակտիկան:

¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 86

² ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդվածներ 63, 65

³ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 86

⁴ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 18

⁵ Մաունդերսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, 1996թ. դեկտեմբերի 17-ի վճիռ, զանգատ թիվ 19187/91, կետեր 68, 71 և Բրուսկոն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռ, 2010թ. հոկտեմբերի 14-ի վճիռ, զանգատ թիվ 1466/07, կետեր 44 և 50

⁶ Ալեքսանդր Զայչենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիռ, 2010թ. հունիսի 28-ի վճիռ, զանգատ թիվ 39660/02, կետ 38

2. Դատախազության՝ հետաքննության և նախաքննության մարմինների գործողությունների թերի հսկողության արդյունքում մի շարք դեպքերում չի ապահովել քրեական գործերով պատշաճ քննության իրականացումը, հաղորդումների քննարկման ժամկետի պահպանումը, ինչպես նաև դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկի կայացումը:

Դատախազությունը, որպես մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմին⁷, արդյունավետ կերպով չի բացառել ՀՀ ոստիկանության, ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից տարբեր դատավարական և քննչական գործողությունները խախտումներով իրականացնելու դեպքերը⁸: Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր և դիմում-բողոքներ, որոնց կապակցությամբ դիմում-բողոքներում ներկայացված տեղեկությունների, ստացված պարզաբանումների, ինչպես նաև քրեական գործի նյութերի ուսումնասիրության արդյունքում կայացրել է նաև խախտման որոշումներ:

Ուսումնասիրված դեպքերից մեկով պարզվել է, որ Դատախազության աշխատակիցների գործողությունների (անգործության) հետևանքով խախտվել են քաղաքացու՝ իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության⁹, ինչպես նաև պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքները¹⁰: Այսպես, քաղաքացին դիմում էր ներկայացրել դատախազին, որն էլ ուղարկվել է ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին՝ դիմումի հիման վրա նյութեր նախապատրաստելու համար: Սակայն հետագայում որոշում է կայացվել նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին: Մտահոգիչ է, որ տվյալ դեպքում հետաքննիչի կողմից չէին ձեռնարկվել հնարավոր բոլոր միջոցները գործի հանգամանքների հետազոտման բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար: Մասնավորապես, նյութեր նախապատրաստելու ընթացքում անդրադարձ չի կատարվել այն հարցին, թե ինչու է համայնքի ղեկավարը պաշտոնեական փաստաթղթի մեջ ապատեղեկատվություն ներկայացրել, սակայն, այդ հանգամանքին չի տրվել համապատասխան իրավական գնահատական հետաքննություն իրականացնող մարմնի կողմից:

Բացի այդ, մեկ այլ դիմումում քաղաքացին ներկայացրել է գրավոր տեղեկանքներ Դատախազություն (ընթերականների կողմից ներկայացված) և պնդել, որ ինչպես ինքը, այնպես էլ ընթերականները հստակ հիշում են, որ դեպքի վայրի

⁷ՀՀ Սահմանադրություն, հոդված 176

⁸Մանրամասն տե՛ս «ՀՀ կառավարության առընթեր ՀՀ ոստիկանություն», «ՀՀ քննչական կոմիտե», «ՀՀ հատուկ քննչական ծառայություն» գլուխներում

⁹ՀՀ Սահմանադրություն, հոդված 61

¹⁰ՀՀ Սահմանադրություն (25.11.2005թ.-ի խմբագրություն), հոդված 18

զննությունը կատարվել է քրեական գործի հարուցումը մերժելուց հետո: Սակայն վերոհիշյալ հանգամանքները նույնպես ուսումնասիրության առարկա չեն դարձել և այդ ուղղությամբ քննություն չի իրականացվել՝ դրանք հաստատելու կամ հերքելու ուղղությամբ:

Նշենք, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները¹¹: Հիշյալ նորմի վերլուծությունից բխում է, որ հետազոտման բազմակողմանիությունը ենթադրում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների և թույլատրելի ապացույցների պարզում և վերհանում՝ նրանց հատուկ հատկանիշներով, որակներով, կապերով ու հարաբերություններով: Դա կնպաստի հնարավոր բոլոր վարկածների ժամանակին առաջադրմանը և մանրակրկիտ ստուգմանը, որը որոշում է ապացուցողական գործունեության ուղղությունը, կանխում միակողմանիությունն ու սուբյեկտիվությունը, ապահովում ապացուցման ճիշտ ընթացքը:

Իսկ հետազոտությունների լրիվությունը գործով բացահայտման ենթակա բոլոր հանգամանքների պարզաբանման և ապացույցների այնպիսի համակցության ձևավորման մեջ է, որը թույլ է տալիս լուծել այդ խնդիրը: Այսպիսով, քաղաքացու դիմումում ներկայացված դեպքով առկա են եղել պարզաբանման ենթակա հարցեր, որոնց լուծման համար անհրաժեշտ էր հարուցել քրեական գործ, կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, որից հետո նոր միայն կայացնել վերջնական որոշում:

Բացի այդ, ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների կողմից մի շարք դեպքերում չի պահպանվել հանցագործության մասին քաղաքացիների հաղորդումների քննարկման օրենսդրությամբ սահմանված կարգը. հանցագործությունների մասին ստացված հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում¹²: Այդուհանդերձ, ստացված ահազանգերի/դիմում-բողոքների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի ներկայացրած տվյալների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ օրենսդրությամբ սահմանված կարգը հաճախ չի պահպանվել ՀՀ ոստիկանության և ՀՀ քննչական կոմիտեի ծառայողների կողմից: Նշվածի համատեքստում հատկանշական է, որ 2015թ.-ի ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից գրանցվել է 56 նման դեպք: Ստացվում է այնպես, որ Դատախազությունը նմանատիպ խախտումների դեպքերով չի իրականացրել

¹¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 17 մաս 3

¹² ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 180

մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ պատշաճ հսկողություն:

Մեկ այլ դիմում-բողոքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հետաքննության մարմինը, հաղորդում ընդունելով քաղաքացուց և այդ առթիվ նախապատրաստելով նյութեր, դրանց ընթացքն օրենքով սահմանված 10-օրյա ժամկետի փոխարեն լուծել է շուրջ 51 օր անց: Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված է, որ ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում¹³: Հետևաբար, վերոնշյալ նորմի ուժով՝ հիմք ընդունելով նաև այն հանգամանքը, որ նյութերի նախապատրաստման ժամկետը երկարացնելու հնարավորություն օրենսդիրը որևէ պաշտոնատար անձի չի վերապահել, նյութերի նախապատրաստման 10-օրյա ժամկետը լրանալուց հետո իրականացված դատավարական գործողությունները պետք է ճանաչվեն անվավեր, սակայն հսկող դատախազի կողմից համապատասխան քայլեր չեն ձեռնարկվել նշվածի կապակցությամբ: Արդյունքում՝ Մարդու իրավունքների պաշտպանը խախտում հայտնաբերելու մասին որոշում է կայացրել Դատախազության գործողությունների (անգործության) կապակցությամբ, հաշվի առնելով այն, որ վերջինիս սահմանադրորեն ամրագրված գործառույթներից է մինչդատական քրեական վարույթի նկատմամբ հսկողության իրականացումը:

Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մի շարք ահազանգերի/բողոքների ուսումնասիրությունից բացահայտվել են քրեական վարույթ իրականացնող մարմինների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումներից որևէ մեկը չկայացնելու դեպքեր: Այսինքն, վարույթն իրականացնող մարմինները, ստանալով հանցագործության կատարման վերաբերյալ հաղորդումներ/դիմումներ, չեն կայացրել օրենսդրությամբ նախատեսված որոշումներից որևէ մեկը¹⁴:

2015թ.-ի ընթացքում արձանագրված դեպքերից մեկով Մարդու իրավունքների պաշտպանը խախտում է հայտնաբերել Դատախազության գործողություններում: Այսպես, քաղաքացին դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին և հայտնել, որ դատավորների կողմից «ակնհայտ անարդար վճիռներ» կայացնելու վերաբերյալ դիմում է ներկայացրել Դատախազություն: Նշել է նաև, որ իր դիմումում շուրջ 50 փաստերով հիմնավորել է, որ նշված դատական քննությունների ժամանակ դատարան են ներկայացվել նաև բազմաթիվ կեղծ փաստաթղթեր, որոնք հետագայում դրվել են կայացված վճիռների հիմքում: Սակայն քաղաքացուն Դատախազությունից պատասխանել են, որ դիմումում թվարկված հանցագործությունների մասին տեղեկություններն իր կասկածներն ու ենթադրություններն են, ինչի արդյունքում

¹³ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 174

¹⁴ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 181

դիմումի կապակցությամբ նյութեր չեն նախապատրաստվել և քրեական գործ չի հարուցվել: Նշենք նաև, որ տվյալ դեպքով ՀՀ գլխավոր դատախազությունից Մարդու իրավունքների պաշտպանի գրությամբ բարձրացված հարցի վերաբերյալ որևէ տեղեկություն չի տրամադրվել:

Վերոնշյալ դեպքում Դատախազության կողմից օրենքով սահմանված կարգով հանցագործության մասին տեղեկություն ստանալու յուրաքանչյուր դեպքում պետք է կայացվեր քրեական գործ հարուցելու, քրեական գործ հարուցելը մերժելու կամ հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին որոշում: Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներից մեկում, անդրադառնալով տվյալ դրույթին, հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Հանցագործության մասին հաղորդում, որպես քրեական որպես քրեական գործ հարուցելու առիթ իրենից ներկայացնում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի *գրավոր կամ բանավոր դիմումը քրեական հետապնդում իրականացնող մարմնին*՝ կոնկրետ հանցագործության տարրեր պարունակող նախապատրաստվող կամ կատարած հանցագործության մասին տեղեկատվությամբ: Առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն: Քրեական գործի հարուցման առիթները պետք է բովանդակեն տեղեկություն հանցագործության հատկանիշները մատնանշող տվյալների առկայության մասին: Միայն այս դեպքում դրանք կարող են հիմք հանդիսանալ ստուգելու և քրեական գործ հարուցելու կամ հարուցումը մերժելու որոշում ընդունելու համար:»¹⁵

Հաշվի առնելով ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած վերոհիշյալ իրավական դիրքորոշումը՝ ստացվում է, որ քաղաքացու՝ Դատախազություն ներկայացրած 02.03.2015թ.-ի դիմումն իր մեջ պարունակել է հանցագործության մասին առերևույթ տեղեկություններ, և առկա էին հիմքեր այն որպես հանցագործության մասին հաղորդում ընդունելու ու դրա հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշում կայացնելու համար, սակայն Դատախազության կողմից չի կայացվել տվյալ որոշումներից որևէ մեկը:

Ստացված ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչպես նաև տարբեր գերատեսչությունների տրամադրած պարզաբանումները ցույց են տվել, որ մի շարք դեպքերում հետաքննության և նախաքննության մարմինները չեն ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների հետազոտման բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար, իսկ դատախազի կողմից պատշաճ հսկողություն չի իրականացվել տվյալ գործերով մինչդատական քրեական վարույթի նկատմամբ:

¹⁵ ՀՀ վճռաբեկ դատարան, թիվ ՎԲ-133-07 գործով 2007թ. հուլիսի 13-ի որոշում

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված վերոնշյալ խախտումների վերացման ուղղությամբ Դատախազությունը չի ձեռնարկել որևէ քայլ: Նշյալ խնդիրները հանգեցրել են քաղաքացիների իրավունքների և շահերի, ինչպես նաև քրեական հետապնդում իրականացնող մարմինների առջև արդյունավետ իրավական պաշտպանություն ստանալու իրավունքի խախտումների:

Առաջարկ. վերհանել հաղորդումների քննարկման ժամկետի, դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկը չկայացնելու, ինչպես նաև քրեական գործերով պատշաճ քննություն չիրականացնելու խախտումները, կիրառել պատասխանատվության միջոցներ այդ խախտումները թույլ տված պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հետագայում նման դեպքերը բացառելու նպատակով:

3. 2015թ.-ի ընթացքում կրկին արձանագրվել են դեպքեր, երբ քրեական վարույթն իրականացնող մարմինները չեն ապահովել առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների մնացած անչափահասների և անաշխատունակների խնամքի իրավունքը:

Դեռևս 2014թ.-ից Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել և մինչ օրս չի լուծվել ազատությունը սահմանափակված անձանց հսկողության տակ գտնվողների համար խնամքի ապահովումը, ինչի վերաբերյալ շարունակվել են ստացվել ահազանգեր և դիմում-բողոքներ: Իսկ այն դեպքերում, երբ օրենքի պահանջը կատարվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից, շահառուին տրամադրված գումարը, ինչպես նաև այլ միջոցները բավարար չեն եղել:

Անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին¹⁶:

Մինչդեռ, ստացված ահազանգերը և ուսումնասիրված դիմում-բողոքները վկայում են այն մասին, որ անձանց վերոնշյալ իրավունքը կամ ընդհանրապես չի ապահովվում, կամ տրամադրված միջոցները չեն բավարարում: Այսպես, դիմում-բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ իր ամուսնուն ձերբակալելու հետևանքով ինքը և իր երկու անչափահաս երեխաները մնացել են առանց խնամքի և գոյատևման միջոցների, իսկ գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարույթն իրականացնող մարմինը ոչ մի միջոց չի ձեռնարկել ապահովելու օրենքով սահմանված նշված անձանց խնամքի իրավունքը: Տվյալ նորմը միտված է ապահովելու ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում

¹⁶ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 140, մաս 1

դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Մահմանադրական տվյալ նորմը ենթադրում է նաև, որ պետության պարտավորությունն է հասարակության որոշակի խմբի, օրինակ՝ ձերբակալված, կալանավորված անձանց, խնամքի տակ գտնվող անչափահասների սոցիալական ապահովության ապահովումը:

Տվյալ և այլ խնդիրների վերաբերյալ, որոնք ներկայացված էին 2014թ.-ի Մարդու իրավունքների պաշտպանի Տարեկան զեկույցի Դատախազության բաժնում, Դատախազությունը հայտնել է ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների մշտական հանձնաժողովին, որ վարույթն իրականացնող մարմինը լիազորված չէ որոշելու անչափահասի կամ անաշխատունակ անձին ցուցաբերվող խնամքի, սոցիալական կամ բժշկական օգնության ծավալը կամ չափը, հետևաբար վերջինի ոչ բավարար լինելու համար վարույթն իրականացնող մարմինը որևէ պատասխանատվություն կրել չի կարող: Անհասկանալի է, թե ինչպես է Դատախազությունը նման եզրակացության հանգել, եթե տվյալ դրույթը այդ պարտականությունը դնում է պետության՝ ի դեմս քրեական վարույթ իրականացնող մարմնի վրա:

Չնայած նրան, որ նախկինում Դատախազությունն ընդունել էր օրենսդրական խնդրի առկայությունը, այն է՝ համարժեք իրավական կառուցակարգի բացակայությունը, այնուամենայնիվ, դեռևս ոչ մի քայլ չի ձեռնարկվել վերջինիս կողմից խնդրի կարգավորման ուղղությամբ:

Առաջարկ. հսկողություն իրականացնել մինչդատական քրեական վարույթի նկատմամբ, անձանց խնամքի և գոյատևման միջոցների ապահովման ուղղությամբ, ինչպես նաև իրավասու այլ մարմինների հետ համագործակցելով, օրենսդրորեն սահմանել հստակ մեխանիզմներ, որոնց առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը կարող է արդյունավետ ապահովել անձի խնամքը և գոյատևման միջոցների տրամադրումը¹⁷:

4. Դատախազությունը պատշաճ չի պատասխանել քաղաքացիների ներկայացված հաղորդումներին, դիմումներին, ինչպես նաև չի տրամադրել վերջիններիս բողոքների առնչությամբ տեղեկատվություն՝ սահմանափակելով անձանց տեղեկատվության ազատության իրավունքը: Բացի այդ, օրենքի պահանջների՝ իր ձևով մեկնաբանման արդյունքում, Դատախազությունը օրենքով սահմանված կարգով չի պատասխանել Մարդու իրավունքների պաշտպանի գրություններին:

Դատախազությունը 2015թ.-ի ընթացքում կրկին մի շարք դեպքերում օրենքով սահմանված կարգով չի պատասխանել քաղաքացիների կողմից ներկայացված հաղորդումներին և դիմումներին: Միաժամանակ, բազմաթիվ դեպքերում չի

¹⁷Տե՛ս «ՀՀ արդարադատության նախարարություն» գլխում

տրամադրել Մարդու իրավունքների պաշտպանի և քաղաքացիների կողմից պահանջված տեղեկատվությունը:

Այսպես, ստացված դիմում-բողոքներից մեկի ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ դատապարտյալը բազմիցս գրավոր դիմումներ է հասցեագրել Դատախազություն, սակայն որևէ պատասխան չի ստացել: Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի գրություններին ի պատասխան, Դատախազությունից քաղաքացու հասցեագրված դիմումներն ընթացք տալու հանգամանքը հիմնավորող փաստաթղթերի պատճենները չեն տրամադրվել: Ավելին, մի շարք դեպքերում Դատախազությունը տեղեկությունները Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրելու համար պահանջել է ներկայացնել քաղաքացու դիմում-բողոքը քննարկման ընդունելու մասին Մարդու իրավունքների պաշտպանի որոշման պատճենը, ինչը պահանջելու իրավասություն չունի և միաժամանակ, նման պարտավորություն սահմանված չէ օրենքով:

Դատախազի հիմնական պարտականություններից է սահմանված կարգով ու ժամկետներում առաջարկություններ, դիմումներ և բողոքներ քննության առնելը և դրանց ընթացք տալը¹⁸: Ավելին, դիմումներն ու գրագրությունը պետք է ուսումնասիրվեն և լուծվեն դատախազությունում գրանցվելուց հետո ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում¹⁹:

Միաժամանակ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ ՄԻԵԿ) սահմանել է, որ յուրաքանչյուր ոք պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք ունի, նույնիսկ եթե նրա իրավունքները խախտվել են ի պաշտոնե գործող անձանց կողմից²⁰: Խնդրի կապակցությամբ ՄԻԵԿ-ն այն իրավական դիրքորոշումն է արտահայտել, որ մարդու իրավունքների պաշտպանությունը, որն երաշխավորված է հատկապես ՄԻԵԿ-ի 2-րդ և 3-րդ հոդվածներով, պահանջում է ոչ միայն մարդու իրավունքների խախտումների արդյունավետ քննություն, այլ նաև պետական մարմինների կողմից կոնվենցիոն իրավունքների խախտումների դեմ համապատասխան թե՛ գործնական, թե՛ օրենսդրական երաշխիքներ²¹:

Բացի այդ, ստացված դիմում-բողոքներից մեկով Մարդու իրավունքների պաշտպանին է դիմել քաղաքացին և հայտնել, որ դիմում է ներկայացրել դատախազություն դատական ակտերի հարկադիր կատարման (այսուհետ՝ ԴԱՀԿ) ծառայողի կողմից կատարված խախտումների և հանցագործությունների վերաբերյալ, սակայն, նշվածի կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական

¹⁸«Դատախազության մասին» ՀՀ օրենք, հոդված 42, մաս 1. կետ 5

¹⁹ՀՀ դատախազության կանոնակարգ, հոդված 251

²⁰Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, հոդված 13

²¹Հուսեյն (Աբու Ջաֆարահ) ընդդեմ Լեհաստանի գործով, 2015թ. փետրվարի 16-ի վճիռ, գանգատ թիվ 7511/13, կետ 492

ծառայությունից տեղեկացրել են, որ նույն հանգամանքների վերաբերյալ քաղաքացու դիմումի հիման վրա նախապատրաստվել են նյութեր, որի արդյունքում որոշում է կայացվել

ԴԱՀԿ ծառայողի արարքում հանցակազմի բացակայության հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին, ինչի հետևանքով ՀՀ հատուկ քննչական ծառայությունը քաղաքացու դիմումը, որպես հանցագործության մասին հաղորդում, չի ընդունել և դրա հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշում չի կայացրել:

Այնինչ, քաղաքացին Դատախազություն ներկայացված դիմումներով բողոք է ներկայացրել հենց ՀՀ հատուկ քննչական ծառայության գործողությունների ու կայացված որոշման դեմ, սակայն իր բողոքների կապակցությամբ Դատախազությունից որևէ պատասխան չի ստացվել, իր ներկայացրած բողոքների վերաբերյալ համապատասխան որոշում չի կայացվել, այլ միայն բողոքի կապակցությամբ կրկին ՀՀ հատուկ քննչական ծառայությունից ստացել է նույնաբովանդակ պատասխան:

Այսպես, քաղաքացին ՀՀ գլխավոր դատախազին՝ որպես մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող մարմնի, բողոք է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության գործողությունների դեմ, մինչդեռ իր բողոքները չեն քննարկվել և դրանց կապակցությամբ համապատասխան որոշումներ չեն կայացվել: Ավելին, քաղաքացու բողոքն ուղարկվել է այն մարմնի քննարկմանը, որի գործողությունները բողոքարկվում էին:

Մինչդեռ, քրեական վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է բողոքի վերաբերյալ ընդունել պատճառաբանված որոշում, որի մասին տեղյակ է պահվում բողոք տված անձին²²: Բացի այդ, արգելվում է քննարկման համար դիմումն ուղարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին, ում որոշումը կամ գործողությունը (անգործությունը) բողոքարկվում է²³:

Նշենք նաև, որ մի շարք դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանի գրություններին ի պատասխան՝ Դատախազությունը, անհիմն մեկնաբանելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, Մարդու իրավունքների պաշտպանին չի տրամադրել գրություններով բարձրացված մի շարք հարցերի վերաբերյալ պարզաբանումներ և պահանջված նյութեր:

Մինչդեռ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձինք պարտավոր են իրենց իրավասությանը վերաբերող պահանջվող նյութեր և փաստաթղթեր, ինչպես նաև բողոքը քննարկելու համար

²²ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հոդված 103, մաս 10

²³ՀՀ դատախազության կանոնակարգ, կետ 224

անհրաժեշտ ցանկացած տեղեկություն ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանին անվճար և անարգել²⁴:

Այսպիսով, Դատախազությունը ոչ բոլոր դեպքերում է պատշաճ պատասխանել քաղաքացիների դիմումներին/հաղորդումներին, որոշ դեպքերում համապատասխան քայլեր չի ձեռնարկել տրամադրման ենթակա տեղեկատվությունը քաղաքացիներին փոխանցելու ուղղությամբ, ինչով էլ խախտվել է տեղեկատվության ազատության և քաղաքացիների իրավական պաշտպանության իրավունքները:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել Դատախազության գործունեության թափանցիկությունն ապահովելու համար, միաժամանակ, օրենքով սահմանված կարգով, պատշաճ պատասխանել քաղաքացիներին, ինչպես նաև տրամադրել վերջիններիս բողոքների առնչությամբ անհրաժեշտ տեղեկատվությունը:

²⁴«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, հոդված 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Նախարարության նախաձեռնությամբ ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է «Խոշտանգումը» վերնագրով 309.1-րդ հոդվածով՝ խոշտանգման կոնվենցիոն հատկանիշներն արտացոլող բովանդակությամբ: Նշված փոփոխությունները կապահովեն լիարժեք համապատասխանություն խոշտանգման՝ ներպետական օրենսդրությամբ և Կոնվենցիայով սահմանված բնորոշումների միջև, ինչ իր հերթին կնպաստի Եվրոպական դատարանի համապատասխան վճիռների կատարման հարցում զգալի առաջընթացի ապահովմանը: Կատարված փոփոխություններն իրավական բնույթի որակական նոր հիմքերի վրա կդնեն պաշտոնատար անձանց կողմից բռնությունների գործադրման դեմ պետության կողմից տարվող քրեական քաղաքականությունը:

2. Քայլեր են ձեռնարկվել մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից հիմնարար նշանակություն ունեցող մի շարք իրավական ակտերի կատարելագործման ուղղությամբ: Այսպես, 2015 թվականի օգոստոսի 6-ին շրջանառության մեջ է դրվել ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը: Ներկայումս տարվում են շահագրգիռ մարմինների կողմից ստացված կարծիքների ամփոփման և նախագծի լրամշակման աշխատանքները: Իսկ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը՝ ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում քննարկումների հիման վրա լրամշակվել է և ուղարկվել ՀՀ Ազգային ժողով, որտեղ ընդգրկվել է ՀՀ ԱԺ լիազումար նիստերի օրակարգ: Բացի այդ, ՀՀ-ում քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումների ամբողջականության ապահովման նպատակով Նախարարության կողմից նախաձեռնվել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի մշակման գործընթաց, որի նպատակով ստեղծվել է հանձնաժողով և աշխատանքային խումբ: Արդյունքում մշակվել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի հայեցակարգի նախագիծը, ինչի հիման վրա այժմ մշակվում է օրենսգրքի նախագիծը:

3. Միջազգային և ներպետական փորձագետների աջակցությամբ մշակվել են «Պրոբացիայի մասին» և «Պրոբացիայի պետական ծառայության մասին» ՀՀ

օրենքների և հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծեր: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի հենքի հիման վրա Երևանի Շենգավիթ վարչական շրջանում և Վանաձորում մեկնարկել են պրոբացիոն ծառայության փորձարկումները:

4. Դեռևս 2014 թվականի տարեկան զեկույցում Պաշտպանը անդրադարձել էր քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց՝ փաստաբանին տեսակցելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման խնդրին: 2015թ.-ին «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, որն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին, սահմանվել են առկա խնդիրները կարգավորող մեխանիզմներ, օրինակ՝ պաշտպանի և պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանի հետ տեսակցության հնարավորությունը ոչ աշխատանքային օրերին, կալանավորված անձի տեսակցությունը պաշտպան չհանդիսացող փաստաբանի հետ: Նոր կարգավորումներն ուղղված են գործնականում առկա այն խնդիրների լուծմանը, որոնք խոչընդոտում են քրեական վարույթի բնականոն ընթացքը և սահմանափակում ազատությունից զրկված անձի սահմանադրական հիմնարար իրավունքը՝ միևնույն ժամանակ ապահովելով քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեությունն ու քրեական գործի քննության ընթացքում հանրային շահի պաշտպանությունը:

5. ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ իրականացվել է «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրվել է օրենքի հետ առնչված երեխաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման գործընթացը և ընթացակարգերը, իրականացվել է քրեական օրենսդրության վերլուծություն, որի հիման վրա կազմվել է քրեական արդարադատության ոլորտում երեխաների իրավունքների պաշտպանության և արդարադատության մատչելիության բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթ՝ ինչպես գործող օրենսդրության, այնպես էլ նախագծերի շրջանակներում: Ինչպես նաև Նախարարության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի համանախագահությամբ ստեղծվել է անչափահասների արդարադատության խորհուրդ:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Օրենսդրությամբ դեռևս երաշխավորված չեն հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների և արդար դատաքննության իրավունքները:

Դեռևս 2014 թվականի տարեկան զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել էր այն խնդրին, որ օրենսդրական բացթողումների պատճառով հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սահմանադրորեն ամրագրված՝ դատական պաշտպանության իրավունքը լիարժեք պաշտպանված չէ:

Այսպես, օրենսդրությամբ սահմանված է, որ անձի գործունակության հարցը քննելիս քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը²⁵: Վերոգրյալից հետևում է, որ անձի դատաքննության մասնակցության հարցը լուծվում է դատարանի հայեցողությամբ: Նախկինում բարձրացված խնդրում նշվել էր նաև, որ «առողջական վիճակը թույլ է տալիս» դրույթի բովանդակության բացահայտված չլինելու արդյունքում, այն հանգեցնում է տարատեսակ մեկնաբանությունների: Խնդրահարույց դրույթները գործնականում հնարավոր է կիրառվեն այնպես, որ անձի համար սահմանափակվի դատարանի մատչելիությունը: Տվյալ խնդրի առկայության հետևանքով շարունակաբար անհամաչափորեն սահմանափակվել են անձի արդար դատաքննության իրավունքը, ինչպես նաև դատավարության կողմերի հավասարության և մրցակցային դատավարության հիմնարար սկզբունքները: Միննույն ժամանակ, օրենսդրության համաձայն՝ անձի գործունակության վերականգնման հարցով դատարան իրավունք ունեն ղիմելու միայն անձի խնամակալը, ընտանիքի անդամը կամ հոգեբուժական հաստատության տնօրինությունը²⁶: Տվյալ կարգավորման արդյունքում ստացվում է, որ դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձը չի կարող անձամբ կամ իր կողմից ընտրված ներկայացուցչի միջոցով ղիմում ներկայացնել դատարան իր գործունակությունը վերականգնելու հարցով:

Ելնելով խնդրի կարևորությունից՝ Պաշտպանը ղիմում էր ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով խնդրահարույց դրույթների սահմանադրականությունը: ՀՀ սահմանադրական դատարանը, ուսումնասիրելով գործը, 2015թ. ապրիլի 7-ին կայացրել է որոշում, համաձայն որի դատական պաշտպանության, դատարանի մատչելիության, ներառյալ դատական ակտերը բողոքարկելու՝ անձի իրավունքները պետք է հավասարապես վերաբերելի լինեն նաև այն անձանց, ում գործունակության հարցը քննվում է դատարանում: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ ղիտարկվող հիմնահարցերի առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա է իրավակարգավորման բաց, ինչը համակարգային լուծում է պահանջում և կարող է հաղթահարվել միայն ՀՀ Ազգային ժողովի կողմից՝ օրենսդրական համարժեք փոփոխություններ կատարելու միջոցով²⁷:

Առաջարկ. մշակել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ առկա կարգավորումները ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1197 որոշմանը համապատասխանեցնելու նպատակով:

²⁵ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 171

²⁶ ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգիրք, հոդված 173

²⁷ ՀՀ սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի թիվ ՄԴՈ-1197 որոշում, կետ 9

2. Օրենսդրությամբ սահմանված բարձր պետական տուրքի դրույքաչափը և որոշ դեպքերում, դրանց վճարման անհիմն պահանջները հանգեցրել են դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակմանը:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով (Օրենք) են սահմանված դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը²⁸: Միաժամանակ, սահմանված է, որ դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումի համաձայն տրվում են բազային տուրքի 50 տոկոսի, իսկ պատրաստված յուրաքանչյուր էջի համար՝ բազային տուրքի 15 տոկոսի չափով վճարում կատարելու դեպքում²⁹:

Արդյունքում՝ դատական ակտի պատճենահանված մեկ էջի համար անձը պետք է վճարի 150 դրամ պետական տուրք այն դեպքում, երբ մեկ էջի պատճենահանումը կամ տպումը մասնավոր կազմակերպությունում կազմում է միջինում ընդամենը 10-40 դրամ: Նման կարգավորումներով սահմանված անհամաչափ բարձր պետական տուրքի չափը խնդրահարույց է անձանց համար դատարանների մատչելիության իրավունքի տեսանկյունից, ինչը բարձրաձայնվել էր նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2014թ. տարեկան զեկույցում ևս: Մասնավորապես, այս առումով առավել խոցելի վիճակում են հայտնվում սոցիալապես անապահով անձինք, ում համար նման չափի պետական տուրք վճարելու պահանջը սահմանափակում է դատարանի մատչելիության իրավունքը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (ՄԻԵԴ) իր նախադեպային վճիռներում շեշտել է, որ օրենսդրական կարգավորումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ խեղաթյուրվի այդ իրավունքի բուն էությունը³⁰: Մասնավորապես, ՄԻԵԴ-ը դատարանի մատչելիության իրավունքի պաշտպանվածության հարցը քննելիս էական հանգամանքներ է համարել տուրքի չափը, տվյալ դեպքում դիմումատուի՝ այն վճարելու փաստացի հնարավորությունը և դատավարության կոնկրետ փուլը³¹:

Այնինչ, վերոնշյալ կարգավորումների արդյունքում անձինք պարտավոր են վճարել անհամաչափ բարձր տուրք, և այն վճարելու անհնարինության դեպքում զրկվում են իրենց դատավարական իրավունքները պատշաճ իրացնելու հնարավորությունից:

Միաժամանակ, դեռևս չի կարգավորվել 2014թ.-ի Տարեկան զեկույցում

²⁸«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 9

²⁹«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 9

³⁰«Պայքար և Հաղթանակ» ՄՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործով վճիռ, 2007թ. դեկտեմբերի 20-ի վճիռ, գանգատ թիվ 21638/03, կետ 44

³¹ Տե՛ս նույն տեղը, կետ 48

բարձրաձայնված խնդիրը, որ դատական գործերից փաստաթղթերի պատճենների (կրկնօրինակների) տրամադրման համար ներկայացվել է պետական տուրքի վճարման ոչ իրավաչափ պահանջ: Ընդ որում, որևէ տարբերակում չի դրվել, թե պահանջվող փաստաթղթերը վերաբերում են դատարանի վճռին, դատավճռին, դատարանի որոշմանը, հայցադիմումին կից փաստաթղթերի պատճեններին, թե քրեական գործի այլ նյութերին³²: Մինչդեռ, Օրենքի համաձայն՝ պետական տուրքը գանձվում է դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար³³: Բարձրացված խնդրի կապակցությամբ նախկինում արդեն իսկ նշվել էր, որ դատական գործում առկա այլ նյութերի պատճենների տրամադրման համար Օրենքի շրջանակներում չսահմանված դրույքաչափերով պետական տուրքի գանձումը իրավաչափ չէ և ուղղակիորեն չի բխում օրենքի պահանջներից: Հետևաբար, պետական տուրքը պետք է գանձվի բացառապես դատարանի վճռի, դատավճռի, դատարանի որոշման պատճենի, հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենների և դատական նիստի համակարգչային ձայնագրման կրիչի տրամադրման համար³⁴:

Վերոգրյալ խնդրի կապակցությամբ Նախարարությունը 2015 թվականի հուլիսի 17-ի թիվ 02/19.3/8525-15 գրությամբ հայտնել է, որ իր կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և առաջադրված խնդիրները կկարգավորվեն նախագծին կից փաթեթում ներառվող «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով:

Առաջարկ. սահմանել պետական տուրքի դրույքաչափերի ողջամիտ չափեր, միաժամանակ, քննարկել և անհրաժեշտության դեպքում մշակել դատական գործի բոլոր փաստաթղթերի տրամադրման համար փաստացի կատարված ծախսերի գանձման կարգ:

3. Համապատասխան օրենսդրական կարգավորումների բացակայության պատճառով արգելանքի վերցված անձանց խնամքի տակ գտնվող անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք չեն օգտվել պետության կողմից խնամքի և գոյատևման միջոցների ապահովման երաշխիքից:

Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2015թ.-ին Պաշտպանը ստացել է դիմում-

³²Մանրամասն տե՛ս ԲԿԱԿ զեկույցում

³³ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք, հոդված 7

³⁴ Նույն տեղում, հոդված 9

բողոքներ, որ քրեական վարույթ իրականացող պաշտոնատար անձինք գործնականում պատշաճ չեն ապահովել արգելանքի վերցված անձանց հսկողության տակ գտնվողների խնամքի իրավունքը:

Այսպես, անչափահասները, ինչպես նաև անաշխատունակ անձինք, որոնք ծնողին կամ կերակրողին արգելանքի վերցնելու, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի այլ գործողությունների հետևանքով մնացել են առանց հսկողության, խնամքի և գոյատևման միջոցների, ունեն խնամքի իրավունք, որը նշված մարմինը պարտավոր է նրանց ապահովել պետական բյուջեի միջոցների հաշվին³⁵: Իսկ այն դեպքերում, երբ նշված հանգամանքներում հայտնված անձանց տրամադրվել է որոշակի գումար և/կամ այլ միջոցներ, դրանք չեն բավարարել նույնիսկ նվազագույն խնամքի և գոյատևման միջոցների ապահովման համար: Քրեական վարույթն իրականացնող մարմինն իրավունք ունի նաև անչափահաս և անաշխատունակ անձանց հանձնել նրանց ազգականների խնամակալությանը՝ վերջիններիս համաձայնությամբ³⁶:

Տվյալ նորմը միտված է ապահովելու ՀՀ Սահմանադրության 83-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, *խնամքի կարիք ունենալու*, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Նշված դրույթ, որպես պետության որպես պետության պարտավորություն է նախատեսում որոշակի խմբի, օրինակ՝ ձերբակալված, կալանավորված անձանց խնամքի տակ գտնվող անչափահասների սոցիալական ապահովության իրավունքը, որի արդյունքում նման դրույթ է սահմանվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Նախկինում քրեական վարույթ իրականացնող մարմինները պատշաճ չեն ապահովել նման իրավիճակում հայտնված անձանց խնամքի իրավունքը օրենսդրական հստակ մեխանիզմների և կարգավորումների բացակայության պատճառաբանությամբ: Անհրաժեշտ է նաև նշել, որ վերոնշյալ խնդրի կարգավորմանն ուղղված դրույթներ չեն նախատեսվել նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով³⁷: Տվյալ հարցի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ Պաշտպանի բարձրացրած հարցերը հաշվի կառնվեն ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի լրամշակման ընթացքում:

Առաջարկ. գործող օրենսդրությամբ, ինչպես նաև Նախագծով սահմանել հստակ

³⁵ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 140

³⁶ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 140: Համանման կարգավորում առկա է նաև այլ պետությունների օրենսդրություններում: Տես, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրք, հոդված 160, Ուկրաինայի համապատասխան օրենսգրք, հոդված 378 և Վրաստանի քրեական դատավարության օրենսգրք, հոդված 178:

³⁷ՀՀ նոր քրեական դատավարության նախագիծ, հոդված 295

մեխանիզմներ, որոնց առկայության պարագայում վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն կունենա առանց հսկողության մնացած անչափահասներին և անաշխատունակ անձանց պատշաճ ապահովել անհրաժեշտ խնամքով և գոյատևման միջոցներով:

4. Օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում ԴԱՀԿ ծառայության կողմից որոշ դեպքերում հնարավոր չի եղել արգելանք կիրառել պարտապանի գույքի վրա:

Դեռևս 2014 թվականի տարեկան զեկույցում Պաշտպանը անդրադարձել էր Նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության (ԴԱՀԿ) կողմից որոշ դեպքերում հայցի ապահովման միջոցի փոփոխման դատական կարգը չպահպանելու խնդրին: Նշված խնդիրը հանգեցրել էր պարտատիրոջ հայցում առկա նյութական պահանջի կատարման անհնարինությունը: Ստացված բողոքներից մեկի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պարտատերը միջնորդություն է ներկայացրել դատարան հայցի ապահովման միջոց կիրառելու վերաբերյալ, ինչը բավարարվել է դատարանի կողմից: Արդյունքում ԴԱՀԿ ծառայություն է փոխանցվել համապատասխան կատարողական թերթը և պարտապանի գույքի վրա արգելանք է դրվել:

Այսպես, դատարանը՝ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ միջոցներ է ձեռնարկում հայցի ապահովման համար, եթե նման միջոցներ չձեռնարկելը կարող է անհնարին դարձնել կամ դժվարացնել դատական ակտի կատարումը կամ հանգեցնել վեճի առարկա հանդիսացող գույքի վիճակի վատթարացմանը³⁸: Ավելին, դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձի միջնորդությամբ հայցի ապահովման մեկ միջոցը փոխարինել մեկ այլ միջոցով կամ ձևափոխել³⁹: Հարկ է նշել նաև, որ դատարանը նաև վերացնում է հայցի ապահովումը: Բացի այդ, դատարանի կողմից հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճիռ կատարումը⁴⁰: Սակայն գործնականում պարտապանի կողմից ԴԱՀԿ ծառայության հաշվին հայցադիմումում առկա պահանջի գումարը վճարելուց հետո ԴԱՀԿ ծառայությունը վերացնում է հայցի ապահովման միջոցը և ավարտում կատարողական վարույթը⁴¹:

Մինչդեռ, ԴԱՀԿ ծառայությունը տվյալ դեպքերում պետք է առաջնորդվի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հայցի ապահովման միջոցների փոփոխության կատարման կարգով: ԴԱՀԿ ծառայություն նման գործողության արդյունքում պարտատիրոջ կողմից լրացուցիչ գումարի չափով

³⁸ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, հոդված 97, մաս 1, պարբերություն 1

³⁹ Նույն տեղում, հոդված 100

⁴⁰ Նույն տեղում, հոդված 101

⁴¹ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, հոդված 41

արգելանք դնելու վերաբերյալ հայցի ապահովման միջնորդությունն դատարան ներկայացնելու դեպքում որոշ դեպքերում այլևս հնարավոր չէ անձի գույքի և դրամական միջոցների վրա արգելանք տարածել, քանի որ պարտապանն այլևս գույք չի ունենում: Պատճառն այն է, որ ԴԱՀԿ ծառայության կողմից գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքի հանվելուց հետո անձը վաճառում է իր գույքը:

Խնդրի կապակցությամբ Նախարարությունը հայտնել է, որ վերոգրյալ հարցը հստակ կանոնակարգված չէ թե՛ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով, թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, և ելնելով և՛ պահանջատիրոջ, և՛ պարտապանի իրավունքների ու օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից՝ Նախարարությունը պետք է ձեռնարկեր անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ: Սակայն հարկ է նշել, որ 2015 թվականի ընթացքում տվյալ խնդիրը կարգավորող որևէ օրենսդրական փոփոխության նախագիծ Նախարարության կողմից չի ներկայացվել:

Առաջարկ. մշակել օրենսդրական փոփոխություններ, որով հստակ կկարգավորվեն հայցի ապահովման միջոցի փոփոխման մեխանիզմները:

5. ԴԱՀԿ ծառայության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների /անգործության/, իրենց պարտականությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով մի շարք դեպքերում խախտվել են քաղաքացիների իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանը 2015 թվականին ստացել է ԴԱՀԿ ծառայության գործունեության վերաբերյալ մի շարք ահազանգեր և դիմում-բողոքներ, որոնց ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են նաև մարդու իրավունքների խախտումներ:

Այսպես, դիմում-բողոքներից մեկով պարզվել է, որ կատարողական թերթի պահանջների կատարումը 19 ամիս շարունակ չի ապահովվել ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից: Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ դատարանի կողմից տրված կատարողական թերթի համաձայն՝ երեխայի խնամքն ու դաստիարակությունը թողնվել է մորը և բնակության վայրը սահմանվել է վերջինիս մոտ: Այնինչ, և՛ 2014թ.-ի և՛ 2015թ.-ի դատական ակտերով սահմանված ժամկետներում երեխան չի գտնվել մոր խնամքի ներքո:

Միաժամանակ, ԴԱՀԿ ապահովող ծառայության հարկադիր կատարողի կողմից կայացվել են պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու մասին որոշումներ, սակայն յուրաքանչյուր դեպքում պարտապանը որևէ պատճառաբանությամբ չի ներկայացել հարկադիր կատարողի կողմից նշված վայր, ինչի արդյունքում ԴԱՀԿ ապահովող ծառայության հարկադիր կատարողի կողմից կայացված մի շարք որոշումների պահանջները դիտավորյալ չեն կատարվել քաղաքացու կողմից, իսկ հարկադիր կատարողը չի ձեռնարկել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված համապատասխան վարչական պատասխանատվություն միջոցներ: Ավելին, Օրենքի 2-րդ հոդվածի ուժով՝ ԴԱՀԿ-ն ապահովում է «Դատական ակտերի

հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դատական ակտերի հարկադիր կատարումը, իսկ 19-րդ հոդվածի ուժով՝ հարկադիր կատարողի պարտականություններն են՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և իրավական այլ ակտերի պահանջները կատարելը, օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները ճշգրիտ ու ժամանակին կատարելը:

Մեկ այլ դեպքով ԴԱՀԿ ապահովող ծառայության աշխատակիցները չեն ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկում, միաժամանակ քաղաքացու դիմումին չի տրվել պատշաճ պատասխան, ինչի արդյունքում խախտվել են վերջինիս իրավունքները: Մասնավորապես, կատարողական թերթով է բռնազանձում տարածվել պարտապանի բնակարանի նկատմամբ: Կատարողական վարույթի ընթացքում, գույքի բռնազանձման փուլում՝ (հարկադիր իրացման) պարտապանի ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան հարկադիր կատարողի կողմից կիրառված արգելանքը վերացնելու կապակցությամբ, հայցադիմումը ընդունվել է վարույթ, իսկ դատարանի՝ հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը ներկայացվել է ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայություն, սակայն ԴԱՀԿ ապահովող ծառայության հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթը չի կասեցվել: Այնինչ, Օրենքի 37-րդ հոդվածից բխում է, որ երբ հայց է ներկայացվում դատարան գույքը, որի վրա կատարողական թերթով բռնազանձում է տարածվել, արգելանքից հանելու մասին, հարկադիր կատարողն առանց որևէ բացառության պարտավոր է կասեցնել կատարողական վարույթը:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ դիմում-բողոքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԴԱՀԿ ապահովող ծառայության համապատասխան պաշտոնատար անձինք օրենքով սահմանված կարգով և ժամկետներում չեն պատասխանել քաղաքացու փաստաբանի հարցմանը: Ավելին, սահմանված ժամկետներում չպատասխանելու կապակցությամբ լրացուցիչ պահանջվել է կատարողական վարույթի համարը, մինչդեռ փաստաբանի դիմումը պարունակել է համապատասխան կատարողական վարույթի վերաբերյալ բավարար տեղեկություններ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ուժով՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են: Բացի այդ, սովյալ բողոքի կապակցությամբ տրված պարզաբանումները վկայում են, որ ԴԱՀԿ ապահովող ծառայության կողմից ձևական պահանջների պահպանման նպատակով անձը ծանրաբեռնվել է պարտականություններով, որի արդյունքում վերջինս ողջամիտ ժամկետում չի ստացել պատշաճ պատասխան:

Միաժամանակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Նույն օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ, իսկ 2-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի ժամկետը սկսվում է դիմումը սվյալ մարմնում մուտքագրվելու օրվանից: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները իրենց հերթին էլ պարտավոր են 10-օրյա ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները⁴²:

2015 թվականի ընթացքում գրանցվել են նաև այլ խախտումներ և թերացումներ ԴԱՀԿ ապահովող ծառայության գործունեության ոլորտում: Այսպես, օրինակ, հարկադիր կատարողը օրենքով նախատեսված հիմքն առաջանալու պահից չի կարճել կատարողական վարույթը, ավելին՝ շարունակել է կատարողական գործողությունները: Դեպքերից մեկով ամիսներ շարունակ ԴԱՀԿ ապահովող ծառայությունը չի ապահովվել կատարողական թերթի պահանջների կատարումը, որոշման մեջ նշվել է պարտավորությունների կատարման 10 օրյա ժամկետ՝ միաժամանակ նշելով քրեական պատասխանատվության առաջացման հանգամանքը, սակայն 10-օրյա ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից չի կատարվել որոշման պահանջները, իսկ հարկադիր կատարողի կողմից չեն ձեռնարկվել դրանից բխող համապատասխան գործողություններ:

Քաղաքացիները դժգոհել են նաև, որ հարկադիր կատարողը չի իրականացրել պատշաճ կատարողական գործողություններ, որի հետևանքով անհնարին է դարձել պարտապանի գույքի նկատմամբ բռնագանձում տարածելը, ինչի արդյունքում էլ նյութական վնաս է պատճառվել քաղաքացուն:

Առանձին դեպքերում հարկադիր կատարողի ոչ իրավաչափ որոշումը (կատարողական վարույթը կարճելու մասին) վերադասության կարգով վերացվել է և որոշում է կայացվել անշարժ գույքի նկատմամբ կրկին արգելանք կիրառելու մասին, սակայն նշված ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով օտարվել է պարտապանին պատկանող գույքը, ինչի արդյունքում պարտատիրոջ նկատմամբ պարտավորությունները չեն կատարվել:

Մյուս դեպքով ԴԱՀԿ ապահովող ծառայության հարկադիր կատարողը չի իրականացրել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն, որի արդյունքում բռնագանձում է տարածվել պարտապանի կենսաթոշակի նկատմամբ ամբողջությամբ, ինչպես նաև գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու և արգելանք դնելու մասին որոշումն Օրենքով սահմանված կարգով քաղաքացուն չի ուղարկվել:

Unusaply. ձեռնարկել համապատասխան միջոցներ դատական ակտերի հիման վրա տրված կատարողական թերթերի պահանջների պատշաճ կատարումն ապահովելու ուղղությամբ, միաժամանակ բացառել օրենսդրական նորմերի

⁴²«Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 18

չպահպանման և քաղաքացիներին անհիմն պահանջներ ներկայացնելու դեպքերը:

6. 2015 թվականին ՔԿՀ-ներում կրկին գրանցվել են գերբնակեցման, վատ վերաբերմունքի, պահման, սանիտարահիգիենիկ և կոմունալ-կենցաղային անբավարար պայմանների խնդիրներ⁴³:

Քրեակատարողական հիմնարկներում (ՔԿՀ) շարունակում է չլուծված մնալ ոչ պատշաճ պահման պայմանների խնդիրը, այդ թվում՝ գերբեռնվածություն, անբավարար սանիտարահիգիենիկ և նյութակենցաղային պայմաններ:

Այսպես, քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի ընթացքում ԲԿԱՄ փորձագետներն ականատես են եղել որոշ խցերում աղտոտվածության, ծայրահեղ վատ սանիտարահիգիենիկ պայմանների, ինչպես նաև կալանավորված և դատապարտված անձանց ոչ հավասարաչափ բնակեցման դեպքերի («Նուբարաշեն», «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներ): Խցերի անհավասարաչափ տեղաբաշխման խնդիր արձանագրվել է նաև գերբեռնվածություն չունեցող քրեակատարողական հիմնարկներում, որի արդյունքում կրկին չի պահպանվել ՀՀ օրենսդրությամբ ամրագրված մեկ ազատագրվածին հատկացվող բնակելի տարածության չափը:

Չնայած նրան, որ ՀՀ քրեակատարողական վարչությունը տեղեկացրել է, որ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում կալանավորված անձանց, դատապարտյալների տեղաբաշխումը կատարվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ հաշվի առնելով կալանավորված անձանց ու դատապարտյալների համակեցության և անվտանգության ապահովման նկատառումները, այնուամենայնիվ, ԲԿԱՄ փորձագետների դիտարկմամբ խցերում անձանց բաշխումը ոչ միշտ է պայմանավորված եղել օրենսդրությամբ սահմանված տվյալ պահանջներով:

ՔԿՀ-ներում գերբեռնվածության խնդրի վերաբերյալ Նախարարությունը տեղեկացրել է, որ գերբեռնվածության խնդիրը մշտապես գտնվել է ծառայության ղեկավարության ուշադրության կենտրոնում, որի վերացման նպատակով իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ: 2015 թվականի դեկտեմբերի 15-ին ամբողջությամբ շահագործման են հանձնվել Նախարարության «Արմավիր» ՔԿՀ-ի ևս 4 մասնաշենքերը, 800 անձի համար նախատեսված լրակազմ, որից ելնելով՝ «Արմավիր» ՔԿՀ-ի լրակազմն ամբողջությամբ 1200 անձի համար սահմանելու և այն համալրելու պարագայում կարելի է լուծված համարել անազատության մեջ պահվող անձանց ամենօրյա զբոսանքն ապահովելու և գերբնակեցվածության խնդիրները: Նշվել է նաև, որ 2016թ. առաջին եռամսյակին նախատեսվում է «Արմավիր» և «Հրազդան» ՔԿՀ-ներում կալանավորվածներին պահելու վայրերի լրակազմի

⁴³ Մանրամասները տե՛ս ԲԿԱՄ գեկույցում

ավելացում: Բացի այդ՝ քրեակատարողական վարչության պետի մի շարք հրամաններով և հանձնարարականներով կանոնակարգվել են նաև կալանավորված անձանց և դատապարտյալների պահելու պայմանների չկանոնակարգված ոլորտները, ուժեղացվել է հսկողությունն օրենսդրության պահանջների պատշաճ պահպանման նկատմամբ:

Խնդիրներ են արձանագրվել նաև դատապարտյալներին համապատասխան ուղղիչ հիմնարկներ տեղաբաշխելու հետ (օրինակ, եթե անհրաժեշտ է դատապարտյալին տեղափոխել կիսաբաց կամ բաց տեսակի ուղղիչ հիմնարկ, ապա գերբեռնվածության պատճառով նման հնարավորությունը սահմանափակվում է): Օրինակ՝ 2015 թվականի ընթացքում «Աբովյան» ՔԿՀ-ում արձանագրվել է բաց ուղղիչ տեսակի հիմնարկի լրակազմով սահմանված քանակի ոչ բավարար լինելու խնդիր, մինչդեռ, ըստ վարչակազմի՝ ՔԿՀ-ում պահվող դատապարտյալների մոտ 30%-ը ենթակա է տեղափոխման մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ, սակայն տեղ չլինելու պատճառով նրանց տեղափոխումը հետաձգվում է, ինչը լրացուցիչ դժգոհություններ է առաջացնում դատապարտյալների շրջանում, հատկապես, որ սահմանափակվում է դատապարտյալների մի շարք իրավունքներ (օրինակ՝ աշխատանքային զբաղվածության, կարճաժամկետ մեկնումների հնարավորությունները և այլն):

Այս կապակցությամբ ՀՀ քրեակատարողական վարչության տեղեկացրել է, որ «Աբովյան» ՔԿՀ-ի բաց տիպի ուղղիչ հիմնարկի դատապարտյալների լրակազմի քանակի ավելացումը կախված է հիմնարկի տեխնիկական հնարավորություններից, մասնավորապես՝ այն կարող է ավելացվել նոր մասնաշենքի կառուցման դեպքում, խնդրին հնարավոր կլինի անդրադառնալ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Չնայած նշված հանգամանքին՝ 2015 թվականին «Աբովյան» ՔԿՀ-ի բաց տիպի ուղղիչ հիմնարկի դատապարտյալների լրակազմի քանակը 2014թ. համեմատությամբ ավելացվել է 15-ով:

Չնայած նրան, որ Եվրոպական բանտային կանոնների 54.3 և 54.4 կետերով սահմանված է, որ անազատության մեջ պահելու վայրերի ծառայողները պետք է հարգանքով վերաբերվեն խուզարկվողների արժանապատվությանը և անձնական իրերին, ինչպես նաև խուզարկվող անձինք խուզարկության հետևանքով չպետք է ենթարկվեն նվաստացուցիչ վերաբերմունքի⁴⁴, 2015 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ ՔԿՀ-ների վարչակազմի կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ:

Այսպես, ըստ հրապարակային տեղեկությունների՝ 2015 թվականի հոկտեմբերի 23-ին Նուբարաշենե ՔԿՀ-ում դիմակավորված անձինք խուզարկություն են իրականացրել, որի ընթացքում բռնություն են կիրառել այնտեղ պահվող անձանց նկատմամբ, ինչի պատճառով վերջիններս սկսել են ճիչեր արձակել, հարվածել դռներին, այրել սրբիչներ:

⁴⁴ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների համար հաստատված Եվրոպական բանտային կանոններ

Պաշտպանի ներկայացուցիչների կատարած այցերի ու ուսումնասիրությունների արդյունքում կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ քրեակատարողական ծառայողների գործադրած ենթադրյալ զանգվածային բռնությունների, խուզարկությունների և անկարգությունների վերաբերյալ տեղեկությունները պարզելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի հրամանի համաձայն կատարվել է ծառայողական քննություն: Պաշտպանի ուսումնասիրությունների և ծառայողական քննության արդյունքների համադիր վերլուծությամբ հաստատվել է, որ հոկտեմբերի 23-ին Նուբարաշենե ՔԿՀ-ում իրականացված խուզարկությանը մասնակցել են դիմակավորված անձինք, ՔԿՀ-ում պահվող անձանց կողմից այրվել են իրեր, լսվել են գոռգոռոցներ, խցերի դռներին հարվածելու ձայներ:

Միաժամանակ, կալանավորված անձանց և դատապարտյալների պնդմամբ խուզարկությունն իրականացվել է անբարեկիրթ, կոպիտ և արժանապատվությունը նվաստացնող եղանակով (խուզարկություն իրականացնող ծառայողները հնչեցրել են վիրավորանքներ, ազատագրկվածների իրերը նետել են միջանցք), ինչն էլ դրդել է վերջիններս կատարելու վերոնշյալ գործողությունները:

Թե՛ 2014, թե՛ 2015 թվականներին ՔԿՀ-ներում կատարված այցերի ընթացքում դատապարտյալներն ու կալանավորված անձինք գանգատվել են խցերում առկա միջատներից, իսկ ԲԿԱՄ փորձագետներն ականատես են եղել նաև դատապարտյալների ու կալանավորված անձանց ձեռքերի և ոտքերի վրա խայթոցների հետքերի: Նախարարությունից տեղեկացրել են, որ սկսած 2015 թվականի սկզբից բոլոր ՔԿՀ-ներում պարբերաբար իրականացվել են սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բազմաբնույթ գործողություններ:

Առանձին խնդիր է նաև ՔԿՀ-ներում պահման ընդհանուր պայմանները: ՔԿՀ-ների շենքերը հին են, խոնավ, որոշ վայրերում հին են նաև ընդհանուր ջրահեռացման խողովակները և ընդհանուր համակարգը, առկա է նաև մշտական ջրամատակարարման խնդիր, արձանագրվել են սանհանգույցների օդափոխության խնդիրներ:

Այս կապակցությամբ Նախարարությունը տեղեկացրել է, որ 2015 թվականի ընթացքում իրականացվել են բազմաթիվ և բազմաբնույթ շինարարական աշխատանքներ բոլոր ՔԿՀ-ների բնակելի տեղամասերում, կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներում, բուժմասերում, ճաշարաններում, սանհանգույցներում, արտաքին արգելագոտու պարագծում և կարևորություն ներկայացնող այլ տեղամասերում: Մեկնարկել է քրեակատարողական վարչության և «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում էներգախնայողության ծրագիրը, որի արդյունքում կլուծվեն կալանավորված անձանց և դատապարտյալների բնակելի տեղամասերի լուսավորության, սենյակների ջեռուցման, տանիքների ջրամեկուսացման, ինչպես նաև պատշաճ

սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման հարցերը:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ արձանագրված խնդիրների վերացման, վատ վերաբերմունքի կանխարգելման և ՔԿՀ-ներում սանիտարահիգիենիկ և կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման ուղղությամբ: Միաժամանակ, ՔԿՀ-ներում դատապարտյալների համաչափ բնակեցմամբ, ինչպես նաև այլ հնարավոր միջոցներով լուծել ՔԿՀ-ներում գերբնակեցման խնդիրը:

7. 2015 թվականին ՔԿՀ-ներում որոշ դեպքերում չի ապահովվել դատապարտյալների զբոսանքի և տեսակցության իրավունքը, բավարար չեն զբաղվածության, այդ թվում՝ աշխատանքի ապահովման ուղղությամբ ձեռնարկված միջոցները⁴⁵:

Թեև ՀՀ օրենսդրությամբ հստակ սահմանված է դատապարտյալի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի իրավունքը, այնուամենայնիվ, կալանավորված և դատապարտված անձանց հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում ԲԿԱՄ փորձագետները պարզել են, որ զբոսանքի իրավունքը պատշաճ չի ապահովվում: Մասնավորապես արձանագրվել է, որ որոշ ՔԿՀ-ներում զբոսանքը կազմակերպվում է միայն աշխատանքային օրերին, շաբաթ-կիրակի օրերին հիմնականում զբոսանք չի կազմակերպվում: Զբոսանքի ոչ պատշաճ կազմակերպման պատճառ է նաև ՔԿՀ-ների աշխատակիցների ոչ բավարար քանակը: Այցերի ընթացքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ կալանավորված և դատապարտված անձինք նշել են, որ պատժախցում գտնվելու ընթացքում իրենց չի տրամադրվել զբոսանք:

Բազմաթիվ բողոքներ են արձանագրվել տեսակցության տրամադրման վերաբերյալ: Մասնավորապես, տեսակցության տրամադրման դիմաց ՔԿՀ-ների վարչակազմն ազատազրկվածներից կամ նրանց հարազատներից գումար կամ այլ տեսակի օգուտներ է պահանջել: Արձանագրվել են նաև կարճատև և երկարատև տեսակցության սենյակների անբավարար պայմաններ, ինչպես նաև երկարատև տեսակցության սենյակների բացակայություն:

Ի թիվս այլ խնդիրների՝ բազմիցս անդրադարձ է կատարվել նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ծրագրերի սակավաթվությանը: Այս կապակցությամբ Նախարարությունը տեղեկացրել է, որ կալանավորված անձանց և դատապարտյալների զբաղվածության ապահովման նպատակով ՔԿՀ-ներում պարբերաբար կազմակերպվել են մարզական և մշակութային միջոցառումներ, բացի դրանից, մի շարք դատապարտյալներ անցել են խոհարարական, համակարգչային, արհեստագործական, փականագործական և այլ մասնագիտացումներով հատուկ ուսուցման կուրսեր, որի արդյունքում բոլոր դատապարտյալներին տրվել են համապատասխան վկայականներ: Ըստ տրամադրված տեղեկատվության 2015 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 20.3%

⁴⁵ Մանրամասները տես ԲԿԱՄ զեկույցում

ընդգրկվել են տարբեր բնույթի աշխատանքներում, մասնավորապես. աշխատանքներ կատարելու նպատակով դատապարտյալներն ընդգրկվել են ՔԿՀ-ի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում: 2015 թվականի ընթացքում անչափահաս կալանավորված անձինք և դատապարտյալները 100%-ով մասնակցել են կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներին:

Կալանավորված անձանց և դատապարտյալների հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով Հայ Առաքելական եկեղեցու կողմից պարբերաբար կատարվել են այցելություններ, մկրտություններ, պատարագներ, տոնական օրերին՝ տոնակատարություններ:

ՔԿՀ-ներում գտնվող՝ ազատման ենթակա անձանց աշխատաշուկային ինտեգրվելուն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ 2015 թվականին ՔԿՀ-ներում գտնվող՝ ազատման ենթակա անձանց վերաբերյալ գործակալությունը ստացել է թվով 360 նամակ, զբաղվածության տարածքային կենտրոններ դիմել է 61 անձ, 12 անձ հաշվառվել է, զբաղվածության կարգավորման ծրագրերում ընդգրկվել է 4-ը, աշխատանքի է տեղավորվել 9 անձ:

Առաջարկ. ապահովել ՔԿՀ-ի վարչակազմի կողմից զբոսանքի և տեսակցությունների պատշաճ կազմակերպումը, ինչպես նաև լուծել դատապարտյալների աշխատանքի և զբաղվածության հնարավորությունները՝ իրականացնելով տարբեր միջոցառումներ:

8. 2015 թվականին նույնպես արձանագրվել են խնդիրներ ՔԿՀ-ներում պատշաճ բժշկական օգնության տրամադրման, ինչպես նաև տրվող սննդի որակի առումով⁴⁶:

Դեռևս առկա են խնդիրներ ՔԿՀ-ներում ազատագրված անձանց համապատասխան բժշկական օգնությունը ժամանակին տրամադրելու հետ: Այս խնդիրը հիմնականում պայմանավորված է որոշ ՔԿՀ-ների բժշկական սպասարկման գերծանրաբեռնված աշխատանքով (օրինակ՝ «Նուբարաշեն», «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ներ)⁴⁷:

Չլուծված է մնացել ՔԿՀ-ներում բժշկական անձնակազմի համալրման խնդիրը: Թափուր են բժիշկ-մասնագետների, ինչպես նաև միջին բուժանձնակազմի հաստիքները, որի հետևանքով չի տրամադրվում լիարժեք բժշկական օգնություն սպասարկում:

Կրկին արձանագրվել են բժշկական փաստաթղթերի ոչ պատշաճ լրացման դեպքեր: Մասնավորապես, ՔԿՀ գործող կալանավորված և դատապարտված անձանց բժշկական զննության արդյունքների վերաբերյալ կազմվող արձանագրությունները չեն պարունակել ամբողջական տեղեկություններ:

⁴⁶ Մանրամասները տես ԲԿԱՄ զեկույցում

ՔԿՀ մուտք գործող կալանավորված անձանց կամ դատապարտյալների բժշկական զննությունը անց է կացվել ուղեկցող ոստիկանության ծառայողի և ՔԿՀ վարչակազմի ներկայացուցչի ներկայությամբ, որը հիմնականում համատեղված է եղել անձնական խուզարկության հետ: Ինչպես նաև դեպքեր են արձանագրվել, երբ երկու և ավելի անձանց բժշկական զննությունը կատարվել է միաժամանակ:

Այս կապակցությամբ ՀՀ քրեակատարողական վարչության պետը տեղեկացրել է, որ ՔԿՀ-ների վարչակազմին հրահանգվել է բացառել բժշկական զննության համատեղումը խուզարկության իրականացման հետ: Հրահանգվել է նաև արտաքին բժշկական զննությունը լիարժեք, ոչ մակերեսային իրականացնելու, զննության արդյունքները ճիշտ արձանագրելու և օրենքով սահմանված մյուս պահանջների անշեղ կատարելու ուղղությամբ:

Ստացվել են բազմաթիվ դիմում-բողոքներ ՔԿՀ-ներում ոչ պատշաճ բուժօգնության վերաբերյալ: Օրինակ, դեպքերից մեկով կալանավորված անձի փաստաբանը տեղեկացրել է, որ ՔԿՀ-ում պահվող՝ նախկինում տուբերկուլյոզ ունեցող իր պաշտպանյալի վիճակը կտրուկ վատացել է, և ՔԿՀ-ի վարչակազմը միջոցներ չի ձեռնարկել վերջինիս մեկուսացնելու ու անհրաժեշտ բուժօգնություն տրամադրելու ուղղությամբ: Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությունից հետո անձին տրամադրվել է անհրաժեշտ դեղորայք:

Բացի այդ, բողոքում բարձրացված խնդրի ուսումնասիրության նպատակով ՔԿՀ այց կատարելու պահին կալանավորված անձը գտնվել է դատարանում: Այնուհետև, Պաշտպանի ներկայացուցիչների փաստարկները և հարցի հրատապությունը հաշվի առնելով՝ դատավորը հետաձգել է դատական նիստը՝ ապահովելու համար կալանավորված անձի առանձնազրույցը Պաշտպանի ներկայացուցիչների հետ:

Արդյունքում կալանավորված անձի մոտ տվյալ փուլում տուբերկուլյոզ չի հաստատվել, բայց ախտորոշվել է քրոնիկ բրոնխիտ և նշանակվել է համապատասխան բուժում, ինչպես նաև կարգավորվել է դեղորայքի տրամադրման հարցը, իսկ տուբերկուլյոզի հերքումից հետո վերջինս հրաժարվել է մեկուսանալ խցակիցներից:

Լուծվել է ՔԿՀ-ներ հարազատների կողմից բերվող դեղորայքի և բժշկական այլ պարագաների հաշվառման խնդիրը: Դրանք հաշվառելու նպատակով ստեղծվել և վարվում են համապատասխան մատյաններ: Սակայն արձանագրվել են ՔԿՀ-ների կողմից տրամադրվող դեղորայքի քանակի և տեսականու սակավություն:

Դեռևս կարգավորված չէ պատժի կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության պատճառով հետագա պատժի կրումից ազատելու ընթացակարգերը, բացակայում են համապատասխան չափորոշիչները: Վերանայված և համապատասխանեցված չէ պատժի կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում ներառված հիվանդությունների ախտորոշումներն Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից 2010թ. հաստատված հիվանդությունների դասակարգման նոր սանդղակին:

2015թ. ընթացքում ՔԿՀ-ներում կրկին արձանագրվել են կալանավորված անձանց կամ դատապարտյալներին բուժական ուղղիչ հիմնարկ, կամ այլ առողջապահական մարմիններ տեղափոխելու վերաբերյալ ՀՀ քրեակատարողական վարչությունից համաձայնության կարգազրեք ստանալու ձգձգումներ (ընդհուպ մինչև երեք ամիս):

ՔԿՀ-ներում արձանագրվել են նաև ատամնաբուժական օգնության ոչ պատշաճ կազմակերպում: Ատամնաբուժական օգնությունը կազմակերպվում է հիմնականում կալանավորված անձանց կամ դատապարտյալների անձնական միջոցներով: Արձանագրվել է նաև ՔԿՀ-ներում գործող ատամնաբուժական կաբինետների տեխնիկական և դեղորայքային հագեցվածության խնդիրներ:

Հոգեկան առողջության պահպանման հետ նույնպես Նախարարության ՔԿՀ-ներում արձանագրվել են խնդիրներ: Մասնավորապես, այնտեղ պահվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց անբավարար պահման պայմանների, ինչպես նաև նրանց հանդեպ հսկողության և կիրառվող զսպման միջոցների փաստի արձանագրման թերացումներ:

Դեռևս պահպանվում է բժշկական սարքավորումներով և գործիքներով համալրվածության խնդիրները: ՔԿՀ-ների բժշկական սպասարկման բաժինները դեռևս համալրված չեն քաղաքացիական առաջնային բժշկական օգնության համար նախատեսված բժշկական սարքավորումներով և գործիքներով: «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկը կարիք ունի բժշկական սարքավորումներով վերազինման:

ՔԿՀ-ներում խնդրահարույց է նաև պալիատիվ (ցավամոքիչ) բժշկական օգնության տրամադրումը:

ԲԿԱՄ փորձագետների կողմից այցերի ընթացքում գրանցվել են սննդամթերքի որակի, պատրաստվող ճաշերի բազմազանության, պատրաստի կերակրատեսակներից ոչ պատշաճ նմուշառում կատարելու հետ կապված խնդիրներ:

Այսպես, գրեթե բոլոր ՔԿՀ-ների կալանավորված և դատապարտված անձինք վերցնում են միայն հացը, նախաճաշից և ընթրիքից հիմնականում չեն օգտվում, որի հետևանքով պատրաստվող սննդի մեծ մասը չի սպառվում: Սակայն որոշ ՔԿՀ-ներում («Սևան», «Արթիկ») պատրաստվելիք ճաշի քանակը որոշվում է նախորդ օրվա երեկոյան հարցումների հիման վրա: Հիմնական պատճառներից մեկը սննդի անորակությունն ու միատեսակությունն է: Ըստ դատապարտյալների՝ սննդից չեն օգտվում մոտ 90 տոկոսը («Աբովյան» ՔԿՀ):

Դեռևս կարգավորված չէ որոշ ՔԿՀ-ներում պահվող օտարերկրացիների կարիքների բավարարման համար անհրաժեշտ հատուկ սննդակարգերի մշակման խնդիրները: Այս կապակցությամբ ՀՀ քրեակատարողական վարչության պետը տեղեկացրել է, որ ՀՀ արդարադատության նախարարի և ՀՀ քրեակատարողական վարչության պետի համապատասխան հրամաններով հաստատվել է ՔԿՀ-ներում պահվող անձանց սննդի հատկացման ճաշացուցակի, սննդի պահեստից դուրս գրման

ենթակա սննդամթերքի ցանկի և սննդի քանակի ու որակի հսկողության կարգը և ձևերը, ինչպես նաև ուժեղացվել է հսկողությունը ՔԿՀ-ներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինների, որակի, ինչպես նաև ճաշարանների և սննդամթերքի պահման վայրերի սանիտարահիգիենիկ վիճակի, օգտագործվող սպասքի մաքրության նկատմամբ:

Դեռևս չի լուծվել խրոնիկ հիվանդություններով տառապող անձանց տրամադրվող բուժական սնունդ ընդունելու հետ կապված խնդիրները: Վերջիններիս ցուցված դիետիկ սննդի (յուրաքանչյուրին առանձին տեսակի դիետիկ սնունդ) փոխարեն տրամադրվում է միայն հավելյալ սնունդ (1 ձու, ձեթ և կարագ): Այս կապակցությամբ ՀՀ քրեակատարողական վարչության պետը տեղեկացրել է, որ յուրաքանչյուր դիսպանսեր հսկողության վերցված կալանավորված անձի և դատապարտյալի համար բժշկագիտության բնագավառում սահմանված թվով 15 դիետիկ սեղաններից մեկը նշանակելու և ապահովելու համար անհրաժեշտ են լրացուցիչ հաստիքային, ֆինանսական և տեխնիկական միջոցներ, որոնցով ապահովելը ներկայումս իրատեսական չէ:

ԲԿԱՄ փորձագետներն իրենց այցելությունների ընթացքում ՔԿՀ-ներում արձանագրել են պատրաստի կերակրատեսակից ոչ պատշաճ նմուշառում կատարելու դեպքեր: Այս կապակցությամբ ՀՀ քրեակատարողական վարչության պետը տեղեկացրել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունն ընդունվել է և ՔԿՀ-ներին հանձնարարվել ապահովել պատրաստվող ճաշատեսակների նմուշների պահպանումը սառնարաններում, առանձին փակ տարաներով, ժամկետային պիտակավորմամբ՝ 48 ժամյա պահպանման ժամկետով:

2015թ. ընթացքում ԲԿԱՄ փորձագետները կրկին արձանագրել են որոշ ՔԿՀ-ների խոհանոցների անմխիթար վիճակ (ոչ սանիտարահիգիենիկ վիճակ, վերանորոգման անհրաժեշտություն և այլն): Սակայն արձանագրվել են նաև դրական առաջընթացներ, օրինակ՝ «Սևան» ՔԿՀ խոհանոցային մասնաշենքն այցի պահին վերանորոգվում էր և արդեն ավարտվել էր ճաշասրահի վերանորոգումը: ՀՀ քրեակատարողական վարչության պետը տեղեկացրել է, որ խոհանոցային պայմանների բարեկարգման ու վերանորոգման նպատակով որոշ ՔԿՀ-ներում ներկայումս սկսված են շինարարական աշխատանքներ: Նշվել է նաև, որ ՀՀ քրեակատարողական վարչության պետի համապատասխան հրամանով սահմանվել է նաև խոհանոցներում սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու կանոնները: Մեկ այլ հրամանով սահմանվել են հստակ կանոնակարգումներ՝ ՔԿՀ-ներում բժշկական կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ և այլն:

Առաջարկ. օրենսդրությունը համապատասխանեցնել Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության կողմից հաստատված հիվանդությունների դասակարգման նոր սանդղակին, ՔԿՀ-ները համալրել բուժանձնակազմով և բուժտեխնիկայով, ինչպես նաև վերահսկել դատապարտյալների և կալանավորված անձանց տրվող սննդի որակի և դրա բազմազանության պահպանումը:

9. Օրենսդրական թերի կարգավորումների արդյունքում անձինք կարող են պատասխանատվության ենթարկվել նախնական քննության տվյալները բացահայտելու դեպքում նույնիսկ, երբ գրավոր չեն նախազգուշացվել տվյալները չբացահայտելու մասին:

Դեռևս 2014թ.-ի Տարեկան զեկույցում բարձրաձայնվել և առ այսօր չի լուծվել անձին առանց գործի վարույթն իրականացնող մարմնի համապատասխան թույլտվության նախաքննության կամ հետաքննության տվյալ հանդիսացող տեղեկությունը հրապարակելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այսպես, նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, իսկ անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են, որ վերջիններս իրավունք չունեն նախնական քննության տվյալներն առանց թույլտվության հրապարակել⁴⁸: Պաշտպանի կողմից կարևորվել է, որ քրեական վարույթի շրջանակներում նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին գրավոր չնախազգուշացված անձինք չենթարկվեն պատասխանատվության:

Ինչ վերաբերում է լրագրողներին, որոնք այս իմաստով ավելի խոցելի են, ապա «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել⁴⁹: Ստացվում է, որ լրատվական գործունեություն իրականացնող անձը նույնպես կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել նախաքննության կամ հետաքննության տվյալներ հրապարակելու համար:

Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել «նախաքննության տվյալ» եզրույթը, քանի որ այն կարող է տարաբնույթ կերպով մեկնաբանվել և ընդգրկել քրեական գործին առնչվող ցանկացած տեղեկություն՝ ընդհուպ մինչև մեղադրյալի անուն-ազգանունը: Գտնում ենք, որ որոշ դեպքերում տվյալ հասկացության փոխարեն կարելի է կիրառել «նախաքննության գաղտնիք» եզրույթը՝ համապատասխան բովանդակային հստակեցմամբ:

Ինչ վերաբերում է նախնական քննության այն տվյալներին, որոնք մինչև դրա ավարտը կարող են հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ և կարող են մատչելի դառնալ տուժողին միայն վարույթն

⁴⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 201

⁴⁹ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 3

իրականացնող մարմնի կողմից իր հայեցողության իրացման արդյունքում, ապա ՀՀ սահմանադրական դատարանն իր 2012թ.-ի հունվարի 24-ի թիվ ՄԴՈ-1008 որոշման մեջ ընդգծել է, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ:

Առաջարկ. ա) ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով սահմանել գործի վարույթն իրականացնող մարմնի կողմից գործին մասնակցող բոլոր անձանց՝ նախնական քննության տվյալներն, առանց թույլտվության, հրապարակելու արգելքի, ինչպես նաև հրապարակելու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին գրավոր նախազգուշացնելու պարտականությունը: Միաժամանակ, հստակեցնել «նախաքննության տվյալ» հասկացությունը,

բ) ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածում սահմանել սանկցիա՝ հրապարակման արգելքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով գրավոր նախազգուշացված անձի կողմից նախնական քննության տվյալները հրապարակելու համար:

10. Օրենսդրական հստակ չափանիշների բացակայության հետևանքով հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում առաջանում է սեփականության իրավունքի խախտման վտանգ:

Գործող օրենսդրության պայմաններում հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում լիարժեք չի երաշխավորվում սեփականատիրոջ իրավունքների և շահերի պաշտպանությունը:

Դեռևս 2014 թվականի Պաշտպանի տարեկան զեկույցում բարձրաձայնվել էր 2014 թվականին իրականացված խնդրահարույց օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնց արդյունքում սահմանվել է, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականության մի մասի օտարման դեպքում սեփականատերն իրավունք ունի պահանջել նաև սեփականության չօտարված մասի օտարում, եթե գույքի չօտարվող մասը օտարվող մասի համեմատությամբ *աննշան*⁵⁰: Նշված փոփոխությունը կատարվել է Մարդու իրավունքների ազգային ռազմավարությամբ ամրագրված համապատասխան միջոցառումներ անցկացնելու պարտավորության⁵¹ համատեքստում:

⁵⁰ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենք, 21.06.2014, ՀՕ-105-Ն

⁵¹ ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 27-ի N303 -Ն որոշում, կետ 102, 103

Այնուամենայնիվ, «աննշան» եզրույթը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյունից և կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ:

Հատկանշական է, որ ՀՀ Սահմանադրական դատարանն 13.05.2008թ. իր թիվ ՄԴՈ-753 որոշման մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, հայտնել է դիրքորոշում, համաձայն որի իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել ճօրենք»⁵², եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներում⁵²:

Առաջարկ. **հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման դեպքում սեփականության չօտարվող մասի չափի որոշման նպատակով սահմանել հստակ չափանիշներ:**

11. 2015թ.-ին ստացվել են մի շարք դիմում-բողոքներ ՔԿԱԳ գործակալության կողմից անձանց վերաբերող համապատասխան փաստաթղթերն արխիվում չպահպանելու, օրենքով սահմանված կարգով քաղաքացիների դիմումներն ընթացք չտալու և այլ խախտումների վերաբերյալ:

2015թ.-ին ստացվել են դիմում-բողոքներ ու ահազանգեր քաղաքացիներից՝ կապված Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) գործակալության գործունեության հետ: Դժգոհությունները հիմնականում վերաբերել են ՔԿԱԳ գործակալության կողմից անձանց վերաբերող համապատասխան փաստաթղթերն արխիվում չպահպանելուն, օրենքով չսահմանված լրացուցիչ փաստաթղթեր պահանջելուն, անձանց դիմումները չընդունելուն և ՔԿԱԳ գործակալության աշխատակիցների կողմից իրականացված այլ խախտումների վերաբերյալ:

Այսպես, դիմումներից մեկի ուսումնասիրությունից պարզվել է, որ ՔԿԱԳ գործակալության կողմից օրենքով սահմանված ժամկետում չի իրականացվել ամուսնալուծության պետական գրանցում: Պարզվել է, որ Նախարարությունը ՀՀ արտաքին գործերի նախարարությանն է դիմել՝ 10-օրյա ժամկետում ամուսնալուծությանը խոչընդոտ հանդիսացող հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով: Տեղեկությունների տրամադրումը ուշացվել է, ինչի արդյունքում էլ ձգձգվել է նաև ամուսնալուծության գրանցումը:

⁵² Սանդեյ Թայմս ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49

Արդյունքում, խախտվել է ամուսնալուծության պետական գրանցումն եռամսյա ժամկետը: Նշենք, որ գործող օրենսդրությամբ ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ⁵³:

Ստացվել են նաև ահազանգեր և դիմում-բողոքներ առ այն, որ ՔԿԱԳ գործակալության աշխատակիցներն, առանց համապատասխան հիմքերի, մերժել են քաղաքացիներին օրենքով սահմանված կարգով տրամադրել համապատասխան փաստաթղթեր՝ պահանջելով ներկայացնել օրենքով չնախատեսված լրացուցիչ փաստաթղթեր:

Գործնականում գրանցվել է նաև դեպք, որ ՔԿԱԳ տարածքային մարմինները օրենսդրությամբ սահմանված նորմերի տարատեսակ մեկնաբանությունների արդյունքում միասնական մոտեցում չեն կիրառել, արդյունքում քաղաքացու դիմումում բարձրացված հարցի լուծումը ՔԿԱԳ համապատասխան մարմնի կողմից մերժվել է, իսկ ՔԿԱԳ մեկ այլ մարմնի կողմից բավարարվել:

Առաջարկ. վերահսկել ՔԿԱԳ գործակալության աշխատակիցների կողմից օրենքի պահանջների պահպանման ապահովումը, միջոցներ ձեռնարկել բացառելու օրենքով սահմանված փաստաթղթեր տրամադրելն անհիմն մերժելու և անհարկի ձգձգելու, քաղաքացիներին ձևական պահանջներ առաջադրելու և այլ դեպքերը:

⁵³ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 33, մաս 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ: Ծառայության գործունեության ոլորտում դրական զարգացումներ արձանագրված չեն, քանի որ 2015թ.-ի հաղորդման համար Ծառայության կողմից չի տրամադրվել համապատասխան պատշաճ տեղեկատվություն:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Ծառայությունը՝ պաշտոնատար անձանց կողմից իրականացված հանցագործությունների, այդ թվում՝ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ոչ բոլոր դեպքերով է կատարել բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված դիմում-բողոքների և ահազանգերի ուսումնասիրությունից պարզվել է, որ անձանց դիմումները, բողոքները ոչ բոլոր դեպքերում են ընդունվել որպես հանցագործության մասին հաղորդում, հետևաբար որոշ դեպքերում, նույնիսկ երբ առկա են եղել համապատասխան հիմքերը, քրեական գործ չի հարուցվել: Ավելին, ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ Ծառայության կողմից գործերը որոշ դեպքերում քննվել են ոչ լրիվ ու օբյեկտիվ: Մինչդեռ, գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները⁵⁴:

Այս առումով ուշագրավ է, որ 2015թ.-ի ընթացքում Ծառայության քննիչների վարույթում քննվել է 761 քրեական գործ, իսկ ավարտված քննությամբ 376 գործերից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել միայն 89-ը: Այսինքն, ավարտված գործերից 266 կարճվել է (մեկ գործ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու համար ուղարկվել է դատարան)⁵⁵:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների կողմից քաղաքացիների դիմումների, զանգվածային լրատվության միջոցների տարածած համապատասխան տեղեկատվության, ինչպես նաև մեղադրական եզրակացությամբ դատարան ուղարկված գործերի վիճակագրության համակարգված ուսումնասիրությունը կարող է վկայել այն մասին, որ որոշ դեպքերում

⁵⁴ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 17

⁵⁵ <http://www.ccc.am/hy/1428493746/3/5092>

Ծառայությունը գործերի քննության ընթացքում թույլ է տվել մի շարք թերացումներ:

Ծառայության կողմից քննության թերացումները վերաբերում են հատկապես պաշտոնատար անձանց կողմից մարդկանց նկատմամբ բռնությունների, խոշտանգումների, և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը անդրադարձել է այն հարցին, որ առաջին Համընդհանուր պարբերական դիտարկման մեջ Հայաստանը նշել է, որ պատրաստ է «երաշխավորել խոշտանգումների, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների արագ քննության իրականացումը և իրականացնողներին արդարադատության առջև կանգնեցնել», սակայն դեռևս 2012թ.-ին ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն ընդգծել է, որ Հայաստանը չի իրականացրել արագ, օբյեկտիվ և արդյունավետ հետաքննություններ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացված խոշտանգումների բողոքների առնչությամբ⁵⁶:

Ըստ ՀՀ ոստիկանության ներկայացրած տվյալների՝ 2015թ.-ի ընթացքում արձանագրվել է ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների նկատմամբ բռնություն գործադրելու, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի 14 դեպք, որոնցով կատարվել են 14 ծառայողական քննություններ: Նշված դեպքերի կապակցությամբ հարուցվել են 5 քրեական գործեր (2 քրեական գործի վարույթը կարճվել է)՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ և 309-րդ հոդվածների հատկանիշներով (համապատասխանաբար, «Ծեծ» և «Պաշտոնեական լիազորություններն անցնելը»): Ավելին, ՀՀ ոստիկանության կողմից նախապատրաստած 6 նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

Նման գործելաոճը խնդրահարույց է այնքանով, որ ՀՀ ոստիկանության կողմից նման դեպքերով Ծառայություն փոխանցված նյութերը ոչ բոլոր դեպքերում են արտացոլել արարքի իրական բնույթն ու շարժառիթները, ինչի արդյունքում հակաիրավական գործողություններին տրվել են այլ որակումներ: Սակայն դիմում-բողոքներից, ահազանգերից և զանգվածային լրատվության միջոցներից ստացված տեղեկատվության համաձայն՝ անձինք հիմնականում ենթարկվել են բռնությունների համապատասխան պաշտոնատար անձանց կողմից որոշակի տեղեկություններ, ցուցմունքներ և խոստովանություններ ստանալու նպատակով: Այնուամենայնիվ, Ծառայությունը, լինելով վերոնշյալ գործերով քրեական հետապնդում իրականացնող մարմին, պարտավոր էր ձեռնարկել օրենսգրքով նախատեսված բոլոր

⁵⁶«Համընդհանուր պարբերական դիտարկում» աշխատանքային խումբ, 19-30 հունվար, 2015թ.

Համառոտ նկարագիրը պատրաստված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների Հանձնակատարի գրասենյակի կողմից համաձայն Մարդու իրավունքների խորհրդի 5/1 բանաձևի լրացման 15 (C) պարբերության, և Խորհրդի 16/21 բանաձևի լրացման 5-րդ պարբերության/ պարագրաֆ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_arm_3_e.pdf

միջոցառումները՝ գործերի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար:

Բացի այդ, ՀՀ քննչական կոմիտեի կողմից ներկայացված տվյալների համաձայն՝ 2015թ.-ին ստացվել է պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների և բռնությունների ենթարկման 4 դեպքի վերաբերյալ հաղորդում: Քննված դեպքերից մեկով վկան և մեղադրյալը հայտարարել են, որ նախաքննություն իրականացնող քննիչի կողմից իրենց նկատմամբ բռնություն և ճնշում է գործադրվել: Չնայած դրան՝ Ծառայություն փոխանցված 2 քրեական գործի վարույթները կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով:

Միաժամանակ, իրավապաշտպան գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպության կողմից 2015թ.-ի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կալանքի տակ գտնվող անձանց շրջանում հարցումներ է իրականացվել բռնության դեպքերը վերհանելու համար: Տվյալ միջոցառման արդյունքում պարզվել է, որ ոստիկանության կամ քննչական բաժնում գտնվելու ընթացքում հարցվածներից 15-ի նկատմամբ կիրառվել է ֆիզիկական ուժ կամ հոգեբանական ճնշում, որոնք դրսևորվել են ծեծելով, քաշքշելով, ձեռնաշղթաներ հագցնելով, հարվածելով, ուղեկցվել են հայհոյանքներով ու սպառնալիքներով: Բռնությունները 11-ի դեպքում խոստովանություն կորզելու նպատակ են հետապնդել, իսկ 4-ի դեպքում կիրառվել են հաշվեհարդարի համար⁵⁷:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) մեկնաբանելով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 3-րդ հոդվածը («Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»), նշել է, որ ՄԻԵԿ-ը կտրականապես արգելում է խոշտանգումները և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը անգամ ամենաբարդ հանգամանքներում, ինչպիսին ահաբեկչության կամ կազմակերպված հանցավորության դեմ պայքարն է: Այսինքն, ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածը բացառություններ սահմանող որևէ դրույթ չի պարունակում, և խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը ենթակա չէ որևէ սահմանափակման անգամ պետության գոյությանը սպառնացող հանրային վտանգի դեպքում⁵⁸:

Մի շարք գործերով վճիռներում ՄԻԵԴ-ը դիրքորոշում է հայտնել նաև, որ ներպետական իրավասու մարմինները ոչ մի դեպքում չպետք է թույլ տան, որ ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը մնա անպատիժ:

⁵⁷«Մարդու իրավունքները Հայաստանում 2015թ.» զեկույց, էջ 14, Հայաստանի հելսինկյան կոմիտե <http://armhels.com/wp-content/uploads/2016/01/Ditord-2016-01Armenian.pdf>

⁵⁸Տե՛ս Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռ, 1999թ. հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 25803/94, կետ 95 և Ասսենովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի գործով վճիռ, 1998թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 90/1997/874/1086, կետ 93

Հասարակական վստահությանն արժանանալու, օրենքի կատարմանն աջակցելու և ապօրինի գործողությունների նկատմամբ իշխանությունների հանդուրժողականությունը և դրանցում իշխանությունների համագործակցությունը կանխելու համար կարևոր է նման դեպքերի քննությունը⁵⁹:

Ծառայության նման գործելաճճը խնդրահարույց է այնքանով, որ դա չի նպաստում իրավախախտում թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելուն և կարող է անպատժելիության մթնոլորտ ձևավորել նրանց մոտ: Վերոգրյալից ելնելով, գտնում ենք, որ Ծառայությունը, նախ պետք է ձեռնարկի քայլեր՝ կանխելու խոշտանգման, ինչպես նաև անմարդկային վերաբերմունքի դրսևորման դեպքերը, այնուհետև՝ ձեռնամուխ լինի դրանք բացահայտելուն և մեղավորներին պատասխանատվության ենթարկելուն: Այդուհանդերձ, դեռևս չեն ձեռնարկվել բավարար քայլեր Ծառայության կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության այլ դեպքերի վերհանման և կանխարգելման ուղղությամբ:

Առաջարկ. ձեռնարկել պատշաճ միջոցներ Ծառայության քննիչների կողմից քննվող պաշտոնատար անձանց կողմից կատարված հակաիրավական արարքների, այդ թվում՝ բռնության, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի գործերի նկատմամբ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունը ապահովելու համար:

2. Հանցագործության մասին դիմումները կամ հայտարարությունները մի շարք դեպքերում չեն ընդունվել որպես հաղորդում, արդյունքում Ծառայության քննիչները չեն կայացրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված որոշումներից մեկը:

Ստացված ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հանցագործությունների վերաբերյալ ստացված դիմումների, հաղորդումների քննարկման արդյունքում Ծառայությունը ոչ բոլոր դեպքերում է այն ընդունել որպես հանցագործության մասին հաղորդում, և հետևաբար, չի կայացրել օրենսդրությամբ սահմանված՝ 1) քրեական գործ հարուցելու մասին, 2) քրեական գործ հարուցելը մերժելու մասին, 3) հաղորդումն ըստ ենթակայության հանձնելու մասին⁶⁰ որոշումներից որևէ մեկը, ինչի հետևանքով խոչընդոտվել է անձանց դատական պաշտպանության իրավունքը⁶¹:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումներից մեկով քաղաքացին տեղեկություններ է հայտնել որոշ պաշտոնատար անձանց

⁵⁹Տե՛ս Օչալն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ, 2007թ. փետրվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 52067/99, կետ 65

⁶⁰ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 181

⁶¹ՀՀ Սահմանադրություն, հոդված 61

կողմից թույլ տված անօրինականությունների մասին և խնդրել, որպեսզի վերջիններս քրեական պատասխանատվության ենթարկվեն, մինչդեռ իր ներկայացրած տեղեկությունները, որպես հանցագործության մասին հաղորդում, չեն քննարկվել և համապատասխան որոշում չի կայացվել:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի գրություններին ի պատասխան, Ծառայությունից հայտնել են, որ քաղաքացու դիմումը, որպես հանցագործության մասին հաղորդում ընդունելու և դրա հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշում կայացնելու հիմքերը բացակայում են համապատասխան սուբյեկտների կողմից կատարած կոնկրետ հանցագործության մասին փաստեր և տեղեկություններ չպարունակելու պատճառաբանությամբ:

Այնինչ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում քաղաքացու դիմումը ընդունվել է որպես հաղորդում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նախապատրաստվել են նյութեր: Նշվածի համատեքստում ուշագրավ է, որ 2015թ.-ի ընթացքում Ծառայությունում քննարկված դիմումներից 832-ը կցվել են քրեական գործերին կամ նյութերին, 450-ով տրվել են պարզաբանումներ, և ընդամենը 166-ով են նախապատրաստվել նյութեր, իսկ 51-ով՝ հարուցվել քրեական գործեր⁶²:

Վերոնշյալի համատեքստում հատկանշական է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը, քննելով Ծառայության անգործության դեմ ներկայացված վճռաբեկ բողոքը, արձանագրել է, որ հանցագործության մասին հաղորդմանը գրությամբ պատասխանելը իրավաչափ չէ: Ավելին, դատարանը նշել է հետևյալը. որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա նախատեսված 3 որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է ներառի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին: Սակայն վերոգրյալից չի բխում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար, քանի որ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են հետաքննության մարմինը, քննիչը և դատախազը: Արդյունքում դատարանը եկել է այն եզրահանգման, որ. «Վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում՝ որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին⁶³:»:

⁶² <http://www.ccc.am/hy/1428493746/3/5092>

⁶³ ՀՀ վճռաբեկ դատարանի 31.05.2014թ.-ի ԵԿԴ/0118/11/13 գործով որոշում <http://www.irtek.am/views/act.aspx?tid=77601&sc=p97>

Ստացվում է այնպես, որ Ծառայությունը, ստանալով հաղորդում (անկախ դրա ձևից՝ գրություն, դիմում, նամակ և այլն) պարտավոր է օրենքով սահմանված կարգով ստուգել քրեական գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լիները, եթե առերևույթ մատնանշվում է հանցագործության հատկանիշներ պարունակող արարքի մասին, միաժամանակ, պահպանելով հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը, պետք է կայացնի համապատասխան որոշում, ինչը, սակայն գործնականում ոչ միշտ է պահպանվում:

Առաջարկ. **հանցագործությունների մասին հաղորդումները քննարկելիս՝ ապահովել օրենսդրությամբ սահմանված որոշումներից մեկի կայացումը՝ գործնականում ապահովելով ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների կիրառումը:**

3. 2015թ.-ին Ծառայությունը կրկին մարտի 1-ի 10 գոհերի մահվան վերաբերյալ գործերով չի պահպանել հրապարակայնությունը՝ չնայած դրանց հանրային հնչելությանը և կարևորությանը: Խնդրահարույց է նաև այդ գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումը:

Ծառայությունում դեռևս շարունակվում է մարտի-1 դեպքերի վերաբերյալ նախաքննությունը, և վերջինս 2015թ.-ի ընթացքում իր վարույթում գտնվող տվյալ գործերի վերաբերյալ հանրությանը կրկին չի ներկայացրել կարևոր տեղեկատվություն: Մարդու իրավունքների պաշտպանը 2008թ.-ի մարտի 1-ի տասը գոհերի մահվան փաստով կատարվող նախաքննության ոչ պատշաճ իրականացման խնդրին անդրադարձել է նաև 2011, 2012, 2013 և 2014թթ.-ների Տարեկան զեկույցներում: Նշվածի կապակցությամբ բազմիցս իրենց մտահոգությունն ու դժգոհությունն են հայտնել մարտի 1-ի 10 գոհերի ընտանիքների անդամները, հարազատները, տարբեր քաղաքական գործիչներ, քաղաքացիական հասարակությունը, ինչպես նաև միջազգային կառույցները: Մի շարք դեպքերում դժգոհությունները կապված են Ծառայության կողմից իր գործառույթները ոչ պատշաճ իրականացնելու հետ, ինչի հետևանքով տվյալ գործերը տարիներ շարունակ չեն բացահայտվել:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի» 40-րդ հոդվածի կատարման վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում անդրադառնալով նշված խնդրին, կարևորել է ՀՀ իշխանությունների կողմից մարտի 1-ի իրադարձությունների ժամանակ ուժի անհամաչափ կիրառման համար պատասխանատու իրավապահների և ղեկավարների հայտնաբերումը և նրանց պատասխանատվության ենթարկելու համար արդյունավետ միջոցառումների ձեռնարկումը⁶⁴: Բացի այդ, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուժնիեկսը

⁶⁴ <http://www.ccprcentre.org/doc/2012/07/G1245524.pdf>

Հայաստան կատարած այցից հետո իր հրապարակած զեկույցում նույնպես անդրադարձել է տվյալ խնդրին, մասնավորապես նշելով, որ 2008թ.-ի մարտի 1-ի տասը մահվան դեպքերի քննության արդյունքների բացակայությունն ամրապնդում է հասարակության որոշ շերտերի համոզմունքը Հայաստանում արդարադատությունն ընտրովի իրականացնելու վերաբերյալ և հանգեցնում դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության կորստին⁶⁵:

Դեռևս 2014թ.-ի Տարեկան զեկույցում, Մարդու իրավունքների պաշտպանն իր մտահոգությունն էր հայտնել գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանման վերաբերյալ, ինչը կարող է հանգեցնել մահացած անձանց իրավահաջորդների իրավունքների խախտմանը:

Սակայն, մարտի 1-ի գոհերի գործերով ընթացող նախաքննության շուրջ 8 տարվա տևողությունը որևէ օբյեկտիվ պատճառով կամ այլ հանգամանքներով չի հիմնավորվել Ծառայության կողմից: Եթե, նույնիսկ Ծառայությունը ունեցել ինչ-որ պատճառներ, ապա դրանք չեն ներկայացվել ոչ մահացածների իրավահաջորդներին, ոչ էլ առավել ևս հանրությանը: 2014թ.-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների կենտրոնի կողմից ներկայացված եզրափակիչ դիտարկումների կատարման վերաբերյալ ստուգիչ (follow up) զեկույցում նշվել է, որ Կառավարության կողմից իրականացվող քայլերում ոչ մի առաջընթաց չի արձանագրվել 2008թ.-ի մարտի 1-ի դեպքերի քննության վերաբերյալ, իսկ Ծառայությունը, բացի մարտի 1-ի տասը սպանությունների դեպքերից երկուսի վերաբերյալ զեկույց է ներկայացնելուց 2011թ.-ից հետո որևէ այլ քայլ չի ձեռնարկվել խնդրի լուծման ուղղությամբ⁶⁶:

Այսպիսով, վերոգրյալից կարելի եզրակացնել, որ Ծառայությունը նաև 2015թ.-ին էական քայլեր չի ձեռնարկել 2008թ.-ի մարտի 1-ի տասը մահվան դեպքերի բացահայտման ուղղությամբ:

Առաջարկ. մարտի 1-ի տասը գոհերի գործերով Ծառայության կողմից իրականացված գործողությունների վերաբերյալ պատշաճ իրազեկել գոհերի հարազատներին և հանրությանը: Ձեռնարկել քայլեր քրեական գործի քննության ընթացքում թույլ տրված բացթողումները վերացնելու, գոհերի հարազատների մատնանշած հանգամանքները մանրակրկիտ ուսումնասիրելու, ինչպես նաև մեղավորներին բացահայտելու և քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

⁶⁵<https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2701645&SecMode=1&DocId=2243332&Usage=2>

⁶⁶http://www.ccprcentre.org/doc/2015/01/INT_CCPR_NGS_ARM_16205_E.pdf

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Զինված ուժերում խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը, կանոնադրային հարաբերությունների խախտումները կանխելու, ինչպես նաև զինծառայողների իրավունքների իրազեկման ուղղությամբ ձևավորվել են գորամասեր այցելող աշխատանքային խմբեր, նորակոչիկների, Ռազմական ոստիկանության ծառայողների, գորամասերի հրամանատարների տեղակալների մասնակցությամբ իրականացվել են մի շարք դասընթացներ:

2. Բարելավվել են զինծառայողների բնակության/պահման/ վայրերի պայմանները. զինավանների օպտիմալացման շրջանակներում մշակվում են զինավանների գլխավոր հատակագծեր, կառուցվում կամ հիմնանորոգվում են նոր գորանոցներ: Ազատությունից զրկված զինծառայողների բնակության պայմանների բարելավման նպատակով կառուցվել են 4 կայազորային կարգապահական մեկուսարաններ, կարգապահական գումարտակում դատապարտյալ զինծառայողները պահվում են վերանորոգված կացարաններում:

3. Պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության, ինչպես նաև բարեվարքության ամրապնդման, աշխատանքների համակարգման ու համադրման, դրանց կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության սահմանման նպատակով հիմնադրվել է ՀՀ պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոն:

4. Ձեռնարկվել են տարաբնույթ միջոցներ զինծառայողների սոցիալական աջակցության ուղղությամբ. 2015 թվականին 142 (նախորդ տարվա 38-ի փոխարեն) զինծառայող ապահովվել է ծառայողական բնակարաններով, 1151 զինծառայողի տրվել է վարձակալված բնակարանների դիմաց դրամական փոխհատուցման իրավունք, 1939 զինծառայողի տրամադրվել է միանվագ դրամական օգնություն՝ շուրջ 313.4 մլն. դրամ գումարի չափով, նշանակվել է 309 երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ, որից՝ սպա՝ 243 անձ, ենթասպա՝ 66 անձ, բնակարանային պայմանների բարելավման (բնակելի տարածությունների

վերանորոգման) նպատակով 19 զինծառայողի հատկացվել են շինարարական նյութեր՝ ընդհանուր 13,56 մլն. դրամ արժեքով:

5. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով⁶⁷ և ՀՀ կառավարության որոշմամբ⁶⁸ նախատեսված հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանների և ժամկետի կարգի վերաբերյալ նախկինում սահմանված անհամապատասխանությունը վերացվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով:

6. Մշակվել է «Զինապարտության և զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվում են մի շարք առանցքային խնդիրների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում ընդգրկված մի շարք հարցերի լուծումներ:

Առկա թերություններն ու խնդիրները

- 1. Ինչպես 2014, այնպես էլ 2015 թվականի ընթացքում չեն ձեռնարկվել բավարար միջոցներ զինված ուժերում մահվան, ինչպես նաև ինքնավնասման դեպքերը կանխելու ուղղությամբ:**

Նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2015 թվականին զինված ուժերում գրանցվել է զինծառայողների մահվան էլքով 46 դեպք (57 զոհով), որից 27-ը վերաբերում է սահմանային միջադեպերին, 1-ը՝ սպանության, 6-ը՝ ինքնասպանության, 7-ը՝ դժբախտ պատահարներին, 2-ը՝ հիվանդություններին, 1-ը՝ ականի պայթյունին և 2-ը՝ ավտովթարներին:

Մահացության դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ՝ պարզելու ծառայության կազմակերպման ու իրականացման ժամանակ տեղ գտած թերություններն ու բացթողումները, արձակվել են հրամաններ և կրկնությունը բացառելու նպատակով զորամասերի հրամանատարական կազմի հետ համատեղ իրականացվել են բազմաբնույթ կանխարգելիչ-դաստիարակչական, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումներ: Ծառայողական քննությունների արդյունքում վերադաս, ինչպես նաև զորամասերի հրամանատարության կողմից արձակված հրամաններով պարտականությունների կատարման մեջ թերացած զինծառայողների նկատմամբ նշանակվել են կարգապահական տույժեր: Այնուամենայնիվ, համադրելով 2015 թվականի զինված ուժերում մահվան դեպքերի վերաբերյալ տվյալները 2014 թվականի նույնամասն տվյալների հետ՝ պարզ է

⁶⁷ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 20

⁶⁸ ՀՀ կառավարության 2004 թվականի հունվարի 15-ի թիվ 46-Ն որոշում

դառնում, որ նման դեպքերի կանխման ուղղությամբ ձեռնարկված քայլերը դեռևս բավարար չեն:

Նախարարությունից տեղեկացրել են, որ նույն ժամանակահատվածում պարտադիր ժամկետային զինծառայողների կողմից արձանագրվել են 108 ինքնավնասման դեպքեր, որոնցից 10-ը կատարվել են զինվորական ծառայության պարտականությունների իրականացման հետ չկապված հանգամանքներում: Միաժամանակ, ժամկետային զինծառայողների կողմից ինքնավնասման հիմնական պատճառը նշվել է հոգեկան խիստ հուզմունքի վիճակում գտնվելը, որին նպաստել են ընտանիքում տիրող անառողջ մթնոլորտը, անձնական կյանքում առաջացած սոցիալական և կենցաղային խնդիրները: Չնայած նրան, որ նմանատիպ դեպքերը նվազագույնի հասցնելու նպատակով գորամասերի հրամանատարության և ՀՀ ՋՈՒ ԱՀՏԱ վարչության հետ համատեղ իրականացվել են առավել նպատակաուղղված միջոցառումներ, իսկ ինքնավնասում կատարած զինծառայողների նկատմամբ ցուցաբերվել է հոգեբանական մոտեցում, այնուամենայնիվ, խնդրահարույց է, որ ինքնավնասման դեպքերի մի մասը կապված է եղել ծառայության հետ (հիմնական պատճառներից են ծառայությանը չհարմարվելը, նորակոչիկների ադապտացիոն շրջանի դժվարությունները, տարբեր սահմանափակումներով գորակոչվածների հոգեբանական խնդիրները):

Առաջարկ. խստացնել հսկողությունը առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին պատշաճ բժշկական օգնության տրամադրման, ինչպես նաև գորամասերում կարգապահության ամրապնդման և բարոյահոգեբանական մթնոլորտը բարելավելուն ուղղված միջոցառումների իրականացման գործընթացների նկատմամբ:

2. Թերի օրենսդրական կարգավորումների արդյունքում լիարժեք չեն պաշտպանվում զինծառայողների իրավունքները:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքում (Օրենք) առկա են դրույթներ, որոնց մեկնաբանումն ու կիրառումը խնդիրներ է առաջացնում գորակոչի ընթացքում: Չնայած նրան, որ օրենսդրական խնդիրների լուծման նպատակով Նախարարությունը մշակել է «Զինապարտության և զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ (Նախագիծ), այն դեռևս չի ուղարկվել ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

Այսպես, գործող օրենքում խնդրահարույց է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում ստանալը⁶⁹: Մասնավորապես, Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե քաղաքացին մինչև գորակոչային տարիքի հասնելն առնվազն 5 տարի եղել է որդեգրված կամ ծնողներն ամուսնալուծվել են առնվազն 5 տարի առաջ, և կա սույն հոդվածով նախատեսված պայմաններից որևէ մեկը, ապա նա օգտվում է պարտադիր

⁶⁹ «Զինապարտության մասին» ՀՀ օրենք, հոդված 13

զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունքից: Տվյալ ձևակերպումը նույնպես փոխվել է Նախագծում, քանի որ Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միայն 5 տարի առաջ որդեգրվելու փաստը հաշվի չի առնվել տարկետում տրամադրելու հարցում:

Միաժամանակ, Նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գորակոչիկին տարկետում տրվում է, եթե մինչև 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ որդեգրվել է և առկա են սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 5-րդ կետերում նախատեսված պայմանները կամ եթե գորակոչիկն ունի երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով վեցամսյա հղիության մեջ գտնվող կին, ապա վերջինս օգտվում է պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստանալու իրավունքից:

Դրական է, որ բազմաթիվ խնդրահարույց հարցերի կարգավորումներ նախատեսվել են Նախագծով, այնուամենայնիվ, ո՛չ գործող օրենսդրությամբ, ո՛չ Նախագծում սահմանված չեն քաղաքացիների իրավունքները զինվորական հաշվառման, զինվորական ծառայության նախապատրաստության, գորակոչի միջոցով պարտադիր զինվորական ծառայության, գորահավաքային գորակոչի միջոցով զինվորական ծառայության և պահեստագորային հաշվառման ընթացքում:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել հնարավորինս սեղմ ժամկետներում Նախագիծը ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու ուղղությամբ:

3. Մի շարք դեպքերում գորակոչիկների առողջական վիճակի փորձաքննությունը թերի է իրականացվել, ինչի արդյունքում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչվել են առողջական խնդիրներ ունեցող գորակոչիկներ:

2015 թվականին ևս բողոքներ են ստացվել առողջական խնդիրներ ունեցող պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչված զինծառայողների իրավունքների կապակցությամբ: Այսպես, 2015 թվականի ընթացքում առողջական խնդիրներով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության գորակոչված զինծառայողներից և/կամ նրանց ծնողներից ստացվել են մի շարք բողոքներ, որոնց կապակցությամբ կայացվել են նաև մարդու իրավունքների խախտման մասին որոշումներ:

Պաշտպանի միջնորդությամբ կատարված կրկնակի բժշկական հետազոտության արդյունքում գորակոչիկների վերաբերյալ կայացված որոշումները մի շարք դեպքերում փոխվել են: Այսպես, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար սահմանափակմամբ պիտանի ճանաչված գորակոչիկները համապատասխան հիմքերի առկայության դեպքում ճանաչվել են ոչ պիտանի զինվորական ծառայության համար խաղաղ ժամանակ և հաշվառվել պահեստագործում կամ ճանաչվել են բուժման կարիք ունեցող կամ զինվորական ծառայության համար ժամանակավորապես ոչ պիտանի և նրանց տրվել է

տարկետում:

Նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2015 թվականին հիվանդության պատճառով վաղաժամկետ զորացրվել են և ՀՀ ԶՌԻ պահեստագործում հաշվառվել 617 ժամկետային զինծառայողներ, որոնցից 243-ի հիվանդությունը ծառայության հետ կապված չի եղել, իսկ 41-ի հիվանդությունը կարող էր հայտնաբերվել զորակոչի ընթացքում, ինչը վկայում է զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության թերի իրականացման մասին:

Հատկանշական է, որ չնայած նշված բազմաթիվ դեպքերին՝ Նախարարությունից միաժամանակ տեղեկացրել են, որ 2015 թվականին ՀՀ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի որոշումների վերաբերյալ բողոքներ չեն ներկայացվել, որոշումներ չեն փոփոխվել, ԿՌԲՀ բժիշկ-փորձագետների սխալներ չեն հայտնաբերվել: Նշված տվյալները մտահոգիչ են հատկապես զորակոչիկների առողջական վիճակի փորձաքննության գործընթացում արձանագրված բազմաթիվ խախտումների համատեքստում:

2015 թվականի ընթացքում արձանագրվել են պարտադիր ժամկետային զինծառայողներին զորակոչի ընթացքում պատշաճ բժշկական հետազոտության չենթարկելու դեպքեր, որոնց հետևանքով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության են զորակոչվել առողջական խնդիրներով անձինք, ովքեր ծառայության մեծ մասն անցկացրել են հոսպիտալներում:

Ինչպես 2014, այնպես էլ 2015 թվականին գրանցվել են դեպքեր, երբ հանձնաժողովի կողմից հաշվի չեն առնվել տեղական զորակոչային հանձնաժողովի կողմից քաղաքացիական բուժհաստատություններ ուղարկված զորակոչիկների բժշկական հետազոտությունների արդյունքները: Այսպես, Պաշտպանի աշխատակազմի կողմից զորակոչի ընթացքում զորակոչիկի բժշկական փաստաթղթերն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վերջինիս բժշկական հետազոտությունների արդյունքները հակասական են, և կրկնակի բժշկական հետազոտություն պահանջելուց հետո զորակոչիկը ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար խաղաղ ժամանակ, պիտանի սահմանափակումով պատերազմական ժամանակ:

Առաջարկ. ապահովել զորակոչիկների մանրակրկիտ բժշկական զննությունը՝ ուշադրություն դարձնելով բուժհաստատությունների կողմից ստացիոնար հետազոտության արդյունքներին, խստացնել հսկողությունը զորակոչիկների բժշկական հետազոտությունը կարգավորող օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, միաժամանակ զորակոչի ընթացքում մանրամասն քննության առնել բժշկական հետազոտությունների վերաբերյալ ներկայացվող դիմումներն ու բողոքները:

4. Առողջական խնդիրների պատճառով զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկները և զինծառայողները մի շարք դեպքերում չեն տեղեկացվել իրենց հակացուցված ծառայության ձևերի

մասին, և նրանց տրվել են առողջական վիճակի հետ անհամատեղելի հրամաններ:

Դեռևս 2014 թվականի տարեկան զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել էր զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին և զինծառայողներին՝ իրենց հակացուցված ծառայության ձևերի մասին չտեղեկացնելու խնդրին:

Նախարարության տրամադրած տվյալներով՝ ՀՀ զինվորական կոմիսարի կողմից տարածքային զինվորական կոմիսարներին տրվել է ցուցում՝ զինծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին ծանոթացնել ՀՀ պաշտպանության նախարարի 08.04.2013թ. թիվ 410 հրամանով հաստատված «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգին» և ՀՀ գլխավոր շտաբի պետի հրամանով հաստատված «Խաղաղ պայմաններում ՀՀ ԶՈՒ ժամկետային պարտադիր զինծառայողների զինվորական ծառայության պիտանելիության սահմանափակումների» ձեռնարկով սահմանված զինծառայության սահմանափակումների և թույլատրելի վարժությունների ցանկին: Համաձայն ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի 15.01.2014թ. թիվ 03 հրամանի՝ առողջական սահմանափակումներով շարային ծառայությանը պիտանի ճանաչված զինծառայողները նշանակվում են իրենց առողջությանը չվնասող պաշտոններում:

Նախարարությունից տեղեկացրել են նաև, որ նշված հարցի վերահսկման նպատակով 2015 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում իրականացվել են շուրջ 19 ստուգումներ, որոնց արդյունքում մի շարք պատասխանատու անձինք ենթարկվել են տույժի:

Չնայած վերը նշվածին՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2015 թվականին ևս ստացել է մի շարք բողոքներ, երբ բժշկական հանձնաժողովների (ԿԲՀ, ԿՌԲՀ) կողմից զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներն ու զինծառայողներն անտեղյակ են եղել ծառայության ընթացքում իրենց հակացուցված ձևերի մասին: Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով նախատեսված է, որ եթե զորակոչիկների և զինծառայողների մոտ հայտնաբերվում են զինվորական ծառայության համար սահմանափակ պիտանելիության հիմք տվող առողջական խնդիրներ, ապա դրանց մասին նշում է կատարվում համապատասխան փաստաթղթերում⁷⁰, սակայն իրավական ակտը չի նախատեսում այդ տեղեկատվության մասին զորակոչիկներին և զինծառայողներին իրազեկելու պարտադիր պահանջ, ինչի պատճառով գործնականում նրանց նկատմամբ սահմանված հակացուցումները չեն պահպանվում:

⁷⁰ «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ՊՆ 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410 հրաման, կետեր 35, 92:

Պաշտպանը բողոքներ է ստացել նաև զինվորական ծառայության ընթացքում զինծառայողներին իրենց առողջական վիճակի հետ անհամատեղելի ծառայության ձևերում ներգրավելու մասին, որը բացասաբար է ազդել այդ զինծառայողների առողջական վիճակի վրա: Պաշտպանի միջամտության արդյունքում Նախարարությունն անհապաղ ցուցում է տվել համապատասխան զորամասի հրամանատարությանը՝ զինծառայողին բժշկական օգնություն ցուցաբերելու և նախատեսված սահմանափակումները հետագայում խստորեն պահպանելու ուղղությամբ:

Առաջարկ. գրավոր իրազեկել առողջական խնդիրների պատճառով զինծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին և զինծառայողներին իրենց հակացուցված ծառայության ձևերի մասին, զորամասերում սահմանափակումների պահպանման նկատմամբ հաճախակի իրականացնել ստուգումներ:

5. 2015 թվականին ևս գրանցվել են զորակոչիկներին և զինծառայողներին իրենց բժշկական հետազոտության և/կամ առողջական վիճակի փորձաքննության արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը չտրամադրելու դեպքեր:

Նախարարությունը տեղեկացրել է, որ բոլոր տարածքային զինվորական կոմիսարներին կարգադրվել է զինվորական կոմիսարիատներում տեսանելի վայրերում փակցնել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին: Նույն հոդվածի համաձայն՝ մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամքին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

Չնայած տարածքային զինկոմիսարիատներին կարգադրվել է զորակոչիկների առողջական վիճակի մասին տվյալները տրամադրել անարգել՝ օրենքով սահմանված կարգով, սակայն քաղաքացիները դեռևս դժգոհություններ են հայտնում, որ տարածքային զինվորական կոմիսարիատները չեն տրամադրում առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի պատճենները:

Խնդրի կապակցությամբ նշենք, որ Նախարարության կողմից մշակված և Կառավարություն ներկայացված «Զինապարտության և զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանվել է, որ զինապարտն իրավունք ունի ծանոթանալ իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալ դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնել առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, օրենքով սահմանված կարգով

բողոքարկել իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

Նշենք նաև, որ Պաշտպանը մի շարք բողոքներ է ստացել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից գորակոչիկներին և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից զինծառայողներին բժշկական փորձաքննության և/կամ բժշկական հետազոտության արդյունքների մասին չտեղեկացնելու, համապատասխան փաստաթղթերը չտրամադրելու վերաբերյալ: Մինչդեռ, գորակոչիկների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննություններն իրականացնող հանձնաժողովները վարչական մարմիններ են և պարտավոր են իրենց կայացրած վարչական ակտերը (եզրակացություններ, որոշումներ) եռօրյա ժամկետում հանձնել շահագրգիռ անձանց՝ անկախ դիմումի առկայության հանգամանքից⁷¹: Այնուամենայնիվ, մի շարք դեպքերում դիմումատուները տեղեկացրել են, որ չեն ստացել իրենց կողմից պահանջված համապատասխան փաստաթղթերը, ինչի արդյունքում վերջիններս հնարավորություն չեն ունենում բողոքարկել Կենտրոնական բժշկական կամ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից կայացված որոշումները:

Առաջարկ. ապահովել գորակոչիկների և զինծառայողների բժշկական փորձաքննության և հետազոտման արդյունքում կայացվող որոշումների ու եզրակացությունների տրամադրումը:

6. Շարունակել են գրանցվել զինծառայողներին պատշաճ բժշկական օգնություն չտրամադրելու դեպքեր, ինչի մասին բարձրաձայնվել է նաև Պաշտպանի 2014 թվականի տարեկան զեկույցում:

2015 թվականին ևս ստացվել են մի շարք բողոքներ գորամասերում զինծառայողներին անհրաժեշտ բժշկական օգնություն չցուցաբերելու վերաբերյալ: Բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ զինծառայողներին ժամանակին և բավարար բուժօգնություն չցուցաբերելը պայմանավորված է եղել հիմնականում զինծառայողների առողջական խնդիրները ժամանակին հայտնաբերելու և բուժօգնություն ցուցաբերելու համար պատասխանատու պաշտոնատար անձանց թերացմամբ, անհրաժեշտ դեղորայքի բացակայությամբ, զինծառայողի կողմից առողջական խնդիրը թաքցնելով:

Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությամբ Նախարարության կողմից միջոցներ են ձեռնարկվել զինծառայողներին անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերելու ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում զինծառայողները տեղափոխվել են զինվորական բուժհաստատություններ (հոսպիտալներ), կազմակերպվել է պլանային վիրահատական բուժում:

Առաջարկ. խստացնել հսկողությունը և վերահսկողությունը՝ զինծառայողներին

⁷¹ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 59, մաս 2

բուժօգնություն ցուցաբերելու համար պատասխանատու անձանց պարտականությունների կատարման նկատմամբ, զորամասերն ապահովել անհրաժեշտ դեղամիջոցներով և սարքավորումներով:

7. Դեռևս շարունակում է չլուծված մնալ մի շարք զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման և ապահովման հիմնախնդիրը:

Ստացվել են բազմաթիվ բողոքներ զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման և ապահովման խնդիրների վերաբերյալ:

Այսպես, խնդրի ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ բնակարանային պայմանների բարելավման կամ բնակարան հատկացնելու համար ցուցակներ են կազմվում պայմանագրային ժամկետային զինծառայողների, զոհված զինծառայողների ընտանիքի անդամների և հաշմանդամ դարձած զինծառայողների, թոշակի անցած նախկին զինծառայողների և այլ խմբերի համար:

Ինչ վերաբերում է վերոնշյալ առաջին և երկրորդ խմբերի վերաբերյալ քաղաքացիները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել են, որ տարիներ շարունակ իրենց հերթը գրեթե առաջ չի անցնում, ցուցակներում անընդհատ նոր մարդիկ են ավելանում, ովքեր նախկինում չեն եղել, իսկ այդ ցուցակներում ընդգրկվածները տեղեկություններ չեն ստանում բնակարան ստանալու ժամկետի մասին:

Իսկ երրորդ խմբի անձանց մինչ օրս գումար չի հատկացվել այդ ծրագիրն իրականացնելու համար: Ծառայության ընթացքում պայմանագրային ժամկետային զինծառայողների բնակարանային ապահովման ցուցակում չընդգրկված զինծառայողները չեն ստանում բնակարան և հետագայում ընդգրկվում են թոշակի անցած նախկին զինծառայողների բնակարանային ապահովման ցուցակում:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ բնակարանային հաշվառման մեջ գտնվող և երկարամյա ծառայության կենսաթոշակի անցած, առողջության, տարիքի կապակցությամբ զինված ուժերից արձակված և առնվազն 12 տարի 6 ամիս ժամկետով զինվորական ստաժ ունեցող անձինք պահպանում են հաշվառման մեջ գտնվելու իրավունքը, իսկ հաշվառումից հանվում են բնակարանային պայմանների բարելավման դեպքում⁷²: Չնայած դրան՝ Նախարարությունն այս քաղաքացիներին հանում է զինծառայողների բնակարանային ապահովման ցուցակից թոշակի անցած զինծառայողների

⁷² ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշումը «ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման, ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանները զինծառայողներին և օրենքով սահմանված նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասով կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ ապահովելու» կարգը սահմանելու մասին, բաժին II, կետ 7

բնակարանային ապահովման ցուցակում հերթագրելու պատճառաբանությամբ՝ հավաստիացնելով, որ նրանք հերթից չեն զրկվում, այլ տեղափոխվում են այլ ցուցակ:

Առաջարկ. մշակել հստակ մեխանիզմներ բնակարանային պայմանների բարելավման խնդիրների ուղղությամբ, ինչպես նաև տրամադրել դրամական միջոցներ պահեստագործի սպաների բնակարանային խնդիրները լուծելու ուղղությամբ:

8. Մի շարք դեպքերում խախտվել են պայմանագրային զինձառայողների՝ զինձառայությունից արձակման ժամկետները:

Ինչպես 2014, այնպես էլ 2015 թվականին Պաշտպանը բազմաթիվ բողոքներ է ստացել պայմանագրային զինձառայողներից, ովքեր մինչև զինվորական ծառայության անցնելու մասին կնքված պայմանագրի ժամկետի ավարտը հրամանատարությանը զեկուցագիր են ներկայացրել ծառայությունից արձակվելու համար՝ պատրաստակամություն հայտնելով փոխհատուցել ուսման հետ կապված ծախսերը, սակայն իրենց պատասխանելու համար սահմանված ժամկետը լրացել է, և որևէ պատասխան չեն ստացել:

Այսպես, «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելիս զինձառայողները պարտավոր են փոխհատուցել ուսման ծախսերը՝ կառավարության սահմանած կարգով⁷³:

ՀՀ կառավարության որոշման համաձայն՝ հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու զեկուցագիր ստացած հրամանատարը (պետը) պարտավոր է ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում զեկուցագիրը կից գրությամբ ուղարկել լիազոր մարմնի կադրային ստորաբաժանման ղեկավարին, որը փաստաթղթերը կադրային մարմնում մուտք լինելուց հետո ոչ ուշ, քան 15-օրյա ժամկետում պարտավոր է զինձառայողի ծառայությունից արձակումը համաձայնեցնել շահագրգիռ ծառայությունների հետ և ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը ներկայացնել զինձառայողին⁷⁴:

Այսինքն, օրենսդրությամբ հստակ նախատեսված է ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը ներկայացնելու 15-օրյա ժամկետ, մինչդեռ մի շարք դեպքերում այդ ժամկետը չի պահպանվել, զինձառայողներին չի ներկայացվել ուսման ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը, և նրանք չեն արձակվել զինվորական ծառայությունից:

Նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2015 թվականի ընթացքում «ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու պայմանով»

⁷³ «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 51, մաս 1, կետ 10

⁷⁴ ՀՀ կառավարության 2010թ. ապրիլի 8-ի թիվ 393-Ն որոշումը «Ռազմաուսումնական հաստատություններ ավարտած զինձառայողների կողմից հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայությունից հրաժարվելու դեպքում ուսման հետ կապված ծախսերի փոխհատուցման» կարգը սահմանելու մասին, կետ 7

ՀՀ զինված ուժերի պահեստագոր է արձակվել 72 զինծառայող, որոնցից 21-ը գորացրվելու համար ՀՀ ՊՆ ղեկավարությանը դիմել են 2015 թվականին:

Տեղեկացրել են նաև, որ ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի կադրերի վարչությունում և համապատասխան գորամասերում 22 զինծառայողի հետ տարվել են աշխատանքներ, լուծվել են մի շարք սոցիալական բնույթի (նաև բնակարանային) խնդիրներ, որի արդյունքում վերջիններս հրաժարվել են արձակման մտքից և շարունակում են ծառայությունը՝ 10-ը՝ նախկին ծառայության վայրում, 12-ը՝ տեղափոխվել են ծառայության այլ վայր:

Նախարարության տված պարզաբանման համաձայն՝ զինվորական ծառայությունից արձակվելու հիմնական պատճառ է հանդիսանում ցածր վարձատրությունը, իսկ ուսման հետ կապված ծախսերը փոխհատուցելու պայմանով զինվորական ծառայությունից արձակվողների թվի մեծամասնությունը կազմում են ռազմարժշկական մասնագիտություն ունեցող անձինք, ովքեր քաղաքացիական պայմաններում կարողանում են վաստակել շատ ավելի, քան զինվորական ծառայության մեջ գտնվելով:

Առաջարկ. խստացնել հսկողությունը՝ պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու համար զեկուցագիր ներկայացնելու դեպքում փոխհատուցման ենթակա ուսման ծախսերի հաշվարկը ներկայացնելու և զինծառայությունից արձակելու գործընթացի նկատմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ Ոստիկանություն) իրավասության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Տեսողական խնդիրներ ունեցող հետիոտների երթևեկության անվտանգությունն ապահովելու նպատակով Ոստիկանության կողմից 2015թ.-ի ընթացքում Երևան քաղաքի 10 խաչմերուկներում առկա հետիոտնային լուսացույցների հետ միասին տեղադրվել են նաև ձայնաազդանշանային սարքեր:

2. Ոստիկանության աշխատակիցների կողմից ընտանեկան բռնության գոհերի բացահայտման, վերջիններիս հետ հաղորդակցման և պատշաճ խորհրդատվություն տրամադրելու հմտությունները բարելավելու նպատակով Ոստիկանության և հասարակական կառույցների փոխհամագործակցության արդյունքում պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ «Ընտանեկան բռնություն» թեմայով: Ընդհանուր առմամբ, 2015թ.-ին վերապատրաստվել են 174 ոստիկանության աշխատակիցներ: Ինչպես նաև Ոստիկանության և ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի միջև իրականացվող փոխհամագործակցության շրջանակներում Ոստիկանության ծառայողների և «Սոցիալական արդարություն» ՀԿ ներկայացուցիչների կողմից մշակվել են ընտանեկան բռնության գոհերի ուղղորդման մեխանիզմները, որոնցում ներառված են բռնության ենթարկված անձանց համապատասխան ծառայություններ մատուցող կառույցների դերը, մատուցվող ծառայությունների ձևերը և մեթոդները:

3. Ոստիկանության կողմից մշակվել է ««Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը համապատասխանեցվում է «Փախստականի կարգավիճակի մասին» 1951 թ.-ի կոնվենցիայի, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության պահանջներին: Տվյալ նախագիծը 2-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի 2015թ.-ի դեկտեմբերի 17-ի նիստում:

4. Ոստիկանության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել «Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հիմնախնդիրների լուծման ռազմավարությունը և դրանից բխող 2015-2016 թթ.-ների միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման

նախագիծ, որը 06.08.2015թ.-ին ՀՀ կառավարության նիստում ընդունվել է թիվ 37 արձանագրային որոշմամբ:

Առկա թերություններն ու խնդիրները

1. 2015թ.-ին կրկին արձանագրվել են Ոստիկանության կողմից խաղաղ հավաքների սահմանափակման որոշ դեպքեր, այդ թվում՝ ոչ իրավաչափորեն հավաքի ցրում, հավաքի մասնակիցների նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառում, նրանց ազատ տեղաշարժի սահմանափակում, իսկ որոշ դեպքերում՝ անհարկի բերման ենթարկում:

Մարդու իրավունքների պաշտպանը խաղաղ հավաքների իրավունքի սահմանափակման վերաբերյալ 2015թ.-ի ընթացքում ստացել է բազմաթիվ դիմում-բողոքներ և ահազանգեր արագ արձագանքումներ կազմակերպելու համար: Որոշ հավաքների դեպքերով քաղաքացիները հայտնել են, որ Ոստիկանության աշխատակիցները խոչընդոտել են իրենց ազատ տեղաշարժին՝ այն որակելով հասարակական կարգի խախտում, և պահանջել դադարեցնել ակցիան: Նշենք, սակայն, որ մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք միջազգային փաստաթղթերում, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) որոշումներում նշվում է, որ ինչպես հասարակական, այնպես էլ պաշտոնական տարբեր հավաքները/միջոցառումները կարող են որոշակի անհարմարություններ պատճառել դրանց չմասնակցող անձանց, ինչը հիմք չէ հավաքը դադարեցնելու համար⁷⁵: ՄԻԵԴ-ն, անդրադառնալով այս հարցին, նշել է, որ հասարակական վայրերում անցկացվող ցանկացած ցույց կարող է որոշակի չափով անհարմարություն պատճառել առօրյա կյանքին, այդ թվում՝ երթևեկության խափանում առաջացնել, և բոլոր այն դեպքերում, երբ ցուցարարները չեն կիրառում բռնություն, իշխանությունները պարտավոր են դրսևորել որոշակի աստիճանի հանդուրժողականություն խաղաղ հավաքի նկատմամբ, եթե հավաքի ազատությունը չի կորցրել իր բովանդակությունը⁷⁶:

Տարվա ընթացքում գրանցված դեպքերից մեկով ահազանգ է ստացվել, որ ոստիկանները արգելում են մի խումբ անձանց քայլել ՀՀ նախագահի նստավայրի հարակից մայթեզրով: Խնդրի ուսումնասիրությունից պարզվել է, որ բանակում մահացած զինծառայողների ծնողները ցանկացել են բողոքի ակցիա իրականացնել և այդ պատճառով են ոստիկանության աշխատակիցներն արգելել նրանց ՀՀ

⁷⁵ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի «Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղեցույց. Երկրորդ խմբագրություն», 2010թ., որտեղ նշվում է, որ «խաղաղ» եզրույթը պետք է մեկնաբանվի այնպես, որ ներառի այն գործողությունները, որոնք կարող են վրդովվեցնել կամ վիրավորել և անգամ այն գործողությունները, որոնք ժամանակավորապես խոչընդոտում և խանգարում են երրորդ անձանց գործողություններին, իրավունքների և շահերի իրականացմանը:

⁷⁶Բալչիկը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ, 2007թ. նոյեմբերի 29-ի վճիռ, գանգատ թիվ 25/02, կետ 52; և Աշուղյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռ, 2008թ. հուլիսի 17-ի վճիռ, գանգատ թիվ 33268/03, կետ 90

նախագահի նստավայրի դիմացով անցնել: Ոստիկանները նշել են նաև, որ իրենք ենթադրում են, որ նրանք մուտքը փակելու են և խոչընդոտելու ՀՀ նախագահի նստավայրի բնականոն աշխատանքը, այդ պատճառով չեն պատրաստվում բացել ճանապարհը: Նույն անձանց կողմից նույն վայրում կազմակերպած մեկ այլ հավաքի ժամանակ Ոստիկանության ծառայողներն անգամ ֆիզիկական ուժ են գործադրել ցուցարարների նկատմամբ նրանց դիմացի մայթ տեղափոխելու նպատակով, ինչի արդյունքում ցուցարարներից մեկի ինքնազգացողությունը վատացել է:

Մեկ այլ դեպքով քաղաքացին բողոքի ակցիա է իրականացրել ՀՀ գլխավոր դատախազության շենքի դիմաց, որի ժամանակ հացադուլ է հայտարարել: Ոստիկանության աշխատակիցները քաղաքացուն արգելել են ակցիան իրականացնել ՀՀ գլխավոր դատախազության շենքի մուտքի մոտ, և հայտնել են, որ քաղաքացին կարող է իր ակցիան իրականացնել միայն դիմացի մայթերին, քանի որ նա կարող է խանգարել ՀՀ գլխավոր դատախազության շենքի մուտքն ու ելքը⁷⁷: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները տեղում ծառայության իրականացնող Ոստիկանության աշխատակիցներին պարզաբանել են, որ եթե քաղաքացին ցանկանում է իր ակցիան իրականացնել ՀՀ գլխավոր դատախազության շենքի դիմաց, այն էլ մուտքից մոտ երկու մետր հեռավորության վրա, ապա դրանով նա որևէ կերպ չի խոչընդոտում շենքի ազատ մուտքն ու ելքը, հաշվի առնելով նաև այն, որ քաղաքացին ակցիան միայնակ է անցկացնում: Վերոգրյալի արդյունքում Ոստիկանության աշխատակիցները թույլատրել են քաղաքացուն ակցիա իրականացնել շենքի մուտքի մոտից մոտ երկու մետր հեռավորության վրա:

Հաշվի առնելով հարցի բացառիկ հասարակական նշանակությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություններ է կատարել լայն հնչեղություն ստացած 2015թ.-ի հունիսի 22-ի լույս 23-ին Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում նստացույցի հետ կապված Ոստիկանության գործողությունների կապակցությամբ: Տվյալ դեպքերի կապակցությամբ ստացվել են բազմաթիվ բողոքներ և ահազանգեր, որ Բաղրամյան պողոտայում «Ընդդեմ էլեկտրաէներգիայի թանկացման» նախաձեռնության կազմակերպած հավաքը սահմանափակվել է, մասնակիցների և լրագրողների նկատմամբ բռնություն է կիրառվել, որից հետո բազմաթիվ քաղաքացիներ բերման են ենթարկվել Ոստիկանության տարբեր բաժիններ, որտեղից էլ որոշ քաղաքացիներ իրենց կամքին հակառակ տեղափոխվել են նարկոլոգիական կենտրոններ: Վերջիններիս բաժիններում այցելել են Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները՝ դեպքերի հանգամանքները պարզելու և համապատասխան աջակցություն ցուցաբերելու նպատակով:

⁷⁷«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենք, հոդված 30 կետ 6. *Հավաքի մասնակիցը պարտավոր է՝ չխոչընդոտել հավաքի անցկացման վայրում գտնվող կամ դրան հարող շենքերի, շինությունների կամ այլ տարածքների ազատ մուտքն ու ելքը:*

Այսպես, հունիսի 22-ին և 23-ի լույս գիշերը հավաքի մասնակիցների գործողությունները խաղաղ բնույթ են կրել, սակայն նրանց երթը դեպի ՀՀ նախագահի նստավայրի վարչական շենք արգելվել է: Այնուհետև, հունիսի 23-ին Բաղրամյան պողոտայում իրականացվող հավաքը (նստացույցը) դադարեցվել, ցրվել է Ոստիկանության կողմից: Մինչդեռ, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասության սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին: Նմանատիպ պահանջ բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի պահանջներից, համաձայն որի իրազեկման պահանջների խախտմամբ անցկացվող, սակայն խաղաղ բնույթ ունեցող հավաքը ենթակա է պաշտպանության, իսկ ոստիկանությունն իր իրավասության սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին: Նշվածը վերահաստատվել է ՄԻԵԴ-ի կողմից իր մի շարք վճիռներում⁷⁸:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հունիսի 22-ի լույս 23-ի գիշերը և առավոտյան Բաղրամյան պողոտայում անցկացրած նստացույցի մասնակիցներին բերման ենթարկելու գործողություններին մասնակցել են նաև քաղաքացիական հագուստով անձինք: Մասնավորապես, մամուլում լայնորեն տարածված տեսագրությունների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ այդ անձինք կրել են ոչ թե սահմանված ձևի համազգեստ, այլ՝ քաղաքացիական հագուստ:

Մինչդեռ, հասարակական կարգի պահպանությունն իրականացնելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ⁷⁹: Առհասարակ, միջազգային լավագույն փորձի համաձայն՝ իրավապահ մարմինների ներկայացուցիչները պետք է հստակ կերպով և անհատապես նույնականացվեն: Այսինքն, համազգեստ կրող ծառայողները պետք է համազգեստի վրա փակցնեն նույնականացման հնարավորություն տվող տարբերանշաններ, որոնք չպետք է թաքցվեն/հեռացվեն և պետք է հասանելի լինեն անձանց հավաքի ժամանակ ընթերցելու համար⁸⁰:

Որոշ դեպքերում էլ հավաքները ցրվել են Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի գործադրմամբ: Ընդ որում, տարբեր հավաքների վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունից պարզվել է, որ անհամաչափ ֆիզիկական ուժ է կիրառվել Ոստիկանության ծառայողների, ինչպես նաև քաղաքացիական հագուստով անձանց կողմից թե հավաքի մասնակիցների և թե լրագրողների նկատմամբ, որն

⁷⁸Տե՛ս Օյա Աթաման ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ, 2006թ. դեկտեմբերի 5-ի վճիռ, զանգաստ թիվ 74552/01, կետ 42 և Նուրեթդին Ալդեմիրը և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով վճիռ, 2007թ. դեկտեմբերի 18-ի վճիռ, զանգաստներ թիվ 32124/02, 32126/02, 32129/02, 32132/02, 32133/02, 32137/02 և 32138/02, կետ 46

⁷⁹«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 12

⁸⁰ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի «Խաղաղ հավաքների ազատության վերաբերյալ ուղեցույց. Երկրորդ խմբագրություն», 2010թ.

անհրաժեշտաբար պայմանավորված չէր կոնկրետ իրավիճակով և հանգամանքներով:

Որպես օրինակ, ոստիկանության ծառայողների և քաղաքացիական հագուստով անձանց կողմից ցուցարարների և լրագրողների նկատմամբ նման անհամաչափ ուժի կիրառում է գրանցվել հունիսի 22-23-ին Բաղրամյան պողոտայում և Ազատության հրապարակում: Չնայած նրան, որ ուժի կիրառումից առաջ Ոստիկանությունն առաջարկել էր Բաղրամյան պողոտայից հավաքը տեղափոխել Ազատության հրապարակ կամ քաղաքի ոչ բանուկ այլ մաս, սակայն, մի շարք տեսագրությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ Բաղրամյան պողոտայում հավաքը ցրելուց հետո Ազատության հրապարակ տեղափոխված հավաքի մասնակիցները բերման են ենթարկվել Ոստիկանության ծառայողների և քաղաքացիական հագուստով անձանց կողմից, ինչպես նաև նրանց նկատմամբ կիրառվել է անհամաչափ ֆիզիկական ուժ:

Նշված դեպքերով Ոստիկանության ծառայողների գործողությունները դատապարտող հայտարարություններ են արվել մի շարք տեղական և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների, ինչպես նաև օտարերկրյա դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից, որտեղ արձանագրվում էր, որ Ոստիկանության գործողությունները խախտում են հավաքների անցկացման և խոսքի ազատության հիմնարար իրավունքը:

Մինչդեռ, ոստիկանության հարկադրական բնույթի լիազորությունների իրականացումը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակներին, իսկ դրանց հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր⁸¹: Բացի այդ, ոստիկանության ծառայողը, որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել: Իսկ օրենքով չնախատեսված դեպքերում ոստիկանության ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և հրազենի գործադրումը կամ սահմանների անցումով դրանց գործադրումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով⁸²:

Ֆիզիկական ուժի կիրառման համատեքստում անհրաժեշտ է մեջբերել ՄԻԵԴ-ի՝ մի շարք գործերով կայացված վճիռներում տեղ գտած դիրքորոշումները, որոնցում դատարանը նշել է, որ երբ անձն արդեն փաստացիորեն վնասազերծվել է՝ վերջինիս նկատմամբ ուժի չարդարացված կիրառումը հանդիսանում է մարդու իրավունքների խախտում: Ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում անընդունելի է

⁸¹«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 3

⁸²«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 7, 29

վնասագերծված և այլ իրավախախտում չկատարող անձանց նկատմամբ ոստիկանների կողմից ֆիզիկական ուժի կիրառման դեպքերը⁸³:

Ըստ Ոստիկանության ներկայացրած տվյալների՝ 2015թ.-ի հունիս-հուլիս ամիսներին Բաղրամյան պողոտայում և Ազատության հրապարակում էլեկտրոններգիայի սակագնի թանկացման կապակցությամբ տեղի ունեցած հավաքների կապակցությամբ Ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում կատարվել են 3 ծառայողական քննություն և 1 ստուգում, որի արդյունքում Ոստիկանության 12 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժերի:

Չնայած նրան, որ Ոստիկանության կողմից ձեռնարկվել են քայլեր մի շարք դեպքերով իրենց խախտումների հետևանքների վերացման ուղղությամբ (ծառայողական քննությունների իրականացում, կարգապահական տույժերի նշանակում⁸⁴, ինչպես նաև հավաքի ընթացքում լրագրողի վնասված տեխնիկայի փոխհատուցում⁸⁵), այնուամենայնիվ, Մարդու իրավունքների պաշտպանի ստացած դիմում-բողոքների, ՋԼՄ-ների նյութերի, ՀԿ-ների և միջազգային կառույցների հրապարակած զեկույցների և հայտարարությունների տվյալները⁸⁶ վկայում են հավաքների ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից կատարված արարքները ոչ պատշաճ արձանագրելու, հետազոտելու, ինչպես նաև դրանց կատարման համար պատասխանատվության միջոցներ չկիրառելու մասին: Նման գործելաոճը վնասում է Ոստիկանության նկատմամբ հանրության մեջ հարգանքի և վստահության ձևավորմանը:

Հավաքների իրավունքի իրացման հետ կապված այլ խնդիր է, որ հավաքի մասնակիցներին որոշ դեպքերում անհիմն բերման են ենթարկել վարչական իրավախախտման համար արձանագրություն կազմելու նպատակով: Ոստիկանության տվյալների համաձայն՝ հավաքների մասնակիցների դեմ վարչական իրավախախտում կատարելու վերաբերյալ գործերով 2015թ.-ի ընթացքում հավաքների մասնակիցների նկատմամբ վարչական իրավախախտումներ կատարելու գործերով վարչական իրավախախտման վերաբերյալ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության տարբեր բաժիններում կազմվել է թվով 113

⁸³Կլասն ընդդեմ Գերմանիայի, 1978թ. սեպտեմբերի 6-ի վճիռ, գանգատ թիվ 5029/71, Ռեբոքն ընդդեմ Սլովենիայի, 2000թ. նոյեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 29462/95, Գյունայդինն ընդդեմ Թուրքիայի, 2015թ. հոկտեմբերի 15-ի վճիռ, գանգատ թիվ 27526/95

⁸⁴<http://www.a1plus.am/1408056.html>

⁸⁵http://www.yerkirmedia.am/?act=news&lan=hy&id=28138#.Vbt_pucjLwg.facebook

⁸⁶«Մարդու իրավունքները Հայաստանում 2015 թ.» զեկույց, 2016 թ. / Հայաստանի հելսինկյան կոմիտե <http://armhels.com/wp-content/uploads/2016/01/Ditord-2016-01Armenian.pdf> «Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման վիճակը՝ ըստ ՋԼՄ մշտադիտարկման 2015թ.-ի արդյունքների վերաբերյալ» զեկույց, 2016թ./Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ <http://hcav.am/publications/29-01-2016-03/>

Amnesty International <https://www.amnesty.org/en/latest/news/2015/06/armenia-investigate-alleged-police-abuses-after-protesters-doused-with-water-cannon-and-arrested/>

Human Rights Watch <https://www.hrw.org/news/2015/06/24/armenia-police-violence-against-protesters-journalists>, https://www.hrw.org/sites/default/files/world_report_download/wr2016_web.pdf

արձանագրություն, որոնցից ընդամենը 56 հայցադիմում է 2015թ.-ին ներկայացվել ՀՀ վարչական դատարան: Տվյալ վիճակագրությունը, Մարդու իրավունքների պաշտպանի անցկացրած հավաքների մոնիթորինգի արդյունքների հետ միասին վկայում են, որ նման բերման ենթարկման դեպքերը, ըստ էության, վարչական բերման ենթարկելու գործողությունները հաճախ եղել են չհիմնավորված և ուղղակիորեն նպատակ են հետապնդել ցրելու հավաքը, քանի որ բերման ենթարկում է եղել անգամ այն դեպքերում, երբ հնարավոր է եղել հենց տեղում՝ հավաքի անցկացման կամ այլ վայրում, կազմել զանցանք կատարելու վերաբերյալ արձանագրություն:

Առհասարակ, հաշվի առնելով Ոստիկանության կողմից ոչ իրավաչափ ֆիզիկական ուժի կիրառման խնդրի առկայությունը, դրա վերացմանն ուղղված միջոցառումներ նախատեսվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրով⁸⁷, այն է՝ իրավապահ մարմինների և համայնքային ծառայողների համար կազմակերպել շարունակական վերապատրաստումներ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան կանոնակարգերի դրույթների պրակտիկ կիրառման վերաբերյալ:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ ապահովելու խաղաղ հավաքների իրավունքը, այդ թվում՝ բացառել ոչ համաչափ ֆիզիկական ուժի կիրառման, ոչ իրավաչափորեն հավաքը ցրելու, անձանց ազատ տեղաշարժը սահմանափակելու, ինչպես նաև անհարկի բերման ենթարկելու դեպքերը, ինչպես նաև նախաձեռնել համակարգային միջոցառումներ՝ ուղղված Ոստիկանության ծառայողների էթիկայի կանոնների և մասնագիտական հմտությունների բարձրացմանը:

2. Կրկին գրանցվել են իրավապաշտպանների, լրագրողների օրինական գործունեության խոչընդոտման, վերջիններիս նկատմամբ բռնության կիրառման դեպքեր, որոնց կանխման, բացահայտման և մեղավորներին պատժելու ուղղությամբ Ոստիկանությունը չի ձեռնարկել բավարար քայլեր:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից վերջին տարիներին զեկույցների, հայտարարությունների միջոցով պարբերաբար բարձրաձայնվում են լրագրողների, իրավապաշտպան գործունեությամբ զբաղվողների նկատմամբ բռնության, իրենց օրինական գործունեությանը խոչընդոտելու և նրանց իրավունքները խախտելու դեպքերը: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից ուսումնասիրված բազմաթիվ ահազանգերի և դիմում-բողոքների, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրված գործերի արդյունքները ցույց են տվել, որ լրագրողների և իրավապաշտպանների օրինական գործունեության իրականացմանը հաճախ խոչընդոտել են հենց Ոստիկանության ծառայողները:

Չնայած նրան, որ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի համաձայն՝

⁸⁷ՀՀ կառավարության 27.02.2014թ.-ի թիվ 303-Ն որոշում «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին», կետ 30

լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը քրեորեն պատժելի արարք է, ստացվել են մի շարք ահազանգեր, որ 2015թ.-ին Բաղրամյան պողոտայում «Ընդդեմ էլեկտրաէներգիայի թանկացման» նախաձեռնության կազմակերպած հավաքի ընթացքում լրագրողների նկատմամբ բռնություն է կիրառվել, որից հետո վերջիններս բերման են ենթարկվել Ոստիկանության տարբեր բաժիններ:

ԶԼՄ-ում տարածված մի շարք տեսագրությունների ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ոստիկանության ծառայողների, ինչպես նաև քաղաքացիական հագուստով անձանց կողմից ոչ իրավաչափ ֆիզիկական ուժ է կիրառվել մի շարք լրագրողների (այդ թվում՝ Ազատություն ո/կ, Hetq.am, ԳԱԼԱ հեռուստաընկերություն, Հայկական ժամանակ, News.am, PanArmenian.net, Epress.am, lin.am, ArmTimes.com) նկատմամբ: Վերջիններիս տարաբնույթ վնաս է հասցվել, ներառյալ՝ վերցրել են նրանց տեսանկարահանող և այլ սարքերը, վնասել դրանք, նրանք բերման են ենթարկվել հավաքի վայրից:

Նշվածի կապակցությամբ Ոստիկանությունից տեղեկացրել են, որ էլեկտրաէներգիայի սակագնի թանկացման որոշման դեմ մի խումբ ակտիվիստների կողմից 2015թ.-ի հունիսի 23-ին Երևան քաղաքի Բաղրամյան պողոտայում և Ազատության հրապարակում իրականացված ակցիայի ընթացքում հասարակական կարգի պահպանությանն ու անվտանգության ապահովմանը ներգրավված ոստիկանության ծառայողների գործողությունների իրավաչափության, ինչպես նաև նրանց կողմից կարգապահական բնույթի խախտումներ թույլ տալու հանգամանքները պարզելու նպատակով՝ ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացված ծառայողական քննության շրջանակներում ստացվել և ծառայողական քննության նյութերին են կցվել լրագրողներ Սարգիս Հարությունյանի, Թագուհի Թորոսյանի, Արմեն Աշիկյանի, քաղաքացի Տիլիպ Արզումանյանի, «www.ilur.am» լրատվական կայքի լրագրող Հակոբ Կարապետյանի, «Ազատություն/ազատ Եվրոպա» ռադիոկայանի Երևանյան գրասենյակի ղեկավար Հեղինե Բունիաթյանի, «Համահայկական տեղեկատվական կենտրոնի» տնօրեն Վահե Հարությունյանի Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոն կատարած ահազանգների վերաբերյալ զեկուցագրերը:

Ծառայողական քննության ընթացքը կասեցվել է, և որոշվել է ոստիկանության ծառայողների կողմից լրագրողների նկատմամբ բռնություն կիրառելու, վերջիններիս տեսախցիկները վնասելու և լրագրողների մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու դեպքերին անդրադառնալ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործի նախաքննության արդյունքներով:

Նշված խնդիրների համատեքստում պետք է նշել, որ պետությունը պարտավոր է պաշտպանել լրագրողներին և իրավապաշտպաններին հնարավոր հարձակումներից, սպառնալիքներից, ապահովել վերոնշյալ անձանց նկատմամբ հարձակումների և սպառնալիքների վերաբերյալ հաղորդումների անհապաղ և

համապարփակ ուսումնասիրությունը՝ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու և տուժողների իրավունքները վերականգնելու նպատակով⁸⁸: Այս իմաստով Ոստիկանության գործառույթն է ոչ միայն տվյալ դեպքերի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, այլև անձանց, հատկապես լրագրողների, իրավապաշտպանների, անվտանգությունն ու անձեռնմխելիության ապահովումը:

Այնուամենայնիվ, 2015թ.-ին կրկին գրանցվել են իրավապաշտպան գործունեությամբ զբաղվողների նկատմամբ բռնության դեպքեր: Այսպես, հայտնի դեպքերից մեկով 2015թ.-ի օգոստոսին անցկացված Համահայկական խաղերի ժամանակ ակտիվիստը թռուցիկներ է բաժանել, որոնցում տեղ գտած տեղեկատվությունը քաղաքական բնույթի է եղել: Ակտիվիստի խոսքով՝ իրեն մի քանի օր շարունակ հետևել են ոստիկանները, իսկ քաղաքացիական հագուստով անձինք իրեն տան մուտքի մոտ ծեծի են ենթարկել, ապա սպառնացել և դիմել փախուստի: Ավելին, քաղաքացու պնդմամբ՝ իրեն ծեծի ենթարկողները եղել են ոստիկաններ: Չնայած միջադեպի վերաբերյալ եղել են հրապարակումներ լրատվամիջոցներում, սակայն Ոստիկանությունում դեպքի առթիվ քրեական գործ չի հարուցվել⁸⁹:

Չնայած այն հանգամանքին, որ միջազգային փաստաթղթերում չկա հստակ սահմանում, թե ով է իրավապաշտպան գործունեություն իրականացնողը, այնուամենայնիվ, համաձայն ՄԱԿ-ի Իրավապաշտպանների մասին հռչակագրի՝ իրավապաշտպան կարող է լինել ցանկացած անձ կամ անձանց խումբ, որոնք աջակցում են մարդու իրավունքների պաշտպանությանը⁹⁰: Անհրաժեշտ է նշել, որ իրավապաշտպաններ կարող են համարվել ոչ միայն հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, այլ նաև որոշ դեպքերում քաղծառայողները, պաշտոնատար անձինք (government officials), ինչպես նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչները⁹¹: Նշենք, որ մինչդեռ լրագրողների գործունեությանը խոչընդոտելը քրեորեն հետապնդելի արարք է⁹², ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց գործունեության խոչընդոտման արգելքի երաշխիքներ⁹³:

Իրավապաշտպանների իրավիճակի վերաբերյալ ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի՝ Մարգարետ Սեկագիայի 2010թ.-ի զեկույցում նշվում է որպես գլխավոր խնդիր,

⁸⁸Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի զեկույց, 2015թ.-ի ապրիլի 13, <http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMSession21.aspx>

⁸⁹«Մարդու իրավունքները Հայաստանում 2015 թ.» զեկույց, էջ 19 / Հայաստանի հելսինկյան կոմիտե <http://armhels.com/wp-content/uploads/2016/01/Ditord-2016-01Armenian.pdf>

⁹⁰Յուրաքանչյուր ոք իրավունք ունի անհատապես կամ այլ անձանց հետ համատեղ խրախուսել և ձգտել պաշտպանելու մարդու իրավունքները և հիմնարար ազատություններ ներպետական կամ միջազգային հարթակներում: http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/defender.shtml

⁹¹<http://www.ohchr.org/EN/Issues/SRHRDefenders/Pages/Defender.aspx>,

⁹²ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 164

⁹³Մանրամասն տե՛ս «ՀՀ արդարադատության նախարարություն» գլխում

իրավապաշտպանների և լրագրողի իրավունքների ոտնահարման դեպքում իրավախախտների չբացահայտումը՝ պատճառաբանելով նշվածը Հայաստանում արմատավորված անպատժելիության մշակույթով⁹⁴:

Մարդու իրավունքների պաշտպանը 2015թ.-ի ընթացքում հանդես է եկել հրապարակային հայտարարություններով ու կոչերով, որոնցով խստորեն դատապարտել է լրագրողների, իրավապաշտպանների, քաղաքական գործիչների հասցեին սպառնալիքներ հնչեցնելը, նրանց նկատմամբ ոտնձգությունների և բռնության դեպքերը⁹⁵:

Առաջարկ. **ձեռնարկել բավարար միջոցներ լրագրողների, իրավապաշտպանների օրինական գործունեությանը խոչընդոտվելու և վերջիններիս նկատմամբ բռնության դեպքերի հանգամանքները մանրամասն ուսումնասիրելու, դրանք բացահայտելու, իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու և հետագայում նմանատիպ դեպքերը կանխելու ուղղությամբ:**

3. Մի շարք դեպքերում, հակառակ օրենքի պահանջին, Ոստիկանության աշխատակիցները բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց չեն ապահովել փաստաբանով և չեն պարզաբանել իրենց իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2015թ.-ի ընթացքում ստացել է մի շարք դիմում-բողոքներ և ահազանգեր առ այն, որ բերման ենթարկված անձինք չեն ապահովվել փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությամբ: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված մի շարք դիմումներով և՛ քաղաքացիները, և՛ իրենց փաստաբանները հայտնել են այն մասին, որ Ոստիկանության կողմից խոչընդոտներ են ստեղծվում տեսակցելու փաստաբաններին/վստահորդներին: Ոստիկանության ծառայողների կողմից փաստաբաններին՝ իրենց վստահորդների հետ տեսակցելու հնարավորության սահմանափակումը, հիմնականում, կատարվել է առանց լուրջ հիմնավորումներ ներկայացնելու՝ ուղղակի արհեստականորեն ձգձգելով տեսակցության իրականացումը: Մի շարք այդպիսի դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների անմիջական միջամտության արդյունքում նշված խնդիրները լուծում են ստացել:

Դեպքերից մեկով Մարդու իրավունքների պաշտպանին է ահազանգել փաստաբանը և հայտնել, որ իր վստահորդներին բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության համապատասխան բաժին, և ինքը եկել է բաժին, սակայն ոստիկանության աշխատակիցներն արգելում են իրեն մուտք գործել բաժին՝ ստանձնելու իր վստահորդների պաշտպանությունը: Մեկ այլ դեպքով

⁹⁴<http://www2.ohchr.org/english/bodies/hrcouncil/docs/16session/A-HRC-16-44.pdf>

⁹⁵Տե՛ս, օրինակ http://ombuds.am/library/view_news/article/986, http://ombuds.am/library/view_news/article/1058

փաստաբանը հայտնել է, որ իր վստահորդին բերման են ենթարկել Ոստիկանության համապատասխան բաժին, սակայն Ոստիկանության ծառայողներն արգելում են իրեն մուտք գործել բաժին: Նշված կապակցությամբ Ոստիկանությունից Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին տեղեկացրել են, որ գերլարված աշխատանքի պատճառով որոշ ուշացումներ են լինում:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ է զանգահարել փաստաբանը և տեղեկացրել, որ իրեն Ոստիկանության աշխատակիցները արգելում են հանդիպել իր վստահորդի հետ և ներկա գտնվել դատավարական գործողություններին: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները նշվածի կապակցությամբ զրուցել են Ոստիկանության համապատասխան բաժնի պետի հետ, որն էլ իր հերթին հայտնել է, որ տեղյակ չէ խնդրից, նշել է նաև, որ տեղեկանալուց հետո անմիջապես փաստաբանին հնարավորություն կտրվի հանդիպելու և ներկա գտնվելու իր վստահորդի հետ կապված բոլոր դատավարական գործողություններին:

Այսպիսով, Ոստիկանության նման գործողություններով խախտվել է անձանց՝ իրավաբանական օգնություն ստանալու, իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու սահմանադրական իրավունքը⁶⁶: Միաժամանակ, պաշտպան ունենալու իրավունքը հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին օրենքով վերապահված կարևորագույն իրավունքներից մեկն է: Առհասարակ, այն պահից, երբ կասկածյալը/մեղադրյալը պաշտպան ունենալու ցանկություն է հայտնում, քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը դառնում է պարտադիր⁶⁷: Իսկ Ոստիկանությունը պարտավոր է անձին վարչական շենք բերելուց հետո ապահովել նրա փաստաբան հրավիրելու համար հեռախոսագանգեր կատարելու հնարավորությունը և իրավաբանական օգնություն ստանալը: Քրեադատավարական այս իրավունքը կարևոր երաշխիք է, քանի որ հաճախ քաղաքացիների ցածր իրավագիտակցության պատճառով անձի իրավունքներն առավել հաճախ խախտվում են վարույթի հենց այս փուլում: Մասնավորապես, քրեական գործերի հարուցման և հետագայում մեղադրական եզրակացության հիմքում որպես ապացույցի տեսակ հաճախ դրվում է անձի ցուցմունքը, որը շատ դեպքերում կրում է ինքնախոստովանական բնույթ, և, որից նրանք հրաժարվում են վարույթի մյուս փուլերում՝ համապատասխան իրավաբանական օգնություն ստանալուց հետո: Ուստի, հնարավոր խախտումների նվազեցման նպատակով Ոստիկանությունը չպետք է որևէ ձևով խոչընդոտի բերման ենթարկվածի/ձերբակալվածի հետ փաստաբանի անհապաղ կարգով տեսակցությանը:

2015թ.-ին կրկին արձանագրվել են դեպքեր, երբ բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց Ոստիկանության ծառայողները չեն պարզաբանել իրենց իրավունքները: Արձանագրված դեպքերից մեկով պարզվել է, որ Ոստիկանության

⁶⁶ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 64, 67

⁶⁷ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 69

աշխատակիցները բերման են ենթարկել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության Նոր Նորքի տարածքային կազմակերպության ղեկավարին: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները այցելել են Ոստիկանության համապատասխան բաժին, առանձնագրույց ունեցել քաղաքացու հետ, ինչի արդյունքում պարզվել է, որ վերջինիս նկատմամբ բռնություն չի կիրառվել: Սակայն վերջինիս մոտ զենք է հայտնաբերվել և ինքը չիմանալով, որ ունի լուրի իրավունք, հայտնել է, որ զենքը պատկանում է իրեն: Նշվածից կարելի է գրակացնել, որ ոստիկանության աշխատակիցները քաղաքացուն չեն պարզաբանել իր իրավունքները:

Ինչ վերաբերում է բերման ենթարկված անձանց իրենց իրավունքների պարզաբանման խնդրին, ապա անձի ազատության սահմանափակման պահից, իր կարգավիճակի առանձնահատկությունից ելնելով (բերման ենթարկված, ինչպես նաև սահմանափակման նախնական և կարճաժամկետ բնույթը), վերջինս պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով. (ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, (բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին, (գ) հրավիրելու իր փաստաբանին, (դ) լուրի⁹⁸, քանի որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված չեն բերման ենթարկվածի իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ, Ոստիկանության պետի՝ 17.09.2007թ.-ի թիվ 3-Ն հրամանի համաձայն՝ ոստիկանության աշխատակիցների կողմից իրավունքների ծանուցումից հետո կազմվում են համապատասխան արձանագրություններ: Նշվածից կարելի է ենթադրել, որ տվյալ հրամանը պարտադրում է Ոստիկանության աշխատակիցներին անձանց ազատության սահմանափակման պահից վերջիններիս պարզաբանել իրենց իրավունքները: Սակայն ստացված ահազանգերն ու բողոքները ցույց են տալիս, որ գործնականում ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման, այնպես էլ նշված հրամանի պահանջները բազմաթիվ դեպքերում չեն կատարվել Ոստիկանության կողմից, իսկ շատ դեպքերում իրազեկումը կրել է ձևական բնույթ, քանի որ ստորագրելով իրազեկված լինելու վերաբերյալ արձանագրությունը, անձինք փաստացի չեն ծանոթացել իրենց իրավունքներին կամ դրանք չեն պարզաբանվել:

Unuzարկ. պատշաճ կերպով ապահովել բերման ենթարկված, ձերբակալված անձանց տեսակցությունն իրենց փաստաբանի հետ, ապահովել, որպեսզի Ոստիկանության աշխատակիցների կողմից ազատությունը սահմանափակված անձանց պատշաճ կերպով պարզաբանվեն իրենց իրավունքները:

⁹⁸ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱԴԴ 0085/06/09 որոշում, «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.06.2007թ.-ի թիվ 818-Ն որոշմամբ նույնպես ՀՀ ոստիկանության ստորաբաժանումներ բերման ենթարկված անձինք, սահմանված կարգի համաձայն, պարտադիր պետք է ծանուցվեն որոշ իրավունքների մասին:

4. Կրկին գրանցվել են Ոստիկանության բաժանմունքներում վարվող մատյանների չլրացման կամ թերի լրացման դեպքեր, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերը քաղաքացիներից անհարկի վերցնելու դեպքեր:

Դեռևս անցած տարվա զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնել էր Ոստիկանության բաժանմունքներում վարվող մատյանների չլրացման կամ թերի լրացման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերը քաղաքացիներից անհարկի վերցնելու դեպքերի վերաբերյալ: Տվյալ պրակտիկան պահպանվել է նաև 2015թ.-ի ընթացքում:

Ստացվել են բազմաթիվ ահազանգեր և դիմում-բողոքներ առ այն, որ Ոստիկանություն բերման ենթարկված անձանց վերաբերյալ տվյալները (անձնական, բերման ենթարկելու ժամ, պատճառ և այլն) հաշվառման մատյաններում ուշ են գրանցել կամ ընդհանրապես չեն գրանցել, ինչպես նաև որոշ դեպքերում քաղաքացիներից անհարկի վերցրել են անձը հաստատող փաստաթղթերը: Նշված գործողությունների արդյունքում անձինք Ոստիկանության բաժնում պահվել են ավելի երկար, քան սահմանվում է օրենքով⁹⁹, ինչի արդյունքում սահմանափակել է անձանց մի շարք իրավունքներ:

Ստացված ահազանգերից մեկի դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները ոստիկանության համապատասխան բաժնի հերթապահ մասում ուսումնասիրել են բերման ենթարկվածների մատյանը՝ արձանագրելով, որ այդ օրվա վերաբերյալ ոչ մի գրառում կատարված չի եղել: Չնայած նրան, որ Ոստիկանության բաժին բերված յուրաքանչյուր անձ պետք է գրանցվի հերթապահ մասի բերման ենթարկվածների հաշվառման գրքում¹⁰⁰, այնուամենայնիվ, դեպքերից մեկով անձին բնակարանից տարել են ոստիկանության բաժին և վերջինիս չեն թողել դուրս գալ բաժնից: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից հերթապահ մասում բերման ենթարկվածների մատյանը ուսումնասիրելու արդյունքում պարզվել է, որ քաղաքացու վերաբերյալ որևէ գրառում չի եղել: Միաժամանակ, քաղաքացին հայտնել է, որ արդեն երրորդ դեպքն է, որ ոստիկաններն իրեն տանից բերում են բաժին և պահանջում են, որ ինքը հայտնի իր որդու գտնվելու վայրի մասին:

Չնայած նրան, որ նման խախտումների մասին Մարդու իրավունքների պաշտպանի ստացած բողոքները բազմաթիվ են, իսկ խնդիրը համակարգային բնույթ է կրում, Ոստիկանությունից հայտնել են, որ Ոստիկանության բաժանմունքներում վարվող մատյանների չլրացման կամ թերի լրացման դեպքերի կապակցությամբ կատարվել են 6 ծառայողական քննություններ, որոնց արդյունքում ոստիկանության 8 ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժերի (4-ին հայտարարվել է

⁹⁹ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 131

¹⁰⁰ՀՀ ՆԳ նախարարի հերթապահ մասերի գործունեությունը կարգավորող 01.12.1994թ.-ի թիվ 977 հրամանով սահմանվում է պահանջ, համաձայն որի՝ Ոստիկանության բաժին բերված յուրաքանչյուր անձ գրանցվում է հերթապահ մասի բերման ենթարկվածների հաշվառման գրքում:

նկատողություն, 4-ին՝ խիստ նկատողություն), ընդհանուր առմամբ Ոստիկանության տարբեր բաժիններում արձանագրվել է 15 նման դեպք: Իսկ ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից անձին ստորաբաժանում բերման ենթարկելու մասին արձանագրություններում կամ հաշվառման մատյաններում գրառում չկատարելու կամ սխալ, անհամապատասխան գրառումներ կատարելու կապակցությամբ Ոստիկանությունը կատարել է 2 ծառայողական քննություններ, որոնց արդյունքում ոստիկանության 1 ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի:

2015թ.-ին գրանցվել են նաև քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերն անհիմն վերցնելու դեպքեր: Այսպես, դրանից մեկով Ոստիկանության աշխատակիցներից մեկը այցելել է քաղաքացու բնակարան, անչափահաս աղջկանից վերցրել է անձնագիրը և հրաժարվել է վերադարձնել այն: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում քաղաքացուն վերադարձվել է անձնագիրը:

Նմանատիպ այլ դեպքով Ոստիկանության ծառայողները վերցրել են քաղաքացու անձնագիրը և հրաժարվել այն վերադարձնել: Նշվածի կապակցությամբ Ոստիկանության աշխատակիցները պարզաբանումներ էին ներկայացրել Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին, որ քաղաքացին «ինքն է բաժնում մոռացել իր անձնագիրը» և կարող է գալ և վերցնել այն: Մեկ այլ ահազանգի համաձայն՝ քաղաքացին՝ իր և եղբոր անձնագրերը ելքի վիզայի ժամկետները երկարաձգելու համար տարել է Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության համապատասխան բաժանմունք, սակայն Ոստիկանության աշխատակիցները հանցագործության մեջ կասկածանքի հիման վրա եղբոր անձնագիրն առգրավել են և հրաժարվել են վերադարձնել: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչին Ոստիկանությունից տվյալ դեպքի կապակցությամբ հայտնել են, որ տեղի ունեցածը թյուրիմացության արդյունք է, և տեղեկացրել են, որ քաղաքացին կարող է գալ և վերցնել իր անձնագիրը:

Առաջարկ. վերահսկել Ոստիկանության բաժանմունք բերման ենթարկված անձանց վերաբերյալ հաշվառման մատյաններում գրանցումների ժամանակին և լիարժեք կատարումը, բացառել քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերն անհիմն վերցնելու պրակտիկան:

5. **Ոստիկանության ծառայողների կողմից առանձին դեպքերում չեն պահպանվել հաղորդումների քննարկման ժամկետները, ինչպես նաև դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկը կայացնելու պահանջը:**

2015թ.-ի ընթացքում նույնպես գրանցվել են դեպքեր՝ կապված Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման ժամկետները խախտման, դրանք քննարկելիս օրենքով սահմանված որոշումներից մեկի չկայացման հետ: Նշենք, որ նմանատիպ խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանի կողմից արձանագրվել են նաև 2012, 2013,

2014թ.-ներին, ինչը վկայում է դրանց լուծմանն ուղղված քայլերի ոչ բավարար լինելու մասին:

Մարդու իրավունքների պաշտպանի ստացած ահազանգերը, դիմում-բողոքները, ինչպես նաև պաշտոնական տվյալները վկայում են, որ մի շարք դեպքերում Ոստիկանության ծառայողների կողմից խախտվել են հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգը: Մասնավորապես, հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման կարգի համաձայն՝ հանցագործությունների մասին հաղորդումները պետք է քննարկվեն և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առթիվ օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում¹⁰¹, սակայն նշված ժամկետային պահանջը ոչ միշտ է պահպանվել:

Ոստիկանության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2015թ.-ի ընթացքում հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման համար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանված տասնօրյա ժամկետը հետաքննության մարմնի կողմից խախտվել է 56 նյութերով: Համեմատության համար նշենք, որ տվյալ ցուցանիշը 2014թ.-ին կազմել է 18: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դեպքերից մեկով նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ հետաքննության մարմինը՝ հաղորդում ընդունելով քաղաքացուց և այդ առթիվ նախապատրաստելով նյութեր, դրանց ընթացքը լուծել է սահմանված 10-օրյա ժամկետի խախտմամբ, այն է՝ շուրջ 51 օր անց:

Դեռևս 2014թ.-ին բարձրացվել էր այն խնդիրը, որ Ոստիկանությունը հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս ոչ բոլոր դեպքերում է կայացրել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որոշումներից որևէ մեկը¹⁰²: Ոստիկանությունը նման գործելաձևը հաճախ հիմնավորվում նրանով, որ որոշում կայացնելիս նրանք առաջնորդվում են ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ.-ի թիվ 12/354 հրամանով, այնինչ պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգը: Մասնավորապես, իրավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են Սահմանադրության և տվյալ ակտից ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը¹⁰³, այսինքն՝ նշված դեպքում պետք է կիրառվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, այլ ոչ միջգերատեսչական հրամանը:

Նշվածի վերաբերյալ Ոստիկանությունը հայտնել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի փոխարեն ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999թ.-ի թիվ 12/354 հրամանը կիրառելու վերաբերյալ արձանագրվել է 1 դեպք:

¹⁰¹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 180

¹⁰² ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 181

¹⁰³ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 24

Առաջարկ. Բացառել հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման 10-օրյա ժամկետի խախտումները, հաղորդումները քննարկելիս ընդունել օրենսգրքով նախատեսված որոշումներից մեկը:

6. Ոստիկանությունը, որպես մարդու անվտանգությունը, հանցագործությունների կանխումն ապահովող իրավասու մարմին, չի կանխել ընտանեկան բռնության բազմաթիվ դեպքեր և պատշաճ չի արձագանքել դրանց:

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված ահազանգերով և դիմում-բողոքներով վերհանվել են ընտանեկան բռնության բազմաթիվ դեպքեր: Մի շարք ահազանգների արդյունքում պարզվել է, որ նման դեպքերի բացահայտման և կանխման ուղղությամբ քաղաքացիները Ոստիկանության գործողությունները գնահատել են ոչ բավարար:

Դեպքերից մեկով «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ն Մարդու իրավունքների պաշտպանին է փոխանցել ընտանեկան բռնության դեպք. ամուսնու կողմից կնոջ և անչափահաս երեխաների նկատմամբ ընտանեկան բռնություն կիրառելու վերաբերյալ: Տվյալ դեպքով, Ոստիկանությունը կնոջի դիմումը չի ընդունել որպես հաղորդում և դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով չի կայացրել համապատասխան որոշում, այլ ուղղակի հաշտեցման կոչեր է արել:

Դեպքերից մեկով կինը բազմիցս հայտնել է Ոստիկանությանը ամուսնու կողմից իր և իր երեխաների նկատմամբ բռնության գործադրելու հարցը: Ոստիկանության ծառայողները նրանից ամեն անգամ ուղղակի ցուցմունք են վերցրել և հեռացել, և չեն ձեռնարկել այլ քայլեր բռնության դեպքերը կանխելու ուղղությամբ: Կնոջ պնդմամբ՝ դրա պատճառն այն է, որ իր ամուսինը նախկինում Ոստիկանության աշխատակից է եղել, և իր ծանոթ նախկին գործընկերներն իրենց հայեցողությամբ պաշտպանում են տղամարդուն:

Առհասարակ, Ոստիկանության տվյալներով 2015թ.-ին գրանցվել է ընտանեկան բռնության 784 դեպք (ամուսնու կողմից կնոջ նկատմամբ՝ 471 դեպք, կնոջ կողմից ամուսնու նկատմամբ՝ 15 դեպք, ծնողի կողմից զավակի նկատմամբ՝ 65 դեպք, զավակի կողմից ծնողի նկատմամբ՝ 106 դեպք, ընտանիքի այլ անդամների կողմից՝ 127 դեպք): Հատկանշական է, նշված գործերից 634-ով՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Ընտանեկան բռնության դեպքերի մեծաթիվ քանակի և դրանց կապակցությամբ գործերի հարուցման նման ցածր ցուցանիշների վերլուծությունը վկայում է, որ ոչ բոլոր դեպքերում է հնարավոր եղել արարքը որակել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված որևէ հանցակազմով: Ելնելով ընտանեկան բռնության դեպքերի առանձնահատկություններից՝ հետաքննիչը կամ քննիչը հաճախ դժվարանում են ընտանեկան բռնության այս կամ այն դրսևորումը (օրինակ՝ նյութական կախվածության չարաշահումը, պարբերական բնույթ կրող սպառնալիքները, մեկ ապտակը և այլն) որակել ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածով: Տվյալ հարցի

արդյունավետ լուծման համար անհրաժեշտ է նաև օրենսդրական բարեփոխումներ իրականացնել, քանի որ գործող իրավական ակտերով չի սահմանվում «ընտանեկան բռնությունը» և չեն կարգավորվում դրանից բխող հարաբերությունները: Անհրաժեշտ է առանձին օրենքով կարգավորել ընտանեկան բռնության հետ կապված հարաբերությունները, սահմանել ընտանեկան բռնության հասկացությունը, ընտանեկան բռնության համար պատասխանատվությունը և այլն¹⁰⁴:

Ոստիկանության խնդիրներից են մարդու անվտանգության ապահովումը, հանցագործությունների, վարչական իրավախախտումների կանխումը և խափանումը, ինչպես նաև հանցագործությունների հայտնաբերումը և բացահայտումը, քրեական գործով նախնական քննության ապահովումը¹⁰⁵, սակայն ընտանեկան բռնության դեպքերի ուսումնասիրության վերաբերյալ ստացված բողոքները ցույց են տալիս, որ Ոստիկանության ձեռնարկած միջոցները ընտանեկան բռնության զոհերին պաշտպանելու, նման դեպքերի բացահայտման և հետագայում կանխման ուղղությամբ բավարար չեն եղել:

Առաջարկ. ընտանեկան բռնության դեպքերով իրականացնել պատշաճ քննություն, ձեռնարկել անհրաժեշտ քայլեր մեղավորներին հայտնաբերելու ուղղությամբ, համագործակցել այլ իրավասու մարմինների հետ ընտանեկան բռնության արարքներին պատշաճ որակում տալու նպատակով օրենսդրական փոփոխություններ առաջարկելու ուղղությամբ:

7. Դեռևս լուծում չի ստացել անձանց, այդ թվում՝ անչափահասներին, Ոստիկանության բաժին «հրավիրելու» և այնտեղ իրենց կամքին հակառակ պահելու պրակտիկան:

Ինչպես նախորդ տարիներին, 2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանը նորից ստացել է մի շարք ահազանգեր առ այն, որ Ոստիկանության ծառայողները քաղաքացիներին տեղափոխել են ոստիկանության բաժին և վերջիններիս գտնվելու վայրի վերաբերյալ որևէ տեղեկություն չեն տրամադրել:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ տասնյակ դեպքերում ոստիկանություն «հրավիրված» անձինք ազատ են արձակվել բաժնից: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են նաև դեպքեր, երբ «հրավիրվածը» եղել է անչափահաս:

Այսպես, դեպքերից մեկով քաղաքացին ահազանգել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և հայտնել, որ իր անչափահաս որդուն տարել են Ոստիկանության բաժին, և ինքը որևէ տեղեկություն չունի նրա մասին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները, զրուցելով ոստիկանության ծառայողների հետ, պարզել են, որ քաղաքացուն պարզապես բանավոր կարգով հրավիրել են, և վերջինս իր ցանկությամբ է եկել բաժին, որից հետո

¹⁰⁴Մանրամասն տե՛ս «ՀՀ արդարադատության նախարարություն» գլխում

¹⁰⁵«Ոստիկանության մասին» ՀՀ օրենք, հոդված 2

նրան Ոստիկանության բաժնից տեղափոխել են ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան բաժին: Ոստիկանության տվյալ բաժնի պետի պարզաբանմամբ՝ նրանք քաղաքացուն բաժին են հրավիրել առանց ծանուցագրի, և, որ իրենք «երբ ցանկանան և ում ցանկանան, կարող են բերման ենթարկել բաժին»:

Մեկ այլ դեպքով անչափահասին տուժողի կարգավիճակով հրավիրել են Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին, և հարցաքննել են առանց մանկավարժի և օրինական ներկայացուցչի¹⁰⁶, որից հետո չեն թույլատրել դուրս գալ բաժնից:

Տվյալ և բազմաթիվ այլ դեպքերով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները պարզաբանում են ստացել, որ անձինք հիմնականում հրավիրվել են բաժին օպերատիվ հարցում իրականացնելու¹⁰⁷ կամ բացատրություններ վերցնելու նպատակով, այն հիմնավորմամբ, որ անձն ինքնակամ, առանց իրավունքների սահմանափակման, ներկայանում է ոստիկանության բաժին և կարող է ցանկացած պահի լքել ոստիկանության ստորաբաժանումը: Մակայն նման հիմնավորումը չի բխում անձի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի երաշխիքից, քանի որ մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով¹⁰⁸: Ավելին, և՛ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքը և՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չեն նախատեսում այնպիսի կարգավորումներ, որոնց առկայության դեպքում անձին «հրավիրելը» կհամարվեր իրավաչափ:

Բացի դրանից՝ նշված օրենքի 15-րդ հոդվածը բացառապես վերաբերում է Ոստիկանության աշխատակիցների կողմից տեղեկությունների հավաքագրմանը, սակայն գործնականում Ոստիկանության կողմից մեկնաբանվում է, որ չկա որևէ սահմանափակում օպերատիվ հարցում իրականացնելու վայրի վերաբերյալ: Այսինքն՝ դրույթը, չնայած մարդու իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակման իր ռիսկին, հստակ սահմանափակումներ չի նախատեսում օպերատիվ հարցումներ իրականացնելու կարգի, վայրի, ժամանակի և նման այլ հանգամանքների, ինչպես նաև անչափահասների նկատմամբ տվյալ հարցման իրականացման հատուկ կարգի վերաբերյալ:

Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում անձի կողմից բացատրություններ տալու որևէ կարգ: Նշված բացթողումների

¹⁰⁶ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 207, մաս 2. «Մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ: Անչափահաս վկայի կամ անչափահաս տուժողի հարցաքննությունը ներկա գտնվելու իրավունք ունի նրա օրինական ներկայացուցիչը:»

¹⁰⁷«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 15. «Հարցումը կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով»:

¹⁰⁸ՀՀ Սահմանադրություն, հոդված 27

հետևանքով անձինք չեն տեղեկացվել համապատասխան հարցման կամավոր բնույթի, Ոստիկանության ստորաբաժանում չներկայանալու և տեղեկություններ հայտնելուց հրաժարվելու իրենց իրավունքի մասին: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ այս հարցի վերաբերյալ առկա է ինչպես Ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողություններ իրականացնելու ռիսկ, այնպես էլ օրենսդրական բաց:

Առաջարկ. բացառել Ոստիկանության ծառայողների կողմից անձանց ոչ իրավաչափորեն բաժին հրավիրելու պրակտիկան, մշակել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, որոնք հստակ կսահմանեն անձանց, այդ թվում՝ անչափահասներին, Ոստիկանություն հրավիրելու ընթացակարգը՝ երաշխավորելով այդ գործողության կամավոր բնույթը:

8. Օրենսդրական կարգավորումների բացակայության արդյունքում ֆիզիկական տարբեր խնդիրներ ունեցող անձանց մերժել են նոր վարորդական իրավունք տրամադրելը, ինչի արդյունքում անձինք զրկվել են իրենց տրանսպորտային միջոցը վարելու հնարավորությունից:

Դեռևս 2014 թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանը դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում բարձրացրել էր, օրենսդրությամբ տրանսպորտային միջոցների հարմարեցման հստակ չափանիշներ չնախատեսելու պատճառով ֆիզիկական հաշմանդամություն ունեցող որոշ անձանց վարորդական իրավունք ստանալու հնարավորության բացակայության հարցը:

Համաձայն օրենքի՝ արգելվում է տրանսպորտային միջոցի երթևեկությունը, եթե բացակայում են վարորդի աչքը կամ վերին կամ ստորին վերջույթը, դաստակը կամ ոտնաթաթը, կամ առկա են շարժումները սահմանափակող՝ դաստակի կամ ոտնաթաթի ձևախախտում, ինչպես նաև ձեռքերի մատների կամ ֆալանգների ձևախախտումներ և արատներ, որոնք հանգեցնում են վերջույթի ֆունկցիաների խիստ խանգարման, *բացառությամբ տվյալ անձի հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոցներ վարելու դեպքերի*¹⁰⁹:

Սակայն նշվածը խնդրահարույց է այնքանով, որ օրենսդրության մեջ բացակայում են այն կարգավորումները և մեխանիզմները, թե ֆիզիկական խնդիրներ ունեցող անձն ինչ անհրաժեշտ փոփոխություններ պետք է կատարի տրանսպորտային միջոցի վրա, որպեսզի իրավասու մարմինը այն համարի անձի հնարավորություններին հարմարեցված: Վերոգրյալը խնդրահարույց է նաև իրավական որոշակիության տեսանկյունից: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանն իր 13.05.2008թ.-ի թիվ ՍԴՈ-753 որոշման մեջ, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, հայտնել է դիրքորոշում, համաձայն որի՝ իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն, որը պետք է լինի բավականաչափ մատչելի, որպեսզի

¹⁰⁹«Ճանապարհային երթևեկության անվտանգությանապահովման մասին» ՀՀ օրենք, հոդված 18, մաս 1, ենթակետ «ժէ»

իրավունքի սուբյեկտները համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կանխորոշելու, թե տվյալ դեպքում իրավական ինչ նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը, նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Նույնաբովանդակ իրավական դիրքորոշումներ են տեղ գտել նաև ՄԻԵԴ-ի վճիռներում¹¹⁰:

Գրագրության արդյունքում հայտնի դարձել, որ խնդիրը բացառելու նպատակով անհրաժեշտ է փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ կառավարության 18.10.2012թ.-ի թիվ 1327-Ն որոշման մեջ, քանի որ սույն որոշմամբ է նախատեսվել բժշկական եզրակացության 2 տեսակ («պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» կամ «պիտանի չէ»), ուստի այն դեպքում, երբ թույլատրվում է տրանսպորտային միջոց վարել լրացուցիչ պայմանի կատարման դեպքում (օրինակ՝ ակնոցով) հավատարմագրում իրականացնող մասնագետը, որպես եզրակացություն կատարում է «պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» գրառումը: Եթե հավատարմագրման արդյունքում տրվում է «Պիտանի է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց վարելու» եզրակացությունը, և տվյալ անձի կողմից ներկայացվում է իր հնարավորություններին հարմարեցված տրանսպորտային միջոց, ապա ճանապարհային ոստիկանությունն այդ տրանսպորտային միջոցով ընդունում է գործնական քննություն: Սակայն վերոգրյալը իրականացվում է միայն այն դեպքերում, երբ անձի մոտ առկա է վերջույթների հետ կապված որևէ խնդիր, իսկ, երբ անձի մոտ բացակայում է որևէ օրգան, օրինակ՝ աչքը, պարզ չէ, թե տրանսպորտային միջոցը ինչպես պետք է հարմարեցվի վերջինիս հնարավորություններին:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հարցի բարձրաձայնման արդյունքում ՀՀ վարչապետը հանձնարարել էր իրավասու պետական մարմիններին ուսումնասիրել խնդիրը և անհրաժեշտության դեպքում իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ: 2015թ.-ի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից Ոստիկանության հետ միասին մշակվել է համապատասխան նախագիծ, որը, սակայն դեռևս չի ընդունվել: ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված գրության համաձայն՝ համապատասխան նախագիծը մշակվել է, սակայն այն լրամշակվում է ի կատարումն ՀՀ վարչապետի հանձնարարականի:

Առաջարկ. հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնել փոփոխություններ և լրացումներ ՀՀ կառավարության 18.10.2012թ.-ի թիվ 1327-Ն որոշման մեջ՝ սահմանելով

¹¹⁰Տե՛ս, օրինակ Մանդեյ Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռ, 1979 թ. ապրիլի 26-ի վճիռը, գանգատ թիվ 6538/74, կետ 49

Ֆիզիկական հաշմանդամության առկայության պարագայում տրանսպորտային միջոցի հարմարեցման չափանիշների ավելի լայն շրջանակ:

9. **Ճանապարհային ուստիկանությունը մի շարք դեպքերով վարորդներին նշանակել է անհիմն տուգանքներ, նրանց անօրինական պահանջներ կայացրել, արձանագրված վարչական իրավախախտումների վերաբերյալ անձանց պատշաճ չի ծանուցել, անհիմն կատարողական վարույթներ է հարուցել ու կրկնապատկել վարորդների տուգանքները:**

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Ճանապարհային ուստիկանությունն (այսուհետ՝ ՃՈ) իր գործառույթներն իրականացնելիս թույլ է տվել մի շարք խախտումներ և թերացումներ, մասնավորապես, ներկայացվել են օրենսդրությամբ չնախատեսված պահանջներ, նշանակվել անհիմն վարչական տույժեր, ինչպես նաև քաղաքացիները արձանագրված տուգանքների վերաբերյալ պատշաճ չեն ծանուցվել:

Այսպես, դեպքերից մեկով քաղաքացին հայտնել է Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին, որ իր ավտոմեքենան գտնվում է ՀՀ Ճանապարհային ուստիկանության 1-ին գումարտակի հատուկ պահպանվող տարածքում, վերջինս ունի ավտոմեքենաներն այնտեղից հանելու թույլտվության մասին՝ քննիչի կողմից տրված որոշումը, սակայն ՀՀ Ճանապարհային ուստիկանության ծառայողները հրաժարվում են հատուկ պահպանվող տարածքից բաց թողնել իր ավտոմեքենան՝ պատճառաբանելով, որ չնայած որ իրենք ստացել են քննիչի կողմից ուղարկված գրությունը, սակայն չեն ստացել համապատասխան քրեական գործը, ինչի պատճառով թույլ չեն տալիս քաղաքացուն պահպանվող տարածքից դուրս բերել ավտոմեքենան: Ուստիկանության ծառայողներին պարզաբանվել է, որ ավտոմեքենան տուգանային հրապարակից դուրս թողնելու համար քննիչի համապատասխան գրությունը հիմք է, որից հետո քաղաքացուն թույլատրել են վերցնել ավտոմեքենան:

Մեկ այլ դեպքով քաղաքացին հայտնել է, որ Ուստիկանության Ճանապարհային ուստիկանության համապատասխան աշխատակիցները իր ավտոմեքենան տեղափոխել են 1-ին գումարտակի հատուկ պահպանվող տարածք, քանի որ ավտոմեքենան վարելու ժամանակ իր մոտ չի եղել վարորդական իրավունքի վկայականը: Քաղաքացին տեղեկացրել է նաև, որ ինքը ներկայացել է ՃՈ-ի համապատասխան գումարտակ, որտեղ կազմվել է խախտման արձանագրություն, սակայն իրեն արգելել են տանել ավտոմեքենան՝ պատճառաբանելով, որ 1-2 օր ավտոմեքենան պետք է մնա հատուկ պահպանվող տարածքում, այնուհետև նրան կթույլատրվի այնտեղից դուրս բերել ավտոմեքենան: Քաղաքացուն թույլատրել են վերցնել իր ավտոմեքենան միայն Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում:

Արձանագրվել են այլ դեպքեր, երբ ՃՈ աշխատակիցները վարորդներին ենթարկել են վարչական պատասխանատվության առանց պատշաճ հիմնավորումների և/կամ նրանց անօրինական պահանջներ են ներկայացրել: Այսպես, քաղաքացիների կողմից ներկայացվել են նաև բազմաթիվ դժգոհություններ ՃՈ աշխատակիցների կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ նրանց ոչ պատշաճ ծանուցելու, ինչպես նաև անհիմն կատարողական վարույթներ հարուցելու և/կամ տուգանքներն անհիմն կրկնապատկելու վերաբերյալ:

Ոստիկանության ներկայացրած տվյալների համաձայն՝ ՃՈ ծառայողների կողմից առանց պատշաճ հիմնավորումների վարորդներին վարչական պատասխանատվության ենթարկելու կամ անօրինական պահանջներ ներկայացնելու վերաբերյալ ստացված բողոքների կապակցությամբ 2015թ.-ի ընթացքում ներքին անվտանգության վարչությունում կատարվել են 14 ծառայողական քննություններ և ստուգումներ /ուսումնասիրություններ/, որոնց արդյունքում ՃՈ ծառայողների կողմից խախտումներ կատարելու հանգամանքները չեն հիմնավորվել և նյութերը թողնվել են անհետևանք: Իսկ քաղաքացիներից ստացված դիմում-բողոքների հիման վրա նշանակվել է թվով 3 ծառայողական քննություն: Վերջիններիս արդյունքներով պարզվել է, որ ՃՈ ծառայողներն առանց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման կայացրել են վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ, ինչի համար երեք ծառայող ենթարկվել է կարգապահական տույժի, իսկ կայացված որոշումները բեկանվել են:

Դեռևս բազմաթիվ են այն դեպքերը, երբ վարորդների դրամական միջոցների վրա արգելանք է դրվում նույնիսկ այն դեպքերում, երբ տուգանքը սահմանված կարգով վճարված է կամ վերջիններս վարչական տույժ նշանակելու մասին պատշաճ չեն ծանուցվել: Օրինակ, մի դեպքում դիմումատուն հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ) ծառայությունը արգելանք է կիրառել իր դրամական միջոցների նկատմամբ: Նշվածի կապակցությամբ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունից պարզաբանել են, որ դրամական միջոցների վրա արգելանք դնելու պատճառը վարչական տույժը չվճարված լինելու հանգամանքն է: Սակայն Ոստիկանությունը քաղաքացու պատշաճ կարգով չէր ծանուցել վարչական տույժ նշանակելու որոշման մասին, ինչի արդյունքում վերջինս չի մուծել վարչական տույժով սահմանված գումարը: Գործի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Հայփոստ» ՓԲԸ ստացված ՃՈ կողմից կայացված համապատասխան որոշումները հետ են վերադարձվել ուղարկողին՝ «չպահանջված» լինելու պատճառաբանությամբ: Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունից հետո ՃՈ-ն փոխել է որոշման կատարման պահանջը, ինչպես նաև դիմել ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ապահովող ծառայությանը, որպեսզի քաղաքացու գանձվի տուգանքի գումարի սկզբնական չափը:

Նշված դեպքերի կապակցությամբ Ոստիկանությունից հայտնել են, որ վարչական տույժ նշանակելու մասին որոշումները հասցեատերերին հանձնելու գործառույթն իրականացվել է «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով և ՃՈ կողմից

իրականացվող գործողությունների հաջորդականությունը կառուցվել է այդ ընկերության կողմից վարչական տույժ նշանակելու մասին որոշումները հասցեատերերին հանձնելու կամ չհանձնելու մասին տրամադրված տեղեկատվության հիման վրա: Այս առումով եղել են դեպքեր, երբ քաղաքացիների հայտնած տեղեկության հիման վրա կատարված լրացուցիչ ստուգմամբ պարզվել է, որ վարչական ակտերն իրականում փաստացի չեն հանձնվել հասցեատիրոջը, մինչդեռ, ըստ վերը նշված կազմակերպության կողմից տրամադրված սկզբնական տեղեկատվության, դրանք հանձնված են եղել հասցեատերերին:

Այսպիսով, 2015թ.-ին գրանցված բազմաթիվ ահազանգերը, դիմում-բողոքները, ինչպես նաև հանրության դժգոհությունը վկայում են, որ Ոստիկանության կողմից չեն ձեռնարկվել բավարար միջոցները առկա խնդիրները վերացնելու նպատակով:

Առաջարկ. բացառել վարորդներին անհիմն տուգանքներ նշանակելու, անօրինական պահանջներ ներկայացնելու դեպքերը, ապահովել վարչական տուգանքների վերաբերյալ անձանց պատշաճ ծանուցումը, կատարողական վարույթների պատշաճ հարուցումը, կանխել տուգանքների չափի անհիմն ավելացումները:

10. 2015թ.-ին արձանագրվել են քաղաքացիներին անհիմն բերման ենթարկելու, նրանց ազատ տեղաշարժը սահմանափակելու դեպքեր:

Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է ահազանգեր և դիմում-բողոքներ, որ Ոստիկանությունը անհիմն բերման է ենթարկել, իսկ որոշ դեպքերում սահմանափակել նրանց ազատ տեղաշարժման իրավունքը:

Քաղաքացիների դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Բագրատաշենի անցակետն անցնելիս դիմումատուները բերման են ենթարկվել Բագրատաշենի ոստիկանական բաժանմունք, որտեղ մոտ երկուսուկես ժամ պահվելուց հետո ազատ են արձակվել՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Բագումի բաժին ներկայանալու պատճառաբանությամբ: ՀՀ քննչական կոմիտեից ստացված գրությունների արդյունքում հայտնի է դարձել, որ քաղաքացիները Լոռու մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում հարցաքննվել են որպես վկա: Տվյալ քրեական գործով քննիչի կողմից հետաքննության մարմնին չի տրվել որևէ հանձնարարական քաղաքացիների ելքը ՀՀ արգելափակելու վերաբերյալ, իսկ ինչ վերաբերում է քննիչի կողմից հետաքննական մարմնին կատարած հարցմանը, ապա հետաքննության մարմինը նույնպես հայտնել է, որ քաղաքացիների ելքը Հայաստանի Հանրապետությունից արգելափակված չէ: Այնուամենայնիվ, Ոստիկանության Լոռու մարզային վարչության համապատասխան բաժնի ծառայողները շարունակել են օպերատիվ հետախուզական համալիր միջոցառումների իրականացումը, որի նախնական արդյունքներով դիմումատուները Բագրատաշենի անցակետից անցնելիս, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57

հողվածի 2-րդ մասի 7-րդ կետի համաձայն, բերման են ենթարկվել Ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք:

Ավելին, բերման ենթարկելու գործողությունն իրականացվել է ոչ թե որպես դատավարական հարկադրանքի այլ միջոց, այլ որպես փաստացի ձերբակալում¹¹¹: Սակայն կասկածը չհաստատվելու պատճառով ձերբակալման արձանագրություն չի կազմվել և օրենքով սահմանված ժամկետում նրանք ազատ են արձակվել:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ արգելանքի վերցնելը, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին անձին բերելը ձերբակալման տարրերից են: Օրենսդրության մեջ «փաստացի ձերբակալում» հասկացությունը չի օգտագործվում, սակայն այն հայտնի է քրեական դատավարության իրավունքի գիտությանը: Համապատասխանաբար, ձերբակալման արձանագրություն կազմելով ավարտվող գործողությունը բնորոշվում է որպես «իրավաբանական ձերբակալում»:

Հատկանշական է, որ Ոստիկանությունը՝ դեպքի առթիվ տրամադրած իր պարզաբանումներում օգտագործել է «փաստացի ձերբակալում» տերմինը՝ Ոստիկանության կողմից իրականացված գործողությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հարկադրանքի այլ միջոցից տարբերելն ընդգծելու համար: Այլ կերպ ասած՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով հետաքննության մարմիններն իրականացնում են «փաստացի ձերբակալում»:

Միաժամանակ տեղեկացրել են, որ ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության կողմից սխալ դատավարական ձևակերպմամբ անձին բերման ենթարկելու մասին արձանագրություն կազմելու համար նշանակվել է ծառայողական քննություն Ոստիկանության ծառայողի նկատմամբ:

Այստեղ պետք է նշել, որ «Որոնման մեջ գտնվողի» քրեադատավարական կարգավիճակ իրականում գոյություն չունի: Որոնումը՝ «օպերատիվ հետախուզումը», օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց հայտնաբերմանն ուղղված միջոցառումների համալիր է, որը բացառապես իրականացվում է օպերատիվ հաշվառման գործերով: Այդ կերպ՝ «օպերատիվ որոնումը» տարբերվում է մեղադրյալի հետախուզումից:

Փաստորեն օրենքը, որպես անձին բերման ենթարկելու պարտադիր պայման, նախատեսում է առանց հարգելի պատճառի քննության չներկայանալու հանգամանքը, մինչդեռ սույն դեպքում՝ քաղաքացիները հարցաքննվել են վկայի դատավարական կարգավիճակով, իսկ ՀՀ քննչական կոմիտեից ստացված գրության համաձայն՝ քննիչի կողմից հետաքննության մարմնին չի տրվել որևէ

¹¹¹ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար:

հանձնարարական վերջիններիս ելքը ՀՀ արգելափակելու վերաբերյալ: Ըստ անձինքերման ենթարկելու մասին արձանագրության՝ դիմումատուների ազատության և անձեռնմխելիության իրավունքը սահմանափակվել է որոնման մեջ գտնվելու հիմքով, մինչդեռ, համաձայն դատավարական օրենսդրության, «որոնման մեջ գտնվողի» քրեադատավարական կարգավիճակ իրականում գոյություն չունի, ինչի մասին նշել է նաև Ոստիկանությունը:

Բացի այդ, ստացված ահազանգերից մեկով անձի նկատմամբ հարուցված քրեական գործը կարճվել է, սակայն վերջինիս նկատմամբ կիրառված ելքի սահմանափակումը չի հանվել: Իսկ մեկ այլ դեպքով ելքի սահմանափակումը կիրառվել է տուժողի նկատմամբ: Ստացված դեպքերից մի քանիսով Մարդու իրավունքների պաշտպանը կայացրել է նաև խախտման որոշումներ:

Հարկ է նշել, որ Ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների հետևանքով խախտվել է դիմումատուների անձնական ազատության և անձեռնմխելիության, ինչպես նաև ազատ տեղաշարժման իրավունքները:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել Ոստիկանության ծառայողների կողմից անձանց իրավունքների անհիմն սահմանափակման և խախտման դեպքերը կանխելու ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

2015թ.-ի ընթացքում ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. 2015թ.-ի ընթացքում Կոմիտեի՝ Արագածոտնի, Վայոց Ձորի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Վարդենիսի քննչական բաժնի վարչական շենքերում ստեղծվել են անչափահասների համար նախատեսված հատուկ սենյակներ, մյուս մարզային քննչական վարչություններին հատկացված և հատկացվելիք նոր վարչական շենքերի վերանորոգման, բարեկարգման աշխատանքներում նույնպես նախատեսվում է ստեղծել անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակներ:

2. 2015թ.-ի ընթացքում Կոմիտեի կողմից իրականացվել է նախաքննության արդյունավետության բարձրացմանն ուղղված՝ Կոմիտեի նախագահի հանձնարարականների, հրամանների և մեթոդական ուղեցույցների նախագծերի մշակման նպատակով տարբեր հանցագործությունների քննության առանձնահատկությունների, հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքների ուսումնասիրություն, վերլուծություն և ամփոփում: Կոմիտեի նախագահի հանձնարարությամբ համապատասխան հանձնարարականների կատարման վիճակն ուսումնասիրելու նպատակով կազմակերպել է ծառայողական գործուղումներ, մշակել և հրատարակել է գիտամեթոդական ձեռնարկներ, ապահովել է քննիչների մասնագիտական գիտելիքների և աշխատանքային կարողությունների հետևողական կատարելագործմանն ուղղությամբ աշխատանքների իրականացումը:

3. Կոմիտեի կողմից վերլուծվել է պաշտպանության բանակի ժամկետային զինծառայողների կողմից 2015թ.-ի կատարած հանցագործությունների դեպքերի առթիվ քննված քրեական գործերը, որոնց կանխարգելման նպատակով միջոցներ ձեռնարկելու համար առաջարկություններ են ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներին:

Առկա թերություններն ու խնդիրները

1. 2015թ.-ին գրանցվել են Կոմիտեի քննիչների կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության կատարման այլ դեպքեր:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված ահազանգերի և դիմում-բողոքների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզվել են առանձին դեպքեր, երբ Կոմիտեի քննիչները անձանց ենթարկել են խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության:

Կոմիտեի տրամադրած տվյալների համաձայն՝ 2015թ.-ին ստացվել է պաշտոնատար անձանց կողմից խոշտանգումների և բռնությունների ենթարկման 4 դեպքի վերաբերյալ հաղորդում: Քննված դեպքերից մեկով վկան և մեղադրյալը հայտարարել են, որ նախաքննություն իրականացնող քննիչի կողմից իրենց նկատմամբ բռնություն և ճնշում է գործադրվել: Այդուհանդերձ, ՀՀ Հատուկ քննչական ծառայություն փոխանցված 2 քրեական գործի վարույթները կարճվել են հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ: Նշենք նաև, որ ըստ ներկայացված տվյալների՝ նման 1 դեպք արձանագրվել է Լոռու մարզային քննչական վարչությունում, իսկ 3 դեպք՝ Արմավիրի մարզային վարչությունում:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի ստացած ահազանգերից մեկով պարզվել է, որ հանցագործության կատարման կասկածանքով քաղաքացուն տեղափոխել են Կոմիտեի համապատասխան վարչություն, որտեղ քաղաքացու պնդմամբ, նրա նկատմամբ բռնություն է կիրառվել, որից հետո նրան ձերբակալել են և տեղափոխել ձերբակալվածների պահման վայր (այսուհետ՝ ՁՊՎ): Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցն արձանագրել է, որ վերոնշյալ դեպքով քաղաքացու մեջքի, աջ թևի որոշ հատվածներ կարմրած են եղել, իսկ ձախ կրծքավանդակի և ուսի հատվածում առկա են եղել քերծվածքներ: Ավելին, ՁՊՎ ընդունելիս վերջինիս անձնական զննությամբ արձանագրվել են նրա մարմնական վնասվածքները:

Նշվածի համատեքստում հատկանշական է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ)՝ մի շարք գործերով վճիռներում հայտնած դիրքորոշումը, որ ազատությունից զրկված անձի նկատմամբ ցանկացած ֆիզիկական ուժի կիրառում, որն ուղղակիորեն խիստ անհրաժեշտ չէ անձի վարքագծով պայմանավորված, նսեմացնում է մարդկային արժանապատվությունը և սկզբունքորեն հանդիսանում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 3-րդ հոդվածի խախտում: ՄԻԵԴ-ը նշել է նաև, որ հետաքննության պահանջները և հանցավորության դեմ պայքարի անխուսափելի դժվարությունները չպետք է հանգեցնեն անձանց ֆիզիկական անձեռնմխելիության պաշտպանության

սահմանափակմանը¹¹²:

2015թ.-ի ընթացքում քննիչների կողմից խոշտանգման, վատ վերաբերմունքի և բռնության տարբեր դեպքեր ներկայացվել են նաև զանգվածային լրատվության միջոցներով: Հրապարակված դեպքերից մեկի համաձայն՝ Կոմիտեի քննիչներն անձին առանց որևէ կարգավիճակի բերման էին ենթարկել՝ ենթարկելով բռնության ու վատ վերաբերմունքի, ինչպես նաև թույլ չեն տվել ժամեր շարունակ ջուր խմել և զուգարան գնալ¹¹³:

Նշված արատավոր պրակտիկայի վերացման և բազմաթիվ այլ խնդիրների կանխման ուղղությամբ կարևոր է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի 36-րդ և 60-րդ կետերով սահմանված գործողությունների իրականացումը, այն է՝ հարցաքննությունների տեսաձայնագրման միջազգային փորձի ուսումնասիրությունը և տեսաձայնագրման համակարգը Հայաստանում ներդնելու նպատակահարմարության կապակցությամբ առաջարկությունների ներկայացումը, ինչպես նաև անչափահաս վկաների և տուժողների հարցաքննության համար նախատեսված հատուկ սենյակների ստեղծումը¹¹⁴: Վերջին խնդրի կապակցությամբ, ողջունելի է, որ Կոմիտեն իր ստորաբաժանումների վարչական շենքերում արդեն սկսել է կառուցել անչափահասների հարցաքննության համար հատուկ նախատեսված սենյակներ: Այնուամենայնիվ, քննիչների կողմից անձանց նկատմամբ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության դեպքեր կրկին գրանցվել են:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ և բավարար քայլեր Կոմիտեի քննիչների կողմից խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչպես նաև բռնության այլ դեպքերի վերհանման, դրանց վերաբերյալ նախապատրաստվող նյութերի մեջ արարքի բնույթն ու շարժառիթները հստակ արտացոլելու և հետազայում նման դեպքերը կանխելու ուղղությամբ:

- 2. Կոմիտեի քննիչները, հակառակ օրենքի պահանջին, որոշ դեպքերում չեն ձեռնարկել բավարար քայլեր՝ բերման ենթարկված կամ ձերբակալված անձանց փաստաբանով ապահովելու ուղղությամբ:**

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են ահազանգեր և դիմում-բողոքներ, որ բերման ենթարկված, ինչպես նաև ձերբակալված անձինք չեն

¹¹²Տե՛ս Թոմազին ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռ, 1992թ. օգոստոսի 27-ի վճիռը, զանգաս թիվ 12850/87, կետ 115, ինչպես նաև Չիտակը և Չիտակն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիռ, 2007թ. հունվարի 18-ի վճիռ, զանգաս թիվ 59334/00, կետ 154

¹¹³<http://www.lin.am/1691697.html>, <http://www.lin.am/1677515.html>

¹¹⁴ՀՀ կառավարություն 27.02.2014թ.-ի փետրվարի 27-ի թիվ 303-Ն «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» որոշում

ապահովում փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությամբ:

Այսպես, ստացված ահազանգերից մեկով պարզ է դարձել, որ աշխատանքային ժամն ավարտվելու պատճառով փաստաբանին հրաժարվել են ներգրավել որպես պաշտպան: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների միջամտության արդյունքում խնդիրը լուծվել է: Մեկ այլ դեպքով, կալանավորված անձը ցանկություն է հայտնել, որ իր իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության նկատառումներով հանրային պաշտպան ներգրավվի իր քրեական գործի վարույթին, սակայն, Կոմիտեի համապատասխան քննիչը հրաժարվել է քրեական գործի վարույթին պաշտպան ներգրավել:

Ուշագրավ է, որ չնայած Մարդու իրավունքների պաշտպանի ստացած մի շարք ահազանգերին՝ Կոմիտեի կողմից 2015թ.-ին ոչ մի դեպք չի գրանցվել բերման ենթարկված/ձերբակալված անձանց իրենց փաստաբանների հետ հանդիպելը սահմանափակելու վերաբերյալ: Հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձին օրենքով վերապահված կարևորագույն իրավունքներից մեկը՝ պաշտպան ունենալու իրավունքն է: Այն իրական երաշխիք է կասկածյալին և մեղադրյալին տրված մնացած իրավունքների (ցուցմունքներ տալու, նյութեր ներկայացնելու, միջնորդություններ հարուցելու, բողոքներ ներկայացնելու, գործի նյութերին ծանոթանալու և այլնի) իրականացման համար, քանի որ մեղադրանքից պաշտպանվելու ընթացքում անձն իր պաշտպանից ստանում է նաև իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով¹¹⁵: Իսկ այն պահից, երբ կասկածյալը/մեղադրյալը պաշտպան ունենալու ցանկություն է հայտնում, պաշտպանի մասնակցությունը քրեական գործով վարույթին դառնում է պարտադիր¹¹⁶: Ուստի, սահմանափակումները վերացնելու նպատակով Կոմիտեի քննիչները չպետք է որևէ ձևով խոչընդոտեն փաստաբանի՝ ձերբակալվածի հետ անհապաղ կարգով տեսակցությանը: Միաժամանակ, անձի՝ իրավաբանական օգնություն ստանալու օբյեկտիվ պահանջն անհրաժեշտություն է դարձնում ոչ միայն նշված իրավունքի ամրագրումը, այլև դրա իրականացման երաշխիքների սահմանումը:

Այսպիսով, Կոմիտեի քննիչների նման գործողություններով խախտվել է անձանց՝ իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու, ինչպես նաև իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքը¹¹⁷:

Առաջարկ. ապահովել բերման ենթարկված/ձերբակալված անձանց տեսակցությունն իրենց փաստաբանների հետ:

3. Կոմիտեի քննիչների կողմից մի շարք դեպքերում դատավարական և քննչական գործողություններն իրականացվել են քրեադատավարական նորմերի

¹¹⁵ ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների գիտագործնական ժողովածու, 2010 Երևան

¹¹⁶ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 69

¹¹⁷ ՀՀ Սահմանադրություն, հոդված 64

խախտումներով, ինչպես նաև քաղաքացիներին ներկայացվել են անհիմն պահանջներ:

2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ստացված տարբեր ահազանգերի և դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ Կոմիտեի քննիչները բազմաթիվ դեպքերում դատավարական և քննչական գործողություններն իրականացնելիս չեն պահպանել և/կամ խախտել են քրեադատավարական նորմերը:

Արձանագրված դեպքերից մեկով փաստաբանը հայտնել է, որ իր պաշտպանյալը 72 ժամից ավելի գտնվում է անազատության մեջ, իսկ Կոմիտեի քննիչները հրաժարվում են նրան ազատ արձակել և պատրաստվում են տեղափոխել դատարան: Տվյալ գործի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պաշտպանյալին նախ բերման են ենթարկել, ապա միայն՝ ձերբակալել՝ հիմնավորելով, որ ձերբակալման ժամկետը պետք է հաշվել ձերբակալման արձանագրությունը կազմելու պահից: Մինչդեռ, ձերբակալման 72-ժամյա ժամկետը հաշվարկվում է անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից, և առանց դատարանի համապատասխան որոշման անձը չի կարող անազատության մեջ պահվել 72 ժամից ավելի¹¹⁸:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ վճռաբեկ դատարանի 18.12.2009թ.-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործով որոշմանը, որտեղ նշվել է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը: Ուստի, անձը կարող է ձերբակալվածի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Միաժամանակ, եթե բերված անձի նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը շարունակում և ավարտին է հասցնում ձերբակալման գործընթացը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասության ուժով ձերբակալման ժամկետի հաշվարկը սկսվում է արգելանքի վերցնելու պահից:

Մեկ այլ դեպքով քննիչը հրաժարվել է վերադարձնել անձին իր օրինական տիրապետության տակ գտնվող, սակայն ուրիշի անվամբ գրանցված տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը: Դեպքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ քննիչը առանց որևէ իրավական հիմնավորման վկայագրի վերադարձնելը պայմանավորել է միայն սեփականատիրոջ կողմից տրված լիազորագրի ներկայացման հետ:

¹¹⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգրք, հոդված 11

Մարդու իրավունքների պաշտպանը նաև ահազանգեր և դիմում-բողոքներ է ստացել առ այն, որ օրինակ՝ քրեական գործը կարճվել է, սակայն, անձի նկատմամբ կիրառված ելքի սահմանափակումը հանված չի եղել կամ ելքի սահմանափակումն անհիմն կիրառվել է վկայի նկատմամբ:

Այսպես, դեպքերից մեկով քաղաքացին ահազանգել է, որ իր նկատմամբ հարուցված քրեական գործը Կոմիտեի համապատասխան քննչական բաժնում կարճվել է, սակայն քննիչի կողմից կայացրած երկրից դուրս գալու սահմանափակման որոշումը դեռևս չի վերացվել: Մեկ այլ դեպքով, Կոմիտեի քննիչի կողմից տևական ժամանակով սահմանափակվել է քրեական գործով որպես վկա հանդես եկող անձի ելքը Հայաստանի Հանրապետությունից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ վկան պարտավոր է չմեկնել այլ վայր՝ առանց դատարանի թույլտվության կամ առանց քրեական հետապնդման մարմնին իր գտնվելու նոր վայրի մասին նախապես տեղեկացնելու, սակայն նույն հոդվածի 4-րդ մասով ամրագրված է նաև, որ վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն: Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ վկան իր պարտականությունները չկատարելու համար կարող է ենթարկվել օրենքով նախատեսված պատասխանատվության, իսկ քրեական գործով վարույթն իրականացնող մարմնին որևէ լիազորություն տրված չէ վկայի՝ այլ վայր մեկնելու հնարավոր կասկածի առկայության պարագայում սահմանափակելու վերջինիս ազատ տեղաշարժման իրավունքը:

Ավելին՝ ՀՀ Սահմանադրության 40-րդ հոդվածով ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունք: Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքը դասվել և դասվում է մարդու հիմնական քաղաքացիական /անձնական/ իրավունքների և ազատությունների շարքին: Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու և Հայաստանի Հանրապետություն վերադառնալու սահմանադրական իրավունքների հետ մեկտեղ այն մարդուն հնարավորություն է տալիս սեփական կամքին համապատասխան տեղաշարժվել տարածության մեջ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանվել իր նկատմամբ կատարվող ոտնձգություններից: Այսպիսով, քննիչների նման գործողությունների (անգործության) հետևանքով սահմանափակվել է անձի ազատ տեղաշարժման իրավունքը:

Դեպքերից մեկով քաղաքացին բանավոր հրավիրվել է ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին, որից հետո տեղափոխվել է Կոմիտեի համապատասխան բաժին, որտեղ կատարվել է առերեսում: Ստացված տեղեկությունների վերլուծությունից պարզվել է, որ քաղաքացիներին առանց ծանուցագրի, որոշ դեպքերում նույնիսկ հեռախոսազանգի միջոցով, բաժին հրավիրելը տարածված պրակտիկա է: Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝

վկան, տուժողը, կասկածյալը և մեղադրյալը քննիչի մոտ կանչվում են միայն ծանուցագրով:

Առաջարկ. ձեռնարկել համապատասխան քայլեր Կոմիտեի քննիչների կողմից կատարվող դատավարական և քննչական գործողությունները քրեադատավարական նորմերի պահպանմամբ իրականացնելու ուղղությամբ:

4. Որոշ դեպքերում անձը քննիչի կողմից որպես վկա հարցաքննվելուց հետո կարճ ժամանակ անց իր տված տեղեկատվության հիման վրա ձերբակալվել է որպես կասկածյալ, ինչպես նաև արձանագրվել են անձանց առանց կարգավիճակ տալու հարցաքննելու դեպքեր:

2015թ.-ի ընթացքում ևս գրանցվել են անձանց առանց դատավարական կարգավիճակ տալու հարցաքննելու, ինչպես նաև որպես վկա հարցաքննված անձանց, իրենց հայտնած տեղեկությունների հիման վրա որպես կասկածյալ ներգրավելու դեպքեր: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված ահազանգերից մեկի համաձայն՝ քաղաքացուն բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների այցելության արդյունքում պարզվել է, որ քաղաքացու վերաբերյալ բերման ենթարկվածների մատյանում գրառում կատարված չի եղել այն պատճառաբանությամբ, որ վերջինս հրավիրվել է և մի քանի ժամ առաջ փոխանցվել քննչական մարմին: Կոմիտեի համապատասխան բաժնից Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել են, որ քաղաքացին առերեսման է մասնակցում՝ ավազակային հարձակում կատարելու կասկածանքով, ինչպես նաև այն, որ առերեսում կատարելուց հետո ամենայն հավանականությամբ կձերբակալվի:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչի այն հարցին, թե արդյոք քաղաքացուն ներկայացվել են նրա իրավունքները և արդյոք նրան հնարավորություն տրվել է հանրային պաշտպան ունենալու՝ Կոմիտեի համապատասխան ծառայողը հայտնել է, որ քաղաքացին դեռևս վկայի կարգավիճակ ունի, քանի որ քննիչը մտավախություն է ունեցել, որ նրա նկատմամբ կասկածանքը կարող է չհաստատվել: Վերոնշյալից պարզ է դառնում, որ քաղաքացուն պետք է տրվեր կասկածյալի կարգավիճակ մինչև առերեսում սկսելը, քանի որ նա փաստացի հանդիսացել է կասկածյալ, սակայն նման գործելաճճը հանգեցրել է նրան, որ անձը հնարավորություն չի ունեցել օգտվելու կասկածյալի համար սահմանված իրավունքներից¹¹⁹:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ ահազանգի համաձայն՝ քաղաքացուն նույնպես բերման են ենթարկել ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել էին, որ քաղաքացին սեփական

¹¹⁹Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 63

նախաձեռնությամբ եկել է բաժին և ՀՀ ոստիկանության համապատասխան բաժնում հարցաքննվում է Կոմիտեի քննիչի կողմից: Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցներին Կոմիտեի քննիչը փոխանցել է, որ քաղաքացին որևէ կարգավիճակ չունի, և նրա նկատմամբ քննչական գործողություն չի իրականացվում, սակայն որոշ ժամանակ անց կայացվել է որոշում նրան ձերբակալելու մասին:

Առաջարկ. վերացնել այն դեպքերը, երբ անձը, որպես վկա հարցաքննվելուց հետո կարճ ժամանակ անց, իր տված տեղեկատվության հիման վրա ձերբակալվում է որպես կասկածյալ, ինչպես նաև բացառել անձանց առանց կարգավիճակ տալու հարցաքննելու դեպքերը:

5. Գրանցվել են դեպքեր, երբ քննիչներն անչափահասներին հրավիրել են բաժին, առանց օրինական ներկայացուցչի, մանկավարժի մասնակցության կատարել են դատավարական և քննչական գործողություններ, ինչպես նաև արգելել են լքել բաժինը:

Ինչպես նախորդ տարիներին, 2015թ.-ին կրկին գրանցվել են անչափահասներին բաժիններ հրավիրելու, խախտումներով դատավարական և քննչական գործողություններ իրականացնելու դեպքեր: Հասցեագրված դեպքերից մեկով քաղաքացին հայտնել է, որ իր անչափահաս որդուն առանց նախապես ծանուցագիր ուղարկելու վկայի կարգավիճակով հրավիրել են ՀՀ ոստիկանության համապատասխան բաժին, և ինքը որևէ տեղեկություն չունի որդուց: Սակայն վկան քննիչի մոտ կանչվում են ծանուցագրով¹²⁰: ՀՀ ոստիկանության աշխատակիցները հայտնել են, որ քաղաքացին առավոտյան եկել է բաժին, դրանից հետո մի քանի անգամ տուն է գնացել, նորից ետ վերադարձել բաժին: Միաժամանակ, տեղեկացրել են, որ քաղաքացին տվյալ ժամանակ արդեն գտնվել է Կոմիտեի համապատասխան բաժնում:

Այնուհետև Կոմիտեից տեղեկացվել է, որ քաղաքացին իրենց մոտ է տեղափոխվել մոտ 2 ժամ առաջ, և քննիչը 2 ժամ հարցաքննելուց հետո ավարտել է հարցաքննությունը: Հայտնել են նաև, որ քաղաքացուն պատրաստվում են տեղափոխել դեպքի վայր, որպեսզի նա տեղում մատնանշի գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ: Սակայն քաղաքացին մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների հետ առանձնագրույցի ընթացքում նշել է, որ ինքը առավոտյան եկել է համապատասխան բաժին, և այդ ընթացքում որևէ ժամանակով չի բացակայել բաժնից:

Մեկ այլ դեպքով անչափահասին տուժողի կարգավիճակով հրավիրել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժին, նրան առանց մանկավարժի ներկայության հարցաքննել են և չեն թույլատրել դուրս գալ այնտեղից:

¹²⁰ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 205

Պարզվել է, որ անչափահաս տուժողը ցուցմունքներ տալու նպատակով է հրավիրվել բաժին, և չի կարողացել դուրս գալ բաժնից՝ հարցաքննություն անցկացնելու հիմնավորմամբ:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք դրույթներ: Մասնավորապես, օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժողը, քննիչի մոտ կանչվում է ծանուցագրով: Ավելին, մինչև տասնվեց տարեկան վկայի կամ տուժողի հարցաքննությունը կատարվում է մանկավարժի մասնակցությամբ, միաժամանակ հարցաքննությանը ներկա գտնվելու իրավունք ունի նաև անչափահասի օրինական ներկայացուցիչը:

Առաջարկ. բացառել անձանց, այդ թվում՝ անչափահասներին առանց ծանուցագրի հրավիրելու դեպքերը և քայլեր ձեռնարկել վերջիններիս դատավարական և քննչական գործողություններն օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու ուղղությամբ: Միաժամանակ, ձեռնարկել միջոցներ օրենսդրորեն կարգավորելու «հրավիրելու» ընթացակարգը:

6. Արձանագրվել են խնդիրներ առ այն, որ ներկայանալու վերաբերյալ ծանուցումները քաղաքացիներին ուշ են փոխանցվում, ինչի արդյունքում վտանգ է առաջանում նրանց բերման ենթարկելու:

Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է մի շարք ահազանգեր, որ անձինք Կոմիտեի համապատասխան բաժին ներկայանալու վերաբերյալ ծանուցումները ստանում են ուշացմամբ, ինչը խոչընդոտում է նրանց պատշաճ ներկայանալուն:

Գրանցված ահազանգերից մեկով քաղաքացին որպես վկա հարցաքննվելու ժամից 20 րոպե առաջ մեկ այլ քաղաքում գտնվող Կոմիտեի համապատասխան քննչական վարչություն ներկայանալու ծանուցագիր է ստացել: Օբյեկտիվորեն անձը որևէ կերպով հնարավորություն չի ունեցել նշանակված ժամին ներկայանալ համապատասխան քննչական վարչություն: Չնայած քաղաքացու կողմից խնդրի կապակցությամբ քննիչի ներկայացված հիմնավորմանը՝ քննիչը զգուշացրել է, որ չներկայանալու դեպքում վերջինիս բերման կենթարկեն:

Մեկ այլ դեպքով քաղաքացին որպես վկա հարցաքննվելու համար ծանուցագիր է ստացել հարցաքննվելու համար նշանակված ժամից ընդամենը 10 րոպե առաջ:

Նշվածի կապակցությամբ Կոմիտեի ստացված տվյալների համաձայն՝ միայն Տավուշի մարզային քննչական վարչությունում արձանագրվել է 6 դեպք, երբ քաղաքացին բաժին ներկայանալու համար ծանուցագիրը ստացել է ուշացմամբ:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ վարույթն իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցումները քաղաքացիներին ժամանակին փոխանցելու ուղղությամբ:

7. Զինձառայողների մահվան որոշ դեպքերի քննությունն իրականացվել է լրիվության, բազմակողմանիության և հրապարակայնության պահանջների խախտմամբ

Դեռևս 2014թ.-ի տարեկան զեկույցում անդրադարձ էր կատարվել զինձառայողների մահվան որոշ դեպքերի քննությունն օրենքի պահանջների խախտմամբ իրականացնելուն, սակայն խնդիրը մինչ օրս լուծում չի ստացել:

2015թ.-ին ևս ստացվել են դիմում-բողոքներ բանակում ոչ հակառակորդի գնդակից մահացած զինձառայողների ծնողներից և հարազատներից այն մասին, որ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից չի ապահովվել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, չեն իրականացվել անհրաժեշտ քննչական գործողություններ, չեն պահպանվել գործերի քննության ողջամիտ ժամկետները, ինչի արդյունքում այդ դեպքերը տարիներ շարունակ մնացել են չբացահայտված: Օրինակ՝ թերի դատավարական և քննչական գործողությունների իրականացման հետևանքով գործերից մեկի քննությունը ձգձգվել է շուրջ 15, մեկ այլ դեպքում՝ 9 տարի, արդյունքում հանգեցնելով գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներով հստակ սահմանվել է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պարտավոր են հնարավորինս սեղմ, ողջամիտ ժամկետներում իրականացնել արդյունավետ նախաքննություն և կայացնել որոշում¹²¹: Զինձառայողների մահվան մի շարք գործերի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ նախաքննություն իրականացնող մարմնի կողմից չեն պահպանվել գործերի քննության ողջամիտ ժամկետները, չի իրականացվել մանրակրկիտ քննություն, ինչի հետևանքով քննչական մարմինը դադարեցրել է գործերի քննությունը՝ հիմնվելով հապճեպ և ոչ հիմնավոր եզրահանգումների վրա¹²²:

Պետք է արձանագրել, որ զինված ուժերում մահվան դեպքերի մանրակրկիտ քննությունն ու պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելը, այդ թվում՝ դեպքերի բոլոր հանգամանքները բացահայտելը, մեղավորներին պատասխանատվության ենթարկելը և հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնները վեր հանելն ու վերացնելը կնպաստեն մահվան դեպքերը նվազեցնելուն: Սակայն նշված գործողությունները պատշաճ կերպով չեն կատարվել, և 2015թ.-ի ընթացքում բանակում կրկին արձանագրվել են ոչ հակառակորդի գնդակից զինձառայողների մահվան դեպքեր: Ինչ վերաբերում է քննության հրապարակայնության պակասին, ապա մահվան դեպքերով հարուցված քրեական գործերով հանրությունը պատշաճ չի իրազեկվել դեպքի և քննության մանրամասներին (այնքանով, որքանով դա չի վնասի նախաքննության արդյունավետությանը), իսկ որոշ դեպքերում Մարդու իրավունքների պաշտպանը

¹²¹Տե՛ս օրինակ Կելին և այլոք ընդդեմ Միացյալ Թագավորության գործով վճիռը, 2001թ. մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 30054/96, կետեր 91-96

¹²²Զելիլոֆն ընդդեմ Հունաստանի, 2007թ. մայիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ17060/03, կետ 56

բողոքներ է ստացել, որ քննչական մարմինը մահացածի հարազատներին գործնականում չի ներգրավում գործերի քննությանը¹²³:

2015թ.-ի ընթացքում դիմումատուները տեղեկացրել են նաև, որ գորամասի հրամանատարությունը փորձել է որոշ հանցագործություններ և պատահարներ թաքցնել իրավապահ մարմիններից: Բացի այդ, գորամասի հրամանատարության կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցառումներ դեպքի վայրի պահպանության համար:

Այնինչ, գնդի հրամանատարը պարտավոր է միջոցներ ձեռնարկել հանցագործությունների և պատահարների կանխման ուղղությամբ, իսկ եթե դրանք արդեն տեղի են ունեցել, ժամանակին զեկուցել վերադաս հրամանատարներին (պետերին) և անհապաղ հաղորդել համապատասխան իրավապահ մարմիններին, նշանակել ծառայողական քննություն, անձամբ մասնակցել մարդկային զոհեր կամ այլ ծանր հետևանքներ պատճառած դեպքերի հետաքննությանը՝ ապահովելով դեպքի վայրի, հանցագործության գործիքների և այլ իրեղեն ապացույցների պահպանությունը մինչև իրավապահ մարմինների ներկայանալը¹²⁴:

Միաժամանակ, զինված ուժերում ոչ հակառակորդի գնդակից մահացած զինծառայողների մահվան պատճառներն ու հանգամանքներն ուսումնասիրելու և եզրակացություն ներկայացնելու համար Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ Ազգային ժողով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին որոշման նախագիծ է ուղարկվել ՀՀ Ազգային ժողովի նախագահին և խմբակցության ղեկավարներին, ինչը մինչ օրս ՀՀ Ազգային ժողովում քննարկման չի դրվել:

Առաջարկ. առերևույթ հանցագործության դեպքերով ապահովել քննության սկզբնական փուլում անհետաձգելի քննչական և դատավարական գործողությունների պատշաճ կատարումը, ինչպես նաև ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման նպատակով:

¹²³ Մըկթերն ընդդեմ Միացյալ Թագավորության, 2001թ. մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետեր 129, 142

¹²⁴ «ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնադիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք, հոդված 91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՈՂԹԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ի ընթացքում ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) պատասխանատվության յուրտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ: Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ծառայությունը հաղորդման հարցման պատասխան գրությամբ տրամադրել է հակիրճ տեղեկատվություն, հնարավոր չէ ներկայացնել դրական զարգացումներ: Բացի այդ, տվյալ կառույցի գործունեության գաղտնիության պատճառով հնարավոր չէ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել:

Առկա թերություններն ու խնդիրները

- 1. 2015թ.-ի ընթացքում արձանագրվել են խնդիրներ՝ կապված Ծառայության աշխատակիցների կողմից ձեռքակալված անձանց փաստաբանով չապահովելու, ինչպես նաև անձին արգելանքի վերցնելուց հետո մերձավոր ազգականներին չտեղեկացնելու հետ:**

2015թ.-ին կրկին արձանագրվել են դեպքեր, երբ բերման ենթարկված/ձեռքակալված անձին չեն ապահովել փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքները: Բացի այդ, որոշ դեպքերում անձի ազատությունը սահմանափակելուց հետո, վերջինիս հնարավորություն չի տրվել տեղեկացնելու մերձավոր ազգականներին: Ստացված դեպքերից մեկով Ծառայության աշխատակիցները չեն կատարել ձեռքակալված անձի փաստաբան ներգրավելու պահանջը՝ անկախ այն բանից, որ անձն անմիջապես ցանկություն է հայտնել փաստաբան ունենալ: Դրանից հետո ձեռքակալվածին տեղափոխել են ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության «Ձեռքակալվածներին պահելու վայր» (այսուհետ՝ ՁՊՎ), ինչի մասին նույնպես փաստաբանը չի տեղեկացվել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակցի միջամտության արդյունքում է միայն հնարավոր եղել պարզել ձեռքակալվածի գտնվելու վայրը: Սակայն, ՁՊՎ-ում նույնպես փաստաբանին թույլ չեն տվել հանդիպել իր վստահորդի հետ՝ պատճառաբանելով, որ Ծառայության քննիչի կողմից փաստաբանին որպես պաշտպան ներգրավելու մասին որոշում չի կայացվել, ինչպես նաև նշվել է, որ քննիչը ՁՊՎ-ի վարչակազմին չի փոխանցել ձեռքակալվածի գրավոր դիմումը՝ փաստաբանին որպես իր պաշտպան ներգրավելու մասին: Մինչդեռ, հանցանքի կատարման մեջ կասկածվող կամ մեղադրվող անձի սահմանադրորեն և օրենքով վերապահված կարևորագույն իրավունքներից մեկը՝ պաշտպան ունենալու

իրավունքն է:

Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնության, ինչպես նաև իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք¹²⁵: Բացի դրանից՝ այն պահից, երբ կասկածյալը/մեղադրյալը պաշտպան ունենալու ցանկություն է հայտնում, քրեական գործով վարույթին պաշտպանի մասնակցությունը դառնում է պարտադիր¹²⁶:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ բոլոր դեպքերում պաշտպանը պետք է իրավունք ունենա մասնակցել պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին՝ առանց որևէ միջնորդության ներկայացման, և անկախ նրանից, թե այդպիսի մասնակցության վերաբերյալ առկա է կասկածյալի կամ մեղադրյալի պահանջ, թե՛ ոչ¹²⁷: Ծառայության աշխատակիցները պարտավոր են յուրաքանչյուր դեպքում ձերբակալման մասին որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ խափանման միջոց ընտրելու մասին որոշումն անձին հայտարարելու պահից, ինչպես նաև անձին վարչական շենք կամ ՁՊՎ տեղափոխելուց հետո ապահովել նրա՝ փաստաբան հրավիրելու և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը:

Մեկ այլ դեպքով, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից արձանագրվել է անձին արգելանքի վերցնելուց հետո վերջինիս մերձավոր ազգականներին չտեղեկացնելու հետ կապված խնդիր: Ստացված ահազանգից պարզվել է, որ անձը տևական ժամանակ գտնվել է Ծառայության համապատասխան ստորաբաժանում, սակայն նրա գտնվելու վայրի վերաբերյալ մերձավոր ազգականները տեղեկացված չեն եղել:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցչի միջամտությունից հետո է միայն հնարավոր դարձել պարզել նրա գտնվելու վայրը, ինչի մասին տեղեկացվել են քաղաքացու մերձավոր ազգականները: Այնինչ, օրենսդրությամբ մեղադրյալը կամ կասկածյալն իրավունք ունեն արգելանքի վերցնելուց հետո անմիջապես, բայց ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում, քրեական վարույթն իրականացնող մարմնի միջոցով մերձավոր ազգականներին հեռախոսակապի կամ հնարավոր այլ միջոցով տեղյակ պահելու արգելանքի տակ պահելու տեղի և հիմքերի մասին¹²⁸:

Ծառայության կողմից կիրառվող նման պրակտիկան սահմանափակում է ինչպես բերման ենթարկված և/կամ ձերբակալված անձանց իրավունքները տեղեկացնելու իրենց մերձավոր ազգականներին իրենց արգելանքի տակ պահելու տեղի և հիմքերի մասին, այնպես էլ մերձավոր ազգականների իրավունքն իմանալու վերջիններիս գտնվելու վայրը:

Առաջարկ. անձի ազատությունը սահմանափակելու յուրաքանչյուր դեպքում ապահովել նրա՝ փաստաբան հրավիրելու և նրան տեսակցելու, ինչպես նաև անձին

¹²⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 64, 67

¹²⁶ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 69

¹²⁷ ՀՀ սահմանադրական դատարան, թիվ ՄԴՌ-1119 որոշում, 08.10.2013թ.

¹²⁸ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդվածներ 63, 65

արգելանքի վերցնելուց հետո մերձավոր ազգականներին տեղեկացնելու իրավունքները:

2. Ծառայությունը ՀՀ պետական սահմանի անցակետերում լիարժեք չի ապահովել հասարակական կազմակերպությունների կողմից մշտադիտարկում իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ:

Դեռևս 2014թ.-ին ընդունված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրերում նախատեսված էր ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ ՀՀ պետական սահմանի անցակետերում օտարերկրացիների համար նախատեսված հատուկ կացարաններում հասարակական կազմակերպությունների կողմից մշտադիտարկում իրականացնելու նպատակով¹²⁹:

Սակայն Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրությունների, ինչպես նաև Ծառայության ներկայացրած տվյալների համադիր վերլուծությունը վկայում է, որ այդպիսի հատուկ կացարան առկա է և գործում է միայն «Զվարթնոց» օդանավակայանում: Չնայած այն հանգամանքին, որ Ծառայությունից հայտնել են, որ ՀՀ սահմանային անվտանգության և պետական սահմանի համալիր կառավարման ծրագրով նախատեսված է ապագայում «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերում հատուկ կացարանների կառուցում, այդուհանդերձ պետք է փաստել, որ վերը նշված ծրագրով տվյալ միջոցառման իրականացման վերջնաժամկետ էր նախատեսված 2014թ.-ի չորրորդ եռամսյակը:

Նշվածի համատեքստում հատկանշական է, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարի կողմից մշակված Միջազգային սահմանագծերում մարդու իրավունքների վերաբերյալ ուղեցույցների և սկզբունքների 5-րդ ուղեցույցի 7-րդ կետում նշվում է, որ պետությունները և հնարավորության դեպքում, միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները պետք է ապահովեն, որպեսզի բոլոր ժամանակավոր ընդունման կացարանների հարմարությունները համապատասխանեն մարդու իրավունքների միջազգային չափանիշներին, այդ թվում՝ ողջամիտ տարածություն, սննդակարգային և մշակութային տեսանկյունից համապատասխան սնունդ, մաքուր ջուր, սանիտարական, համապատասխան բժշկական ինամք և իրավաբանական օգնություն: Բացի այդ, սահմանային անցակետերում տեղակայված հատուկ կացարանների վերաբերյալ առկա են նաև կարգավորումներ Միջազգային միգրացիոն կազմակերպության կողմից մշակված «Սահմանագծային կառավարման և ձեռքարկարկման ընթացակարգերի՝ ներառյալ ներգաղթյալների վերաբերյալ ուղեցույց. հանրային առողջության հեռանկարը» և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի կողմից մշակված «Ապաստան հայցողների ձեռքարկարկման և ձեռքարկարկման այլընտրանքների

¹²⁹ ՀՀ կառավարության 27.02.2014թ.-ի թիվ 303-Ն որոշման հավելված, կետ 87

վերաբերյալ կիրառելի չափորոշիչներն ու չափանիշները» փաստաթղթերում:

Այսպիսով, նշվածից կարելի է եզրակացնել, որ եթե սահմանային անցակետերում չկան նույնիսկ օտարերկրացիների համար նախատեսված հատուկ կացարաններ, ապա հնարավոր չէ պատշաճ ապահովել հասարակական կազմակերպությունների կողմից մշտադիտարկումների իրականացումը:

Առաջարկ. Ի կատարումն ՀՀ կառավարության որոշման՝ ձեռնարկել քայլեր ՀՀ պետական սահմանի անցակետերում օտարերկրացիների համար նախատեսված հատուկ կացարաններ կառուցելու ուղղությամբ:

II ԲԱԺԻՆ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. ՀՀ առողջապահության նախարարի 2015թ.-ի նոյեմբերի 16-ի թիվ 3227-Ա հրամանով հաստատվել է «18 տարեկան և 18 տարեկանից բարձր տարիքի անձանց շաքարային դիաբետի վարման ուղեցույցը», ինչն ուղղված է հիվանդանոցային և արտահիվանդանոցային ծառայությունների որակի կառավարման բարելավմանը:
2. 2015թ.-ի ընթացքում հաստատվել են առնվազն 25 բնութագրեր (չափորոշիչներ), այդ թվում՝ հանրային առողջապահական մասնագիտությունների և նեղ մասնագիտությունների որակավորման համար:
3. 2015թ.-ի հունվարից մեկնարկել են «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» թիվ 5222 վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված սքրինինգային հետազոտությունները, որոնց նպատակն է ՀՀ բնակչության ռիսկային խմբերում իրականացնել ոչ վարակիչ հիվանդությունների (օրինակ՝ շաքար, հիպերտոնիա) զանգվածային սքրինինգներ՝ ուղղված այդ հիվանդությունների վաղ հայտնաբերմանը, վերահսկմանը և մահացության նվազեցմանը:
4. 2015թ.-ի ապրիլի 11-ին ՀՀ առողջապահության նախարարի «ՀՀ առողջապահության նախարարի 01.11.2013թ.-ի թիվ 70-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 12-Ն հրամանով սահմանվել է դրույթ, համաձայն որի անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքի մասին իրազեկումն ապահովվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից՝ բնակչության համար տեսանելի վայրերում թերթիկների և պաստառների տեղադրման միջոցով:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Ինչպես նախորդ տարիներին, 2015թ. և ստացվել են դժգոհություններ պետական պատվերի շրջանակներում ձեռք բերված դեղերի որակի վերաբերյալ:

Դեռևս 2013 և 2014թթ.-ի Մարդու իրավունքների պաշտպանի Տարեկան զեկույցներում բարձրաձայնվել է դեղերի գնման գործընթացի թերությունների մասին, սակայն 2015 թ.-ի ընթացքում ևս դեղերի գնման ընթացակարգն անփոփոխ է մնացել, ինչին զուգահեռ շարունակվել են ստացվել դժգոհություններ քաղաքացիներից և բուժաշխատողներից պետական պատվերով գնված դեղերի որակի վերաբերյալ: Խնդիրն այն է, որ պետության կարիքների համար անհրաժեշտ դեղերը ձեռք են բերվում պետական գնումների ընթացակարգով, որի ժամանակ մրցույթում հաղթում է, ի թիվս այլ պահանջների, նվազագույն գին ներկայացրած հայտը¹³⁰:

Նշված գործընթացի արդյունքում պետական գնումների մրցույթներով ձեռքբերվող դեղորայքի որակի պահանջը հաճախ ստորադասվել է առավել ցածր գնի պահանջին, ինչի հետևանքով մի շարք դեպքերում ձեռքբերված դեղորայքի որակը պատշաճ չի եղել:

Նշված խնդիրը բազմիցս բարձրաձայնել են պետպատվերի շրջանակներում անվճար դեղորայք ստացող քաղաքացիները, ոլորտային մասնագետները և բուժաշխատողները՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան (ՄԱԲՀ) ներկայացուցչության հետ համատեղ ՀՀ-ում վերարտադրողական և սեռական առողջության իրավունքների զարգացման ոլորտում իրականացվող ուսումնասիրության շրջանակներում Երևան քաղաքում, Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերում իրականացրած ուսումնասիրությունների ընթացքում:

Մասնավորապես, բազմաթիվ բուժաշխատողներ նշել են, որ պետական գնումների գործընթացի թերությունների արդյունքում՝ ծննդատները, որպես կանոն, ստանում են ամենաեժան դեղամիջոցները, ինչն օբյեկտիվորեն անհանգստություն է առաջացնում դրանց որակի կապակցությամբ: Մասնագետները հարցազրույցների ընթացքում նշել են նաև, որ մի շարք դեպքերում պետական գնումներով գնված դեղերը իրենց որակական հատկանիշներով բավարար չեն լինում, այդ իսկ պատճառով հենց բուժանձնակազմն է խորհուրդ տալիս պացիենտներին չօգտվել պետության կողմից անվճար տրամադրվող դեղերից:

Բացի այդ, Պաշտպանին հասցեագրված մի շարք դիմում-բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ պետպատվերի շրջանակներում ձեռքբերվող դեղերի ոչ պատշաճ որակի պատճառով բազմաթիվ քաղաքացիներ, այդ թվում՝ արտոնյալ և անվճար պայմաններով դեղեր ստացողները, օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձինք, հրաժարվել են դրանցից՝ նախընտրելով սեփական միջոցներով ձեռքբերել ավելի որակյալ դեղեր: Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև 2014թ.-ի տարեկան զեկույցում:

¹³⁰ Մանրամասն տես «ՀՀ ֆինանսների նախարարություն» բաժնում, «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 31, մաս 2, կետ 1

Արդյունքում, «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները և պետական գնումների ընթացակարգը կարգավորող օրենսդրության կիրառումը մի շարք դեպքերում հանգեցրել են ոչ պատշաճ որակի դեղերի ձեռքբերման, ինչը ռիսկեր է պարունակում հանրային առողջության պահպանման տեսանկյունից:

Առաջարկ. վերանայել պետության կարիքների համար գնվող դեղերի գնումների գործընթացը կարգավորող օրենսդրությունը:

- 2. Կրկին արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ մինչև յոթ տարեկան երեխաները չեն ստացել անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր՝ իրազեկման պակասի, ինչպես նաև բուժաշխատողների կողմից դեղերի չտրամադրման պատճառով:**

Չնայած նրան, որ վերջին տարիների ընթացքում էապես բարձրացել է հասարակության իրազեկվածության մակարդակն անվճար հիվանդանոցային բուժօգնություն ստանալու իրավունքի վերաբերյալ, այնուամենայնիվ Մարդու իրավունքների պաշտպանին հայտնած տեղեկությունները և մամուլում տեղ գտած մի շարք հրապարակումները վկայում են այն մասին, որ դեռևս բավարար չէ բնակչության իրազեկվածությունն անվճար դեղորայք ստանալու վերաբերյալ:

Այսպես, ՀՀ կառավարության 2006 թ.-ի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ անվճար դեղորայք է տրվում նաև 0-7 տարեկան երեխաներին: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2006 թ.-ի նոյեմբերի 23-ի թիվ 1717-Ն որոշմամբ սահմանվում են անվճար պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերը և այն հիվանդությունները, որոնց առկայության դեպքում դեղերը տրվում են անվճար: Չնայած նշված սոցիալական արտոնությունների սահմանմանը, բազմաթիվ դեպքերում մինչև 7 տարեկան երեխաների ծնողները չեն ստացել իրենց հասանելի անվճար դեղերը՝ տեղեկացված չլինելով իրենց այդ իրավունքի մասին:

Տվյալ խնդրի կապակցությամբ Նախարարությունից նշել են, որ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր չտրամադրելու պատճառը հիմնականում այն է, որ հիվանդներին բուժման նպատակով նշանակվում են ՀՀ-ում պետական գրանցում չունեցող դեղեր կամ այնպիսի դեղեր, որոնք ընդգրկված չեն անվճար տրամադրվող դեղերի ցանկում: Չնայած նրան, որ Նախարարության նշած պատճառները նույնպես արդիական են, սակայն անգամ այն դեպքերում, երբ տվյալ դեղը տրամադրվում է անվճար, բուժհաստատությունները կամ չեն իրազեկում ծնողին դրա վերաբերյալ կամ մերժում են դեղի տրամադրումը՝ պատճառաբանելով, որ այն տվյալ պահին առկա չէ:

Միաժամանակ, Նախարարությունից տեղեկացրել են, որ 2015 թ.-ի ապրիլի 11-ին ՀՀ առողջապահության նախարարի «ՀՀ առողջապահության նախարարի 01.11.2013թ. թիվ 70-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 12-Ն հրամանով սահմանվել է պահանջ, համաձայն որի անվճար կամ արտոնյալ

պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքի մասին իրազեկումը ապահովվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից՝ բնակչության համար տեսանելի վայրերում թերթիկների և պաստառների տեղադրման միջոցով:

Այնուամենայնիվ, մինչև 7 տարեկան երեխաների ծնողները, պայմանավորված բժշկի կամ բուժհաստատության կողմից նման իրավունքի մասին տեղեկատվության չտրամադրելով կամ տրամադրումը մերժելով, դեղատոմսով նշանակված դեղորայքը հիմնականում ձեռք են բերում սեփական միջոցներով:

Առաջարկ. պատշաճ վերահսկել՝ մինչև 7 տարեկան երեխաների ծնողներին անվճար դեղորայք ստանալու հնարավորության մասին իրազեկման պահանջի կատարումն ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից:

3. Ինչպես 2013 և 2014 թթ.-ին, այնպես էլ 2015 թ.-ին չեն մշակվել բավարար և անհրաժեշտ մեխանիզմներ պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների (սելեկտիվ աբորտների) դեպքերի բացահայտման և կանխարգելման ուղղությամբ:

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում բարձրաձայնվել է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների (սելեկտիվ աբորտների) կանխարգելման համար անհրաժեշտ ու բավարար օրենսդրական մեխանիզմների բացակայության, ինչպես նաև հանրության շրջանում խնդրի կանխարգելման ուղղությամբ իրազեկման աշխատանքների անցկացման հարցը: Այնուամենայնիվ, խնդիրը դեռևս արդիական է, ինչը, բազմաթիվ հետազոտությունների համաձայն, վտանգներ է պարունակում հասարակական կյանքի համար¹³¹:

Չնայած այս ուղղությամբ Նախարարության ներկայացրած երկու օրենսդրական նախաձեռնություններին և պատկան մարմինների կողմից կազմակերպած բազմաթիվ միջոցառումներին, սելեկտիվ աբորտների խնդիրը մինչ օրս շարունակում է մնալ արդիական: Տարվա ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ քննարկումներ, հրապարակվել են մի շարք նյութեր, որտեղ կանայք պատմել են սեռով պայմանավորված աբորտների երևույթի մասին, ինչը մի շարք դեպքերում եղել է նաև պարտադրված:

Խնդրի օրենսդրությամբ կարգավորելու և տվյալ թեմայով ընդհանուր իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության հարցը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների

¹³¹ Մանրամասն տես՝ Կանանց իրավունքների վերաբերյալ գլխում

ծրագրում¹³²:

Խնդրի առկայության մասին հաճախ խոսել են նաև Երևան քաղաքացի և մարզերի մի շարք բուժհաստատությունների աշխատակիցներ, որոնց հետ հարցազրույցներ են անցկացրել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները:

Չնայած 2015 թ.-ին ևս Նախարարության կողմից մշակվել է օրինագիծ, որն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից և այժմ գտնվում է ՀՀ ազգային ժողովում¹³³, այն, բնականաբար, չի կարող ապահովել խնդրի համապարփակ լուծումը: Մասնավորապես, օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել, որ բժշկական կամ սոցիալական ցուցումների ցանկում չնախատեսված որևէ այլ, ներառյալ սեռով պայմանավորված, մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատումն արգելվում է: Այստեղ, փաստորեն, ավելացել են «ներառյալ սեռով պայմանավորված» բառերը:

Դրական համարելով խնդրին օրենսդրական կարգավորում տալու նախաձեռնությունը՝ այնուամենայնիվ օրենքի դրույթի նշյալ ձևակերպումը գործնականում չի կարող ապահովել խնդրի լուծումը՝ հաշվի առնելով այն, որ օրենսդրական ներկայիս կարգավորումների պարագայում հղիության արհեստական ընդհատումը 12-ից մինչև 22 շաբաթական հղիության պարագայում հնարավոր է իրականացնել միայն բժշկասոցիալական հատուկ ցուցումների դեպքում, կնոջ համաձայնությամբ¹³⁴: Այսինքն, օրենքն անուղղակիորեն արդեն իսկ արգելում է հղիության արհեստական ընդհատման հնարավորությունը նշված ժամանակահատվածում՝ անկախ պտղի սեռից, բացառությամբ բժշկասոցիալական ցուցումների դեպքերում:

Միաժամանակ, անհրաժեշտ է ձեռնարկվել լրացուցիչ քայլեր բժիշկների գործողությունների նկատմամբ հսկողությունը խստացնելու ուղղությամբ, որպեսզի ապահովվեն օրենքով սահմանված բժշկասոցիալական ցուցումների պահպանումը և հետևաբար, վերջիններիս կողմից 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման օրենսդրական արգելքի ապահովումը:

Հաշվի առնելով խնդրի ծագման պատճառները և վտանգները, ինչպես նաև 2011թ.-ի ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականը¹³⁵՝ անհրաժեշտ է նաև ձեռնարկել համալիր միջոցառումներ ուղղված սելեկտիվ աբորտների վտանգավոր հետևանքների, կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ բնակչության իրավագիտակցության, ինչպես նաև հասարակության մեջ կանանց դերի բարձրացման ուղղությամբ¹³⁶:

Unuzարկ. խնդրի համակարգային լուծման նպատակով անհրաժեշտ է

¹³² ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում

¹³³ <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=38181>, 15.03.2016 թ.-ի դրությամբ

¹³⁴ «Մարդու վերարտադրողական առողջության և իրավունքների մասին» ՀՀ օրենք հոդված 10, մաս 3

¹³⁵ http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28

¹³⁶ Մանրամասն տես՝ Կանանց իրավունքների վերաբերյալ գլխում

ուժեղացնել հսկողությունը բժիշկների գործունեության նկատմամբ՝ բժշկասոցիալական ցուցումների պահպանման նպատակով:

4. Կրկին արձանագրվել են բուժաշխատողների կողմից պացիենտների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքեր:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է յուրաքանչյուր անձի օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքը: Եվ չնայած նրան, որ բոլոր մարդիկ ունեն բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հավասար իրավունք, իսկ բուժաշխատողները պարտավոր են պահպանել իրենց պացիենտների բժշկական գաղտնիքը և վերջիններիս նկատմամբ դրսևորել հարգալից վերաբերմունք¹³⁷, իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները հայտնել են մի շարք դեպքերի մասին, որոնք վկայում են բուժաշխատողների կողմից ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով, ինչպես նաև Հեպատիտ B և C-ով ապրող և մի շարք այլ խմբերի անձանց հանդեպ դրսևորվող խտրականության վերաբերյալ:

Նշված խնդրի կանխարգելման ուղղությամբ Նախարարության կողմից իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, բուժաշխատողների համար կազմակերպվել են սեմինարներ: Այնուամենայնիվ, ոլորտի փորձագետները նշում են, որ բուժաշխատողներն ապատեղեկացված են կամ թյուր կարծիք ունեն որոշ հիվանդությունների տարածման ուղիների վերաբերյալ, ինչի պատճառով էլ խուսափում են պացիենտներին բուժօգնություն տրամադրելուց կամ դա կատարում են ոչ պատշաճ կերպով:

Այսպես, արձանագրված դեպքերից մեկով բուժաշխատողը հրաժարվել է տրամադրել բուժօգնություն քաղաքացու մոտ ՄԻԱՎ-ի առկայության պատճառով կամ օրինակ՝ բուժաշխատողները հղի կնոջը խորհուրդ չեն տվել երեխա ունենալ վերջինիս մոտ ՄԻԱՎ-ի առկայության պատճառով: Այս և նմանատիպ բազմաթիվ օրինակները վկայում են բուժաշխատողների շրջանակում քաղաքացիների, հատկապես խոցելի խմբերի և որոշակի հիվանդություններով ապրող անձանց, իրավունքների մասին ոչ բավարար տեղեկացվածության մասին:

Նշված վերաբերմունքի արդյունքում մի շարք անձինք չեն ստացել պատշաճ բժշկական օգնություն և չեն կարողացել օգտվել բժշկական ծառայություններից:

Առաջարկ. ձեռնարկել քայլեր՝ բուժաշխատողների կողմից խտրական վերաբերմունքի բացառման և պատշաճ բուժապասարկում չցուցաբերած բուժաշխատողներին պատասխանատվության ենթարկվելու ուղղությամբ, ինչպես նաև բարձրացնել բուժաշխատողների իրազեկվածությունը տարբեր հիվանդությունների տարածման ուղիների և անվտանգության միջոցների վերաբերյալ:

¹³⁷ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 4

5. Դեռևս ավարտված չէ պալիատիվ խնամքի ներդրման գործընթացը, ինչի հետևանքով դրա կարիքն ունեցող մի շարք անձինք անցնում են անհիմն ցավի և տառապանքի միջով:

Բազմաթիվ բժիշկներ, իրավապաշտպաններ և միջազգային կառույցներ բարձրաձայնում են Հայաստանում պալիատիվ (ցավամոքիչ) բժշկական օգնության ներդրման անհրաժեշտության և այդ գործընթացի ձգձգման խնդրի մասին¹³⁸: Պալիատիվ օգնության նպատակն է ցավի և մյուս բացասական ախտանիշների վերացումը, ինչպես նաև պացիենտին հոգեբանական, սոցիալական և հոգևոր աջակցության տրամադրումը: Պալիատիվ խնամքի ներդրման խնդիրների մասին բարձրաձայնվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2014 թ.-ի տարեկան զեկույցում, ինչպես նաև 2015 թ.-ին «Հյուման Ռայթս Ուոթչի»-ի «Պալիատիվ խնամքին և ցավի ամոքմանն առնչվող հիմնական եզրույթները» զեկույցում¹³⁹:

Այսպես, տարիներ շարունակ քննարկվում է Հայաստանում պալիատիվ խնամքի ներդրման անհրաժեշտության մասին, սակայն գործընթացի բարդության և օրենսդրական մի շարք կարգավորումների հետևանքով դա առ այսօր արված չէ: Նախ՝ Հայաստանում գործում է օֆիոդային/հոգեներգործող դեղորայքի նշանակման և ստացման բարդ և ժամանակատար ընթացակարգ, ինչն իր հերթին խոչընդոտում է հիվանդներին ստանալ պալիատիվ խնամք: Ավելին, չնայած նրան, որ մորֆինը ապահով, ոչ թանկ և արդյունավետ դեղամիջոց է, որով հնարավոր է թերևս անցնել մի շարք հիվանդություններից առաջացող ցավերը՝ Հայաստանում մորֆինի և վերջինիս այլընտրանքային միջոցների քանակը չի բավարարում դրա կարիքն ունեցող բոլոր հիվանդներին¹⁴⁰: Առկա են նաև մի շարք օրենսդրական բարդություններ, որոնց հետևանքով քաղաքացիները զրկվում են ցավամոքիչ բուժօգնություն ստանալու հնարավորությունից: Օրինակ՝ ավիոնային դեղատոմսերը դուրս են գրվում ՀՀ կառավարության սահմանած հատուկ ձևաթղթով և պետք է պարունակեն չորս տարբեր կնիքներ ¹⁴¹:

Չնայած նրա, որ ըստ Նախարարության հայտնած տեղեկությունների 2015 թ.-ին մշակվել է «Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ներդրման ռազմավարությանը և պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման ներդրման ռազմավարության 2016-2019 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, այնուամենայնիվ 2016 թ.-ի առաջին եռամսյակի դրությամբ այն հաստատված չի եղել:

¹³⁸ <https://www.hrw.org/news/2015/07/14/armenia-needless-pain-end-life>

¹³⁹ http://www.hrw.org/sites/default/files/wr2014_web_0.pdf

¹⁴⁰ Տես՝ նույն տեղում

¹⁴¹ ՀՀ առողջապահության նախարարության 2002թ.-ի փետրվարի 26-ի «ՀՀ տարածքում դեղատոմսերի դուրս գրման և դեղերի բաց թողման կարգը հաստատելու մասին» թիվ 100 հրաման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 14-ի թիվ 759 որոշում

Ավելին, դեռևս առկա չեն մեխանիզմներ տնային պայմաններում պալիատիվ խնամք ստանալու համար, որի ընթացքում, օրինակ, որոշակի ծառայություններ կմատուցվեն պացիենտներին և նրանց խնամողներին: Խնդրահարույց է նաև այն, որ հանրային իրազեկությունը ցավի ամոքման իրավունքի և սուր ցավի ամոքման հնարավորությունների վերաբերյալ դեռևս ցածր է, իսկ բուժաշխատողները չունեն համապատասխան պատրաստվածություն այն իրականացնելու համար:

Վերոնշյալ և այլ խնդիրների հետևանքով քաղաքացիները հնարավորություն չեն ունենում ստանալու համապատասխան բուժօգնություն, ինչի հետևանքով ստիպված են լինում անցնելու ցավի միջով:

Առաջարկ. հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացնել պալիատիվ խնամքի ներդրումը Հայաստանում, օրենսդրորեն պատշաճ կարգավորել վերջինիս տրամադրման գործընթացը, կարգավորել թմրամիջոցների և հոգեմետ նյութերի տրամադրման կարգը, վերապատրաստել համապատասխան մասնագետներին, ապահովել պալիատիվ խնամքի կարիք ունեցող անձանց՝ արտահիվանդանոցային պայմաններում նման խնամքի ստացումը և բարձրացնել հանրային իրազեկվածությունը:

6. Շարունակվել են գրանցվել դեպքեր, երբ չնայած օրենսդրության պահանջին բժիշկների կողմից չի պահպանվել պացիենտի բժշկական գաղտնիքը:

Չնայած նրան, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի պահանջել իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում¹⁴², այնուամենայնիվ 2015թ. արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ բուժաշխատողները չեն պահպանել պացիենտի բժշկական գաղտնիքը: Նշվածի արդյունքում քաղաքացիները (հատկապես առավել խոցելի խմբերի ներկայացուցիչները) կաշկանդված են լինում դիմելու բուժաշխատողների օգնությանը:

Բժշկական գաղտնիքի չպահպանման մի շարք դեպքերի ականատես են եղել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները ՄԱԲՀ-ի հետ համատեղ իրականացված ուսումնասիրության շրջանակներում Երևանի և ՀՀ մի շարք մարզերի բուժհաստատություններ կատարած այցելությունների ժամանակ:

Այսպես, հետազոտման շրջանակներում հարցված կանանցից մի քանիսը նշել են, որ նախաձննդյան խորհրդատվության ընթացքում առնվազն 3-4 այլ հղի կանայք են ներկա լինում բժշկի նույն սենյակում: Ավելին՝ տարբեր բուժհաստատություններում սենյակների քանակի սղության պատճառով նույն սենյակում խորհրդատվություն է տրամադրվում միաժամանակ երկու բուժաշխատողի կողմից տարբեր պացիենտների: Բուժաշխատողների հետ զրույցներից պարզ էր դարձել, որ որոշ դեպքերում վերջիններս բավականաչափ

¹⁴² «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 5

տեղեկացված չեն պացիենտի բժշկական գաղտնիքը պահպանելու իրենց պարտականության մասին:

Չնայած նրան, որ 2015թ. հոկտեմբերի 6-ին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում կատարվել են լրացումներ և փոփոխություններ, որով օրենսդրորեն ամրագրվել է բժշկական գաղտնիքի պաշտպանությունը, այնուամենայնիվ ձեռնարկված օրենսդրական քայլերը չեն ապահովել խնդրի համակարգային լուծում:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և գործնական միջոցներ՝ հիվանդների բժշկական գաղտնիքը պահպանելու, ինչպես նաև այն չպահպանած բժիշկներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

7. Առ այսօր օրենսդրորեն սահմանված չէ «բժշկական սխալ» հասկացությունը, ինչպես նաև մշակված և ներդրված չեն բժշկական չափորոշիչները (ստանդարտները), հիվանդությունների ախտորոշման, բուժման ուղեցույցները:

Տարիներ շարունակ տարբեր հասարակական կազմակերպություններ, բուժաշխատողներ, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը բարձրաձայնել են բժշկական չափորոշիչների (ստանդարտների), հիվանդությունների ախտորոշման, բուժման միասնական ուղեցույցների մշակման անհրաժեշտության մասին, որոնց բացակայության հետևանքով պրակտիկայում հնարավոր չէ հայտնաբերել և որոշել սխալ բժշկական միջամտություն ցուցաբերելու դեպքերը:

Խնդրի կապակցությամբ Նախարարությունից բազմիցս հայտնել են, որ Նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի կողմից սկսվել է բժշկական ստանդարտների մշակման գործընթացը, սակայն առ այսօր այդ աշխատանքները չեն ավարտվել: Այնինչ, նման ուղեցույցների ու ստանդարտների բացակայությունը խոչընդոտում է բուժաշխատողի կատարած արարքին հստակ որակում տալուն, բժշկական սխալը բացահայտելուն և պատասխանատվության համապատասխան միջոցներ կիրառելուն:

Բժշկական սխալի սահմանման անհրաժեշտության հարցը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում, որի համաձայն «բժշկական սխալ» հասկացության օրենսդրական կարգավորումը սահմանող իրավական ակտի մշակման և կառավարություն ներկայացնելու ժամկետ է սահմանվել 2016 թ.-ի 4-րդ եռամսյակը¹⁴³: Այնուամենայնիվ, խնդրի լուծման ուղղությամբ առ այսօր նշանակալից քայլեր չեն ձեռնարկվել:

Նշված ստանդարտների բացակայության պայմաններում հնարավոր չէ որոշել սխալ բժշկական միջամտությունը, ինչի արդյունքում բժշկի սխալի պատճառով

¹⁴³ ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 27 թիվ 303-Ն որոշում

պացիենտի առողջությանը հասցված վնասի դեպքերը մնում են չբացահայտված: Ավելին, այդ ստանդարտների և բժշկական սխալ հասկացության բացակայության պայմաններում հնարավոր չէ նաև պատասխանատվության ենթարկել անփութություն ցուցաբերած բուժաշխատողներին, ինչպես նաև կանխել հետագայում նման դեպքերի կրկնությունը: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև, որ մի շարք բուժաշխատողներ ևս բարձրաձայնել են բժշկական ստանդարտների անհրաժեշտության մասին՝ հավելելով, որ այդ չափորոշիչների առկայության պայմաններում իրենք ավելի պաշտպանված կարող են լինել:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ՝ հնարավորինս սեղմ ժամկետներում բժշկական չափորոշիչների (ստանդարտների), միասնական ուղեցույցների մշակման և ներդրման, ինչպես նաև «բժշկական սխալի» սահմանման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. 2015թ. հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը, որի ընդունմամբ ապահովվելու է ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրումը՝ բարձրացնելով սոցիալական ծառայությունների որակը և մատչելիությունը, մեկ պատուհանի սկզբունքով ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի կազմակերպումը՝ պետական ծրագրերի շրջանակներում:

2. 2015թ. հուլիսի 1-ից գործող 19 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններում (ՀՄՕՏԿ) գործարկվել է դիմումների ընդունման միասնական համակարգը, որի շնորհիվ կիրառործվի սոցիալական խնդիրներով կենտրոն այցելած քաղաքացիների դիմումներին պատշաճ ընթացք տալու գաղափարը¹⁴⁴:

3. Միգրացիոն տեղեկատվական և խորհրդատվական կենտրոնները այսուհետ կգործեն Նախարարության Զբաղվածության պետական գործակալության հովանու ներքո՝ աջակցելով պոտենցիալ միգրանտներին՝ ծանոթանալու իրենց իրավունքներին, շահերին, և ընդունող երկրների միգրացիոն օրենսդրությանը:¹⁴⁵

4. Ընտանիքներում երրորդ և հաջորդ երեխաների դեպքում վճարվող ծննդյան միանվագ նպաստի և ընտանեկան դրամագլխի օգտագործման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կառավարության որոշմամբ սահմանված ընտանեկան դրամագլխի միջոցների օգտագործման նպատակները հասանելի են դարձվել թիրախային գյուղական բնակավայրերի բնակչության համար: Արդյունքում ընտանեկան դրամագլխի միջոցները կարող են օգտագործվել հիփոթեքային վարկի մայր գումարը մարելու, տոկոսագումարը վճարելու, ընտանիքի անդամի ուսման վարձը վճարելու և ընտանիքի անդամի բժշկական

¹⁴⁴ <http://bit.ly/1pFZ9Wu>

¹⁴⁵ <http://www.aravot.am/2015/07/07/591031/>

ապահովագրություն ձեռք բերելու համար¹⁴⁶:

5. ՀՀ կառավարության կողմից հավանության են արժանացել «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը» և «Բժշկասոցիալական փորձաքննության աշխատանքներում փորձաքննություն անցնող անձանց կողմից համապատասխան մասնագետներին որպես խորհրդատու ներգրավելու կարգը»¹⁴⁷:

6. ՀՀ կառավարության որոշմամբ կանոնակարգվել են չաշխատող մայրերին մայրության նպաստ նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները¹⁴⁸, որի արդյունքում 2016թ. հունվարի 1-ից չաշխատող մայրերին վճարվել է մայրության նպաստ:

Առկա թերություններն ու խնդիրները

1. 2015թ.-ին սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող օգնության համակարգում դեռևս արդի են մի շարք խնդիրներ, այդ թվում՝ չարաշահումներ, ավելորդ վարչարարություն, օրենսդրական բացթողումներ:

Դեռևս 2014թ.-ի Տարեկան զեկույցում նշվել էր ընտանիքի անապահովության գնահատման համակարգում (այսուհետ՝ Համակարգ) առկա խնդիրների, մասնավորապես՝ ընտանիքի անապահովության միավորի հաշվարկման բանաձևի թերությունների, ինչպես նաև Նախարարության սոցիալական աջակցության տարածքային կենտրոնի աշխատող (տեսուչ) կողմից տարբեր չարաշահումների վերաբերյալ: 2015թ.-ի ընթացքում Պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում քաղաքացիները շարունակել են բարձրացել նշված համակարգային խնդիրները:

2014թ.-ի տվյալներով աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է շուրջ 900 հազար մարդ (մշտական բնակչության ցուցանիշի հաշվով), նրանցից շատ աղքատների թվաքանակը, ներառյալ՝ ծայրահեղ աղքատները՝ մոտ 330 հազար, իսկ վերջիններից ծայրահեղ աղքատների թվաքանակը՝ մոտ 70 հազար մարդ: 30% աղքատների ընդհանուր թվաքանակի մեջ 8.6 տոկոսը շատ աղքատ են (առանց ծայրահեղ աղքատների), իսկ 2.3 տոկոսը՝ ծայրահեղ աղքատ, մնացած 19.1%-ը՝

¹⁴⁶ ՀՀ կառավարության 2014թ.-ի մարտի 6-ի «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 275-Ն որոշում

¹⁴⁷ ՀՀ կառավարության 2015թ.-ի հունիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 2-ի n 276-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 583-Ն որոշում

¹⁴⁸ ՀՀ կառավարության 2015թ.-ի օգոստոսի 8-ի «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 1179-Ն որոշում

ուղղակի աղքատ են¹⁴⁹: Սոցիալական նման պայմաններում սոցիալական տրանսֆերտները կարևոր գործիք են աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականության համար: Եթե դրանց (կենսաթոշակներ և դրամական սոցիալական աջակցություն) տրամադրումը դադարեցվի, իսկ աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակները զգալիորեն կաճեն¹⁵⁰ (աղքատության մակարդակը 30.0%-ից կբարձրանա 42.7%-ի, աղքատներն ավելի կաղքատանան¹⁵¹):

Ընտանեկան նպաստի ծրագրի հասցեականության մեծացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել ընտանիքների անապահովության գնահատման կարգի փոփոխություն, որը պետք է հիմնված լինի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջական հետազոտության տվյալների, նշված ոլորտում վարչարարության բարելավման և տարածքային մարմինների աշխատողների վերապատրաստման, ինչպես նաև բնակչությանն իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման վրա:

Ընտանիքի անապահովության համակարգին առնչվող չարաշահումների ռիսկը բխում է նաև այն հանգամանքից, որ տվյալ գործընթացներում մեծ է մարդկային գործոնը, ինչը հաճախ հանգեցնում է տարատեսակ չարաշահումների և կոռուպցիոն ռիսկերի:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքներում, մասնավորապես, նշվել է, որ տնայց կատարող տեսուչները հաճախ ոչ պատշաճ են կատարել տնայցը կամ առհասարակ այց չեն կատարել: Միաժամանակ, չկան վերահսկման մեխանիզմներ՝ պարզելու, թե արդյոք տեսուչը պատշաճ կերպով է արձանագրում ընտանիքի սոցիալական պայմաններն ու գույքը, թե՛ ոչ:

Անապահովության հաշվարկման համակարգում հաճախ մեծ ուշադրություն է դարձվում նաև անձի կենսաթոշակի չափին կամ անապահովության ցածր միավորի պատճառ է հանդիսանում շատ փոքր ունեցվածքի առկայությունը՝ հին մեքենա, մեկ կով և այլն, սակայն համակարգն անհրաժեշտ չափով ճկուն չէ յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները հաշվի առնելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված մեկ այլ դիմումով քաղաքացին հայտնել էր, որ վերջինիս ընտանիքի անապահովության միավորը 2015թ.-ին կազմել է 29.86, որը ցածր է ՀՀ կառավարության 15.01.2015թ.-ի թիվ 19-Ն որոշմամբ սահմանված սոցիալական նպաստի համար ընտանիքի անապահովության սահմանային միավորից, այնինչ դիմումատուն առաջին խմբի կույր հաշմանդամ է, գտնվում է սոցիալապես անապահով վիճակում: Իսկ նրա բնակարանում համատեղ հաշվառված երկու դուստրերից մեկը բնակվում է ՌԴ-ում, իսկ մյուսն՝ անկողնային հիվանդ է և անաշխատունակ:

¹⁴⁹ http://armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf

¹⁵⁰ http://armstat.am/file/article/7.poverty_2015a_4.pdf

¹⁵¹ Տես՝ նույն տեղում

Ինչ վերաբերում է նպաստների չափին, ապա պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության միջոցներն անբավարար են՝ երաշխավորելու համար համապատասխան կենսամակարդակ, այդ թվում՝ թոշակատուների և գործազուրկների համար, ինչի մասին դեռևս 2014թ.-ի նշել է ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն¹⁵²:

Պետք է նշել, որ Համաշխարհային բանկը դեռևս 2013 թվականին, վերլուծելով Վրաստանի ընտանիքի անապահովության գնահատման համակարգը¹⁵³, որն իր տրամաբանական կառուցվածքով նման է Հայաստանի համակարգին, վերհանել էր որոշ խնդիրներ, որոնք հավասարապես վերաբերելի են նաև Հայաստանի համակարգին և կարող են հիմք հանդիսանալ Համակարգում համապատասխան փոփոխությունների իրականացման համար¹⁵⁴:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել ընտանիքի անապահովության համակարգի հասցեականության և արդյունավետության, տեսուչների նկատմամբ վերահսկողության բարձրացման ուղղությամբ՝ վեր հանելով և կանխելով հնարավոր չարաշահումները:

2. 2015թ.-ի ընթացքում ևս չեն իրականացվել անհրաժեշտ և բավարար ծրագրեր՝ ուղղված երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի ապահովմանը:

2015թ.-ին Նախարարության կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի լիարժեք իրացման համար: Նախարարության ձեռնարկած միջոցառումները, որոնք ուղղված են եղել մանկատների բեռնաթափմանը, նշված հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելմանը, հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուն, խնամակալության, որդեգրման հանձնելուն, խնամատար ընտանիքներ ստեղծելուն և որդեգրումը խթանելուն, անբավարար են եղել խնդրի լուծմանը հասնելու համար:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայով դրան մասնակից պետությունները ճանաչում են, որ երեխան իր անհատականության լիակատար և

¹⁵²Նույնիսկ «Խոցելիության գործակիցների» համակարգի (the system of “vulnerability ratios”) առկայությամբ, սոցիալական աջակցությունը բավարար չի եղել՝ հոգալու աղքատության մեջ ապրող ընտանիքների կարիքները, իսկ նպաստների չափը նույնպես անբավարար է: <http://bit.ly/1wWxfrM>

¹⁵³ http://www.iza.org/conference_files/worldb2014/santos_i6427.pdf

¹⁵⁴ Այսպես, փորձագետների պնդմամբ՝ գործնականում տվյալ Համակարգով գրեթե անհնար է լինում հաշվի առնել ընտանիքի ունեցած զբանցված եկամուտները, որոնք Հայաստանի նման ստվերային տնտեսության մեծ հատված ունեցող պետություններում կարող են զգալի գումար կազմել: Ավելին, ընտանիքի անապահովության գնահատումը հիմնվում է նաև ընտանիքի գույքի գնահատման վրա, որը հաշվի չի առնում, թե երբ և ինչպես է ձեռք բերվել տվյալ գույքը: Արդյունքում, նախկինում սոցիալապես ապահովված և վերջին շրջանում աղքատացած ընտանիքներն իրենց գույքի առկայության պատճառով չեն կարողանում օգտվել սոցիալական նպաստներից:

http://www.iza.org/conference_files/worldb2014/santos_i6427.pdf

բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ընթրնման մթնոլորտում: Երեխային ընտանեկան խնամքից հեռացումը, պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց և իրականացվի, այն դեպքերում, երբ դա հնարավոր է, լինի ժամանակավոր և հնարավորինս կարճ տևողությամբ: Բացի այդ, ընտանեկան խնամքից հեռացնելու որոշումները պետք է պարբերաբար վերանայվեն, և այն դեպքերում, երբ ընտանեկան խնամքից հեռացման իրական պատճառները լուծվել կամ վերացվել են, երեխայի վերադարձը ծնողական խնամքի, պետք է իրականացվի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը¹⁵⁵:

Նախարարության տվյալներով՝ 2015թ.-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ Նախարարության ենթակայության տակ գործող երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվում է 660 երեխա, այդ թվում՝ համակարգի երեք մասնագիտացված մանկատներում խնամվող 450, իսկ ընդհանուր տիպի մանկատներում՝ մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն ունեցող շուրջ 50 երեխա:

Նախարարության կենտրոնացված հաշվառման տվյալներով՝ 2015թ.-ի ընթացքում որդեգրվել է 88 երեխա, այդ թվում 36 երեխա ՀՀ քաղաքացիների, իսկ 52 երեխա՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից: ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված 4 երեխա ունեցել են առողջության հետ կապված տարբեր խնդիրներ: Ընդ որում, օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրված երեխաներից 44-ը ունեցել է առողջության հետ կապված տարբեր խնդիրներ:

Թեև ընդհանուր տիպի մանկատներում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական պայմաններով պայմանավորված, ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում: Նշվածը վկայում է, որ պետության կողմից 2015թ.-ի ընթացքում չեն իրականացվել անհրաժեշտ համալիր միջոցառումներ¹⁵⁶ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման, ինչպես նաև նման երեխաների խնամքը ընտանեկան կամ ընտանեկանին մոտ միջավայրում կազմակերպելու ուղղությամբ: Իսկ հաշմանդամություն ունեցող երեխայի որդեգրումը պրակտիկայում դառնում է դժվարին գործընթաց՝ առկա անհարկի քաշքշուկների և խոչընդոտների, ինչպես նաև հաշմանդամության վերաբերյալ մարդկանց կարծրատիպերի և թյուր պատկերացումների հետևանքով:

¹⁵⁵ Երեխաների այլընտրանքային խնամքի ուղեցույց, 64/142 բանաձև, ընդունված ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից (A/RES/64/142*), կետ 14

¹⁵⁶ ՀՀ կառավարության 2012թ.-ի դեկտեմբերի 27-ի թիվ 1694-Ն որոշմամբ հաստատված Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016թ.-ների ռազմավարության շրջանակներում նախատեսվում է «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրող մասնագետների, ինչպես նաև որդեգրող, որդեգրել ցանկացող ընտանիքների (անձանց) և խնամատար ընտանիքների անդամների (ծնողների ու երեխաների), խնամակալության և հոգաբարձության մարմինների, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների մասնագետների վերապատրաստում»:

Այսօր ՀՀ-ում բացակայում են նաև խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացմանը նպաստող գործոնները: Նախարարության տվյալներով 2012, 2013, 2014 և 2015թթ.-ին բյուջետային հատկացումներ են կատարվել 23 ընտանիքների համար, սակայն փաստացի ֆինանսավորվել են 2012թ.-ին` 21, 2013թ.-ին` 18 և 2014թ.-ին` 16 ընտանիքներ: 2015թ.-ի ընթացքում խնամատարության է հանձնվել 4 երեխա: 18 տարեկանը լրանալու կապակցությամբ «Խնամատար ընտանիքի ծառայություններ» ծրագրից դուրս է գրվել 4 երեխա: Ներկայում, խնամատար ընտանիքներում խնամվում է 20 երեխա:

Հաշվի առնելով այս ոլորտում միջազգային լավագույն փորձը` պետական բյուջեում վերաբաշխումներ կատարելու և խնամատար ընտանիքների թիվն ավելացնելու հարցը բարձրացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրով¹⁵⁷, սակայն նշվածը համապարփակ լուծում չի ստացել մինչ օրս¹⁵⁸: Դեռևս չեն մշակվել հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրումը խթանող մեխանիզմներ և/կամ արտոնություններ:

Չնայած Նախարարության կողմից տարվա ընթացքում խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր¹⁵⁹, բայցնայնպես 2015թ.-ի ընթացքում նշված խնդիրը համապարփակ լուծում չի ստացել և ոլորտում շոշափելի առաջընթաց չի արձանագրվել:

Արդյունքում, սահմանափակվել է հաստատություններում բնակվող և ընտանիք վերադառնալու հնարավորություն չունեցող երեխաների` ընտանեկան

¹⁵⁷ ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 303-Ն որոշում

¹⁵⁸ Նախարարությունից հայտնել են, որ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1694-Ն որոշման նախատեսվում է խնամատար ինստիտուտի կայացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես նախատեսվում է զարգացնել հանրապետությունում խնամատար ընտանիքների ընտրության գործընթացը, որին ներգրավված են նաև միջազգային (Մեյվ դը Չիլդրեն, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ) և հասարակական կազմակերպություններ: Ոլորտի բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է նաև խնամատար ինստիտուտի կայացման ուղղությամբ իրականացնել իրազեկման աշխատանքներ, լրամշակել խնամատար ընտանիքների ընտրության չափորոշիչներ: «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ ընտանեկան օրենսգրքի փոփոխությունների և լրացումների միջոցով օրենսդրորեն կկարգավորվեն խնամատար ընտանիքի հետ իրավահարաբերությունների սահմանման և վերահսկման մեխանիզմները: Առաջարկվող փոփոխությունների արդյունքում ՀՀ ընտանեկան օրենսգրքում կսահմանվեն դրույթներ մինչև երեխային խնամատարության հանձնելը խնամատար ծնողի վերապատրաստման և երեխային խնամատար ընտանիք հանձնելուց հետո երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողության վերաբերյալ:

¹⁵⁹ Մշակվել են «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությանը հանձնված երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների (մանկատուն, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն) բեռնաթափման ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին», և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ.-ի մարտի 18-ի թիվ 269-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը:

միջավայրում ապրելու իրավունքը և չեն ձեռնարկվել կանխարգելիչ քայլեր սոցիալական համայնքային ծառայություններ հիմնելու և զարգացնելու ուղղությամբ, որպեսզի կանխարգելիչ երեխաների հեռացումը ընտանիքից, մուտքը հաստատություններ: Իսկ այնտեղ հայտնվելուց հետո չեն իրականացվում համարժեք և նպատակային գործողություններ երեխաներին՝ ընտանիքի խնամքին վերադարձնելու ուղղությամբ:

Առաջարկ. ձեռնարկել արդյունավետ միջոցառումներ՝ ուղղված մանկատների բեռնաթափմանը, նշված հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելման, հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու, խնամակալության հանձնելու, որդեգրման, խնամատար ընտանիքների թիվն ավելացնելու և ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրմանը խթանելու ուղղությամբ:

3. 2015 թվականի ընթացքում շարունակել է չլուծված մնալ թափառաշրջիկ և մուրացիկ երեխաներին և նրանց ընտանիքներին երկարաժամկետ սոցիալական աջակցության և ծառայությունների տրամադրման, ապօրինի/հարկադիր աշխատող երեխաների հայտնաբերման և աջակցության հարցը:

Զրկված լինելով պատշաճ սոցիալական ապահովությունից և կյանքի դժվարին պայմաններից դրդված բազմաթիվ դեպքերում երեխաները զբաղվել են մուրացկանությամբ, ինչպես նաև ներգրավվել տարբեր տեսակի կյանքի և առողջության համար վտանգավոր, անօրինական աշխատանքներում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել է բազմաթիվ ահազանգեր՝ առավելապես երեկոյան ժամերին մարդաշատ վայրերում ծնողի ուղեկցությամբ կամ միայնակ մուրացկանությամբ զբաղվող երեխաների վերաբերյալ: Մի շարք դեպքերում երեխաները մուրացկանության են դրդվել ծնողների, ընտանիքի այլ անդամների կողմից: Վերջիններս ոստիկանության աշխատակիցներին երեխայի նկատմամբ նման վերաբերմունքը հաճախ պատճառաբանում են սոցիալական վատ պայմաններով:

Ավելին, քաղաքացիներն ահազանգել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և հայտնել, որ ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքի եկեղեցիների դիմաց, հատկապես տարբեր տոնակատարությունների և միջոցառումների ժամանակ (օրինակ՝ մկրտության արարողություն, պսակադրություն) մեծ թվով երեխաներ (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող) զբաղվում են մուրացկանությամբ: Ընդ որում՝ մեծահասակները, մասնավորապես, սոցիալապես անապահով ընտանիքների անդամները երեխաներին օգտագործում են որպես միջոց՝ անձանց մոտ խղճահարություն առաջացնելու և գումար ստանալու նպատակով: Խնդրի վերաբերյալ ՀՀ ԿԱ ոստիկանությունից հայտնել են, որ 2015 թվականի ընթացքում ոստիկանության Վանաձոր քաղաքի Բագումի բաժնի ԱԳ բաժանմունքում արձանագրվել է անչափահասների կողմից մուրացկանությամբ զբաղվելու երկու

դեպք: Հայտնաբերված մուրացկանությամբ զբաղվող անչափահասները ոստիկանության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնի կողմից ուղղորդվել են Վանաձորի խնամքի կենտրոն:

Ավելին, ՀՀ ԿԱ ոստիկանության հայտնած տվյալների համաձայն՝ 2015թ.-ի ընթացքում «Մուրացիկ-թափառաշրջիկ» միջոցառումների ընթացքում, ընդհանուր առմամբ, հայտնաբերվել են 33 թափառաշրջիկ և մուրացիկ անչափահասներ, որոնցից՝ 27-ը հայտնաբերվել են Երևան քաղաքում, իսկ 6-ը՝ ՀՀ մարզերում՝ մասնավորապես Շիրակի և Լոռու:

Դեռևս 2013թ.-ին Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր դիտողություններում ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն մտահոգություն էր հայտնել՝ նշելով, որ զգալի թվով երեխաներ, այդ թվում մինչև 14 տարեկան, լքում են դպրոցները՝ աշխատելու համար ոչ ֆորմալ ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը ավտոսպասարկումը, շինարարությունը, մետաղների թափոնների հավաքումը և ընտանեկան բիզնեսները¹⁶⁰:

Ինչպես նաև Կոմիտեն մտահոգություն է հայտնել, մուրացիկության մեջ ներգրավված երեխաների աճող թվի վերաբերյալ¹⁶¹: Նշվածը, մասնավորապես, պայմանավորված է նաև նրանով, որ մինչ օրս չեն մշակվել ապօրինի աշխատող երեխաների հայտնաբերման մեխանիզմներ, չեն հավաքվել հստակ վիճակագրական տվյալներ, և չի կատարվել իրավիճակի համալիր վերլուծություն¹⁶²:

Բացի այդ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված նման երեխաների հետ չի իրականացվում ամենօրյա մասնագիտական աշխատանք, ինչպես նաև հսկողություն նրանց կյանքի, կենցաղային պայմանների նկատմամբ: Չկան նաև կանխարգելիչ ծառայություններ՝ ժամանակին հայտնաբերելու այն ընտանիքները, որոնք խոցելի են երեխաների մուրացիկությամբ զբաղվելու նկատմամբ:

Այս հարցում անհրաժեշտ է Խնամակալության և հոգաբարձության մարմինների, դեպք վարողների և սոցիալական աշխատողների համագործակցությունը՝ ուղղակիորեն համայնքներում: Ինչպես նաև համագործակցությունը դպրոցների հետ, քանի որ մուրացիկ երեխաները դուրս են մնում կրթությունից, և դպրոցի բացակայությունների վերաբերյալ տվյալների հիման վրա արդեն իսկ հնարավոր է ուսումնասիրել դրանց պատճառները և կանխել երեխայի ներգրավումը մուրացկանության մեջ:

ՀՀ կառավարության կողմից 2015թ.-ի սեպտեմբերի 10-ին հաստատվել է «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» թիվ 1044-Ն որոշումը, որի նպատակն է սոցիալական

¹⁶⁰ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

¹⁶¹ Տես՝ նույն տեղում

¹⁶² 2013թ.-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Երեխայի աշխատանքի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու նպատակով, դոնոր կազմակերպություններին ներկայացրել է ծրագրային առաջարկ, համաձայն որի՝ համապատասխան հայտ է ներկայացրել Աշխատանքի միջազգային կազմակերպությանը: Հայտը բավարարվել է, և 2014թ.-ին ԱՄԿ կողմից իրենց իսկ մեթոդաբանությամբ սկսվել է հետազոտություն իրականացնելու նախնական փուլը:

աջակցության կարիք ունեցող, այդ թվում մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների հայտնաբերումը, անհատական սոցիալական ծրագրերի կազմումը, դրա իրականացումը և շարունակական հսկողության ապահովումը: Կանոնակարգով կարգավորվում են սոցիալական աջակցության տրամադրման գործընթացում համագործակցության կողմերի, վերջիններիս իրավունքների ու պարտականությունների, միջգերատեսչական համագործակցության ձևերի ու կարգի, համագործակցող կողմերի միջև փոխանակվող տեղեկությունների ծավալի, ժամկետի և ձևի մասին պահանջների, խնդրահարույց այն դեպքերի, որոնք կարող են նախանշել անձի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված լինելը կամ հայտնվելու հնարավորությունը, մշտադիտարկման և գնահատման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

Չնայած թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հայտնաբերմանն ուղղված միջոցառումների ձեռնարկմանը՝ այդ երեխաները հաճախ նորից վերադառնում են փողոց, քանի որ պետության կողմից չեն ապահովվում նրանց հիմնահարցերի երկարաժամկետ լուծումներ, այդ թվում՝ երկարաժամկետ սոցիալական աջակցության միջոցով:

Առաջարկ. մշակել արդյունավետ միջոցներ՝ մուրացիկ և ապօրինի աշխատող երեխաներին և նրանց ընտանիքներին սոցիալ-հոգեբանական երկարաժամկետ համալիր աջակցություն տրամադրելու ուղղությամբ, ինչպես նաև սահմանել մեխանիզմներ՝ երեխաների մուրացկանության և ոչ ֆորմալ/ կյանքի և առողջության համար վտանգավոր անօրինական աշխատանքներում ներգրավման դեպքերի բացահայտման և կանխարգելման համար:

4. Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2013թ.-ից ի վեր բարձրացվել է և դեռևս լուծում չի ստացել գործազրկության նպաստի վերականգնման խնդիրը, որի վերացումը հակասում է Հայաստանի միջազգային պարտավորություններին:

Դեռևս 2014թ.-ի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով վերացվել է գործազրկության նպաստի ինստիտուտը, որին փոխարինելու են եկել «ակտիվ» ծրագրերը¹⁶³: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշված խնդիրը բարձրաձայնվել էր թե՛ 2013 և թե՛ 2014 թթ.-ի Տարեկան զեկույցներում, բայց նայնպես այն շարունակում է մնալ չլուծված:

Նշենք, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական ապահովություն, սոցիալական պետություն եզրույթները ենթադրում են նաև պետության կողմից գործազրկության նպաստի տրամադրման պարտավորություն: Վերջինիս վերացումն ուղղակիորեն հակասում է սոցիալական պետության

¹⁶³ Աշխատանք փնտրողների վերապատրաստում, աշխատանք փնտրելու ծախսերի փոխհատուցում, աշխատանքային տոնավաճառներ և այլն

սկզբունքներին և չի բխում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններից:

Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք¹⁶⁴:

Ավելին, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններում նշվում է, որ սոցիալական պետությունը սոցիալական օգնություն է մատուցում գործազուրկներին, այդ թվում՝ նաև գործազրկության և այլ նպաստների սահմանման միջոցով¹⁶⁵: Ավելին, ՀՀ կողմից վավերացված Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ «բացի լիարժեք, արդյունավետ և ազատորեն ընտրված զբաղվածության խթանումից (...) աշխատանքը կորցնելու դեպքում անձին պետք է վճարվի համապատասխան գործազրկության նպաստ»¹⁶⁶:

Բացի այդ, պետության կողմից համապատասխան անձանց գործազրկության նպաստի տրամադրման պարտավորությունը ներառում է նաև ՀՀ կողմից վավերացված Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 12.1-րդ հոդվածով ամրագրված սոցիալական ապահովության իրավունքը, որն արձանագրվել է նաև Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեի՝ ՀՀ կողմից խարտիայի կիրառման վերաբերյալ 2013 թվականի եզրակացությամբ¹⁶⁷: Այսպես, Կոմիտեն, մեկնաբանելով ՀՀ համար պարտադիր իրավաբանական ուժ ունեցող Խարտիայի իրավական բովանդակությունը, գործազրկության նպաստի տրամադրումը դիտարկել է որպես Խարտիայով ՀՀ ստանձնած պարտավորություն:

Ըստ այդմ, գործազրկության նպաստի վերացումը խախտում է անձի սոցիալական ապահովության իրավունքը, չի բխում ՀՀ Սահմանադրությունից և հակասում է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին :

Առաջարկ. ՀՀ Սահմանադրությանը և ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան վերականգնել պետության կողմից գործազուրկ անձանց տրամադրվող գործազրկության նպաստի ինստիտուտը:

5. Դեռևս 2013 և 2014թթ.-ի տարեկան զեկույցներում բարձրաձայնվել էր օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով աշխատողների

¹⁶⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 83

¹⁶⁵ ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի), Եր. «Իրավունք», 2010 թվական

¹⁶⁶ Թիվ 19 Ընդհանուր մեկնաբանություն <http://bit.ly/18O5hmH>

¹⁶⁷ Տվյալ զեկույցում արձանագրվել է, որ Խարտիայի իմաստով սոցիալական ապահովության իրավունքը ենթադրում է պետության կողմից այնպիսի սոցիալական ապահովության համակարգի ներդրում, որը կպաշտպանի ավանդական ռիսկերից հետևաբար, նախատեսելով նաև անձանց գործազրկության նպաստի տրամադրումը:

http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

**գործադուլի իրավունքի սահմանափակման խնդիրը, որը, սակայն, չի լուծվել
ուն 2015թ.-ի ընթացքում:**

ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն աշխատողները կարող են իրականացնել իրենց գործադուլի իրավունքը միայն *կոլեկտիվ աշխատանքային վեճի* առկայության դեպքում¹⁶⁸, ինչը խոչընդոտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ աշխատողի գործադուլի իրավունքի իրացմանը¹⁶⁹:

Այսպես, թեև ՀՀ Սահմանադրությամբ հստակորեն սահմանվում է աշխատողների՝ իրենց *տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի* պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը, բայցևայնպես Օրենսգրքը սահմանում է¹⁷⁰, որ գործադուլը կոլեկտիվ աշխատանքային վեճի լուծման նպատակով մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի լրիվ կամ մասնակի ժամանակավոր դադարեցումն է, ուստի գործադուլի իրավունքի իրացումը կապվում է միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայության հետ:

Նման նեղ մեկնաբանությունը խնդրահարույց է թե՛ ՀՀ Սահմանադրության, և թե՛ ՀՀ միջազգային պարտավորությունների տեսանկյունից¹⁷¹:

Ի հավելումն, ՀՀ Սահմանադրական դատարանը, աշխատողների գործադուլի իրավունքը մեկնաբանելիս, նշել է, որ վերջինս առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին¹⁷²:

Նախարարությունից հայտնել են, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված՝ գործադուլի և դրա իրականացման կարգի օրենսդրական կարգավորման վերաբերյալ առաջարկությունները քննարկվել են այդ թվում՝ Հանրապետական եռակողմ հանձնաժողովում, բայցևայնպես, խնդրի ամբողջական կարգավորումն ընդգրկում է սոցիալ-տնտեսական հարաբերությունների լայն շրջանակ, ունի համապարփակ և համաձայնեցված լուծումների օբյեկտիվ անհրաժեշտություն, ինչը դեռևս չի գտնվել և նշված հարցերի կարգավորումներին անդրադառնալը դեռ նպատակահարմար չէ:

Արդյունքում, օրենսդրական բացի հետևանքով աշխատողները կարող են իրականացնել իրենց գործադուլի իրավունքը միայն *կոլեկտիվ աշխատանքային վեճի* առկայության դեպքում, ինչը կարող է գործադուլի միջոցով՝ սոցիալական և տնտեսական աշխատանքային շահերի պաշտպանության երաշխիքի սահմանափակման պատճառ դառնալ:

¹⁶⁸ Այսուհետ՝ Օրենսգրքը, հոդված 73, մաս 1

¹⁶⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 58

¹⁷⁰ ՀՀ աշխատանքային օրենսգրքը, հոդված 73, մասեր 1 և 2

¹⁷¹ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 8, Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, մաս 2, հոդված 6

¹⁷² ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ.-ի փետրվարի 7-ի թիվ ՍԴՈ-677

Առաջարկ. մշակել օրենսդրական փոփոխություններ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 73-րդ հոդվածում, ինչպես նաև համակարգային առումով փոխկապակցված այլ հոդվածներում և իրավական ակտերում՝ վերացնելու աշխատողների գործադուլի անցկացումը միայն կոլեկտիվ աշխատանքային վեճով պայմանավորող սահմանափակումը:

6. Նվազագույն աշխատավարձով աշխատողները չեն կարողանում հոգալ իրենց առաջնահերթ կարիքները, քանի որ նվազագույն սպառողական զամբյուղը հաշվի չի առնվում նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկի հիմքում:

«Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում 2014թ.-ի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխության արդյունքում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 55. 000 դրամ: Նշված փոփոխությունն ուժի մեջ էր մտել 2015թ.-ի հուլիսի 1-ին, իսկ մինչ այդ՝ 2015թ.-ի սկզբին, նվազագույն աշխատավարձը սահմանված էր 50. 000 դրամ:

Մինչդեռ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների՝ 2015թ.-ի չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով նվազագույն սպառողական զամբյուղի չափը ամսական կտրվածքով կազմել է մոտ 54,4 հազար դրամ, իսկ պարենային զամբյուղի չափը ամսական կտրվածքով՝ 30.7 հազար դրամ¹⁷³: Նվազագույն աշխատավարձի բարձրացումը բխում է ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից¹⁷⁴:

Ըստ Ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝

2015թ.				
	Առաջին եռամսյակ ¹⁷⁵ /հազար/	Երկրորդ եռամսյակ ¹⁷⁶ /հազար/	Երրորդ եռամսյակ ¹⁷⁷ /հազար/	Չորրորդ եռամսյակ ¹⁷⁸ /հազար/
նվազագույն սպառողական զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	60 397	59 588	55 394	54.413

¹⁷³ http://armstat.am/file/article/sv_12_15a_6200.pdf

¹⁷⁴ Եվրոպական վերանայված սոցիալական խարտիա, ԱՄԿ 131 կոնվենցիա

¹⁷⁵ http://www.armstat.am/file/article/sv_03_15a_6200.pdf

¹⁷⁶ http://www.armstat.am/file/article/sv_06_15a_6200.pdf

¹⁷⁷ http://www.armstat.am/file/article/sv_09_15a_6200.pdf

¹⁷⁸ http://armstat.am/file/article/sv_12_15a_6200.pdf

պարենային զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	34 122	33 665	31 296	30.742
---	--------	--------	--------	--------

Թեև նվազագույն աշխատավարձի չափը 2015թ.-ի 4-րդ եռամսյակում համապատասխանել է ամսական կտրվածքով սպառողական զամբյուղի արժեքին, բայցևայնպես, 2015թ.-ի առաջին երեք եռամսյակների ընթացքում ամսական կտրվածքով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը գերազանցել է նվազագույն աշխատավարձի չափը: Ըստ այդմ, նվազագույն ամսական աշխատավարձը բավարար չի եղել աշխատողների նվազագույն կարիքները հոգալու համար:

Առաջարկ. յուրաքանչյուր դեպքում նվազագույն ամսական աշխատավարձի հաշվարկման ընթացքում հիմք ընդունել նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը:

7. Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2004-2009թթ.-ի ընթացքում լուծարված կազմակերպություններում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած անձինք հնարավորություն չունեն ստանալու վնասի փոխհատուցում:

Մի խումբ հաշմանդամություն ունեցող օդաչուներ¹⁷⁹, ինչպես նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան դեռևս 2013թ.-ին դիմել են Մարդու իրավունքների պաշտպանին՝ հայտնելով, որ 2004թ.-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ լուծարված կազմակերպություններում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած անձինք չեն կարող ստանալ պատճառված վնասի փոխհատուցում:

Օրենսդրական խնդիրը ծագում է նրանից, որ ՀՀ կառավարության 22.06.2004 թվականի թիվ 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 15.11.1992 թվականի թիվ 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը, ըստ որի. «կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, *իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական*

¹⁷⁹Դիմումատուների նախկին գործատուի՝ «Հայկական ավիաուղիներ» ՓԲԸ-ի սնանկության գործընթացում առաջացել է սնանկ ճանաչված ընկերության ակտիվների օտարման խնդիր, որն, ըստ էության, հանգեցրել է ընկերության կողմից պարտատերերի հանդեպ ունեցած պարտականությունները չբավարարելուն:

բյուջեի հաշվին»:

Միաժամանակ, ՀՀ կառավարության 2009 թվականի թիվ 914-Ն որոշման ընդունումից հետո սահմանվեց պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը, որով սակայն լուծում չի տրվել մինչ այդ իրավաբանական անձանց գործունեության դադարեցման դեպքում պարտավորությունների մարման հարցին:

ՀՀ կողմից վավերացված «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925 թվականի ԱՄԿ կոնվենցիայի 11-րդ հոդվածի համաձայն՝ ներպետական օրենսդրությունը, հաշվի առնելով ազգային առանձնահատկությունները, նախատեսում է այնպիսի դրույթներ, որոնք գործատուի կամ ապահովագրողի անվճարունակության դեպքում բոլոր հանգամանքներում առավել համարժեք կերպով կապահովեն փոխհատուցման վճարումը պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց:

Միաժամանակ, «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992 թվականի ԱՄԿ կոնվենցիայի¹⁸⁰՝ Բաժին III-ի (Աշխատողների շահերի պաշտպանությունը երաշխիքային հաստատությունների օգնությամբ ընդհանուր սկզբունքներ¹⁸¹) 9-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերություններից բխող՝ գործատուին ներկայացվող՝ աշխատողների պահանջների բավարարումն ապահովվում է *երաշխիքային հաստատությունների* միջոցով, եթե վճարումը չի կարող իրականացվել գործատուի կողմից՝ վերջինիս անվճարունակության պատճառով:

Նշված խնդրի կապակցությամբ գրություններ են ուղարկվել Նախարարություն և ՀՀ վարչապետին, որին ի պատասխան Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ կառավարությունը ձեռնպահ է մնում երաշխիքային հաստատությունների միջոցով աշխատողների պահանջների բավարարման մեխանիզմների ներդրումից՝ պատճառաբանելով, որ երաշխիքային հաստատությունների ստեղծումը գործատուների ֆինանսական բեռի ավելացման պատճառ կդառնա (գործատուները պետք է որոշակի մասհանումներ կատարեն երաշխիքային հաստատություններին):

Հայտնել են նաև, որ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված են և գործնականում կիրառվում են «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» կոնվենցիայի Բաժին II-ի դրույթները (Աշխատողների պահանջների պաշտպանությունն արտոնությունների միջոցով¹⁸²),

¹⁸⁰ Հայաստանի համար ուժի մեջ է մտել 18.05.2006 թ.-ին

¹⁸¹ Աշխատանքային հարաբերություններից բխող՝ գործատուին ներկայացվող՝ աշխատողների պահանջների բավարարումն ապահովվում է երաշխիքային հաստատությունների միջոցով, եթե վճարումը չի կարող իրականացվել գործատուի կողմից՝ վերջինիս անվճարունակության պատճառով:

¹⁸² Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջները պաշտպանվում են արտոնությունների հիման վրա, այսինքն՝ այն ձևով, որ անվճարունակ գործատուի ակտիվներից դրանք բավարարվեն մինչև ոչ արտոնյալ պարտատերերի պահանջների բավարարումը:

իսկ հետագայում կոդիտարկվեն նաև նշված կոնվենցիայի Բաժին III-ի աստիճանական ներդրման հնարավորությունները:

Նախարարությունից տեղեկացրել են նաև, որ առկա է հակասություն ՀՀ կառավարության 15.11.1992 թվականի թիվ 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի պահանջների միջև, որով և հիմնավորվում է թիվ 579 որոշման 16-րդ կետի ուժը կորցրած ճանաչելը: Հատկանշական է, որ 2011 թվականի ընթացքում փորձ է կատարվել կարգավորել խնդիրը «ՀՀ-ում արտադրական դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից ապահովագրության ներդրման» հայեցակարգի մշակմամբ, որը, համաձայն Նախարարության, գտնվում է ՀՀ կառավարության աշխատակազմում:

Արդյունքում, դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը հատուցելու կարգի բացակայության պատճառով այն քաղաքացիները, որոնց գործատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո, զրկվում են իրենց հասանելիք փոխհատուցումը ստանալու իրավունքից այն դեպքում, երբ պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունները լուծարվել են 2004 թվականի օգոստոսի 1-ից հետո:

Առաջարկ. սահմանել 2004թ.-ի օգոստոսի 1-ից մինչև 2009թ.-ի հունիսի 23-ն ընկած ժամանակահատվածում գործատուի կազմակերպության լուծարված լինելու դեպքում աշխատանքի վայրում աշխատողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասը (դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների դեպքում) հատուցելու կարգ:

8. 2014թ.-ի Տարեկան զեկույցում բարձրացված բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում հաշմանդամության որոշման հստակ չափորոշիչների բացակայության և անարդյունավետ վերափորձաքննությունների խնդիրը համապարփակ լուծում չի ստացել նաև 2015թ.-ի ընթացքում:

2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքները վկայում են, որ Նախարարության Բժշկասոցիալական փորձաքննության¹⁸³ (ԲՄՓ) գործակալության¹⁸⁴ գործունեության ոլորտում առկա են

¹⁸³ Համաձայն Կառավարության 2006թ. թիվ 267-ն որոշման՝ Բժշկասոցիալական փորձաքննությունն իրականացվում է անձի կենսագործունեության սահմանափակման աստիճանը որոշելու, անձին հաշմանդամ ճանաչելու՝ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ և հաշմանդամության խումբ սահմանելու, հաշմանդամ չճանաչելու, հաշմանդամության ժամկետ, պատճառական կապ, մահվան պատճառական կապ, մասնագիտական աշխատունակության կորստի աստիճան որոշելու, հաշմանդամի անհատական վերականգնողական ծրագիր մշակելու և հաստատելու, ժամանակավոր անաշխատունակության ժամկետը երկարաձգելու մասին որոշում ընդունելու նպատակով:

¹⁸⁴ ՀՀ կառավարության 2002թ. նոյեմբերի 14-ի թիվ 1822 որոշմամբ՝ ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում կազմավորվել է բժշկասոցիալական փորձաքննության

մի շարք խնդիրներ: Պաշտպանի աշխատակազմը դեռևս 2014թ.-ին նախաձեռնել էր ԲՄՓ մի շարք հանձնաժողովների գործունեության մշտադիտարկումներ՝ փորձաքննություն անցած անձանց հետ խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ) առանձնագրույցների իրականացման միջոցով¹⁸⁵, որոնցով մի շարք դեպքերում հաստատվել էր ոլորտում կոռուպցիայի առկայությունը¹⁸⁶:

Պաշտպանը բազմիցս անդրադարձել է նաև ԲՄՓ հանձնաժողովների կողմից հաշմանդամության խմբի սահմանման համար գործածվող, ՀՀ կառավարության որոշմամբ¹⁸⁷ հաստատված չափորոշիչների բավականին լայն ձևակերպված լինելու խնդրին, որոնք լայն հայեցողություն են ընձեռում հանձնաժողովի անդամներին որոշում կայացնելիս և բազմաթիվ դեպքերում հանգեցնում են երկակի ստանդարտների կիրառման:

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքներում ևս բարձրացվել է համանման հանգամանքների դեպքում հաշմանդամության տարբեր խմբեր սահմանվելու խնդիրը, ինչն ավելի է բարձրացնում ոլորտում կոռուպցիայի մակարդակը:

ՀՀ կառավարության 2014թ. հունվարի 9-ի նիստի թիվ 1 արձանագրային որոշման՝ «Անձի բազմակողմանի գնահատման՝ առողջապահության համաշխարհային կազմակերպության սահմանման մոդելի ներդրման» համաձայն՝ հաշմանդամության սահմանման սոցիալական մոդելի ներդրման շրջանակներում իրականացվել է Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման չափորոշիչների փորձնական կիրառում և լրամշակում, նախատեսված վերապատրաստումների նախապատրաստում, կազմակերպում և իրականացում:

Նախարարության հայտնած տվյալների համաձայն՝ փորձարկումները կատարվել են երկու հիմնական փուլերով. ռետրոսպեկտիվ և պրոսպեկտիվ և վերջիններիս արդյունքների վերլուծությունը հիմք է հանդիսանում ՀՀ կառավարության ընդունած հայեցակարգի համաձայն մշակելու ըստ ՖՄԴ-ի հաշմանդամության սահմանման փորձնական չափորոշիչներ, որոնք հետագայում հենք կստեղծեն հաշմանդամության շեմերը մշակելու և հաշմանդամության սահմանման սոցիալական մոդելի ներդրման համար ՀՀ-ում՝ ոլորտը կանոնակարգող ազգային օրենսդրության ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց

գործակալությունը, որը նախարարության կազմում գործող ՀՀ գործադիր իշխանության հանրապետական մարմին է: http://hhbsp.am/HistoricalReview_1.php

¹⁸⁵ Մշտադիտարկում է իրակացվել Երևանի թիվ 3, 4, 5, 7, Գեղարքունիքի մարզի թիվ 1 և 2, Շիրակի մարզի թիվ 2 և Սյունիքի մարզի թիվ 1 ԲՄՓ հանձնաժողովների գործունեության նկատմամբ: Հարցումները կատարվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակների (Գյումրի, Գավառ, Կապան) ներգրավմամբ:

¹⁸⁶ «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույց, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բաժին

¹⁸⁷ ՀՀ կառավարության 2003թ.-ի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 780-Ն որոշում

իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

Բայցնայնպես, հաշվի առնելով տվյալ ոլորտում կիրառված բժշկասոցիալական փորձաքննության ոչ հստակ չափորոշիչները՝ բժիշկները հաշմանդամության խմբերը սահմանելիս ունեցել են լայն հայեցողական լիազորություններ, ինչն էլ իր հերթին հանգեցրել է մի շարք կոռուպցիոն դրսևորումների:

Նախարարության տվյալներով 2015թ.-ի ընթացքում բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ ստացվել է 367 բողոք, որոնցից 8 դիմում-բողոքներում առկա էին կոռուպցիայի կասկածի վերաբերյալ նշումներ: ԲՄՓ գործակալության աշխատակիցներն առանձնազրույց և որոշ դեպքերում հեռախոսազրույց են ունեցել 7 քաղաքացիների հետ, նրանք հիշատակել են, որ այդ մասին իրենց ուրիշներն են ասել կամ պատասխանել են, որ իրենց հարցը չլուծելու պատճառը հանձնաժողովին դրամ չտալն է: Նշված անձանց պարզաբանվել է վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու իրենց իրավունքը, խորհուրդ է տրվել դիմել օրինապահ մարմիններին:

Մեկ քաղաքացի, ով հոգեբուժական մասնագիտացված ԲՄՓ-ի նախագահին կաշառակերության մեջ էր մեղադրում, իր որդուն հաշմանդամություն չսահմանելու պատճառով ՀՀ Ազգային Ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հարցերի հանձնաժողով դիմելուց բացի, այդ հարցով դիմել է նաև ՀՀ ոստիկանություն, սակայն քննություն իրականացնելուց հետո ոստիկանությունում գործը կարճվել է: Կոտայքի մարզի ԲՄՓ-ի նախագահի հետ ՀՀ ոստիկանության կողմից արձանագրված փաստը դեռևս նախաքննության փուլում է: ԲՄՓ-ի նախագահը աշխատանքի չի ներկայանում՝ գտնվում է հարկադիր պարապուրդում մինչև իրավապահ մարմինների կողմից համապատասխան որոշում կայացնելը:

Թերություններ են առկա նաև վերափորձաքննության անկողմնակալության և օբյեկտիվ քննության ապահովման հարցում:

Չնայած Նախարարության կողմից նշված ոլորտում իրականացրած որոշակի քայլերին, այդ թվում՝ ուղղված բժշկական կազմակերպությունների աշխատակիցների որպես «միջնորդի» դերը բացառելուն, բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների թափանցիկության երաշխավորմանը և այլն¹⁸⁸, Մարդու իրավունքների պաշտպանին

¹⁸⁸Կատարվել է բժիշկ-փորձագետների և նախագահների տեղափոխություն՝ փոփոխելով ինչպես հանձնաժողովի կազմը, այնպես էլ սպասարկման տարածքները: ՀՀ կառավարության 2015թ.-ի նոյեմբերի 12-ի թիվ 1318-Ն որոշմամբ հաստատվել է «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը», որի նպատակն է փորձաքննվող անձի համաձայնության կամ ցանկության դեպքում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությունը բժշկասոցիալական փորձաքննության գործընթացին որպես դիտորդ: ՀՀ կառավարություն է ներկայացվել

ուղղված դիմումներից պարզ է դառնում, որ ոլորտում դեռևս առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են համապարփակ լուծումներ:

Պաշտպանին ուղղված մի շարք դիմումներում նշվել է, որ վերափորձաքննության արդյունքում անփոփոխ է թողնվում նախկինում ԲՄՓ հանձնաժողովի կայացրած որոշումը: Մասնավորապես, խնդրահարույց է այն հանգամանքը, որ թե՛ առաջին բժշկասոցիալական փորձաքննությունը, թե՛ վերափորձաքննությունն իրականացվում են նույն կարգով՝ փորձաքննվողի հաշվառման կամ փաստացի բնակության վայրը սպասարկող հանձնաժողովի կողմից¹⁸⁹: Հետևաբար, վերափորձաքննության ժամանակ կարող են ներգրավված լինել կամ նախնական որոշումը կայացնող նույն բժիշկները, կամ իրենց գործընկեր բժիշկները, ինչը հանգեցնում է նրան, որ գրեթե անհնար է լինում բացառել գործընկեր բժիշկների կողմից քննվող գործերի անաչառությունն ու անկողմնակալ որոշում կայացնելը:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ ուղղված ԲՄՓ ոլորտում կոռուպցիայի դեպքերի բացահայտմանը, հաշմանդամության սահմանման հստակ չափորոշիչների կիրառման ապահովմանը, ինչպես նաև ստեղծել վերափորձաքննության իրականացման արդյունավետ մեխանիզմ՝ ապահովելու որոշումների բողոքարկման օբյեկտիվությունն ու անաչառությունը:

9. 2015թ.-ին շարունակել է խնդրահարույց մնալ խնամակալության և հոգաբարձության մարմինների գործունեության անարդյունավետությունը, դրա թերի օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև վերահսկողության մեխանիզմների բացակայությունը:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված մի շարք դիմումներում բարձրաձայնվել են խնամակալության և հոգաբարձության մարմինների (ՀԽՄ) և նրանց առընթեր գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների (ԽՀՀ) կողմից իրենց գործառույթների¹⁹⁰, մասնավորապես՝ տնայցերի, երեխաների կյանքի հետազոտությունների ոչ պատշաճ իրականացման, վերջիններիս գործունեության կարգի թերի օրենսդրական կարգավորման և մասնագիտական պատրաստվածության բացակայության խնդիրները:

«Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին առողջապահական կազմակերպությունների բժիշկների մասնակցության կարգը», որով կարգավորվելու է բժշկասոցիալական փորձաքննության աշխատանքներին փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ընտրված բուժող բժիշկներին կամ այլ բժիշկ մասնագետներին ներգրավելու հետևապահարգը:

189 ՀՀ կառավարության 2006թ.-ի փետրվարի 3-ի «Բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 276-Ն որոշում

¹⁹⁰ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.09.2011թ.-ի թիվ 69-Ս/1 հրամանի Հավելվածի կետ 30

ՀԽՄ կից գործող ԽՀՀ գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցի¹⁹¹ համաձայն՝ ԽՀՀ-ն պարտավոր է անցկացնել երեխայի, ինչպես նաև երեխայի դաստիարակությանը հավակնող անձի կյանքի հետազոտություն՝ պարբերաբար կազմակերպելով և կատարելով տնայցեր երեխաների բնակության վայր, հետազոտելով երեխաների կյանքի պայմանները:

Մասնավորապես, այդ այցերի միջոցով ուսումնասիրվում են երեխաների հոգեբանական վիճակը, ծնողների վերաբերմունքը իր հետ բնակվող երեխաների նկատմամբ, նրանց ծնողավարման հմտությունները, երեխաների առաջադիմությունը և այլն¹⁹²: Բայցևայնպես, բազմաթիվ են դեպքերը, երբ մեկ տնային այցից հետո ԽՀՄ-ների կողմից տրամադրվում է եզրակացություն՝ առանց երեխայի կյանքի հանգամանքները համակողմանի և պատշաճ կերպով հետազոտելու:

Քննարկվող դեպքերում գործնականում հաշվի են առնվում միայն գույքային պայմանները՝ առանց երեխայի հոգեկան վիճակին, նրանց նկատմամբ ծնողի վերաբերմունքին, ծնողավարման հմտությունների առկայությանը պատշաճ ուշադրություն դարձնելու: Նշված խնդիրները հանգեցնում են ԽՀՄ-ների կողմից իրենց գործառույթների ոչ պատշաճ կատարմանը և իրենց համայնքում բնակվող ընտանիքների կյանքի պայմանների վերաբերյալ ոչ օբյեկտիվ եզրակացությունների տրամադրմանը: Նշված խնդիրների հիմքում վերջիններիս աշխատանքի նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայությունն է:

Հավելենք նաև, որ ԽՀ մարմինների ժամանակին մասնագիտական միջամտությունն ու ճիշտ լուծումների ապահովումը անհրաժեշտ է նաև երեխաների մուտքը հաստատություններ, նրանց ներգրավվումը մուրացիկությանը, ինչպես նաև անչափահասների կողմից հանցագործությունների կատարումը կանխարգելելու գործում:

Ի դեպ, Նախարարությունից հայտնել են, որ 2014թ.-ի ընթացքում ԽՀՀ անդամների մասնագիտական որևէ վերապատրաստում չի իրականացվել: Նախարարության կողմից մշակվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրող մասնագետների, ինչպես նաև որդեգրող, որդեգրել ցանկացող ընտանիքների (անձանց) և խնամատար ընտանիքների անդամների (ծնողների ու երեխաների), խնամակալության և հոգաբարձության մարմինների, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների մասնագետների ուսուցողական ծրագիրը հաստատելու մասին» հրամանի նախագիծը, որը սահմանված կարգով կներկայացվի նախարարի հաստատմանը:

Քննարկվող խնդիրներին առավել բազմակողմանի լուծումներ տալու համար անհրաժեշտ է նաև ԽՀՄ-ների և սոցիալական աշխատողների (դեպք վարողի)

¹⁹¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 13.09.2011թ.-ի թիվ 69-Ս/1 հրամանի Հավելված

¹⁹² ՀՀ կառավարության 2011թ.-ի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշման Հավելվածով հաստատված Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրություն

համագործակցության խթանումը, այն դեպքերում, երբ վերջիններիս գործառույթները խաչվում են: Օրինակ՝ հաճախորդի կարիքների գնահատման, հաճախորդի անհատական սոցիալական ծրագրի կազմման և համակարգման, ռիսկի գոտում հայտնված անձանց (ընտանիքներին) հայտնաբերման, նրանց համար ռիսկային գործոնների նվազեցման միտված անհատական սոցիալական ծրագրի մշակման և այլ հարցերում:

Չնայած այս ոլորտում Նախարարության կողմից ձեռնարկված միջոցառումներին՝ 2015թ.-ին ևս ԽՀՄ-ի աշխատանքի արդյունավետության բարձրացման հարցում շոշափելի առաջընթաց չի արձանագրվել:

Առաջարկ. սահմանել խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության հստակ իրավական կարգավորումներ, մշակել նրանց գործառույթների կատարման նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ, վերջիններիս անդամների համար կազմակերպել մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, ինչպես նաև խթանել նրանց համագործակցությունը սոցիալական աշխատողների (դեպք վարողների) հետ:

10. 2013թ.-ից ի վեր Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել էր մանկատան շրջանավարտների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանով ապահովված չլինելու խնդիրը, որը 2015թ.-ի ընթացքում ևս լուծում չի ստացել:

Նախարարության կողմից չեն իրականացվել անհրաժեշտ և բավարար ծրագրեր՝ մանկատան երեխաներին բնակարանով ապահովելու ուղղությամբ, ինչի արդյունքում վերջիններս ստիպված են եղել տարիներ շարունակ սպասել հերթացուցակներում՝ օրենքով իրենց հասանելիք բնակարանները ստանալու համար: Իսկ մի շարք դեպքերում մանկատան նախկին սաներն իրենք են հրաժարվել մարզերում իրենց հատկացված բնակարաններից՝ աշխատելու և սեփական ապրուստը հոգալու համար պայմանների բացակայության պատճառով:

ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն դեռևս 2013թ.-ին ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցների վերաբերյալ իր ամփոփիչ դիտարկումներում¹⁹³ նշել էր, որ խնամքի հաստատություններից դուրս եկող երեխաների սոցիալական աջակցությունը շարունակում է մնալ անբավարար և առաջարկել, որ պետությունը կրթության և աշխատանքի հնարավորություններ գտնելու հարցում համապատասխան աջակցություն ցուցաբերի այն երեխաներին, ովքեր լքում են խնամքի հաստատությունները և, համապատասխանաբար, նրանց ապահովի բնակարաններով:

Բայցևայնպես, նույնիսկ մինչ օրս ստացված բազմաթիվ բնակարաններ, նորմալ կենցաղային պայմանների բացակայության պատճառով, պիտանի չեն

¹⁹³ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

բնակության համար: Խնդրահարույց է նաև մասնագիտացված մանկատների շրջանավարտներին բնակարանով ապահովելու խնդիրը: Գերակշիռ դեպքերում մասնագիտացված հատուկ մանկատների՝ հաշմանդամություն ունեցող սաները 18 տարեկանը լրանալուց հետո ստիպված են եղել մնալ մանկատանը կամ տեղավորվել են նյարդահոգեբուժական տուն-ինտերնատում կամ համապատասխան բժշկական հաստատությունում՝ համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայության պատճառով:

Նախարարության համակարգի՝ բնակչության սոցիալական պաշտպանության երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններում ներկայում բնակվում է 18 տարեկանը լրացած 124 չափահաս անձ, այդ թվում 114-ը՝ Խարբերդի մասնագիտացված մանկատանը¹⁹⁴, 3-ը՝ Մարի Իզմիրյանի անվան մանկատանը, 2-ը՝ Գավառի մանկատանը, իսկ 5-ը՝ Վանաձորի մանկատանը: «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում խնամվող 80 չափահաս սան տեղավորվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց «Չորակ» կենտրոն: Նախարարությունից հայտնել են նաև, որ Նախարարության համակարգի երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության (մասնագիտացված) հաստատություններից 18 տարեկանը լրանալու կապակցությամբ դուրսգրում չի եղել, քանի որ մտավոր և ֆիզիկական զուգակցված խնդիրներով շրջանավարտներն ինքնություն չեն կարող ապրել, ապահովել իրենց կենցաղավարությունը, ուստի նրանց բնակարան չի տրամադրվել:

Վերջիններս ևս ստիպված են լինում տարիներով մնալ հերթացուցակում՝ հնարավորություն չունենալով անցնել բնականոն կյանքի և ինտեգրվել հասարակությանը: Համաձայն Նախարարության տվյալների՝ ներկայումս սոցիալական կացարան ստանալու համար հաշվառված և բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) հերթացուցակում ընդգրկված մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտների թիվը կազմում է 226:

Նախարարությունից հայտնել են նաև, որ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտները բնակարանային ապահովության համար հաշվառվել են մինչև 2013թ.՝ ՀՀ կառավարության 2003թ.-ի հոկտեմբերի 30-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված ծրագրի համաձայն, որից հետո բնակելի տարածություն ստանալու իրավունքը դիտարկվում է միայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտների համար:

Նշված օրենքով սահմանված կարգով առանց ծնողական խնամքի մնացած

¹⁹⁴Խարբերդի մասնագիտացված մանկատանը, որտեղ ապրում են մտավոր և ֆիզիկական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներ, ունի գերբեռնվածության լուրջ խնդիր: Չնայած նրան, որ հաստատությունը նախատեսված է մինչև 18 տարեկան երեխաների համար, այնտեղ մինչ օրս ապրում են նույնիսկ մինչև 35 տարեկանին մոտ բազմաթիվ անձինք:

երեխաների թվին դասվող անձինք ընդգրկված են ՀՀ կառավարության 2015թ.-ի սեպտեմբերի 10-ի թիվ 1069-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց ցանկում: Տվյալ որոշմամբ՝ ՀՀ կառավարության 2013թ.-ի օգոստոսի 1-ի թիվ 894-Ն որոշման համաձայն՝ բնակելի տարածության կարիք ունեցող անձանց հերթացուցակում ներառված անձինք (այդ թվում նաև ՀՀ կառավարության 2003թ.-ի հոկտեմբերի 30-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված ծրագրի համաձայն բնակարանային ապահովության համար հաշվառված մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտները և ՀՀ կառավարության 2003թ.-ի հուլիսի 23-ի թիվ 983-Ն որոշման համաձայն բնակարանային ապահովության համար հաշվառված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին դասվող անձինք) հերթով տեղափոխվել են բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող անձանց (ընտանիքների) հերթացուցակ:

Այսպիսով, Նախարարության կողմից իրականացվող, մանկատան նախկին սաներին բնակարան տրամադրելու ծրագրերի անարդյունավետության հետևանքով մանկատների բազմաթիվ սաներ տարիներ շարունակ չեն ստանում իրենց հասանելի բնակարանները:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել՝ մանկատների շրջանավարտներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, բնակելի տարածքներով ապահովելու ուղղությամբ՝ հաշվի առնելով նրանց կարիքները և հասարակությանն ինտեգրվելու անհրաժեշտությունը:

11. Օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով ոչ իրավաչափորեն սահմանափակվել է մի շարք քաղաքացիների՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքը:

Պաշտպանի կողմից 2014թ.-ին բարձրաձայնվել է և 2015թ.-ին չի լուծվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի թիվ 66 հրամանի (Հրաման) հիման վրա համատեղությամբ աշխատած մի շարք քաղաքացիների՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունքից զրկված լինելու հարցը¹⁹⁵:

Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակվում է (թիվ 1 ցուցակով) 55 տարին լրացած անձին, եթե նա ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 15 օրացուցային տարին աշխատել է առանձնապես վնասակար, առանձնապես ծանր պայմաններում և այդ ժամանակահատվածում լրիվ աշխատանքային օրը կատարել արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք¹⁹⁶: ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատանքային

¹⁹⁵ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի թիվ 66 Հրաման, կետ 17

¹⁹⁶ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 10

Ժամանակից դուրս, միևնույն գործատուի կամ այլ գործատուի մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է¹⁹⁷:

Նշվածից բխում է, որ անձը կարող է ունենալ լրիվ աշխատանքային օրով հիմնական աշխատանք, ինչպես նաև համատեղությամբ, հիմնական աշխատանքային ժամանակից դուրս կատարել այլ աշխատանք: Այնինչ Հրամանով, երբ կենսաթոշակ նշանակող մարմինների կատարած ստուգումներով հիմնավորվում է, որ այդ աշխատողները կատարում են իրենց մասնագիտությանը չհամապատասխանող աշխատանքներ կամ աշխատում են համատեղությամբ, ապա նրանց արտոնյալ պայմաններով կենսաթոշակ չի նշանակվում:¹⁹⁸

Ստացվում է, որ Հրամանը սահմանափակում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձի նշված իրավունքը՝ չնայած դա չի բխում «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքից, որն ունի ավելի բարձր իրավաբանական ուժ: Այնինչ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի¹⁹⁹ համաձայն՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները: Հետևաբար, նշյալ դեպքերում Հրամանը պետք է համապատասխանեցնել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքին:

Առաջարկ. միջոցներ ձեռնարկել Նախարարի 2012 թվականի թիվ 66 հրամանում անհրաժեշտ փոփոխություններ կատարելու ուղղությամբ՝ տվյալ հրամանը «Պետական կենսաթոշակների մասին» և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

¹⁹⁷ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 99

¹⁹⁸ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի N 66 Հրաման, կետ 17

¹⁹⁹ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառնիչ:

Արձանագրված դրական զարգացումները

2015թ.-ին առաջին անգամ ուսման վարձի փոխհատուցում է տրամադրվել նաև առաջին կուրսեցիներին: 2015-2016 ուսումնական տարում առաջին կուրս ընդունված 719 ուսանողների տրամադրվել է ուսման վարձի 50-100% փոխհատուցում:

1. ՀՀ հանրակրթական դպրոցների հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթացների մոդուլներում ներառվել են կանանց և տղամարդկանց իրավահավասարության քաղաքականության, սեռի հատկանիշով բռնության կանխարգելման (1.5 դասաժամ) և ներառական կրթության (4 դասաժամ) վերաբերյալ թեմաներ: 2015թ.-ի մայիս-հունիս ամիսներին այս մոդուլներով վերապատրաստվել է ՀՀ հանրակրթական դպրոցների 2394 ուսուցիչ:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015թ.-ի փետրվարի 24-ի թիվ 102-Ն հրամանով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին»՝ «Հայաստանի Հանրապետության «Պետական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգը», ըստ որի՝ հաստատության խորհրդի կազմում չի կարող առաջադրվել այն ծնողը, ով միաժամանակ հանդիսանում է տվյալ հաստատության մանկավարժ:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Բարձրագույն որակավորման ոլորտում օրենսդրությամբ կանոնակարգված չեն աստիճանաշնորհման հետ կապված որոշ հարցեր, ինչը կոռուպցիոն ռիսկեր է պարունակում:

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է մի շարք դիմում-բողոքներ Նախարարության Բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) գործունեության վերաբերյալ, որը մի շարք դեպքերում հանգեցրել է քաղաքացիների իրավունքների խախտման:

Այսպես, նշված դեպքերից մեկում դիմումատուն Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության մասնագիտական խորհրդում հրապարակային պաշտպանել է իր դոկտորական ատենախոսությունը, ինչի արդյունքում խորհուրդը որոշել է նրան շնորհել տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճան և դիմել ԲՈՀ՝ աշխատանքը հաստատելու և համապատասխան վկայագիր տալու համար: ԲՈՀ-ը, սակայն, ելնելով փորձաքննության արդյունքից, աշխատանքն ուղարկել է կրկնական քննարկման:

Այնուհետև, դիմումատուն երկրորդ անգամ տնտեսագիտության մասնագիտական խորհրդում պաշտպանել է նույն թեմայով իր ատենախոսությունը, և Մասնագիտական խորհուրդը նրան կրկին շնորհել է գիտական աստիճան և, ըստ ընթացակարգի, աշխատանքն ուղարկել ԲՈՀ: Սակայն ԲՈՀ-ն այս անգամ ևս հիմք ընդունելով փորձագիտական եզրակացությունը, ընդհանրապես բեկանել է մասնագիտական խորհրդի որոշումը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ԲՈՀ-ն ատենախոսության կրկնական քննարկման և բեկանման որոշումները կայացնելիս հիմնվել է փորձաքննության արդյունքների վրա: Այսինքն՝ փորձաքննության ուղարկելու գործընթացում չկան իրավական հիմնավորումներ. մասնավորապես՝ քանի անգամ նույն աշխատանքը կարելի է տալ փորձագետին՝ փորձաքննության, քանի անգամ կարելի է փոփոխել ատենախոսության վերաբերյալ դիտողությունների կազմը և բովանդակությունը, որ դեպքերում և ինչ պայմաններում կարելի է նախատեսել կրկնակի և ավել փորձաքննություն, ինչպես և ինչ սկզբունքով պետք է անցկացվեն կրկնակի և ավել փորձաքննությունները, ինչպես նաև հստակեցված չեն բեկանման ընթացակարգերը:

Մեկ այլ դեպքում դիմումատուն պաշտպանել է դոկտորական ատենախոսություն ԲՈՀ-ի Տնտեսագիտության 008 մասնագիտական խորհրդում: ԲՈՀ-ը, ելնելով փորձաքննության արդյունքից, ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի²⁰⁰ համաձայն՝ աշխատանքն ուղարկել է Տնտեսագիտության մասնագիտական խորհուրդ՝ կրկնական քննարկման՝ ԲՈՀ-ի նախագահի 2015թ.-ի փետրվարի 4-ի թիվ Հ.16-Ա կարգադրությամբ: Փորձաքննության կարծիքը և ԲՈՀ-ի կրկնական քննարկման կարգադրությունը²⁰¹ խորհրդի նախագահին ուղղված

²⁰⁰ ՀՀ կառավարության 08.08.1997թ. թիվ 327 որոշմամբ հաստատված ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 34-րդ կետ «Եթե որակավորման գործի ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են սույն կանոնակարգի այնպիսի խախտումներ, որոնք հնարավորություն չեն տալիս գիտական աստիճանի վկայագիր հանձնելու մասին վերջնական որոշում ընդունելու, ԲՈՀ-ը աշխատանքը վերադարձնում է խորհուրդ՝ կրկնական քննարկման, որի կարգը սահմանվում է խորհրդի աշխատանքի կանոնակարգով»:

²⁰¹ Տնտեսագիտության 008 խորհրդի նախագահ Ա. Դարբինյանին ուղղված ԲՈՀ-ի նախագահ Լ. Արզումանյանի 2015թ.-ի փետրվարի 4-ի թիվ 39-01 գրության համաձայն՝ ԲՈՀ-ի կողմից ընդունվել է գործի վերաբերյալ 2015 թվականի փետրվարի 4-ի թիվ Հ.16-Ա կարգադրությունը՝ հիմք ընդունելով որակավորման գործի ուսումնասիրությունը: Նշված կարգադրության համաձայն՝ ենթադրվում է Տնտեսագիտության 008 խորհրդում կազմակերպել ատենախոսության կրկնական քննարկումը՝ աշխատանքը վերամշակելուց հետո, որին կցվել է նաև համապատասխան կարծիքը:

ուղեկցող նամակով ուղարկվել է Մասնագիտական խորհուրդ: Բոլոր նյութերը խորհուրդը ուղարկել է հայցորդին²⁰²: Սակայն ՀՀ վարչական դատարանի՝ դիմումատուի կողմից ներկայացված հայցադիմումի ընդունումը մերժելու մասին 2015թ.-ի մարտի 16-ի որոշման համաձայն՝ ՀՀ վարչական դատարանի գնահատմամբ ԲՈՀ-ի նախագահի 2015թ.-ի փետրվարի 4-ի թիվ Ն.16-Ա կարգադրությունը, որը վերաբերում է ատենախոսության կրկնական քննարկման կազմակերպմանը, ներքին իրավական ակտ է՝ ուղղված ներքին ընթացակարգային հարցերի կարգավորմանը:

Դատարանի դիրքորոշումից բխում է, որ ԲՈՀ-ի կողմից չեն պահպանել վարչական վարույթի շրջանակներում Օրենքով նախատեսված ընթացակարգերը, ինչի արդյունքում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝ վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը²⁰³:

Փաստորեն, վարչական վարույթի նյութերում միայն ԲՈՀ-ի կողմից ընդունված կարգադրության²⁰⁴ առկայությունից հետևում է, որ ԲՈՀ-ի կողմից չեն պահպանվել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի մի շարք պահանջներ²⁰⁵: Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ Նախարարությունից հայտնել են, որ ԲՈՀ-ը, համաձայն գործող կարգի, աշխատանքն ուղարկել է Տնտեսագիտության մասնագիտական խորհուրդ՝ կրկնական քննարկման՝ ղեկավարվելով ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 34-րդ կետով:

Նշված կետը սահմանում է, որ եթե որակավորման գործի ուսումնասիրության ընթացքում բացահայտվել են սույն կանոնակարգի այնպիսի խախտումներ, որոնք հնարավորություն չեն տալիս գիտական աստիճանի վկայագիր հանձնելու մասին վերջնական որոշում ընդունելու, ԲՈՀ-ը աշխատանքը վերադարձնում է խորհուրդ՝ կրկնական քննարկման, որի կարգը սահմանվում է խորհրդի աշխատանքի կանոնակարգով: Ավելին, ԲՈՀ-ի «Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգ»²⁰⁶-ի համաձայն՝ խորհուրդը ատենախոսության կրկնական քննարկումը կազմակերպում է *ԲՈՀ-ի սահմանած պայմանների համաձայն*, մինչդեռ բողոքի մասնագիտական խորհրդի աշխատանքի կրկնական քննարկման որևէ կարգ սահմանված չէ:

²⁰² «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 39

²⁰³ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդված

²⁰⁴ 2015 թվականի փետրվարի 4-ի թիվ Ն.16-Ա կարգադրություն

²⁰⁵ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր, 29-րդ հոդվածի 1-ին մաս, 35-րդ հոդված, 45-րդ հոդված, 46-րդ հոդվածի 1-ին մաս, 47-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր

²⁰⁶ 1997թ. նոյեմբերի 12-ի ԲՈՀ-ի հրամանով հաստատված «Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգ»-ի 4-րդ գլխի 21-րդ կետ

Բոլոր այս խնդրահարույց կարգավորումների շտկման անհրաժեշտությունն ընդունվել է նաև Նախարարության կողմից, և, հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները, մշակվել է համապատասխան նախագիծ, սակայն մինչ օրս առկա մի շարք խնդիրների, այդ թվում՝ մասնագետ ներգրավելու պայմանների և կարգի վերաբերյալ (հստակեցված չեն որոշ սկզբունքային հարցեր. մասնագետն ինչպես է ներգրավում, արդյոք ԲՈՀ-ը ընտրում է անկախ մասնագետ իրենց որպես մասնագետ ներգրավելու դիմում ներկայացրած անձանցից, ինչպիսի հավելյալ չափանիշներ են հաշվի առնվում մասնագետին ընտրելու ժամանակ, արդյոք փորձագետի եզրակացությունը ներկայացվում է նաև հայցորդին/խորհրդին, ինչպիսի պատասխանատվության միջոցներ կարող են կիրառվել մասնագետի նկատմամբ) լուծում չեն ստացել: Կատարված փոփոխությունների արդյունքում պարզ չէ նաև թե արդյոք գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հավակնող անձի ատենախոսության փորձաքննությունը կարող է կատարվել միայն գիտությունների դոկտորի գիտական աստիճան ունեցող մասնագետի կողմից, թե նաև գիտությունների թեկնածուի կողմից:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել բարձրագույն որակավորման ոլորտում օրենսդրության կատարելագործման և հստակեցման ուղղությամբ, որպեսզի այսուհետ բացառվեն ԲՈՀ-ի հայեցողական որոշումները:

2. Կրթությունից դուրս մնալու հետևանքով խախտվել է երեխաների կրթության իրավունքը, իսկ վերջիններիս հայտնաբերման և ուղղորդման կառուցակարգերը արդյունավետ չեն եղել:

Քաղաքացիների հայտնած տեղեկությունների, մամուլում տեղ գտած նյութերի վերլուծությունից պարզ է դառնում, որ դեռևս բազմաթիվ են երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերը:

Նշյալ դեպքերում երեխաների՝ կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներն են երեխայի կրթություն ստանալու նկատմամբ ծնողների ոչ բարեխիղճ վերաբերմունքը, վատ սոցիալական պայմանները²⁰⁷, երեխայի հաշմանդամությունը²⁰⁸, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ուշ արձագանքելը, նախկինում տարբեր պատճառներով նույն դասարանում մնացած աշակերտների սովորելու ցանկության բացակայությունը, նման դեպքերում ծնողներին պատասխանատվության չենթարկելը, երեխաներին սեզոնային գյուղատնտեսական աշխատանքների մեջ ներգրավվելը, իսկ առանձին էթնիկ խմբերի դեպքում՝ անգամ երեխաների վաղ ամուսնությունը:

Սակայն խնդիրն այն է, որ հանրակրթական դպրոցներում դեռևս չկան արդյունավետ մեխանիզմներ նման դեպքերը ժամանակին հայտնաբերելու և

²⁰⁷ <http://news.am/arm/videos/2573.html>

²⁰⁸ <http://disabilityinfo.am/12650/>

համապատասխան պատասխանատու մարմիններին ուղղորդելու համար:

Դպրոցների ուսուցիչները հաճախ անփութություն են ցուցաբերում դպրոցական մատյաններում դպրոց չհաճախող երեխաների բացակայությունների գրանցման, դրանց պատճառները պարզելու, համայնքի ղեկավարին, խնամակալության և հոգաբարձության մարմինն ղեկավարող վերաբերյալ տեղեկացնելու հարցում: Խնդրահարույց է նաև, որ չկան համայնքային մակարդակում այս հարցը կարգավորող մեխանիզմներ, որոնք թույլ կտային նշված խնդիրը արդյունավետ կերպով վերհանել և ուղղորդել միջգերատեսչական լուծումներ գտնելու նպատակով:

Ողջունելի է, որ խնդրի լուծման նպատակով Նախարարությունն աշխատում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համապատասխան համակարգ ստեղծելու ուղղությամբ, որը թույլ կտա հավաքագրել բացակայությունների վերաբերյալ համապատասխան տվյալները, ինչպես նաև կապահովի համագործակցություն կրթական և սոցիալական ծառայությունների միջև երեխային դպրոց վերադարձնելու նպատակով²⁰⁹:

Միաժամանակ, ըստ որոշ աղբյուրների՝ տարեկան մոտ 3-4 հազար աշակերտ 9-րդ դասարանն ավարտելուց հետո չի շարունակում կրթությունը, ինչը խնդիր է երեխաների շարունակական կրթությունն ապահովելու տեսանկյունից²¹⁰:

Դպրոցից դուրս մնացած երեխաների կամ պարտադիր կրթություն չստացողների թվի վերաբերյալ հավաստի և իրական տվյալների ձեռքբերման առումով դժվարություն է առաջացնում նաև այն հանգամանքը, որ հաճախ կոնկրետ դպրոցում հաշվառված երեխաների թիվը կարող է հաճախող երեխաների թվից ավելի լինել:

Պատճառն այն է, որ հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, ուստի ուսուցիչները հաճախ աշակերտների բացակայությունները օբյեկտիվորեն չեն գրանցում: Նույն խնդիրը առկա է նաև ներառական և հատուկ դպրոցներում, հատկապես եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար²¹¹:

Առաջարկ. ստեղծել և ներդնել կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման մեխանիզմ, ինչպես նաև կանոնակարգել միջգերատեսչական համագործակցությունը՝ ուղղված այդ երեխաների խնդիրներին երկարաժամկետ լուծումներ ապահովելուն:

3. Դպրոցներում դեռևս հանդիպում են տնօրենների կողմից մանկավարժների իրավունքների խախտման, ինչպես նաև աշակերտների շրջանում անօրինական դրամահավաքության դեպքեր:

²⁰⁹ <http://www.unicef.am/am/articles/education>

²¹⁰ http://www.asparez.am/news-hy/krtutyunic_durs_mnacac_erevaner-hy/

²¹¹ Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան
<https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>

2015թ.-ի ընթացքում ստացվել են ահազանգեր և տեղեկություններ (աշակերտների ծնողներից, հասարակական կազմակերպություններից ու մի շարք ԶԼՄ-երից)²¹² հանրակրթական դպրոցներում տնօրենների կողմից թույլ տրված անօրինականությունների, այդ թվում՝ անօրինական դրամահավաքի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանին բազմիցս հայտնել են տնօրենների կողմից մարդկանց ապօրինի աշխատանքից ազատելու, ուսուցիչներին սպառնալու և նրանց արժանապատվությունը վիրավորելու դեպքերի մասին: Դրանցից մեկով, օրինակ, Նախարարության իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Արարատի մարզի Նոր կյանք գյուղի դպրոցում չեն պահպանվել օրենսդրական մի շարք պահանջներ, ավելին՝ դպրոցի տնօրենը պատշաճ չի իրականացրել ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները: Հաշվի առնելով հայտնաբերված խնդիրները՝ Նախարարությունն առաջարկել է քննարկել դպրոցի տնօրենի հետագա պաշտոնավարման հարցը, ինչից հետո դպրոցի տնօրենը հեռացվել է զբաղեցրած պաշտոնից: Մեկ այլ դեպքով քաղաքացին պնդել է, որ վերջինիս ազատել են ուսուցչի պաշտոնից իր քաղաքական հայացքների պատճառով:

Ավելին, ծնողների պնդմամբ այնպիսի օրերին, ինչպիսիք են՝ Ուսուցչի տոն, Մարտի 8, Ապրիլի 7 և այլն, իրենք ստիպված են լինում ուսուցիչներին «վերաբերմունք ցույց տալ»՝ հետագայում իրենց երեխաների նկատմամբ վերջիններիս լավ տրամադրելու նպատակով: Առանձին դեպքերում ուսուցիչներն անձամբ են հայտնել, թե ինչ նվեր են նախընտրում ստանալ: Որոշ դպրոցներում ծնողները հայտնում են նաև «*ֆոնդի փող*» հավաքելու դեպքերի վերաբերյալ: Նման դեպքերում գումարների հավաքումը, որպես կանոն, իրականացվում է ծնողական կոմիտեների միջոցով՝ նախօրոք պայմանավորված գումարի չափով: Մի շարք դեպքերում տնօրենների հրահանգով գումարներ են հավաքվում դպրոցի վերանորոգման համար, հաշվի չառնելով այն, որ պետական բյուջեով այդ նպատակով, ինչպես նաև «Վերջին զանգ»-ի և այլ միջոցառումների կազմակերպման համար գումար դպրոցին արդեն իսկ հատկացված է:

Նախարարության տրամադրած տվյալներով՝ 2015թ.-ի դեկտեմբերի 15-ի դրությամբ «Թեժ գիծ» հեռախոսակապով գրանցվել է 101 ահազանգ, որոնցից 66-ը՝ դպրոցներում կատարվող դրամահավաքի, 19-ը՝ ուսուցիչների վերաբերմունքի և մասնագիտական պատրաստվածության, 5-ը՝ դպրոցի տնօրենի կառավարման հմտությունների ու անաչառության և այլ խնդիրների վերաբերյալ:

Այդուհանդերձ, Նախարարությունից չեն ստացվել տվյալներ, թե արդյոք նշված դեպքերի կապակցությամբ կատարվել է ծառայողական քննություն կամ արդյոք օրինախախտները ենթարկվել են պատասխանատվության՝ հաշվի առնելով, որ

²¹² Ընդ որում, սույն զեկույցի իմաստով անօրինական դրամահավաք չեն դիտարկվում այն դեպքերը, երբ ծնողները/աշակերտները կամավոր, առանց ճնշման որևէ կերպ շնորհակալություն են հայտնել ուսուցիչներին, իսկ աշակերտների նկատմամբ վերջիններիս վերաբերմունքը կամ գիտելիքների գնահատումը պայմանավորված չէ նման քայլերի ակնկալիքով կամ իրականացմամբ:

բացահայտված խախտումների վերաբերյալ կարող էր հաղորդում ներկայացվել իրավապահ համապատասխան մարմիններին:

Նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչությունում հանրակրթական դպրոցների տնօրենների կողմից թույլ տրված ոչ օրինական գործողությունների վերաբերյալ (օրինակ՝ անօրինական դրամահավաք, ծեծի դեպքեր, և այլն) գրանցվել է 14 դիմում: Ստացված 14 դիմումներից 6-ում բերված փաստարկները չեն համապատասխանել իրականությանը, իսկ 4-ում՝ մասամբ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում բռնության կիրառման դեպքերի վերաբերյալ Նախարարությունն ահազանգ չի ստացել: Բողոքները հիմնականում վերաբերել են տնօրենների կողմից իրականացվող կադրային քաղաքականությանը և դրամահավաքությանը:

Կրթության գլխավոր պետական տեսուչի կողմից հայտնաբերված 3 ուսումնական հաստատությունների տնօրենների խախտումների հետևանքները և թերությունները վերացնելու նպատակով տրվել են կատարման համար պարտադիր հանձնարարականներ:

Չնայած տեսչության կողմից նշված խախտումների հայտնաբերմանը, այնուամենայնիվ 2015թ. ուսուցիչների իրավունքները բավականաչափ պաշտպանված չեն եղել:

Առաջարկ. ուժեղացնել դպրոցներում անօրինականության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման մեխանիզմները, դրանց կապակցությամբ անցկացնել ծառայողական քննություն և բացահայտված խախտումների վերաբերյալ տեղեկությունները տրամադրել համապատասխան իրավապահ մարմիններին:

4. Դպրոցների տնօրենների ընտրությունների կարգում բացթողումները հաճախ հանգեցնում են այս ոլորտում խախտումների:

2014թ.-ից Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել էր հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների ընտրություններում հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների՝ որպես դիտորդի մասնակցության կարգի վերաբերյալ խնդիրը:

2015թ.-ի ընթացքում ևս ստացվել են մի շարք ահազանգեր, որոնցում քաղաքացիները նշել են, որ տարբեր դպրոցներում տնօրեն ընտրվել է ոչ թե առավել բարձր որակավորում և այլ անհրաժեշտ հատկանիշներ ունեցող թեկնածուն, այլ այն անձինք, ովքեր, օրինակ, բարեկամական կամ այլ կապի մեջ են գտնվում մարզպետի, քաղաքապետի կամ այլ պաշտոնատար անձի հետ:

Խնդրի լուծմանը կարող է նպաստել ընտրություններում դիտորդներին ներգրավումը, ինչը կբարձրացնի գործընթացի թափանցիկությունն ու օբյեկտիվությունը, սակայն այս ոլորտում առկա են օրենսդրական խնդիրներ:

Այսպես, տեսականորեն դպրոցների տնօրենների ընտրության գործող կարգը²¹³ ապահովում է բազմակարծությունը և հավասար պայմաններ թեկնածուների համար, սակայն գործնականում առկա են որոշ խնդիրներ: Օրենսդրությամբ հնարավորություն է ընձեռվում կրթության ոլորտում գործունեություն իրականացնող ՀԿ-ների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին դիտորդի կարգավիճակով մասնակցելու դպրոցների տնօրենների ընտրությանը²¹⁴, սակայն սահմանված չէ հստակ կարգ դրա իրականացման, դիտորդների կողմից բարձրաձայնված խախտումների քննության և մի շարք այլ հարցերի համար: Նշված թերությունների պատճառով ՀԿ-ների՝ որպես դիտորդների մասնակցությունը ընտրություններին դառնում է անարդյունավետ:

Խնդրի լուծման նպատակով առաջարկվել էր մշակել հանրակրթական դպրոցների տնօրենների ընտրություններում հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների՝ որպես դիտորդի մասնակցության հստակ կարգ և խրախուսել վերջիններիս մասնակցությունն այդ գործընթացին:

Ողջունելի է, որ այս ուղղությամբ Նախարարության կողմից մշակվել է տվյալ հարցը կարգավորող ՀՀ կառավարության համապատասխան որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, բայց նայնպես, նախագծում չէին ընդգրկվել Մարդու իրավունքների պաշտպանի մի շարք առաջարկներ:

Մասնավորապես, առաջարկվել էր հստակեցնել «Երեխայի իրավունքներով զբաղվող և կրթության ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններ» ձևակերպումը, որի արդյունքում որպես դիտորդ կկարողանան ընդգրկվել ոչ միայն երեխայի իրավունքներով զբաղվելու և կրթության ոլորտում գործունեություն ծավալելու կանոնադրական նպատակ ունեցող, այլ նաև այդ ոլորտում փաստացի գործունեություն իրականացնող իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները:

Մեկ այլ առաջարկ վերաբերում էր տնօրենների ընտրությանը հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, որպես դիտորդների, մասնակցության բուն էության ապահովման նպատակով վերջիններիս իրավունքների հստակորեն (օրինակ՝ խորհրդին իր դիտարկումները ներկայացնելու, գրառումներ կատարելու, ինչպես նաև տնօրենների ընտրության գործընթացի վերաբերյալ գրավոր եզրակացություն կազմելու և ընտրության արձանագրություններին կցելու հնարավորության) սահմանմանը:

Ավելին, նշված որոշմամբ մրցույթի արդյունքները չեղյալ են ճանաչվում դատական կարգով կամ ներկայացուցչի բացասական եզրակացության կամ լիազորված մարմնի կամ հավակնորդի կամ խորհրդի անդամի կողմից մրցույթի

²¹³ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշում

²¹⁴ՀՀ կառավարության 2010թ.-ի մարտի 4-ի թիվ 319-Ն որոշումն Հավելվածով հաստատված Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգ, կետ 21

անցկացման ընթացակարգի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարին ուղղված գրավոր բողոքի ուսումնասիրության համար ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ լիազորված մարմնի կողմից: Ստացվում է, որ կարգավորված չէ նաև դիտորդների կողմից բարձրաձայնված խախտումների քննության հնարավորությունը տվյալ ընթացակարգով, որի արդյունքում հասարակական կազմակերպությունների՝ որպես դիտորդների, մասնակցությունը կարող է կրել ձևական բնույթ:

Հավելենք, որ քննարկվող Նախագիծը դեռևս չի հաստատվել ՀՀ կառավարության կողմից ուստի հարցն առ այսօր մնում է չլուծված:

Առաջարկ. սահմանել հանրակրթական դպրոցների տնօրենների ընտրություններում հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների՝ որպես դիտորդի մասնակցության հստակ կարգ, խրախուսել վերջիններիս մասնակցությունը ընտրությունների դիտարկմանը:

5. Նախարարության ենթակայության տակ գտնվող մի շարք հատուկ հանրակրթական դպրոցներում բացահայտվել են շենքային և գույքային պայմանների, սննդի անվտանգության, բուժապասարկման և կիրառվող ուսումնական գրականության հետ կապված մի շարք խախտումներ:

2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի՝ Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի աշխատակիցների իրականացրած այցերի ժամանակ բացահայտվել է, որ վատ պայմաններում են գտնվում Նախարարության ենթակայության տակ գտնվող մի շարք հատուկ հանրակրթական դպրոցներ: Մասնավորապես, խնդիրներ են առկա Երևանի թիվ 16 հատուկ դպրոցում, Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցում, Երևանի թիվ 12 հատուկ դպրոցում, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցում, Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոցում²¹⁵:

Թեև որոշ դպրոցներում բարելավվել են կենցաղային պայմանները՝ իրականացվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ, որոշ դեպքերում կահավորվել են ննջարանները, ապահովվել է պատշաճ ընթացիկ սանիտարական վիճակը և այլն: Բայցևայնպես, դեռևս համապարփակ լուծում չի տրվել նշված դպրոցներում առկա մի շարք խնդիրների, այդ թվում՝ կապված վերջիններիս շենքային և գույքային պայմանների, դասասենյակների և ննջասենյակների ջեռուցման, սանիտարահիգիենիկ պայմանների, բուժապասարկման թերությունների (դեղորայքի անբավարարության և ժամկետանց դեղորայքի առկայության), սննդի կազմակերպման, ներառյալ՝ սննդի պահման պայմանների, ուսուցիչների

²¹⁵ Մանրամասները տես ԲԿԱՄ զեկույցում:

վերապատրաստման, ինչպես նաև չթարմացած ուսումնական գրականության կիրառման հետ:

Պետք է նշել, որ դպրոցի հիմնադրի և Նախարարության պարտականությունն է իրականացնել հանրակրթական դպրոցի գործունեության վերահսկողությունը²¹⁶: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից խնդրի մասին բարձրաձայնելուց հետո Նախարարությունից հայտնել են, որ Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ), Երևանի թիվ 12 հատուկ, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ, Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոցների տնօրեններին հանձնարարական է տրվել ուսումնասիրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությամբ բարձրացված հարցերը և ձեռնարկել միջոցառումներ դրանց լուծման համար: Նշել են նաև, որ հանձնարարվել է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում պատշաճ ընթացիկ սանիտարական վիճակ ապահովելու և երեխաների սննդի կազմակերպումը իրականացնելու համար առաջնորդվել ՀՀ կառավարության 2007թ.-ի մայիսի 31-ի թիվ 815-Ն որոշման թիվ 13 հավելվածի, 2011թ. հունվարի 20-ի թիվ 34-Ն որոշմամբ հաստատված «Մանկամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002թ.-ի փետրվարի 11-ի թիվ 82 և 2013թ.-ի նոյեմբերի 1-ի թիվ 70-Ն հրամանների պահանջներով:

Մեկ այլ գրությամբ Նախարարությունը հայտնել է, որ Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից ՖՄԴ-ի մոտեցումների և սկզբունքների հիման վրա մշակվել է վերապատրաստման 2 փաթեթ: Նշված փաթեթներով իրականացվել է 61 վերապատրաստում, Երևան քաղաքի Սյունիքի և Լոռու մարզերի ներառական կրթություն իրականացնող դպրոցների կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մանկավարժների համար: Նշվել է նաև, որ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Հույսի կամուրջ» ՀԿ-ի աջակցությամբ փաթեթը վերանայվել է և վերանայված փաթեթով 2015թ.-ին կազմակերպվել են վերապատրաստումներ:

Ինչ վերաբերում է Երևանի թիվ 16 հատուկ դպրոցին, ապա այնտեղ կատարած այցի ընթացքում արձանագրվել մի շարք խնդիրներ, որոնց մասին Նախարարությունը տեղեկացվել էր դեռևս նախորդ տարի, սակայն ակնհայտ է, որ դրանց լուծման ուղղությամբ անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկվել: Դպրոցում առկա խնդիրների վերաբերյալ Նախարարությունից տեղեկացրել են, որ այնտեղ ստեղծված են բոլոր հնարավոր պայմանները ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Խնդրի կապակցությամբ Նախարարությունը դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմ՝ «Երևանի թիվ 16 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման

²¹⁶ ՀՀ կառավարության 2002թ. հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրություն, հոդված 48, 2002 թվականի դեկտեմբերի 26-ի N 2179-Ն որոշում

աշխատանքներն իրականացնելու համար և խնդրել է հանձնարարել համապատասխան պետական մարմիններին անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար, որն ընթացքի մեջ է:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, սննդի անվտանգության, բուժապասարկման և կիրառվող ուսումնական գրականության նկատմամբ հսկողությունը խստացնելու ուղղությամբ:

6. Բազմիցս բարձրաձայնվել է և առ այսօր լուծում չի ստացել ԲՈՒՀ-երում ուսանողական խորհուրդների քաղաքականացվածության խնդիրը:

Տարիների ընթացքում մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական խորհուրդներ, դրանց անդամների գերակշռող մասի՝ որևէ քաղաքական կուսակցության անդամակցելու հանգամանքով պայմանավորված, ձեռք են բերել քաղաքական ուղղվածություն և խոչընդոտում են ԲՈՒՀ-երում ակադեմիական ազատության պահպանմանը: Վերջիններս, ուսխորհրդով իրենց վերապահված լիազորությունները հաճախ օգտագործում են ԲՈՒՀ-ում կուսակցական քարոզչության, կուսակցական շահերի պաշտպանության նպատակով:

ԲՈՒՀ-երի ուսանողական խորհրդի անդամներն ընտրվում են տվյալ բուհերի ուսանողների կողմից և պետք է լինեն ուսանողության ներկայացուցչական մարմին, որն անկողմնակալ կերպով պաշտպանում և ներկայացնում է ուսանողների շահերը:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի համոզմամբ ուսումնական հաստատությունների համեմատ ԲՈՒՀ-ի դասախոսները և ուսանողներն ավելի խոցելի են քաղաքական և այլ ճնշումների նկատմամբ, որոնք կարող են սպառնալ իրենց գիտական և ակադեմիական ազատությանը, ինչն անհրաժեշտ է կրթության իրավունքի լիարժեք իրացման համար²¹⁷: Ավելին, Կրթական համակարգի բարեփոխման Բոլոնյան Գործընթացով²¹⁸ նույնպես նախատեսվում է ԲՈՒՀ-ի ինքնավարության ապահովման և ազատ գիտահետազոտական աշխատանքներ իրականացնելու նպատակով ԲՈՒՀ-երում ակադեմիական ազատության ապահովման պահանջը:

Բայցևայնպես, Հայաստանի բազմաթիվ ԲՈՒՀ-երում քաղաքականացված ուսխորհուրդները հաճախ քաղաքական ուղղվածություն են տալիս ուսանողական նախաձեռնություններին/միջոցառումներին և, ըստ էության, որևէ կերպ չեն նպաստում ուսանողների գիտական ազատության ապահովմանը:

²¹⁷Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ՄԱԿ-ի կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 13, կետ 38, 1999 <http://www.refworld.org/docid/4538838c22.html>,

²¹⁸ Հայաստանի Հանրապետությունը միացել է 2005 թվականին

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ԲՈՒՀ-ի ուսանողական խորհրդի կանոնադրությունը հաստատվում է Նախարարության կողմից²¹⁹: Ըստ այդմ, Նախարարությունը, օրենսդրական համապատասխան փոփոխություններ նախաձեռնելով, կարող է ապահովել ուսխորհուրդների անկողմնակալ գործունեությունը: Բնականաբար, ուսանողին որևէ կուսակցության անդամագրվելու արգելք երբևէ չի կարող սահմանվել, բայցևայնպես, պետք է անհրաժեշտ և համապատասխան միջոցներ ձեռնարկվեն կանխելու համար ուսխորհուրդների՝ տարբեր կուսակցությունների կողմից քաղաքական նպատակներով օգտագործումը:

Առաջարկ. նախաձեռնել անհրաժեշտ օրենսդրական փոփոխություններ և այլ միջոցներ ԲՈՒՀ-երի ուսանողական խորհուրդների գործունեության անկողմնակալության ապահովման և վերջիններիս անդամներին քաղաքական ազդեցությունից զերծ պահելու ուղղությամբ:

7. Ներառական կրթություն իրականացնող մի շարք դպրոցներում առկա է վերապատրաստման դասընթացների բարելավման, դասընթացներին առնչվող մեթոդական ձեռնարկների, դիդակտիկ նյութերի և պարագաների համալրման, փաստաթղթաշրջանառության ձեռնարկի մշակման անհրաժեշտություն:

Չնայած նրան, որ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում 2014թ.-ի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում նախատեսվում է հանրակրթության համակարգում աստիճանական անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, այսուհանդերձ, ոլորտում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք, մասնավորապես, վերհանվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից 2015թ.-ի ընթացքում ներառական կրթություն իրականացնող մի շարք հանրակրթական դպրոցների մշտադիտարկման արդյունքում:

Այսպես, թե՛ Երևանի, թե՛ մարզային ներառական դպրոցների բազմամասնագիտական թիմի աշխատակիցները (հատուկ մանկավարժ, սոցիալական մանկավարժ, սոցիալական աշխատող, հոգեբան, լոգոպեդ և այլն) առանձնացրել են վերապատրաստման դասընթացներին առնչվող մի շարք համակարգային խնդիրներ: Այսպես, վերապատրաստման դասընթացներն ապահովում են, հիմնականում, տեսական-ներածական գիտելիքներով, որոնք սակայն, նրանց գնահատմամբ, բավարար չեն երեխաների հետ աշխատանքի ընթացքում ի հայտ եկած գործնական խնդիրները լուծելու համար: Բացի այդ, առկա է պրոֆիլային վերապատրաստումների կազմակերպման անհրաժեշտություն՝ հաշվի առնելով, որ ներառական դպրոցների բազմամասնագիտական թիմը բաղկացած է տարբեր մասնագետներից, որոնցից յուրաքանչյուրը նեղ-մասնագիտական

²¹⁹ «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 28

գործառույթներին համապատասխան գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու կարիք ունի:

Մասնագետները նշել են նաև լրացուցիչ վերապատրաստումների անհրաժեշտության, ինչպես նաև պետական ֆինանսավորմամբ վերապատրաստումների իրականացման վերաբերյալ տեղեկատվության պակասի մասին: Նշված խնդիրը, շատ դեպքերում, դրդում է սեփական միջոցներով մասնակցել վերապատրաստման դասընթացներին՝ պայմանավորված աշխատանքի ընթացքում ի հայտ եկած մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման անհրաժեշտությամբ: Միաժամանակ, նշվել է նաև թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակում տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման նպատակով ոլորտի առավել հմուտ մասնագետների հետ շփման, փորձի փոխանակման պակասի մասին:

Բարձրաձայնվել է նաև ներառական դպրոցներում օգտագործվող մեթոդական ձեռնարկների համալրման, դիդակտիկ նյութերի և պարագաների, ինչպես նաև ոլորտում առկա գրականության թարմացման և օտար (հիմնականում՝ անգլերեն) լեզուներով առկա գրականության թարգմանության անհրաժեշտության հարցը, ինչը կնպաստի երեխաների հետ անհատական աշխատանքի արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատող մասնագետները, որպես էական խնդիր են առանձնացրել հաստատված փաստաթղթաշրջանառության ձեռնարկի բացակայությունը:

Արդյունքում, ըստ մասնագետների, չկա միասնական համակարգված մոտեցում առ այն, թե ինչ թղթապանակով (որը կներառի, օրինակ, աշխատանքային ծրագիրը, հաշվետվությունները, խմբային աշխատանքները և այլն) պետք է աշխատանք վարվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ:

Սուզարկ. քայլեր ձեռնարկել ներառական կրթություն իրականացնող մի շարք դպրոցներում վերապատրաստման դասընթացների բարելավման, դասընթացներին առնչվող մեթոդական ձեռնարկների, դիդակտիկ նյութերի և պարագաների համալրման, փաստաթղթաշրջանառության ձեռնարկի մշակման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացվում են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվել են 12.06.2015թ.-ի դրությամբ ՀՀ մարզերից Երևան մուտք գործող երթուղիների ուղեգծերի վերաբերյալ տեղեկություններ²²⁰, որի անհրաժեշտության մասին բարձրաձայնվել էր 2014թ.-ի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում:
2. 2015թ.-ին «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի ավտոկայանները և ավտոկայարաններն ուղևորների համար տեսանելի վայրում կահավորվել են համապատասխան թղթային ձևի չվացուցակներով, իսկ Կենտրոնական և Գյումրու ավտոկայարանները՝ նաև էլեկտրոնային վահանակներով:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Դեռևս 2014թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել էր միջհամայնքային հանրային տրանսպորտի չվացուցակների վերաբերյալ հանրությանը ոչ պատշաճ իրազեկելու խնդիրը, որը չի լուծվել նաև 2015թ.-ի ընթացքում:

Միջհամայնքային հանրային տրանսպորտի երթուղիների չվացուցակների վերաբերյալ հասարակության իրազեկումը Նախարարությունն իրականացնում է իր պաշտոնական ինտերնետային կայքէջում չվացուցակների ուղեգծերի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելով²²¹, ինչը չի ապահովում այդ տեղեկությունների հասանելիությունը հասարակության լայն շերտերի համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլորին և ոչ բոլոր դեպքերում է (օրինակ՝ ինտերնետ կապի բացակայություն) հասանելի կայքէջի միջոցով չվացուցակում նշված ժամերը ստուգելը, անհրաժեշտ է հանրությանը իրազեկել այլ միջոցներով, օրինակ, չվացուցակները փակցնել համապատասխան կանգառներում (ինչպես էլեկտրոնային չվացուցակների տեսքով, այնպես էլ պարզ թղթային

²²⁰http://www.mtc.am/main.php?lang=1&page_id=612

²²¹Տե՛ս նույն տեղում:

տարբերակով) և ժամանակ առ ժամանակ թարմացնել դրանց արտաքին տեսքը և բովանդակությունը:

Նախարարության հայտնած տեղեկատվության համաձայն՝ միջմարզային կանոնավոր երթուղիների չվացուցակները, բացի Նախարարության պաշտոնական կայքից, տեղադրվում են նաև երթուղիների վերջնակետեր և սկզբնակետեր հանդիսացող ավտոկայարաններում և ավտոկայաններում: Հարկ է նշել, սակայն, որ բոլոր այն դեպքերում, երբ սկզբնակետ և վերջնակետ հանդիսացող կայարանների (կայանների) միջև առկա են այլ կանգառներ, միայն սկզբնակետ և վերջնակետ հանդիսացող կայարաններում (կայաններում) չվացուցակների առկայությունը չի ապահովում միջմարզային տրանսպորտի ուղևորների համար տեղեկատվության հասանելիությունը:

Այսպիսով, չեն իրականացվել բավարար քայլեր միջմարզային տրանսպորտային միջոցներից օգտվող ուղևորների համար միջմարզային կանոնավոր երթուղիների չվացուցակների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունն ապահովելու ուղղությամբ:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել միջմարզային կանոնավոր երթուղիների բոլոր կանգառներում շարունակաբար թարմացվող չվացուցակներ (էլեկտրոնային, պարզ թղթային) փակցնելու ուղղությամբ:

2. 2013թ.-ից ի վեր Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտի մատչելիության ապահովման խնդիրը, որը դեռևս շարունակում է չլուծված մնալ:

2015թ.-ի ընթացքում միջհամայնքային տրանսպորտային միջոցները հիմնականում հարմարեցված չեն եղել հաշմանդամություն ունեցող անձանց (օրինակ՝ տեսողական, լսողական խնդիրներ ունեցող) և բնակչության սակավաշարժուն այլ խմբերի կարիքներին:

Թեև ՀՀ կառավարությունը ստանձնել է տրանսպորտային միջոցները հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասարապես մատչելի դարձնելու պարտավորություն²²², այնուամենայնիվ 2015թ.-ին լուծում չի ստացել:

Այսպես, ընթացիկ տարվա ընթացքում ձեռք չի բերվել լսողության և տեսողության խնդիրներ ունեցող ուղևորների կարիքներին համապատասխանող (ձայնաազդանշանային համակարգ, լուսատախտակ) երկաթուղային տրանսպորտի շարժակազմ: Միևնույն ժամանակ, դրական է գնահատվում, որ հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն այլ խմբերի համար տեղաշարժման հասանելիությունն ապահովելու նպատակով Նախարարության նախաձեռնությամբ փոփոխություններ են կատարվել «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև փոփոխություններ են կատարվել ՀՀ

²²² Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա

կառավարության 16.08.2001թ.-ի թիվ 762 որոշման մեջ, համաձայն որոնց՝ ՀՀ-ում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումների ընտրության մրցույթին կկարողանան մասնակցել այն կազմակերպությունները, որոնք կունենան հաշմանդամություն ունեցող անձանց նստեցման և իջեցման համար հարմարեցված կամ վերասարքավորված ավտոբուսներ:

Ըստ օրենքի՝ պետական իշխանության և կառավարման մարմինները հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովեն հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության միջոցներից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը²²³: Խնդրի լուծման նպատակով տրանսպորտային միջոցների ուղեւորահներում պետք է տեղադրված լինեն, օրինակ, ավտոբուսի կանգառման անհրաժեշտության մասին նախազգուշացնող սեղմվող կոճակներ, որոնք կարող են օգտակար լինել խոսքի դժվարություն ունեցող անձանց համար: Ինչ վերաբերում է տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովմանը, ապա նման դեպքերում տրանսպորտային միջոցներում պետք է տեղադրվեն ձայնային ազդանշաններ, որոնք ուղևորներին կնախազգուշացնեն հաջորդող կանգառի մասին:

Այսպիսով, ընթացիկ տարում ևս միջհամայնքային տրանսպորտի մատչելիության ապահովման խնդիրը հաշմանդամություն ունեցող անձանց համար շարունակել է չլուծված մնալ:

Առաջարկ. ձեռնարկել բավարար միջոցներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում՝ տեսողական, լսողական խնդիրներ ունեցող անձանց, ինչպես նաև սակավաշարժուն անձանց) համար միջհամայնքային տրանսպորտային միջոցների մատչելիության ապահովմանը:

3. 2015թ.-ի ընթացքում չի իրականացվել պատշաճ վերահսկողություն շուկայում շրջանառության մեջ գտնվող գազաբալոններին ներկայացվող անվտանգության նորմերի ապահովման ուղղությամբ:

Բազմաթիվ քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ շարունակաբար իրենց մտահոգությունն են հայտնել գազաբալոնների շահագործման անվտանգության ոլորտում առկա խնդիրների կապակցությամբ: Ավելին, 2015թ.-ի ընթացքում ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնների անվտանգության վերաբերյալ կանոններ չեն եղել:

Այսպես, ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը սահմանող ՀՀ

²²³«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 21

կառավարության որոշմամբ²²⁴ ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալոնների անվտանգության նորմեր, ինչպես նաև գազաբալոնների տեղադրմամբ զբաղվող կազմակերպություններին ներկայացվող պահանջներ նախատեսված չեն եղել:

Ողջունելի է այն, որ 24.12.2015թ.-ին ՀՀ կառավարությունը հաստատել է Ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին թիվ 1520-Ն որոշումը, որն ուժի մեջ է մտել 25.03.2016թ.-ին: Նշված տեխնիկական կանոնակարգի նպատակն է սահմանել կիրառման համար միասնական, պարտադիր պահանջներ՝ ՀՀ տարածք ներմուծվող, ՀՀ տարածքում արտադրվող և (կամ) շուկայահանված ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգերի համար: Բացի այդ, Կանոնակարգով սահմանվում են նաև պահանջներ ավտոմոբիլային տրանսպորտային միջոցներում սեղմված բնական գազով աշխատող վառելիքային համակարգի համար՝ մարդու կյանքի և առողջության, գույքի, շրջակա միջավայրի, կենդանական և բուսական աշխարհի պահպանության, ինչպես նաև ռեսուրսախնայողության նպատակներով:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով խնդրի կարևորությունը, 2015թ.-ին գազաբալոնների անսարքության պատճառով տեղի ունեցած պատահարների արդյունքում քաղաքացիների առողջությանը հասցված վնասը, անհրաժեշտ է գործնականում արդյունավետ կերպով վերահսկել վերոնշյալ տեխնիկական կանոնների պահանջները պահպանումը:

Առաջարկ. պատշաճ վերահսկողություն իրականացնել շուկայում շրջանառության մեջ գտնվող գազաբալոններին ներկայացվող անվտանգության նորմերի ապահովման ուղղությամբ:

- 4. Դեռևս միջոցներ չեն ձեռնարկվել միջհամայնքային հանրային տրանսպորտի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, սպասարկման որակը բարելավելու, ինչպես նաև ներհամայնքային և մարզային նշանակության մի շարք ճանապարհների բարեկարգման ուղղությամբ:**

Դեռևս 2014թ.-ին Պաշտպանի տարեկան զեկույցում բարձրաձայնվել է միջհամայնքային հանրային տրանսպորտի գերծանրաբեռնվածության, անսարք վիճակում գտնվող տրանսպորտային միջոցի շահագործման, ոչ բավարար սանիտարահիգիենիկ վիճակի, տրանսպորտային միջոցն արագ վարելու և այլ խնդիրների վերաբերյալ: Ավելին, Տարեկան զեկույցով առաջարկվել էր ավելացնել

²²⁴ՀՀ կառավարության 28.09.2005թ.-ի. «Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» թիվ 2388-Ն որոշում

միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների քանակը, միկրոավտոբուսները փոխարինել ավտոբուսներով և բարձրացնել նշված տրանսպորտային միջոցների ընդհանուր սպասարկման որակը: Նշված խնդրի լուծման կապակցությամբ, սակայն Նախարարությունը 2015թ.-ին չի ձեռնարկել բավարար քայլեր:

Այսպես, Նախարարությունից տեղեկացրել են, որ 2015թ.-ին միջմարզային ուղևորափոխադրումներում ընդգրկված տրանսպորտային միջոցների քանակի էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Ավելին, միջմարզային երթուղային ցանցում միկրոավտոբուսային երթուղի չի փոխարինվել ավտոբուսայինով, ինչը Նախարարությունը կապված է ուղևորահոսքի նվազող ծավալների հետ:

Չնայած նրան, որ Նախարարության տվյալներով 2015թ.-ին իրականացվել է տրանսպորտային միջոցների 49 փոխարինումներ, որից 10-ն ամբողջովին նոր, այնուամենայնիվ մի շարք քաղաքացիներ շարունակում են ահազանգել խնդիրների առկայության մասին: Այսպես, ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մերձավանի բնակիչները բազմիցս հայտնել են Պաշտպանին, որ հասարակական տրանսպորտի ծանրաբեռնվածության պատճառով Մերձավան գյուղի բնակիչներից շատերը հնարավորություն չունեն օգտվելու հանրային տրանսպորտից:

Բացի այդ, 2015թ.-ին շարունակվել են դժգոհություններ ստացվել մի շարք ներհամայնքային և մարզային նշանակության ճանապարհների անբարեկարգ վիճակի վերաբերյալ: Քաղաքացիների պնդմամբ բազմաթիվ ճանապարհների, ինչպես նաև թունելների անբարեկարգ վիճակը մի շարք դեպքերում դժվարություններ է ստեղծել քաղաքացիների ազատ տեղաշարժման, ինչպես նաև բեռնափոխադրումների կազմակերպման առումով:

Վերոնշյալը վկայում է, որ Նախարարության կողմից ձեռնարկված քայլերը եղել են ոչ բավարար, ինչի արդյունքում բազմաթիվ քաղաքացիներ շարունակում են կրել մի շարք անհարմարություններ միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելիս:

Առաջարկ. ավելացնել միջհամայնքային հանրային տրանսպորտային միջոցների քանակը, միկրոավտոբուսները փոխարինել ավտոբուսներով, բարձրացնել նշված տրանսպորտային միջոցների ընդհանուր սպասարկման որակը, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել՝ ուղղված ներհամայնքային և մարզային նշանակության ճանապարհների բարեկարգմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

2015թ.-ին Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի ոլորտում դրական զարգացումներ արձանագրված չեն, քանի որ 2015թ.-ի հաղորդման համար Հանձնաժողովի կողմից չի տրամադրվել համապատասխան պատշաճ տեղեկատվություն:

Առկա թերություններն ու խնդիրները

1. **Տարիներ շարունակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել է հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության պակասի խնդիրը, որը լուծում չի ստացել նաև 2015թ.-ին:**

Դեռևս 2013 և 2014թթ.-ների Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում բարձրացվել և մինչև օրս չի լուծվել հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության պակասի խնդիրը: 2015թ.-ին հեռուստահեռարձակման դաշտում բազմակարծության պակասի մասին բարձրաձայնվել է մի շարք միջազգային իրավապաշտպան կառույցների կողմից²²⁵:

Այսպես, ՀՀ-ում հեռուստառադիոձրագրերի հեռարձակումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա²²⁶, որի տրամադրման համար անցկացվող մրցույթում, որպես լիցենզավորված անձի ընտրության չափանիշ, Հանձնաժողովը հաշվի է առնում թեկնածուների բազմակարծությունը խթանելու կարողությունը²²⁷: Միևնույն ժամանակ համաձայն ԵԽԽՎ հանձնարարականի ոլորտի լիազոր մարմինը՝ Հանձնաժողովը, բազմակարծության գործոնը պետք է հաշվի առնի ինչպես լիցենզիա տրամադրելիս, այնպես էլ թվային հեռարձակման համակարգի անցնելիս²²⁸:

Ոլորտի մասնագետներից և հասարակական կազմակերպություններից գատ, բազմակարծության պակասի վերաբերյալ իրենց մտահոգությունն են հայտնել նաև որոշ հասարակական-քաղաքական գործիչներ՝ նշելով, որ Հանրային հեռուստաընկերությունում չեն կազմակերպվում բանավեճեր և հաղորդումներ, որոնք հնարավորություն կընձեռեն տարբեր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին հրապարակայնորեն արտահայտել իրենց դիրքորոշումները,

²²⁵Human Rights Watch 2016, <https://www.hrw.org/world-report/2016/country-chapters/armenia>

²²⁶«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, մաս 1-ին

²²⁷«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 49, մաս 1-ին, կետ 3

²²⁸Rec(2003)9, սկզբունք 4, <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=38043&Site=CM>

ինչպես, օրինակ, Սահմանադրական բարեփոխումների նախագծի, այնպես էլ մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Հանձնաժողովը վերջին տարիներին բավարար քայլեր չի ձեռնարկել ոլորտում բազմակարծության խթանման ուղղությամբ: Ինչպես 2013, այնպես էլ 2014թ.-ին Հանձնաժողովը, որպես բազմակարծության սկզբունքի պահպանման գրավական, նշել է 2012 և 2013թթ.-ներին տեղի ունեցած ընտրությունների ընթացքում հեռարձակման հավասար պայմանների տրամադրումը, մինչդեռ եթերի բազմակարծության լիարժեք ապահովումը չի կարող հիմնավորվել միայն նախորդ տարիներին տեղի ունեցած ընտրությունների ընթացքում հեռարձակման հավասար պայմանների ապահովմամբ:

Ինչ վերաբերում է 2015թ.-ի ընթացքում բազմակարծության ապահովմանը, ապա Հանձնաժողովը, որպես այդպիսին, նշել է այն, որ 2015թ.-ի դեկտեմբերի 6-ին ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի քարոզչության ընթացքում հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից հանրաքվեի քարոզչությանը մասնակցող ՀՀ Ազգային ժողովի խմբակցություններին, ինչպես նաև քարոզչություն կատարող կողմերից յուրաքանչյուրին տրամադրվել է եթերաժամանակ և եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման սկզբունքի խախտումներ չեն արձանագրվել: Այս առումով պետք է նկատի ունենալ, որ բազմակարծության դրսևորումը պայմանավորված չէ միայն ընտրությունների և (կամ) քարոզարշավի կոնկրետ փուլի հետ, այն ներառում է յուրաքանչյուր ոլորտում (այդ թվում՝ նաև քաղաքականության) ամենօրյա աշխատանքների իրականացման միջոցով բազմակարծության ապահովում:

Ավելին, 2014թ.-ի Տարեկան զեկույցում նշվել էր, որ հեռարձակվող ՁԼՄ-ներում բազմակարծության ապահովմանը խոչընդոտում է նաև Հանձնաժողովի կողմից 2010թ.-ից ի վեր հեռուստահաճախականությունների մրցույթներ չանցկացնելը, ինչը դեռևս 2014թ.-ին Հանձնաժողովի կողմից հիմնավորվել էր թվային հեռարձակման անցման փաստով: Նշենք, սակայն, որ թվային հեռարձակման անցման ժամկետը բազմաթիվ անգամներ երկարաձգվել է նաև 2015թ.-ին և արդյունքում նոր ընկերությունները հնարավորություն չեն ունեցել ստանալ լիցենզիա հեռարձակում իրականացնելու համար:

Առաջարկ. ուժեղացնել վերահսկողությունը լիցենզավորված ընկերությունների կողմից բազմակարծությունը խթանելու պահանջի կատարման ուղղությամբ՝ անհրաժեշտ չափով ուշադրություն դարձնելով բազմակարծության խթանման չափանիշներին:

2. Ինչպես 2013, այնպես էլ 2014թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել է և մինչ օրս չի լուծվել մանկական և լրատվական հեռուստահաղորդումների լուսագրերով և ժեստերի լեզվով թարգմանության ոչ պատշաճ ապահովման խնդիրը:

Բազմաթիվ քաղաքացիներ, հասարակական կազմակերպություններ քարձրածայնել են, որ հակառակ օրենքի պահանջի՝ լսողական խնդիրներ ունեցող անձանց համար շարունակում է չլուծված մնալ տեղեկատվության մատչելիության ապահովումը: Մասնավորապես, խնդիրը նկատելի է մանկական և լրատվական հեռուստահաղորդումներում, որոնք չեն ուղեկցվում անհրաժեշտ լուսագրերով կամ դրանք մատչելի չեն լսողական խնդիրներ ունեցող անձանց համար թե՛ տեղեկատվության հրապարակման արագության, և թե՛ բովանդակության անհամապատասխանության առումով:

Այսպես, ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները ևս պարտադրում են պետությանը զանգվածային լրատվական միջոցների և համացանցի միջոցով տեղեկատվություն տրամադրողներից պահանջել իրենց ծառայությունները մատչելի դարձնել հաշմանդամություն ունեցող անձանց համար²²⁹: Ավելին, Հանրային հեռուստառադիոընկերությունը և ՀՀ-ում գործող այլ մասնավոր հեռուստաընկերություններ, որոնք հեռարձակում են մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ, պարտավոր են իրենց ծրագրերում ապահովել լսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղեկատվության ստացման մատչելիությունը, ինչպես նաև օրվա եթերաժամում առնվազն մեկական մանկական և լրատվական հեռուստահաղորդում հեռարձակել ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրերով²³⁰:

Թեև 2014թ.-ի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում Հանձնաժողովին առաջարկվել էր սեփական նախաձեռնությամբ միջոցներ ձեռնարկել վերահսկելու լսողական խնդիրներ ունեցող անձանց համար լիարժեք տեղեկատվության ստացումը, այնուամենայնիվ, Հանձնաժողովը հայտնել է, որ ընթացիկ տարում խնդրի կապակցությամբ բողոքներ չեն ներկայացվել և գործող հեռուստաընկերությունների կողմից օրենքի նշյալ պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Առաջարկ. սեփական նախաձեռնությամբ վերահսկել մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներում ժեստերի լեզվով թարգմանության կամ լուսագրերի ապահովման օրենքի պահանջի կատարումը:

- 3. Առ այսօր օրենքով սահմանված չեն էրոտիկ կադրերով կամ բռնություն պարունակող, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները:**

Օրենսդրական բացի արդյունքում 2015թ.-ին որոշ դեպքերում ցերեկային ժամերին շարունակվել են ցուցադրվել անչափահասների դաստիարակության, առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման վրա ազդող

²²⁹ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 21, կետ դ)

²³⁰«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 5.1

հեռուստահաղորդումներ:

Չնայած նրան, որ օրենքով սահմանված է, որ էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումները և սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-6.00-ն²³¹, այնուամենայնիվ, առ այսօր չեն մշակվել այն չափորոշիչները, որոնցով հնարավոր կլիներ գնահատել հաղորդումները և սահմանափակել դրանց ցուցադրումն օրենքով արգելված ժամերին:

Նշենք, որ վերոնշյալ խնդրի կարգավորումը բխում է նաև Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից: Մասնավորապես, Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով ամրագրվել է, որ պետություններն ապահովում են երեխայի սոցիալական, հոգևոր և բարոյական բարեկեցությանն ու նրա ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացմանն ուղղված տեղեկատվության ու նյութերի մատչելիությունը և խրախուսում երեխայի բարեկեցությանը վնասող տեղեկատվությունից և նյութերից երեխային պաշտպանելու համապատասխան ուղենիշների զարգացումը²³²:

Թեև Հանձնաժողովը չի կարող հանդես գալ օրենսդրական նախաձեռնությամբ, այնուամենայնիվ, որպես ոլորտի լիազոր մարմին, կարող է համապատասխան մարմինների միջոցով և համատեղ իրականացնել անհրաժեշտ օրենսդրական նախագծերի մշակում: Հատկանշական է, որ նման չափորոշիչներն արդեն իսկ սահմանված են Հանձնաժողովի 2010թ.-ի փետրվարի 15-ի որոշմամբ²³³, և անհրաժեշտ է միայն վերջիններս ամրագրել համապատասխան օրենքում:

Առաջարկ. իրավասու մարմինների հետ համատեղ մշակել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ սահմանելու էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների որոշման չափորոշիչները:

4. Մինչ օրս չեն վերացվել ազգային փոքրամասնությունների լեզուներով Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումների եթերաժամի օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումները:

Մարդու իրավունքների պաշտպանի 2014թ.-ի տարեկան զեկույցում բարձրացվել և մինչև օրս չի լուծվել Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների եթերաժամի՝

²³¹«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 22, մաս 2

²³²Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 17

²³³<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=56607>

օրենսդրությամբ սահմանված սահմանափակումների խնդիրը:

Այսպես, Հանրային հեռուստառադիոընկերությունը պարտավոր է եթերային ժամանակ տրամադրել ՀՀ ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար, ընդ որում՝ այդ հաղորդումների ընդհանուր ժամաքանակը չպետք է *գերազանցի* հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը²³⁴: Մինչդեռ, ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար առավելագույն եթերային ժամանակի սահմանումը խնդրահարույց է փոքրամասնությունների համար լրատվամիջոցների համընդհանուր հասանելիության ապահովման տեսանկյունից և անհարկի սահմանափակում է նրանց մուտքը հանրային լրատվամիջոցներ:

Այս առումով, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի անդամ պետություններին ուղղված տեղեկատվական հասարակությունում հանրային լրատվամիջոցների նպատակի մասին թիվ (2007)3 հանձնարարականի համաձայն՝ պետությունները պետք է տեխնոլոգիական տարաբնույթ միջոցներով ապահովեն հանրային լրատվամիջոցների համընդհանուր հասանելիությունը բոլոր անհատներին և հասարակության խմբերին, այդ թվում՝ փոքրամասնություններին և խոցելի խմբերին²³⁵:

Անհրաժեշտ է ընդգծել, որ նման սահմանափակումը Հանձնաժողովի կողմից մեկնաբանվում է այն տրամաբանությամբ, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հանրային հեռուստաընկերությունն ազգային փոքրամասնություններին վերաբերող ֆիլմերի ցուցադրումից բացի, ունի նաև օրենքով սահմանված այլ պարտավորություններ, մասնավորապես, ապահովել իր գործունեության ընթացքում տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանությունը, ուստի անհրաժեշտություն է առաջացել սահմանել ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար ժամային սահմանափակում:

Մինչդեռ, դեռևս 1995թ.-ի Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա), որը վավերացվել է ՀՀ-ի կողմից, նախատեսում է, որ ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ իր կարծիքն արտահայտելու իրավունքը ներառում է կարծիք ունենալու և փոքրամասնության լեզվով տեղեկատվություն և գաղափարներ ստանալու և հաղորդելու ազատությունը: Ավելին, համաձայն Կոնվենցիայի՝

²³⁴«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենք, հոդված 26, մաս 5, կետ 3, ենթակետ դ.

²³⁵Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2007)3 «Հանրային լրատվամիջոցների դերը տեղեկատվական հասարակությունում» հանձնարարական, կետ v, <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1089759>

լրատվական միջոցների մատչելիության հարցում ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք չպետք է ենթարկվեն խտրականության²³⁶:

Հավելենք նաև, որ տվյալ օրենսդրական խնդրին անդրադարձ է կատարվել նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, որտեղ, մասնավորապես նշվել է, որ օրենքի նշյալ դրույթը սահմանափակում է ազգային փոքրամասնությունների լեզուներով հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումները և անհրաժեշտ է երաշխավորել փոքրամասնության լեզվով հեռարձակման նվազագույն ժամանակահատվածը²³⁷, ինչը ենթադրում է նաև գործող օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզվով հեռուստառադիոհաղորդումների ընդհանուր ժամաքանակից որոշակի ժամաքանակը չզերազանցելու պահանջի վերացում:

Առաջարկ. իրավասու մարմինների հետ համատեղ մշակել օրենսդրական փոփոխություններ՝ վերացնելով Հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների եթերաժամի սահմանափակումները:

²³⁶<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=81178>

²³⁷Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի իրականացման վերաբերյալ ԵԽ 2012թ.-ի բանաձև, http://www.gov.am/u_files/file/kron/Resolution.pdf, http://www.gov.am/u_files/file/kron/Opinion.pdf

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ բնապահպանության նախարարության (Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. ՀՀ կառավարության կողմից ընդունվել է ՀՀ շրջակա միջավայրի աղտոտվածության բարձր մակարդակ ունեցող (մասնավորապես՝ հանքավայրերին հարող) տարածքներում մշտադիտարկման կարգը հաստատելու մասին 2015թ.-հուլիսի 8-ի թիվ 762-Ն որոշումը:

2. ՀՀ Բնապահպանության նախարարության կողմից մշակվել և ՀՀ Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել ««Թափոնների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը, որով սահմանվել են ընդերքօգտագործման ընթացքում առաջացած թափոնների վերաբերյալ դրույթներ, ինչը թույլ կտա բնապահպանական վճարներ գանձել համապատասխան կուտակումների համար:

Առկա թերություններն ու խնդիրները

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի որոշ դրույթներ խոչընդոտում են շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկմանը և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովմանը:

Շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով կարևորագույն նշանակություն ունեցող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի հունիսի 21-ին ընդունված ՀՀ օրենքում (2014թ.-ի Օրենք), առկա են մի շարք խնդրահարույց կարգավորումներ, այդ թվում՝ Օրիուսի կոնվենցիայի²³⁸ հետ հակասության մեջ մտնող դրույթներ, որոնց մասին նշվել է նաև

²³⁸«Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա, ստորագրվել է Հայաստանի Հանրապետության կողմից 1998թ.-ի հունիսի 25-ին, վավերացվել է 2001թ.-ի օգոստոսի 1-ին, http://www.un.am/res/UN%20Treaties/XVII_22.pdf
https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/ACtext/Aarhus_Convention_Armenian.pdf

Մարդու իրավունքների պաշտպանի 2014թ.-ի Տարեկան զեկույցում: Այնուամենայնիվ, 2015թ.-ի ընթացքում չեն ձեռնարկվել բավարար քայլեր Օրենքում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ: Խնդրին անդրադարձել է նաև Օրհուսի կոնվենցիայի (Կոնվենցիա) համապատասխանության կոմիտեն (Կոմիտե), որը վերահսկում և գնահատում է Կոնվենցիան ստորագրած երկրների կողմից վերջինիս դրույթների կիրարկումը²³⁹:

Այսպես, մինչ 2014թ.-ի հունիսի 21-ը գործում էր «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (1995թ.-ի Օրենք), որի խնդրահարույց դրույթները Կոմիտեն 2011թ.-ի իր կարծիքում առաջարկել էր համապատասխանեցնել Կոնվենցիայի պահանջներին²⁴⁰: Այսպես, նշված օրենքի համաձայն՝ ձեռնարկողի կողմից ծանուցումը ստանալուց հետո 7-օրյա ժամկետում լիազորված մարմինն իրազեկում էր ազդակիր համայնքի ղեկավարներին և հասարակությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին²⁴¹: Նույն Օրենքի համաձայն՝ մասնագիտական եզրակացությունը ստանալուց հետո առնվազն 7 օր առաջ գրավոր իրազեկում էր ձեռնարկողին, մարզի կամ համայնքի ղեկավարներին, ազդակիր համայնքներին, համապատասխան պետական մարմիններին և լիազորված անձանց հասարակական լուսմների ժամկետի և անցման տեղի մասին²⁴²:

Մինչդեռ, 2014թ.-ին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ հանրության ծանուցումն իրականացնում է լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին լուսմներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ²⁴³: Փաստորեն, օրենսդրական նոր փոփոխություններով հանրային լուսմների վերաբերյալ հանրությանը ծանուցելու ժամկետը փոփոխության չի ենթարկվել, մինչդեռ Կոմիտեն խնդրահարույց էր համարել նման ժամկետները դեռևս 1995թ.-ի Օրենքի համապատասխան կարգավորումներում:

Կոմիտեն նշել էր, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացները, ինչպես նաև հանրային մասնակցության մեխանիզմները

²³⁹ Հայաստանի համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի V/9ա որոշում, կետ 4, ենթակետ գ(i) <http://bit.ly/186JLt6>

²⁴⁰ Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում <http://bit.ly/1vqBkOC>

²⁴¹ ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին»(1995թ.), հոդված 6

²⁴² ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին»(1995թ.), հոդված 10

²⁴³ ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» (2014թ.), հոդված 26, մաս 2, կետ 1

պարզեցման կարիք ունեն²⁴⁴: Մասնավորապես, որոշումների ընդունման գործընթացի վերաբերյալ հանրությունը պետք է տեղեկացվի հնարավորինս շուտ²⁴⁵:

Կոմիտեն ՀՀ-ի վերաբերյալ կայացրել է մի շարք որոշումներ²⁴⁶՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման և, հատկապես, ազգային օրենսդրության մեջ կոնվենցիայի դրույթները ներդնելու վերաբերյալ: Ավելին, ոլորտային մի շարք փորձագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների պնդմամբ Հայաստանի կողմից Կոնվենցիայի դրույթների ներդրման ու իրականացման կապակցությամբ անբարեխիղճ վերաբերմունքի պատճառով Կոմիտեն Հայաստանին վերցրել է ամենամյա հսկողության տակ:

Հավելենք, որ Կոմիտեն ՀՀ կառավարության 2014թ.-ի ընթացիկ զեկույցի²⁴⁷ վերաբերյալ առաջընթացի գնահատման իր առաջին եզրակացության մեջ նշել է նաև, որ չնայած նրան, որ Հայաստանը իր կոնվենցիոն պարտավորությունների կապակցությամբ ձեռնարկել է որոշակի քայլեր, սակայն դեռևս չի կատարել Կոմիտեի որոշման պահանջները²⁴⁸:

Վերոգրյալից հետևում է, որ որոշումների ընդունման գործընթացի վերաբերյալ 2014 թվականի օրենսդրական փոփոխությունները չնպաստեցին շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ հանրային իրազեկման և հանրային ներգրավվածության պատշաճ ապահովմանը²⁴⁹ և 2015թ.-ին քայլեր չձեռնարկվեցին խնդրի լուծման կապակցությամբ:

Առաջարկ. ի կատարումն Կոմիտեի հանձնարարականների՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ այն համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և սահմանելով հանրային լուսման վերաբերյալ հանրությանը ծանուցելու առավել երկար ժամկետներ:

2. Չնայած ստացված բազմաթիվ անազանզերին՝ «Թեղուտ» ՓԲԸ-ում շուրջ 3 տարի չեն իրականացվել տեսչական ստուգումներ:

²⁴⁴Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում, կետ 4, ենթակետ ա) <http://bit.ly/1vqBkOC>

Հայաստանի համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի V/9ա որոշում կետ 4, ենթակետ գ(i)) <http://bit.ly/186JLt6>, Օրհուսի կոնվենցիայի (Կոնվենցիա) հոդված 3

²⁴⁵Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում, կետ 4(բ) <http://bit.ly/1vqBkOC>, Հայաստանի համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի V/9ա որոշում կետ 4, ենթակետ գ(i) <http://bit.ly/186JLt6>, Կոնվենցիայի հոդված 6, մաս 4

²⁴⁶ <http://www.unece.org/env/pp/ccimplementation.html> , <http://www.unece.org/env/pp/cc.html>

²⁴⁷http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP5decisions/V.9a_Armenia/frmParty9a_PROG_RESS_REPORT_V9a_3_.pdf

²⁴⁸Հայաստանի կողմից Կոնվենցիայով ստանձնած պահանջների կատարման վերաբերյալ Կոմիտեի V/9 որոշման իրականացման առաջընթացի կապակցությամբ առաջին դիտարկումը http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf

²⁴⁹Հայաստանի՝ Կոնվենցիայի պահանջներին համապատասխան լինելու վերաբերյալ Կոմիտեի IV/9ա որոշում, կետ 4(բ) <http://bit.ly/1vqBkOC>

Դեռևս 2014թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում բարձրաձայնվել էին «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների իրականացման հարցը և դրա հետևանքով առաջացած խնդիրները, որոնք լուծում չեն ստացել նաև 2015թ.-ի ընթացքում: Ըստ Նախարարության տրամադրած տվյալների՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկված է եղել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության ստուգման ենթակա կազմակերպությունների՝ 2013, 2014 և 2015թթ.-ների ցանկերում, սակայն այդ տարիներին տեսչական ստուգումներ չեն իրականացվել:

Մի շարք բնապահպաններ ահազանգում են, որ Թեղուտի հանքավայրը շահագործող ընկերությունը կոպտորեն խախտել է բնապահպանական օրենսդրության նորմերը, ինչի հետևանքով հանքարդյունաբերական թափոնները հարակից գետ են թափվել²⁵⁰: Ի պատասխան բնապահպանների ահազանգին՝ Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Լոռու տարածքային բաժնի կողմից համապատասխան ցուցում է տրվել ընկերությանը՝ ձեռնարկել միջոցներ հարստացուցիչ ֆաբրիկայի շրջանառու ջրի պոմպակայանը լրացուցիչ հզորությունով համալրելու և հետագայում նման վթարային արտահոսքերը շրջակա միջավայր բացառելու ուղղությամբ²⁵¹, սակայն ստուգումներ այդպես էլ չեն իրականացվել:

2015թ.-ին ՀՀ բնապահպանության նախարարը տվել է համապատասխան հանձնարարական «Թեղուտ» ՓԲԸ-ում ստուգում անցկացնելու վերաբերյալ, ինչը հնարավոր չի եղել իրականացնել ՀՀ կառավարության 2015թ.-ի հուլիսի 30-ի թիվ 839-Ս որոշումն ընդունելուց հետո, որի համաձայն ստուգումները կասեցվել են:

Այսպես, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ 7-րդ հոդվածի համաձայն՝ բնապահպանական վերահսկողության իրականացումն ապահովում են ՀՀ կառավարությունը և բնապահպանության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմինը, իսկ նույն օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ բնապահպանական վերահսկողության ուղղությամբ ՀՀ կառավարության գործառույթներից է իր իրավասության սահմաններում բնապահպանական վերահսկողության ուղղությամբ հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի ընդունումը: Սակայն, Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն շրջակա միջավայրին վտանգ սպառնացող արտակարգ և վթարային իրավիճակների դեպքում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ստուգումները կատարվում են Նախարարության ղեկավարի հրամանով կամ հանձնարարականով: Այսպիսով, Նախարարությունը, հաշվի առնելով ահազանգերը, իր լիազորությունների շրջականներում, կարող էր ձեռնարկել «Թեղուտ» ՓԲԸ-ում անհրաժեշտ ստուգումների իրականացում և խախտումներ հայտնաբերելու դեպքում համապատասխան քայլեր ձեռնարկել:

²⁵⁰<http://www.ecolor.org/hy/news/teghout/teghout-supporters-applying-to-nature-protection-ministry-to-hold-inspections-in-teghout-mine/8040/>

²⁵¹<http://www.armecofront.net/mamlo-haghordagrutyunner/teghuti-hanqavayri-hetevanqneri/>

Առաջարկ. Ձեռնարկել անհրաժեշտ քայլեր ողջամիտ ժամկետներում սպասեցվելու «Թեղուտ» ՓԲԸ-ում անհրաժեշտ ստուգումների իրականացումը:

3. Նախարարությունը, իր լիազորության շրջանակներում, չի ձեռնարկել արդյունավետ միջոցներ բնապահպանության ոլորտում խախտումների բացահայտման և կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև չի իրականացրել ի սկզբանե նախատեսված քանակի բնապահպանական տեսչական ստուգումներ:

Վերջին տարիներին Նախարարության կողմից բնապահպանության օրենսդրության խախտումների հայտնաբերման նպատակով ստուգված կազմակերպությունների քանակը զգալիորեն զիջում է ի սկզբանե հայտարարված և նախատեսված քանակին: Թեև խնդրին անդրադարձ էր կատարվել 2014թ.-ի Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցում, սակայն 2015 թ.-ին այն դեռևս լուծում չի ստացել:

Համեմատական անցկացնելով 2015թ.-ի և 2013-2014թթ.-ների ցուցանիշների միջև՝ ակնհայտ է, որ բնապահպանական ստուգումների թիվը նախորդ տարիներին համեմատ զգալիորեն նվազել է: Այսպես, 2008թ.-ից մինչ 2013թ.-ը ստուգումների թիվը 1752-ից նվազել է՝ դառնալով 88²⁵²: 2014 թ.-ին այս առումով դրական առաջընթաց չի գրանցվել և տեսչական ստուգումներ իրականացվել են նախատեսված 2332-ի փոխարեն 120 օբյեկտներում:

2015թ.-ի ընթացքում բնապահպանական պետական տեսչության կողմից անցկացված ստուգումների թիվը կազմել է 127²⁵³: Նշված ցուցանիշն ավելի բարձր ցուցանիշ է՝ ի համեմատ 2014թ.-ի, և հետևաբար կարող է համարվել դրական զարգացում, սակայն նախատեսված 844-ից ավելի քիչ է: Այսպես, 2015թ.-ի ընթացքում Նախարարության իրականացվելիք ստուգումների ծրագրի համաձայն՝ նախատեսվում էր իրականացնել թվով 844 ստուգումներ, որոնցից 590-ը՝ բարձր ռիսկայնությամբ, 211-ը՝ միջին ռիսկայնությամբ և 42-ը ցածր ռիսկայնությամբ տնտեսվարող սուբյեկտների մոտ²⁵⁴:

Այսպիսով, Նախարարության կողմից նախատեսվածից ավելի քիչ թվով ստուգումների իրականացումը խոչընդոտում է հնարավոր խախտումների հայտնաբերմանը: Նման ստուգումների իրականացման անհրաժեշտությունը նախ պայմանավորված է հայտնաբերվող խախտումների պատճառների ուսումնասիրման, դրանց նպաստող գործոնների բացահայտման անհրաժեշտությամբ՝ հետագայում նմանատիպ խախտումների կանխման համար:

Առաջարկ. բնապահպանական պետական տեսչության տարեկան ծրագրում

²⁵² Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2013թ.-ին և ցուցանիշների 2008-2013թթ. շարժընթացը, էջ 19, <http://bit.ly/194lR28>

²⁵³ <http://www.mnp.am/?p=325>

²⁵⁴ Նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության կողմից 2015թ.-ի ընթացքում իրականացվելիք ստուգումների ծրագիր <http://www.mnp.am/?p=325>

ներառել ստուգվող օբյեկտների հնարավորինս լայն շրջանակ և ստուգումներն իրականացնել ծրագրին համապատասխան:

4. Փոքր ՀԷԿ-երի կառուցմանը զուգահեռ առաջացել են ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրներ:

Ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրներին անդրադարձ էր կատարվել դեռևս Մարդու իրավունքների պաշտպանի 2014թ.-ի տարեկան զեկույցում: Մասնավորապես, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները բազմիցս ահազանգել են, որ ՓՀԷԿ-երի շահագործումը շատ դեպքերում ուղեկցվել է խախտումներով, որոնք անցանկալի հետևանքներ է թողնում շրջակա միջավայրի վրա: Դրանցից է, օրինակ, ՓՀԷԿ-ի շահագործման ընթացքում պատշաճ էկոլոգիական թողքի ապահովման բացակայությունը²⁵⁵:

ՓՀԷԿ-երի կառուցումը նաև անտառահատումների պատճառ է դառնում, իսկ ջրային ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործումը մեծ ազդեցություն է թողնում համայնքների սոցիալական վիճակի վրա՝ համայնքին թողնելով առանց ոռոգման և խմելու ջրի, ինչի հետևանքով նվազում են գյուղմթերքների արտադրությունը և բնակիչների եկամուտը²⁵⁶:

Հատկանշական է, որ ՓՀԷԿ-երի շահագործման հետևանքով շրջակա միջավայրին հասցվող վնասի վերաբերյալ 2015 թ.-ին Նախարարությունը ստացել է 8 դիմում-բողոք, որոնք հիմնականում եղել են ՓՀԷԿ-երի շահագործման հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրների, դրանց անօրինական շահագործման կամ անօրինական գործունեության, բնապահպանական թողքի չպահպանման վերաբերյալ: Ըստ Նախարարության հայտնած տվյալների՝ բողոքների հիման վրա կատարվել են տեսչական ստուգումներ ՀՀ Տավուշի մարզի 3, Սյունիքի մարզի 1, Վայոց ձորի 1, Լոռու մարզի 1, Կոտայքի մարզի 2 ՓՀԷԿ-երում, մինչդեռ որոշ տարածքներ ՓՀԷԿ-երի շահագործման արդյունքում դեռ շարունակվում են ջրազրկվել²⁵⁷: Վատթարացել է նաև Փամբակ գետի Տանձուտ վտակի սանիտարական վիճակը²⁵⁸:

2015թ.-ին խնդիրներ են առաջացել նաև Վայոց Ձորի մարզի ՓՀԷԿ-երի շահագործման արդյունքում: Նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Վայոց Ձորի մարզում 2014թ.-ի համեմատ 2015թ.-ին ոռոգման համակարգերի անխափան աշխատանքի ուղղությամբ գրանցվել է զգալի

²⁵⁵ Էկոլոգիական թողք՝ ջրի նվազագույն ելք, որն ապահովում է ջրային ռեսուրսի էկոլոգիական հավասարակշռությունը և ինքնավերականգնումը (ՀՀ ջրային օրենսգիրք):

²⁵⁶ ՄԱԿ-ի՝ «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի՝ Հայաստանի Հանրապետության 5-րդ ազգային զեկույց, Երևան 2014, <http://bit.ly/1Fy3MEu>

²⁵⁷ <http://bit.ly/1hVxvRh>

²⁵⁸ <http://bit.ly/1JeQm0v>

առաջընթաց, սակայն ջրօգտագործող ընկերությունների ղեկավարները հայտնել են, որ որոշ ՓՀԵԿ-երի անկանոն աշխատանքի արդյունքում ոռոգման շրջանում լինում է համայնքների ջրամատակարարման խափանման դեպքեր²⁵⁹:

Այսպիսով, չնայած Նախարարության կողմից կատարվում է վերահսկողություն ՓՀԵԿ-երի շահագործման հետևանքների ուղղությամբ, այնուամենայնիվ ոլորտի մասնագետները պնդում են, որ տարիներ շարունակ Հայաստանում ՓՀԵԿ-երի կառուցման և դրանց շահագործման ներկայիս մեթոդները վտանգ են ներկայացնում երկրի էկոհամակարգի համար:

Առաջարկ. իրականացնել պատշաճ վերահսկողություն փոքր ՀԵԿ-երի շահագործման նկատմամբ, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման արդյունքում առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումը և էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:

5. 2015թ.-ի ընթացքում ևս լուծում չի տրվել Քաջարան քաղաքում օդի աղտոտվածության խնդրին:

Դեռևս 2014թ.-ին Քաջարան քաղաքի բնակիչների կողմից բարձրացվել էր Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի գործունեության արդյունքում քաղաքի՝ օրական 3-ից 4 ժամ ամբողջությամբ փոշու մեջ գտնվելու խնդիրը, որն առաջանում է²⁶⁰:

Ըստ Նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի մակերևութային ջրերի և մթնոլորտային օդի որակի մոնիտորինգի տվյալների՝ Քաջարան քաղաքում 2015թ.-ի նոյեմբեր ամսին կատարվել են պասիվ նմուշառիչներով օդային ավազանի որակի դիտարկումներ, և քաղաքի 15 դիտակետից վերցվել է 120 փորձանմուշ, որոնց ուսումնասիրությունը ցույց է տվել, որ մթնոլորտում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան նորմերը²⁶¹: Սակայն, բացի ծծմբի և ազոտի երկօքսիդներից, փոշին օդի գետնամերձ շերտի 4 աղտոտիչներից մեկն է և ներառված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցուցակում²⁶²: Այսպես, ըստ ՀՀ-ում ձևավորված գետնամերձ շերտի օդի որակի մոնիտորինգի հիբրիդային եռաշերտ մոնիտորինգային դիտացանցի՝ օդի որակի տեսանկյունից Քաջարանը ռիսկային և խոշոր քաղաքներից է²⁶³: Հետևաբար, Քաջարանում օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի շրջանակներում անհրաժեշտ է

²⁵⁹<http://www.ecolor.org/hy/news/energy/nature-protection-ministrer-was-presented-that-certain-shhps-in-vayots-dzor-cause-problems-for-irrigation/7680/>

²⁶⁰<http://ecolor.org/hy/news/air/alarm-signal-from-kajaran-our-children-in-hospital-because-of-dust-photos/6792/>

²⁶¹ http://www.armmonitoring.am/customPage.php?folder_name=2015&month_path=1&page_num=9

²⁶²<http://bit.ly/1AXfppv>, «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ, Երևան 2011թ., «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ բնապահպանության նախարարություն, <http://bit.ly/1DEzWyS>

²⁶³ <http://bit.ly/1AXfppv>

կատարել նաև փոշու մոնիտորինգ:

Ըստ Նախարարության հայտնած տվյալների՝ Քաջարան քաղաքում 2015թ-ին չի իրականացրել մթնոլորտային օդում փոշու որոշման կապակցությամբ դիտարկում՝ չնայած նրան, որ արդեն ձեռք են բերվել համապատասխան սարքավորումներ:

Նշենք, որ ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ և Հրազդան քաղաքների) մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները որոշվում են հետևյալ աղյուսակով՝²⁶⁴ Էլնելով տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	,4	0,0 5	0,0 3	1,5
10 - 50	,3	0,0 5	0,0 15	0,8
< 10	,2	0,0 2	0,0 08	0,4

Աղյուսակից կարելի է եզրակացնել, որ եթե բնակավայրի բնակչության քանակը 10.000-ից պակաս է կազմում, ապա այդ բնակավայրում մթնոլորտում առկա փոշին չպետք է գերազանցի 0,2 մգ/մ³, իսկ Քաջարան քաղաքում բնակչության թիվը կազմում է 8439-ը²⁶⁵: Այնուամենայնիվ, քաղաքում, որտեղ բաց եղանակով շահագործվում է պղնձամոլիբդենային հանքավայր, փոշու մոնիտորինգ դեռ չի իրականացվել:

Թեև 2016 թ.-ի Առաջին եռամսյակի դրությամբ Նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մոնիթորինգի նախապատրաստական աշխատանքները շարունակվում են և դրանք ավարտին հասցնելուց հետո կսկսվի մթնոլորտային օդում փոշու մոնիթորինգի իրականացումը, բայցևայնպես անհրաժեշտ է խնդրին առավել արագ լուծում տալ:

Առաջարկ. Քաջարան քաղաքում սեղմ ժամկետներում իրականացնել օդում փոշու թույլատրելի չափերի առկայության մշտադիտարկում և խախտում հայտնաբերելու դեպքում անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցներ:

²⁶⁴ ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ՝ http://www.armmonitoring.am/air_fone_part_1.php?page_name=9

²⁶⁵ <http://syunik.mtaes.am/about-communities/360/>

6. 2015թ.-ին պատշաճ կերպով վերահսկողություն չի իրականացվել ապօրինի անտառահատումների դեպքերի հայտնաբերման, ինչպես նաև դրանց կանխարգելման և բացառման ուղղությամբ:

Ինչպես 2014թ., այնպես էլ 2015թ-ի ընթացքում բնապահպանները մտավախություն են հայտնել Հայաստանի տարբեր մարզերում և Երևան քաղաքում շարունակական ապօրինի անտառահատումների վերաբերյալ՝ նշելով, որ էական քայլեր չեն ձեռնարկվում վերջիններիս կանխման հարցում²⁶⁶: Այսպես, մասնագետների պնդմամբ, Դսեղի և Եղեգնուտի անտառատնտեսություններում 1000-ից ավելի անօրինական ծառ է հատվել, որոնցից շուրջ 500-ը, 2015թ.-ի նոյեմբերի 3-ի դրությամբ, թարմ հատումներ են եղել²⁶⁷: Բնապահպանների պնդմամբ ծառերի մեծամասնությունը աճում էին 30 աստիճանից բարձր թեքություն ունեցող լանջերին, որտեղ ընդհանրապես հատումներ իրականացնել չի կարելի²⁶⁸:

Դեռևս 2013թ.-ին ապօրինի հատված ծառերի ընդհանուր քանակը կազմել էր 2031 հատ՝ 2012 թ.-ի 1860-ի համեմատ²⁶⁹: 2014թ.-ին ապօրինի հատվել է 2114 ծառ:

2015թ.-ի պաշտոնական տվյալների ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ապօրինի ծառահատումների կանխարգելման ոլորտում ընթացիկ տարում դրական զարգացում չի գրանցվել: Այսպես, ՀՀ անտառային տարածքներում իրականացված աշխատանքների արդյունքում կազմվել է վարչական իրավախախտման 24.8 մլն.դրամի 358 տուգանքի ակտ և 134.5 մլն.դրամի շրջակա միջավայրին պատճառած վնասի հատուցման 395 ակտ: Ավելին, հայտնաբերվել է 2710 ապօրինի հատված ծառ:

Ըստ Նախարարության տվյալների՝ տեսչական աշխատանքների ծավալները մեծացել են, ինչպես նաև Նախարարությունը ստուգումներ է իրականացրել մամուլում տեղ գտած ապօրինի ծառահատումների վերաբերյալ ահազանգերի հիման վրա: Ընդհանուր առմամբ Նախարարությունը հայտնաբերել է ապօրինի հատված 96 ծառ՝ 7,077մլն դրամի շրջակա միջավայրին հասցված վնաս:

Թեև Նախարարության կողմից 2015 թվականին իրականացվել են մի շարք տեսչական ստուգումներ, այնուամենայնիվ, բնապահպանների ահազանգերը վկայում են ապօրինի ծառահատումների առկայության մասին:

Առաջարկ. ձեռնարկել արդյունավետ կանխարգելիչ միջոցներ անօրինական ծառահատումների դեպքերի բացառման կապակցությամբ

²⁶⁶<http://www.ecolor.org/hy/news/officials/illegal-tree-felling-in-dilijan-national-park/7415/>,

<http://www.ecolor.org/hy/news/forest/alarm-signal-illegal-tree-felling-in-shikahogh-state-reserve/7707/>

²⁶⁷<http://www.ecolor.org/hy/news/sos/over-1000-illegally-felled-down-trees-in-dsegh-and-yeghegnut-forestry-enterprises/7786/>

²⁶⁸<http://www.ecolor.org/hy/news/sos/over-1000-illegally-felled-down-trees-in-dsegh-and-yeghegnut-forestry-enterprises/7786/>

²⁶⁹ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2013 թ.-ի տարեկան զեկույց, <http://ombuds.am/library/library/page/101/type/3>

7. Նախարարությունն իր լիազորությունների շրջանակներում չի իրականացրել անհրաժեշտ միջոցառումներ՝ ուղղված քաղցրահամ և ստորերկրյա ջրային ռեսուրսների ողջամիտ և համալիր օգտագործմանն ու պահպանությանը:

Դեռևս 2014թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում բարձրաձայնվել է ստորերկրյա ջրերի ոչ ողջամիտ օգտագործման խնդիրը, որը կարող է հանգեցնել ջրային ռեսուրսների սպառմանը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական մի շարք խնդիրների առաջացմանը:

Այսպես, խնդիրը կապված է արտեզյան ջրերի ոչ արդյունավետ և ապօրինի օգտագործման հետ, ինչը, ոլորտի մասնագետների պնդմամբ, ջրային պաշարների օգտագործման թույլատրելի սահմանի անցում է²⁷⁰:

Այսպես, ՀՀ Ջրային օրենսգրքի (Օրենսգիրք) համաձայն՝ ջրային ռեսուրսներ են համարվում բոլոր բնական վերականգնվող ջրային պաշարները՝ մակերևութային և ստորերկրյա (ստորգետնյա) ջրերը: Իսկ Նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության (Գործակալություն) կանոնադրության համաձայն՝ Գործակալությունը տրամադրում է ջրօգտագործման թույլտվություն²⁷¹, որը ներառում է ջրային ռեսուրսից ջրառի, այդ թվում՝ *ստորերկրյա քաղցրահամ ջրերի* արդյունահանման և ջրի վերադարձի հետ առնչվող անձանց իրավունքներն ու պարտականությունները²⁷²:

Ավելին, Գործակալության խնդիրներից է ՀՀ ջրային ռեսուրսների պահպանությանն ու արդյունավետ օգտագործմանն նպատակով քաղցրահամ և ստորերկրյա ջրային ռեսուրսների քաղաքականության ձևավորումն ու կառավարումը²⁷³, մինչդեռ վերջին տարիներին բնապահպանների ահազանգերը վկայում են քաղցրահամ և ստորերկրյա ջրային ռեսուրսների կառավարման բացթողումների մասին:

Այսպես, բնապահպանների կողմից արձանագրված տվյալների ուսումնասիրության համաձայն՝ վերջին տարիներին տեղի է ունեցել Արարատյան արտեզյան ավազանի դրական ճնշում ունեցող ստորերկրյա ջրերի տարածքի մակերեսի կրճատում 3 անգամ՝ 32 760 հա-ից (1983թ.) մինչև 10 706 հա (2013թ.), և արդյունքում՝ 31 համայնք մասամբ կամ ամբողջությամբ զրկված է ինքնաշատրվանող հորատանցքերով ստացվող ոռոգման և խմելու ջրից²⁷⁴: Ավելին, տեղի է ունեցել Էջմիածնի տարածաշրջանի 303 ինքնաշատրվանող հորատանցքերի պիեզոմետրիկ

²⁷⁰ <http://www.armecofront.net/lrahos/haghordum-hancgorcutian-masin/>

²⁷¹ ՀՀ կառավարության 2004 թ.-ի ապրիլի 14-ի թիվ 649-Ն որոշումամբ հաստատված ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կանոնադրություն, բաժին 3-րդ, հոդված 8

²⁷² ՀՀ ջրային օրենսգրք, հոդված 1

²⁷³ ՀՀ կառավարության 2004 թ.-ի ապրիլի 14-ի թիվ 649-Ն որոշումամբ հաստատված ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կանոնադրություն, բաժին 2-րդ, հոդված 7, կետ ա)

²⁷⁴ <http://www.armecofront.net/lrahos/haghordum-hancgorcutian-masin/>

մակարդակների նվազում և ելքերի կրճատում մինչև 10 անգամ, վտանգվել է Մեծամորի ատոմակայանի աշխատանքն ու 29 համայնքների 8180 հա հողատարածքների ոռոգումը²⁷⁵:

Արդյունքում, բնապահպանները շարունակել են ահազանգել ստորերկրյա ջրերի ոչ ողջամիտ օգտագործումից բխող վտանգավոր հետևանքների մասին, և չեն ձեռնարկվել բավարար ծրագրեր և միջոցառումներ՝ այդ վտանգների չեզոքացման ուղղությամբ:

Առաջարկ. իրականացնել քաղցրահամ և ստորերկրյա ջրային ռեսուրսների կառավարման անհրաժեշտ ծրագրեր դրանց պահպանության ու արդյունավետ օգտագործման նպատակով:

²⁷⁵ Նույն տեղում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. ՀՀ կողմից ստորագրված «Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին» կոնվենցիայի պահանջներից ելնելով՝ Նախարարությունը մշակել է «ՀՀ 2004 թվականի հոկտեմբերի 7-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որում նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել որոշման թիվ 2 հավելվածի՝ տեղափոխման ենթակա հուշարձանների ցուցակում ընդգրկված և դեռևս չապամոնտաժված հուշարձանները: Նախարարությունը վերոնշյալ նախագիծը ներկայացրել է ՀՀ քաղաքաշինության նախարարություն և Երևանի քաղաքապետարան: Նախագծով նախատեսվում է 8 հուշարձանների պահպանել իրենց տեղում: Նախագծի վերաբերյալ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը և Երևանի քաղաքապետարանը տվել են իրենց դրական եզրակացությունները:

Առկա թերություններն ու խնդիրները

1. 2013 թ.-ից ի վեր Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվում է մշակութային շենքերի, վայրերի, ինչպես նաև մշակութային միջոցառումների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չլինելու խնդիրը:

Մշակութային շենքերը, վայրերը, ինչպես նաև մշակութային միջոցառումները հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու ու մատչելի դարձնելու ուղղությամբ 2015թ.-ի ընթացքում Նախարարության կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ միջոցառումներ: Դեռևս 2014թ.-ի տարեկան զեկույցում բարձրացվել էր այն խնդիրը, որ բազմաթիվ են այն կինոթատրոնները, թատրոնները և այլ մշակութային կառույցները, որոնք ընդհանրապես մատչելի չեն հենաշարժողական, ինչպես նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

ՀՀ-ում գործող մշակութային կառույցների շենքերը հիմնականում բավականին հին են և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի ու ելքի համար հարմարեցված չեն: Իսկ որոշ հին մշակութային կառույցներ, իրենց ճարտարապետական լուծումների առանձնահատկություններից ելնելով, նույնիսկ

չունեն համապատասխան հարմարություններ դրանցում հետագայում հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքն ապահովելու համար:

Նախարարությունից հայտնել են, որ նախկինում կառուցված և այժմ գործող մշակութային կառույցներում 32 կազմակերպություններ կարող են մշակութային ծառայություններ մատուցել և հարմարեցված կամ մասամբ են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի ու ելքի համար²⁷⁶: Իսկ 16 մշակութային հաստատություններ չունեն թեքահարթակներ²⁷⁷:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիան ամրագրում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը և պարտավորեցնում պետությանը ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նրանց համար մշակութային գործերի, հեռուստահաղորդումների, ֆիլմերի, թատրոնի և մշակութային ներկայացումների ու ծառայությունների մատչելիությունն ապահովելու համար²⁷⁸: Մատչելիությունն իր հերթին բաղկացած է անհատների ու համայնքների համար արդյունավետ և կոնկրետ հնարավորություններից՝ լիարժեքորեն վայելելու մշակույթը՝ բոլորին ֆիզիկապես և ֆինանսապես հասանելի լինելու միջոցով՝ ինչպես քաղաքային այնպես էլ գյուղական բնակավայրերում առանց խտրականության²⁷⁹: Կոմիտեն 2014թ.-ի Հայաստանի երկրորդ և երրորդ համատեղ պարբերական զեկույցների վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում իր մտահոգությունն է հայտնել մշակութային միջոցառումների և վայրերի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար սահմանափակ մատչելիության վերաբերյալ²⁸⁰:

Խնդրի կապակցությամբ դեռևս 2013թ.-ին Նախարարությունից հայտնել էին, որ հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային շինությունների հարմարեցնելու խնդիրը կարող է իր լուծվել միայն մշակութային կազմակերպությունների հիմնանորոգումների դեպքում: Բայցևայնպես, ոչ բոլոր մշակութային հաստատություններն են ենթակա հիմնանորոգման: Ուստի, այն բոլոր մշակութային հաստատություններում, որտեղ բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցելու ապահովման համար անհրաժեշտ պայմանները, անհրաժեշտ է նախատեսել ժամանակավոր լուծումներ՝ թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ:

²⁷⁶9-ը գտնվում է առաջին հարկում և թեքահարթակների անհրաժեշտություն չկա, 14-ը տեղում ստեղծում է բոլոր հնարավորությունները, 9-ը ունի թեքահարթակներ

²⁷⁷ Օրինակ, Հայաստանի պատմության թանգարան, Ա. Բասահայանի տուն-թանգարան, Ե. Չարենցի տուն-թանգարան, Ա. Սպենդիարյանի տուն-թանգարան, Ա. Խաչատրյանի տուն-թանգարան, Երևանի կամերային պետական թատրոն, Հայաստանի երգի պետական թատրոն և այլ:

²⁷⁸ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 30

²⁷⁹Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե,

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fGC%2f21&Lang=en

²⁸⁰Committee on Economic, Social and Cultural Rights Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia* E/C.12/ARM/CO/2-3 <file:///H:/Data/Downloads/G1408576.pdf>

Ելնելով մշակութային հաստատությունների շենքերի տեխնիկական պայմաններից՝ հնարավորության դեպքում, հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի ու ելքի համար այդ շենքերը հարմարեցնելու խնդիրը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում²⁸¹:

Բայցնայնպես, ՀՀ-ում բազմաթիվ մշակութային հաստատություններ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և ելքի, ինչպես նաև նշված շինությունների ներսում նրանց ազատ տեղաշարժի համար:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել ,անհրաժեշտության դեպքում նախատեսելով նաև ժամանակավոր լուծումներ (թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ), մշակութային շենքերը, վայրերը, միջոցառումները հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցնելու ու մատչելի դարձնելու ուղղությամբ:

2. 2015թ.-ի ընթացքում լուծում չի ստացել սոցիալապես անապահով անձանց՝ մշակութային կյանքին մասնակցելու և գիտության նվաճումներից օգտվելու խոչընդոտների վերացման խնդիրը:

2015թ.-ի ընթացքում Նախարարության կողմից սոցիալապես անապահով անձանց համար չեն սահմանվել համապատասխան գեղչեր, այդ թվում՝ թանգարանների, թատրոնների, կինոթատրոնների և համերգասրահների տոմսերի համար:

ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը սահմանում է յուրաքանչյուր մարդու՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը: Նշված իրավունքի լրիվ իրականացման նպատակով Դաշնագրին մասնակցող պետությունների կողմից պետք է ձեռնարկվեն միջոցներ, այդ թվում այն միջոցները, որոնք անհրաժեշտ են կրթության և մշակույթի նվաճումների պաշտպանության, զարգացման և տարածման համար: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ընդհանուր մեկնաբանությամբ նշել է, որ մատչելիությունը արտահայտվում է նաև մշակույթը բոլորին ֆինանսապես հասանելի լինելու միջոցով՝ ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում առանց խտրականության²⁸²:

Խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, որ թանգարաններում շարունակվել է դպրոցական տարիքի երեխաների, ուսանողների և թոշակառուների համար սահմանված մշտական այցելության տոմսի արժեքի (ոչ ավելի, քան 300 դրամ) արտոնության կիրառումը, ինչպես նաև բոլոր այցելուների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը սահմանված անվճար այցելության

²⁸¹ ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 303-Ն որոշում

²⁸² http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FGC%2F21&Lang=en

արտոնության կիրառումը²⁸³:

Հասարակության անապահով և խոցելի խմբերի համար վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի ներդրումը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում²⁸⁴:

Ըստ Նախարարության տրամադրած տեղեկությունների, հասարակության անապահով խմբերի համար թանգարաններում և գրադարաններում շարունակում են տրամադրել որոշակի արտոնություններ, ի կատարումն վերոնշյալբայցնայնպես միջոցառումների ծրագրի, բայցնայնպես վերջիններս ուղղակիորեն նախատեսված չեն հենց սոցիալապես անապահով անձանց համար:

Գեռես 2014թ.-ին Նախարարությունից հայտնել էին, որ վճարովի մշակութային ծառայություններից օգտվելու զեղչերի համակարգի ներդրման նպատակով Նախարարության կողմից ուսումնասիրվում է արտերկրի փորձը, ինչպես նաև զեղչային համակարգի կիրառման հնարավորությունների շուրջ քննարկումներ են կազմակերպվում թատրոնների և համերգասրահների տնօրենների հետ:

Այսպիսով, 2015թ.-ի ընթացքում Նախարարության կողմից սոցիալապես անապահով անձանց՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի իրացումն ապահովելու համար չեն իրականացվել բավականաչափ ծրագրեր և չեն կիրառվել անհրաժեշտ արտոնությունները:

Առաջարկ. սահմանել զեղչեր և այլ արտոնություններ սոցիալապես անապահով անձանց՝ մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի լիարժեք իրացման ապահովման համար:

²⁸³ ՀՀ մշակույթի նախարարի 2009թ.-ի օգոստոսի 3-ի «Թանգարանի մշտական ցուցադրության այցելության և բացատրության (էքսկուրսիայի) տոմսերի գների և արտոնությունների մասին» թիվ 458-Ս հրամանի 2-րդ, 3-րդ կետեր

²⁸⁴ ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 303 -Ն որոշում

III ԲԱԺԻՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև ստորագրվել է «Աջակցություն Հայաստանում ՓՄՁ-ների զարգացմանը» ֆինանսավորման համաձայնագիրը, որի նպատակն է ընդլայնել Հայաստանում մասնավոր հատվածի զարգացման հնարավորությունները՝ բարելավելով բիզնես և ներդրումային միջավայրը փոքր և միջին ձեռնարկությունների համար²⁸⁵:

2. «Կանանց ձեռներեցության աջակցություն» ծրագրի շրջանակներում ՀՀ Արմավիրի, Արարատի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի Արմավիր, Արտաշատ, Ապարան և Չարենցավան քաղաքներում կազմակերպվել են դասընթացներ «Համակարգչային գրագիտությունը Հայաստանի գործարար կանանց համար» թեմայով, որոնց մասնակցել են 68 գործարար կանայք:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Բավարար քայլեր չեն ձեռնարկվել սպառողներին իրենց իրավունքների վերաբերյալ պատշաճ իրազեկելու ուղղությամբ:

Ոլորտի մասնագետներ և մի շարք քաղաքացիներ բարձրաձայնել են սպառողների՝ իրենց իրավունքների մասին ոչ բավարար իրազեկվածության մասին: Թեև սպառողների իրազեկումը հնարավոր է իրականացնել տեղեկատվական տարբեր համակարգերում զետեղված նյութերի և հրատարակությունների միջոցով, այնուամենայնիվ Նախարարության Շուկայի վերահսկողության պետական տեսչությունը (այսուհետ՝ Տեսչություն) տարիներ շարունակ սպառողներին իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկումն իրականացնում է միայն իր պաշտոնական կայքում²⁸⁶ զետեղված տեղեկատվության միջոցով: Ավելին, կայքում զետեղված

²⁸⁵ <http://www.mineconomy.am/uploads/20152912151155929.pdf>

²⁸⁶ <http://www.prosafe.am/am/>

տեղեկատվությունը շատ դեպքերում կարող է հասանելի չլինել այն անձանց համար, ովքեր համացանցից օգտվելու հնարավորություն չունեն:

Սպառողների իրավունքների պաշտպանության գործում առաջնային նշանակություն ունի սպառողների լայն շրջանակի՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկության ապահովումը²⁸⁷: Սպառողների պաշտպանության համատեքստում հանրության իրազեկումն իր մեջ ներառում է ինչպես կոնկրետ ապրանքների վերաբերյալ հանրությանը տեղեկատվության տրամադրում, այնպես էլ սպառողին իր իրավունքների և դրանց պաշտպանության եղանակների ու մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

Կարևորելով հանրության իրազեկման հարցը՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունն (OECD-SZՉԿ) իր «Սպառողական ուսուցում. ՏՀՉԿ-ի Սպառողական ռազմավարության հանձնաժողովի ռազմավարական առաջարկություններ» փաստաթղթում²⁸⁸ կարևորվել է սպառողական ուսուցումը դպրոցներում²⁸⁹, զանգվածային լրատվության միջոցների օգտագործման նոր միջոցները²⁹⁰, ինչպես նաև համացանցի մեծածավալ ռեսուրսների լիարժեք օգտագործումը²⁹¹: Սպառողների պաշտպանությանն առնչվող հարցերում հատուկ ուշադրություն է պետք դարձնել նաև անապահով, ցածր եկամուտ և գրագիտություն ունեցող սպառողների կարիքներին՝ թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերում²⁹²:

Հարցի կապակցությամբ կատարված ուսումնասիրությունները²⁹³ ցույց են տալիս, որ սպառողների իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով կարելի է նաև ստեղծել մեկ միասնական խորհրդատվական համակարգ, որն անհրաժեշտության դեպքում կտրամադրի ազատ, անկախ, կոնֆիդենցիալ և

²⁸⁷«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

²⁸⁸Consumer Education, Policy Recommendations of the OECD'S Committee on Consumer Policy, 2009
<http://www.oecd.org/internet/consumer/44110333.pdf>

²⁸⁹ՏՀՉԿ առաջարկություններ, էջ 5, (դպրոցները հնարավորություն են տալիս սովորեցնելու երեխաներին սպառողական խնդիրների մասին և օգնելու զարգացնելու կարևոր հմտություններ, ինչի համար անհրաժեշտ է, որպեսզի ուսուցիչները ծանոթ լինեն սպառողական խնդիրներին և ունենան անհրաժեշտ ուսումնական նյութեր):

²⁹⁰ՏՀՉԿ առաջարկություններ, էջ 6. (Չնայած նրան, որ որոշ սպառողական ուսուցման քարոզարշավներ (campaigns) հանրության լայն շերտերում տեղեկատվության տարածման համար օգտագործում են ՋԼՄ-ները, անհրաժեշտ է ուսումնասիրել ՋԼՄ-ների օգտագործման նոր միջոցներ՝ իրազեկության ապահովման համար):

²⁹¹ՏՀՉԿ առաջարկություններ, էջ 6. Համացանցն, իր ռեսուրսների մեծ զանգվածով՝ հաղորդակցման ուղիներով, առցանց գործիքներով, ինչպիսիք են ուսումնական պորտալները, հարցումները, խաղերը, առցանց սոցիալական ցանցերը, բլոգերը, առցանց նորությունները և տեսանյութերը, պետք է օգտագործվեն առավել լիարժեք սպառողների իրազեկությունն ապահովելու համար:

²⁹²http://www.consumersinternational.org/media/33866/consumption_en.pdf

²⁹³Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում գործող սպառողների իրազեկման միասնական համակարգը (National Association of Citizens Advice Bureaux; Department for Business, Innovation and Skills)՝ քաղաքացիների խորհրդատվության բյուրոյի ազգային ասոցիացիայի շրջանակներում, որը տրամադրում է ազատ, անկախ, կոնֆիդենցիալ և անկողմնակալ խորհրդատվություն բոլորին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

անկողմնակալ խորհրդատվություն բոլորին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ում սպառողների իրազեկության մակարդակը ցածր է, անհրաժեշտ է ձեռնարկել իրավական և գործնական քայլեր ոչ միայն տեսչական մարմնի կողմից տնտեսավարող սուբյեկտների իրազեկման ապահովման²⁹⁴ միջոցառումների իրականացման ուղղությամբ, այլ նաև կիրառելով ՏՀԶԿ առաջարկությամբ նախատեսված սպառողների իրազեկման ավելի լայն մոտեցումները:

Առաջարկ. իրականացնել սպառողների իրազեկման բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև այլ մարմինների հետ համագործակցությամբ ուսումնասիրել մեկ միասնական խորհրդատվական համակարգ ներդնելու հնարավորությունը:

2. Բազմաթիվ մանրածախ առևտրի կետերում հրաժարվել են սպառողների կողմից գնված ապրանքը ետ վերցնել կամ փոխանակել՝ խախտելով սպառողների իրավունքները, իսկ Տեսչությունը չի իրականացրել բավարար միջոցառումներ սպառողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Գնված ապրանքը փոխարինելու կամ ետ վերցնելու սպառողի իրավունքի խախտումները շարունակում են արդիական մնալ նաև 2015թ. -ի ընթացքում:

Ստացված տեղեկատվության համաձայն՝ բազմաթիվ առևտրի կետեր, խախտելով օրենքը, հրաժարվել են ընդունել (կամ փոխանակել) գնված ապրանքը և վերադարձնել վճարված գումարը: Մինչդեռ, ապրանքը փոխարինելու և վերադարձնելու գնորդի իրավունքի պատշաճ իրականացումն ենթադրում է, որ սահմանված կարգի, ժամկետների պահպանման և փոխարինելու համար անհրաժեշտ ապրանքի բացակայության դեպքում գնորդն իրավունք ունի վաճառողին վերադարձնել ձեռք բերած ապրանքը և ստանալ դրա դիմաց վճարած գումարը²⁹⁵:

Հարցի կապակցությամբ Նախարարությունից հայտնել են, որ տարբեր առևտրի կետերում առկա գնված ոչ պարենային ապրանքի վերադարձնելն արգելող ցուցանակների վերացման ուղղությամբ կազմակերպվել են քննարկումներ սպառողների հասարակական կազմակերպությունների և տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչների հետ, որի ընթացքում վերջիններիս պարզաբանվել է խնդիրը: Սակայն նշված միջոցառումների իրականացումը գործնականում չի հանգեցրել խնդրի վերացմանը, ինչի մասին վկայում են ինչպես փոքր առևտրի կրպակներում, այնպես էլ մի շարք մեծ առևտրի կենտրոններում գնված ապրանքն ետ վերցնելու կամ փոխանակելու սպառողների իրավունքի խախտման դեպքերը:

²⁹⁴«Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենք, հոդված 13

²⁹⁵ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 517, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 23

Այստեղ, խնդիրն այն է, որ ոլորտը կարգավորող իրավական ակտերում առկա ձևակերպումները տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք են տալիս: Այսպես, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված է պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինելու կամ վերադարձնելու գնորդի իրավունքը, ինչն ենթադրում է, որ սպառողները կարող են փոխարինել կամ վերադարձնել ոչ միայն անպատշաճ (ոչ պատշաճ) այլ նաև պատշաճ վիճակում գտնվող ապրանքը՝ պահպանելով օրենքով սահմանված որոշ պայմաններ (օրինակ՝ ապրանքը չի օգտագործվել, պահպանված են դրա սպառողական հատկությունները, առկա է ապրանքային կամ դրամարկղային չեկը և այլն):

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հողվածին, ապա վերջինս նախատեսում է պարզապես ապրանքը փոխարինելու գնորդի իրավունքն առանց նշելու տվյալ ապրանքի պատշաճ վիճակում գտնվելու մասին, ինչն էլ հնարավորություն է ստեղծում տնտեսվարող սուբյեկտների համար տարաբնույթ մեկնաբանելու օրենքը՝ նշելով, որ տվյալ հողվածով ապրանքի վերադարձման կանոնները չեն վերաբերում պատշաճ որակի ապրանքներին, այլ վերաբերում են միայն այն դեպքերին, երբ գնորդին վաճառվել է անպատշաճ որակի ապրանք:

Օրենսդրական նմանատիպ ձևակերպումները գործնականում հանգեցնում են նույնաբովանդակ իրավանորմի տարատեսակ մեկնաբանությունների, ինչի արդյունքում խախտվում են սպառողների իրավունքները:

Հարցի կապակցությամբ առկա հաջորդ խնդիրը վերաբերում է խախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտներին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցին: Այսպես, սպառողների իրավունքների պաշտպանությունը Տեսչության նպատակներից և խնդիրներից է²⁹⁶: Իր նպատակների և խնդիրների իրականացման համար Տեսչությունն, օրենքով սահմանված կարգով և դեպքերում, իրականացնում է սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառներում խախտում թույլ տված տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ գլխավոր պետական տեսուչի կողմից համապատասխան պատասխանատվության միջոցների, այդ թվում՝ վարչական պատասխանատվություն կիրառում²⁹⁷:

Սակայն գործող օրենսդրությամբ²⁹⁸ Տեսչությունն օժտված չէ մանրաձախ առևտրի կետերից սպառողների կողմից գնված ապրանքն ետ վերցնելուց կամ փոխանակելուց հրաժարվելու գործընթացում պատասխանատվության ենթարկելու համապատասխան տնտեսվարող սուբյեկտներին: Առկա իրավակարգավորմամբ՝ սպառողներն իրենց խախտված իրավունքների պաշտպանության իրականացումը կարող են իրականացնել բացառապես դատական կարգով, սակայն, հաշվի առնելով

²⁹⁶«Շուկայի վերահսկողության պետական տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.04.2003թ.-ի թիվ 524-Ն որոշում, <http://mineconomy.am/uploads/22.pdf>

²⁹⁷Տե՛ս նույն տեղում

²⁹⁸ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հողված 244⁷

դատական հավելյալ ծախսերն ու դատական համակարգի ծանրաբեռնվածությունը, ոչ բոլոր դեպքերում են սպառողները դիմում դատարան: Արդյունքում, ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ սպառողների իրավունքները խախտվում են, իսկ խախտում թույլ տված անձինք փաստացի չեն ենթարկվում պատասխանատվության:

Թեև ընթացիկ տարում Նախարարության կողմից ներկայացվել է օրենսդրական փոփոխությունների փաթեթ, որով, մասնավորապես, նախատեսվում էր, ի թիվս այլ իրավական ակտերի, նաև փոփոխություններ կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքում՝ սահմանելով պատշաճ որակի ոչ պարենային ապրանքը փոխարինելու կամ վերադարձնելու գնորդի իրավունքը, սակայն նշված օրենսդրական փոփոխությունները դեռևս չեն ընդունվել Ազգային ժողովի կողմից:

Ավելին, ստացվում է, որ օրենսդրական բավարար լծակներ առկա չեն Տեսչության կողմից սպառողների իրավունքների պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:

Առաջարկ. հնարավորինս սեղմ ժամկետում Ազգային ժողով ներկայացնել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև լրամշակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը» վերտառությամբ 244⁷ հոդվածը՝ ընդլայնելով խնդրի կապակցությամբ Տեսչության իրավասությունը:

3. Չի իրականացվել պատշաճ վերահսկողություն խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ:

Մի շարք հասարակական կազմակերպություններ²⁹⁹ մշտապես բարձրաձայնել են, որ ՀՀ ներկրվող խաղալիքների մեծ մասի որակի և անվտանգության նկատմամբ չի իրականացվում պատշաճ վերահսկողություն:

Թեև օրենսդրությամբ³⁰⁰ սահմանված է խաղալիքների (խաղերի) արտադրության համար ոչ թույլատրելի հումքերն ու նյութերը, այնուամենայնիվ ոլորտի մասնագետների պնդմամբ՝ մասնագիտացված և ոչ մասնագիտացված խաղալիքների խանութներում վաճառող խաղալիքներում առկա են ծանր մետաղներ: Դեռևս 2013թ.-ին հասարակական կազմակերպությունների³⁰¹ կողմից իրականացված հետազոտության արդյունքում պարզ էր դարձել, որ տարբեր խանութներից գնված խաղալիքների զգալի մասը պարունակել են առնվազն մեկ ծանր մետաղ (կապար, սնդիկ, բրոմ և այլն): Չնայած քննարկվող ոլորտում առկա խնդիրներին՝ Տեսչության

²⁹⁹Խնդիրը բարձրացվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակցի և «Իրազեկ և պաշտպանված սպառող» ՀԿ-ի հանդիպման ժամանակ, ինչպես նաև դեռևս 2013թ.-ին «Հայ կանաչք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից խնդրի վերաբերյալ կատարվել է հետազոտություն

³⁰⁰ՀՀ առողջապահության նախարարի 26.03.2007թ.-ի թիվ 539-Ն որոշում

³⁰¹ <http://www.a1plus.am/75949.html>

կողմից խաղալիքներում ծանր մետաղների պարունակությունը պարզելու նպատակով արտադրանքի լաբորատոր փորձարկումներ չեն իրականացվել³⁰²:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Նախարարության Տեսչության պաշտոնական կայքէջում³⁰³ վտանգավոր ապրանքների, այդ թվում՝ վտանգավոր խաղալիքների վերաբերյալ առկա տեղեկատվությունն ամբողջական չէ և չի ապահովում հարցի առնչությամբ սպառողների պատշաճ իրազեկումը:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Տեսչությունը պետք է պատշաճ վերահսկողություն իրականացնի շուկայում առկա խաղալիքների որակի և անվտանգության նկատմամբ:

Առաջարկ. իրականացնել լաբորատոր փորձարկումներ մասնագիտացված և ոչ մասնագիտացված խաղալիքների խանութներում՝ խաղալիքներում ծանր մետաղների պարունակությունը պարզելու նպատակով:

4. Պատշաճ վերահսկողություն չի իրականացվել շուկայում շրջանառության մեջ գտնվող գազաբալոնների փորձարկման և տեղադրման գործընթացների, ինչպես նաև նոր արտադրված և ներմուծվող գազաբալոններին ներկայացվող անվտանգության նորմերի և դրանց ապահովման մեխանիզմների նկատմամբ:

Տարիներ շարունակ բազմաթիվ քաղաքացիներ և հասարակական կառույցներ իրենց մտահոգությունն են հայտնել առ այն, որ գազաբալոնների շահագործման ոլորտում առկա են մի շարք խնդիրներ:

Մամուլում տեղ գտած տեղեկատվության համաձայն՝ 2012-2015թթ.-ների ընթացքում գազալցակայաններում գրանցվել է 18 պայթյուն, որոնցից չորսական դեպք գրանցվել է Երևանում և Կոտայքի մարզում, երեք դեպք՝ Արմավիրի մարզում և մեկ կամ երկու դեպքեր Արագածոտնի, Գեղարքունիքի, Վայոց ձորի, Արարատի, Լոռու մարզերում: 18 պայթյուններից միայն 5-ը գրանցվել է 2015թ.-ի մայիսին՝ մեկը մյուսի հետևից, մի քանիսն էլ՝ մահվան ելքով³⁰⁴:

Հարկ է նշել, որ գազաբալոններին ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀ կառավարության որոշմամբ³⁰⁵: Նշված որոշմամբ սահմանված ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը, սակայն, չի համապատասխանում ներկայիս օրենսդրության պահանջներին և չի կարող հանդիսանալ տեխնիկական կանոնակարգման առարկա, քանի որ «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ

³⁰²Տեղեկատվությունը վերցված է Մարդու իրավունքների պաշտպանի 2015թ.-ի Տարեկան զեկույցի կազմման նպատակով Նախարարությանն ուղղված հարցման պատասխաններից

³⁰³<http://www.prosafe.am/am/>

³⁰⁴<http://hetq.am/arm/news/61991/gazabalonic-minchev-paytyun-tanox-shxtan%E2%80%A4-ortex-e-tuyil-oxaky-tesanyut.html>

³⁰⁵ՀՀ կառավարության 28.09.2005թ.-ի «Մեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը և գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը հաստատելու մասին» թիվ 2388-Ն որոշում

օրենքի³⁰⁶ համաձայն՝ տեխնիկական կանոնակարգը փաստաթուղթ է, որով սահմանված են արտադրանքի (գործընթացների) վերաբերյալ տեխնիկական պահանջները, այդ պահանջներին համապատասխանության գնահատման ընթացակարգերը, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, պայմանանշաններին, արտադրանքի մակնշմանը, պիտակավորմանը, գրանցմանը ներկայացվող պահանջները:

Այնինչ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված են այլ նորմեր, մասնավորապես՝ տեղադրման կանոններ, ուստի նշված խնդրի լուծման կապակցությամբ անհրաժեշտ է նախաձեռնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

Հավելենք, որ ապրանքն արտադրելու, իրացնելու, պահելու, շահագործելու, փոխադրելու և օգտահանելու, ինչպես նաև ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու փուլերում տեխնիկական կանոնակարգերով և ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացում է Տեսչությունը³⁰⁷:

Չնայած նրան, որ շրջանառության մեջ գտնվող գազաբալոնների փորձարկման և տեղադրման գործընթացն առաջարկվել է³⁰⁸ իրականացնել լիցենզավորող կազմակերպությունների միջոցով, այնուամենայնիվ բաց են մնում նոր արտադրվող և ներմուծվող գազաբալոնների անվտանգության նորմերի սահմանման և համապատասխանության գնահատման գործընթացները, ուստի, համապատասխան օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն կա նաև տվյալ հարցի կապակցությամբ:

Առաջարկ. մշակել և ՀՀ կառավարությանը ներկայացնել գազաբալոնների անվտանգությանը ներկայացվող պահանջներ սահմանող տեխնիկական կանոնակարգ՝ ամրագրելով նոր արտադրվող և ներմուծվող գազաբալոնների պարտադիր համապատասխանության գնահատման պահանջ:

³⁰⁶«Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենք, հոդված 7

³⁰⁷«Շուկայի վերահսկողության պետական տեսչության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 23.04.2003թ.-ի թիվ 524-Ն որոշում, <http://mineconomy.am/uploads/22.pdf>

³⁰⁸Տե՛ս «ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն» գլխում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության³⁰⁹ (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Դրական զարգացումներ

1. 2015 թվականի ընթացքում մշակվել են մի քանի տասնյակ ենթաօրենսդրական իրավական ակտեր՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությանը ՀՀ մաքսային օրենսդրությունը կարգավորող ենթաօրենսդրական իրավական ակտերի համապատասխանեցման, մաքսային ընթացակարգերի մատչելիության և թափանցիկության ապահովման նպատակով՝ համաձայն ՀՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 27-ի «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 439-Ա որոշման:

2. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման հայեցակարգի նախագիծը, որը կոչված է համապատասխանեցնել ՀՀ «Գնումների մասին» օրենքը ստանձնած միջազգային պարտավորություններին:

3. Մշակվել է ՀՀ հարկային օրենսգրքի նախագիծ, որով առաջարկվում են հարկատեսակների և հարկային վարչարարության մեխանիզմների վերաբերյալ փոփոխություններ:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Հարկային մարմինը բազմաթիվ դեպքերում գործածել է քրեական գործ հարուցելու իր լիազորությունը՝ հարկադրելու հարկատուներին վճարել չվճարված հարկերը:

Կրկին մի շարք դժգոհություններ են ստացվել տնտեսավարող սուբյեկտներից,

³⁰⁹ՀՀ Նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության նախագահի 2002 թվականի մարտի 16-ի ՆՀ-1063 հրամանագրում փոփոխություն և լրացում կատարելու մասին» 2016 թվականի մարտի 1-ի թիվ ՆՀ-213-Ն հրամանագրով ՀՀ ֆինանսների նախարարությունը վերակազմակերպվել է և դրանից առանձնացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

որ գործածելով քրեական գործ հարուցելու իրենց լիազորությունները՝ հարկային մարմնի քննիչները անուղղակիորեն ճնշում են գործադրել հարկ վճարողների վրա, պարտադրելով վճարել չվճարված հարկերը, անգամ այն դեպքերում, երբ չի հաստատվել հարկատուի կողմից հակաիրավական արարք կատարելու փաստը:

Ըստ օրենքի՝ քրեական պատասխանատվություն առաջացնող մի շարք արարքների (օրինակ՝ կեղծ ձեռնարկատիրության, հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելու)³¹⁰ դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նա հատուցում է հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները³¹¹: Իսկ մի շարք դեպքերում, իմանալով, որ հարկ վճարողը կնախընտրի օգտվել օրենքով սահմանված քրեական պատասխանատվությունից ազատող դրույթից³¹² և արդյունքում կկատարի իր հարկային պարտավորությունը, հանցագործության կատարման փաստի առթիվ հարուցվել են քրեական գործեր³¹³:

Պրակտիկան ցույց է տալիս, որ հանցագործությամբ պատճառված վնասը և հաշվարկված տույժերն ու տուգանքները հատուցելու դեպքում քրեական պատասխանատվությունից ազատման դրույթի հաճախակի կիրառումը գործնականում վտանգ է պարունակում այնքանով, որքանով առանձին դեպքերում այն դառնում է հարկային մարմնի կողմից հարկ վճարողի վրա ճնշում գործադրելու և վերջինիս հարկային պարտավորությունների կատարումն արագացնելու միջոց՝ իր մեջ պարունակելով հակաիրավական ներգործության տարրեր:

Այսպես, Նախարարության քննչական վարչության կողմից 2015 թվականին հարուցվել և վարույթ է ընդունվել թվով 688 քրեական գործ, որից քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան 34 քրեական գործի շրջանակներում և քրեական գործի վարույթը կասեցվել է 38 գործով: Փաստորեն, հարուցված և վարույթ ընդունված 688 քրեական գործերից միայն 34-ն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: Նման պրակտիկան հարկային մարմնի կողմից կրկնվում է արդեն մի քանի տարի, ինչին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի նախորդ Տարեկան զեկույցներում: Համեմատության համար նշենք, որ Նախարարության տվյալների համաձայն՝ 2013 թվականին հարուցվել և վարույթ է ընդունվել 613 քրեական գործ, որից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել միայն 66-ը, իսկ 2014 թվականին հարուցվել և վարույթ է ընդունվել թվով

³¹⁰ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ. 188՝ առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացում, 189՝ կեղծ ձեռնարկատիրությունը, 193՝ կանխամտածված սնանկությունը, 194՝ կեղծ սնանկությունը, 205՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը

³¹¹ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 189, մաս 5

³¹² Տե՛ս՝ նույն տեղում

³¹³ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդվածներ. 188՝ առանց լիցենզիայի արտարժույթի առուվաճառքի իրականացում, 189՝ կեղծ ձեռնարկատիրությունը, 193՝ կանխամտածված սնանկությունը, 194՝ կեղծ սնանկությունը, 205՝ հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը

723 քրեական գործ, որից մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել միայն 37-ը:

Արդյունքում՝ քրեական գործի հարուցումը անուղղակիորեն հետ է պահում անձին իր իրավունքները դատական կարգով պաշտպանելուց, քանի որ, որպես կանոն, անձինք նախընտրում են շտապ վճարել հարկերը և տույժ-տուգանքները, այլ ոչ թե բողոքարկել դրանց հիմնավորվածությունը:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հարկային պարտավորությունների կատարմանը հարկադրելու նպատակով Հարկային մարմնի կողմից քրեական գործի հարուցման լիազորության չարաշահման բացառման ուղղությամբ:

2. Նախարարության անբավարար վերահսկողության հետևանքով չեն բացառվել հարկային և մաքսային ծառայողների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերը:

Տնտեսավարող սուբյեկտներից ստացվել են դժգոհություններ, որ հարկային և մաքսային ծառայողները շարունակել են զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ և օգտագործելով պաշտոնական դիրքը՝ օրենքով արգելված առավելություններ ձեռք բերել մյուս ձեռնարկատերերի նկատմամբ, ինչի արդյունքում սահմանափակվել է այլ անձանց՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, խաթարվել տնտեսական մրցակցությունն ու շուկայում հավասարությունը: Այնինչ, հարկային ծառայողն իրավունք չունի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ³¹⁴, իսկ հարկային ծառայող է համարվում հարկային մարմնում հարկային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված որևէ պաշտոն զբաղեցնող անձը³¹⁵: Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու արգելք է սահմանված նաև մաքսային մարմիններում որոշակի պաշտոններ զբաղեցնող անձի համար³¹⁶: Միաժամանակ, ՀՀ ֆինանսների նախարարության կանոնադրությունը սահմանում է³¹⁷, որ Նախարարության նպատակներից և խնդիրներից են հարկային³¹⁸ և մաքսային³¹⁹ մարմինների

³¹⁴ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13, մաս 3

³¹⁵ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

³¹⁶ «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 5 և 25

³¹⁷ ՀՀ կառավարության որոշում, 15 մայիս 2008 թվական N 503-Ն որոշում, Հավելված N 1

³¹⁸ ՀՀ կառավարության որոշում, 15 մայիս 2008 թվական N 503-Ն որոշում, Հավելված N 1, կետ 9, ենթակետ 12, «ա». Նախարարության նպատակները և խնդիրներն են հարկային ծառայության մասով՝ ՀՀ հարկային օրենսդրության և հարկային հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների կատարման ու կիրառման նկատմամբ օրենքով սահմանված կարգով հսկողության իրականացումը:

³¹⁹ ՀՀ կառավարության որոշում, 15 մայիս 2008 թվական N 503-Ն որոշում, Հավելված N 1, կետ 9, ենթակետ 13, «բ»: Նախարարության նպատակները և խնդիրներն են մաքսային ծառայության մասով՝ մաքսային օրենսդրության դրույթների կիրառման ապահովումը և մաքսային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

օրենսդրության և այլ իրավական ակտերի պահանջների կատարման կիրառման նկատմամբ վերահսկողության կամ հսկողության իրականացումը:

Նախարարությունը տվյալ ոլորտում իր մի շարք պարտավորություններից բացի պետք է բավարար վերահսկողություն իրականացնի՝ հարկային և մաքսային մարմինների ծառայողների կողմից օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը բացառելու նպատակով: Մինչդեռ, գործնականում, հարկային և մաքսային մարմինների որոշ ծառայողներ ոչ միայն շարունակել են ձեռնարկատիրությամբ զբաղվել, այլև, օգտագործելով իրենց դիրքը, ապօրինի առավելություններ ստացել այլ գործարարների նկատմամբ:

Առաջարկ. իրականացնել բավարար վերահսկողություն՝ հարկային և մաքսային մարմինների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերը վեր հանելու դրանք բացառելու ուղղությամբ:

3. Առանց բավարար հիմնավորումների և/կամ պատճառաբանության հարկային մարմնի աշխատակիցները տնտեսավարող սուբյեկտներից վերցնում են ստուգման նպատակներին անմիջապես չառնչվող նյութեր:

«Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի (Օրենք) համաձայն՝ հարկային մարմնի աշխատակիցն իր լիազորություններն իրականացնելիս իրավունք ունի վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին³²⁰: Այնուամենայնիվ, *«ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող և տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին չխոչընդոտող անհրաժեշտ նյութեր»* հասկացությունը հստակորեն սահմանված չէ, ուստի պարզ չէ, թե որ դեպքում կարող է անհրաժեշտ նյութը անմիջականորեն առնչվել ստուգման նպատակներին, ինչպես կամ որ մարմնի կողմից է դա որոշվում և, միաժամանակ, ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվում՝ արդյոք ստուգումն իրականացնող անձանց կողմից վերցված իրերը խոչընդոտո՞ւմ են տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին, թե՞ ոչ:

Նշվածը պրակտիկան վտանգում է անձանց տնտեսական գործունեության ազատության և սեփականության տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավունքը, քանի որ գործնականում ստացվում է, որ ստուգումն իրականացնող անձինք կարող են կամայականորեն «վերցնել» իրեր նույնիսկ այն դեպքում, երբ բացակայում է որևէ հիմնավորված կասկած, որ տնտեսավարող սուբյեկտը կատարել է խախտում կամ նշված իրը ստուգումների իրականացման համար որևէ էական նշանակություն ունի: Բացի այդ, նշված օրենսդրական անհստակությունը, որոշ դեպքերում, վտանգի տակ է դնում նաև տեղեկատվության

³²⁰ «Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 7, կետ «գ»

գաղտնիությունը, հաշվի առնելով, որ ստուգում իրականացնող անձանց կողմից կամայականորեն վերցված նյութերը կարող են պարունակել գաղտնաբառեր, առևտրային գաղտնիք հանդիսացող կամ անձնական տվյալներ:

Առաջարկ. Սահմանել օրենսդրական չափանիշներ՝ որոշելու ստուգման իրականացնողի կողմից իրերը վերցնելու՝ տնտեսավարող սուբյեկտի բնականոն աշխատանքին խոչընդոտելը, բացառելու համար ստուգման նպատակներին գործնականում անմիջապես չառնչվող նյութեր վերցնելու դեպքերը:

4. Մի շարք դեպքերում Հարկային մարմնի ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս խախտել են օրենքի կարգը, իսկ Նախարարությունը չի իրականացրել պատշաճ ծառայողական քննություններ՝ վերջիններիս պատասխանատվության ենթարկելու, հարկատուների իրավունքները պաշտպանելու և նման դեպքերը հետագայում բացառելու ուղղությամբ:

Պաշտպանին կրկին տեղեկություններ են փոխանցվել մի շարք գործարարներից, քաղաքացիներից հարկային մարմնի աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների, գործարարների, նրանց աշխատակիցների նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի վերաբերյալ: Մասնավորապես, դիմում-բողոքներ և դժգոհություններ են եղել մի շարք տնտեսավարողների մոտ, որոնք նշում են, որ հարկային ծառայողները գալիս են համաձայնության, որ որոշակի պարբերությամբ առևտրականներն իրենց «հարկեր» կմուծեն, որի դիմաց վերջիններիս մոտ հարկային ստուգումներ չեն իրականացվի: Բացի այդ, հարկատուները դժգոհել են, որ Նախարարության աշխատակիցները հերթական ստուգումների կամ օպերատիվ հետախուզական միջոցառումների շրջանակներում ոչ պատշաճ վերաբերմունքի, իրենց անհիմն պահանջները չկատարելու դեպքում քրեական գործ հարուցելու սպառնալիքների մասին: Այնինչ, ՀՀ Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարումը, ինչպես նաև քաղաքացիների, հարկատուների օրինական շահերի և իրավունքների պահպանումը հարկային մարմնի և մաքսային ծառայողների պարտականությունն են³²¹:

Ավելին, հարկային ծառայողի վարքագծի կանոնները (Կանոններ) նախատեսում են, որ հարկային ծառայողը պարտավոր է անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը, լինել քաղաքավարի հարկատուների, գործընկերների, ենթակա անձանց և ղեկավարության հետ և ապահովել մարդու և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը³²²: Մինչդեռ, Նախարարության աշխատակիցներն իրենց լիազորությունները կատարելիս

³²¹ Հարկային ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 10 և Մաքսային ծառայության մասին ՀՀ օրենք, հոդված 24

³²² ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 10-ի N 1624-Ն որոշմամբ հաստատված հարկային ծառայողի վարքագծի կանոններ, կետ 4

խախտել են ոչ միայն ՀՀ օրենսդրությունը, այլև ոտնահարել քաղաքացու և տնտեսավարողի իրավունքներն ու օրինական շահերը: Նշենք, որ ըստ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը ծառայողական քննություն է անցկացնում հարկային մարմնի ղեկավարի սահմանած կարգով³²³:

Ավելին, հարկային մարմինը պարտավոր է իրականացնել ծառայողական քննություն հարկային ծառայողների կատարած խախտումների վերաբերյալ³²⁴: Միաժամանակ, հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովը հսկողություն է իրականացնում հարկային ծառայողների վարքագծի կանոնների նկատմամբ³²⁵:

Նշենք, որ ըստ Նախարարության տվյալների՝ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից 2015թ-ի ընթացքում իրականացվել է ընդամենը 51 ծառայողական քննություն, որը ոլորտում առկա բողոքների համեմատ փոքր թիվ է կազմում:

Առաջարկ. խստացնել հսկողությունը հարկային մարմնի ծառայողների գործունեության նկատմամբ, ինչպես նաև համապատասխան բողոքների և տեղեկատվության ստացման դեպքում ապահովել պատշաճ ծառայողական քննության իրականացում, պատասխանատվության ենթարկել իրավախախտում թույլ տված աշխատակիցներին:

5. Խնդրահարույց է եղել է Ֆինանսների նախարարության Բողոքարկման խորհրդի անդամներից կազմավորված հանձնաժողովի ռոտացիոն համակարգը, անդամների և մրցույթի մասնակիցների միջև հնարավոր շահերի բախման ռիսկն, ինչպես նաև գնումների գործընթացի արդյունքների արտադատական բողոքարկումն անարդյունավետությունը:

Գնումների համակարգի բարեփոխումների շրջանակներում Ֆինանսների նախարարությունը ներդրել է գնումների բողոքարկման ինստիտուտը՝ ձևավորվելով Բողոքարկման խորհուրդ: Գնումների բողոքարկման խորհրդի (Խորհուրդ) անդամներից ձևավորվող հանձնաժողովի կազմավորման մոտեցումները ռիսկային են եղել, քանի որ օրենքով սահմանված ռոտացիոն համակարգում խեղաթյուրված է պատահական ընտրանքի մեխանիզմը:

Ըստ Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի «ՀՀ պետական գնումների մոնիտորինգային հաշվետվություն 2014-2015թթ.» զեկույցի³²⁶ (ԹԻ զեկույց)՝ ուսումնասիրված 191 բողոքների քննության պարագայում Խորհրդի 72 անդամից միայն 41 են մասնակցել, ինչը կասկածներ է առաջացնում ռոտացիոն

³²³ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43, մաս 3, կետ 2

³²⁴ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 1, կետ 9

³²⁵ «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43, մաս 3, կետ 1

³²⁶ <http://transparency.am/files/publications/1450716758-0-713489.pdf>

համակարգի պատահական ընտրության վերաբերյալ, հաշվի առնելով նաև այն, որ բողոքների քննման գործընթացին են մասնակցում Խորհրդի ցանկում չներկայացված անդամներ:

Ուստի, անհրաժեշտ է մշակել իրավական մեխանիզմ, որով կսահմանվի, որ այն դեպքում, երբ Խորհրդի անդամներից ձևավորված հանձնաժողովի նիստին հանձնաժողովի ցանկում ներառված անձը սահմանված քանակով և ավելի անգամ հրաժարվում է մասնակցել նիստերի քննությանը, որպես Խորհրդի հանձնաժողովի անդամ, նրա անդամությունը կասեցվի:

Միաժամանակ, ըստ Թի գեկույցի Խորհրդի կայքում չկա վիճակագրություն առ այն, թե քանի դեպք է եղել, երբ հանձնաժողովի նախնական ընտրված անդամն ունեցել է օրենքով նախատեսված շահերի բախում³²⁷, որի հիմքով էլ չի մասնակցել բողոքի քննությունը և/կամ փոխարինվել է: Ավելին, պարզ չէ, թե որ մարմինն է վերահսկելու շահերի հայտարարագրման գործընթացը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ առկա չէ շահերի հայտարարագրման և այդ գործընթացի նկատմամբ վերահսկողության արդյունավետ համակարգ: Ուստի անհրաժեշտ է բարձրացնել Խորհրդի անդամների հաշվետվողականությունը, մասնավորապես, շահերի բախման վերաբերյալ հայտարարության և այդ գործընթացի նկատմամբ հսկողության առումով:

Ոլորտի մասնագետների պնդմամբ բավարար արդյունավետ չէ նաև գնումների գործընթացի արդյունքների արտադատական բողոքարկման մեխանիզմը³²⁸, որի դժվարությունները հետ են պահում մրցույթի մասնակիցներին իրենց ոտնահարված իրավունքները պաշտպանելուց:

Այսպես, պրակտիկայում բողոքի բավարարման դեպքում գնման սխալ ընթացակարգը դադարեցվում կամ չեղյալ է համարվում, իսկ բողոքի հայտ ներկայացրած գործարարները հետ են ստանում միայն բողոքի ներկայացման համար վճարված գումարը (30000 ՀՀ դրամ) և, որպես կանոն, չեն դիմում դատարան՝ ստանալու համար կրած վնասների կամ հնարավոր բաց թողնված օգուտների փոխհատուցում: Նշենք, որ բազմաթիվ տնտեսավարողների պնդմամբ՝ նման դեպքերում դատարան չդիմելու պատճառներից է նաև այն մտավախությունը, որ դա հետագայում կարող է վատթարացնել հարաբերությունները գնումների բողոքարկման խորհրդի անդամների հետ և սահմանափակել հետագա մրցույթներում հաղթելու հնարավորությունը: Ստացվում է, որ նույնիսկ Խորհրդում բողոքարկելու գործընթացում հաղթելու դեպքում գործարարները ֆինանսապես տուժում են, քանի որ ստիպված են լինում մյուսների հետ հավասար հիմունքներով նորից մասնակցել նոր մրցույթին և կրել համապատասխան ծախսերը:

Նախարարության տվյալների համաձայն՝ Խորհուրդը 2015թ. դեկտեմբերի 29-ի դրությամբ ստացել է 51 բողոք, որոնցից՝ բավարարվել են 20-ը, մերժվել՝ 23-ը,

³²⁷ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մաս

³²⁸ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 45, մաս 3, կետ 1

առանց քննության են թողնվել 3-ը՝ բողոք ներկայացրած մասնակիցների կողմից բողոքն առանց քննության թողնելու դիմումների համաձայն, իսկ մնացած 5 բողոքները դեռևս գտնվում են քննության փուլում:

Առաջարկ. մշակել իրավական մեխանիզմ, որով այն դեպքում, երբ Բողոքարկման խորհրդի անդամներից ձևավորված հանձնաժողովի նիստին հանձնաժողովի ցանկում ներառված անձը սահմանված քանակով և ավելի անգամ հրաժարվում է մասնակցել նիստերի քննությանը, որպես Բողոքարկման խորհրդի հանձնաժողովի անդամ, նրա անդամությունը կասեցվի, բարձրացնել Բողոքարկման խորհրդի անդամների հաշվետվողականությունը, մասնավորապես, շահերի բախման վերաբերյալ հայտարարության և այդ գործընթացի նկատմամբ հսկողության առումով: Միաժամանակ, բարելավել գնումների բողոքարկման կարգը՝ մասնակիցների համար ստեղծելով մեխանիզմներ՝ կրած վնասների կամ հնարավոր բաց թողնված օգուտների փոխհատուցման համար:

6. Մեկ անձից կատարվող ոչ մրցակցային ընթացակարգերով գնումները մեծ բաժին են կազմում գնումների շարքում, ինչը հակասում է պատշաճ մրցակցության ապահովման պահանջին, իսկ բաց մրցույթների դեպքում պատվիրատուները մի շարք գործիքներ ունեն պատժելու իրենց համար «անցանկալի հաղթողներին»:

Ոլորտի մասնագետները բազմիցս բարձրաձայնել են, որ չնայած պետական գնումների ոլորտում առկա աջակցության ծրագրերի, այդ թվում՝ դոնորների կողմից, որոշ ուղղություններով հետընթաց է արձանագրվել: Այսպես, չնայած «Գնումների մասին» ՀՀ օրենքով գնումների նախընտրելի և հիմնական ընթացակարգը բաց ընթացակարգն է³²⁹, այնուամենայնիվ, հիմնականում գերակայում են ոչ մրցակցային գնումները, ինչը կոռուպցիոն ռիսկերի վտանգ է ստեղծում և չի բխում պատշաճ մրցակցության ապահովման սկզբունքից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքը նախատեսում է առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի կազմակերպում այնպիսի դեպքերում, եթե օրինակ՝ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից՝ պայմանավորված նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ, կամ երբ գնման գինը չի գերազանցում գնումների բազային միավորը (1մլն.մրցակցային դրամ)³³⁰: Համանման կարգավորումներ են առկա նաև Պետական գնումների մասին համաձայնագրում³³¹, որի համաձայն՝ սահմանափակ մրցակցային ընթացակարգերն այն ընթացակարգերն են, երբ սուբյեկտը կապ է հաստատում մատակարարների հետ անհատապես՝

³²⁹ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս

³³⁰ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 20, մաս 5

³³¹ Պետական գնումների մասին համաձայնագիր, հոդված 7, մաս 3, կետ «գ»

պայմանով, որ սահմանափակ մրցառքը չի օգտագործվի հնարավոր առավելագույն մրցակցությունից խուսափելու նպատակով կամ այնպիսի ձևով, որը հնարավորություն կստեղծի խտրականություն դնելու այլ Կողմերի մատակարարների միջև կամ պաշտպանելու տեղական արտադրողներին կամ մատակարարներին³³²:

Նշվածի համատեքստում հատկանշական է ոչ մրցակցային գնումների վերաբերյալ Եվրոպայի արդարադատության դատարանի դիրքորոշումը, որն իր գործերից մեկով հաստատել է, որ այն դեպքերում, երբ պայմանագրի կողմը ցանկանում է պայմանագիր կնքել առանց մրցակցության՝ կիրառելով «բանակցային ընթացակարգի կազմակերպում առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու» ձևը, ապա համապատասխան ԵՄ հանձնարարականով³³³ նախատեսված պայմանները պետք է մեկնաբանվեն *սահմանափակ կերպով*, և պայմանագրի կնքումը առանց մրցակցության պետք է կիրառվի *միայն բացառիկ դեպքերում*³³⁴: Ուստի, կարելի է ենթադրել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանները բավականին լայն են ու սահմանափակվում են պետական գնումներում մրցակցության սկզբունքի ապահովման հնարավորությունը: Հետևաբար, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով կատարվող գնումները, օրինակ, երբ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, պետք է կիրառվեն բացառիկ դեպքերում, այլ ոչ համատարած բնույթ կրեն:

Միևնույն ժամանակ, ըստ Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի տվյալների՝ բացի այն, որ գնումների քանակային առումով մոտ 70%-ը, իսկ գումարային առումով՝ մոտ 60%-ը իրականացվում է մեկ անձից ձեռքբերումների հիմքով, անգամ այն դեպքերում, երբ իրականացվում են բաց ընթացակարգով գնումներ, պատվիրատուները մի շարք գործիքներ ունեն պատժելու իրենց համար «անցանկալի հաղթողներին»³³⁵: Օրինակ, տնտեսավարողը շինարարության համար մրցույթային հայտ է ներկայացնում՝ առաջարկելով ավելի ցածր գին, քան իր մրցակիցները, և չնայած նրան, որ ըստ օրենքի պահանջի վերջինս պետք է հաղթող ճանաչվեր, քանի որ ներկայացրել է նվազագույն գին, բայց նախապես գնահատող հանձնաժողովը ինչ-ինչ «թերությունների» հիմնավորմամբ հայտն անբավարար է ճանաչում: Տվյալ դեպքում տնտեսավարողն իրավունք ունի բողոքարկելու գնահատող հանձնաժողովի որոշումները բողոքարկման խորհրդին³³⁶: Այնուամենայնիվ, եթե անգամ բողոքը բավարարվում է, ինչպես վկայում են ուսումնասիրությունները, պատվիրատուն չեղյալ է հայտարարում մրցույթը, և նման

³³² Պետական գնումների մասին համաձայնագիր, հոդված 15

³³³ EU Directive 2004/18/EC

³³⁴ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 54

³³⁵ <http://armtimes.com/hy/read/76607>

³³⁶ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մաս

դեպքերում մրցույթները հիմնականում դառնում են առարկայագուրկ, այսինքն, պատվիրատուն հայտարարում է, որ տվյալ ապրանքը կամ ծառայությունն իրեն այլևս անհրաժեշտ չէ: Թեև նշվածի համար օրենսդրությամբ սահմանված է պատասխանատվություն, այնուամենայնիվ, մասնագետների պնդմամբ, օրենքով հստակ չի կանոնակարգվում, թե ինչ պատասխանատվություն պետք է կրի պատվիրատուն:

Առաջարկ. մշակել մեխանիզմներ՝ սահմանափակելու մեկ անձի կողմից կատարվող գնումների քանակը, ինչպես նաև օրենքով հստակեցնել պատվիրատուի՝ իրենց համար մրցույթի «անցանկալի հաղթողների» դեպքում մրցույթը չեղյալ հայտարարելու համար պատասխանատվությունը:

7. Պետական գնումների մրցույթներում նվազագույն գին ներկայացնողի հաղթելու սկզբունքը հաճախ հանգեցրել է ոչ պատշաճ որակի ապրանքի/ծառայության մատակարարմանը:

Շարունակում է արդիական մնալ այն խնդիրը, որ «Գնումների մասին» օրենքի պահանջը³³⁷, ըստ որի բաց ընթացակարգով մրցույթների ժամանակ հաղթող է ճանաչվում այն ընկերությունը, որն, առաջարկել է ամենացածր գինը, հաճախակի նշանակում է ամենացածր որակի ապրանքի/ծառայության մատակարարում: Նշված խնդրի մասին են բարձրաձայնել նաև գործարարները, նշելով, օրինակ, որ այն դեպքերում, երբ «ստուգողները» պարզում են, որ պատվիրատուն ցածրորակ ապրանք է գնել, ոչինչ չեն նախաձեռնում, իսկ երբ պարզվում է, որ պատվիրատուն ավելի բարձր գնով որակյալ ապրանք է ձեռքբերել, պատվիրատուն «սկսում է խնդիրներ ունենալ»³³⁸: Տվյալ խնդիրն արդիական է, մասնավորապես, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սննդի մատակարարումը, դեղերն, ինչի կապակցությամբ Պաշտպանը պարբերաբար ստանում է ահազանգեր, դիմում-բողոքներ:

Բարձրաձայնված խնդիրը շարունակաբար չի լուծվում, նախևառաջ, այն պատճառով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է հիմնականում առավելապես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից *նվազագույն գնային առաջարկ* ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Արդյունքում, գնումների ընթացքում նվազագույն գնային առաջարկի հիման վրա տրվող նախապատվությունը շատ դեպքերում բացասական ազդեցության վտանգ է ստեղծում ապրանքի պատշաճ որակի վրա: Այսպիսով, երբ գործում է նվազագույն գնային առաջարկը ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքը, և առկա չեն գնման առարկայի՝ պայմանագրի պայմանների համապատասխանության վերահսկման արդյունավետ մեխանիզմներ,

³³⁷ Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝ մրցույթում հաղթելու սկզբունքը, ի թիվս այլ պահանջների, նվազագույն գին ներկայացնելն է, երբ նախապատվություն տրվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

³³⁸ <https://www.youtube.com/watch?v=uhpBJRCkUss>

հնարավոր են ապրանքի/ծառայության որակի վերաբերյալ իրավական պահանջների խախտումներ:

Միաժամանակ, Նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման հայեցակարգի նախագիծը, որը կոչված է համապատասխանեցնել ՀՀ «Գնումների մասին» օրենքը ստանձնած միջազգային պարտավորություններին: Զուգահեռաբար մշակվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների և լրացումների կատարման նախագիծը, որտեղ հաշվի են առնվել և ՀՀ միջազգային պարտավորությունները, և նախկին օրենքի կիրարկման արդյունքում բացահայտված խնդիրները: Չնայած օրենսդրական նախաձեռնություններին՝ խնդիրը շարունակել է չլուծված մնալ 2015թ. ընթացքում:

Առաջարկ. մշակել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ բացառելու համար պետական գնումների ընթացակարգում ապրանքի որակի պահանջը նվազագույն գնի պահանջին ստորադասելը, իսկ որակի չպահպանման դեպքում սահմանել պատվիրատուից բացի վերահսկողությունը թողնել նաև գործընթացում շահագրգռվածություն չունեցող անձի/մարմնի վրա:

8. Հարկային օրենսդրությունն ու այլ իրավական ակտը նույն արարքի կատարման համար պատասխանատվության միջոցներ են սահմանում, ինչը հանգեցնում է անձի՝ կրկնակի պատասխանատվության ենթարկվելու վտանգին, իսկ հարկային օրենսդրությամբ սահմանված պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոցները, չեն բխում օրենսդրության էությունից:

Մի շարք դիմումատուներ Պաշտպանին հայտնել են, որ իրավակիրառ պրակտիկայում «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով սահմանված դրույթն առաջացնում է մի շարք խնդիրներ: Այսպես, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում նշված օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տված վնասի 20%-ի չափով³³⁹: Սակայն գործնականում նշված դրույթը կիրառվել է՝ առանց հաշվի առնելու, թե վնասը ավելի ցույց տալը արդյոք հանգեցրել է հարկի նվազեցմանը, թե ոչ, այսինքն՝ արդյոք դրա հետևանքով պետությանը և հասարակությանը հասցվել է գույքային վնաս: Նշենք, որ եթե վարչական պատասխանատվության նպատակը վարչական իրավախախտում կատարած անձին ուղղելն է և ինչպես իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից նոր իրավախախտումների կատարումը կանխելն է³⁴⁰, ապա հարկային պատասխանատվության նպատակը պետությանը և հասարակությանը հասցված

³³⁹ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 69

³⁴⁰ Վարչական իրավախախտումներ վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, հոդված 22

գույքային վնասի հատուցումն է³⁴¹:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն դրույթը, ըստ էության, պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոց է (ինչպես, օրինակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի սանկցիաները), պետք է վարչական տույժ նշանակելու ընդհանուր կանոնների համաձայն, տույժ նշանակելիս հաշվի առնել կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, ինչը վիճարկվող դրույթում բացակայում է:

Նշենք, որ տնտեսավարող սուբյեկտը հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում կարող է պատասխանատվության ենթարկվել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով, որի համաձայն՝ հաշվապահական հաշվառում չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պակաս հաշվարկված հարկերի գումարի 10%-ի չափով³⁴²: Ավելին, հաշվապահական հաշվառումից բացի՝ օրենսդրությամբ նախատեսված այլ հաշվառում (գրանցում) չվարելը կամ ձեռնարկատիրական գործունեության առարկաները չգրանցելը կամ հաշվառումը (գրանցումը) այնպիսի խախտումով վարելը կամ հայտարարագրի կամ հաշվարկի կամ հաշվետվության կամ հարկման հիմք հանդիսացող այլ փաստաթղթի մեջ այնպիսի կեղծ տվյալներ մտցնելը, որոնք կարող են առաջացնել հարկի նվազեցում, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնհինգապատիկից մինչև քսանհինգապատիկի չափով³⁴³:

Հատկանշական է, վերոնշյալ երկու դրույթներով էլ («Հարկերի մասին» ՀՀ օրենք և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի) կարևորվում է պետությանը վճարվող հարկի նվազումը: Փաստորեն, տնտեսավարող սուբյեկտի մոտ շահութահարկի հաշվարկում սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում այս սուբյեկտը կարող է պատասխանատվության ենթարկվել նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքով և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով: Այսպիսով, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի կիրառման արդյունքում տնտեսավարողը գործնականում կարող է կրկնակի պատասխանատվության ենթարկվել սույն դրույթով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (եթե գործողությամբ նվազել է պետությանը վճարվող հարկի գումարը) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (որպես պատժիչ բնույթ կրող պատասխանատվություն):

Փաստորեն, տվյալ դրույթի կիրառման արդյունքում խախտվում է անձի՝ միևնույն արարքի համար կրկնակի պատասխանատվության չենթարկելու

³⁴¹ ՀՀ սահմանադրական դատարանի 18.02.2014թ.-ի թիվ ՄԴՈ-1139 որոշում

³⁴² «Հարկերի մասին» ՀՀ օրենք, հոդված 25

³⁴³ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրք, հոդված 169¹

սկզբունքը³⁴⁴, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսվում է պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոց, ինչի սահմանադրականության վիճարկման նպատակով Պաշտպանը 13.11.2014 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան:

Առաջարկ. մշակել օրենսդրական փոփոխություններ՝ հարկային օրենսդրության մեջ պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոցները փոխելու ուղղությամբ, ինչպես նաև բացառել անձին մինևույն արարքի համար կրկնակի պատասխանատվության ենթարկելը:

9. 2014 թվականի Տարեկան զեկույցում բարձրաձայնվել էր Նախարարության մաքսային մարմնի կողմից ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծումը անհիմն մերժելու, մերժման պատճառները հայտարարատուին գրավոր չներկայացնելու, ինչպես նաև այդ որոշման բողոքարկման հետ կապված գործնականում ծագող մի շարք խնդիրների վերաբերյալ, որոնք համապարփակ լուծում չեն ստացել նաև 2015 թվականի ընթացքում:

2015 թվականի ընթացքում Պաշտպանին ուղղված մի շարք դիմում-բողոքներում քաղաքացիները հայտնել են, որ Նախարարության մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենքով սահմանված՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացումը մերժվել է՝ առանց որևէ հիմնավոր պատճառ ներկայացնելու:

Դիմումատուների կողմից ստացված դիմումները հիմնականում կապված են եղել տրանսպորտային միջոցների՝ իրենց ձեռքբերման գնով մաքսազերծելու պրակտիկայի հետ: Որպես քննարկվող մեթոդի կիրառմամբ մաքսազերծման մերժման պատճառաբանություն նշվել է փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի արժանահավատության վերաբերյալ մաքսային մարմնի ունեցած կասկածները:

Պաշտպանին հայտնած դեպքերից մեկով դիմումատուն նշել է, որ Նախարարության ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանն իր կողմից ներկրված ավտոմեքենայի մաքսազերծման գումարն ավել են հաշվարկել, և խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր իրավունքների պաշտպանության հարցում: Պաշտպանի արագ արձագանքման վարչության աշխատակիցները այցելել են Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատուն, որտեղից հայտնել են, որ «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագրի 361-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքում, երբ անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձը չունի այդ ապրանքների արժեքի մասին

³⁴⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 22

անհրաժեշտ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները, կամ եթե կան հիմնավոր պատճառներ ենթադրելու, որ անձի կողմից ներկայացված փաստաթղթերը և տեղեկություններն արժանահավատ չեն, մաքսային մարմնի պաշտոնատար անձը սահմանում է ապրանքների մաքսային արժեքը՝ մաքսային մարմնի տրամադրության տակ գտնվող նույնանման ապրանքների մասին գնային տեղեկությունների հիման վրա, այդ թվում՝ նույնանման ապրանքների մանրածախ առևտուր իրականացնող օտարերկրյա ընկերությունների կատալոգներում նշված տվյալների հիման վրա:

Մաքսային մարմնում հայտնել են նաև, որ իրենք կասկածներ ունեն, որ հայտարարատուի կողմից ներկայացված փաստաթղթերը իրականությանը չեն համապատասխանում, ուստի նրանք ավտոմեքենայի մաքսային արժեքը որոշել են շուկայական գնի հիման վրա: Պաշտպանի աշխատակիցները հայտնել են, որ քաղաքացին վստահ է, որ իր կողմից ներկայացված փաստաթղթերն հավաստի են, ուստի դեմ չէ, որ մաքսային մարմինները դիմեն իրավապահ մարմիններին՝ գործարքի իրական լինելը պարզելու համար: Այնուհետև դիմումատուն զանգահարել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ և հայտնել, որ խնդիրը լուծվել է հոգուտ իրեն:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տարածաշրջանային, մասնագիտացված կամ սահմանային մաքսային մարմինները մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելու մերժման վերաբերյալ մինչև վերջնական որոշում ընդունելը, բայց ոչ ուշ, քան սույն օրենքի 78-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերը հայտարարատուի կողմից ներկայացվելուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում, հայտարարատուին գրավոր ներկայացնում են գործարքի գնի մեթոդով հաշվարկված մաքսային արժեքի ընդունմանը խանգարող հանգամանքները և առաջարկում են հայտարարատուին հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր և (կամ) տեղեկություններ, որոնց քննության արդյունքում, նշյալ փաստաթղթերը և (կամ) տեղեկությունները ներկայացվելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, կայացնում են որոշում մաքսային արժեքը գործարքի գնի մեթոդով հաշվարկելը մերժելու վերաբերյալ կամ ընդունում են հայտարարատուի ներկայացրած մաքսային արժեքը³⁴⁵: Բայցևայնպես, նույնիսկ այդ հնարավորությունը, երբեմն չի տրվել, ինչի մասին են փաստում Պաշտպանին ուղղված մի շարք դիմում-բողոքներ:

Նախարարության տվյալներով՝ 2014թ.-ին գործարքի գնի մեթոդը կիրառվել է մաքսային ձևակերպումների 65,73% դեպքերում, իսկ 2015թ.-ի ընթացքում՝ 59,77% դեպքերում, սակայն 2015թ.-ի տեղեկատվությունը բերված է առանց ԵՏՄ անդամ երկրների հետ ԱՏԳ դեպքերի ձևակերպումների: Հայտնել են նաև, որ 2014թ.-ի տեղեկատվությունը առանց ԵՏՄ անդամ երկրների հետ ԱՏԳ ձևակերպումների՝ կկազմեր 59,68%:

³⁴⁵ ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենք, հոդված 86, մաս 3

Քննարկվող խնդրի համատեքստում հատկանշական է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 2014թ.-ի թիվ ՄԴՈ-1176 որոշումը, որտեղ Դատարանը, անդրադառնալով ՀՀ Մաքսային օրենսգրքի³⁴⁶ (2014թ.-ի դեկտեմբերի 2-ի դրությամբ գործող) համանման կարգավորումներին, հայտնել է դիրքորոշում, որի համաձայն մաքսագերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից, մինչդեռ գործնականում 2015թ.-ի ընթացքում հակառակ պատկերն է եղել:

Բայցևայնպես, Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2014թ.-ի ՄԴՈ-1176 որոշման շրջանակներում, ըստ էության, բացակայում է ՀՀ մաքսային օրենսգրքի դրույթները ՀՀ սահմանադրության դրույթներին համապատասխանեցնելու վերաբերյալ անդրադարձ: Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցությամբ պայմանավորված՝ 2015 թվականի հունվարի 2-ից ուժի մեջ է մտել և գործում է Եվրասիական տնտեսական միության օրենսդրությունը, մասնավորապես՝ Մաքսային միության մաքսային օրենսգիրքը և անդամ պետությունների միջազգային այլ պայմանագրերը, որոնց շրջանակներում սահմանված ընթացակարգերով է իրականացվում ապրանքների ներմուծման ժամանակ մաքսային արժեքի որոշումը:

Մեկ այլ խնդիր վերաբերում է գործարքի գնի մեթոդի մերժման որոշումների՝ վերադասության կարգով կամ դատական ատյաններում բողոքարկման գործընթացին, որի ժամանակ քաղաքացիների համար լրացուցիչ դժվարություններ են առաջանում՝ կապված նշված գործընթացի ընթացքում դեռևս չմաքսագերծված տրանսպորտային միջոցը մաքսային պահեստում կայանելու համար գանձվող առանձին մաքսային վճարի հետ: Մասնավորապես, ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենքի համաձայն՝ բողոքարկումը չի ազատում հայտարարատուին սահմանված ժամկետներում բողոքարկման առարկայի հետ կապված պարտավորությունների կատարումից: Ընդ որում, սույն կետով նախատեսված բողոքարկման փաստը չի կարող պատճառ դառնալ մաքսային վճարները սահմանված ժամկետում չվճարելու՝ օրենքով սահմանված տույժերից և տուգանքներից տարբերվող այլ պատժամիջոցների կիրառման համար³⁴⁷:

³⁴⁶ Օրենսգիրքն ուժը կորցրել է 17.12.14 թվականի ՀՕ-241-Ն ՀՀ օրենքով 02.01.2015 թվականին, բացառությամբ նույն օրենքի 259-րդ հոդվածով սահմանված դրույթների:

³⁴⁷ ՀՀ «Մաքսային կարգավորման մասին» օրենք, հոդված 86, մաս 4. «Մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ անհամաձայնության դեպքում հայտարարատուն մերժման եզրակացությունն ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմին կամ դատարան: Վերադաս մաքսային մարմինը պարտավոր է 30-օրյա ժամկետում կայացնել համապատասխան որոշում և տեղյակ պահել հայտարարատուին: Բողոքարկումը չի ազատում հայտարարատուին սահմանված ժամկետներում բողոքարկման առարկայի հետ կապված պարտավորությունների կատարումից: Ընդ որում, սույն կետով նախատեսված բողոքարկման փաստը չի կարող պատճառ դառնալ մաքսային վճարները սահմանված

Արդյունքում, բողոքարկման գործող ընթացակարգերն անուղղակիորեն հետ են պահում քաղաքացիներին իրենց իրավունքների ոտնահարման դեպքում օրինական պաշտպանության միջոցների դիմելուց:

Առաջարկ. ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործման միջոցով ապահովել անհիմն պատճառներով գործարքի գնի մեթոդով մաքսագերծման իրականացման մերժման բացառումը, ինչպես նաև քաղաքացիների համար Մաքսային մարմնի կայացրած որոշումների բողոքարկման մատչելիությունը:

Ժամկետում չվճարելու՝ օրենքով սահմանված տույժերից և տուգանքներից տարբերվող այլ պատժամիջոցների կիրառման համար:»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Նախարարությունը մշակել է «Էներգասպառող սարքերի և սարքվածքների էներգախնայողության պիտակավորման կարգը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը, որով կներդրվի էներգասպառող սարքերի և սարքվածքների պիտակավորման ինստիտուտը:

Առկա թերություններն ու խնդիրները

1. 2011 թ.-ից ի վեր Թուխմանուկի ոսկու հանքավայրի հանքարդյունահանման համալիրում Նախարարության կողմից չեն իրականացվել անհրաժեշտ պարբերականությամբ ստուգումներ:

Ոլորտի մի շարք փորձագետներ բացասական եզրակացություն են տվել «ՄԵԳՈ Գոլդ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ ՀՀ Արագածոտնի մարզի Թուխմանուկի ոսկու հանքավայրի հանքարդյունահանման համալիրի հարստացուցիչ ֆաբրիկայի վերազինման, պոչամբարի պաշտպանիչ պատնեշի և պոչանքների ժամանակավոր չոր պահեստարանի նախագծի լրակազմ հայտի վերաբերյալ³⁴⁸: Ավելին, բնապահպանների պնդմամբ Թուխմանուկի հանքավայրում հանքարդյունաբերական աշխատանքներ իրականացվում են նախատեսվածից ավելի մեծ տարածքներում³⁴⁹:

Այսպես, Նախարարությունն իրականացնում է ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում պետական վերահսկողությունը³⁵⁰, ինչպես նաև Նախարարության խնդիրներից է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման սահմանված պահանջների ապահովումը, ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը նպաստելը, ընդերքի օգտագործման և պահպանության

³⁴⁸ <http://www.ecolur.org/files/uploads/pdf/tuxmanuk.pdf>

<http://www.ecolur.org/hy/news/mining/experts-issued-negative-opinion-to-tukhmanuk-mining-project/7632/>

³⁴⁹ [Նույն](#) տեղում

³⁵⁰ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 654-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրություն, կետ 7, ենթակետ 10)

բնագավառում պետական վերահսկողության ապահովումը, ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության ապահովումը³⁵¹:

Այս լիազորությունների համատեքստում պետք է նշել, սակայն, որ Նախարարությունը Թուխմանուկի ոսկու հանքավայրը շահագործող «ՄԵԳՈ Գոլդ Մայինինգ» ՍՊԸ ընկերությունում վերջին անգամ ստուգում է իրականացրել 2010 թ.-ին, որի ընթացքում տարածքների խախտման վերաբերյալ թերություններ չեն արձանագրվել: Բայցևայնպես, փորձագետների պնդմամբ, ընկերությունը դեռևս 2010-2011թթ.-ի ընթացքում, արդյունահանել է և ՀՀ ընդերքի պաշարների պետական հաշվեկշռից մարել է պաշարներ, որոնք այդ հաշվեկշռում գրանցված չեն և, որի արդյունահանման համար համապատասխան պայմանագիր ընկերությունը չի ունեցել: Նշվածը կարող է պատճառաբանվել այն հանգամանքով, որ իրականում տեղի է ունեցել հանքաքարի աղքատացում, այլ ոչ թե շտոկվերկային հանքային մարմնի շահագործում, սակայն նույնիսկ այդ դեպքում, միննույն է, խախտվում են պայմանագրային պարտավորությունները³⁵²:

Այսպիսով, 2011-2015թթ.-ի ընթացքում Նախարարությունը Թուխմանուկի ոսկու հանքավայրի հանքարդյունահանման համալիրում չի իրականացրել ստուգումներ հնարավոր խախտումների բացահայտման և դրանք հետագայում կանխարգելման ուղղությամբ:

Առաջարկ. իրականացնել պարբերաբար ստուգումներ հանքարդյունահանման համալիրներում՝ դրանց շահագործման խախտումները հայտնաբերելու և վերացնելու համար:

2. Նախարարության կողմից պատշաճ կերպով չի ստուգվել հանքավայրերի վերաբերյալ ընդերքօգտագործողի կողմից ներկայացվող ուսումնասիրությունների հավաստիությունը:

2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ստացված ահազանգերի համաձայն՝ ընդերքօգտագործողի կողմից հանքավայրերի մասին նկարագրություն ստանալուց հետո Նախարարությունը այնուհետև չի ստուգում ընդերքօգտագործողի կողմից արված ուսումնասիրությունների հավաստիությունը, մինչդեռ Նախարարության խնդիրներից է ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման սահմանված պահանջների ապահովումը³⁵³:

Այսպես, ընդերքի տրամադրումն օգտակար հանածոների արդյունահանման նպատակով թույլատրվում է միայն դրանում պարունակվող պաշարների վերաբերյալ տեղեկությունների արժանահավաստության ընդերքաբանական փորձաքննությունից

³⁵¹ ՀՀ կառավարության 2008 թվականի մայիսի 15-ի թիվ 654-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրություն, կետ 7

³⁵² <http://www.ecolur.org/files/uploads/pdf/tuxmanuk.pdf>

³⁵³ ՀՀ կառավարության 2008 թ.-ի մայիսի 15-ի թիվ 654-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրություն, կետ 7, ենթակետ 8)

և ուսումնասիրված ու գնահատված պաշարների քանակը և որակը սահմանված կարգով հաստատվելուց հետո³⁵⁴: Հետևաբար, եթե ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման կապակցությամբ անհրաժեշտ ընդերքաբանական փորձաքննություն չիրականացվի, ապա օգտակար հանածոների օգտագործումը կարող է մի շարք խախտումներով իրականացվել:

Նշված ոլորտում խնդրահարույց է համարվել նաև օրենքի վատ կիրարկումը և հանքարդյունաբերական ընկերությունների գործունեության մասին տեղեկատվության բացակայությունը³⁵⁵: Մինչդեռ, Նախարարության խնդիրներից է ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործմանը նպաստելը³⁵⁶, իսկ Նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության լիազորություններից է ընդերքի օգտագործման և պահպանության պետական վերահսկողությունը ընդերքօգտագործողների կողմից օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ³⁵⁷:

Հետևաբար, Նախարարությունն իր լիազորությունների սահմաններում պետք է արդյունավետ վերահսկողություն իրականացնի ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ընթացքում օրենքի պատշաճ կիրարկումն ապահովելու նպատակով:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել ընդերքօգտագործողի տրամադրած տեղեկատվության հավաստիությունը պատշաճ ստուգելու, ինչպես նաև ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման այլ պահանջների պահպանման ուղղությամբ:

³⁵⁴ ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք, հոդված 7, կետ 4

³⁵⁵ «Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի շահագրգիռ կողմերի վերլուծություն» Իրականացվել է «Կովկասում հանքարդյունաբերության ոլորտում բնապահպանական և սոցիալական հաշվետվողականության խթանում» ծրագրի շրջանակներում(2015թ.) <http://transparency.am/files/publications/1441976340-0-455713.pdf>

³⁵⁶ ՀՀ կառավարության 2008 թ.-ի մայիսի 15-ի թիվ 654-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կանոնադրություն, կետ 7, ենթակետ 9)

³⁵⁷ ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք, հոդված 72

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը խթանելու նպատակով 2015թ.-ի սեպտեմբերից մեկնարկել է Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Օրգանական գյուղատնտեսության աջակցության նախաձեռնություն» դրամաշնորհային եռամյա ծրագիրը, որի իրականացման ընթացքում հատուկ նպատակներն են Հայաստանում օրգանական արտադրանքի հավելյալ արժևորումը և համապատասխան պետական և մասնավոր հատվածի արդյունավետության բարձրացումը:

2. ՀՀ կառավարության կողմից հաստատված 2015թ.-ի նոյեմբերի 19-ի թիվ 1357-Ս որոշմամբ ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում 2014 և 2015թթ.-ներին կարկտահարությունից տուժած մի շարք համայնքների, ՀՀ-ում 2010-2014թթ.-ներին ցորենի սերմնաբուծության և սերմնարտադրության զարգացման ծրագրի շրջանակներում 2013 և 2014թթ.-ներին հատկացված աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմնացուի դիմաց ձևավորված պարտքերը ներվել են համապատասխանաբար՝ 2013թ.-ին ՀՀ Շիրակի մարզին հատկացված՝ 633.22 տոննա՝ 101 մլն. 315.2 հազար դրամ արժեքով, 2013թ.-ին ՀՀ Լոռու մարզին հատկացված՝ 83.16 տոննա՝ 13 մլն. 305.6 հազար դրամ արժեքով, 2014թ.-ին ՀՀ Շիրակի մարզին հատկացված՝ 1193.85 տոննա՝ 191 մլն. 016 հազար դրամ արժեքով, 2014թ.-ին ՀՀ Լոռու մարզին հատկացված՝ 130.05 տոննա՝ 20 մլն. 808 հազար դրամ արժեքով:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Չեն ձեռնարկվել բավարար քայլեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող մի շարք հաստատություններում, հանրակրթական դպրոցներում, ինչպես նաև մանկական ճամբարներում սննդի անվտանգության ապահովման ուղղությամբ:

2015թ.-ի ընթացքում Նախարարության Սննդամթերքի անվտանգության

պետական ծառայության (Ծառայություն) կողմից չեն իրականացվել անհրաժեշտ միջոցներ մի շարք հաստատություններում սննդի անվտանգության ապահովման ուղղությամբ:

Թեև Ծառայությունն իրականացնում է սննդամթերքի որակի և անվտանգության նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև զբաղվում է հումքային բազայի զարգացմամբ³⁵⁸, այնուամենայնիվ Նախարարության տվյալներով 2015թ.-ի ընթացքում ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գրանցվել է թվով 7 սննդային թունավորման դեպք՝ Արմավիր քաղաքի թիվ 6 և 9 մանկապարտեզներում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Վահան գյուղի բնակիչների մոտ, Ավան Առինջ թաղամասի «Հատիսի լանջին» ռեստորանային համալիրում, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի մերձակայքում գործող ամառային դաշտային ճամբարում, ՀՀ Արարատի մարզի Բաղրամյան և Այգեզարդ համայնքների դպրոցների աշակերտների մոտ:

Մյուս կողմից, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տվյալներով՝ նշված դեպքերից գատ, սննդից թունավորման դեպքեր են արձանագրվել նաև ՀՀ Արմավիրի մարզի Ալաշկերտ և Արմավիր քաղաքների թիվ 1 և 11 մանկապարտեզներում: Ընդհանուր առմամբ, թունավորվել է 25 երեխա, որոնք ստացել են համապատասխան բուժում, իսկ Ալաշկերտ և Արմավիր քաղաքների թիվ 1, 6, 9 և 11 մանկապարտեզների տնօրեններն ենթարկվել են պատասխանատվության:

Միաժամանակ, տեսակետ կա, որ 2015թ.-ին գրանցված թունավորումներն իրենց թվով գերազանցել են 2012-2014թթ.-ների թունավորումների քանակը³⁵⁹:

Այս կապակցությամբ Նախարարության հայտնած տվյալների համաձայն՝ ընթացիկ տարում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող մի շարք հաստատություններում իրականացվել է 306 ստուգում, 126 դիտարկում և մշտադիտարկում՝ սակայն չնշելով, թե իրականացված ստուգումների և դիտարկումների արդյունքում ինչ խախտումներ են հայտնաբերվել, որ հաստատություններում և ինչ միջոցներ են ձեռնարկվել խախտումների վերացման և հետագայում դրանց կանխման ուղղությամբ: Հատկապես կարևոր է իրականացնել անհրաժեշտ վերահսկողություն նաև այն մատակարարների գործունեության նկատմամբ, որոնք սննդամթերք են մատակարարում նշված հաստատություններ: Բացի այդ, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անհրաժեշտ է սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվող մրցույթների ժամանակ հաշվի առնել սննդի շղթայի օպերատորների՝ Ծառայությունում գրանցված լինելու հանգամանքը:

Հավելենք, որ ՀՀ առողջապահության նախարարի 06.06.2014թ.-ի թիվ 32-Ն հրամանի համաձայն՝ սովորողներին առողջ սննդով ապահովելու նպատակով

³⁵⁸ՀՀ կառավարության 22.08.2013թ.-ի թիվ 33 արձանագրային որոշմամբ հաստատված «Կայուն դպրոցական սնունդ ծրագրի» ռազմավարություն, կետ 11, մաս 3

³⁵⁹<http://med.news.am/arm/news/7613/2015t-hayastanum-rekordayin-tvov-zangvatsayin-tunavorumner-en-grancvel.html>

անհրաժեշտ է մշակել սննդի օրաբաժին, որը մշակելիս պետք է հաշվի առնվեն սովորողների տարիքին համապատասխան սննդի կալորիականության պահանջը, կերակրատեսակների սննդային և էներգետիկ արժեքը, վիտամինների և միկրոտարրերի օրվա պահանջը, ուսումնական հաստատությունում սովորողների գտնվելու ժամանակահատվածը, ֆիզիկական ծանրաբեռնվածությունը³⁶⁰: Չնայած այս պահանջներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բազմաթիվ ահազանգեր, որ դպրոցներում շարունակել են վաճառվել սննդամթերք, որը չի համապատասխանում վերոնշյալ որոշմամբ սահմանված պահանջներին:

Այսպիսով, 2015թ.-ի ընթացքում Ծառայության կողմից չի իրականացվել բավարար վերահսկողություն մի շարք հաստատություններում սննդի պատշաճ որակի ապահովման և նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջների կատարման ուղղությամբ:

Առաջարկ. **խստացնել սննդի անվտանգության ապահովման նկատմամբ վերահսկողությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն տնտեսվարող սուբյեկտներին, որոնք սնունդ են մատակարարում երեխաների տարբեր հաստատություններ:**

2. Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից չեն ձեռնարկվել բավարար միջոցներ հանրային սննդի օբյեկտներում սննդամթերքի անվտանգության և հիգիենայի չափանիշների պահպանման ուղղությամբ:

Բազմաթիվ քաղաքացիներ և հասարակական կազմակերպություններ տարիներ շարունակ մտահոգություն են հայտնում առ այն, որ հանրային սննդի օբյեկտներում չեն պահպանվում սննդամթերքի անվտանգության և հիգիենայի չափանիշները:

2015թ.-ի ընթացքում մամուլի հրապարակումներում բազմիցս անդրադարձ է կատարվել հանրային սննդի օբյեկտների սանիտարահիգիենիկ անբավարար վիճակին՝ նշելով, որ այդ հաստատություններում չեն պահպանվում սննդամթերքի անվտանգության և հիգիենայի չափանիշները, ինչն էապես ավելացնում է թունավորումների հավանականությունը, քանի որ նման հաստատություններում պատրաստվող սննդամթերքում բարձր է երկրորդային աղտոտվածության ռիսկը:

Նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2015թ.-ի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված է եղել իրականացնել 1162 ստուգում բարձր, միջին և ցածր ռիսկայնությամբ տնտեսվարող սուբյեկտների մոտ, սակայն դրանցից 591-ը կասեցվել են՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության

³⁶⁰ ՀՀ առողջապահության նախարարի 06.06.2014թ.-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» թիվ 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 32-Ն հրաման, կետեր 2 և 3

համապատասխան որոշումը³⁶¹: Նշված որոշման համաձայն՝ 2015թ.-ի օգոստոսի 1-ից մինչև 2016թ.-ի հունվարի 1-ն օրենքով³⁶² սահմանված պետական մարմինների կողմից, բացառությամբ հարկային և մաքսային մարմինների, ստուգումները կարող են իրականացվել միայն՝ հանրային անվտանգության, անձանց իրավունքների, կյանքի և առողջության պաշտպանության, պետության պաշտպանության և անվտանգության ապահովման դեպքերում (համապատասխան հիմնավորումներով)՝ միայն ՀՀ վարչապետի գրավոր համաձայնությամբ: Նույն որոշմամբ նախատեսվում է³⁶³ նաև, որ ՀՀ վարչապետի գրավոր համաձայնությունը ստանալու նպատակով համապատասխան պետական մարմինները ՀՀ կառավարության աշխատակազմ են ներկայացնում ստուգման անհրաժեշտությունը հիմնավորող տեղեկատվությունը:

Ելնելով այս տրամաբանությունից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպասարկման ոլորտում ծառայություններ մատուցողների կողմից թույլ տրվող խախտումները, մասնավորապես, անորակ ու ոչ անվտանգ սննդամթերքի մատակարարումն ուղղակիորեն կապված է մարդկանց ֆիզիկական առողջության պահպանման, ինչպես նաև մի շարք տնտեսական, սոցիալական իրավունքների հետ, Նախարարության կողմից պետք է հետևողական քայլեր ձեռնարկվեին՝ ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելով համապատասխան հաստատություններում ստուգումներ իրականացնելու անհրաժեշտությունը հիմնավորող տեղեկատվություն:

Առաջարկ. սպառողների առողջության պահպանման նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցներ հանրային սննդի օբյեկտների նկատմամբ վերահսկողության խստացման ուղղությամբ:

3. Ոռոգման համակարգերի բացակայության, դրանց ոչ բարվոք վիճակում գտնվելու հետևանքով գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք զրկված են եղել բազմաթիվ հողատարածքներ մշակելու հնարավորությունից:

Տարիներ շարունակ քաղաքացիներն իրենց դժգոհությունն են հայտնում ոռոգման համակարգերի անբարեկարգ վիճակում գտնվելու վերաբերյալ, ինչը խոչընդոտում է գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց բազմաթիվ հողատարածքներ մշակել:

Ըստ Համաշխարհային բանկի՝ ներկայումս ջրային պաշարները բավարար են

³⁶¹ ՀՀ կառավարության 30.07.2015թ.-ի «Ստուգումների կազմակերպման և անցկացման ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ.-ի մայիսի 29-ի թիվ 594-Ս որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 839-Ս որոշում

³⁶² «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 2

³⁶³ ՀՀ կառավարության 30.07.2015թ.-ի «Ստուգումների կազմակերպման և անցկացման ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ.-ի մայիսի 29-ի թիվ 594-Ս որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 839-Ս որոշում, կետ 2

մարզերի մեծ մասում ոռոգումն ապահովելու համար³⁶⁴, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ խնդիրը ոչ թե Հայաստանի ջրային պաշարների սակավության, այլ գործող ոռոգման համակարգում առկա թերությունների մեջ է: Իսկ Հայաստանի Հանրապետության տարածքում ոռոգման ծրագրերի մշակման և մշտադիտարկման համար պատասխանատու է Նախարարությունը³⁶⁵:

Այս առումով ջրամբարների կառուցումը և (կամ) վերակառուցումը կարող են նպաստել գյուղացիական տնտեսությունների զարգացմանն ու գյուղատնտեսությամբ զբաղվելու համար արդյունավետ միջավայրի ստեղծմանը, այնուամենայնիվ, 2015թ.-ի ընթացքում չեն ձեռնարկվել քայլեր նոր ջրամբարների կառուցման և գործողների վերակառուցման ուղղությամբ, ինչպես, օրինակ, ընթացիկ տարում չեն սկսվել Կապսի³⁶⁶ և Եղվարդի³⁶⁷ ջրամբարների վերականգնման և վերակառուցման աշխատանքները, ինչպես նաև Վեդու³⁶⁸ և Մաստարայի³⁶⁹ ջրամբարների շինարարական աշխատանքները:

Ոռոգման համակարգի հետ կապված առկա խնդիրները հանգեցրել են նրան, որ մի շարք հողատարածքներ մնացել են առանց ոռոգման, ինչի հետևանքով մեծանում է տվյալ հողատարածքների անապատացման ռիսկը³⁷⁰:

Հավելենք, որ 2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բազմաթիվ ահազանգեր ոռոգման ջրի ապահովման խնդրի վերաբերյալ, օրինակ՝ ՀՀ Արարատի մարզի Վանաշեն, Այգեպատ, Այգեհովիտ համայնքների բնակիչներից: Դիմումների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ոռոգման ջրի ոչ կանոնավոր մատակարարման պատճառով հաճախ փչացել է գյուղացիների բերքը:

Այսպիսով, գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց՝ հողատարածքներ մշակելու հնարավորության իրականացման համար Նախարարության կողմից չեն ձեռնարկվել անհրաժեշտ քայլեր:

Առաջարկ. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ուղղված ոռոգման համակարգերի բարեկարգմանը:

³⁶⁴Համաշխարհային բանկի «Հայաստանի գյուղատնտեսական համակարգի խոցելիության նվազեցումը՝ կապված կլիմայի փոփոխության հետ» 2014 զեկույց, էջ 6

³⁶⁵ՀՀ կառավարության 05.09.2002թ.-ի թիվ 1516-Ն որոշում, հավելված 1, կետ 8

³⁶⁶Նախարարության հայտնած տվյալներով՝ «Կապսի ջրամբարի վերականգնման մանրամասն նախագծի և մրցույթային փաստաթղթերի պատրաստում, շինարարության վերահսկողություն» մրցույթային փաթեթի հաստատումից հետո նախատեսվում է նախագիծն ավարտել 2016թ.-ի երկրորդ կիսամյակում, որից հետո կտրվի շինարարական աշխատանքների մեկնարկը:

³⁶⁷Նախարարության հայտնած տվյալներով՝ Եղվարդի անավարտ ջրամբարի վերակառուցման նախագծի և մրցույթային փաստաթղթերի պատրաստման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2018թ.-ին:

³⁶⁸Նախարարության հայտնած տվյալներով՝ ջրամբարի շինարարությունը նախատեսվում է սկսել 2016թ.-ին:

³⁶⁹Ըստ Նախարարության տրամադրած տեղեկատվության՝ Մաստարայի ջրամբարի կառուցման հարցը քննարկվում է Եվրասիական զարգացման բանկի հետ:

³⁷⁰<http://ecolor.org/hy/news/climate-change/43-of-armenian-area-exposed-to-desertification-national-focal-point-of-un-convention-to-combat-desertification/7128/>

4. Սպանդանոցներում չի իրականացվել պատշաճ վերահսկողություն մսի որակի նկատմամբ, ինչպես նաև չեն անցկացվել անհրաժեշտ ստուգումներ սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման նկատմամբ:

Դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ սպանդանոցներում մսի որակի և սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ վերահսկողության իրականացման հարցը, որը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Բարձրացվել էր նաև 2014թ.-ի տարեկան զեկույցում:

Թեև 2015թ.-ի ընթացքում «Հայաստանում սպանդանոցների զարգացման աջակցության» ծրագրի շրջանակներում ամբողջությամբ ավարտվել է 5 սպանդանոցի շինարարական աշխատանքներ և բոլոր սպանդանոցներում տեղադրվել են նոր սարքավորումներ, այնուամենայնիվ խնդրահարույց է մնում այն հանգամանքը, որ սպանդանոցներում ինչպես ընթացիկ, այնպես էլ նախորդ տարիներին չեն անցկացվել սանիտարահիգիենիկ պայմանների ստուգումներ, մինչդեռ սպանդանոցները մսամթերքի՝ մինչև սպառողին հասնելու շղթայում առաջին և կարևոր օղակներից մեկն են: Նշված խնդրի պատճառն այն է, որ անասնաբուժական բնագավառում դեռևս չեն մշակվել և հաստատվել ռիսկի վրա հիմնված մեթոդաբանության չափանիշները և ստուգաթերթերը: Արդյունքում, սպանդանոցների սանիտարահիգիենիկ պայմանների նկատմամբ պատշաճ պետական վերահսկողության բացակայության պայմաններում շուկայում հաճախ հայտնվում են ժամկետն անցած կամ հիվանդ կենդանիներից ստացված մսամթերք, ինչն էլ վտանգում է սպառողի առողջությունը և շատ դեպքերում վարակիչ հիվանդությունների առաջացման պատճառ է դառնում:

Այս համատեքստում, 2015թ.-ին Նախարարության կողմից չեն ձեռնարկվել համապատասխան միջոցներ գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու և շուկայում հայտնվող մսի և մսամթերքի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

Առաջարկ. մշակել և ՀՀ կառավարությանը ներկայացնել անասնաբուժական բնագավառում ռիսկի վրա հիմնված մեթոդաբանության չափանիշները և ստուգաթերթերը, որոնց հիման վրա սպանդանոցներում կանցկացվեն սանիտարահիգիենիկ պայմանների ստուգումներ:

IV ԲԱԺԻՆ. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին ՀՀ քաղաքաշինության նախարարության (Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցած ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակլիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող մի շարք օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսվում է հստակեցնել գերեզմանատների ու դիակլիզարանների շահագործման հետ կապված իրավահարաբերությունները, հուղարկավորության կազմակերպման պետական, տարածքային կառավարման և համայնքային կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները, ինչպես նաև մասնավոր գերեզմանատների ինստիտուտի ձևավորման սկզբունքներն ու մոտեցումները:

2. ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության ապահովման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցը»: Հայեցակարգի նպատակն է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ շենքերի սեյսմակայունության ապահովման ուղղությամբ համակարգված և արդյունավետ մոտեցումների ցուցաբերման և հիմնավորված գործողությունների իրականացման համար:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Առ այսօր լուծված չէ քաղաքաշինական բազմաթիվ օբյեկտների մատչելիության խնդիրը, իսկ շինարարական նորմերը (ՇՆուԿ) լիարժեք չեն համապատասխանում տարբեր տիպի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Տարբեր հասարակական կազմակերպություններ, հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են բարձրաձայնել, որ թե՛ Երևանում, թե՛ մարզերում շարունակում է չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց համար

քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը: Մինչդեռ, բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը օրենքով չի թույլատրվում, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործման համար³⁷¹:

Այսպես, Նախարարության գործառնություններից է քաղաքաշինական և լանդշաֆտային համակարգերի ներդաշնակեցման ծրագրերի, տարածական պլանավորման նորմերի ու կանոնների, ինչպես նաև տարբեր գործառական տարածքների քաղաքաշինական և լանդշաֆտային չափորոշիչների մշակումը³⁷²: Ավելին, Նախարարության Քաղաքաշինական պետական տեսչությունը (Տեսչություն) վերահսկում է քաղաքաշինության ոլորտում օրենսդրության, համապատասխան փաստաթղթերի կատարումը, հայտնաբերված խախտումների վերացման նպատակով տալիս է պարտադիր հրահանգներ և ցուցումներ, հետևում դրանց իրականացմանը, նշանակում է վարչական տույժեր³⁷³:

Նշված չափորոշիչների մեջ պետք է ընդգրկվեն համապատասխան նորմեր ոչ միայն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց, այլև տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով: Սակայն Նախարարության հայտնած տեղեկությունների համաձայն՝ բնակչության տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու միջոցառումներ քաղաքաշինական նորմերով սահմանված չեն:

Հաշվի առնելով այն, որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ-ում շինարարություն իրականացնողի պարտականություններից է շինարարության ընթացքում պահպանել հաստատված նախագծի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները, քաղաքաշինական ոչ բոլոր օբյեկտները կարող են լինել հարմարեցված տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար, եթե չսահմանվեն այդ ոլորտը կարգավորող քաղաքաշինական պարտադիր նորմեր:

Առ այսօր մի շարք հաստատություններ, օրինակ՝ բազմաթիվ բուհեր, մատչելի չեն հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, անգամ չունեն շենք մուտք գործելու համար թեքահարթակ: Նման պրակտիկական հակասում է գործող օրենսդրության պահանջներին³⁷⁴, ինչպես նաև խոչընդոտում է նաև Սահմանադրությամբ ամրագրված այլ իրավունքների, օրինակ՝ կրթության իրավունքի արդյունավետ իրացմանը³⁷⁵: Խնդրի առկայության պատճառներից է նաև

³⁷¹ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 22

³⁷² ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի թիվ 1294-Ն որոշում, ՀՀ Քաղաքաշինության նախարարության կանոնադրություն, բաժին 2-րդ, կետ 9.7)

³⁷³ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 26

³⁷⁴ Օրինակ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրամանի համաձայն՝ բնակչության սակավաշարժուն խմբերի համար բացի թեքահարթակներից, անհրաժեշտ են նաև վերելակներ և ամբարձիչներ, մատչելի սանիտարահիգիենիկ սենքեր և այլն

³⁷⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 5

կառուցապատողների կողմից միայն արտաքին թեքահարթակի պահպանման պահանջի կատարումը: Միաժամանակ, հաճախ հանդիպում են շենքեր, որոնց մուտքը մատչելի է շինարարական նորմերի պահանջներին համապատասխան կառուցված թեքահարթակով, սակայն շինության ներսում տեղաշարժման հավելյալ խոչընդոտներ և բարդություններ են առաջանում համապատասխան պայմանների բացակայության պատճառով, օրինակ, աստիճանավանդակին զուգահեռ վերելակ կամ ամբարձիչ չկա, սանհանգույցը հարմարեցված չէ, սենյակների դռները նեղ են անվասայլակով մտնելու համար:

Արդյունքում, քաղաքաշինության ոլորտում օրենսդրության չպահպանման հետևանքով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք զրկվում են մատչելի միջավայրի, կրթություն ստանալու, առողջության պահպանման, աշխատանքի և այլ իրավունքներից՝ չկարողանալով լիարժեքորեն ինտեգրվել հասարակության մեջ: Մինչդեռ, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, դպրոցների, բնակելի տարածքների, ինչպես նաև բժշկական հաստատությունների մատչելիությունը³⁷⁶:

Չնայած խնդրի լուծման ուղղությամբ 2015 թվականին տեսչական ստուգումներ են անցկացվել ՀՀ բոլոր մարզպետարաններում, և նշանակվել է 400 հազար դրամի տուգանք, այդ թվում՝ 350 հազար դրամ համայնքների ղեկավարների նկատմամբ, ինչպես նաև իրականացվել են նաև կրկնակի ստուգումներ և պարզվել է, որ արձանագրված խախտումների մի մասն արդեն վերացվել է, այնուհանդերձ մատչելի միջավայրի ապահովման խնդիրը շարունակում է համատարած բնույթ կրել:

Առաջարկ. ապահովել շարունակական վերահսկողություն քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նպատակով և մշակել քաղաքաշինական նորմեր շինությունները տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու նպատակով:

³⁷⁶ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 9, կետ 1ա)

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

2015թ.-ին, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Քաղաքապետարան) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումներ

1. Քաղաքապետարանի, «Սանիթեք» և «Սանիթեք Ինթերնեշնլ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի միջև կնքվել են Երևան քաղաքի աղբահանման և սանիտարական մաքրման ծառայությունների գնման պայմանագրեր, որոնցով կապահովվի մայրաքաղաքում աղբահանման և սանիտարական մաքրման ոլորտում առկա հիմնախնդիրների ու ժամանակակից չափանիշներին համապատասխան կառավարման համակարգի ներդնումն ու որակյալ ծառայությունների մատուցումը:
2. Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների կողմից բնակչության բուժսպասարկման որակը բարելավելու ու ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների հագեցվածությունը հզորացնելու նպատակով 2015թ.-ին ձեռք է բերվել և կազմակերպություններին տրամադրվել է 30 անհրաժեշտ մասնագիտացված բուժսարքավորում:
3. 2015թ.-ին շահագործման են հանձնվել 4 բազմաբնակարան շենքեր, լուծելով շուրջ 450 ընտանիքի վերաբնակեցման և հին վթարային շենքերի քանդման խնդիրը:
4. 2015թ.-ին Երևանում կառուցվել, բարեկարգվել ու կահավորվել է 385 բակային տարածք:
5. Իրականացվել են Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհի՝ Արշակունյաց պողոտա-Արտաշատի խճուղի հատվածի կառուցման աշխատանքները, որոնց ավարտը նախատեսվում է 2016թ.-ին:

Առկա թերություններն ու խնդիրները

1. Նախադպրոցական հաստատությունները գերբեռնված են, իսկ աշխատակիցների քանակը չի բավականացնում երեխաների պատշաճ խնամք իրականացնելու համար:

2011թ.-ի ապրիլի 1-ից Երևանի քաղաքապետի որոշմամբ Երևան քաղաքի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթությունը դարձավ անվճար³⁷⁷, ինչն էլ հանգեցրեց մանկապարտեզներում դիմումների կտրուկ աճին ու հետագա գերբեռնվածության խնդրին և արդյունքում՝ երեխայի կրթություն ստանալու իրավունքի³⁷⁸ սահմանափակմանը:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ ընթացիկ տարում նախադպրոցական հաստատությունների գերբեռնվածությունը հիմնականում դրսևորվել է թե՛ մանկապարտեզ հաճախել ցանկացող հերթագրված երեխաների թվաքանակի աճով, թե՛ անմիջապես մանկապարտեզի խմբերում, հակառակ օրենքի պահանջի, երեխաների առավելագույն քանակի գերազանցմամբ³⁷⁹: Միաժամանակ, մանկապարտեզների գերբեռնվածության քննարկվող պատճառներից մեկն այն է, որ բազմաթիվ ծնողներ, ենթադրելով, որ իրենց երեխայի հերթը կարող է չհասնել, վերջիններիս միաժամանակ գրանցել են մի քանի մանկապարտեզների հերթացուցակում³⁸⁰: Մանկապարտեզների հերթացուցակներում կրկնակի գրանցման խնդրի հաղթահարման նպատակով ստեղծվել է Քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում երեխաների հերթագրման և հաճախելիության հաշվառման էլեկտրոնային համակարգը³⁸¹, ինչի արդյունավետության վերաբերյալ առայժմ վաղ է խոսել, հաշվի առնելով, որ վերջինս, Քաղաքապետարանի տվյալներով, լիարժեք գործարկվել է 2015թ.-ի նոյեմբերի 1-ից:

Բացի այդ, քաղաքացիները պնդում են, որ մանկապարտեզ հաճախել ցանկացող երեխաների մեծաքանակ հերթերի պատճառով աշխատող մայրերն այլընտրանք չունեն, քան մասնավոր մանկապարտեզ փնտրելը:

Մանկապարտեզների գերբեռնվածության խնդրի լուծման անհնարինությունը Քաղաքապետարանը շարունակաբար պատճառաբանում է նրանով, որ տարբեր ժամանակահատվածներում մանկապարտեզների շենքերից տարածքներ են

³⁷⁷ Երևանի քաղաքապետի՝ 31.03.2011թ.-ի թիվ 1101-Ս որոշում

³⁷⁸ Սահմանադրության 39-րդ հոդված, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 1-ին, 3-րդ հոդվածներ, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ, 11-րդ, 23-րդ հոդվածներ

³⁷⁹ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2007թ.-ի թիվ 29-Ն հրամանի համաձայն՝ երեխաների քանակը մանկապարտեզի խմբերում չպետք է գերազանցի 30-ը: Մինչդեռ, գործնականում մանկապարտեզները ծանրաբեռնված են, որոշ տեղերում երեխաների թիվը գերազանցում է 40-ը <http://bit.ly/1RNUrhw>

Քաղաքապետարանի ներկայացուցիչների խոսքերով Քաղաքապետը թույլտվությամբ խմբերում կարող է ներառվել մինչև 32 երեխա, ելնելով գերբեռնվածությունից, սակայն տվյալ թույլտվությունը իրավական որևէ ձևակերպում չունի, ուստի օրենքի պահանջը շարունակում է մնալ **առավելագույնը 30 երեխա մեկ խմբում:**

³⁸⁰ <http://bit.ly/1MWpHgc>

³⁸¹ <http://bit.ly/1ODXWJD>

հանձնվել այլ սուբյեկտների՝ անհատույց օգտագործման և վարձակալության, և դրանք կարելի է վերադարձնել միայն պայմանագրերի ժամկետների ավարտից հետո: Հատկանշական է, որ որոշ դեպքերում տվյալ մանկապարտեզների շենքերը օգտագործվում են որպես բնակելի տներ անգամ նախկին տնօրենների կողմից կամ որպես մասնավոր կրթական հաստատություններ³⁸²:

Քաղաքապետարանից հայտնել են, որ վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով այլ սուբյեկտներին են հանձնվել թվով 46 մանկապարտեզների տարածքներ, իսկ թվով 59 տարածքների վերաբերյալ կնքած նույն քանակի պայմանագրերից ծագող վարձակալության կամ օգտագործման իրավունքը չի ստացել պետական գրանցում: Դրանց գերակշիռ մասը կազմում են ոչ առևտրային կազմակերպություններ: Նախորդ տարիների ընթացքում մանկապարտեզներին վերադարձվել էին թվով 14 տարածքներ, իսկ 2015թ.-ի ընթացքում մանկապարտեզներին տարածքներ չեն վերադարձվել:

Նշենք, որ ըստ օրենքի՝ պետական կամ համայնքային սեփականություն համարվող մանկապարտեզների շենքերը կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ հասարակական կամ պետական կարիքների համար³⁸³:

Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կան մի շարք մանկապարտեզներ, որոնք ազատ տարածքներ ունեն և վերանորոգման դեպքում կարող են օգտագործվել նոր խմբեր ստեղծելու նպատակով: Բացի այդ, քաղաքացիներն ահազանգում են, որ գերբեռնվածության պայմաններում մանկապարտեզներում կրթությունը կազմակերպելու պարտականությունը դրված է ընդամենը մեկ դաստիարակի, իսկ խնամքը՝ մեկ դայակի վրա: Նշանակում է, որ մանկապարտեզների խմբերում գերբեռնվածության նվազեցումը պետք է զուգորդվի ոչ միայն լրացուցիչ տարածքների հասկացմամբ, այդ թվում՝ չօգտագործվող տարածքների վերանորոգման ու անհատույց օգտագործման և վարձակալության հանձնված տարածքները մանկապարտեզներին վերադարձնելու միջոցով, այլև մանկապարտեզների համապատասխան աշխատակիցների հաստիքների ավելացմամբ:

Առաջարկ. ձեռնարկել հրատապ միջոցներ մանկապարտեզների՝ անհատույց օգտագործման և վարձակալության հանձնված տարածքները մանկապարտեզներին վերադարձնելու, ինչպես նաև յուրաքանչյուր մանկապարտեզում անհրաժեշտ քանակի խմբեր բացելու ու աշխատակիցների լրացուցիչ հաստիքներ նախատեսելու ուղղությամբ:

³⁸² Պաշտպանն իրականացրել է Քաղաքապետարանի կողմից տրամադրված վարձակալության և անհատույց օգտագործման հանձնված 82 տարածքների ցանկի և ՀՀ ԿԱ Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված՝ անհատույց օգտագործման և վարձակալության պայմանագրերի ցանկի ուսումնասիրություն, որի արդյունքները տեղ են գտել 2014թ. Տարեկան զեկույցում:

³⁸³ «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ մաս:

2. Երևանում հասարակական տրանսպորտի սպասարկման որակը շարունակում է մնալ անբավարար:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ ընթացիկ տարում քաղաքացիներն իրենց դժգոհություններն են հայտնել Երևանի հասարակական տրանսպորտի, հատկապես ավտոբուսների ու միկրոավտոբուսների ոչ պատշաճ աշխատանքի վերաբերյալ: Բողոքները հիմնականում վերաբերում են ուղևորների նկատմամբ վարորդների վատ վերաբերմունքին, տրանսպորտային միջոցների անսարքությանն ու կեղտոտ պայմաններին, գերբեռնվածությանը, չվացուցակների ոչ պատշաճ աշխատանքին:

Միաժամանակ, կրկին գրանցվել են հասարակական տրանսպորտի վարորդների կողմից ուղևորի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դեպքեր: Մինևույն ժամանակ, տրասնպորտային երթուղիների աշխատանքային ժամերը չեն համապատասխանում երթուղային ցանցով հաստատված գրաֆիկին, կանոնակարգված չեն, և ցանկացած պահից երթուղին սպասարկող շարժակազմերը կարող են ավարտել աշխատանքը: Քաղաքացիները դժգոհում են նաև հասարակական տրանսպորտի երթուղիների չվացուցակների մասին կանգառներում սպասող ուղևորներին իրազեկելու նպատակով կանգառներում տեղադրված էլեկտրոնային չվացուցակների աշխատանքից՝ նշելով, որ, չնայած մայրաքաղաքի բյուջեով դրանց տեղադրման համար զգալի ֆինանսական հատկացումներին, դրանք մեծամասամբ չեն գործում, բացի այդ, մայրաքաղաքում բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացնող փոխադրամիջոցներից շատերն այնտեղ ներառված չեն:

Առաջարկ. Բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ, բարելավել չվացուցակների համակարգը:

3. Երևանի մի շարք դպրոցների շենքային և գույքային պայմանները շարունակում են մնալ անբավարար, ինչը կարող է բացասական հետևանքներ ունենալ երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրականացման վրա:

Քաղաքապետարանի ենթակայության մի շարք դպրոցների շենքային և գույքային պայմանները շարունակում են մնալ խիստ անբավարար: Մասնավորապես, նորոգման կարիք ունեն տարբեր դպրոցների շենքերի սանհանգույցները, մարզադահլիճները, հանդիսությունների դահլիճները և ընդհանուր գույքը, դպրոցների մարզադահլիճներում չկա մարզական գույք և պարագաներ: Հատկանշական է, որ ինչպես 2014թ.-ին, այնպես էլ 2015թ.-ին չեն լուծվել Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնված Երևանի Վ.

Բելինսկու անվան թիվ 38, Ն. Սահյանի անվան թիվ 70, Ալ. Մյասնիկյանի անվան թիվ 66, Մուշեղ Մխոյանի անվան թիվ 68, Մուշեղ Իշխանի անվան թիվ 5 դպրոցների անբավարար շենքային պայմանների խնդիրները³⁸⁴: Շենքային պայմաններն անբավարար են և կապիտալ նորոգման կարիք ունեն նաև մի շարք այլ դպրոցներում: Այսպես, օրինակ, Երևանի Բաֆֆու անվան թիվ 36 հիմնական դպրոցի 4-րդ մասնաշենքի հարթ տանիքը վթարային է, որի պատճառով անձրևաջրերը ողողում են դպրոցը, ինչպես նաև վնասվել են դասասենյակները և մարզադահլիճը³⁸⁵, Երևանի թիվ 154 հիմնական դպրոցն ունի ֆիզկուլտուրայի ու հանդիսությունների դահլիճների վերանորոգման, մարզահրապարակի վերազինման, բակի վերանորոգման կարիք³⁸⁶, Երևանի թիվ 199 հիմնական դպրոցում առկա է հիմնանորոգման և տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինման անհրաժեշտություն³⁸⁷ և այլն:

Դպրոցներում տիրող անբարեկարգ վիճակը բազմաթիվ անհարմարություններ է առաջացնում երեխաների դասապրոցեսի պատշաճ կազմակերպման համար, ինչից կարող է էապես տուժել ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կրթության իրավունքի³⁸⁸ իրացումը: Հատկանշական է, որ Երեխայի իրավունքների կոմիտեն, նույնպես ընդգծել է խնդրի առկայությունն ու հորդորել պետությանը ներդրումներ կատարել դպրոցների ենթակառուցվածքների բարելավման նպատակով³⁸⁹: Նման առաջարկ է արել նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ ընդգծելով ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված ֆինանսական միջոցների առավել արդյունավետ կերպով օգտագործման անհրաժեշտությունը³⁹⁰:

Առաջարկ. ձեռնարկել քայլեր բարելավելու առավել վատ վիճակում գտնվող դպրոցների շենքային և գույքային պայմանները, բարձրացնել դպրոցներին հատկացվող ֆինանսական միջոցների հասցեական օգտագործման արդյունավետությունը:

4. Երևան քաղաքում լիարժեք չի ապահովվել հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման իրավունքը, այդ թվում՝ բավարար քայլեր չեն ձեռնարկվել հասարակական տրանսպորտի և կառուցվող ու վերակառուցվող շենքերի, շինությունների մատչելիության ապահովման ուղղությամբ:

³⁸⁴ <http://www.ognirdprocid.am/school/70/>,
<http://www.ognirdprocid.am/school/97/>,
<http://www.ognirdprocid.am/school/38/>

³⁸⁵ <http://www.ognirdprocid.am/school/68/>

³⁸⁶ <http://www.ognirdprocid.am/school/183/>

³⁸⁷ <http://www.ognirdprocid.am/school/183/>

³⁸⁸ ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդված

³⁸⁹ Concluding observations on the combined third and fourth periodic reports on Armenia, adopted by the Committee at its thirty-third session (27 May-14 June, 2013), CRC/C/ARM/CO/3-4

³⁹⁰ Committee on Economic, Social and Cultural Rights Concluding observations on the combined second and third periodic reports of Armenia* E/C.12/ARM/CO/2-3

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բազմիցս բարձրաձայնվել է այն խնդիրը, որ Երևան քաղաքում լիարժեք չի ապահովվում հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի ֆիզիկական միջավայրի իրավունքը, ինչը հնարավորություն կընձեռի անխոչընդոտ տեղաշարժվել քաղաքում: Չնայած ֆիզիկական միջավայրի հարմարեցմանն ուղղված քայլերի՝ գրեթե բոլոր տրանսպորտային միջոցները, փողոցները, բազմաթիվ շինություններ՝ անգամ նորակառույցները, առ այսօր հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման համար:

Այսպես, 2015թ.-ին Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում բացվել է «Հայաստան» կինոթատրոնը, որը, սակայն այնտեղ այցելած ոլորտային հասարակական կազմակերպությունների պնդմամբ, լիարժեքորեն հարմարեցված չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար:³⁹¹

Հասարակական կազմակերպությունները դժգոհում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չեն նաև Քաղաքապետարանի ենթակայությամբ գործող մարզադպրոցները: Մասնավորապես, մարզադպրոցների շենքերում հիմնականում բացակայում են թեքահարթակները, ինչպես նաև անհրաժեշտ հարմարանքները շենքերի ներսում (օրինակ՝ վերելակ և/կամ ամբարձիչ, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար սանհանգույցների և դռների մատչելիություն և այլն): Արդյունքում, հաշմանդամություն ունեցող մարզիկները գործնականում զրկվում են պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ ու հատուկ օլիմպիադաների խաղերին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին և այլ խոշոր միջազգային մրցաշարերին մասնակցելու համար արդյունավետ, շարունակական և լիարժեք նախապատրաստման հնարավորությունից:

Ըստ օրենքի՝ պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային հիմնարկների և մարզական կառույցների մատչելիությունը և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հատուկ մարզական գույքի տրամադրումը³⁹²:

Քաղաքապետարանից հայտնել են, որ ուսումնասիրվում է Երևանի պարաօլիմպիկ մարզաձևերի մարզադպրոց ստեղծելու հարցը, և այդ նախաձեռնությունը միտված է համապատասխան պայմաններ ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց՝ սպորտային կյանքին անխոչընդոտ ներգրավվելու համար: Այնուհանդերձ, գտնում ենք, որ միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզադպրոցի ստեղծումն իր մեջ պարունակում է խտրական դրսևորումներ և մեկուսացման ռիսկ: Այնինչ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումը, այդ թվում՝ սպորտային կյանքին

³⁹¹ <http://disabilityinfo.am/11445/>

³⁹² «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված

ներգրավման միջոցով, ենթադրում է մյուսների հետ հավասար հիմունքներով սպորտային վայրերի մատչելիության ապահովում՝ խտրականության ու մեկուսացման բացառման, հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքի ներառման խթանման սկզբունքների հիման վրա³⁹³: Ուստի, ողջունելով նոր մարզադպրոց ստեղծելու նախաձեռնությունը, միաժամանակ, գտնում ենք, որ այն պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր անձանց համար՝ անկախ վերջիններիս մոտ հաշմանդամության առկայությունից:

Քաղաքապետարանի տվյալներով 2015թ.-ի դրությամբ Երևանի ներքաղաքային երթուղիներում շահագործվել են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված հատուկ վերելակային հարմարանքներով կահավորված 20 ավտոբուսներ, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Երևանում բնակվում են հենաշարժողական խնդիրներ ունեցող բազմաթիվ քաղաքացիներ, անհրաժեշտ է հետազայում ավելացնել բոլորի համար մատչելի տրանսպորտային միջոցների քանակը:

Միաժամանակ, շարունակում է չլուծված մնալ Երևանի մետրոպոլիտենի մատչելիության հարցը: Այսպես, թեև մետրոպոլիտենի մուտքերը կահավորված են թեքահարթակներով, սակայն հաշմանդամություն ունեցող (հենաշարժական համակարգի, տեսողության կամ լսողության հետ խնդիրներ ունեցող) անձը չի կարող օգտվել Երևանի մետրոպոլիտենից, քանի որ չկան, օրինակ, հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ նախատեսված վերելակներ, պլատֆորմի վրա չկան ռելիեֆային ուղեցուցիչներ, չկան երթուղու մասին վիզուալ տեսաստախտակներ և այլն:³⁹⁴

Բացի այդ, բավարար քանակով փողոցներ հարմարեցված չեն հենաշարժական համակարգի, տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց ազատ տեղաշարժման համար: Ավելին, շարունակվում են հնչեցվել բողոքներ ՃՀԱ պահանջների կատարման խախտման դեպքերի վերաբերյալ՝ հաշվի առնելով Քաղաքապետարանի լիազորությունը ՃՀԱ-ների պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության տեսանկյունից³⁹⁵: Այսինքն, Քաղաքապետարանը հնարավորություն ունի ՃՀԱ-ի պահանջների՝ կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցով նպաստել մատչելի շինությունները կառուցմանն ու վերակառուցմանը: Հաշվի առնելով այդ ոլորտում առկա բազմաթիվ բացթողումները՝ կարելի է եզրակացնել, որ Քաղաքապետարանը հետևողական չէ ՃՀԱ-ների պահանջների պահպանման ուղղությամբ կամ չի հրապարակում վերահսկողության արդյունքում բացահայտված խախտումները:

³⁹³ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 30-րդ հոդվաներ

³⁹⁴ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարման օրենսդրական հիմքերը Հայաստանում, Կոնվենցիայի իրականացման մոնիտորինգային հաշվետվություն

³⁹⁵ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 94

Առաջարկ. Երևան քաղաքում ավելացնել մատչելի տրանսպորտային միջոցների թիվը, փողոցները կահավորել համապատասխան սարքավորումներով և/կամ միջոցներով (թեքահարթակներ, ձայնային ազդանշաններ, ռելիեֆային ուղեցուցիչներ), իրականացնել պատշաճ վերահսկողություն ճարտարապետահատակագծային առաջադրանքների պահանջների պահպանման նկատմամբ:

5. Ներառական կրթություն իրականացնող դպրոցները շարունակում են բախվել մի շարք խնդիրների, կապված ֆիզիկական մատչելիության, ուսուցիչների, մասնագետների վերապատրաստման, բուժքրոջ մշտական հաստիքի նախատեսման, մանկավարժական անձնակազմի անհանդուրժող վերաբերմունքի հետ:

Չնայած նրան, որ Հայաստանը որդեգրել է ներառական կրթության աստիճանական անցման քաղաքականություն, համապատասխան փոփոխություններ նախատեսելով նաև օրենքով³⁹⁶, այնուամենայնիվ, ոլորտում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք, մասնավորապես, վերհանվել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից՝ 2015թ. Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող ներառական կրթություն իրականացնող մի շարք հանրակրթական դպրոցների³⁹⁷ մշտադիտարկման արդյունքում:

Այսպես, ներառական դպրոցների շենքերի ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար սահմանափակվում է հիմնականում դպրոցների մուտքի մոտ կառուցված թեքահարթակով: Մասնավորապես, շինությունների մեջ, որպես կանոն, բացակայում են այնպիսի հարմարանքները, ինչպիսիք են, օրինակ, վերելակը և/կամ ամբարձիչը, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար սանհանգույցների և դռների մատչելիությունը և այլն: Ավելին, բացակայում է հարմարեցված սպորտային դահլիճ, առավել ևս մասնագետ-ուսուցիչ, ով կարող է դասեր վարել ֆիզիկական խնդիրներ ունեցող երեխաների համար:

Բացի ֆիզիկական միջավայրի մատչելիությունից, մի շարք մանկավարժներ ու բազմամասնագիտական թիմի անդամներ առանձնազրույցներում հայտնել են Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին մի շարք համակարգային խնդիրների, օրինակ՝ հոգեբանի կամ լոգոպեդի համար առանձնասենյակի անհրաժեշտության մասին՝ պատճառաբանելով, որ ընդհանուր ռեսուրս սենյակում երեխաների հետ զուգահեռաբար աշխատելն էապես նվազեցնում է երեխաների հետ անհատական աշխատանքի արդյունավետությունը: Որոշ դպրոցների աշխատակիցներ բարձրաձայնել են նաև դպրոցի հաստիքացուցակներում բուժքույրերի հաստիքի բացակայությանը հարցը, նշելով, որ դպրոցական բուժքույրն,

³⁹⁶ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

³⁹⁷ 2015թ. Դրությամբ Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 33 ներառական դպրոց, <http://www.edu.am/DownloadFile/349arm-nerar-cucak-yst-marzeri-2015.pdf>

որն, օրենքով սահմանված կարգով, իրականացնում է աշակերտների բուժապասարկումը տեղում՝ տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատության հսկողության և պատասխանատվության ներքո, աշխատում է ընդամենը կես դրույքաչափով և/կամ շաբաթական 3 օր: Արդյունքում հնարավոր չի լինում ապահովել աշակերտների լիարժեք բուժապասարկումը, հատկապես բուժքրոջ հրատապ անհրաժեշտության դեպքում: Խնդիրն առավել արդիական է դառնում ներառական դպրոցների պարագայում, որտեղ, հաշվի առնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առկայությունը և վերջիններիս առողջական խնդիրները, մեծանում է բուժքրոջ կողմից անհապաղ բուժապասարկման իրականացման և կանոնավոր բժշկական հսկողության անհրաժեշտությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները, որոշ դեպքերում, արձանագրել են ներդպրոցական միջոցառումներին հաշմանդամություն ունեցող երեխաների ներգրավվածության պակաս, մինչդեռ վերջինս երեխաների լիարժեք ներառման և կրթության ապահովման բաղադրիչներից է:

Մեր այցելած ներառական դպրոցներում տնօրենները նշել են ուսուցչի օգնականի հաստիքի նախատեսման անհրաժեշտության մասին՝ դասաժամերին մտավոր զարգացման խնդիրներ ունեցող, գերակտիվ երեխաների հետ աշխատանք տանելու, ինչպես նաև դասապրոցեսը բնականոն կազմակերպելու նպատակով: Ներկայումս տվյալ գործառույթն իրականացնում են ուսուցիչները, երբեմն անգամ ծնողները, ինչը դասաժամի կազմակերպման զգալի խոչընդոտներ է ստեղծում:

Բացի վերոնշյալից, թեև ներառական կրթության ոլորտում միջազգային փորձը վկայում է, որ եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մյուսները, ապա դա կնպաստի բոլորի մեջ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ անկանխակալ վերաբերմունքի ձևավորմանը, այնուամենայնիվ, խնդրահարույց է բարձրաստիճան պաշտոնյաների մոտ տվյալ ոլորտի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ աշխատելու քաղաքական կամքի պակասն, ավելին, առանձին դեպքերում հրապարակային ելույթներում հնչեցվել են էթիկապես ոչ կոռեկտ կոչեր ու հայտարարություններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ³⁹⁸:

Գրանցվել են նաև երեխային իր հաշմանդամության պատճառով դպրոց ընդունելու մերժման դեպքեր: Օրինակ՝ մեծ արձագանք է ստացել Երևանի Սմբատ Բյուրատի անվան թիվ 125 հիմնական (ներառական կրթություն ունեցող) դպրոցի տնօրենի կողմից 7-ամյա երեխային դպրոց չընդունելու դեպքը³⁹⁹: Ըստ հրապարակումների՝ երեխան ուներ մանկական ուղեղային կաթված, սակայն բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի տրված եզրակացության

³⁹⁸ <https://www.youtube.com/watch?v=UBskHgo0nAY>

³⁹⁹ http://www.azatutyun.am/content/article/27193899.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook;
<http://disabilityinfo.am/12427/#prettyPhoto>

համաձայն կարող էր սովորել հանրակրթական դպրոցի ներառական ծրագրում: Երեխայի մոր պնդմամբ դպրոցի տնօրենը մերժումը հիմնավորել էր նրանով, որ. «...նման *բարդ երեխաների հետ աշխատելու փորձ իրենց մասնագետները չունեն...*», մինչդեռ 125-րդ դպրոցի կայքում⁴⁰⁰ տեղադրված տեղեկատվության համաձայն՝ դպրոցն ունի ներառական ծրագիրն իրականացնող *բազմազգիտական խումբ*, որի *մշտական ուշադրության և հոգածության կենտրոնում են գտնվում առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող բոլոր աշակերտները*: Նշենք, որ ըստ օրենքի⁴⁰¹՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ընդունելությունը ուսումնական հաստատություն կատարվում է ընդհանուր հիմունքներով: Ավելին, սովորողի ծնողն իրավունք ունի երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը և կրթության ձևը⁴⁰²: Իսկ 125-րդ դպրոցը, համաձայն ՀՀ ԿԳ նախարարի հրամանի⁴⁰³, ընդգրկվել է ներառական կրթություն իրականացնող դպրոցների ցանկում: Միննույն ժամանակ, Ներառական կրթություն իրականացնելու համապատասխան կարգի համաձայն՝ հանրակրթական ուսումնական հաստատությունում ներառական կրթությունն իրականացվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար՝ նրանց զարգացման սոցիալական հարմարվածությունը և հասարակության մեջ լիարժեք ներառումն ապահովելու, մյուս սովորողների հետ կրթության իրավունքի իրացման հավասար հնարավորություն ընձեռելու նպատակով⁴⁰⁴:

Առաջարկ. իրականացնել շարունակական համակարգային միջոցառումներ ներառական կրթություն իրականացնող դպրոցների կապված ֆիզիկական մատչելիության, ուսուցիչների, մասնագետների վերապատրաստման, բուժքրոջ մշտական հաստիքի նախատեսման, մանկավարժական անձնակազմի անհանդուրժող վերաբերմունքի հետ կապված խնդիրների լուծման ուղղությամբ:

6. Քաղաքապետարանը չի իրականացրել պատշաճ վերահսկողություն ինքնակամ շինարարությունը կասեցնելու, ինչպես նաև նման դեպքերը կանխելու ուղղությամբ:

2015 թվականի Պաշտպանին ուղղված դիմում-բողոքների մեջ բարձրաձայնվել է Երևան քաղաքում ինքնակամ շինարարության դեպքերի, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացող խնդիրների վերաբերյալ:

Բազմաթիվ դիմում-բողոքների ուսումնասիրությունից պարզվել է, որ Երևանում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի և միաժամանակ, քաղաքաշինական (ինսուլացիոն, հրդեհային անվտանգության)

⁴⁰⁰ <http://school125.schools.am/indexnerarakan.html>

⁴⁰¹ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված

⁴⁰² «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված

⁴⁰³ ՀՀ ԿԳ նախարարի 2007 թվականի մայիսի 11-ի N428 Ա/Ք հրաման

⁴⁰⁴ ՀՀ ԿԳ նախարարի 2010 թվականի N1281-Ն հրաման

նորմերի խախտմամբ, իրականացվում է կցակառույցների կառուցման ինքնակամ շինարարություն:

Ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված շենքը, շինությունը կամ այլ կառույցը: Ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական, եթե կառույցը պահպանելը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը⁴⁰⁵:

Հատկանշական է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ գրանցվել են դեպքեր, երբ կցակառույցի կառուցման շինարարական աշխատանքների ընթացքում չեն պահպանվել ՀՀ գործող օրենսդրության և շինարարական նորմերի ու կանոնների պահանջները:

Խնդրի կապակցությամբ նշենք, որ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը, Երևանում՝ Երևան քաղաքի քաղաքապետը, վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Առաջարկ. հետևողական վերահսկողություն իրականացնել ինքնակամ շինարարության դեպքերը կանխելու և կասեցնելու նպատակով:

⁴⁰⁵ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդված

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015թ.-ին ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության⁴⁰⁶ (այսուհետ՝ Նախարարություն) պատասխանատվության ոլորտում հայտնաբերված խնդիրները և գրանցված ձեռքբերումները ներկայացված են ստորև, սակայն՝ ոչ սպառիչ:

Արձանագրված դրական զարգացումները

1. 2015թ.-ին ընթացք է ստացել ՀՀ ՏԿԱԻՆ միզրացիոն պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի սպասարկման ենթակա Երևան քաղաքի Արցախի 4-րդ նրբանցք 10/2 հասցեի 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքում բնակվող ընտանիքների վերաբնակեցման գործընթացը, որի արդյունքում 31 փախստական ընտանիքների տրամադրվել են բնակարաններ Երևան քաղաքի Միսակյան փողոցի 16, Շինարարների փողոցի 6/1 և Մարգարյան փողոցի 45 հասցեներում: Նշված 31 ընտանիքներից 10-ը բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի շահառուներ են: 2016 թվականի առաջին եռամսյակի դրությամբ այս ընտանիքների վերաբնակեցումը ընթացքի մեջ է:

Առկա թերություններն ու խնդիրները

1. 2015թ.-ի ընթացքում գրանցվել են որոշ մարզպետների և համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չարաշահման կամ ոչ պատշաճ կատարման դեպքեր, ինչը Նախարարության կողմից ոչ բավարար վարչական վերահսկողություն իրականացնելու հետևանք է:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում քաղաքացիները բարձրաձայնել են համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների ոչ պատշաճ կատարման խնդրի վերաբերյալ, ինչպես, օրինակ, քաղաքացիների համար օրենքից չբխող պարտականություններ սահմանելը և այլն:

⁴⁰⁶«Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2016թ.-ի փետրվարի 20-ի ՀՀ ՀՕ-25-Ն օրենքով ՀՀ Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը տարանջատվել է ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների:

Նշենք, որ համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացումը⁴⁰⁷, ինչպես նաև բարձրագույն մարմինների կողմից իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը⁴⁰⁸ գրավոր համաձայնություն տալը⁴⁰⁹ Նախարարության կանոնադրական գործառնություններից են:

Այսպես, դեպքերից մեկով քաղաքացին զանգել է Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ և հայտնել, որ Էջմիածնի քաղաքապետարանը հրաժարվում է իր դստերը մանկապարտեզ ընդունել՝ մինչև վերջինս գույքահարկի պարտք չունենալու մասին համապատասխան տեղեկանք չներկայացնի քաղաքապետարան:

Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման վարչության աշխատակիցը հեռախոսագրույց է ունեցել Էջմիածնի քաղաքապետի օգնականի հետ, ով հայտնել է, որ տեղյակ չէ խնդրի մասին, և քաղաքացու հարցին դրական լուծում տալու նպատակով վերջինիս կրկին հրավիրել է Էջմիածնի քաղաքապետարան: Այնուհետև, քաղաքացին հայտնել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակիցների միջամտության շնորհիվ, առանց որևէ փաստաթուղթ պահանջելու, պատրաստակամություն են հայտնել դստերը գրանցել համապատասխան մանկապարտեզ ընդունվելու համար:

Մեկ այլ դեպքում, քաղաքացու իրավունքը խախտվել է Հրազդանի քաղաքապետարանի կողմից: Մասնավորապես՝ քաղաքացին սահմանազանգել է Մարդու իրավունքների պաշտպանի թեժ գիծ և հայտնել, որ հողհատկացման ժամանակ իր հոր անունը հողի սեփականության վկայականում չի նշվել և սխալը ուղղելու նպատակով վերջինս դիմել է Հրազդանի քաղաքապետարանի աշխատակազմի կադաստրի բաժնին քաղվածք ստանալու համար, սակայն քաղաքապետարանի աշխատակիցները հրաժարվում են քաղվածքը տրամադրել և Հրազդանի քաղաքապետարանի ներկայացուցիչը նշվածը պայմանավորել է նրանով, որ քաղաքացին հողի հարկի պարտքեր ունի և, որ պատրաստ են քաղվածքը տրամադրել, եթե քաղաքացին վճարի պարտքի կեսը՝ չնայած նրան, որ վերջինս օրենքով սահմանված նման լիազորություն չունի:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ոչ ոք չի կարող կրել պարտականություններ, որոնք սահմանված չեն օրենքով⁴¹⁰: Իսկ Սահմանադրության 6-րդ հոդվածը սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման

⁴⁰⁷«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 2. համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

⁴⁰⁸ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 3. համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

⁴⁰⁹ ՀՀ կառավարության 2014թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 1527-Ն որոշում, Հավելված թիվ 1, կետ 8

⁴¹⁰ ՀՀ Սահմանադրություն, հոդված 39

մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77² հոդվածի հիման վրա ՀՀ ՏԿԱԻ նախարարի կողմից 2014թ.-ի դեկտեմբերի 27-ին հաստատված «Վարչական հսկողության 2015թ.-ի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 282 հրամանի համաձայն՝ նախատեսվել և հսկողություն է իրականացնել 10 մարզերի 311 համայնքներում: Իրականացված հսկողության արդյունքում հայտնաբերվել են օրենսդրության պահանջների չկատարման մի շարք դեպքեր, որոնք 2016 թվականի առաջին եռամսյակի դրությամբ ամփոփվում են և կհրապարակվեն նախարարության պաշտոնական կայքէջում:

Չնայած Նախարարության կողմից ձեռնարկված քայլերին՝ համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չարաշահման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերի մեծ քանակությունը վկայում է, որ Նախարարության կողմից չի իրականացվել համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ պատշաճ վարչական հսկողություն:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ համայնքների ղեկավարների նկատմամբ հսկողության խստացման ուղղությամբ՝ վերջիններիս գործողությունների կամ անգործության արդյունքում մարդու իրավունքների խախտման դեպքերը բացառելու համար:

2. ՀՀ որոշ համայնքների ղեկավարներ պատասխանատվության չեն ենթարկվում իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ինչն Օրենսդրական թերի կարգավորման արդյունք է:

Դեռևս 2014թ.-ի Տարեկան զեկույցում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել էր ՀՀ 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարներին միայն դատական կարգով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ խնդիրը, որը իրավական ակտերում որոշ բացթողումների արդյունք է:

ՀՀ համայնքների ղեկավարները, նրանց տեղակալները, խորհրդականները և այլ պաշտոնները համարվում են համայնքային պաշտոններ⁴¹¹: Ավելին, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքը տարանջատում է այդ պաշտոնները համայնքային ծառայողի պաշտոնից: Իսկ համայնքային ծառայողի նկատմամբ իրենց ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու, ոչ պատշաճ կատարելու, ծառայողական լիազորությունները վերազանցելու,

⁴¹¹ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու դեպքերում սահմանվում են մի շարք կարգապահական տույժեր՝ նախազգուշացումից ընդհուպ մինչև պաշտոնից ազատում⁴¹²:

Բայցնայնպես, որոշ համայնքների ղեկավարների կողմից իրենց՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, լիազորությունների վերազանցման համար պատասխանատվության սահմանումը դուրս է մնում օրենքի կարգավորման շրջանակից:

Օրենքը բարձրաստիճան պաշտոնատար անձանց խմբին է դասում նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50.000 և ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարներին⁴¹³: Վերջիններիս նկատմամբ սահմանվում է էթիկայի հանձնաժողովի կողմից հսկողության իրականացումը, անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի կողմից վարույթի իրականացումը, իսկ էթիկայի կանոնների խախտումների մեջ հանցագործության հատկանիշներ ի հայտ գալու դեպքում՝ նաև վարույթի բոլոր նյութերը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելը⁴¹⁴:

Սակայն 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների նկատմամբ, օրենքը կարգապահական պատասխանատվության ենթարկելու նման մեխանիզմի կիրառման հնարավորությունը չի տարածում՝ վերջիններիս կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը թողնելով դատական իշխանության մարմիններին:

Արդյունքում, 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարների կողմից իրենց լիազորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում չի իրականացվում ուղղակի վերահսկողություն, և վերջիններս կարող են պատասխանատվության ենթարկվել միայն դատական կարգով:

Առաջարկ. ձեռնարկել միջոցներ օրենսդրական պարտականությունների չկատարման կամ թերի կատարման դեպքում 50.000-ից քիչ բնակիչ ունեցող համայնքների ղեկավարներին պատասխանատվության ենթարկելու դատական կարգից բացի այլ ուղղակի մեխանիզմների մշակման ուղղությամբ:

3. 2015թ.-ի ընթացքում ՀՀ մարզերի մի շարք դպրոցներում չի իրականացվել պատշաճ ջեռուցում, ինչպես նաև արձանագրվել են սննդի կազմակերպման և իրացման գործընթացի ակնհայտ խախտումներ և ոչ բարվոք վիճակում գտնվող դպրոցների շենքային, կոմունալ պայմաններ:

Դեռևս 2014թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել էր մարզային մի շարք հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցման,

⁴¹² «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք, գլուխ 6

⁴¹³ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, կետ 15

⁴¹⁴ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43

հիմնանորոգման անհրաժեշտության, և շենքային ու կոմունալ ոչ բարվոք պայմանների վերաբերյալ խնդիրը: Այսպես, 2015թ.-ին ևս մարզային մի շարք դպրոցներում ջեռուցումը միացվել է բավականին ուշ՝ հաշվի չառնելով տեղանքի կլիմայական պայմանների առանձնահատկությունները:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները 2015թ.-ին ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ ՀՀ-ում վերարտադրողական և սեռական առողջության իրավունքների զարգացման ոլորտում իրականացրած ուսումնասիրության ընթացքում այցելել են ՀՀ մարզերի⁴¹⁵ մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններ: Նշված այցերի ընթացքում մարզպետարանների ենթակայության մի շարք դպրոցներում դասասենյակները ջեռուցվում էին՝ հաշվի առնելով բավականի ցուրտ կլիմայական պայմանները:

Տնօրենների հետ զրույցներից պարզ է դարձել, որ, ելնելով դպրոցի տեղանքի կլիմայական պայմաններից, ստիպված են լինում ջեռուցել դասասենյակները ժամանակից շուտ (ի նկատի ունենալով նոյեմբերի 15-ը)՝ «իրենց կամ արտաբյուջետային միջոցների հաշվին» և որևէ փոխհատուցում չեն ստանում ծախսված գումարների համար:

Հավելենք, որ հանրակրթական ուսումնական հաստատությունների ջեռուցումն իրականացնելիս, ելնելով կլիմայական պայմաններից, դասասենյակում անհրաժեշտ է ապահովել նվազագույնը $+17^{\circ}\text{C}$ և առավելագույնը $+25^{\circ}\text{C}$, ջերմաստիճան⁴¹⁶, ինչը մի շարք մարզային դպրոցներում չի պահպանվել:

Նշված այցերի ընթացքում աշխատակիցները ականատես են եղել նաև մարզպետարանների ենթակայության մի շարք դպրոցների բուֆետներում երեխաների առողջության համար վնասակար սննդատեսակների (զազավորված ըմպելիքներ, չիպսեր, ապխտած կամ կիսաապխտած երշիկեղենով բրդուճներ, սուրճ և այլն) իրացման դեպքերի⁴¹⁷:

Այցելած դպրոցներում վաճառվող հացաբուլկեղենի փաթեթավորման վրա արտադրության և պիտանիության ժամկետի, ինչպես նաև բաղադրության վերաբերյալ որևէ մակնշում չկար, որոշ բուֆետների աշխատակիցներ չէին կրում սանիտարական մաքուր հագուստ, ինչը խախտում է սննդի ոլորտի աշխատողների անձնական հիգիենայի կանոնները, ինչպես նաև սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջները⁴¹⁸:

Հավելենք, որ դպրոցներում տիրող անբարեկարգ վիճակը մի շարք անհարմարություններ է առաջացնում երեխաների դասադրոցների պատշաճ

⁴¹⁵ Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզեր

⁴¹⁶ ՀՀ առողջապահության նախարարի 2002թ.-ի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» ռ 2.iii.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրաման

⁴¹⁷ Տվյալ սննդատեսակների վաճառքը ուսումնական հաստատություններում արգելվում է ՀՀ առողջապահության նախարարի 2014թ. հունիսի 6-ի թիվ 32-Ն հրամանի 26-րդ կետով

⁴¹⁸ ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. փետրվարի 11-ի թիվ 82 հրաման

կազմակերպման համար, ինչից կարող է էապես տուժել կրթության իրավունքի իրացումը⁴¹⁹: Հատկանշական է, որ Երեխայի իրավունքների կոմիտեն, նույնպես ընդգծել է խնդրի առկայությունն ու հորդորել պետությանը ներդրումներ կատարել դպրոցների ենթակառուցվածքների բարելավման նպատակով⁴²⁰:

Նախարարության ենթակայության մի շարք դպրոցների շենքային պայմանները շարունակում են մնալ խիստ անբավարար, իսկ սննդի կազմակերպման և իրացման գործընթացում առկա են ակնհայտ խախտումներ, բայցևայնպես, Նախարարության կողմից չեն ձեռնարկվում բավարար միջոցներ նշված խնդիրների կանխարգելման և լուծման ուղղությամբ:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել ուղղված մարզերի հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարմանը, ոչ բարվոք վիճակում գտնվող դպրոցների շենքային, կոմունալ պայմանների բարելավմանը, ինչպես նաև իրականացնել պատշաճ վերահսկողություն դպրոցներում սննդի մատակարարման կազմակերպման և ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների կատարման ուղղությամբ:

4. 2015թ.-ին շարունակել է չլուծված մնալ մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը, ինչը համայնքների ղեկավարների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքների պահանջների կատարման նկատմամբ Նախարարության պատշաճ վերահսկողություն չիրականացնելու արդյունք է:

Դեռևս 2014թ.-ի Տարեկան զեկույցում բարձրաձայնվել էր մարզային քաղաքաշինական օբյեկտների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության խնդիրը, ինչի վերաբերյալ մտահոգություն են հայտնում նաև մի շարք հասարակական կազմակերպություններ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

«ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար⁴²¹:

Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի համակարգը սահմանում է հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիությունն

⁴¹⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 38

⁴²⁰ Concluding observations on the combined third and fourth periodic reports on Armenia, adopted by the Committee at its thirty-third session (27 May-14 June, 2013), CRC/C/ARM/CO/3-4

⁴²¹ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, հոդված 22

ապահովող և այլ անհրաժեշտ նորմեր, կանոններ, ցուցանիշներ⁴²², որոնց կատարումը պարտադիր է քաղաքաշինական գործունեության սուբյեկտների համար⁴²³, իսկ վերջիններին մեջ մտնում են նաև տեղական ինքնակառավարման մարմինները⁴²⁴:

Նշված մարմինները (մասնավորապես,՝ համայնքի ղեկավարը⁴²⁵) տալիս են քաղաքաշինական գործունեություն իրականացնելու համար ճարտարապետահատակագծային առաջադրանք⁴²⁶ (ՃՀԱ), որում նշվում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց ու բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության և այլ նորմատիվ ակտերով սահմանված պահանջներ⁴²⁷: Իսկ, համայնքի ղեկավարը նաև վերահսկում է կառուցապատողներին տրված ՃՀԱ-ի պահանջների կատարումը⁴²⁸, ինչպես նաև փաստագրում⁴²⁹ ավարտված շինարարության շահագործման ընդունումը⁴³⁰:

Մինչդեռ, մարզերում քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը հանդիպում է թե՛ հին և թե՛ նորակառույց կամ հիմնովին վերանորոգվող շինություններում, ինչը նաև Նախարարության կողմից համայնքի ղեկավարների գործունեության նկատմամբ ոչ արդյունավետ իրավական հսկողության արդյունք է:

Նախարարությունից հայտնել են, որ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող կառուցապատման օբյեկտներում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի և անարգել քաղաքաշինական միջավայրի ապահովման համար Արարատի մարզում գործող պետական և համայնքային նշանակության օբյեկտների թեքահարթակներով ապահովվածության խնդիրը լուծված է մոտ 40%-ով, իսկ Գեղարքունիքի մարզում առկա են 112 թեքահարթակ:

Հայտնել են նաև, որ 2015թ.-ին Լոռու մարզպետարանի պատվերով մարզում կառուցվել է Լեռնապատ համայնքի մանկապարտեզի և Լեռնանցքի համայնքային կենտրոնի շենքերը, որոնք կահավորված են թեքահարթակներով, իսկ ՀՀ Կոտայքի մարզի համայնքների բոլոր դպրոցները ապահովված են արտաքին թեքահարթակներով:

⁴²² «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 16

⁴²³ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 16

⁴²⁴ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁴²⁵ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 6

⁴²⁶ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 6

⁴²⁷ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 22.1, կետ 2

⁴²⁸ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 26, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 37

⁴²⁹ Ավարտված շինարարության (շենքերի, շինությունների, դրանց վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ընդլայնման և բարեկարգման) շահագործման ընդունումը փաստագրվում է շահագործման ակտով՝ տվյալ օբյեկտի շինարարության թույլտվության համար հիմք հանդիսացող հաստատված ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացնելուց հետո: Ավարտված շինարարական օբյեկտի շահագործումը թույլատրվում է միմիայն շահագործման ակտը ձևակերպելուց հետո: («Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25)

⁴³⁰ «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք, հոդված 25, պարբերություն 2

Նախարարությունից տեղեկացրել են նաև, որ Սյունիքի մարզի քաղաքապետարանների, գյուղապետարանների, դպրոցների, մշակույթային և սպորտային կենտրոնների մուտքերին կառուցվել են 27 թեքահարթակներ:

Նախարարության տրամադրած տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի և անարգել քաղաքաշինական միջավայրի ապահովված լինելը Նախարարությունը շատ դեպքերում կապում է թեքահարթակների առկայության հետ: Բայցևայնպես մարզերում պետական և համայնքային նշանակության շինությունների գերակշիռ մասը լիովին կամ բավարար չափով հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու համար:

Գեռես 2014թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել էր Կապան քաղաքի թիվ 2 ավագ դպրոցի նորակառույց շենքի՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չլինելու խնդիրը:

Նշված խնդրի վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, որ կառուցվել են թիվ 2 ավագ դպրոցի մասնաշենքի և մարզադահլիճի արտաքին մուտքերի թեքահարթակները, իսկ 1-ին հարկում գտնվող սանհանգույցներից երկուսը (տղաների և աղջիկների) հարմարեցվել են տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար և դարձել մատչելի: Ինչ վերաբերվում է նկուղային, ինչպես նաև շենքի 2-րդ և 3-րդ նշված անձանց տեղաշարժի ապահովմանը, ապա հայտնել են, որ ՀՀ Սյունիքի մարզպետարանը ՀՀ կրթության և գիտության ու քաղաքաշինության նախարարությունների հետ համատեղ հետևողական միջոցներ կձեռնարկի հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի մատչելիության պայմաններն ապահովելու ուղղությամբ այն համապատասխան ծրագրում ներառելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2015թ.-ի ապրիլ-մայիս ամիսներին մի շարք քաղաքներում, այդ թվում՝ Գյումրիում, Կապանում, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի որոշ քաղաքներում նախաձեռնել է ներառական կրթություն իրականացնող մի շարք հանրակրթական դպրոցների մշտադիտարկում՝ ներառյալ՝ շինությունների ֆիզիկական մատչելիության ուսումնասիրության միջոցով:

Օրինակ, Գյումրի քաղաքի ներառական կրթություն իրականացնող հանրակրթական դպրոցների մշտադիտարկման արդյունքում պարզ է դարձել, որ դպրոցները մատչելիության խնդիրներ ունեն: Մասնավորապես, որոշ դպրոցների մուտքի մոտ բացակայում են թեքահարթակները, իսկ անմիջապես շինություններում չկան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ այնպիսի հարմարանքներ, ինչպիսիք են, օրինակ, վերելակը և/կամ ամբարձիչը, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար սանհանգույցները և դռները հիմնականում մատչելի չեն և այլն:

Կապան քաղաքի ներառական կրթություն իրականացնող թիվ 1 և թիվ 5 հանրակրթական դպրոցների մշտադիտարկման արդյունքում նույնպես պարզ է դարձել, որ դպրոցները մատչելիության խնդիրներ ունեն: Մասնավորապես, դպրոցների մուտքի մոտ բացակայում են թեքահարթակները, իսկ անմիջապես

շինություններում չկան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար անհրաժեշտ այնպիսի հարմարանքներ, ինչպիսիք են, օրինակ, վերելակը և/կամ ամբարձիչը, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար սանհանգույցները և դռները մատչելի չեն և այլն:

Մատչելիության խնդիր առկա է եղել նաև Գեղարքունիքի մարզի՝ ներառական կրթություն իրականացնող որոշ դպրոցներում:

Ֆիզիկական մատչելիության խնդիրներ առկա են նաև Արմավիր քաղաքի Անդրանիկ Օզանյանի անվան 5-րդ հիմնական դպրոցում՝ որտեղ ներառական կրթություն իրականացվում է դեռևս 2011թ.-ից⁴³¹:

Ավելին, կառուցապատողները, մի շարք դեպքերում անտեսելով շինարարական նորմերը, պահպանել են միայն արտաքին թեքահարթակի պահանջը: Արդյունքում, սահմանափակվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ ներառական դպրոցում լիարժեք կրթություն ստանալու իրավունքը՝ պայմանավորված դպրոցի ֆիզիկական անմատչելիությամբ:

Մինչդեռ, բազմաթիվ դեպքերում, եթե անգամ շինության թեքահարթակը համապատասխանում է շինարարական նորմերի պահանջներին, տեղաշարժման խոչընդոտներ են առաջանում շինության ներսում, քանի որ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց ֆիզիկական մատչելիության խնդիրը չի սահմանափակվում միայն թեքահարթակներով: Նշվածը թե՛ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի⁴³² և թե՛ գործող օրենսդրության պահանջների խախտում է:

Հավելենք, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական անարգել միջավայրի ապահովման նպատակով՝ քաղաքաշինական բնագավառի օրենսդրական դաշտը կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան արդյունավետ միջոցների ձեռնարկումը նախատեսված է նաև Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում⁴³³:

Նախարարության կանոնադրական գործառույթներից են համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության իրականացումը⁴³⁴, ինչպես նաև

⁴³¹ Երբ 2011-2012թթ.-ին Արմավիրի 5-րդ հիմնական դպրոցը վերանորոգվեց պետական միջոցներով, ներառական կրթական համակարգն արդեն ներդրված էր դպրոցում, բայց շինարարական աշխատանքներն իրականացնելիս այս հանգամանքը շրջանցվեց <http://disabilityinfo.am/12730/>

⁴³² Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 9

⁴³³ ՀՀ կառավարության 2014թ.-ի փետրվարի 27-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 303 -Ն որոշում

⁴³⁴ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 2. համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

մասնագիտական հսկողության⁴³⁵, բարձրագույն մարմինների կողմից իրականացվող մասնագիտական և իրավական հսկողությանը գրավոր համաձայնություն տալը⁴³⁶:

Բայցևայնպես, մարզերում քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման, մասնավորապես, համայնքի ղեկավարների կողմից ՃՀԱ-ների պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականության մեջ առկա թերացումները վկայում են համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Նախարարության իրավական հսկողության անբավարարության մասին:

Արդյունքում հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք ոչ միայն զրկվել են մատչելի միջավայրի, այլև դրա հետևանքով կրթություն ստանալու, առողջության պահպանման, աշխատանքի և այլ իրավունքներից, ինչը խոչընդոտում է նաև նրանց սոցիալական ինտեգրմանը:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել ուղղված համայնքների ղեկավարների կողմից մարզերում քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովմանը, ներառյալ՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքների պահանջների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության իրականացման միջոցով:

5. 2013թ.-ից ի վեր Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվում են մի շարք փախստականների բնակարանային ապահովության, ինչպես նաև Նախարարության ենթակայության տակ չգտնվող կացարաններում բնակվող փախստականների իրավունքների կանոնակարգման խնդիրները, որոնց համապարփակ լուծում չի տրվել նաև 2015թ.-ի ընթացքում:

ՀՀ-ում բնակարանի կարիք ունեցող փախստականների թիվը 2013թ.-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ կազմում է շուրջ 3300 ընտանիք⁴³⁷: Ավելին, բնակարանային ապահովության առաջնահերթ կարիք ունեցող բազմաթիվ ընտանիքներ ավելի քան 25 տարի բնակվում է հիմնականում տարրական կենցաղային միջոցներից զուրկ պայմաններում⁴³⁸:

Նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2015թ.-ին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի հանրակացարանային մասնաշենքերում բնակվող բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրում ընդգրկված 11

⁴³⁵«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, հոդված 77¹, պարբերություն 3. Համայնքի ղեկավարի սեփական և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ վարչական հսկողությունը սահմանափակվում է՝ բացառապես այդ լիազորությունների իրականացման օրինականությունը ստուգելով (այսուհետ՝ իրավական հսկողություն):

⁴³⁶ ՀՀ կառավարության 2014թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 1527-Ն որոշում, Հավելված թիվ 1, կետ 8

⁴³⁷ ՄՕՏԲ-ների և Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված ցուցակների:

⁴³⁸ Նախարարության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի տնօրինության տակ ներկայումս գործում են հանրակացարանային 7 մասնաշենքեր:

փախստական ընտանիքներին հատկացվել են բնակարաններ Երևան քաղաքի Բաբաջանյան փողոցի 98/4, 98/7, 98/8 հասցեներում կառուցված բնակելի շենքերում:

Նախարարությունից հայտնել են նաև, որ 2015 թվականին ընթացք է ստացել ՀՀ ՏԿԱԻՆ միգրացիոն պետական ծառայության «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի սպասարկման ենթակա Երևան քաղաքի Արցախի 4-րդ նրբանցք 10/2 հասցեի 4-րդ կարգի վթարային հանրակացարանային շենքում բնակվող ընտանիքների վերաբնակեցման գործընթացը, որի արդյունքում 31 փախստական ընտանիքների տրամադրվել են բնակարաններ Երևան քաղաքի Սիսակյան փողոցի 16, Շինարարների փողոցի 6/1 և Մարգարյան փողոցի 45 հասցեներում: Նշված 31 ընտանիքներից 10-ը բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի շահառուներ են:

Դեռևս 2004 թվականի Կառավարության որոշմամբ⁴³⁹ հաստատվել էր 1988-1992թթ. Ադրբեջանից բռնազաղթած անձանց բնակապահովության առաջնահերթ ծրագիրը (Ծրագիր), որով 2005-2008թթ. 1065 ընտանիք ստացել են բնակարանի գնման վկայագրեր: Սկսած 2009թ.-ից ՀՀ կառավարության կողմից նշված որոշմամբ հաստատված բնակապահովության առաջնահերթ ծրագրի իրականացման համար պետական բյուջեում միջոցներ չեն նախատեսվում՝ չնայած որ Ծառայության կողմից յուրաքանչյուր տարի ներկայացվում է 4 մլրդ դրամի բյուջետային հայտ՝ այդ թվում նաև 2015թ.-ի համար:

Նախարարությունից հայտնել են, որ նույն չափի հայտ մշտապես ներկայացվում է միջնաժամկետ ծախսային ծրագրերում ընդգրկելու համար, այնինչ գնահատականների համաձայն հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է շուրջ 9,8 մլրդ դրամ:

Նախարարությունից հայտնել են, որ Ծրագրով սահմանված չափանիշներին համապատասխան առաջնահերթ բնակարանային կարիք ունեցող փախստական ընտանիքների թիվը կազմում է 903 ընտանիք, որից 649-ը բնակվում են Երևանում, իսկ 254-ը՝ մարզերում: 2015թ.-ի ընթացքում 21 ընտանիքներ տարբեր ծրագրերով ստացել են բնակարաններ:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2014թ.-ին բարձրացվել էր նաև Ծրագրում չընդգրկված փախստականների մյուս ընտանիքների (ովքեր բնակվում են ծանոթների/բարեկամների տներում կամ վարձով) բնակարանային ապահովության խնդրի լուծման կառուցակարգերի բացակայության հարցը:

Մասնավորապես, բազմաթիվ փախստականներ բախվում են աշխատանքի ցածր վարձատրության պայմաններում բնակարանի վարձակալության համար բարձր վարձավճար մուծելու խնդրին: Իսկ Ծառայության ենթակայության տակ չգտնվող կացարաններում, որտեղ ոչ միայն առկա են փախստականների բնակության անբարենպաստ պայմաններ, այլև նշյալ կացարանների սեփականատերերի կողմից

439 ՀՀ կառավարության 2004թ.-ի մայիսի 20-ի «1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնազաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին» թիվ 747-Ն որոշում:

փախստականներին բնակատեղից ցանկացած պահի զրկելու վտանգ, իրավիճակն ավելի է սրվում:

Նախարարությունից հայտնել են, որ վարձով կամ հարազատների մոտ բնակվող և բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրում չընդգրկված փախստական այլ ընտանիքների համար մշակված ծրագրեր գոյություն չունեն և նրանց խնդրին անդրադարձ կկատարվի առաջնահերթ կարիքավոր ընտանիքների ծրագրի ավարտից հետո:

Այսպիսով, քննարկվող խնդիրը բազմիցս բարձրացվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից, այդ թվում՝ ներառվել է 2012, 2013 և 2014 թթ.-երի տարեկան զեկույցներում, բայց նայնպես, 2015թ.-ի ընթացքում ևս այն համապարփակ լուծում չի ստացել:

Առաջարկ. քայլեր ձեռնարկել ուղղված փախստականների բնակարանային ապահովմանը, ինչպես նաև Նախարարության ենթակայության տակ չգտնվող կացարանների սեփականատերերի հետ հստակ ծրագրի և/կամ համաձայնագրի մշակմանը, որով կկարգավորվի այդ կացարաններում փախստականների ապրելու իրավունքը:

6. Հրշեջ ծառայության մի խումբ նախկին աշխատակիցներ զրկված են ԱՊՀ երկրներում զինվորական կենսաթոշակ ստանալու հնարավորությունից՝ ԱՊՀ համաձայնագրում արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայողների վերաբերյալ համապատասխան նշումի բացակայության պատճառով:

Դեռևս 2014թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել էր ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության նախկին հրշեջ ծառայության աշխատակիցների խնդիրը, ովքեր իրենց պաշտոններից ազատվելուց հետո ձեռք են բերել զինվորական կենսաթոշակի իրավունք, սակայն չեն կարող իրենց կենսաթոշակները ստանալ ԱՊՀ երկրների տարածքում:

Նշված անձինք նախկինում եղել են ՀՀ Ներքին գործերի նախարարության հրշեջ պահպանության վարչության համակարգի աշխատակիցներ, իսկ այնուհետև, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ⁴⁴⁰, պետական հակահրդեհային ծառայության են անցել ՀՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունում: Զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռքբերելուց հետո վերջիններս հաշվառվել են ՀՀ զինվորական սոցիալական բաժնում, սակայն հետագայում ձեռք բերելով ՌԴ-ում ապրելու իրավունք և ՀՀ-ում դադարեցնելով կենսաթոշակային գործը այն տեղափոխել են ՌԴ:

Սակայն ՌԴ-ի համապատասխան մարմնի կողմից մերժվել է վերջիններիս զինվորական կենսաթոշակի հաշվառման կանգնեցնելը՝ պատճառաբանելով, որ

⁴⁴⁰ ՀՀ կառավարություն 2002թ.-ի օգոստոսի 1-ի թիվ 1142-Ն որոշում

«ԱՊՀ մասնակից պետությունների զինծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակային ապահովության և զինծառայողների պետական ապահովագրության կարգի մասին» համաձայնագրում (Համաձայնագիր) բացակայում է նախկին ՀՀ ԱԻՆ հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորության մասին նշումը: Բայցևայնպես, ԱՊՀ երկրների զինծառայողները կարող են իրենց կենսաթոշակները օրինական կարգով ձևակերպել և ստանալ ԱՊՀ ցանկացած պետությունում, այդ թվում նաև ՌԴ-ում⁴⁴¹:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից խնդրի մասին բարձրաձայնումից հետո Նախարարությունը դիմել էր իրավասու պետական մարմիններին Համաձայնագրում փոփոխություններ կատարելու նպատակով, բայցևայնպես 2014թ.-ի ընթացքում խնդիրը վերջնական լուծում չէր ստացել:

Իսկ 2015թ.-ին Նախարարությունից հայտնել են, որ նշված գործընթացը նախատեսում է «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար սահմանված ընթացակարգերի իրականացում (միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին պայմանագրի կնքում), ինչը բարդ և ժամանակատար գործընթաց է:

Արդյունքում, խնդիրը դեռևս մնում է չլուծված՝ դառնալով վերոգրյալ անձանց սոցիալական ապահովության իրավունքի խախտման պատճառ⁴⁴²:

Առաջարկ. հետևողական լինել նշված խնդրի լուծմանը՝ ԱՊՀ համապատասխան համաձայնագրում նախկին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հրշեջ ծառայողներին կենսաթոշակի տրամադրման հնարավորությունը նախատեսող փոփոխությունների սահմանման հարցում համագործակցելով իրավասու մարմինների հետ:

7. Նախարարության կողմից չի իրականացվել պատշաճ վերահսկողություն վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության ապահովման նկատմամբ:

2015թ.-ին ևս արձանագրվել են վերելակների անսարքության դեպքեր, որոնցից մեկը՝ մարտի 21-ին բազմաբնակարան շենքում, անսարքության պատճառով վայր է ընկել, ինչն առաջացրել է քաղաքացու մահ:

Օրենքի համաձայն՝ բազմաբնակարան շենքերի վերելակները համարվում են արտադրական վտանգավոր օբյեկտ, որոնք ենթակա են տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ: Ընդ որում, նշյալ փորձաքննությունն իրականացվում է վերելակը շահագործողի հետ կնքված պայմանագրի հիման վրա, ինչի արդյունքում կազմվում է փորձագիտական

⁴⁴¹ ՌԴ պաշտպանության նախարարի 1993թ.-ի փետրվարի 12-ի թիվ 4468-1 և ԱՊՀ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի 2003թ.-ի դեկտեմբերի 10-ի որոշումներ

⁴⁴² ՀՀ Սահամանդրություն, հոդված 83

եզրակացություն⁴⁴³: Իսկ բնակելի շենքերի պարագայում վերելակ շահագործող կազմակերպություններն են համատիրությունները և, ուստի, տեխնիկական անվտանգության փորձաքննության պայմանագիրը կնքվում է շահագործողի, այսինքն՝ համատիրության հետ:

Օրենքը պարտադրում է համատիրությանն ապահովել տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացումն, իսկ, եթե փորձագիտական եզրակացության մեջ արձանագրվել է տեխնաձին վթարի սպառնալիքը, ապա դադարեցնել դրա շահագործումը⁴⁴⁴:

Այնինչ, մասնագետների պնդմամբ կան համատիրություններ, որոնք չեն ապահովում վերոգրյալ տեխնիկական անվտանգության փորձաքննության իրականացումը: Միաժամանակ, ՀՀ կառավարության որոշմամբ⁴⁴⁵ ստեղծվել է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը համաձայն նույն որոշման՝ կառավարվում է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից: Իսկ օրենքի համաձայն՝ արտադրական վտանգավոր օբյեկտները հաշվառելու, ինչպես նաև դրանց վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները գրառելու, վերլուծելու նպատակով լիազոր մարմինը վարում է արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրը⁴⁴⁶:

Ռեեստրում գրանցման ենթակա է ՀՀ տարածքում շահագործվող յուրաքանչյուր արտադրական վտանգավոր օբյեկտ⁴⁴⁷: Ռեեստրում, ի թիվ այլնի, գրառվում են նաև տեղեկություններ արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքների մասին⁴⁴⁸:

Հավելենք, որ օրենքը սահմանում է կարգադրագրի հասկացությունը: Մասնավորապես՝ կարգադրագիրը լիազոր մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով և լիազորությունների սահմաններում ընդունված իրավական ակտ է, որն ուղղված է, ի թիվս այլնի, արտադրական վտանգավոր օբյեկտի շահագործման արգելմանը, եթե արտադրական վտանգավոր օբյեկտը սահմանված կարգով չի անցել տեխնիկական անվտանգության փորձաքննություն⁴⁴⁹:

Ստացվում է, որ Նախարարությունը, որպես ոլորտի լիազոր մարմին, արտադրական վտանգավոր օբյեկտը սահմանված կարգով տեխնիկական

⁴⁴³«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 6 և 11

⁴⁴⁴«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենք, հոդված 16

⁴⁴⁵ ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ.-ի թիվ 2334-Ն որոշում

⁴⁴⁶«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի հոդված 12, մաս 1

⁴⁴⁷«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի հոդված 12, մաս 2

⁴⁴⁸«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի հոդված 12, մաս 3, ենթակետ դ)

⁴⁴⁹«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի հոդվածի 15, մաս 1, ենթակետ ա)

անվտանգության փորձաքննություն չանցնելու դեպքում ընդունում է կարգադրագիր, որը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում Նախարարությանը տեղյակ չպահելը համարվում է խախտում, որն առաջացնում է համապատասխան պատասխանատվություն⁴⁵⁰:

Բայցևայնպես ըստ մասնագետների հաշվարկների, Հայաստանում վերելակների մոտավորապես կեսը պարտադիր տեխնիկական փորձաքննություն չի անցնում: Ավելին, մասնագետների պնդմամբ, ոչ բոլոր համատիրություններն են հետամուտ լինում վերացնել վերելակի թերությունները, երբ տրվում է բացասական եզրակացություն:

Նախարարությունից նշված խնդրի վերաբերյալ հայտնել են, որ արտադրական վտանգավոր օբյեկտների ռեեստրում 21.12.2015թ.-ի դրությամբ գրանցված են թվով 6897 վերելակներ: Վերելակ արտադրող բոլոր գործարանների կողմից վերելակների տեխնիկական անձնագրերում շահագործման առավելագույն ժամկետը կազմում է 25 տարի: Վերելակի հետագա շահագործման մնացորդային ռեսուրսը որոշվում է տեխնիկական անվտանգության փորձաքննության արդյունքում: 2013թ.-ին տեղի է ունեցել երկու դժբախտ պատահար, որի արդյունքում զոհվել է երկու քաղաքացի⁴⁵¹:

2015թ.-ին տեղի է ունեցել մեկ դժբախտ պատահար⁴⁵², որի արդյունքում զոհվել է մեկ քաղաքացի: Նշված դեպքում վերելակը չէր ենթարկվել ամենամյա տեխնիկական անվտանգության փորձաքննության: Նախարարությունից հայտնել են նաև, որ տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցնելու, ինչպես նաև տեխնիկական անվտանգության փորձաքննության բացասական եզրակացություն ստանալու հետևանքով ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչության կողմից 2014 թվականի ընթացքում համապատասխան կարգադրագրեր ընդունելու միջոցով արգելվել է թվով 62, իսկ 2015 թվականի ընթացքում՝ 139 վերելակների շահագործումը:

Այս դեպքում պարզ չէ, թե ինչու է տարեկան փորձաքննություն չանցած վերելակը շահագործվել, եթե Նախարարության կողմից նման վերելակների վերաբերյալ ընդունվում է դրանք չշահագործելու վերաբերյալ կարգադրագրեր:

⁴⁵⁰«Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքի հոդվածի 15, մաս 4

⁴⁵¹(1. «Անուշ» ՏՄՄ ՍՊԸ, ք. Երևան Վանտյան 61ա, անսարքության պատճառը տուժողի կողմից ցուցաբերած անզգուշությունն էր, խցիկի բացակայությունը տվյալ հարկում 2. հորանի դռների մեխանիկական փականի մղակի կասեցումը: 3. ռելեն չի գործել այրուքագոյացման պատճառով, ինչն էլ պատճառ է հանդիսացել հորանի դռների բաց լինելու դեպքում խցիկի տեղաշարժվելուն: 4. վերելակի տեխնիկական վիճակի թույլ հսկողությունը: 2. <<Կենտրոն 1>> համատիրություն, ք. Երևան Մաշտոցի 5/3, անսարքության պատճառը տուժողի ինքնակամ միջամտությունը չաշխատող վերելակը վերականգնելու նպատակով, որի ժամանակ կորցրել է հավասարակշռությունը և ընկել է հորանն ու մահացել, վերելակի խափանում):

⁴⁵²«Աջափնյակ վերելակ» ՓԲԸ, ք. Երևան Բաշինջաղյան 2-րդ նրբ. 1շ համ., անսարքության պատճառը վերելակի խցիկը ընկել է հորանը, վերելակը չի ենթարկվել ամենամյա տեխ. անվտանգության փորձաքննության, հավասարակշռիչ կախոցներին ճոպանների ամրացման պողպատյա թիթեղների կտրվելը, որը հանգեցրել է խցիկի ազատ անկմանը):

Հավելենք, որ առկա է նաև բազմաբնակարան շենքերի բնակիչների տեղեկատվության պակաս շենքերի վերելակների տեխնիկական վիճակի վերաբերյալ, ուստի գտնում ենք, որ նպատակահարմար է վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության փորձագիտական եզրակացության տվյալները փակցնել բազմաբնակարան շինության տեսանելի վայրում, ինչպես նաև բազմաբնակարան շինության յուրաքանչյուր վերելակին փակցնել տեղեկատվություն առ այն, թե այն երբ է վերջին անգամ ենթարկվել տեխնիկական փորձաքննության:

Առաջարկ. խստացնել վերահսկողությունը վերելակների տեխնիկական անվտանգության փորձաքննության ապահովման նկատմամբ՝ բացառելու համար տարեկան փորձաքննություն չանցած վերելակների շահագործումը, ինչպես նաև քայլեր ձեռնարկել վերելակների տեխնիկական վիճակի վերաբերյալ բազմաբնակարան շենքերի բնակիչների իրազեկվածության բարձրացման ուղղությամբ:

V ԲԱԺԻՆ. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանն ունեցել է 4 տեղակալներ, ովքեր պատասխանատու են եղել համապատասխանաբար արդար դատաքննության, խոսքի ազատության, զինծառայողների, ազատությունից զրկված անձանց, սոցիալ-տնտեսական իրավունքների հարցերով և անհատական դիմումներով իրավունքների պաշտպանության համար, ինչպես նաև 2 խորհրդականներ: Պաշտպանի աշխատակազմում գործել են 6 առանձնացված ստորաբաժանումներ՝ Անհատական դիմումներով իրավունքների պաշտպանության, Իրավական վերլուծության, Արտաքին կապերի, Բռնությունների կանխարգելման, Արագ արձագանքման (զբաղվում է նաև զինծառայողների դիմում-բողոքներով) վարչություններ, ինչպես նաև Գործերի կառավարչություն:

Դիմում-բողոքների և օրենսդրական առաջարկների վիճակագրություն

2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է 5214 դիմում-բողոք, որից 1428-ը՝ գրավոր, 3453-ը՝ բանավոր: Ստացված բողոքներով իրավական խորհրդատվություն է տրամադրվել 3786 անձանց: Գրավոր ստացված 1428 դիմումից Մարդու Իրավունքների պաշտպանի կողմից քննարկման են ընդունվել 928-ը, որոնցից դրական լուծում ստացած են ստացել 498-ը: Միաժամանակ, 2015թ.-ին Պաշտպանի կողմից կայացվել է 91 խախտման որոշում:

2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի են ներկայացվել շուրջ 84 իրավական ակտերի նախագծեր: Նշված նախագծերի, ինչպես նաև անհատական դիմում-բողոքների հիման վրա հայտնաբերված 10-ից ավելի օրենսդրական խնդիրների վերաբերյալ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված շուրջ 330 օրենսդրական առաջարկ է ներկայացվել: Համեմատության համար նշենք, որ 2014թ.-ին տվյալ ցուցանիշը կազմել է 169:

Իր իրավասությունների շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը 2015թ.-ի ընթացքում խորհրդատվական բնույթի պարզաբանումներ (պաշտոնական) ստանալու նպատակով ՀՀ դատարանների նախագահների խորհուրդ է ներկայացրել 3 դիմում, ինչպես նաև հանդես է եկել դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ 32 հաղորդմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված դիմում-բողոքների ամփոփ վիճակագրությունը՝ ըստ պետական մարմինների և ըստ մարզերի ներկայացված է հավելվածում:

Արագ արձագանքման ծառայություն (116 թեժ գիծ)

Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման ծառայությունը 2015թ.-ին ստացել է 1719 ահազանգ, որոնցից 333-ի դեպքում իրականացվել է արագ արձագանքում՝ 135 դրական ելքով: Համեմատության համար նշենք, որ 2014 թ.-ին գրանցվել է 105 դրական ելքով ահազանգ: 1386 ահազանգերով քաղաքացիներին տրամադրվել է իրավաբանական խորհրդատվություն:

Թեժ գծին ստացված ահազանգերը հիմնականում վերաբերել են անձանց անհիմն բերման ենթարկելուն, ոստիկանության բաժանմունքներում օրենքով սահմանված ժամկետից երկար պահելուն, անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ վարչակազմի կողմից վատ վերաբերմունքի դրսևորմանը, ավտոմեքենաներն անհիմն հատուկ պահպանվող տարածքում պահելուն, անձանց ազատ տեղաշարժման իրավունքը սահմանափակելուն, քրեակատարողական հիմնարկներում հացադուլ հայտարարելուն, դատապարտյալների և կալանավորվածների՝ պետական մարմիններ դիմելու իրավունքն անհիմն սահմանափակելուն, ոստիկանության կողմից հավաքի իրականացումը սահմանափակելուն, անձին իր կամքին հակառակ հարկադիր կարգով հոգեբուժարանում տեղավորելուն, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիներին տեղեկանքներ չտրամադրելուն, հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարումների ընդունումն անհիմն մերժելուն, զինկոմիսարիատների կողմից տեղեկանք չտրամադրելուն և այլ խնդիրներին:

Ահազանգերի արդյունքում այցելություններ են կատարվել առավելապես ոստիկանության բաժիններ, քրեակատարողական հիմնարկներ, հավաքների անցկացման վայրեր, հոգեբուժական հաստատություններ և այլ վայրեր:

Այցելություններ կալանավայրեր, գորամասեր և այլ հաստատություններ

2015թ.-ի ընթացքում Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի (ԲԿԱՄ) փորձագետները կատարել են այցեր քրեակատարողական հիմնարկներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գործող հատուկ հանրակրթական դպրոցներ: Ընդ որում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ և հատուկ հանրակրթական դպրոցներ այցերը կատարվել են կրկնակի՝ նպատակ ունենալով ուսումնասիրել 2015թ.-ի մարտի 27-ին հրապարակված «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում» թեմայով Մարդու իրավունքների պաշտպանի

արտահերթ զեկույցում բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցները:

ԲԿԱՄ փորձագետները 2015թ.-ի ընթացքում իրականացրել են 253 այց: Այցերից 214-ը կատարվել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ, որից 16-ը պլանային կարգով և նախատեսված է եղել Մարդու Իրավունքների պաշտպանի հաստատած ժամանակացույցով, իսկ 198-ը՝ ըստ անհրաժեշտության: Մարդու իրավունքների պաշտպանի հաստատած ժամանակացույցով կատարվել է նաև 16 պլանային կրկնայց մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններ, մնացած 23 այցերը՝ ըստ անհրաժեշտության: Այցեր են իրականացրել նաև Բռնությունների կանխարգելման փորձագիտական խորհրդի անդամները. 2015թ.-ի ընթացքում կատարվել է թվով 78 այց ՀՀ քրեակատարողական հիմնարկներ, ՀՀ ոստիկանության բաժիններ, ձերբակալված անձանց պահման վայրեր:

2015թ.-ի պլանային այցերը նպատակաուղղված են եղել դիտարկվող հաստատություններում առկա խնդիրների վերհանմանը և դրանց արդյունավետ լուծումներ գտնելու հնարավորությունների ուսումնասիրմանը: Իրականացված պլանային և արտապլանային այցերի ընթացքում արձանագրված խնդիրների, դրանց արդյունավետ լուծումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են քննարկումներ, կլոր-սեղաններ, ԲԿԱՄ փորձագետներն առաջարկություններ են ներկայացրել նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման վերաբերյալ: Բացի այդ, կատարած այցերի վերաբերյալ պատկան մարմիններին ուղարկվել են գրություններ՝ տեղեկացնելով ոլորտում առկա խնդիրների, ինչպես նաև դրանց հնարավոր լուծման տարբերակների վերաբերյալ:

2015թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի զինծառայողների իրավունքների հարցերով տեղակալը կատարել է մի շարք այցեր գորամասեր, այդ թվում՝ բողոքների քննարկման շրջանակներում, որոնց ընթացքում իրականացվել է զինծառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերհանում, զինծառայողներն իրազեկվել են իրենց իրավունքների մասին, վերջիններիս տրամադրվել է խորհրդատվություն: Զինծառայողների ահազանգերի հիման վրա իրականացվել են նաև արագ արձագանքումներ, այդ թվում՝ գորակոչերի ժամանակ, որի ընթացքում ծնողներին և գորակոչիկներին ներկայացվել են իրենց իրավունքները: Աշխատակազմի աշխատակիցները ներկա են գտնվել նաև ԿԲՀ և ԿՌԲՀ նիստերին:

Մարդու իրավունքների պաշտպանի սոցիալ-տնտեսական իրավունքների հարցերով տեղակալը, ինչպես նաև խորհրդականներն այցելել են ներառական կրթություն իրականացնող Երևան քաղաքի մի շարք դպրոցներ, որոնց ընթացքում հայտնաբերված խնդիրների վերաբերյալ գրագրություն է իրականացվել պատասխանատու գերատեսչությունների հետ:

Զեկույցներ

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է «2014 թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցը, ԲԿԱՄ-ի 2015թ.-ի տարեկան զեկույցը:

Հայտարարություններ և կազմակերպված միջոցառումներ

2015 թ.-ի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել 24 հայտարարությամբ, հրապարակվել են բազմաթիվ նյութեր աշխատակազմի գործունեության, ինչպես նաև խախտման որոշումների ու դրական լուծում ստացած գործերի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպել է «Մարդու իրավունքները Սահմանադրության նոր նախագծում» թեմայով խորհրդածողով, որտեղ ելույթով հանդես են եկել Մարդու իրավունքների պաշտպանը, Եվրոպական Օմբուդսմենների ինստիտուտի գլխավոր քարտուղար Ժոզեֆ Սիգելեն, ԱՄՆ դեսպան Ռիչարդ Միլսը, ԵՄ պատվիրակության դեսպան Պյոտր Սվիտալսկին, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը, Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի անդամ Գևորգ Դանիելյանը, իրավապաշտպաններ Արա Ղազարյանը, Հերիքնազ Տիգրանյանը, Արտակ Զեյնալյանը, Արթուր Սաքունցն ու Ավետիք Իշխանյանը:

Դիմումներ ՀՀ Սահմանադրական դատարան

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ Սահմանադրական դատարան է ներկայացվել և քննվել 3 դիմում, ինչպես նաև 2015թ.-ին քննվել է 2014 թ.-ին ներկայացված 2 դիմում.

1. «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքի (2011թ.-ի նոյեմբերի 30, ՀՕ-286-Ն) 4-րդ հոդվածի 8-րդ մասի երկրորդ նախադասությամբ, 8-րդ հոդվածի 3-րդ մասի երրորդ նախադասությամբ ամրագրված դրույթների, ինչպես նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի (2002 թ.-ի սեպտեմբերի 24, ՀՕ-419-Ն) 5-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածի 1-ին մասին, 26-րդ հոդվածին, 31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 37-րդ, 43-րդ և 48-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

2. ՀՀ քրեական օրենսգրքի (ՀՕ-528-Ն, 18.04.2003 թ.) 244-րդ հոդվածի ՀՀ Սահմանադրության 21-րդ հոդվածի 1-ին և 22-րդ հոդվածի 1-ին մասերին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (ՀՕ-248, 01.07.1998թ.) 21-րդ հոդվածի 4-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին և 22-րդ հոդվածի 7-րդ մասերին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

4. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՀՕ-247, 17.06.1998թ.) 171-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթի, 173-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասին, 19-րդ հոդվածի 1-ին մասին, 20-րդ հոդվածի 1-ին մասին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

5. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ:

Օրենսդրական առաջարկներ

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին են ներկայացվել շուրջ 84 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության քրեական նոր օրենսգրքի, ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ նոր օրենսգրքի, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի, «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի, ««Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի, «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննություններին հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման և մի շարք այլ նախագծեր:

Համագործակցություն ՀՀ գործադիր, օրենսդիր և պետական այլ մարմինների հետ

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները 2015թ.-ին ունեցել են մի շարք հանդիպումներ ՀՀ գործադիր, օրենսդիր և պետական կառավարման և տեղական ինքնակառավարման և այլ մարմինների ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանը և աշխատակազմը ունեցել են մի շարք քննարկումներ ՀՀ Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովում, որոնց ընթացքում քննարկվել են 2014թ.-ի Տարեկան զեկույցում բարձրացված խնդիրները:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են մի շարք օրինագծերի շուրջ կազմակերպված խորհրդարանական լսումներին՝ ներկայացնելով դրանց վերաբերյալ Պաշտպանի առաջարկություններն ու նկատառումները:

ԲԿԱՄ փորձագետները աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ են ունեցել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ներկայացուցիչների հետ, որոնց ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձանց պահման պայմաններին, բժշկական սպասարկման կազմակերպմանը, արտաքին զննության պատշաճ իրականացմանը վերաբերող խնդիրներ, ինչպես նաև ազատազրկված անձանց իրավունքներին առնչվող հիմնահարցեր: Աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ են տեղի ունեցել նաև ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչների հետ, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել ՁՊՎ-ների պահման, սանիտարահիգիենիկ պայմանների, տրամադրվող սննդի, իրականացվող արտաքին զննության հարցերին, ինչպես նաև կարևորվել է քաղաքացիների իրավունքների ու ազատությունների մասին իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը:

Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության միջնորդությամբ ԲԿԱՄ բժիշկ-փորձագետը քրեակատարողական ծառայողների համար դասախոսություն է անցկացրել «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի» թեմայով:

Անհատական գործերի, օրենսդրական առաջարկների և համակարգային խնդիրների լուծման նպատակով աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության, ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ քաղաքաշինության նախարարության, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ Շիրակի մարզպետարանի ներկայացուցիչների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մասնակցել են նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի կատարման վերաբերյալ աշխատանքային քննարկմանը, ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծերին նվիրված քննարկումների և ՀՀ արդարադատության նախարարության և ԵԱՀԿ Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ կազմակերպած «Թափանցիկությունը և հասարակության մասնակցությունն օրենքների մշակման գործում» խորագրով քննարկմանը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) հարցերով խորհրդի անդամ է, որին կից աշխատանքային խմբում ներկայացված է նաև աշխատակազմի համապատասխան ներկայացուցիչը: Պաշտպանի ներկայացուցիչը նաև «Հայաստանի Հանրապետության ինտերնետ կառավարման համաժողով» միջգերատեսչական խմբի անդամ է:

Համագործակցություն քաղաքացիական հասարակության հետ

Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև աշխատակազմի աշխատակիցներն առանձին անհատական գործերի շրջանակներում համագործակցել են մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների հետ, այդ թվում՝ «Կանանց աջակցման կենտրոն», «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա», «Կանանց ռեսուրսային կենտրոն», «Կարիտաս», «Կանանց իրավունքների կենտրոն» հասարակական կազմակերպությունների, «Հանս Քրիստիան Կոֆոնեդ» բարեգործական հիմնադրամի և բազմաթիվ այլ կառույցների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կազմակերպած «Միջազգային դիտորդական առաքելությունների կողմից 2003-2013թթ. Հայաստանին տրված հանձնարարականների գնահատման» զեկույցի ներկայացմանը և քննարկմանը: Պաշտպանի ներկայացուցիչը «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի խորհրդատվական հանձնաժողովի անդամ է:

ԲԿԱՄ-ի Փորձագիտական խորհուրդը, որում ներգրավված են «Հայաստանի մանկական ասոցիացիա», «ՏՐՏՈՒ», «Ընդդեմ իրավական կամայականությունների», «Project harmony International», «Ֆրանս-հայկական զարգացման հիմնադրամի», «Սոցիալական արդարություն», «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ», «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն կազմակերպությունների», «Հայաստանի Հելսինկյան կոմիտե» հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները և 5 անկախ փորձագետներ, 2015 թ.-ին կրկնակի մշտադիտարկումներ է իրականացրել տասնյակ փակ և կիսափակ հաստատություններում:

Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները մասնակցել են նաև հասարակական տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպված մի շարք դասընթացների և սեմինարների:

Միջազգային համագործակցություն

2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանը և իր աշխատակազմը շարունակել են իրականացնել մի շարք միջազգային ծրագրեր՝ ամրապնդելով ակտիվ համագործակցությունն ու գործընկերային հարաբերությունները Եվրոպական միության, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի, Եվրոպայի խորհրդի, ՄԱԿ-ի, Հայաստանում հավատարմագրված մի շարք երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների (այդ թվում ԱՄՆ, Գերմանիայի և Միացյալ Թագավորության դեսպանատների և այլն), այլ երկրների օմբուդսմենների գրասենյակների և մի շարք այլ կառույցների հետ:

Պաշտպանը հանդիպումներ է ունեցել նաև Արցախի Հանրապետության Նախագահի և Մարդու իրավունքների պաշտպանի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան (ՄԱԲՀ) ներկայացուցչության հետ համատեղ իրականացվել է ՀՀ-ում վերարտադրողական և սեռական առողջության իրավունքների զարգացման ուսումնասիրություն, որի ընթացքում այցեր են կատարվել Երևանի և մի շարք մարզերի բժշկական հաստատություններ և դպրոցներ:

Շարունակվել է համագործակցությունը Պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՄԵՖ) միջև: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համատեղ «Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավում Հայաստանում» իրականացվող ծրագրի շրջանակներում համակարգող խորհրդի կազմում Պաշտպանի խորհրդականը, որպես մշտական ներկայացուցիչ, մասնակցել էրեխաների իրավունքների վերաբերյալ մի շարք աշխատանքային քննարկումների և հանդիպումների:

Շարունակվել է համագործակցությունը Պաշտպանի գրասենյակի և Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի միջև: Պաշտպանի ներկայացուցիչը համակարգել է ՄԱԿ ՓԳՀ-ի գրասենյակի կազմակերպած «Փախստականների պաշտպանության և ներկա մարտահրավերների ոլորտում առանցքային զարգացումների վերաբերյալ աշխատաժողով»-ը:

ԵԽ Երեխաների իրավունքների ռազմավարության Փորձագետների կոմիտեում որպես Հայաստանի մշտական ներկայացուցիչ՝ Պաշտպանի խորհրդականը մասնակցել է կոմիտեի հանդիպումներին և 2016-2021թթ. ԵԽ Երեխաների իրավունքների ռազմավարության մշակման աշխատանքներին:

Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպումներ են ունեցել նաև Եվրոպայի Խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին» կոնվենցիայի իրականացման գնահատման երկրորդ փուլի շրջանակում ԳՐԵՏՍ-ի փորձագետների հետ, Եվրոպայի Խորհրդի «Կոռուպցիայի դեմ պայքարի խմբի - GRECO»-ի մոնիտորինգային գործընթացի շրջանակներում GRECO-ի պատվիրակության հետ, Մոնիտորինգային այցի ընթացքում ԵԽ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովի (ECRI) անդամների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ

Մարդու Իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացված ընդհանուր բողոքներ	5214
Մարդու Իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացված գրավոր դիմումներ	1428
Մարդու Իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացված բանավոր դիմումներ	3453
Թեժ գծին ստացված բողոքներ	1386
Մարդու Իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից տրամադրված բանավոր խորհրդատվություններ	3786
Դրական լուծում ստացած դիմում-բողոքներ՝ ըստ անձանց	498

Ըստ պետական մարմինների՝ վարույթ ընդունած գործերի տասնյակ

ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն	134
ՀՀ պաշտպանության նախարարություն	127
Երևանի քաղաքապետարան	90
ՀՀ արդարադատության նախարարություն	77
ՀՀ դատարաններ	70
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	60
ՀՀ գլխավոր դատախազություն	31
ՀՀ քաղաքապետարաններ	30
ՀՀ գյուղապետարաններ	13
ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	10

01.01.2015-31.12.2015 ժամանակահատվածում գրավոր դիմում-բողոքների քանակական պատկերը՝ ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Երևան	790
Շիրակ	102

Գեղարքունիք	97
Կոտայք	99
Լոռի	97
Արարատ	45
Արմավիր	70
Սյունիք	29
Տավուշ	20
Արագածոտն	33
Վայոց ձոր	11
Ընդամենը	1428

01.01.2015-31.12.2015 ժամանակահատվածում խոցելի խմբերից ստացված բողոքների վիճակագրություն

Ազատագրվածներ	229
Հաշմանդամություն ունեցող անձինք	39
Զինձառայողներ	29
Երեխաներ	18
Փախստականներ	13
Ազգային փոքրամասնություններ	4
Բռնադատվածներ	2
Ընդամենը	334

VI ԲԱԺԻՆ. ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՆ ԸՍՏ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Խաղաղ, առանց զենքի հավաքների և ազատորեն մասնակցելու և դրանք կազմակերպելու իրավունքն անձի հիմնական իրավունքներից է, որն ամրագրած է ինչպես ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք միջազգային պայմանագրերով: Չնայած մի շարք դրական զարգացումներին և իրականացված բարեփոխումներին՝ այս իրավունքի պաշտպանության հարցում դեռևս առկա են մի շարք խնդիրներ՝ կապված ինչպես օրենսդրական թերի կարգավորումների, այնպես էլ տարբեր պետական մարմինների պրակտիկայում թույլ տրվող խախտումների հետ⁴⁵³:

2015 թվականին հավաքների ազատության իրավունքը հաճախ անհիմն սահմանափակվել է պաշտոնատար անձանց կողմից, ինչպես նաև մի շարք դեպքերում կիրառվել է անհամաչափ ֆիզիկական ուժ հավաքի մասնակիցների, ինչպես նաև հավաքը լուսաբանող լրատվական միջոցների ներկայացուցիչների: Նշված խնդիրների վերացման նպատակով առանձին միջոցառումներ են նախատեսվել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագրով⁴⁵⁴, համաձայն որի իրավապահ մարմինների և համայնքային ծառայողների համար պետք է կազմակերպել շարունակական վերապատրաստումներ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի և համապատասխան կանոնակարգերի դրույթների պրակտիկ կիրառման վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանը ինչպես բազմաթիվ դիմում-բողոքների ու ահազանգերի հիման վրա, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրություններ է կատարել 2015թ. տարբեր հավաքների սահմանափակման, դրանց մասնակիցների և լրագրողների նկատմամբ բռնության, անհիմն բերման ենթարկելու դեպքերի առնչությամբ, նման խախտումների պատճառների վերհանման և համապատասխան առաջարկությունների մշակման ուղղությամբ:

Մի շարք դեպքերում խաղաղ հավաքի անցկացման սահմանափակումն իրավապահ մարմինների կողմից պատճառաբանվել է արտոնված չլինելու հանգամանքով: Մինչդեռ, եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասության սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին⁴⁵⁵: Նմանատիպ պահանջ բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 11-րդ

⁴⁵³ Մանրամասն տես՝ «ՀՀ կառավարությանն առնթեր ՀՀ ոստիկանություն» բաժնում

⁴⁵⁴ ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 303-Ն որոշում Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, կետ 30

⁴⁵⁵ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մաս

հողվածի և ՄԻԵԴ համապատասխան նախադեպային իրավունքի պահանջներից, համաձայն որի իրազեկման պահանջների խախտմամբ անցկացվող, սակայն խաղաղ բնույթ ունեցող հավաքը ենթակա է պաշտպանության, իսկ ոստիկանությունն իր իրավասության սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին⁴⁵⁶:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների անցկացրած հավաքների մշտադիտարկման, ինչպես նաև պաշտոնական տվյալների ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ մի շարք դեպքերում հավաքի մասնակիցներին իրավապահ մարմինների կողմից վարչական բերման ենթարկելու գործողությունները եղել են չհիմնավորված և ուղղակիորեն նպատակ են հետապնդել ցրելու հավաքը, քանի որ բերման են ենթարկել նաև այն դեպքերում, երբ հնարավոր է եղել հենց տեղում՝ հավաքի անցկացման կամ այլ վայրում, կազմել զանցանք կատարելու վերաբերյալ արձանագրություն: Տվյալ խնդրի առկայության մասին է վկայում նաև ՀՀ ոստիկանության կողմից բերման ենթարկված հավաքի մասնակիցների վերաբերյալ կազմած արձանագրությունների և դրանց հիման վրա ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների թվերի համեմատությունը⁴⁵⁷:

Խնդրահարույց են նաև տվյալ ոլորտում գրանցված խախտումների դեպքում անօրինական գործողությունների արդյունքում պատճառված վնասների հատուցման և իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարցերը: Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանի ստացած դիմում-բողոքների, ՋԼՄ-ների նյութերի, հասարակական և միջազգային կազմակերպությունների հրապարակած տվյալները վկայում են հավաքների ընթացքում իրավասու մարմինների կողմից կատարված արարքները ոչ պատշաճ արձանագրելու, հետազոտելու, ինչպես նաև դրանց կատարման համար պատասխանատվության միջոցներ չկիրառելու մասին⁴⁵⁸:

Վերոգրյալ դեպքից բացի՝ արձանագրվել են նաև մի շարք այլ դեպքեր, երբ չի թույլատրվել հավաքն անցկացնել որևէ պետական մարմնի անմիջապես հարակից տարածքում՝ պատճառաբանելով, որ հավաքի անցկացումը կարող է խոչընդոտել տվյալ մարմնի բնականոն աշխատանքին, իսկ հավաքը հնարավոր է կազմակերպել նաև այլ վայրում: Մինչդեռ, հանրային հավաքները անցկացվում են որոշակի թիրախային անձի, խմբի կամ կազմակերպությանը հաղորդագրություն փոխանցելու նպատակով: Հետևաբար, որպես կանոն, աջակցություն պետք է ցուցաբերվի, որպեսզի հավաքներն անցկացվեն թիրախային անձի կամ կազմակերպության տեսողության և լսողության դաշտում⁴⁵⁹:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է

⁴⁵⁶ Մանրամասն տես՝ «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն» բաժնումՇ

⁴⁵⁷ Տես՝ նույն տեղում

⁴⁵⁸ Տես՝ նույն տեղում

⁴⁵⁹ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ, Խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույցով (2010թ.)

սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է:

Չնայած սահմանադրական նորմով նման երաշխիքների սահմանմանը՝ Հայաստանի լրատվական դաշտում դեռևս առկա է բազմակարծության պակաս: Այսպես, ՀՀ-ում հեռուստառադիոծրագրերի հեռարձակումն իրականացվում է լիցենզիայի հիման վրա⁴⁶⁰, որի տրամադրման համար անցկացվող մրցույթում որպես լիցենզավորված անձի ընտրության չափանիշ հաշվի է առնվում թեկնածուների բազմակարծությունը խթանելու կարողությունը⁴⁶¹: Մինևույն ժամանակ, ոլորտի լիազոր մարմինը պետք է հաշվի առնի բազմակարծության գործոնն ինչպես լիցենզիա տրամադրելիս, այնպես էլ թվային հեռարձակման համակարգի անցնելիս⁴⁶²: Այս առումով, հատկանշական է, որ թվայնացման գործընթացի անցումը նույնպես պետք է իրականացվի այնպես, որ նպաստի բազմակարծության խթանմանը և չհանգեցնի այնպիսի իրավիճակի, որ յուրաքանչյուր մարզում իրենց գործունեությունը շարունակեն մեկական հեռուստաընկերություն և առնվազն 10 կայաններ պարտավորված լինեն փակվել⁴⁶³: Քննարկվող խնդրի կապակցությամբ, դժգոհություններ են եղել նաև, որ Հանրային հեռուստաընկերությունում չեն կազմակերպվում բանավեճեր և հաղորդումներ, որոնք հնարավորություն կընձեռեն տարբեր քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին հրապարակայնորեն արտահայտել իրենց դիրքորոշումները:

Խոսքի ազատության հետ սերտ փոխկապակցված են լրագրողների գործունեության պաշտպանության և մամուլի ազատության խնդիրները: Չնայած նրան, որ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը պաշտպանվում է օրենքով⁴⁶⁴, 2015թ.-ին արձանագրվել են լրագրողների նկատմամբ բռնության և նրանց գործունեությունը խոչընդոտելու մի շարք դեպքեր, որոնց կանխման, բացահայտման և մեղավորներին պատժելու ուղղությամբ չեն ձեռնարկվել բավարար միջոցներ:

2015թ.-ի ընթացքում ստացվել են մի շարք ահազանգեր, որ Բաղրամյան պողոտայում «Ընդդեմ էլեկտրաէներգիայի թանկացման» նախաձեռնության կազմակերպած հավաքի ընթացքում իրավապահ մարմինները խոչընդոտել են լրագրողների օրինական գործունեությանը և վերջիններիս նկատմամբ բռնություն գործադրելով վնասել են նրանց տեխնիկան, որից հետո բերման են ենթարկել: Լրագրողների նկատմամբ հավաքների ժամանակ ոչ իրավաչափ ֆիզիկական ուժ է

⁴⁶⁰ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», ՀՀ օրենք, հոդված 7, 1-ին մաս

⁴⁶¹ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», ՀՀ օրենք, հոդված 49, 1-ին մաս, 3-րդ կետ

⁴⁶² Rec(2003)9, 4-րդ սկզբունք <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=38043&Site=CM>

⁴⁶³ Human Rights Watch 2016, <https://www.hrw.org/world-report/2016/country-chapters/armenia>

⁴⁶⁴ ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 164

կիրառվել նաև քաղաքացիական հագուստով անձանց կողմից⁴⁶⁵:

Ինչ վերաբերում է քննչական ենթակայության կարգով ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկված՝ լրագրողների օրինական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ ստացված հաղորդումների, ինչպես նաև վերջիններիս ընթացքի վերաբերյալ տեղեկատվությանը, ապա այդ կապակցությամբ ՀՀ հատուկ քննչական ծառայությունից համապատասխան տեղեկություններ չեն տրամադրվել: Իսկ ՀՀ քննչական կոմիտեում լրագրողների ռասայական գործունեության խոչընդոտման դեպքերի վերաբերյալ ստացվել է ստացվել է 4 հաղորդում:

Կարևորելով արտահայտվելու ազատության հիմնարար իրավունքը՝ միաժամանակ դատապարտելի է դրա յուրաքանչյուր ծայրահեղ դրսևորում, որի միջոցով տարածվում կամ հրահրվում է ռասայական ստելություն, քսենոֆոբիա, հոմոֆոբիա, հակասեմիտիզմ, խտրականության այլ ձևեր կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված ստելություն: Արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակների մեջ ակնհայտորեն չեն տեղավորվում ստելության խոսք պարունակող արտահայտությունները, որոնք հանդիպել են մամուլում 2015թ.-ի ընթացքում: 1997թ.-ին Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված Ատելության խոսքի վերաբերյալ թիվ (97) 20 և Զանգվածային լրատվամիջոցների և հանդուրժողականության մշակույթի խթանման վերաբերյալ թիվ (97) 21 հանձնարարականներով Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին կոչ է արվել օրենսդրական և գործնական բնույթի միջոցներ ձեռնարկել ստելության խոսքի դեմ պայքարելու ուղղությամբ:

Հայաստանում դեռևս լիարժեք պաշտպանված չէ նաև իրավապաշտպանների գործունեությունը: Ընթացիկ տարվա ընթացքում Պաշտպանի կողմից ուսումնասիրված մի շարք դեպքերում իրավապաշտպանների օրինական գործունեության իրականացմանը խոչընդոտել են հենց պետական պաշտոնատար անձինք: Այնինչ, պետության պարտավորություններից է իրավապաշտպաններին հնարավոր հարձակումներից և սպառնալիքներից պաշտպանելը, վերոնշյալ անձանց նկատմամբ հարձակումների և սպառնալիքների վերաբերյալ հաղորդումների անհապաղ և համապարփակ ուսումնասիրելը, մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելը և տուժողների իրավունքները վերականգնելը: Այս իմաստով համապատասխան իրավապահ մարմինների գործառույթն է ոչ միայն տվյալ դեպքերի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտումը, այլև անձանց, հատկապես՝ իրավապաշտպանների անվտանգության ու անձեռնմխելիության ապահովումը, ինչի կապակցությամբ եղել են մի շարք դժգոհություններ⁴⁶⁶:

⁴⁶⁵ Մանրամասն տես՝ «ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն» բաժնում

⁴⁶⁶ Եզրափակիչ դիտողություններ, Մարդու իրավունքների Կոմիտե, 105-րդ նստաշրջան, 9-27 հուլիս 2012 թվական, կետ 26 <file:///H:/Data/Downloads/CCPRCARMCO2.pdf>

ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը դեռևս 2010թ.-ին Հայաստանում մարդու իրավունքների վիճակի մասին զեկույցում իր մտահոգությունն էր հայտնել իրավապաշտպանների օրինական գործունեության խոչընդոտման և բռնության դեպքերի վերաբերյալ⁴⁶⁷: Նշյալ զեկույցում, որպես գլխավոր խնդիր, նշվել էր իրավապաշտպանների իրավունքների ոտնահարման դեպքում իրավախախտների չբացահայտումը՝ պատճառաբանելով նշվածը Հայաստանում արմատավորված անպատժելիության մշակույթով:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի՝ արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք⁴⁶⁸:

Նշված իրավունքի համատեքստում պետք է նշել, որ 2015թ.-ին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից անձանց արդար դատաքննության իրավունքի պաշտպանության նպատակով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ 32 հաղորդում է ներկայացվել ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, որոնցից որևէ մեկը, սակայն հիմք չի հանդիսացել կարգապահական վարույթի հարուցման համար: Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովից ստացված գրություններն ու որոշումները չեն ունեցել, ըստ էության, պատճառաբանություններ կարգապահական վարույթի հարուցումը մերժելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է արդարադատության համակարգում առկա խնդիրներին, ապա ՀՀ դատական համակարգում առկա ներքին ճնշումներին, կոռուպցիոն դրսևորումներին և այլ խնդիրներին անդրադարձել է Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը: Մասնավորապես, Հանձնակատարին մտահոգում են ստացված տեղեկություններն այն մասին, որ դատական բարձր աստիճանները միջամտում են ավելի ցածր աստիճանների դատավորների աշխատանքին: Հանձնակատարը նշել է, որ անհատ դատավորներից յուրաքանչյուրի անկախությունը ողջ դատական համակարգի անկախության անհրաժեշտ նախադրյալն է: Նշվել է նաև, որ կարգապահական վարույթները չպետք է օգտագործվեն որպես ազդեցության կամ վրեժխնդրության գործիք դատավորների նկատմամբ, և դրանց կամայական օգտագործումը կանխելու համար պետք է ներդրվեն անհրաժեշտ երաշխիքներ:⁴⁶⁹

Դեռևս 2014 թ.-ի Տարեկան զեկույցում Պաշտպանը անդրադարձել էր լրագրողական գործունեության անհրաժեշտ երաշխիքների օրենսդրական ամրագրման խնդրին՝ հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները, ինչպես նաև ԵԽ

⁴⁶⁷ <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/179/19/PDF/G1017919.pdf/OpenElement>

⁴⁶⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդվածներ 61, 63

⁴⁶⁹ <https://wcd.coe.int/com.instranet.InstraServlet?command=com.instranet.CmdBlobGet&InstranetImage=2790589&SecMode=1&DocId=2243332&Usage=2>

Նախարարների կոմիտեի հանձնարարականի դրույթները⁴⁷⁰: Նշվածի խնդրի համատեքստում հատկանշական է դեռևս 2014թ-ին քննվող ilur.am, «Հրապարակ» օրաթերթի դատական գործերը, որոնցով լրատվամիջոցներին պարտավորեցրեցին բացահայտել իրենց հրապարակումներից մեկի աղբյուրը⁴⁷¹: ԵԱՀԿ-ի ՁԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը անդրադառնալով տվյալ դատարանի որոշմանը, նշել էր, որ այն ունի սառեցնող ազդեցություն, միաժամանակ ընդգծելով, որ ՁԼՄ ներկայացուցչի՝ տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը հետաքննական լրագրության և խոսքի ազատության հիմքն է⁴⁷²:

Միաժամանակ, «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ արգելվում է որևէ տեղեկատվություն տարածելուն կամ դա տարածելուց հրաժարվելուն նպատակաուղղված կամ դրան հանգեցնող հարկադրանքը լրատվական գործունեություն իրականացնողի և լրագրողի նկատմամբ, ինչպես նաև «լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը»⁴⁷³: Միաժամանակ, լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը՝ բացառությամբ այն դեպքերին, երբ այդ պարտադրվում է դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները⁴⁷⁴:

Ավելին, տեղեկատվության աղբյուրների գաղտնիությունը պաշտպանելու լրագրողի իրավունքը երաշխավորված է թե՛ ՀՀ Սահմանադրությամբ, թե՛ Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված փաստաթղթերով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով:

Այսպես, ՄԻԵԴ-ն իր մի շարք վճիռներում արձանագրել է, որ մամուլն օժտված է տեղեկատվության տարածման ամենալայն ազատություններով, ներառյալ՝ լրագրողի աղբյուրի գաղտնիության իրավունքը: Առանց այսպիսի երաշխիքի՝ աղբյուրները կաշկանդված կլինեն՝ դիմելու լրատվամիջոցներին, որոնցով

⁴⁷⁰ R (2000) 7 հանձնարարականը սահմանում է, որ ԵԽ անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել օրենսդրական և գործնական միջոցներ՝ ուղղված ՁԼՄ-ների կողմից տեղեկատվության աղբյուրի չբացահայտման գործուն և հստակ պաշտպանությանը: Միաժամանակ, նշյալ փաստաթղթում արձանագրվում է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ պարբերության իմաստով միայն բացառիկ դեպքերում են իշխանություններն իրավասու՝ բացահայտելու լրագրողի տեղեկատվության աղբյուրը:

⁴⁷¹ ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 26.06.2014թ. ԵԿԴ/0032/08/14 որոշում

⁴⁷² http://www.hrw.org/sites/default/files/wr2015_web.pdf

⁴⁷³ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 4, կետ 3

⁴⁷⁴ Նույն տեղում, հոդված 5, մաս 2

տարածվում է հասարակությանը հետաքրքրող տեղեկատվությունը⁴⁷⁵:

Վերոգրյալ հարցի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր 2015թ.-ի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴՌ-1234 որոշման մեջ նշել է, որ տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է համարվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքերում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր հանցագործությունը կանխելու կամ ծանր հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար: Ավելին, Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ տեղեկատվության աղբյուրի պաշտպանության վերաբերյալ դրույթները Հայաստանի Հանրապետության իրավակիրառ պրակտիկայում պետք է մեկնաբանվեն և կիրառվեն նշված սահմանադրաիրավական բովանդակության շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանը այս ուղղությամբ հետևողական է լինելու, որպեսզի գործնականում պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից պահպանվեն տվյալ նորմերի կիրառումը՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ նշված դիրքորոշման համաձայն:

Դեռևս 2014թ.-ի Տարեկան զեկույցում բարձրաձայնվել և առ այսօր չի լուծվել անձին առանց գործի վարույթն իրականացնող մարմնի համապատասխան թույլտվության նախաքննության կամ հետաքննության տվյալ հանդիսացող տեղեկությունը հրապարակելու դեպքում քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այսպես, նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ, իսկ անհրաժեշտ դեպքերում քննիչը, հետաքննության մարմինը վկային, տուժողին, քաղաքացիական հայցվորին և քաղաքացիական պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց գրավոր նախազգուշացնում են, որ վերջիններս իրավունք չունեն նախնական քննության տվյալներն առանց թույլտվության հրապարակել⁴⁷⁶: Պաշտպանի կողմից կարևորվել է, որ քրեական վարույթի շրջանակներում նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին գրավոր չնախազգուշացված անձինք չենթարկվեն պատասխանատվության:

Ինչ վերաբերում է լրագրողներին, որոնք այս իմաստով ավելի խոցելի են, ապա «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գաղտնի համարվող տեղեկատվության տարածման համար լրատվական գործունեություն իրականացնողը պատասխանատվության ենթակա չէ, եթե այդ տեղեկատվությունը նա ձեռք չի բերել օրենքով արգելված եղանակով կամ ակնհայտ չի եղել, որ դա օրենքով սահմանված կարգով գաղտնիք է համարվել⁴⁷⁷: Ստացվում է, որ լրատվական

⁴⁷⁵ *Goodwin v. the United Kingdom* (1996), *Nordisk Film & TV A/S v. Denmark* (2005), *Voskuil v. the Netherlands* (2008), *Sanoma Uitgevers B.V. v. the Netherlands* (2010)

⁴⁷⁶ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 201

⁴⁷⁷ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենք, հոդված 9, մաս 3

գործունեությունն իրականացնող անձը նույնպես կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել նախաքննության կամ հետաքննության տվյալներ հրապարակելու համար:

Բացի այդ, անհրաժեշտ է հստակեցնել «նախաքննության տվյալ» եզրույթը, քանի որ այն կարող է տարաբնույթ կերպով մեկնաբանվել և ընդգրկել քրեական գործին առնչվող ցանկացած տեղեկություն՝ ընդհուպ մինչև մեղադրյալի անուն-ազգանունը: Գտնում ենք, որ որոշ դեպքերում տվյալ հասկացության փոխարեն կարելի է կիրառել «նախաքննության գաղտնիք» եզրույթը՝ համապատասխան բովանդակային հստակեցմամբ:

Ինչ վերաբերում է նախնական քննության այն տվյալներին, որոնք մինչև դրա ավարտը կարող են հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ և կարող են մատչելի դառնալ տուժողին միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից իր հայեցողության իրացման արդյունքում, ապա ՀՀ սահմանադրական դատարանն իր 2012թ.-ի հունվարի 24-ի թիվ ՄԴՈ-1008 որոշման մեջ ընդգծել է, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ: Այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ:

ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է յուրաքանչյուր անձի՝ տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը⁴⁷⁸: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով: Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով: Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են⁴⁷⁹: Այնուհանդերձ, 2015թ.-ին սույն իրավունքի ապահովման կապակցությամբ գրանցվել են մի շարք խնդիրներ:

Բազմաթիվ դժգոհություններ են ստացվել տնտեսավարող սուբյեկտներից, որ գործածելով քրեական գործ հարուցելու իրենց լիազորությունները՝ հարկային մարմնի քննիչներն անուղղակիորեն ճնշում են գործադրել հարկ վճարողների վրա՝ պարտադրելով վճարել չվճարված հարկերը, անգամ այն դեպքերում, երբ չի հաստատվել հարկատուի կողմից հակաիրավական արարք կատարելու փաստը: Այսպես, ՀՀ ֆինանսների նախարարության (Նախարարություն) քննչական վարչության կողմից 2015թ.-ին հարուցվել և վարույթ է ընդունվել թվով 688 քրեական գործ, որից քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան 34 քրեական գործի շրջանակներում և քրեական գործի վարույթը կասեցվել է 38 գործով: Փաստորեն, հարուցված և վարույթ ընդունված 688 քրեական գործերից միայն 34-ն է մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: Նման պրակտիկան հարկային մարմնի կողմից կրկնվում է արդեն մի քանի տարի, ինչին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ Տարեկան զեկույցներում: Արդյունքում՝ քրեական գործի հարուցումը անուղղակիորեն հետ է պահում անձին իր իրավունքները դատական կարգով պաշտպանելուց, քանի որ, որպես կանոն, անձինք նախընտրում են շտապ վճարել հարկերը և տույժ-տուգանքները, այլ ոչ թե բողոքարկել դրանց հիմնավորվածությունը:

Դժգոհություններ կան, որ հարկային և մաքսային ծառայողները զբաղվել են ձեռնարկատիրական գործունեությամբ և օգտագործելով պաշտոնական դիրքն՝ օրենքով արգելված առավելություններ են ձեռք բերել մյուս ձեռնարկատերերի նկատմամբ, ինչի արդյունքում սահմանափակվել է այլ անձանց՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, խաթարվել տնտեսական մրցակցությունն ու շուկայում հավասարությունը: Այնինչ, հարկային և մաքսային ծառայողն իրավունք չունի զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ⁴⁸⁰: Այս առումով արդյունավետ չէ նաև ծառայողների կողմից օրենքով արգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը բացառելու նպատակով վերահսկողությունը հարկային և

478 ՀՀ Սահմանադրություն, հոդված 59

479 «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք

480 «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 13

մաքսային մարմինների գործունեության նկատմամբ:

Վերահսկողության պակասով են պայմանավորված եղել նաև որոշ դեպքերում հարկային մարմնի աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունները: Այսպես, օրինակ, տնտեսավարող սուբյեկտները դժգոհում են, որ հարկային ծառայողները համաձայնության են գալիս, որ որոշակի պարբերությամբ առևտրականներն իրենց «հարկեր» կմուծեն, որի դիմաց վերջիններիս մոտ հարկային ստուգումներ չեն իրականացվի կամ հերթական ստուգումների կամ օպերատիվ գործողությունների ընթացքում հարկային ծառայողները տնտեսավարողների նկատմամբ քրեական գործեր հարուցելու սպառնալիքներ են հնչեցրել: Այս համատեքստում խնդրահարույց է պաշտոնական վիճակագրությունը, որի համաձայն հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից 2015թ.-ի ընթացքում իրականացվել է ընդամենը 51 ծառայողական քննություն:

Շարունակում է մտահոգիչ լինել ստուգումների անցկացման պրակտիկան: «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հարկային մարմնի աշխատակիցն իր լիազորություններն իրականացնելիս իրավունք ունի վերցնել փաստաթղթեր, կրկնօրինակներ, լուսապատճեններ, իրեր, փորձանմուշներ և այլ անհրաժեշտ նյութեր, որոնք անմիջականորեն առնչվում են ստուգման նպատակներին և չեն խոչընդոտում տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին⁴⁸¹: Այնուամենայնիվ, «ստուգման նպատակներին անմիջականորեն առնչվող և տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին չխոչընդոտող անհրաժեշտ նյութեր» հասկացությունը խնդրահարույց է իրավական որոշակիության տեսանկյունից: Այսինքն, պարզ չէ, թե որ դեպքում կարող է անհրաժեշտ նյութը անմիջականորեն առնչվել ստուգման նպատակներին, ինչպես կամ որ մարմնի կողմից է դա որոշվում և, միաժամանակ, ինչ չափորոշիչների հիման վրա է որոշվում՝ արդյոք ստուգումն իրականացնող անձանց կողմից վերցված իրերը խոչընդոտո՞ւմ են տնտեսվարող սուբյեկտի բնականոն աշխատանքին, թե՞ ոչ: Տնտեսավարող սուբյեկտներից, նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպություններից բողոքներ են ստացվել առ այն, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով ստուգումն իրականացնող հարկային մարմնի աշխատակիցներն իրենց լիազորություններն իրականացնելիս հաճախ, առանց բավարար հիմնավորումների կամ պատճառաբանության, վերցրել են հարկատուների աշխատավայրում գտնվող տարբեր իրեր: Նշված պրակտիկան էապես խոչընդոտել է բազմաթիվ գործարարների աշխատանքին:

Խնդիրներ են արձանագրվել նաև վարչական բողոքների քննման ոլորտում: Այսպես, մի շարք դիմումատուներ բողոքել են, որ իրենց վարչական բողոքները

481 «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք, հոդված 7, կետ «գ»

հարկային ծառայողի վերադաս մարմնի կողմից չեն բավարարվում: ՀՀ Ֆինանսների նախարարության minfin.am պաշտոնական կայքի հրապարակած տեղեկատվության համաձայն⁴⁸²՝ 2010թ.-ի դեկտեմբերի 6-ից 2013թ.-ի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գումարվել են գանգատարկման խորհրդի 74 նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են 274 դիմում-գանգատներ և դրանց վերաբերյալ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների կողմից գանգատարկման խորհուրդ ներկայացված՝ դիմում-գանգատի մերժման (մասնակի բավարարման) վերաբերյալ որոշման նախագծեր: Վերջիններիս վերաբերյալ գանգատարկման խորհուրդը տվել է հետևյալ եզրակացությունները. 45 դիմում-գանգատներ (ընդհանուր դիմում-գանգատների շուրջ 16 տոկոսը) ամբողջությամբ համարվել են հիմնավոր, 17 դիմում-գանգատներ (ընդհանուր դիմում-գանգատների շուրջ 6.5 տոկոսը) մասնակիորեն համարվել են հիմնավոր, 6 դիմում-գանգատներ (ընդհանուր դիմում-գանգատների շուրջ 2 տոկոսը) համարվել են ոչ հիմնավոր՝ պայմանով, որ հարկային մարմինը ապահովի լրացուցիչ փաստական հանգամանքներ, 3 դիմում-գանգատներ համարվել են ոչ հիմնավոր, սակայն հարկային մարմնին առաջարկվել է կատարել ստուգման ակտով առաջադրված հարկային պարտավորությունների վերահաշվարկ, 3 դիմում-գանգատների քննությունը կասեցվել է, 22 դիմում-գանգատներ (ընդհանուր դիմում-գանգատների շուրջ 8.3 տոկոսը) համարվել են ոչ հիմնավոր, սակայն հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին առաջարկվել է նշյալ դիմում-գանգատների վերաբերյալ որոշումների նախագծերում կատարել փոփոխություններ՝ կապված հանձնաժողովի կողմից որոշումների ընդունման հիմնավորումների հետ, 1 դիմում-գանգատի վերաբերյալ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի որոշումը առաջարկվել է համապատասխանեցնել ընկերության նկատմամբ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարուցված քրեական գործի վերաբերյալ օրինական ուժի մեջ մտած և գանգատարկման խորհուրդ ներկայացված դատական ակտին, 177 դիմում-գանգատներ (ընդհանուր դիմում-գանգատների շուրջ 64 տոկոսը) համարվել են ոչ հիմնավոր:

Հարկ է ուշադրություն դարձնել նաև գանգատարկման հանձնաժողովի կազմին. այսպես, հանձնաժողովը բաղկացած է 9-ը անդամից, որից 7-ը ՀՀ Ֆինանսների նախարարության բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք են: Այս իմաստով խնդրահարույց է հանձնաժողովի անկախությունն ու անաչառությունը որոշումների կայացման հարցում, և պատահական չէ, որ քաղաքացիների դիմում բողոքների միայն 16 տոկոսն է բավարարվում⁴⁸³:

Տնտեսավարող սուբյեկտները, բարձրացրել են այն հարցը, որ հարկային ծառայողների կողմից ստուգումների արդյունքում տարբեր իրեր են վերցվել, անհիմն պատճառներով դրանք ուշացմամբ են վերադարձվել: Նշվածի պրակտիկայի

⁴⁸² <http://minfin.am/index.php?art=1468&lang=1>

⁴⁸³ <http://minfin.am/index.php?hdr=253&lang=1>

կապակցությամբ Նախարարությունը չի տրամադրել որևէ տեղեկություն:

Մինևույն արարքի համար կրկնակի պատասխանատվության չենթարկելու սկզբունքի առումով խնդրահարույց են «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ: Այսպես, նշված օրենքով սահմանվում է, որ հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկում նշված օրենքով սահմանված կարգով հաշվարկված վնասն ավելի ցույց տալու դեպքում ռեզիդենտ հարկ վճարողից գանձվում է տուգանք՝ ավելի ցույց տված վնասի 20%-ի չափով⁴⁸⁴: Սակայն գործնականում նշված դրույթը կիրառվել է՝ առանց հաշվի առնելու, թե վնասը ավելի ցույց տալը արդյո՞ք հանգեցրել է հարկի նվազեցմանը, թե՛ ոչ, այսինքն՝ արդյո՞ք դրա հետևանքով պետությանը և հասարակությանը հասցվել է գույքային վնաս: Արդյունքում, «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի կիրառման հետևանքով տնտեսավարողը գործնականում կարող է կրկնակի պատասխանատվության ենթարկվել սույն դրույթով, «Հարկերի մասին» ՀՀ օրենքով (եթե գործողությամբ նվազել է պետությանը վճարվող հարկի գումարը) և Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (որպես պատժիչ բնույթ կրող պատասխանատվություն): Փաստորեն, տվյալ դրույթի կիրառման արդյունքում խախտվում է անձի՝ մինևույն արարքի համար կրկնակի պատասխանատվության չենթարկելու սկզբունքը⁴⁸⁵, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ նախատեսվում է պատժիչ բնույթ կրող պատասխանատվության միջոց, ինչի սահմանադրականության վիճարկման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը 13.11.2014թ.-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան: 2015թ.-ի ապրիլի 28-ին ՀՀ սահմանադրական դատարանը իր ՄԴՈ – 1203 որոշմամբ նշել է, որ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 3-րդ պարբերության 1-ին նախադասությամբ ամրագրված՝ վեճի առարկա դրույթը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ վնասի ոչ ճիշտ հաշվարկը հանգեցնում է շահութահարկի գծով պարտավորությունների ոչ բարեխիղճ կատարման: Ինչպես նաև գտել է, որ իրավակիրառ պրակտիկայում տվյալ դրույթը չի կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ նույն արարքի համար առաջանա կրկնակի պատասխանատվություն, տուգանք նշանակվի և գանձվի այն պարագայում, երբ տարբեր պատճառներով ավելի մեծ ցույց տրված վնասը չի հանգեցրել հարկային պարտավորությունների չկատարման:

Սահմանադրական դատարանը հայտնել է, որ այս մոտեցումը պետք է որդեգրվի նաև հինգ տարվա ընթացքում փոխանցվող վնասի հաշվարկման դեպքում: Իսկ իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներից չի բխում այն մոտեցումը, երբ նախապես տուգանք կարող է սահմանվել և հաշվարկվել ենթադրյալ (հնարավոր) խախտումների համար:

⁴⁸⁴ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 69

⁴⁸⁵ ՀՀ Սահմանադրություն, հոդված 68

Սահմանադրական դատարանը հայտնել է, որ իր սույն իրավական դիրքորոշումները համակարգային ձևով իրենց իրացումը պետք է գտնեն ինչպես «Շահութահարկի մասին», այնպես էլ «Հարկերի մասին» ՀՀ օրենքներում:

2014 թ.-ի ընթացքում գրանցվել են բազմաթիվ դեպքեր, ստացվել են դիմում-բողոքներ առ այն, որ Նախարարության մաքսային մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից անհիմն մերժվել է «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդով մաքսազերծման իրականացումը⁴⁸⁶: Այսպես, քաղաքացիներն առավել հաճախ տվյալ խնդրի հետ բախվել են, երբ մաքսային մարմինը մերժել է մաքսազերծել տրանսպորտային միջոցներն իրենց ձեռքբերման գնով, այսինքն՝ չի կիրառել գործարքի գնի մեթոդով մաքսային արժեք որոշելու ռեժիմը՝ պատճառաբանելով ներկայացված փաստաթղթերում առկա ոչ էական, շտկելի թերությունների առկայությամբ: Վերոնշյալ ոչ իրավաչափ վարչարարության համատեքստում հատկանշական է ՀՀ Սահմանադրական դատարանի 2014թ.-ի թիվ ՍԴՈ-1176 որոշումը, որի համաձայն՝ մաքսազերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման մյուս այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից: Նշենք, որ Նախարարության 2015թ.-ին հայտնած տեղեկատվության համաձայն՝ 2014թ.-ի ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ՀՀ է ներմուծվել 46474 հատ ավտոտրանսպորտային միջոց, որից ընդամենը 1533 հատի (3.29%) մաքսային արժեքն է հայտարարագրվել գործարքի գնի մեթոդով, իսկ 2016թ.-ին հայտնած տեղեկատվության համաձայն՝ 2014թ.-ին գործարքի գնի մեթոդը կիրառվել է մաքսային ձևակերպումների 65,73% դեպքերում: Փաստորեն, Նախարարության կողմից ներկայացվել են իրարամերժ տեղեկություններ, և պարզ չէ մաքսային ծառայողների կողմից քանի դեպքում է կիրառվել գործարքի գնի մեթոդը: «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային մարմինների կողմից մաքսային արժեքի չափի կամ որոշման եղանակի հետ անհամաձայնության դեպքում հայտարարատուն մերժման եզրակացությունը ստանալուց հետո՝ տասն օրվա ընթացքում, կարող է բողոքարկել վերադաս մաքսային մարմին կամ դատարան: Մինչդեռ, մի շարք դիմումատուներ իրենց բողոքն են հայտնել, որ Մաքսային մարմինների կողմից տրամադրված մերժման եզրակացությունը բողոքարկել են վերադասության կարգով, սակայն արդյունքի չեն հասել:

Ոլորտի մասնագետները բազմիցս բարձրաձայնել են, որ չնայած պետական գնումների ոլորտում առկա աջակցության ծրագրերի, այդ թվում՝ դոնորների կողմից, որոշ ուղղություններով հետընթաց է արձանագրվել: Այսպես, չնայած «Գնումների մասին» ՀՀ օրենքով գնումների նախընտրելի և հիմնական ընթացակարգը բաց

486 «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենք, հոդված 78

ընթացակարգն է⁴⁸⁷, այնուամենայնիվ, հիմնականում գերակայում են ոչ մրցակցային գնումները, ինչը կոռուպցիոն ռիսկերի վտանգ է ստեղծում և չի բխում պատշաճ մրցակցության ապահովման սկզբունքից: Հատկանշական է ոչ մրցակցային գնումների վերաբերյալ Եվրոպայի արդարադատության դատարանի դիրքորոշումը, որն իր գործերից մեկով հաստատել է, որ այն դեպքերում, երբ պայմանագրի կողմը ցանկանում է պայմանագիր կնքել առանց մրցակցության՝ կիրառելով «բանակցային ընթացակարգի կազմակերպում առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու» ձևը, ապա համապատասխան ԵՄ հանձնարարականով⁴⁸⁸ նախատեսված պայմանները պետք է մեկնաբանվեն *սահմանափակ կերպով*, և պայմանագրի կնքումը առանց մրցակցության պետք է կիրառվի *միայն բացառիկ դեպքերում*⁴⁸⁹: Ուստի, կարելի է ենթադրել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պայմանները բավականին լայն են ու սահմանափակում են պետական գնումներում մրցակցության սկզբունքի ապահովման հնարավորությունը: Հետևաբար, առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգով կատարվող գնումները, օրինակ, երբ գնման ենթակա ապրանքը, աշխատանքը կամ ծառայությունը հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, պետք է կիրառվեն բացառիկ դեպքերում, այլ ոչ համատարած բնույթ կրեն: Ըստ Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի տվյալների՝ բացի այն, որ գնումների քանակային առումով մոտ 70%-ը, իսկ գումարային առումով՝ մոտ 60%-ը իրականացվում է մեկ անձից ձեռքբերումների հիմքով, անգամ այն դեպքերում, երբ իրականացվում են բաց ընթացակարգով գնումներ, պատվիրատուները մի շարք գործիքներ ունեն պատժելու իրենց համար «անցանկալի հաղթողներին»:

Շարունակում է արդիական մնալ այն խնդիրը, որ «Գնումների մասին» օրենքի պահանջը⁴⁹⁰, ըստ որի բաց ընթացակարգով մրցույթների ժամանակ հաղթող է ճանաչվում այն ընկերությունը, որն, առաջարկել է ամենացածր գինը, հաճախակի նշանակում է ամենացածր որակի ապրանքի/ծառայության մատակարարում: Նշված խնդրի մասին են բարձրաձայնել նաև գործարարները, նշելով, օրինակ, որ այն դեպքերում, երբ «ստուգողները» պարզում են, որ պատվիրատուն ցածրորակ ապրանք է գնել, ոչինչ չեն նախաձեռնում, իսկ երբ պարզվում է, որ պատվիրատուն ավելի բարձր գնով որակյալ ապրանք է ձեռքբերել, պատվիրատուն «սկսում է խնդիրներ ունենալ»⁴⁹¹: Տվյալ խնդիրն արդիական է, մասնավորապես, այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սննդի և դեղերի մատակարարումը, ինչի կապակցությամբ Մարդու

⁴⁸⁷ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս

⁴⁸⁸ EU Directive 2004/18/EC

⁴⁸⁹ <http://transparency.am/hy/publications/view/98>, էջ 54

⁴⁹⁰ Ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի՝ մրցույթում հաղթելու սկզբունքը, ի թիվս այլ պահանջների, նվազագույն գին ներկայացնելն է, երբ նախապատվություն տրվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին:

⁴⁹¹ <https://www.youtube.com/watch?v=uhpjRcKUs>

իրավունքների պաշտպանը պարբերաբար ստանում է ահազանգեր, դիմում-բողոքներ: Բարձրաձայնված խնդիրը շարունակաբար չի լուծվում, նախևառաջ, այն պատճառով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է հիմնականում առավելապես բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից *նվազագույն գնային առաջարկ* ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Արդյունքում, գնումների ընթացքում նվազագույն գնային առաջարկի հիման վրա տրվող նախապատվությունը շատ դեպքերում բացասական ազդեցության վտանգ է ստեղծում ապրանքի պատշաճ որակի վրա:

Մի շարք ձեռներեցներ դժգոհություն են հայտնել, որ պետական գնումների համակարգում էական փոփոխություններ չեն նկատվում: Նրանց պնդմամբ շուկայում դեռևս կան արտոնյալ ընկերություններ, որոնք հիմնականում իրականացնում են պետական պատվերները: Դա կատարվում է մրցույթի այնպիսի պայմանների առաջադրմամբ, որ ոչ բոլոր ընկերություններին համապատասխանեն, և մյուսները հնարավորություն չունենան մասնակցելու պետական գնումների գործընթացին:

Գնումների համակարգի բարեփոխումների շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարությունը ներդրել է գնումների բողոքարկման ինստիտուտը՝ ձևավորելով Բողոքարկման խորհուրդ: Գնումների բողոքարկման խորհրդի անդամներից ձևավորվող հանձնաժողովի կազմավորման մոտեցումները ռիսկային են եղել, քանի որ օրենքով սահմանված ռոտացիոն համակարգում խեղաթուրված է պատահական ընտրանքի մեխանիզմը: Ըստ Թրանսփարենսի Ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոնի «ՀՀ պետական գնումների մոնիտորինգային հաշվետվություն 2014-2015թթ.» զեկույցի⁴⁹² (ԹԻ զեկույց)՝ ուսումնասիրված 191 բողոքների քննության պարագայում Խորհրդի 72 անդամից միայն 41 են մասնակցել, ինչը կասկածներ է առաջացնում ռոտացիոն համակարգի պատահական ընտրության վերաբերյալ, հաշվի առնելով նաև այն, որ բողոքների քննման գործընթացին են մասնակցում Խորհրդի ցանկում չներկայացված անդամներ: Ուստի, անհրաժեշտ է մշակել իրավական մեխանիզմ, որով կսահմանվի, որ այն դեպքում, երբ Խորհրդի անդամներից ձևավորված հանձնաժողովի նիստին հանձնաժողովի ցանկում ներառված անձը սահմանված քանակով և ավելի անգամ հրաժարվում է մասնակցել նիստերի քննությանը, որպես Խորհրդի հանձնաժողովի անդամ, նրա անդամությունը կասեցվի: Ոլորտի մասնագետների պնդմամբ բավարար արդյունավետ չէ նաև գնումների գործընթացի արդյունքների արտադատական բողոքարկման մեխանիզմը⁴⁹³, որի դժվարությունները հետ են պահում մրցույթի մասնակիցներին իրենց ռոտացիոն իրավունքները պաշտպանելուց:

Ինչպես 2014 թվականին, այնպես էլ 2015-ին արձանագրվել են հարկային մարմնի կողմից ֆիզիկական անձանցից ԱԱՀ վճարում կատարելու անհիմն պահանջի վերաբերյալ դեպքեր: Պարզվել է, որ հարկային մարմնի աշխատակիցների

⁴⁹² <http://transparency.am/files/publications/1450716758-0-713489.pdf>

⁴⁹³ «Գնումների մասին» ՀՀ օրենք, հոդված 45, մաս 3, կետ 1

կողմից մի շարք դեպքերում սխալ է կիրառվել «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքը (Օրենք), ինչի արդյունքում ֆիզիկական անձանց ներկայացվել է ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումներ կատարելու ոչ իրավաչափ պահանջ, իսկ դրանց չվճարման դեպքում նշանակվել են օրենքով սահմանված տույժ և տուգանքներ:

Տվյալ օրենքի իմաստով՝ ֆիզիկական անձանց կողմից իրականացված գործարքները կարող են համարվել ապրանքների մատակարարում այն դեպքում, երբ մեկ օրացուցային տարվա ընթացքում օտարվում է նույն տեսակի առնվազն 2 այնպիսի գույք, որոնք երկուսն էլ ձեռք են բերվել օտարմանը նախորդող մեկ տարվա ընթացքում: Ընդ որում, ԱԱՀ-ի վճարման պարտավորություն առաջանում է այդպիսի գույքի յուրաքանչյուր երկրորդ և հաջորդ միավորի օտարման պարագայում⁴⁹⁴: Սակայն Նախարարությունն առաջնորդվել է այն դիրքորոշմամբ, որ Օրենքում «օտարումը կատարվում է տվյալ գույքի ձեռքբերմանը հաջորդող մեկ տարին չգերազանցող ժամանակահատվածում» դրույթը վերաբերում է երկրորդ և ավելի թվով անգամ գույքի օտարմանը:

Օրենքի նման մեկնաբանությունը հիմնավոր չէ, քանի որ այդպիսի մոտեցման պարագայում ԱԱՀ պետք է գանձվի նաև այն դեպքերում, երբ օտարվող գույքի երկու միավորից երկրորդն է ձեռք բերվել օտարմանը նախորդող մեկ օրացուցային տարին գերազանցող ժամանակահատվածում, ինչը չի արտացոլում օրենքի տրամաբանությունը և դրույթի նպատակը: Բացի դրանից՝ նորմի այդպիսի մեկնաբանման և կիրառման հետևանքով առաջանում է այնպիսի իրավիճակ, երբ նույն տեսակի երկու միավոր գույքի օտարումը, կախված օտարման գործարքների հաջորդականությունից, մի դեպքում կհարկվի ԱԱՀ-ով, իսկ մյուս դեպքում՝ ոչ⁴⁹⁵: Նմանատիպ պարագայում ԱԱՀ վճարելու հայեցողությունը կարող է թողնվել հարկ վճարող ֆիզիկական անձին:

Մինչդեռ, իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները⁴⁹⁶: Վերոնշյալն ամրապնդում է այն տեսակետը, որ ապրանքների մատակարարում պետք է համարվի, և հետևաբար, ԱԱՀ-ով հարկվի միմիայն մեկ տարվա ընթացքում գույքի երկու և ավելի միավորների այնպիսի հասուցելի օտարումը, որն իրականացվել է գույքի բոլոր միավորների ձեռքբերմանը հաջորդող մեկ տարվա ժամանակահատվածում:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվում է յուրաքանչյուր անձի՝ աշխատանքի ընտրության ազատության, առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային

⁴⁹⁴ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, մաս 1, կետ «բ»

⁴⁹⁵ Եթե, օրինակ, գույքի երկու միավորից սկզբում օտարվի մեկ տարուց ավելի վաղ ձեռք բերվածը, իսկ հետո՝ մեկամյա ժամկետում ձեռք բերվածը, ապա գործարքները կլինեն ապրանքների մատակարարում, իսկ հակառակ հերթականությամբ օտարելու դեպքում՝ ոչ, և հետևաբար, ԱԱՀ-ի վճարման պարտավորություն չի առաջանա:

⁴⁹⁶ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 86, մաս 1

պայմանների իրավունքը: Չնայած պետության պարտավորությունն է նպաստել բնակչության զբաղվածությանը և աշխատանքի պայմանների բարելավմանը⁴⁹⁷ այնուամենայնիվ, 2015թ.-ին զբաղվածության խթանման ոլորտում պետության կողմից իրականացված ծրագրերը չեն նպաստել գործազրկության ընդհանուր մակարդակի կրճատմանը: 2015թ.-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ գործազուրկների թիվը կազմել է 77 004, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 16,9 %-ով, որից 53 069 կանայք են, 19 007՝ երիտասարդներ, իսկ 23 437՝ գյուղաբնակներ:⁴⁹⁸ Նշենք, սակայն, որ տվյալ վիճակագրությունը չի արտահայտում երկրում գործազրկության իրական մակարդակը, քանի որ «գործազուրկ» կարգավիճակը պայմանավորված է պետական լիազորված մարմնում հաշվառված լինելու հանգամանքով⁴⁹⁹: Հատկանշական է, որ դեռևս 2014թ.-ին խնդրին է անդրադարձել նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն (Կոմիտե) մտահոգություն հայտնելով թե ՀՀ-ում առկա գործազրկության բարձր մակարդակի, թե բազմաթիվ փաստացի գործազուրկ անձանց գործազրկության պաշտոնական վիճակագրության մեջ արտացոլված չլինելու վերաբերյալ⁵⁰⁰:

Բնակչության սոցիալական ապահովության համատեքստում էական նշանակություն ունի գործազրկության դեպքում պետության կողմից տրամադրվող օգնությունը: Դեռևս 2013թ.-ից Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվել և մինչ օրս չի լուծվել Հայաստանի Հանրապետությունում գործազրկության նպաստի վերականգնման խնդիրը: ՀՀ Սահմանադրության համաձայն՝ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու ծերության, գործազրկության, աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք⁵⁰¹: Բացի դրանից անձի սոցիալական ապահովության պարտավորություն է նախատեսված նաև Հայաստանի կողմից վավերացված Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայում⁵⁰², որի հիման վրա Սոցիալական իրավունքների Եվրոպական Կոմիտեի 2013թ.-ի Եզրակացություններում առանձնակի շեշտվել է գործազրկության նպաստ տրամադրելու պետության պարտավորությունը⁵⁰³: Նման երաշխիք ամրագրված է նաև ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային

⁴⁹⁷ ՀՀ Սահմանադրության, հոդված 86

⁴⁹⁸ ⁴⁹⁸ http://armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf

⁴⁹⁹ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁵⁰⁰ <http://tbinternet.ohchr.org/>

layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2FC.12%2FARM%2FCO_%2F2-3&Lang=en

⁵⁰¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 83

⁵⁰² Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, հոդված 12

⁵⁰³ http://www.coe.int/t/dghl/monitoring/socialcharter/Conclusions/State/Armenia2013_en.pdf

դաշնագրով⁵⁰⁴, որի Ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ աշխատանքը կորցնելու դեպքում անձին պետք է վճարվի համապատասխան գործազրկության նպաստ⁵⁰⁵: Այսինքն, գործազրկության դեպքում պետության կողմից համապատասխան սոցիալական աջակցության, օրինակ՝ նպաստի չտրամադրումը հակասում է նաև ՀՀ միջազգային պարտավորություններին:

2015թ.-ին ևս արձանագրվել են գործատուների կողմից անձանց աշխատանքային իրավունքների բազմաթիվ խախտումներ: Մասնավորապես, կոնկրետ կազմակերպությունում աշխատակիցներին արտաժամյա և գիշերային աշխատանքի, հանգստյան և ոչ աշխատանքային օրերին կատարված աշխատանքի համար աշխատանքային օրենսդրությամբ սահմանված չափով չվարձատրելու, չգործածված ամենամյա արձակուրդի համար դրամական հատուցումները սխալ հաշվարկելու, գործատուի կողմից աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ներքին իրավական ակտերի առկայությունը չապահովելու և այլ խախտումների մասին: Նշվածը, մասնավորապես, պայմանավորված է աշխատանքային օրենսդրության նորմերի պահպանման նկատմամբ պետական վերահսկողության անարդյունավետությամբ, աշխատանքային իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ գործատուներին և աշխատողներին իրազեկման լայնածավալ միջոցառումների բացակայությամբ:

Աշխատանքային հարաբերությունների ոլորտում տարածված պրակտիկա է գործատուի կողմից աշխատանքային պայմանագիր կնքելու դեպքում պաշտոնապես նվազագույն ամսական աշխատավարձ գրանցելը եկամտահարկի վճարումից ազատվելու նպատակով: Բացի դրանից բազմաթիվ են աշխատանքային պայմանագիր չկնքելու դեպքերը, օրինակ, տաքսի ծառայություններում աշխատող վարորդների հետ⁵⁰⁶:

Միաժամանակ, քանի որ աշխատանքային պայմանագիրը հնարավոր է լուծել արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական, աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխմամբ պայմանավորված աշխատողների քանակի կամ հաստիքների կրճատման դեպքում⁵⁰⁷, առանձին դեպքերում գործատուները արհեստական կերպով փոփոխություններ են կատարում աշխատանքային պահանջների պայմանների մեջ, հաստիքացուցակներում, որի արդյունքում աշխատանքից ազատում են իրենց համար անցանկալի աշխատողներին:

Մյուս կողմից, աշխատանքային իրավունքների պաշտպանության գործիքներից մեկի՝ գործադուլի իրավունքը սահմանափակված է թերի

⁵⁰⁴ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, հոդված 9

⁵⁰⁵ [http://tbinternet.ohchr.org/
layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fGC%2f19&Lang=en](http://tbinternet.ohchr.org/layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=E%2fC.12%2fGC%2f19&Lang=en)

⁵⁰⁶ «Աշխատանքի իրավունքը Երևանում. օրենքը և պրակտիկան ծառայությունների ոլորտում» զեկույց, 2014թ., Հայաստանի Հելսինկյան կոմիտե

⁵⁰⁷ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 113

օրենսդրական կարգավորումների պատճառով: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը⁵⁰⁸ գործադուլի իրավունքի իրացումը պայմանավորում է միայն կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ, ինչն ավելի է նեղացնում իրավունքի իրացման պայմանները, մինչդեռ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորվում է աշխատողների տնտեսական և սոցիալական շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը⁵⁰⁹: Դեռևս 2014 թվականին Պաշտպանը առաջարկել էր մշակել օրենսդրական փոփոխություններ՝ վերացնելու աշխատողների գործադուլի անցկացումը միայն կոլեկտիվ աշխատանքային վեճով պայմանավորող սահմանափակումը, որոնք առ այսօր չեն իրականացվել:

Աշխատանքային իրավունքների ոլորտում այլ խնդիր է, որ չկա այդ իրավունքների պաշտպանության համար տեսչական լիազորություններով պետական մարմին, ինչն էապես սահմանափակում է աշխատանքային իրավունքների արտադատական պաշտպանության հնարավորությունները: Այսպես, դեռևս 2013թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը միաձուլման արդյունքում վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչության⁵¹⁰:

Կազմակերպական առումով, Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 81 Կոնվենցիայի համաձայն, աշխատանքային հարաբերությունների վերահսկման լիազոր մարմինը պետք է ստեղծվի կենտրոնական մարմիններին կից, նրանց հսկողության ներքո, մինչդեռ նոր տեսչությունը կենտրոնական մարմնի կարգավիճակից իջել է և դարձել նախարարության աշխատակազմի ստորաբաժանում: Միաժամանակ, նման վերակազմավորումից հետո քաղաքացիների՝ նոր տեսչությանը ուղղված դիմում-բողոքների թիվն էապես նվազել է, նաև շատ քիչ են նոր տեսչության կողմից սեփական նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթները⁵¹¹:

Ավելին, 2014թ.-ի դեկտեմբերի 17-ին ընդունվել և 2015թ.-ի հունվարի 9-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու և «Աշխատանքի պետական տեսչության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ օրենքը: Նշված օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության 2004թ.-ի նոյեմբերի 9-ի աշխատանքային օրենսգրքի (Օրենսգիրք) 34-րդ հոդվածը, համաձայն որի՝ գործատուների կողմից աշխատանքային

⁵⁰⁸ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 73

⁵⁰⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 58

⁵¹⁰ ՀՀ կառավարության 2013թ.-ի հուլիսի 25-ի թիվ 857-Ն որոշում

⁵¹¹ «ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողության և վերահսկողության խնդիրները» ուսումնասիրություն, <http://www.osf.am/wp-content/uploads/2014/06/Labour-Inspection-in-Armenia-A.-Mejlumyan.pdf>

օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի նորմատիվ դրույթների կատարման նկատմամբ պետական հսկողությունն ու վերահսկողությունն իրականացվում էր աշխատանքի պետական տեսչության կողմից (ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը ՀՀ աշխատանքի պետական տեսչության իրավահաջորդն է⁵¹²), իսկ 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում էր ՀՀ աշխատանքի պետական տեսչության լիազորությունները, խնդիրներն ու նպատակները: Սույն փոփոխության արդյունքում ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական պետական տեսչությունը 2015թ.-ի հունվարի 9-ից լիազորված է իրականացնելու ՀՀ աշխատանքային օրենսգրքով և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով սահմանված աշխատանքի անվտանգության ապահովման և առողջության պահպանության նորմեր պարունակող իրավական ակտերի կիրարկման նկատմամբ պետական հսկողություն և վերահսկողություն, իսկ նշված լիազորությունների շրջանակից դուրս աշխատանքային իրավունքների հետ առնչվող խնդիրների կապակցությամբ հնարավոր է դիմել միայն դատարան:

Չնայած ձեռնարկված բազմաթիվ միջոցառումներին՝ հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում գործազրկության մակարդակը դեռևս բարձր է: 2015թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմել է 2462 անձ, որը շուրջ 21 տոկոսով գերազանցում է 2014թ.-ի ցուցանիշը՝ 2056: Միաժամանակ, 2015թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ ծրագրերում ընդգրկվել են 735 հաշմանդամություն ունեցող անձ: Ծրագրերում ընդգրկված հաշմանդամների թիվը շուրջ 25.5 տոկոսով գերազանցում է 2014թ.-ի ցուցանիշը: Տարեսկզբից մինչև նոյեմբերի 1-ը աշխատանքի է տեղավորվել 158 հաշմանդամություն ունեցող անձ, որից 83-ը՝ պետական ծրագրերի արդյունքում:⁵¹³

ՀՀ սահմանադրությամբ որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներ, ի թիվս այլնի, սահմանում է բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, ինչպես նաև հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը⁵¹⁴: Ողջունելի է, որ «Զբաղվածության մասին» օրենքի ընդունմամբ սահմանվեց հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի պարտադիր ապահովման քվոտա, սակայն վերջինս ոչ պետական կազմակերպությունների համար գործելու է միայն 2016թ.-ից:

Երիտասարդներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ 2015թ.-ի ընթացքում ձեռնարկված ծրագրերն ու միջոցառումները արդյունավետ և բավարար

⁵¹² ՀՀ կառավարության 2013թ.-ի հուլիսի 25-ի թիվ 857-Ն որոշում

⁵¹³ Մանրամասն տես՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխում

⁵¹⁴ ՀՀ Սահմանադրություն, հոդված 86

չեն եղել և էապես չեն նպաստել երիտասարդների զբաղվածության հիմնահարցերի լուծմանը: Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տվյալների համաձայն՝ 2015թ.-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ գործազրկության առավել բարձր մակարդակ է դիտվել առավելապես մարզերում⁵¹⁵: ՀՀ մարզերից երիտասարդների շրջանում ամենաբարձր գործազրկության մակարդակ գրանցվել է Շիրակի և Լոռու մարզերում՝ համապատասխանաբար 3 908 և 2 775 մարդ⁵¹⁶: Հատկանշական է, որ ՀՀ բոլոր մարզերում երիտասարդության շրջանում զբաղվածության խնդրի լուծման կապակցությամբ հստակ ծրագրեր մշակումը և տարբեր միջոցառումների իրականացումը՝ ապահովելով դրանց շարունակական բնույթը ներառվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունում⁵¹⁷: Այս ուղղությամբ 2015թ.-ին ՀՀ որոշ մարզերում իրականացվել են երիտասարդության զբաղվածության ապահովմանն ուղղված որոշ միջոցառումներ⁵¹⁸, բայցևայնպես, վերջիններս չեն կարող բավարար համարվել, քանի որ չեն ընդգրկել հանրապետության բոլոր մարզերն ու համայնքները, ինչպես նաև չեն կրում շարունակական բնույթ: Արդյունքում, մարզերում բնակվող բազմաթիվ երիտասարդներ աշխատանք չգտնելու պատճառով ստիպված են եղել արտագաղթել կամ սեզոնային աշխատանք կատարելու նպատակով տեղափոխվել այլ երկիր:

2015թ.-ին ևս չի կարգավորվել օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2004թ. օգոստոսի 1-ից հետո լուծարված կազմակերպություններում աշխատանքի ժամանակ դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման բացակայության խնդիրը: Մինչդեռ, ՀՀ կողմից վավերացված «Արտադրական պատահարների դեպքում աշխատողներին փոխհատուցելու մասին» 1925թ.-ի և «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» 1992թ.-ի Կոնվենցիաներում սահմանվում է, որ ազգային օրենսդրությամբ պետք է նախատեսվեն այնպիսի կարգավորումներ, որոնք պատահարից տուժածներին կամ, մահվան դեպքում, նրանց խնամքի տակ գտնվող անձանց կապահովեն համապատասխան փոխհատուցման վճարում, եթե նման վճարում գործատուն կամ ապահովագրողն ի վիճակի չէ կատարելու, ինչպես նաև գործատուի

⁵¹⁵«Դեռևս 2013թ.-ի նոյեմբերին ՀՀ 5 մարզերում սոցիալապես խոցելի ընտանիքների շրջանում իրականացված հետազոտության արդյունքում պարզվել է, որ աշխատանքային միզոնային գործընթացին մասնակից սոցիալապես խոցելի 252 ընտանիքներից վերջին 3 տարվա ընթացքում արտագնա աշխատանքի են մեկնել 281 մարդ»:

Սոցիալական ծառայությունների տրամադրման արդյունավետության ելակետային հետազոտություն և այդ ծառայությունների ազդեցությունը սոցիալապես խոցելի ընտանիքների սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա, դեկտեմբեր 2013 թվական

⁵¹⁶ http://armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf

⁵¹⁷ՀՀ կառավարության 27.02.2014թ. «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 303 որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկ, կետ 22

⁵¹⁸ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում, Արագածոտնի մարզկենտրոն Թալին քաղաքում:

անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունն իրականացնում են երաշխիքային հաստատությունները:

Պարբերաբար բարձրացվել է աշխատողների նվազագույն կարիքները հոգալու համար նվազագույն ամսական աշխատավարձի բավարար չլինելու խնդիրը: Այսպես, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում 2014թ.-ի դեկտեմբերի 1-ին կատարված փոփոխության արդյունքում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 55. 000 դրամ: Նշված փոփոխությունն ուժի մեջ էր մտել 2015թ.-ի հուլիսի 1-ին, իսկ մինչ այդ՝ 2015թ.-ի սկզբին, նվազագույն աշխատավարձը սահմանված էր 50. 000 դրամ: Մինչդեռ, ըստ Ազգային վիճակագրական ծառայության հրապարակած տվյալների՝ 2015թ.-ի չորրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով նվազագույն սպառողական զամբյուղի չափը ամսական կտրվածքով կազմել է մոտ 54,4 հազար դրամ, իսկ պարենային զամբյուղի չափը ամսական կտրվածքով՝ 30.7 հազար դրամ⁵¹⁹: Նվազագույն աշխատավարձի բարձրացումը բխում է ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններից⁵²⁰:

Ըստ Ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝

2015թ.				
	Առաջին եռամսյակ ⁵²¹ /հազար/	Երկրորդ եռամսյակ ⁵²² /հազար/	Երրորդ եռամսյակ ⁵²³ /հազար/	Չորրորդ եռամսյակ ⁵²⁴ /հազար/
նվազագույն սպառողական զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	60 397	59 588	55 394	54.413
պարենային զամբյուղի արժեք (ամսական կտրվածքով)	34 122	33 665	31 296	30.742

Թեև նվազագույն աշխատավարձի չափը 2015թ.-ի 4-րդ եռամսյակում համապատասխանել է ամսական կտրվածքով սպառողական զամբյուղի արժեքին: Բայցևայնպես, 2015 թ.-ի առաջին երեք եռամսյակների ընթացքում ամսական կտրվածքով նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը գերազանցել է

⁵¹⁹ http://armstat.am/file/article/sv_12_15a_6200.pdf

⁵²⁰ Եվրոպական վերանայված սոցիալական խարտիա, ԱՄԿ 131 կոնվենցիա

⁵²¹ http://www.armstat.am/file/article/sv_03_15a_6200.pdf

⁵²² http://www.armstat.am/file/article/sv_06_15a_6200.pdf

⁵²³ http://www.armstat.am/file/article/sv_09_15a_6200.pdf

⁵²⁴ http://armstat.am/file/article/sv_12_15a_6200.pdf

նվազագույն աշխատավարձի չափը:

Տարիներ շարունակ չի լուծվում մանկատան շրջանավարտներին բնակարաններով ապահովելու խնդիրը: Վերջիններս երկար տարիներ սպասել են հերթացուցակներում օրենքով հասանելիք բնակարանները ստանալուն: Բացի դրանից, մինչ օրս ստացված բազմաթիվ բնակարաններ ունեցել են կենցաղային անբարեկարգ պայմաններ և պիտանի չեն եղել բնակության համար: Նշենք, որ դեռևս 2013թ.-ին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում ընդգծել է երեխաների սոցիալական աջակցության անբավարարության խնդիրը և առաջարկել պետությանն աջակցել մանկատան շրջանավարտներին կրթության, աշխատանք գտնելու և բնակարանային ապահովության հարցերում⁵²⁵:

2015թ.-ին ահազանգերեր են ստացվել, որ բժշկական օգնության և սպասարկման համար պետական բյուջեով հատկացված միջոցների բաշխման մեխանիզմի առանձնահատկության հետևանքով անձինք մի շարք դեպքերում չեն ստացել անվճար կամ արտոնյալ պայմաններով համապատասխան բժշկական օգնության: Օրինակ, կալանավորված անձը «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկից Շտապ օգնության ծառայության միջոցով տեղափոխվել է «Էրեբունի» հիվանդանոց և վիրահատվել «սուր որովայն»-ի կապակցությամբ (կույր աղու պերֆորացիա), սակայն, «Էրեբունի» հիվանդանոցի անձնակազմը պնդել է, որ անհրաժեշտ է ՀՀ Առողջապահության նախարարությունից պետական պատվերի շրջանակում ազատազրկվածների բուժման համար ուղեգիր ներկայացնել: ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմը ներկայացրել է տեղեկանք, որ վիրահատության կարիք ունեցողը կալանավորված անձ է և գտնվում է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, սակայն հիվանդանոցի ղեկավարությունը շարունակել է պնդել, որ վիրահատության համար պետք է վճարում կատարել համավճարի կարգով:

Մեկ այլ դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի Թեժ գիծ ծառայությունը 2015թ.-ի հուլիսի 21-ին ահազանգ է ստացել, որ 9-ամյա երեխային անվճար մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիա (յամեր) հետազոտություն անցկացնելու նպատակով տրված ուղեգրով այց է կատարվել մի քանի բժշկական կենտրոններ («Նաիրի», «Էրեբունի» և այլն), սակայն վերջիններս հրաժարվել են հետազոտություն իրականացնել՝ պատճառաբանելով, որ երեխան պետք է հերթագրվի և սպասի մինչև պետության կողմից նշյալ հետազոտման համար գումար հատկացվի: Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները կապ են հաստատել թե «Նաիրի» բժշկական կենտրոնի, թե ՀՀ առողջապահության նախարարության հետ, որոնք հաստատել են, որ անվճար բուժօգնության շրջանակներում բժշկական կենտրոններին հատկացված գումարները

⁵²⁵ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

սպառվել են, ակնկալվում է ֆինանսական վերաբաշխում, սակայն պարզ չէ՝ երբ:

Բանն այն է, որ ՀՀ պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի ծրագրերում և դրանց շրջանակներում կնքված պայմանագրային գումարներում վերաբաշխումներն իրականացվում են ՀՀ կառավարության 2004թ.-ի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման թիվ 2 հավելվածի 35-րդ կետով սահմանված կարգով՝ առանձին ծրագրերում տնտեսումների առկայության դեպքում: Վերաբաշխումների իրականացման ընթացքում հաշվի են առնվում կազմակերպությունների կողմից ընթացիկ տարում կատարված աշխատանքների ծավալների տեմպերը և դրանց հիման վրա իրականացված տարեկան կանխատեսումները: Սակայն համաձայն ՀՀ վարչապետի 2015թ.-ի հուլիսի 9-ի թիվ 02/23.19/11920-15 հանձնարարականի՝ ՀՀ պետական բյուջեում ներհողվածային կամ միջհողվածային վերաբաշխումները, խիստ նպատակային և արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, կարող են կատարվել միայն ՀՀ վարչապետի հետ գրավոր համաձայնեցման դեպքում, ինչը լրացուցիչ բարդություններ է ստեղծում քաղաքացիների համար անվճար բուժօգնություն ստանալու հարցում:

Առ այսօր օրենսդրորեն սահմանված չէ «բժշկական սխալ» հասկացությունը, ինչպես նաև մշակված և ներդրված չեն հիվանդությունների ախտորոշման, բուժման բժշկական չափորոշիչները (ստանդարտները), ուղեցույցները, ինչի հետևանքով բժշկի անփութության, սխալ բժշկական միջամտության ցուցաբերման դեպքերում որոշ բժիշկներ, բուժաշխատողներ չեն ենթարկվել պատասխանատվության: Մտահոգիչ է, որ թեև 2012թ.-ից սկսվել է բժշկական ստանդարտների մշակման գործընթացը, սակայն տվյալ աշխատանքները դեռևս չեն ավարտվել:

ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված հիմնարար և կարևոր իրավունքներից է նաև կրթության իրավունքը⁵²⁶: Մինչդեռ կան դժգոհություններ հանրակրթական դպրոցների ծրագրի բովանդակության վերաբերյալ: Մասնավորապես, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից շատերը դրական են վերաբերվում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային՝ դրա թեմաները համարելով ազգային պատմության մաս, և եթե այն չի հակասում իրենց համոզմունքներին, սովորում են հաճույքով: Դրան գուցահեռ տեսակետ կա նաև, որ 5-10-րդ դասարաններում դասավանդվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի դասագրքերն ավելի շատ միտված են ուսուցանել Հայ եկեղեցու դավանաբանությունը, ինչպես նաև չկա այլընտրանքային դասընթաց այն աշակերտների համար, որոնց ծնողները չեն ցանկանում, որ իրենց երեխան մասնակցի տվյալ դասընթացներին⁵²⁷: Կրոնական և ազգային փոքրամասնությունների երեխաների հետ իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ «Հայոց եկեղեցու պատմություն»

⁵²⁶ ՀՀ Սահմանադրություն, հոդված 38

⁵²⁷ «Կրոնական կրթության խնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցներում», Ս.Դանիելյան, Ա.Ղազարյան, Հ.Հովհաննիսյան, Ա.Ավթանդիլյան, 2012 թ., <http://www.religions.am/files/7318/pastathter/ps7.pdf>

դասընթացի ժամանակ ուսուցիչների կողմից, երբեմն պարտադրվում են ծիսական գործողություններ, օրինակ՝ աղոթք անել կամ խաչակնքվել, ինչը հակասում է որոշ անձանց կրոնական համոզմունքներին⁵²⁸: Նշված խնդրի կապակցությամբ դեռևս 2013թ.-ին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն առաջարկել է Հայաստանին վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ արտացոլելով երեխաների կրոնի ազատությունը⁵²⁹: Հատկանշական է, որ «Հանրակրթության մասին» օրենքի 4-րդ հոդվածի՝ «Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությունը» 3-րդ կետում նշվում է, որ «Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության ժողովրդավարական և աշխարհիկ բնույթը», սակայն նույն հոդվածի 8-րդ կետում այդ պահանջի շրջանցման համար հիմքեր են ստեղծել. «Կրոնական գործունեությունը և քարոզչությունն ուսումնական հաստատություններում արգելվում են, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի», որից ելնելով նման հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին» ՀՀ օրենքով⁵³⁰:

Երկրաշարժի հետևանքով մեծ թվով ընտանիքներ 2015 թվականին դեռևս ունեն բնակարանային խնդիրներ, ինչը, հետևաբար, կարող է խոչընդոտել իրենց մի շարք իրավունքների իրականացմանը: Ադետի գոտու խնդրի լուծման գործընթացը վերջին տարիներին շարունակական բնույթ ունի: Բայցևայնպես, չնայած գրանցված առաջընթացին, դեռևս 287 ընտանիքի բնակարանային խնդիրը մնում է չլուծված: ՀՀ քաղաքաշինության նախարարության պնդմամբ նշված 287 ընտանիքի բնակարանային խնդիրը կլուծվի 2016 թվականին: Սակայն, պաշտոնական տվյալների համաձայն՝ թվով 627 ընտանիքի բնակարանային խնդրի ամբողջությամբ լուծումը նախատեսված է 2016-2017 թվականներին:

ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգում կատարված փոփոխության⁵³¹ և «ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքում (Օրենք) նախատեսված կարգավորման արդյունքում կարող է սահմանափակվել ԽՍՀՄ Խնայբանկում ավանդներ ներդրած անձանց՝ ավանդի մայր գումարը և կուտակված տոկոսները հետ ստանալու իրավունքը, ինչի մասին բարձրաձայնել է նաև 2014թ.-ի ՀՀ մարդու իրավունքների

⁵²⁸http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Children_arm.pdf

⁵²⁹http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fC.O%2f3-4&Lang=en

⁵³⁰ <http://armhels.com/wp-content/uploads/2016/01/Ditord-2016-01Armenian.pdf>

⁵³¹ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 16-ի N 352-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 460-Ն որոշում

պաշտպանի տարեկան զեկույցում:

Մասնավորապես, յուրաքանչյուր տարի կառավարության սահմանած կարգով «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց նախորդ տարում փոխհատուցում ստացած ավանդատուների ավանդային գրքույկներում առկա գումարը (ռուբլով), որի նկատմամբ հաշվարկվել է փոխհատուցման գումարը, համարվում է մարված⁵³²:

Ավելին, ՀՀ կառավարության որոշմամբ (Որոշում) սահմանվում է, որ «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ին պետք է տրամադրվի համապատասխան ժամանակահատվածում և համապատասխան կարգով ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստացած անձանց ցուցակը՝ ներառյալ այն ավանդային գրքույկների համարները և ներդրված գումարի չափը, որոնց դիմաց վճարվել է փոխհատուցում՝ ԽՍՀՄ ռուբլով ավանդը *մարած համարելու* նպատակով⁵³³:

Նշենք, սակայն, որ բանկային պրակտիկայում բանկային ավանդի պայմանագրով մի կողմը (բանկը), ընդունելով մյուս կողմից (ավանդատուից) ստացված կամ վերջինիս համար ստացված դրամական գումարը (ավանդը), պարտավորվում է ավանդատուին վերադարձնել ավանդի գումարը և պայմանագրով նախատեսված պայմաններով ու կարգով տոկոսներ վճարել դրանից:

Այսինքն, Օրենքում և Որոշման մեջ նշված «փոխհատուցում» եզրույթը չի կարող փոխարինել ավանդի մայր գումարին և կուտակված տոկոսներին, իսկ ավանդը մարված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ վերադարձվել է ավանդի գումարը, և դրանից վճարվել են կուտակված տոկոսները: Ուստի, Օրենքով և Որոշմամբ նախատեսված վերոնշյալ կարգավորումները սահմանափակում են ԽՍՀՄ Խնայբանկում ավանդներ ներդրած անձանց՝ իրենց ներդրած ավանդի գումարը և կուտակված տոկոսները հետագայում հետ ստանալու հնարավորությունը:

⁵³² «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, կետ 13

⁵³³ ՀՀ կառավարության 23 ապրիլի 2014 թվականի «ՀՀ կառավարության որոշումը նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 16-ի N 352-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 460-Ն որոշում, կետ 3, ենթակետ 2

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ 2015 թվականին զինված ուժերում արձանագրվել է 46 դեպք (57 զոհով): Նրանցից 27-ը զոհվել են Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի խախտման տարբեր դրսևորումների արդյունքում: 2015 թվականի ընթացքում ադրբեջանական կողմը, խախտելով միջազգային-իրավական կարևորագույն սկզբունքները, իր իսկ ստանձնած պարտավորությունները, բազմիցս դիմել է ուժի և ուժի սպառնալիքի կիրառման՝ այդպիսով ձախողելով տարածաշրջանում խաղաղություն և կայունություն պահպանելու կարևորագույն խնդրի իրականացումը: Ադրբեջանական կողմը, հակառակ կողմերի հետ ռազմաքաղաքական խնդիրները խաղաղ բանակցությունների ճանապարհով կարգավորելու պատրաստակամության մասին հավաստիացումներին, խախտելով հրադադարի ռեժիմը, 2015 թվականին պարբերաբար նախահարձակ է եղել՝ կորուստներ պատճառելով հայկական զինված ուժերին:

Ավելին՝ ինչպես 2014թ.-ին այնպես էլ 2015թ.-ին Ադրբեջանը մի շարք դեպքերում խախտել է նաև միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունքները: Հաշվի առնելով ադրբեջանական կողմի՝ միջազգային-իրավական սկզբունքները և իր իսկ պարտավորություններն անտեսող հայ զինվորի կյանքի իրավունքի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի վրա հիմնված պետական գործելաճը՝ հայկական կողմի համար կարևոր խնդիր է մարտական դիրքերը ժամանակակից տեխնիկական միջոցներով հնարավորինս համալրելը, ինչը կարող է նվազեցնել կորուստների վտանգը:

2015 թվականին զինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ ոչ բոլոր դեպքերում են ձեռնարկվել դրանք կանխելու բոլոր հնարավոր միջոցները: Զինձառայողների մահվան պատճառները (զինձառայողների միջև անբարյացակամ հարաբերությունների հետևանքով սպանություն, զենքի հետ վարվելու կանոնների խախտում, մարտական հերթապահության կանոնների խախտում, ինքնասպանություն, առողջական խնդիրներ) վկայում են այն մասին, որ դրանք հաճախ նաև պատասխանատու պաշտոնատար անձանց ուղղակի կամ անուղղակի թերացումների հետևանք են եղել:

Ընդ որում, մահացության մի շարք դեպքերի պատճառների հիմքում ի սկզբանե ընկած են եղել կանոնադրային հարաբերությունների խախտումները: Զինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում անդրադարձել է որոշակի հանգամանքներում անձին ուրիշներից և նույնիսկ իրենից պաշտպանելու համար անհրաժեշտ կանխիչ միջոցառումներ ձեռնարկելու պետության պոզիտիվ պարտականությանը՝ կարևորելով դա հատկապես զինվորական ծառայության համատեքստում⁵³⁴: Ընդ որում, իշխանությունները պարտավոր են առանձնահատուկ

⁵³⁴ Ataman v. Turkey, (2006)

ուշադրություն դարձնել ինչ-ինչ խնդիրներ (հոգեբանական, ֆիզիկական) ունեցող զինծառայողներին, հատկապես՝ նորակոչիկներին (պարտադիր ժամկետային զինծառայողներ)⁵³⁵: Զինծառայողների կյանքի իրավունքի պաշտպանությունը դատավարական երաշխիքների տեսանկյունից ենթադրում է մահվան դեպքերի մանրակրկիտ, անկախ քննությունը⁵³⁶:

2015 թվականին զինված ուժերում մահացած որոշ զինծառայողների հարազատներ Պաշտպանին դժգոհություն են հայտնել զինծառայողների մահվան առանձին դեպքերի քննության, մասնավորապես՝ որակումների կապակցությամբ (զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, ինքնասպանության հասցնելը): Խնդիրն այն է, որ մահացած զինծառայողների հարազատներն արժանահավատ չեն համարել քննչական մարմնի կողմից ի սկզբանե առաջ քաշված մահվան պատճառի վարկածը: Դեպքերից մեկով հարազատները տեղեկացրել են, որ կասկածելի են համարում մահացածի ինքնասպանության վարկածը՝ այն պատճառաբանելով զինծառայողի կողմից ծառայության պայմաններից ու ծառայակիցների վերաբերմունքից երբևէ չդժգոհելու հանգամանքով:

Մեկ այլ դեպքով մահացած զինծառայողների հարազատները Պաշտպանին տեղեկացրել են, որ թեև քննության սկզբնական փուլում իրենց՝ որպես տուժողի իրավահաջորդ, ներգրավել են գործի քննության մեջ, թույլատրել մասնակցել դիակի դատաբժշկական փորձաքննությանը, սակայն դրանից հետո բավական երկար ժամանակ իրենց գործի քննության ընթացքի վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Հարկ է նշել, որ տուժողի իրավահաջորդներին գործի քննությանը ներգրավելն ու պարբերաբար տեղեկատվություն տրամադրելը զինված ուժերում մահվան դեպքերի քննության անաչառության կարևոր երաշխիքներից են, ինչի մասին բազմիցս նշել է նաև ՄԻԵԴ-ն իր վճիռներում⁵³⁷:

Բացի հանրությանը հայտնի դեպքերից, որոնցով զինծառայողների մահվան վերաբերյալ գործերը տարիներով քննվում են և բացահայտված չեն, 2015 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը նաև այլ բողոքներ է ստացել մահացած զինծառայողների հարազատներից գործի քննության ձգձգման և մեղավորների բացահայտված չլինելու մասին: Հարկ է նշել, որ իրավասու մարմինների կողմից զինծառայողների մահվան դեպքերի մանրակրկիտ, լրիվ, բազմակողմանի, արագ ու հրապարակային քննության ապահովման արդյունքում ոչ միայն կկանխվեն զինծառայողների մահվան այլ դեպքերը, այլև կմեծանա հանրության վստահությունն այդ մարմինների նկատմամբ, ուստի անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում առավելագույն ջանքեր գործադրել մահվան դեպքերի բոլոր հանգամանքները բացահայտելու ուղղությամբ: Մահվան դեպքերի քննությանն առաջադրվող կարևորագույն պահանջներից քննությանը անդրադարձել է նաև ՄԻԵԴ-ը, նշելով, որ

⁵³⁵ Kilinc and Others v. Turkey, (2005)

⁵³⁶ McKerr v. UK, (2001)

⁵³⁷ McKerr v. UK, (2001)

արագությունը ենթադրում է, որ քննությունը պետք է սկսվի մահվան դեպքից հետո առավելագույնս շուտ, և այն պետք է իրականացվի ողջամիտ ժամկետում՝ բացառելով անհարկի ձգձգումը⁵³⁸:

Խոշտանգումներից, դաժան կամ անմարդկային վերաբերմունքից կամ պատժից զերծ մնալու յուրաքանչյուր մարդու, այդ թվում՝ զինծառայողի իրավունքը, ի տարբերություն մի շարք այլ հիմնարար իրավունքների, ոչ մի դեպքում ենթակա չէ սահմանափակման, այսինքն՝ ոչ մի զինծառայող չպետք է ենթարկվի խոշտանգումների, դաժան կամ անմարդկային վերաբերմունքի կամ պատժի՝ անկախ այն բանից, թե ինչ հանգամանքներում և ինչ նպատակներով են դրանք տեղի ունեցել: Պետությունը պարտավոր է ապահովել զինվորական ծառայության այնպիսի պայմաններ, որոնք համահունչ են մարդկային արժանապատվությանը, զինվորական պատրաստականության գործընթացն ու մեթոդները չպետք է հանգեցնեն զինծառայողների այնպիսի տանջանքի, որը գերազանցում է զինվորական կարգապահությանը բնորոշ, ընդունելի ծանրությունը⁵³⁹: Անհրաժեշտ է նշել, որ խոշտանգումների մասին հաղորդումների մանրակրկիտ ու արագ քննությունը, քրեական պատասխանատվության անխուսափելիությունն այն կարևորագույն պայմաններից են, որոնց ապահովման դեպքում միայն կարելի է հասնել խոշտանգումների դեպքերը հնարավորինս բացառելուն: Ուստի, իրավասու մարմինները պարտավոր են արդար, անկողմնակալ և անկախ քննություն իրականացնել՝ անպատժելիությունը բացառելու համար:

Մարդու իրավունքների պաշտպանն առանձին բողոքներ է ստացել քրեական գործերի քննության ընթացքում գործի արդարացի քննության պահանջների խախտումների վերաբերյալ: Բողոքները հիմնականում վերաբերել են ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործերի (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը) քննության անհիմն ձգձգմանը, կարճման հիմքերին: Մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձինք հայտնել են, որ իրենք ներգրավվել են որպես մեղադրյալներ, անցել դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննությունները, որի արդյունքների համաձայն՝ ճանաչվել են «ժամանակավորապես պիտանի չէ զինվորական ծառայությանը խաղաղ ժամանակ, պիտանի է սահմանափակմամբ պատերազմական ժամանակ»: Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա վարույթն իրականացնող մարմինը գործը կարճելու մասին որոշում չի կայացրել:

«Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության գորակոչվելու ենթակա չեն այն անձինք, որոնց նկատմամբ կատարվում է հետաքննություն (նախաքննություն, դատաքննություն): Չնայած դրան՝ որոշ դեպքերում զինվորական ծառայությունից

⁵³⁸ Kelly and Others v. UK, (2001)

⁵³⁹ Chamber v. Russia, (2008)

խուսափելու առթիվ հարուցված քրեական գործերը կարճվում են միայն զինվորական ծառայության գորակոչվելու պայմանով:

Այն դեպքերում, երբ դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննությամբ ստացվում է եզրակացություն այն մասին, որ մեղադրյալը «ժամանակավորապես պիտանի չէ զինվորական ծառայությանը», ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի հատկանիշներով անձի նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվում է ՀՀ քրեական օրենսգրքի 74-րդ հոդվածով նախատեսված հիմքով (քրեական պատասխանատվությունից ազատելն իրադրության փոփոխման դեպքում):

Զինվորական ծառայության ընթացքում կատարված հանցագործությունների քննության հետ կապված օրենսդրական խնդիրների կապակցությամբ հարկ է նշել, որ մի շարք իրավադրույթների անորոշ ձևակերպումներ առաջացնում են քրեական գործերի քննության ընթացքում զինծառայողների՝ դատավարական իրավունքներից զրկվելու վտանգ: Խնդիրն այն է, որ որոշ իրավախախտումներ նախատեսված են միաժամանակ որպես կարգապահական և քրեական (օրինակ՝ հրամանը չկատարելը, մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ և այլն⁵⁴⁰) այն տարբերությամբ, որ քրեական պատասխանատվությունը վրա է հասնում կարգապահական այդ խախտումների արդյունքում որոշակի բացասական հետևանքներ առաջանալու դեպքում:

Սակայն բացասական այդ հետևանքները ՀՀ քրեական օրենսգրքում ձևակերպված են անորոշ, գնահատողական հասկացությունների ձևով՝ վնաս, էական վնաս, ծանր հետևանքներ: Այդպիսի ձևակերպումներն անհնարին են դարձնում կարգապահական և քրեական իրավախախտումների հստակ սահմանազատումը միմյանցից, քանի որ յուրաքանչյուր կարգապահական իրավախախտում ունենում է բացասական հետևանք, այսինքն՝ պատճառում է որոշակի վնաս: Իրավական ձևակերպումների այս անորոշության հետևանքով կարող է ստեղծվել իրավիճակ, երբ զինծառայողին կարգապահական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու ընթացքը (ծառայողական քննությունը) հետագայում վերածվի քրեական վարույթի, ինչի հետևանքով զինծառայողը, փաստորեն, կզրկվի «քրեական մեղադրանք» առաջադրելու պահից իրեն վերապահված կարևորագույն իրավունքներից՝ լռելու, իրավաբանական օգնություն ստանալու և այլն:

Զինված ուժերում մահացած զինծառայողների ծնողները 2015 թվականին ևս բազմաթիվ դիմումներ և բողոքներ են ներկայացրել պետական մարմիններին, այդ թվում՝ ՀՀ Նախագահին, ՀՀ Ազգային ժողովին, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, ՀՀ գլխավոր դատախազին, բողոքի ակցիաներ են իրականացրել

⁵⁴⁰ ՀՀ քրեական օրենսգրքի և «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքի համապատասխանաբար 356-րդ և 31-րդ, 365-րդ և 33-րդ, 376-րդ և 42-րդ հոդվածներ

պետական մարմինների վարչական շենքերի մոտակայքում: Մասնավորապես, բողոքները վերաբերել են գործի քննության ընթացքում իրավասու մարմինների կողմնակալությանը, քննության անհիմն ձգձգմանը, հրապարակայնության պակասին: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին դիմած անձինք հայտնել են, որ իրենց առնչվող քրեական գործի քննության ընթացքում իրավասու պետական մարմինները բավարար խորությամբ չեն ուսումնասիրում դեպքի բոլոր հանգամանքները, անհիմն մերժում են իրենց ներկայացրած միջնորդությունները:

Հարկ է նշել, որ զինված ուժերում ոչ հակառակորդի գնդակից մահացած զինծառայողների մահվան պատճառներն ու հանգամանքներն ուսումնասիրելու և եզրակացություն ներկայացնելու համար Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ Ազգային ժողով ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին որոշման նախագիծ է ուղարկվել ՀՀ Ազգային ժողովի նախագահին և խմբակցության ղեկավարներին:

Զինծառայողներն ունեն առողջության պահպանման, բժշկական օգնություն ստանալու իրավունք: Այս իրավունքները ներառում են ինչպես զորակոչիկների մանրակրկիտ բժշկական զննությունը և զինվորական ծառայության համար պիտանելիության վերաբերյալ նրանց առողջական վիճակին համարժեք որոշումների կայացումը, այնպես էլ զինծառայողների հիվանդությունների կանխումն ու բուժումը, բժշկական ծառայությունների մատուցման միջոցով ֆիզիկական և հոգեկան առողջության ապահովումը:

2015 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը մի շարք բողոքներ է ստացել զորակոչիկների թերի բժշկական ուսումնասիրությունների, զինվորական ծառայության ընթացքում առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին իրենց առողջական վիճակի հետ անհամատեղելի ծառայության ձևերում ներգրավելու, զինծառայողներին պատշաճ բժշկական օգնություն չցուցաբերելու վերաբերյալ: Պետության կարևորագույն պարտավորություններից է զինծառայողների առողջության նկատմամբ առավելագույն հոգատարություն ցուցաբերելը՝ սկսած պարտադիր զինվորական ծառայության գորակոչելու պահից մինչև զինծառայությունից արձակելը, իսկ որոշ դեպքերում նաև՝ զինվորական ծառայության ավարտից հետո:

Պաշտպանի կողմից զինծառայողների առողջապահական իրավունքներն ամրագրող օրենսդրության ուսումնասիրությունը, ներկայացված դիմումների քննարկման ընթացքում ի հայտ եկած հանգամանքները հիմք են տալիս եզրակացնելու, որ առկա է այդ ոլորտի մի շարք իրավակարգավորումներ կատարելագործելու անհրաժեշտություն:

Լրամշակման և համակարգման կարիք ունի նաև զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննությունը կարգավորող օրենսդրությունը: Նշված գործընթացը կարգավորող հիմնական իրավական ակտերն են «Զինապարտության մասին» ՀՀ օրենքը և «Զինապարտների և զինծառայողների առողջական վիճակի փորձաքննության կարգը հաստատելու և Հայաստանի

Հանրապետության պաշտպանության նախարարի 2010 թվականի փետրվարի 26-ի թիվ 175-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարության 2013 թվականի ապրիլի 8-ի թիվ 410 հրամանը:

Այս իրավական ակտերով հստակ կանոնակարգված չեն այնպիսի կարևոր խնդիրներ, ինչպիսիք են, մասնավորապես, գորակոչիկի և զինծառայողի իրավունքներն ու պարտականությունները բժշկական փորձաքննության շրջանակներում, ծառայության սահմանափակումների համար հիմք հանդիսացող մեկից ավելի առողջական խնդիրների դեպքում զինվորական ծառայության համար պիտանելիությունը, պարտադիր զինվորական ծառայությունից հետո անձի ցանկության դեպքում պարտադիր բուժզննության ապահովումը, զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված անձանց հակացուցված ծառայության ձևերը և այլն: Թեև այս բացերը լրացնելու ուղղությամբ ներկայումս ձեռնարկվում են համապատասխան միջոցներ (մշակվել է «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, նախատեսվում է լրամշակել վերը նշված հրամանը), այնուամենայնիվ հաշվի առնելով այն, որ այդ իրավակարգավորումներն անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքներին և պարտականություններին՝ անհրաժեշտ է մշակել օրենք, որով համակողմանի և հստակ կտրվեն նշված և այլ խնդիրների լուծումները:

Զինծառայողներն ունեն մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք, ինչը ենթադրում է իրենց կրոնական հայացքների համար խտրական վերաբերմունքի չարժանանալը: 2015 թվականին զինծառայողը Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել է, որ կրոնական հայացքների պատճառով իրեն ազատել են աշխատանքից: Այս իրավունքի ապահովման տեսանկյունից կարևոր է ոչ միայն միանման վերաբերմունքն ինչպես պարտադիր զինվորական, այնպես էլ այլընտրանքային զինվորական և աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների հանդեպ, այլև կրոնական համոզմունքներից բխող պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելը⁵⁴¹:

⁵⁴¹ Larissis v. Greece, (1998)

ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Պաշտոնական տվյալներով 2015թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են բնակչության 6%-ը⁵⁴²: Թեև 2010 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (Կոնվենցիա), այնուամենայնիվ, դեռևս վավերացված չէ Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Նշյալ արձանագրության վավերացումը հնարավորություն է տալիս հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին (Կոմիտե) իրականացնել մշտադիտարկման երկու լրացուցիչ եղանակներ՝ անհատական հաղորդումների ընթացակարգ, որի միջոցով Կոմիտեն ստանում է հաղորդումներ (գանգատներ) անհատներից, որոնց կարծիքով՝ պետությունը խախտել է Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքները: Հատկանշական է, որ Կամընտիր արձանագրության վավերացման վերաբերյալ Հայաստանին հանձնարարական է տրվել նաև 2015 թվականի ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի զեկույցում⁵⁴³:

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում խտրական վերաբերմունքի դրսևորումները շարունակական բնույթ են կրում: Չնայած հաշմանդամության հիմքով խտրականությունը արգելված է Կոնվենցիայով, մի շարք միջազգային փաստաթղթերով, ինչպես նաև գործող տարբեր իրավական ակտերով, խտրականությունը կանխարգելող և արգելող գործուն ու արդյունավետ մեխանիզմներ Հայաստանում առայժմ չեն գործում: Հաշվի առնելով, որ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» գործող ՀՀ օրենքով ամրագրված մոտեցումները չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման միջազգայնորեն ընդունված սկզբունքներին, մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրինագիծը, որը լրամշակվել է և կրկին շրջանառվել լիազոր մարմինների միջև՝ կարծիքի: Թեև նշված նախագծով անդրադարձ է կատարվում նաև խտրականության խնդրին, այնուամենայնիվ, «խտրականություն» եզրույթին տալով համապարփակ սահմանում, բացակայում է «խտրականություն» հասկացության տեսակների սահմանումը (ուղղակի խտրականություն, անուղղակի խտրականություն, խտրականության հրահրում, վիկտիմիզացիան և այլն), ինչպես

⁵⁴² Աշխատանքի և սոցիալական նախարարության տվյալներով Հայաստանում հաշվառված է 198619 հաշմանդամություն ունեցող անձ,

http://www.mlsa.am/home/index.php?menu_id=110&child_id=125&code_id=188

⁵⁴³http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

նան սահմանված չեն խտրականության համար պատասխանատվության և դրա դեմ արդյունավետ իրավական պաշտպանության հստակ մեխանիզմներ, ինչն էապես խոչընդոտում է խտրականության ենթարկված հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով Կոնվենցիան պարտավորեցնում է մասնակից պետություններին ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում⁵⁴⁴: Այնուամենայնիվ, չնայած 2015թ. ոլորտում պետության կողմից ձեռնարկած քայլերի՝ թե քաղաքներում, թե գյուղական վայրերում առկա են եղել Կոնվենցիայով սահմանված հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման զգալի խնդիրներ: Այսպես, չնայած ֆիզիկական մատչելիության հստակ պահանջներ սահմանող օրենսդրության առկայությանը⁵⁴⁵, ոլորտում գործող ՀԿ-ների փոխանցմամբ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի մատչելիության հիմնախնդիրների լուծման հարցում դրական զարգացումներ հիմնականում նկատելի են մայրաքաղաքում, այն էլ հատվածային. 2015 թվականին կառուցվել են մի շարք թեքահարթակներ: Սակայն այս ամենին զուգահեռ կառուցվել և վերակառուցվել են բազմաթիվ շենք-շինություններ, որոնք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման համար: Բացի այդ, Երևանի խաչմերուկներում տեղադրված ձայնային լուսացույցների ձայնը ցածր է և դժվար է կողմնորոշվելը: Տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար միջավայրային մատչելիության այլ ծրագրեր մեր կողմից չեն արձանագրվել: Հանրային նշանակության շինություններում բացակայում են բրայլյան տառատեսակով ուղեցույցներ, չկան սուրդոթարգմանիչների և տիֆլոթարգմանիչների ծառայություններ:

Մի շարք հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց հայտնած տեղեկություններով մարզերում հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական օբյեկտների մատչելիության խնդիրը նույնպես էական լուծում չի ստացել: Թեև ՀՀ

⁵⁴⁴ Հաշմանդամություն ունեցող անձանց մասին կոնվենցիա, 9-րդ հոդված

⁵⁴⁵ «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2002թ. օգոստոսի 29 թիվ 1473-Ն որոշում, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 253-Ն հրաման և այլն

կառավարությունը պարտավորություն է ստանձնել⁵⁴⁶ տրանսպորտային միջոցները հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործմանը հավասարապես մատչելի դարձնելու համար, այնուամենայնիվ հաշմանդամություն ունեցող անձանց՝ հանրային տրանսպորտային միջոցներից օգտվելու մատչելիության ապահովման խնդիրն 2015 թվականին լուծում չի ստացել. 2015 թվականի ընթացքում լսողության և տեսողության խնդիրներ ունեցող ուղևորների կարիքներին համապատասխանող (ձայնաազդանշանային համակարգ, լուսատախտակ) երկաթուղային տրանսպորտի շարժակազմ ձեռք չեն բերվել: Միաժամանակ, թեև Երևանի ներքաղաքային երթուղիներում շահագործվել են հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված հատուկ վերելակային հարմարանքներով կահավորված 20 ավտոբուսներ, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ Երևանում բնակվում են հենաշարժողական խնդիրներ ունեցող բազմաթիվ քաղաքացիներ, անհրաժեշտ է հետագայում ավելացնել բոլորի համար մատչելի տրանսպորտային միջոցների քանակը:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիան պարտավորեցնում է պետությանը ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը և ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նրանց համար մշակութային գործերի, հեռուստահաղորդումների, ֆիլմերի, թատրոնի և մշակութային ներկայացումների ու ծառայությունների մատչելիությունը ապահովելու համար⁵⁴⁷: Այնուամենայնիվ, չեն ձեռնարկվել անհրաժեշտ և բավարար քայլեր մշակութային շենքերը, վայրերը, ինչպես նաև մշակութային միջոցառումները հարմարեցնելու ու մատչելի դարձնելու ուղղությամբ: Ավելին, մի շարք կինոթատրոնների, թատրոնների և այլ մշակութային կառույցների դահլիճներում ընդհանրապես բացակայում են հենաշարժողական, ինչպես նաև լսողական և տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար հատուկ հարմարեցված տարածքներ: Միաժամանակ մի շարք հին մշակութային կառույցներ չունեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց մուտքն ու ելքն ապահովելու համար նախատեսված համապատասխան հարմարություններ: Թեև նշվում է, որ մշակութային շինությունների՝ սահմանափակ կարողություններով անձանց հարմարեցնելու խնդիրը կարող է իր լուծումը ստանալ միայն մշակութային կազմակերպությունների հիմնանորոգումների դեպքում, ոչ բոլոր մշակութային հաստատություններում է առկա հիմնանորոգման անհրաժեշտություն: Այդ պատճառով այն բոլոր մշակութային հաստատություններում, որտեղ բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց մշակութային կյանքին մասնակցելու

⁵⁴⁶ ՀՀ կառավարության կողմից 2012թ. դեկտեմբերի 20-ի նիստի ընթացքում թիվ 51 արձանագրային որոշմամբ հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ 2012թ. հաշվետվությունը, որում նշվել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովումը, բացի տեղական ինքնակառավարման մարմիններից, դրված է նաև ՀՀ կառավարության վրա:

⁵⁴⁷ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 30

ապահովման համար անհրաժեշտ պայմանները, անհրաժեշտ է նախատեսել ժամանակավոր լուծումներ՝ թեքահարթակներ կամ այլ անհրաժեշտ հարմարանքներ:

Ինչ վերաբերում է պատմամշակութային հուշարձանների պահպանմանը, ապա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2014թ.-ի տարեկան զեկույցում, անդրադառնալով «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանի տեղափոխման խնդրին, առաջարկել է ապահովել պատմության և մշակութային հուշարձանների արդյունավետ պահպանությունը, պահպանման կանոնները խախտած անձանց նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ: Մասնավորապես, «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանի տեղափոխումն ուղղված չէր «հուշարձանի նյութական պահպանությանը»: Ավելին, իրավասու մարմինների կողմից նույնիսկ չեն ձեռնարկվել հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման պատշաճ աշխատանքներ: Թեև բազմիցս նշվել է⁵⁴⁸, որ «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանը ներառվել է «Հին Երևան» ծրագրում և ծրագրի շրջանակներում այն ենթակա է վերականգնման, այնուամենայնիվ ծրագրի իրագործման հստակ ժամկետներ նախատեսված չեն: «Հին Երևան» կառուցապատման ներդրումային ծրագրի վերաբերյալ դեռևս 2014թ.-ին ստորագրվել է համաձայնագիր⁵⁴⁹, որով նախատեսվում էր շինարարական աշխատանքների մի մասը սկսել 2015թ.-ի աշնանը⁵⁵⁰, սակայն, հարցի կապակցությամբ ՀՀ քաղաքաշինության նախարարի հայտարարության համաձայն⁵⁵¹՝ ծրագրի իրականացումը մեկնարկելու է 2016թ.-ից և տևելու է 3-4 տարի: Այսպիսով, 2015 թվականի դրությամբ «Աֆրիկյանների բնակելի տուն» հուշարձանը չի վերականգնվել:

Չնայած նրան, որ Հայաստանը որդեգրել է ներառական կրթության աստիճանական անցման քաղաքականություն, համապատասխան փոփոխություններ նախատեսելով նաև օրենքով⁵⁵², այնուամենայնիվ, ոլորտում առկա են մի շարք համակարգային խնդիրներ, որոնք, մասնավորապես, վերհանվել են Պաշտպանի կողմից՝ 2015թ. ներառական կրթություն իրականացնող մի շարք հանրակրթական դպրոցների մշտադիտարկման արդյունքում:

Այսպես, ներառական դպրոցների շենքերի ֆիզիկական մատչելիությունը հաշմանդամություն ունեցող երեխաների համար սահմանափակվում է հիմնականում դպրոցների մուտքի մոտ կառուցված թեքահարթակով: Տեղաշարժման

⁵⁴⁸<http://sputnik.co.am/armenia/20160218/2018374.html>, <http://newsarmenia.am/am/news/society/society-20140624-43072157/>

⁵⁴⁹19.11.2014թ.-ի ՀՀ կառավարության թիվ 49 արձանագրային որոշման հավելված

⁵⁵⁰<http://www.armradio.am/hy/2015/05/25/%D6%84%D5%A1%D5%B2%D5%B7%D5%AB%D5%B6%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%A8-%D5%B0%D5%AB%D5%B6-%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%B4%D5%A1/>

⁵⁵¹<http://www.azatutyun.mobi/a/27449580.html>

⁵⁵² «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

դժվարություն ունեցողների համար բացակայում են վերելակները, դռները դժվար են հրվում, ունեն շեմեր, չկան բռնակներ, հարմար սանհանգույց, իսկ կահույքը, երբեմն մատչելի է դառնում ծնողների ջանքերի շնորհիվ: Շենքերը նաև հարմար չեն տեսողության և լսողության խնդիրներ, մտավոր առանձնահատկություններ և այլ դժվարություններ ունեցող անձանց համար (գունային գծանշումներ և այլն): Բացի ֆիզիկական միջավայրի մատչելիությունից, մի շարք մանկավարժներ ու բազմամասնագիտական թիմի անդամներ առանձնագրույցներում Պաշտպանի ներկայացուցիչներին հայտնել են մի շարք համակարգային խնդիրների, օրինակ՝ հոգեբանի կամ լոգոպեդի համար առանձնասենյակի անհրաժեշտության մասին՝ պատճառաբանելով, որ ընդհանուր ռեսուրս սենյակում երեխաների հետ զուգահեռաբար աշխատելն էապես նվազեցնում է երեխաների հետ անհատական աշխատանքի արդյունավետությունը: Որոշ դպրոցների աշխատակիցներ բարձրաձայնել են նաև դպրոցի հաստիքացուցակներում բուժքույրերի հաստիքի բացակայությանը հարցը, նշելով, որ դպրոցական բուժքույրն, որն, օրենքով սահմանված կարգով, իրականացնում է աշակերտների բուժսպասարկումը տեղում՝ տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատության հսկողության և պատասխանատվության ներքո, աշխատում է ընդամենը կես դրույքաչափով և/կամ շաբաթական 3 օր: Արդյունքում հնարավոր չի լինում ապահովել աշակերտների լիարժեք բուժսպասարկումը, հատկապես բուժքրոջ հրատապ անհրաժեշտության դեպքում, մինչդեռ, հաշվի առնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առողջական խնդիրները, մեծանում է բուժքրոջ կողմից անհապաղ բուժսպասարկման իրականացման և կանոնավոր բժշկական հսկողության անհրաժեշտությունը:

Պաշտպանի աշխատակիցները, որոշ դեպքերում, արձանագրել են նաև ներդպրոցական միջոցառումներին հաշմանդամություն ունեցող երեխաների ներգրավվածության պակաս, մինչդեռ վերջինս երեխաների լիարժեք ներառման և կրթության ապահովման բաղադրիչներից է: Գրանցվել են նաև երեխային իր հաշմանդամության պատճառով դպրոց ընդունելու մերժման դեպքեր⁵⁵³:

Ոլորտային ՀԿ-ներն ասհազանգում են, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները նույնպես անմատչելի են և՛ ֆիզիկական, և՛ կրթության բովանդակության առումներով, իսկ պետության քայլերն՝ ուղղված բուհական կրթության մատչելիությանը, նկատելի չեն: Չկան վիճակագրական տվյալներ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հաշմանդամություն ունեցող ուսանողների վերաբերյալ:

Հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ առկա կրկնակի խտրականությունը խոչընդոտում է նրանց մասնագիտական կրթության ստացմանը, ինչի հետևանքների վերացման համար ևս գործուն քայլեր չեն իրականացվել:

⁵⁵³ Մանրամասն տես՝ Երևանի քաղաքապետարանի բաժին

Դեռևս 2014 թվականին Պաշտպանի կողմից բարձրաձայնվել էր հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես հենաշարժողական խնդիրներ ունեցող) Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ (Ֆիզկուլտուրայի ինստիտուտ) ընդունվելու և սովորելու հնարավորությունից զրկված լինելու խնդիրը: Այսպես, ՀՀ կառավարության որոշմամբ, որով կարգավորվում է ՀՀ պետական և ոչ պետական ԲՈՒՀ-եր ընդունելության գործընթացը, նախատեսվում է, որ Ֆիզկուլտուրայի ինստիտուտի մասնագիտական առարկաների քննությունները ներբուհական քննություններ են և անցկացվում են տվյալ մասնագիտության առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան⁵⁵⁴: Բայցևայնպես, ԲՈՒՀ-ի ընդունման կարգից բխում է, որ անկախ ընտրած մասնագիտությունից, բոլոր դիմորդները պարտավոր են հանձնել «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկան (*ներառում է վազք, եռացատկ, ձգումներ և այլն*), ինչպես նաև ներկայացնել բժշկական զննության եզրակացություն⁵⁵⁵: Այսինքն՝ տվյալ դեպքում հաշվի չեն առնվում հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կարիքները: Արդյունքում, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձինք զրկվում են տվյալ ԲՈՒՀ-ում կրթություն ստանալու հնարավորությունից՝ հնարավորություն չունենալով հանձնել այս առարկայից քննություն:

Պետության քայլերն ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության խթանմանն արդյունավետ չեն և վերջիններիս շրջանում գործազրկությունը շարունակում է բարձր մնալ: Ըստ պաշտոնական տվյալների՝ 2015 թվականի նոյեմբերի 1-ի դրությամբ Զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում հաշվառված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը կազմել է 2462 անձ, որը շուրջ 21 տոկոսով գերազանցում է 2014 թվականի ցուցանիշը՝ 2056⁵⁵⁶: 2014 թվականի տարեկան զեկույցում բարձրացվել էր այն խնդիրը, որ ՀՀ կառավարության 2014 թվականի որոշմամբ⁵⁵⁷ էականորեն կրճատվել են պետական աջակցության ծրագրի շահառուների թիվն ու շրջանակը⁵⁵⁸: Պաշտպանի կողմից առաջարկվել էր գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագրի ժամկետը երկարացնել մինչև 1-2 տարի, ինչպես նաև ընդլայնել տվյալ ծրագրի շահառուների թիվը՝ 1-ին խմբի հաշմանդամություն ունեցողներին զուգահեռ

⁵⁵⁴ ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի N 597-Ն որոշում

⁵⁵⁵ «Ֆիզիկական Կուլտուրա և Սպորտ» մասնագիտության ընդունելության քննության ծրագիրը և գնահատման չափանիշները «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» առարկայից հաստատվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից 2009 թվականին:
<http://www.asipc.am/index.php?lng=am&p=page53>,

⁵⁵⁶ Տես՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության բաժին

⁵⁵⁷ ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի ««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» թիվ 534-Ն որոշում

⁵⁵⁸ Գործատուին աշխատավարձի փոխհատուցման ծրագիրը, նախկին 1-2 տարիների փոխարեն, գործելու է միայն 6 ամիս, և աշխատավարձի փոխհատուցման ծրագիրը, նախկինում 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց վրա տարածվելու փոխարեն, այսուհետ ներառելու է միայն 1-ին խմբի հաշմանդամություն ունեցողներին, իսկ լրացուցիչ պայմանների բավարարման դեպքում՝ 2-րդ և 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց

ընդգրկելով նաև 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց, սակայն առաջարկները չեն ընդունվել, և վերոնշյալ խնդիրներով կարգավորումներն ուժի մեջ են մտել և գործում են: Նշենք, որ ՀՀ սահմանադրությամբ որպես տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներ, ի թիվս այլնի, սահմանում է բնակչության զբաղվածության խթանումը և աշխատանքի պայմանների բարելավումը, ինչպես նաև հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը:⁵⁵⁹: «Զբաղվածության մասին» նոր օրենքի ընդունմամբ սահմանվեց հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատատեղերի պարտադիր ապահովման քվոտա, սակայն ոչ պետական կազմակերպությունների համար վերջինս գործելու է միայն 2016 թվականից:

Մանկատան երեխաներին բնակարանով ապահովելու ուղղությամբ անհրաժեշտ և բավարար ծրագրերի բացակայության հետևանքով խնդրահարույց է մասնագիտացված մանկատների շրջանավարտներին բնակարանով ապահովելը: Գերակշիռ դեպքերում մասնագիտացված հատուկ մանկատների՝ հաշմանդամություն ունեցող սաները 18 տարեկանը լրանալուց հետո ստիպված են մնալ մանկատանը կամ տեղավորվել նյարդահոգեբուժական տուն-ինտերնատում կամ համապատասխան բժշկական հաստատությունում՝ համապատասխան կացարանների և խնամքի հաստատությունների բացակայության պատճառով: Ըստ պաշտոնական տվյալների՝ բնակչության սոցիալական պաշտպանության երեխաների շուրջօրյա խնամքի հաստատություններում ներկայում բնակվում է 18 տարեկանը լրացած 124 չափահաս անձ, այդ թվում 114-ը՝ Խարբերդի մասնագիտացված մանկատանը⁵⁶⁰, 3-ը՝ Մարի Իզմիրյանի անվան մանկատանը, 2-ը՝ Գավառի մանկատանը, իսկ 5-ը՝ Վանաձորի մանկատանը: «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում խնամվող 80 չափահաս սան տեղափոխվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց «Ձորակ» կենտրոն: Պաշտոնական տվյալների համաձայն խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության (մասնագիտացված) հաստատություններից 18 տարեկանը լրանալու կապակցությամբ դուրսգրում չի եղել, քանի որ մտավոր և ֆիզիկական զուգակցված խնդիրներով շրջանավարտներն ինքնություն չեն կարող ապրել, ապահովել իրենց կենցաղավարությունը, ուստի նրանց բնակարան չի տրամադրվել⁵⁶¹:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 30-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունն ապահովում է հաշմանդամությանը հատուկ սպորտային միջոցառումներին հաշմանդամություն

⁵⁵⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 86

⁵⁶⁰ Խարբերդի մասնագիտացված մանկատունը, որտեղ ապրում են մտավոր և ֆիզիկական լուրջ խնդիրներ ունեցող երեխաներ, ունի գերբեռնվածության լուրջ խնդիր: Չնայած նրան, որ հաստատությունը նախատեսված է մինչև 18 տարեկան երեխաների համար, այնտեղ մինչ օրս ապրում են նույնիսկ մինչև 35 տարեկանին մոտ բազմաթիվ անձինք:

⁵⁶¹ Մանրամասն տես՝ «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում:

ունեցող անձանց մասնակցության հնարավորությունն, ինչպես նաև խրախուսում է անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այնուամենայնիվ, հասարակական կազմակերպությունները դժգոհում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չեն բազմաթիվ մարզադպրոցները: Մասնավորապես, մարզադպրոցների շենքերում հիմնականում բացակայում են թեքահարթակները, ինչպես նաև անհրաժեշտ հարմարանքները շենքերի ներսում (օրինակ՝ վերելակ և/կամ ամբարձիչ, տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար սանհանգույցների և դռների մատչելիություն և այլն): Արդյունքում, հաշմանդամություն ունեցող մարզիկները գործնականում զրկվում են պարաօլիմպիկ, սուրդօլիմպիկ ու հատուկ օլիմպիականների խաղերին և այլ մրցաշարերին մասնակցելու համար արդյունավետ, շարունակական և լիարժեք նախապատրաստման հնարավորությունից: Ըստ օրենքի՝ պետական իշխանության և կառավարման տեղական մարմինները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց համար մշակութային հիմնարկների և մարզական կառույցների մատչելիությունը և դրանցից օգտվելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը և հատուկ մարզական գույքի տրամադրումը⁵⁶²: Թեև այժմ քննարկվում է Երևանի պարաօլիմպիկ մարզաձևերի մարզադպրոց ստեղծելու հարցը, և այդ նախաձեռնությունը միտված է համապատասխան պայմաններ ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց՝ սպորտային կյանքին անխոչընդոտ ներգրավվելու համար; Այնուհանդերձ, գտնում ենք, որ միայն հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզադպրոցի ստեղծումն իր մեջ պարունակում է խտրական դրսևորումներ և մեկուսացման ռիսկ: Այնինչ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումը, այդ թվում՝ սպորտային կյանքին ներգրավման միջոցով, ենթադրում է մյուսների հետ հավասար հիմունքներով սպորտային վայրերի մատչելիության ապահովում՝ խտրականության ու մեկուսացման բացառման, հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային կյանքի ներառման խթանման սկզբունքների հիման վրա⁵⁶³: Ուստի, ողջունելով նոր մարզադպրոց ստեղծելու նախաձեռնությունը, միաժամանակ, գտնում ենք, որ այն պետք է հավասարապես մատչելի լինի բոլոր անձանց համար՝ անկախ վերջիններիս մոտ հաշմանդամության առկայությունից:

Բազմաթիվ խնդիրներ են արձանագրվել նաև հաշմանդամության սահմանման ոլորտում: Այսպես, ԲՄՓ հանձնաժողովների կողմից հաշմանդամության խմբի սահմանման համար գործածվող ՀՀ Կառավարության որոշմամբ⁵⁶⁴ հաստատված չափորոշիչները բավականին լայն են ձևակերպված, ինչը լայն հայեցողություն է

⁵⁶² «ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված

⁵⁶³ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 30-րդ հոդվածներ

⁵⁶⁴ ՀՀ Կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» թիվ N 780-Ն որոշում

ընձեռում հանձնաժողովի անդամներին որոշում կայացնելիս և բազմաթիվ դեպքերում հանգեցնում են երկակի ստանդարտների կիրառման: Այս ուղղությամբ 2015 թվականին ԲՄՓ գործընթացի թափանցիկությունն ու կոռուպցիոն ռիսկերի վտանգը նվազեցնելու նպատակով մշակվել են «Բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցության կարգը» և «Բժշկասոցիալական փորձաքննության աշխատանքներում փորձաքննություն անցնող անձանց կողմից համապատասխան մասնագետներին որպես խորհրդատու ներգրավելու կարգը», և քայլեր են ձեռնարկվել Առողջապահության համաշխարհային կազմակերպության Ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) սկզբունքների վրա հիմնված հաշմանդամության սահմանման չափորոշիչների մշակման ուղղությամբ: Այնուամենայնիվ, բազմաթիվ քաղաքացիներ, ՀԿ-ներ ահազանգում են, որ հաշմանդամության խմբերը սահմանելիս բժիշկների լայն հայեցողական լիազորությունները պարունակում են կոռուպցիոն ռիսկեր:

Կոնվենցիայի համաձայն՝ մասնակից պետությունները երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և մյուսների հետ հավասար հիմունքներով դրանցից օգտվելու հնարավորությունը⁵⁶⁵: Այնուամենայնիվ, ոլորտային հասարակական կազմակերպություններն ահազանգում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք գրեթե ներառված չեն քաղաքական կյանքին, քանի որ քաղաքական իրավունքների իրացման համար չկան մատչելիության պայմաններ, հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի չեն անգամ ժողովրդավարության հիմնական գործիք հանդիսացող ընտրությունները. դիտորդական կազմակերպությունների, լրատվության միջոցների կողմից անմատչելիության բազմաթիվ դեպքեր են արձանագրվել 2015 թվականի դեկտեմբերի 6-ին Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի ընթացքում⁵⁶⁶:

⁵⁶⁵ ՄՄԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 29

⁵⁶⁶ <http://disabilityinfo.am/14101/>

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Չնայած նրան, որ Հայաստանի Հանրապետությունը երեխայի իրավունքների պաշտպանության բնագավառում ստանձնել է բազմաթիվ միջազգային պարտավորություններ, այնուամենայնիվ, ոլորտին առնչվող որոշ առանցքային միջազգային փաստաթղթեր առայժմ չեն վավերացվել Հայաստանի կողմից: Դրանցից է, օրինակ, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի (Կոնվենցիա)՝ Հաղորդումների ներկայացման ընթացակարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությունը, որը հնարավորություն է ընձեռում անհատներին կամ անհատների խմբերին անմիջականորեն հաղորդումներ ներկայացնելու ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտե Կոնվենցիայով և երկու Կամընտիր արձանագրություններով ամրագրված իրավունքների խախտումների վերաբերյալ: Չի վավերացվել նաև Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանգարոտի կոնվենցիա), ինչը յուրահատուկ, իրավական գործիք է, որը պարտավորեցնում է պետություններին քրեականացնել երեխաների նկատմամբ սեռական բռնության բոլոր ձևերն ու նախատեսում է դրա դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմներ:

Թեև 2015 թվականին պետության կողմից որոշակի միջոցներ են ձեռնարկվել՝ ուղղված ոլորտում առկա խնդիրների լուծմանը, այնուամենայնիվ, դեռևս մտահոգիչ են երեխաների աղքատության բարձր ցուցանիշները, նրանց նկատմամբ բռնության դեպքերը, բազմաթիվ երեխաների համար առողջապահական ծառայությունների և կրթության անմատչելիությունը, արդարադատության ոլորտում բազմաթիվ խնդիրները, որոնք վկայում են, որ կատարված քայլերը բավարար չեն երեխաների արդյունավետ պաշտպանության համար:

Երեխաները հաճախ ավելի խոցելի են խտրականության ենթարկվելու իմաստով, քան մեծահասակները: Խտրականությունն էապես նման իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորում է՝ առանց որևէ օբյեկտիվ հիմքերի և որևէ ողջամիտ բացատրության⁵⁶⁷: 1993թ.-ին ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիայի (Կոնվենցիա) վավերացմամբ Հայաստանը պարտավորվել է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու երեխայի պաշտպանությունը խտրականության բոլոր ձևերից⁵⁶⁸:

Միաժամանակ, 2013 թվականին ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն ՀՀ երրորդ և չորրորդ համատեղ պարբերական զեկույցի վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել խոցելի և առավել անբարենպաստ

⁵⁶⁷ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի, 2012 թ. հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 199

⁵⁶⁸ Երեխայի իրավունքների մասին 1989թ. ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 2

իրավիճակներում հայտնված երեխաների նկատմամբ խտրականության առկայության վերաբերյալ և առաջարկել պետությանը միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ: Բայցևայնպես, Հայաստանում շարունակում են տեղ գտնել երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքի տարբեր դրսևորումներ:

Այսպես, երեխայի նկատմամբ խտրականության դրսևորումներից է շարունակում մնալ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը: 2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության՝ ՀՀ-ում վերարտադրողական և սեռական առողջության իրավունքների զարգացման ոլորտում իրականացված համատեղ ուսումնասիրության շրջանակներում Երևան քաղաքի և մարզերի մի շարք բուժաշխատողների հետ իրականացված հարցազրույցների ժամանակ նշվել է երևույթի տարածվածության և վտանգավորության մասին: Միաժամանակ, մի շարք բուժաշխատողներ կարծիք են հայտնել, որ իրենք նախընտրում են իրականացնել սեռով պայմանավորված հղիության ընդհատումը, գիտակցելով, որ հակառակ դեպքում այն կիրականացվի տնային պայմաններում՝ մեծ ռիսկի տակ դնելով կնոջ առողջությունը: ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հետազոտությունները վկայում են, որ Հայաստանում տղա ունենալու ցանկությունը մոտ վեց անգամ ավելի մեծ է աղջիկ ունենալու ցանկությունից⁵⁶⁹: Արդյունքում, 2000 թվականից ի վեր նորածինների հարաբերակցությունը Հայաստանում շեղվել է՝ 100 աղջկա դիմաց կազմելով 114 տղա այն դեպքում, երբ նորմայի դեպքում պետք է լինեին 102-106⁵⁷⁰:

Նշյալ խնդրին դեռևս անդրադարձ է կատարվել 2011թ. ԵԽԽՎ հանձնարարականում, որտեղ հանձնարարվել է ԵԽ անդամ պետություններին (ներառյալ՝ Հայաստանին) ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները⁵⁷¹:

Խտրականության վերաբերմունք առկա է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների⁵⁷² նկատմամբ: Այսպես, օրինակ, Պաշտպանի աշխատակիցները, 2015թ.-ին ներառական կրթություն իրականացնող մի շարք հանրակրթական դպրոցների մշտադիտարկման արդյունքում, արձանագրել են դեպքեր, երբ ներդպրոցական միջոցառումներին հաշմանդամություն ունեցող երեխաները ներգրավված չեն եղել,

⁵⁶⁹ <http://bit.ly/1EzYLuZ>

⁵⁷⁰ Մանրամասն տես՝ «Կանանց իրավունքներ», «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժիններում:

⁵⁷¹ CoE Parliamentary Assembly, Resolution 1829 (2011), <http://bit.ly/1QUgHZ9>

⁵⁷² 2015թ. հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում հաշվառված է 8006 հաշմանդամություն ունեցող երեխա, <http://bit.ly/1LnQ3aH>

մինչդեռ դա երեխաների լիարժեք ներառման և կրթության ապահովման բաղադրիչներից է: Բացի նշվածից, թեև ներառական կրթության ոլորտում միջազգային փորձը վկայում է, որ եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մյուսները, ապա դա կնպաստի մյուս երեխաների շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ անկանխակալ վերաբերմունքի ձևավորմանը, այնուամենայնիվ, տարվա ընթացքում առանձին բարձրաստիճան պաշտոնյաների մոտ տվյալ ոլորտի հիմնախնդիրների լուծման ուղղությամբ աշխատելու քաղաքական կամքի պակաս է եղել: Ավելին, վերջիններս, իրենց առանձին հրապարակային ելույթներում էթիկապես ոչ կոռեկտ կոչեր ու հայտարարություններ են արել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վերաբերյալ: Հատկանշական է, որ դեռևս 2014թ.-ին իրականացված հետազոտությամբ պարզվել է, որ հաշմանդամություն ունեցող երեխաներից շատերը հաճախ ենթարկվում են խտրական վերաբերմունքի, լիարժեք կերպով ներգրավված չեն հասարակական կյանքին և անտեսված են⁵⁷³: Հետազոտությունը ցույց է տվել նաև, որ հատկապես խտրական է հասարակության վերաբերմունքը մտավոր զարգացման խնդիրներ ունեցող երեխաների նկատմամբ⁵⁷⁴:

2015թ. Հայաստանի Հանրապետության սահմանադրության⁵⁷⁵ փոփոխություններով ամրագրվեցին լրացուցիչ երաշխիքներ երեխաների իրավունքների ոլորտում: Մասնավորապես, երեխայի ազատ արտահայտվելու իրավունքի ամրագրմամբ պետության կողմից մայր օրենքի մակարդակով ընդունվեց երեխայի՝ որպես իրավունքների ակտիվ սուբյեկտի հասկացությունը՝ բացի տարիքից հաշվի առնելով նաև նրա հասունության մակարդակը, ինչը բխում է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածի պահանջներից: Միաժամանակ, Սահմանադրությամբ ամրագրվել է նաև, որ երեխային վերաբերող հարցերում *երեխայի շահերը* պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան և, որ յուրաքանչյուր երեխա իրավունք ունի պահպանելու կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ իր ծնողների հետ՝ բացառությամբ այն դեպքի, երբ դատարանի որոշմամբ դա հակասում է *երեխայի շահերին*⁵⁷⁶:

Սակայն ՄԱԿ-ի Կոնվենցիայի և տվյալ ոլորտում գործող միջազգային այլ ստանդարտների համաձայն՝ երեխաների նկատմամբ բոլոր գործողությունները ձեռնարկելիս առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի «*երեխայի լավագույն շահերին*»: Վերջինս էապես տարբերվում է «երեխայի շահ» եզրույթից, որով լիարժեքորեն չի արտացոլվում համապատասխան մարմինների կողմից երեխային վերաբերող հարցերում երեխայի համար բացառապես լավագույն լուծում

⁵⁷³ «Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը Հայաստանում» 2014թ.

⁵⁷⁴ Մանրամասն տես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ» բաժնում

⁵⁷⁵ ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 37-րդ հոդվածի 1-ին մաս, http://www.parliament.am/law_docs5/Sahmanadrutyun_06.12.2015.pdf

⁵⁷⁶ Նույն տեղը՝ 37-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր

հանդիսացող որոշումների կայացման սկզբունքը⁵⁷⁷: Այս մասին դեռևս 2013 թվականին Հայաստանի պարբերական երրորդ և չորրորդ զեկույցների վերաբերյալ ներկայացված եզրափակիչ դիտարկումներում նշել է նաև ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն և կոչ արել պետությանը համապատասխան օրենսդրական փոփոխությունների միջոցով այդ իրավունքը լիարժեք կերպով արտացոլել օրենսդրության մեջ⁵⁷⁸: Միաժամանակ, ողջունելի է, որ 2015թ.-ին «երեխայի լավագույն շահ» եզրույթն ամրագրվել է «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, ինչի բացակայության խնդրին անդրադարձ էր կատարվել Պաշտպանի նախորդ տարիների զեկույցներում:

Երեխաների նկատմամբ բռնության արգելքը երեխայի իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է, որն ամրագրված է նաև ՄԱԿ-ի Կոնվենցիայի 19-րդ հոդվածով⁵⁷⁹: Երեխայի նկատմամբ բռնությունը դեռևս առկա է: Ընդ որում, երեխաների նկատմամբ բռնությունն ընտանիքում, կրթական և երեխայի խնամք ու պաշտպանություն իրականացնող հաստատություններում դրսևորվում է ֆիզիկական, հոգեբանական, շահագործման, անտեսման և այլ ձևերով: Խնդրի արդյունավետ լուծմանը խոչընդոտում է այն, որ ներկայում չի վարվում երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ լիարժեք պետական վիճակագրություն, որի հիման վրա հնարավոր կլիներ համապարփակ վերլուծություններ իրականացնել և պարզել բռնության հիմնական պատճառներն ու դրանց վերացման միջոցները: Բացի այդ, լիարժեք վիճակագրական տվյալների հավաքագրմանը խոչընդոտում է նաև այն, որ ՀՀ-ում բռնության ոչ բոլոր դրսևորումներն են քրեորեն պատժելի (անտեսում, հոգեբանական բռնության դրսևորումներ և այլն), որոնք ավելի հաճախ են հանդիպում: Ուստի ներկայացվող պաշտոնական վիճակագրությունն արտացոլում է միայն այն հատվածը, որը վերաբերում է բռնության հանցավոր դրսևորումներին: Օրինակ, մանկական տարբեր հաստատություններում բավականին բազմազան է պատժաձևերի «զամբյուղը». ի լրումն լայնորեն տարածված «անկյուն կանգնեցնել», «բղավել», «ականջ քաշել», «ծեծել» ձևերին՝ կարելի է հանդիպել նաև «հայհոյանք», «մութ տեղում պահել», «դպրոցից հեռացնել» ձևերին, ինչպես նաև այլ ոչ ստանդարտ ձևեր՝ երեխաներին դասարանում անտեսելը, հոգեբանի մոտ գնալուց զրկելը, ցածր

577

http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/TBSearch.aspx?Lang=en&TreatyID=5&DocTypeID=11

578 <http://bit.ly/1C4N2F8>

579 Երեխայի նկատմամբ բռնության առավել տարածված սահմանումը տրվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության 2002 թվականի «Բռնության և առողջության վերաբերյալ համաշխարհային զեկույցում», համաձայն որի երեխայի հանդեպ բռնություն կամ վատ վերաբերմունք են կազմում երեխայի հանդեպ ցանկացած ձևով արտահայտված բռնությունը կամ երեխայի նկատմամբ անփութ վերաբերմունքը (երեխայի անտեսում), որի արդյունքում պատճառվել է կամ կարող է պատճառվել վնաս երեխայի առողջությանը, բնականոն զարգացմանը, արժանապատվությանը կամ կյանքին՝ վերջինիս և անիրավաչափ արարքն իրականացնող անձի միջև պատասխանատվության, վստահության կամ իշխանության հարաբերությունների համատեքստում: http://whqlibdoc.who.int/publications/2002/9241545615_eng.pdf?ua=1

գնահատական դնելը, ճաշից զրկելը և այլն⁵⁸⁰: Երեխաների նկատմամբ բռնության դեպքեր են գրանցվել նաև ԲԿԱՄ-ի կողմից հատուկ հանրակրթական դպրոցներում իրականացված մշտադիտարկումների ընթացքում՝ երեխաների հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում⁵⁸¹:

Օրենսդրորեն չի ամրագրվել երեխաների նկատմամբ մարմնական պատժի (corporal punishment) արգելքը: Նշենք, որ մարմնական պատժը երեխաների նկատմամբ բռնության ամենալայն տարածում ունեցող դրսևորումներից է: Ընդ որում, մարմնական պատժը ցանկացած պատիժ է, որտեղ գործադրվում է ֆիզիկական ուժ՝ որոշակի աստիճանի ցավ կամ անհարմարություն առաջացնելու նպատակով: Այն ներառում է երեխաներին հարվածելը («ապտակ» և այլն) ձեռքով կամ որևէ գործիքով՝ մտրակ, փայտ, գոտի, կոշիկ, փայտե գդալ և այլն⁵⁸²:

Երեխայի նկատմամբ մարմնական պատժը հանդիսանում է երեխայի՝ մարդու արժանապատվության և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի ռոտահարում, պարունակելով երեխային ուղղված սխալ ուղերձ և զգալի ֆիզիկական ու հոգեբանական վնասի սպառնալիք: Հարկ է նշել, որ երեխաների նկատմամբ մարմնական պատժի օրենսդրական արգելքի սահմանման բացակայության խնդրին անդրադարձ է կատարվել Հայաստանի վերաբերյալ ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի 2015թ. զեկույցում, որտեղ նշվել է մանկական պատիժն արգելելու նպատակով ազգային օրենսդրության բարեփոխման և կիրարկման մեխանիզմի ու երեխաների մարմնական պատժի դեմ պատժամիջոցներ մշակելու անհրաժեշտության մասին⁵⁸³: Երեխայի նկատմամբ մարմնական պատժի օրենսդրական արգելքի ու դրա գործնական կիրարկմանն ուղղված հանձնարարականներ են առկա նաև ԵԽ շրջանակներում ընդունված փաստաթղթերում⁵⁸⁴:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու բազմաթիվ դեպքերում երեխաները, որոնք զրկված են եղել պատշաճ սոցիալական ապահովությունից, զբաղվել են մուրացկանությամբ, ինչպես նաև ներգրավվել տարբեր տեսակի կյանքի և առողջության համար վտանգավոր, անօրինական աշխատանքներում: Այսպես, Պաշտպանի աշխատակազմը ստացել է բազմաթիվ ահազանգեր՝ առավելապես երեկոյան ժամերին մարդաշատ վայրերում ծնողի ուղեկցությամբ կամ միայնակ

⁵⁸⁰ <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>, էջ 43

⁵⁸¹ Մանրամասն տես՝ ԲԿԱՄ բաժնում:

⁵⁸² Մարմնական պատժից և այլ դաժան կամ նվաստացնող վերաբերմունքից պաշտպանված լինելու երեխայի իրավունքի մասին ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 8 ընդհանուր մեկնաբանություն , հունիսի 2, 2006թ.

⁵⁸³ «Համընդհանուր պարբերական դիտարկում, Հայաստան» աշխատանքային խմբի զեկույց, 2015թ. ապրիլի 13, <http://bit.ly/1TKO8Qa>

⁵⁸⁴ ԵԽ Նախարարների կոմիտեի 1985թ. թիվ R (85) 4 հանձնարարական, ԵԽ Նախարարների կոմիտեի 2006թ. Rec(2006)19 հանձնարարական, ԵԽ Մարդու իրավունքների հանձնակատար «Երեխաներն ու մարմնական պատժը. Ծեծված չլինելու իրավունքը նաև երեխաների իրավունք է», 2006թ., CommDH/IssuePaper(2006)1REV, ԵԽԽՎ Հանձնարարական 1666 (2004)

մուրացկանությամբ զբաղվող երեխաների վերաբերյալ: Մի շարք դեպքերում երեխաները մուրացկանության են դրդվել ծնողների, ընտանիքի այլ անդամների կողմից: Վերջիններս երեխայի նկատմամբ նման վերաբերմունքը ուստիկանության աշխատակիցներին հաճախ պատճառաբանում են սոցիալական վատ պայմաններով:

ՀՀ ԿԱ ուստիկանության հայտնած տվյալների համաձայն՝ 2015 թվականի ընթացքում «Մուրացիկ-թափառաշրջիկ» միջոցառումների ընթացքում հայտնաբերվել են 33 թափառաշրջիկ և մուրացիկ անչափահասներ, որոնցից՝ 27-ը հայտնաբերվել են Երևան քաղաքում, իսկ 6-ը՝ ՀՀ մարզերում՝ մասնավորապես Շիրակի և Լոռու:

Դեռևս 2013 թվականին Հայաստանի երրորդ և չորրորդ պարբերական զեկույցների վերաբերյալ իր դիտողություններում մտահոգություն էր հայտնել ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն՝ նշելով, որ զգալի թվով երեխաներ, այդ թվում մինչև 14 տարեկան, լքում են դպրոցները՝ աշխատելու համար ոչ ֆորմալ ոլորտներում, ինչպիսիք են գյուղատնտեսությունը ավտոսպասարկումը, շինարարությունը, մետաղների թափոնների հավաքումը և ընտանեկան բիզնեսները: Կոմիտեն մտահոգություն է հայտնել նաև, մուրացիկության մեջ ներգրավված երեխաների աճող թվի վերաբերյալ⁵⁸⁵: Նշվածը, մասնավորապես, պայմանավորված է նաև նրանով, որ մինչ օրս չեն մշակվել ապօրինի աշխատող երեխաների հայտնաբերման մեխանիզմներ, չեն հավաքվել հստակ վիճակագրական տվյալներ, և չի կատարվել իրավիճակի համալիր վերլուծություն⁵⁸⁶: Բացի այդ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված նման երեխաների հետ չեն իրականացվում ամենօրյա մասնագիտական աշխատանք, ինչպես նաև հսկողություն նրանց կյանքի, կենցաղային պայմանների նկատմամբ, իսկ կանխարգելիչ ծառայություններ նույնպես չկան ժամանակին հայտնաբերելու համար, թե որ ընտանիքն է խոցելի երեխաների մուրացիկությամբ զբաղվելու նկատմամբ: Չնայած թափառաշրջիկ և մուրացիկ երեխաների հայտնաբերմանն ուղղված միջոցառումների ձեռնարկմանը՝ այդ երեխաները հաճախ նորից վերադառնում են փողոց, քանի որ պետության կողմից չեն ապահովվում նրանց հիմնահարցերի երկարաժամկետ լուծումներ, այդ թվում՝ երկարաժամկետ սոցիալական աջակցության միջոցով:

ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել երեխայի առողջության պահպանման իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ⁵⁸⁷: Մինևնույն ժամանակ, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետական մարմիններն ապահովում են առողջապահական ծառայություններից երեխայի

⁵⁸⁵ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

⁵⁸⁶ 2013 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Երեխայի աշխատանքի վերաբերյալ հետազոտություն անցկացնելու նպատակով, դոնոր կազմակերպություններին ներկայացրել է ծրագրային առաջարկ, համաձայն որի՝ համապատասխան հայտ է ներկայացրել Աշխատանքի միջազգային կազմակերպությանը: Հայտը բավարարվել է, և 2014 թվականին ԱՄԿ կողմից իրենց իսկ մեթոդաբանությամբ սկսվել է հետազոտություն իրականացնելու նախնական փուլը:

⁵⁸⁷ ՄԱԿ-ի երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, հոդված 24

անվճար օգտվելու հնարավորությունը, իրականացնում են երեխայի առողջության պահպանմանն ուղղված պետական նպատակային ծրագրեր⁵⁸⁸: Այնուամենայնիվ, 2015 թվականին ևս արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ պետական մարմինների ոչ արդյունավետ գործունեության և թերի վերահսկողության արդյունքում խախտվել է երեխայի առողջության պահպանման իրավունքը:

Այսպես, չնայած վերջին տարիների ընթացքում բավականին բարձրացել է քաղաքացիների իրազեկվածությունն անվճար հիվանդանոցային բուժօգնության մասին, այնուամենայնիվ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հայտնած տեղեկությունները և մամուլում տեղ գտած մի շարք հրապարակումները վկայում են այն մասին, որ մի շարք դեպքերում մինչև յոթ տարեկան երեխաների ծնողները տեղեկացված չեն եղել իրենց երեխաներին հասանելիք դեղերն անվճար ստանալու իրավունքի վերաբերյալ: Նշենք, որ 2015թ. ընդունվել է համապատասխան հրաման, որով սահմանվում է, որ անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունքի մասին իրազեկումը ապահովվում է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից՝ բնակչության համար տեսանելի վայրերում թերթիկների և պաստառների տեղադրման միջոցով: Բայցևայնպես, 0-7 տարեկան երեխաների մի շարք ծնողներ, պայմանավորված բժշկի կամ բուժհաստատության կողմից նման իրավունքի մասին տեղեկատվության չտրամադրելու փաստով, դեղատոմսով նշանակված դեղորայքը ձեռք են բերել սեփական միջոցներով:

Ավելին, թերություններ են հայտնաբերվել նաև հանրակրթական հաստատություններում երեխաների բուժսպասարկման ոլորտում: Այսպես, 2014-2015 թվականների ուսումնական տարվան ընդառաջ Պաշտպանի աշխատակազմի կողմից ուսումնասիրվել են մի շարք հանրակրթական, այդ թվում՝ հատուկ դպրոցներում երեխաների համար պատշաճ բուժօգնություն կազմակերպելու և դպրոցները համապատասխան դեղորայքով և պարագաներով ապահովելու ուղղությամբ կատարված միջոցառումները: Արդյունքում՝ բացահայտվել են մի շարք թերություններ, այդ թվում՝ բուժկետերում օրենսդրությամբ նախատեսված որոշ անհրաժեշտ դեղերի ու պարագաների, լվացարանակոնքի բացակայություն, ոչ ստերիլ պայմաններում բժշկական գործիքների պահպանում, բուժքույրների բացակայություն երեխաների դասերի ժամերին և այլն⁵⁸⁹: Մինևույն ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչների՝ հատուկ դպրոցներ կատարած այցերի արդյունքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ հատուկ դպրոցներ հաճախող երեխաները չեն ստացել նախատեսված մի շարք անվճար բժշկական

⁵⁸⁸ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 7

⁵⁸⁹ Բացահայտված խնդիրները չեն համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարի՝ 2002 թվականի փետրվարի 11-ի թիվ 82 հրամանով հաստատված դպրոցի բժշկական առանձնասենյակի սարքավորումների և գործիքների ցանկի, ինչպես նաև Նախարարի՝ 2013 թվականի ապրիլի 9-ի թիվ 874-Ս հրամանով հաստատված դպրոցի բուժկետում անհրաժեշտ դեղերի ցանկի և բուժկետի սարքավորումներով ու գործիքներով հագեցվածության ծավալի պահանջներին:

ծառայություններ, այդ թվում՝ անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն⁵⁹⁰: Երեխաների բուժապասարկման մի շարք խնդիրներ արձանագրվել են նաև ԲԿԱՄ-ի կողմից երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ և հատուկ դպրոցներ իրականացված այցերի ընթացքում: Մասնավորապես, հանդիպել են դեպքեր, երբ երեխաներին դեղորայքը տրամադրվել է՝ առանց հիմնավորման և բժշկի նշանակումների, առկա է եղել ժամկետանց դեղորայք, հաստատություններում չեն պահպանվել սանիտարական նորմերը և կանոնները, որոշ դեպքերում հատուկ հանրակրթական դպրոցներում սովորել են հատուկ կարիքներ չունեցող կամ ներառական կրթության ենթակա թեթև խնդիրներ ունեցող երեխաներ⁵⁹¹:

Բազմաթիվ դպրոցների հաստիքացուցակներում նախատեսված չեն բուժքույրերի հաստիքներ: Սա հիմնավորվում է նրանով, որ դպրոցական բուժքույրն, օրենքով սահմանված կարգով, իրականացնում է աշակերտների բուժապասարկումը տեղում՝ տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատության հսկողության և պատասխանատվության ներքո և աշխատում է դպրոցում ընդամենը կես դրույքաչափով և/կամ շաբաթական 3 օր: Արդյունքում հնարավոր չի լինում ապահովել աշակերտների լիարժեք բուժապասարկումը, հատկապես բուժքրոջ հրատապ անհրաժեշտության դեպքում: Խնդիրն առավել արդիական է դառնում ներառական դպրոցների պարագայում, որտեղ, հաշվի առնելով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առկայությունը և վերջիններիս առողջական խնդիրները, մեծանում է բուժքրոջ կողմից անհապաղ բուժապասարկման իրականացման և կանոնավոր բժշկական հսկողության անհրաժեշտությունը:

2015թ.-ին արձանագրված դեպքերից մեկով «Լուսնա-պարկ» հանգստի գոտում շահագործվող «Ամերիկյան ոլորաններ» արտադրական վտանգավոր օբյեկտի խափանման հետևանքով երեխան ստացել է վնասվածքներ: Պարզվել է, որ վերոնշյալ արտադրական օբյեկտը գտնվում է անսարք վիճակում և վտանգ է ներկայացնում երեխաների կյանքի և առողջության համար: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իրավասու պետական մարմնին առաջարկել է ձեռնարկել արդյունավետ և բավարար համապատասխան միջոցներ օրենսդրության պահանջների կատարման ուղղությամբ, մասնավորապես տեղի ունեցած արտադրական պատահարի կապակցությամբ փորձաքննություն իրականացնելու ուղղությամբ և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված տեխնիկական անվտանգության փորձաքննություն չանցկացնելու համար օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների

⁵⁹⁰ Մանրամասն տես՝ «ՀՀ առողջապահության նախարարություն» բաժնում

⁵⁹¹ Մանրամասն տես՝ «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. համակարգային վերլուծություն. 2014թ. արտահերթ զեկույց»

նախարարությունից հայտնել են, որ նշված միջադեպի կապակցությամբ ՀՀ ՏԿԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ձեռնարկվել է համապատասխան միջոցներ նշված արտադրական վտանգավոր օբյեկտի՝ օրենքի պահանջներին համապատասխան տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացնելու ուղղությամբ: Ավելին, ՀՀ ՏԿԱԻՆ «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի հանձնարարականի համաձայն նշանակվել է ծառայողական քննություն վերոնշյալ արտադրական վտանգավոր օբյեկտը 22.05.2015թ-ին տեխնիկական անվտանգության փորձաքննություն իրականացրած և դրական փորձագիտական եզրակացություն տված փորձագետի նկատմամբ:

Չնայած ձեռնարկված միջոցների, այնուամենայնիվ հաշվի առնելով երեխաների իրավունքների պաշտպանության կարևորությունը, անհրաժեշտ է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները նման դեպքերը կանխելու ուղղությամբ:

Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի սոցիալական ապահովության, ներառյալ՝ սոցիալական ապահովագրության նպաստներից օգտվելու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել այդ իրավունքի լիակատար իրականացման ուղղությամբ: Միաժամանակ, Կոնվենցիայի 27-րդ հոդվածը պարտավորություն է նախատեսում պետության համար՝ ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ՝ երեխայի ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի ապահովման համար: Առհասարակ, երեխայի սոցիալական ապահովության իրավունքը կրթության, առողջության պահպանման, ընտանեկան միջավայրում ապրելու, լիարժեք և արժանավայել կյանքով ապրելու և մի շարք այլ հիմնարար իրավունքների իրացման կարևոր նախապայման է: Այնուամենայնիվ, Հայաստանում երեխաների աղքատության մակարդակն էապես չի փոխվել 2015 թվականին: Հայաստանում մինչև 18 տարեկան երեխաների մոտ 34.0%-ն ապրում է աղքատության, 3.3%-ը՝ ծայրահեղ աղքատության մեջ: Աղքատ երեխաները, որպես կանոն, բնակվում են կենցաղային վատ պայմաններում, կարևոր կացարանային հարմարություններից զուրկ, անբավարար ջեռուցվող տներում⁵⁹²: Երեխաների աղքատության նման պատճառներից է նաև սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական տրանսֆերտների համակարգում առկա խնդիրները⁵⁹³:

Չնայած 2015թ. մշակվել են «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին խնամատարության հանձնելու ընթացակարգի բարեփոխման հայեցակարգը հաստատելու մասին» և «Երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատությունների բեռնաթափման ծրագիրը և միջոցառումների

⁵⁹² ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015», <http://www.armstat.am/am/?nid=80&id=1718>

⁵⁹³ Մանրամասն տես՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» բաժնում

ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծեր, այնուամենայնիվ, չեն ձեռնարկվել անհրաժեշտ պրակտիկ քայլեր երեխաների՝ ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքի լիարժեք իրացման ուղղությամբ: Մասնավորապես, անբավարար են եղել նաև ձեռնարկած միջոցառումներն, ուղղված մանկատների բեռնաթափմանը, նշված հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելմանը, հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելուն, խնամակալության, որդեգրման հանձնելուն, խնամատար ընտանիքներ ստեղծելուն և որդեգրումը խթանելուն: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2009 թվականին ընդունած, երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղեցույցը⁵⁹⁴, ընտանիքը սահմանելով որպես հասարակության հիմք, բնական միջավայր երեխաների աճի, բարեկեցության և ապահովության համար, առաջարկում է բոլոր պետություններին ջանքեր գործադրել՝ երեխաներին իրենց ծնողների կամ մոտ բարեկամների խնամքի տակ թողնելու կամ վերադարձնելու հնարավորություն ընձեռելու համար: Ուղեցույցում նշվում է, որ երեխային ընտանեկան խնամքից հեռացումը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց և այն դեպքերում, երբ դա հնարավոր է, պետք է լինի ժամանակավոր և հնարավորինս կարճ տևողությամբ: Ֆինանսական և նյութական աղքատությունը երբեք չպետք է հանդիսանան երեխային ծնողական խնամքից զրկելու և հաստատություն տեղավորելու միակ պատճառաբանությունը, այլ պետք է դիտարկվեն, որ երեխայի ընտանիքին համապատասխան աջակցություն ցուցաբերելու ազդանշան: Ուղեցույցում նշվում է, որ երեխային ընտանեկան խնամքից հեռացումը պետք է դիտվի որպես ծայրահեղ միջոց և այն դեպքերում, երբ դա հնարավոր է, պետք է լինի ժամանակավոր և հնարավորինս կարճ տևողությամբ: Բացի այդ, ընտանեկան խնամքից հեռացնելու որոշումները պետք է պարբերաբար վերանայվեն, և այն դեպքերում, երբ ընտանեկան խնամքից հեռացման իրական պատճառները լուծվել կամ վերացվել են, երեխայի վերադարձը ծնողական խնամքի պետք է իրականացվի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը: Այնինչ, Հայաստանում երեխաների պաշտպանության համակարգը կառուցվել է այն տրամաբանությամբ, որ սոցիալապես անապահով ընտանիքները կարող են իրենց երեխաներին հանձնել ցերեկային խնամքի և պաշտպանության հաստատություն իրենց սոցիալական վիճակի հիմքով:

Բավարար քայլեր չեն ձեռնարկվել խնամատար ընտանիքի ինստիտուտի զարգացման ուղղությամբ: Նախարարության տվյալներով 2012, 2013, 2014 և 2015 թվականներին բյուջետային հատկացումներ են կատարվել 23 ընտանիքների համար, սակայն փաստացի ֆինանսավորվել են 2012 թվականին՝ 21, 2013 թվականին՝ 18 և 2014 թվականին՝ 16 ընտանիքներ: 2015 թվականի ընթացքում խնամատարության է հանձնվել չորս երեխա: 18 տարեկանը լրանալու կապակցությամբ «Խնամատար ընտանիքի ծառայություններ» ծրագրից դուրս է գրվել չորս երեխա: Ներկայում

⁵⁹⁴ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2009 թ. Երեխաների այլընտրանքային խնամքի մասին ուղեցույց

խնամատար ընտանիքներում խնամվում է ընդամենը 20 երեխա, այն դեպքում, երբ 2015 թվականի դեկտեմբերի դրությամբ երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամվում է 660 երեխա, այդ թվում՝ համակարգի երեք մասնագիտացված մանկատներում խնամվող 450, իսկ ընդհանուր տիպի մանկատներում՝ շուրջ 50 երեխա, որոնք ունեն մտավոր և ֆիզիկական հաշմանդամություն: Իսկ կենտրոնացված հաշվառման տվյալներով՝ 2015 թվականի ընթացքում որդեգրվել է 88 երեխա, այդ թվում 36 երեխա ՀՀ քաղաքացիների, իսկ 52 երեխա՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից:

Թեև ընդհանուր տիպի մանկատներում շարունակում է նվազել խնամվող երեխաների թիվը, այդուհանդերձ, սոցիալ-տնտեսական ծանր պայմաններով պայմանավորված, ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում: Նշվածը վկայում է, որ պետության կողմից 2015 թվականի ընթացքում չեն իրականացվել անհրաժեշտ համալիր միջոցառումներ ՀՀ քաղաքացիների կողմից հաշմանդամություն ունեցող երեխաների որդեգրման պրակտիկայի ներդրման և խթանման, ինչպես նաև նման երեխաների խնամքը ընտանեկան կամ ընտանեկանին մոտ միջավայրում կազմակերպելու ուղղությամբ⁵⁹⁵: Իսկ հաշմանդամություն ունեցող երեխայի որդեգրումը պրակտիկայում դառնում է դժվարին գործընթաց առկա անհարկի քաջքուկների և խոչընդոտների, ինչպես նաև հաշմանդամության վերաբերյալ մարդկանց կարծրատիպերի և թյուր պատկերացման հետևանքով: Նշենք, որ 2015թ.-ին ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված երեխաներից 4 երեխա է ունեցել առողջության հետ կապված տարբեր խնդիրներ, իսկ օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվածներից՝ 44-ն ունեցել է առողջության հետ կապված տարբեր խնդիրներ:

Երեխաների համար արդարադատության մատչելիության բարելավման ուղղությամբ մշակվել են միջազգային ստանդարտներին համապատասխան մի շարք իրավական ակտերի նախագծեր, քայլեր են ձեռնարկվել պրոբացիայի ինստիտուտի ներդրման ուղղությամբ: Այնուհանդերձ, Հայաստանում երեխաների համար արդարադատության մատչելիության (access to justice for children/child-friendly justice) իրավունքի լիարժեք ապահովումը շարունակում մնալ երեխաների իրավունքների պաշտպանության հիմնադիրներից է: Հարկ է նշել, որ երեխաներն առնչվում են արդարադատության համակարգի հետ տարբեր եղանակներով: Դա կարող է դրսևորվել ընտանեկան հարցերում, ինչպիսին են, օրինակ՝ ամուսնալուծությունը կամ որդեգրումը, վարչական արդարադատության ոլորտում, օրինակ՝ քաղաքացիության կամ ներգաղթի հետ կապված հարցերում, կամ քրեական

⁵⁹⁵ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման Երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարության շրջանակներում նախատեսվում է «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին ծառայություններ տրամադրող մասնագետների, ինչպես նաև որդեգրող, որդեգրել ցանկացող ընտանիքների (անձանց) և խնամատար ընտանիքների անդամների (ծնողների ու երեխաների), խնամակալության և հոգաբարձության մարմինների, երեխաների խնամքի և պաշտպանության հաստատությունների մասնագետների վերապատրաստում»:

արդարադատության բնագավառում՝ տուժողի, վկայի կամ մեղադրյալի կարգավիճակում: Անչափահասներն առավել խոցելի են նախաքննության, քրեական հետապնդման փուլերում, ինչպես նաև դատաքննության ընթացքում, երբ վերջիններս կարող են դառնալ ֆիզիկական և հոգեբանական բռնության զոհեր, քանի որ անչափահասները հաճախ հնարավորություն չեն ունենում ինքնուրույն լիարժեք իրացնել իրենց իրավունքները, իսկ պետության պարտավորությունն է մշակել այնպիսի պայմաններ և մեխանիզմներ, որոնք կապահովեն անչափահասի անվտանգությունը և հնարավորություն կտան նրան օգտվելու իրավական պաշտպանության իրավունքից:

Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ 1985 թվականին ընդունված ՄԱԿ-ի՝ Անչափահասների արդարադատության իրականացման նվազագույն ստանդարտ կանոնները (Պեկինյան կանոններ) խրախուսում են իրավական ընթացակարգերի և պաշտոնական քննության փոխարեն համայնքային ծրագրերի, ցանկացած պետական մարմնում, առավելագույնս երեխայի շահերից ելնելով, քննության իրականացումը մինչև անչափահասին ազատությունից զրկելը գործի մանրակրկիտ քննությունը, անչափահասների գործերով զբաղվող անձնակազմի համար պարտադիր մասնագիտացված վերապատրաստումը, ազատությունից զրկելու դեպքում վաղաժամ ազատվելու հնարավորության դիտարկումը: Նշենք, որ դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներում կոչ էր արել Հայաստանին հստակ ժամկետներ սահմանել՝ ստեղծելու անչափահասների արդարադատության համակարգ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու դրա օրենսդրության համապատասխանությունը պետության ստանձնած մի շարք միջազգային պարտավորություններին⁵⁹⁶:

Քաղաքացիների հայտնած տեղեկությունների, մամուլում տեղ գտած նյութերի վերլուծությունից պարզ է դառնում, որ դեռևս բազմաթիվ են երեխաների կրթության իրավունքի խախտման և, հատկապես, երեխաների կրթությունից դուրս մնալու դեպքերը: Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներն են եղել ծնողների ոչ բարեխիղճ վերաբերմունքը երեխայի կրթության նկատմամբ, վատ սոցիալական պայմանները, երեխայի հաշմանդամությունը, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ուշ արձագանքելը, երեխաներին սեզոնային գյուղատնտեսական աշխատանքների մեջ ներգրավվելը, իսկ առանձին էթնիկ խմբերի դեպքում՝ անգամ երեխաների վաղ ամուսնությունը:

Հանրակրթական դպրոցներում դեռևս չկան արդյունավետ մեխանիզմներ նման դեպքերը ժամանակին հայտնաբերելու և համապատասխան պատասխանատու մարմիններին ուղղորդելու ուղղությամբ: Բացի այդ, դպրոցների ուսուցիչները հաճախ անփութություն են ցուցաբերում դպրոցական մատյաններում դպրոց չհաճախող երեխաների բացակայությունների գրանցման, դրանց

⁵⁹⁶ <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf>

պատճառները պարզելու, համայնքի ղեկավարին, խնամակալության և հոգաբարձության մարմնին դեպքի վերաբերյալ տեղեկացնելու հարցում: Խնդրահարույց է նաև, որ չկան այս հարցը կարգավորող մեխանիզմեր, որոնք թույլ կտային նշված խնդիրը արդյունավետ կերպով վերհանել համայնքային մակարդակում և ուղղորդել միջգերատեսչական լուծումներ գտնելու նպատակով:

Դպրոցից դուրս մնացած երեխաների կամ պարտադիր կրթություն չստացողների թվի վերաբերյալ հավաստի և իրական տվյալներ ձեռքբերման առումով դժվարություն է առաջացնում նաև այն, որ հաճախ կոնկրետ դպրոցում հաշվառված երեխաների թիվը կարող է հաճախող երեխաների թվից ավելի լինել: Պատճառն այն է, որ հանրակրթական դպրոցները ֆինանսավորվում են աշակերտների թվով, ուստի ուսուցիչները հաճախ աշակերտների բացակայություններն օբյեկտիվորեն չեն գրանցում: Այս առումով խնդիրն ավելի արդիական է դառնում հատուկ և ներառական դպրոցներում, քանի որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար դպրոցը ստանում է 3-4 անգամ ավել ֆինանսավորում, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող երեխաների համար⁵⁹⁷:

⁵⁹⁷Երեխայի իրավունքների իրավիճակի վերլուծություն. Հայաստան
<https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf>

ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կողմից ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) վավերացմամբ⁵⁹⁸ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է բացառել կանանց նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորում, ազգային օրենսդրությամբ ամրագրել տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքը և երաշխավորել, որ պետական մարմիններն ու հաստատությունները գործեն այդ պարտավորություններին համապատասխան⁵⁹⁹:

Թեպետ ՀՀ օրենսդրությամբ⁶⁰⁰ հստակ ամրագրված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը, այնուամենայնիվ 2015թ.-ի ընթացքում Հայաստանում շարունակվել են կանանց իրավունքների ոտնահարման և վերջիններիս նկատմամբ խտրականության դրսևորման բազմաթիվ դեպքեր: Նման իրավիճակը պայմանավորված է ինչպես գործող օրենսդրությամբ առկա իրավական մեխանիզմների բացակայությամբ, այնպես էլ հասարակությունում կանանց դերի նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպային մոտեցումներով⁶⁰¹:

Ինչպես 2014, այնպես էլ 2015թ.-ին կանանց նկատմամբ խտրականության դրսևորման առավել տարածված ձևերից շարունակում է մնալ կանանց նկատմամբ բռնությունը, որը միջազգային նորմերին⁶⁰² համապատասխան, զնահատվում է որպես մարդու հիմնական իրավունքների և ազատությունների խախտում:

Կանանց նկատմամբ բռնության առավել տարածված տեսակներից է ընտանեկան բռնությունը, որը դրսևորվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական, սեռական և տնտեսական ձևերով: Հարցի կապակցությամբ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2015թ.-ի ընթացքում գրանցվել է ընտանեկան բռնության 784 դեպք, որից 471-ը դրսևորվել է ամուսինների կողմից կանանց նկատմամբ⁶⁰³: Թեև 2015թ.-ին 2014թ.-ի համեմատությամբ⁶⁰⁴ ՀՀ ոստիկանության կողմից արձանագրված դեպքերը նվազել են,

⁵⁹⁸ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Կոնվենցիան 1993թ.-ին

⁵⁹⁹ Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, հոդված 2, http://www.un.org/res/UN%20Treaties/III_8.pdf

⁶⁰⁰ ՀՀ Սահմանադրություն, հոդված 30, «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» ՀՀ օրենք և այլն

⁶⁰¹ Համաշխարհային տնտեսական ֆորումի ներկայացրած 2015թ.-ի գենդերային հավասարության ամենամյա վարկանշային աղյուսակի համաձայն՝ Հայաստանը 145 երկրների թվում զբաղեցնում է 105-րդ տեղը: Կանանց տնտեսական մասնակցության ցուցանիշով Հայաստանը 79-րդն է, կրթական մակարդակով՝ 35-րդը, առողջական պայմաններով՝ 144-րդը, իսկ քաղաքական ներգրավվածության առումով՝ 125-րդը: <http://reports.weforum.org/global-gender-gap-report-2015/economies/#economy=ARM>

⁶⁰² Տե՛ս, օրինակ, Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3, <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1772191>

⁶⁰³ Մանրամասները տե՛ս «ՀՀ ԿԱ ոստիկանություն» գլխում

⁶⁰⁴ 2014թ.-ին գրանցվել էր ընտանեկան բռնության 678 դեպք, որից 551-ը՝ կանանց նկատմամբ:

այնուամենայնիվ, հասարակական կազմակերպությունների պնդմամբ, նկատելի է ցուցանիշների ավելացում: Այսպես, Ընդդեմ կանաց նկատմամբ բռնության կոալիցիայի հրապարակած տեղեկատվության համաձայն⁶⁰⁵, Հայաստանում տարեկան գրանցվում է ընտանեկան բռնության 2000 դեպք: Միննույն ժամանակ, 2013-2015թթ.-ների ընթացքում երեք հասարակական կազմակերպությունների թեժ գծով ստացվել է ընտանեկան բռնության մասին 5171 առաջնային զանգ և նույն ժամանակահատվածում արձանագրվել է ընտանեկան բռնությունից մահացության 30 դեպք⁶⁰⁶: Այս առումով, հարկ է նշել, որ ընտանեկան բռնության դեմ արդյունավետ պայքարն առավել դժվարացնում է հարցի վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն բացակայությունը:

Բացի այդ, ՀԿ-ները նշել են, որ միջազգային նորմերով ընտանեկան բռնություն համարվող գործողությունները ներպետական օրենսդրությամբ չեն որակվում որպես այդպիսին և, ըստ այդմ, չեն հաշվառվում համապատասխան գերատեսչությունների կողմից⁶⁰⁷:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2015թ.-ին ևս ստացել է մի շարք ահազանգեր ընտանեկան բռնության մասին, որոնց ընթացքում պարզ է դարձել, որ կանայք, հաշվի առնելով մի շարք գործոններ (ամոթ, իրավապահ մարմինների նկատմամբ անվստահություն, պետական աջակցության բացակայության), բազմաթիվ դեպքերում շարունակում են խուսափել իրենց նկատմամբ կիրառվող բռնության մասին բարձրաձայնումից: Նշված խնդրի բարձրացրել են նաև մի շարք հասարակական կազմակերպություններ⁶⁰⁸:

Ինչ վերաբերում է այն կանանց, ովքեր, այնուամենայնիվ, բարձրաձայնում են իրենց նկատմամբ կիրառվող բռնությունների մասին, շատ հաճախ նրանք բախվում են ոստիկանության և դատական համակարգում մի շարք խնդիրների (բռնության զոհի հետ աշխատելու համապատասխան հմտություններին չտիրապետող անձինք, գործի առանձնահատկություններին անձանոթ, կարծրատիպային մտածելակերպ ունեցող առանձին աշխատակիցներ, ովքեր իրենց ոչ կոմպետենտ հարցերով կրկին վնաս են պատճառում զոհին և այլն):

Իրավապահ մարմինների, հետևաբար նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործողությունները խիստ սահմանափակ են ընտանեկան բռնության

⁶⁰⁵<http://coalitionagainstviolence.org/hy/%D5%A3%D5%AC%D5%AD%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80/#>

⁶⁰⁶<http://bit.ly/1Mr1xVZ>

⁶⁰⁷«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի տվյալներով՝ ընտանեկան բռնության տեսակներից առավել հաճախ հանդիպում են հոգեբանական բռնությունը՝ նվաստացում, ստորացում, արհամարհում, և ֆիզիկական բռնությունը՝ ծեծ, ապտակ և այլն: Տնտեսական բռնությունը և սեռական բռնությունը ևս առկա են, սակայն հատկապես սեռական բռնության մասին կանայք նախընտրում են լռել, չասել կամ չընդգծել:

⁶⁰⁸Ըստ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ ընտանեկան բռնության դեպքերի մեծամասնության դեպքում իրավապահ մարմինները ցուցաբերում են բռնարարին արդարացնող մոտեցում, որպես խնդրի լուծում տեսնում են զույգի հաշտեցումը, կնոջ՝ իրավիճակին հարմարվելը: Նման մոտեցում հատկապես ցուցաբերվում է այն դեպքերում, երբ բռնարարի արարքը քրեորեն հետապնդելի չի համարվում:

դեպքերի հարցում՝ հաշվի առնելով օրենսդրական կարգավորումների բացակայությունը: Առ այսօր Հայաստանը չունի ընտանեկան բռնության վերաբերյալ առանձին օրենք⁶⁰⁹: Ավելին, գործող օրենսդրությամբ սահմանված չէ «ընտանեկան բռնություն» հասկացությունը, ինչի հետևանքով դրանից բխող հարաբերությունները չեն կարգավորվում և արդյունքում ստացվում է այնպիսի իրավիճակ, երբ փաստացի անձն ենթարկվում է բռնության, սակայն բռնության կանխարգելումը դառնում է անհնար, որովհետև ընտանեկան բռնություն համարվող ոչ բոլոր արարքներն են ներառում ներկայիս օրենսդրությամբ սահմանված հակաիրավական տարրերը (օրինակ՝ հոգեբանական և տնտեսական բռնությունները, ընտանեկան բռնության գոհին մեկ անգամ հարվածելը, որը չի եղել ծեծ կամ դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառել, որոնք ընտանեկան բռնության տեսակներ են, սակայն օրենսդրորեն սահմանված չեն):

Ընտանեկան բռնության օրենսդրության անհրաժեշտության վերաբերյալ մի շարք միջազգային կառույցներ արտահայտել են իրենց դիրքորոշումը՝ Հայաստանին առաջարկելով սեղմ ժամկետներում ընդունել ոլորտը կարգավորող համապատասխան իրավական ակտ: Ավելին, 2015թ.-ին Համընդհանուր պարբերական դիտարկման ընթացքում Հայաստանի վերաբերյալ մի շարք երկրների դիտարկումներ առնչվում էին հենց ընտանեկան բռնության մասին օրենսդրության բացակայությանը⁶¹⁰: Բացի այդ, ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական իրավունքների կոմիտեն դեռևս 2014թ.-ին առաջարկել էր, որ Հայաստանը, հանձն առնելով կանխարգելման, պաշտպանության և քրեական հետապնդման միջոցներ, համարժեքորեն արձագանքի ընտանեկան բռնության խնդրի լուծմանը⁶¹¹:

Կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է նաև, երեխաների իգական սեռով պայմանավորված, հղիության արհեստական ընդհատումը: Նշված խնդիրը պայմանավորված է ինչպես հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումներով (օրինակ՝ արու զավակ ունենալու նախապատվությունը), այնպես էլ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումներով:

Հայաստանում կանանց և տղամարդկանց սեռերի հարաբերակցության

⁶⁰⁹Ընտանեկան բռնության մասին օրենսդրության մշակումը բխում է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայով, Պեկինի 4-րդ համաշխարհային համաժողովի (1995թ.) հանձնարարականներով, ԵՄ Կանանց և տղամարդկանց իրավահավասարության հանձնաժողովի փաստաթղթերով, ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի պահանջներով և միջազգային այլ փաստաթղթերով ստանձնած պարտավորություններից և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի առաջարկներից:

⁶¹⁰http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

⁶¹¹Օրինագիծը 2014թ.-ին «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի ջանքերով վերամշակվեց, հաշվի առնվեցին ՀՀ ԿՍ ոստիկանության, ՀՀ արդարադատության նախարարության նկատառումները, և այն կրկին ներկայացվեց տարբեր կառույցների: Հանդիպումներ կազմակերպվեցին ՀՀ արդարադատության նախարարությունում: 2014թ.-ին օրինագիծը ուղարկվեց նաև ՀՀ ԱԺ բոլոր պատգամավորներին, նաև ՀՀ ԱԺ Պետական-իրավական մշտական հարցերի հանձնաժողով՝ 2000 ՀՀ քաղաքացիների ստորագրությունները պարունակող բացիկներով, որոնցով քաղաքացիները պահանջում են ընդունել օրինագիծը:

նորմայից շեղումը սկսել է նկատվել դեռևս 1991թ.-ից, իսկ 2000թ.-ին այն հասել է մինչև 120 տղա 100 աղջիկ հարաբերակցության այն դեպքում, երբ նման հարաբերակցության համար սահմանված նորման կազմում է 102-103 տղա 100 աղջիկ հարաբերակցությունը:⁶¹²

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ մի շարք միջազգային կազմակերպություններ կոչ են արել պետություններին հրատապ միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ⁶¹³: Դեռևս 2011թ.-ի ԵՖՄՎ-ի թիվ 1829 հանձնարարականով⁶¹⁴ Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները:

Հավելենք, որ թեև 2015թ.-ին ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակվել է օրինագիծ, որն ընդունվել է ՀՀ կառավարության կողմից և այժմ գտնվում է Ազգային ժողովում, այնուամենայնիվ այն չի կարող համապարփակ լուծում տալ քննարկվող հարցին⁶¹⁵: Մասնավորապես, օրենքի նախագծով նախատեսվում է սահմանել, որ բժշկական կամ սոցիալական ցուցումների ցանկում չնախատեսված որևէ այլ, ներառյալ սեռով պայմանավորված, մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատումն արգելվում է: Այստեղ, փաստորեն, ավելացվել է «ներառյալ սեռով պայմանավորված» արտահայտությունը: Հասկանալի չէ, թե օրենքի դրույթի նշյալ ձևակերպումը գործնականում ինչպես է ապահովելու խնդրի լուծումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենսդրական ներկայիս կարգավորումների պարագայում հղիության արհեստական ընդհատումը 12-ից մինչև 22 շաբաթական հղիության պարագայում հնարավոր է իրականացնել միայն բժշկասոցիալական հատուկ ցուցումների դեպքում, կնոջ համաձայնությամբ, ինչը, սակայն գործնականում չի ապահովվում: 12-ից մինչև 22 շաբաթական հղիության

⁶¹²http://unfpa.am/sites/default/files/Sex-selective_abortions_report_Arm.pdf

⁶¹³1995թ.-ին Պեկինում անցկացված Կանանց մասին 4-րդ համաշխարհային գիտաժողովի ժամանակ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը նկարագրվել է որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Երեք տարի անց ՄԱԿ-ի Գլխավոր գազաթնաժողովում «Աղջիկ երեխաների մասին» բանաձևը հավանության արժանացավ, և Պետություններին կոչ արվեց «ընդունել և կիրառել օրենսդրություն»: Ինչպես Կանանց նկատմամբ խտրականության վերացման հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն (CEDAW), այնպես էլ ԵՄ Նախարարների կոմիտեն կոչ են արել կառավարություններին ընդունել սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն արգելելու վերաբերյալ ազգային օրենսդրություն: Իսկ հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների մասին 2011թ.-ի իր բանաձևում ԵՖՄՎ-ն ընդգծել է, որ «սաղմի սեռի պատճառով հղիությունը չջարոնակելու վերաբերյալ կանանց նկատմամբ գործադրվող հասարակության և ընտանիքի անդամների ճնշումները պետք է դիտվեն որպես հոգեբանական բռնություն, և որ հղիության բռնի ընդհատման դեպքերը պետք է քրեականացվեն:

⁶¹⁴http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28

⁶¹⁵Մանրամասները տե՛ս «ՀՀ առողջապահության նախարարություն» գլխում

ընդհատումն արդեն իսկ անօրինական է, եթե չեն պահպանվում բժշկասոցիալական հատուկ ցուցումները՝ անկախ պտղի իգական կամ արական լինելու հանգամանքից, հետևաբար, օրենքի նման ձևակերպումը գործնականում չի հանգեցնի խնդրի լուծմանը:

Հարցի լուծումը պետք է պայմանավորել հասարակությունում կանանց դերի բարձրացմամբ՝ ապահովելով ինչպես հասարակական, այնպես էլ քաղաքական կյանքում կանանց լիարժեք մասնակցությունը որոշումների կայացման և տնտեսական կառավարման ոլորտներում:

Կանանց նկատմամբ բռնության ձև է նաև թրաֆիքինգը⁶¹⁶: Հայաստանում թրաֆիքինգի ամենատարածված ձևը սեռական շահագործումն է, չնայած հանդիպում են նաև աշխատանքային թրաֆիքինգի դեպքեր⁶¹⁷: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ թեև ԱՄՆ պետքարտուղարության զեկույցի⁶¹⁸ համաձայն՝ Հայաստանը դասակարգվել է թրաֆիքինգի դեմ կատարվող աշխատանքները լավագույնս իրականացնող երկրների շարքում, այնուամենայնիվ, ոլորտում դեռ բազում անելիքներ կան՝ կապված թրաֆիքինգի գոհերի հետ շփման օղակի աշխատակիցների ուսուցման և վերապատրաստման աշխատանքների, ինչպես նաև թրաֆիքինգի գոհերի հետ աշխատելու վերաբերյալ դատավորների ուսուցման կազմակերպման, գոհերի վերաինտեգրման իրականացման և վերջիններիս անվտանգության ապահովման և այլ հարցերի վերաբերյալ:

Առ այսօր կանայք Հայաստանում լիարժեքորեն ներգրավված չեն հասարակական և քաղաքական կյանքում՝ որպես որոշում կայացնողներ, չնայած նրա, որ ՄԱԿ-ի Կոնվենցիայի վավերացմամբ՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է միջոցներ ձեռնարկել հասարակական և քաղաքական կյանքում կանանց նկատմամբ խտրականության վերացման ուղղությամբ:

Թեպետ պետության կողմից ձեռնարկվել են որոշակի քայլեր հասարակական և քաղաքական ոլորտներում կանանց ակտիվ մասնակցության ապահովման ուղղությամբ, այնուամենայնիվ կանանց հասարակական և քաղաքական կյանքին լիարժեք մասնակցության, որոշումների կայացման, տնտեսական կառավարման, ընտրությունների և այլ գործընթացներում կանանց լիարժեք մասնակցության մատչելիության ապահովման ուղղությամբ դեռևս բազմաթիվ անելիքներ կան:

Մի շարք ուսումնասիրություններ վկայում են այն մասին, որ չնայած նրա, որ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց, բայցևայնպես զբաղեցնում են պաշտոններ ստորին օղակներում⁶¹⁹: Կանանց քաղաքական մասնակցությանը խոչընդոտող պատճառներից է այն, որ հասարակությունը

⁶¹⁶ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 132

⁶¹⁷«2014թ.-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույց

⁶¹⁸<http://www.state.gov/documents/organization/245365.pdf>

⁶¹⁹ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016թ.

կարծրատիպերի պատճառով չի ընկալում կնոջը՝ որպես քաղաքական առաջնորդի և խնդիրներին լուծում գտնողի, աղավաղված է կանանց և տղամարդկանց իրավահավասարության գաղափարը⁶²⁰:

Թեև ՀՀ Ընտրական օրենսգրքի համաձայն⁶²¹՝ համամասնական 90 տեղերի համար նախատեսված ընտրական ցուցակում երկրորդ տեղից սկսած յուրաքանչյուր հինգերորդ տեղում սեռերից մեկի համար (օրենսգրքում չի նշվում, բայց ենթադրվում է կանանց համար) ամրագրում է պարտադիր ներկայացվածության դրույթը, ինչպես նաև 80 տոկոսը չգերազանցելու պարտադիր պայմանը, այդուհանդերձ իրավիճակը փաստացի այլ է: Մասնավորապես, ՀՀ կառավարությունում 19 նախարարներից միայն 3-ի պաշտոնում են ներկայացված կանայք⁶²², 79 փոխնախարարներից միայն 4-ն են կին, իսկ ՀՀ կառավարությանն առընթեր 7 մարմիններից և ոչ մեկի ղեկավարը կին չէ⁶²³ և վերջիններիս տեղակալների շարքում էլ են կանայք բացակայում: Ավելին, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների թվում կանայք կազմում են 10.7 տոկոս, բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղծառայողների թվում՝ 14 տոկոս, իսկ դատական համակարգում՝ 22 տոկոս: Ինչ վերաբերում է տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա Հայաստանի 866 գյուղական համայնքներից միայն 17-ն են ղեկավարվում կանանց կողմից, իսկ քաղաքային 49 համայնքներում կին ղեկավարներ չկան⁶²⁴: ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ քաղաքային և գյուղական համայնքների ավագանիների կազմում տղամարդկանց թիվը մի քանի անգամ գերազանցում է կանանց, օրինակ՝ Լոռու մարզի քաղաքային համայնքի ավագանու կազմում ընդգրկված են 4 կին և 88 տղամարդ, Գեղարքունիքի մարզում՝ 45 կին և 501 տղամարդ Շիրակի մարզի գյուղական համայնքի ավագանու կազմում ընդգրկված է 68 կին, 559 տղամարդ, Սյունիքում՝ 8 կին, 71 տղամարդ, Արմավիրի մարզում կանայք առհասարակ չկան: ՀՀ 10 մարզերից և ոչ մեկում որպես մարզպետ կանայք նշանակված չեն⁶²⁵: Ինչ վերաբերում է մարզպետների տեղակալների զբաղեցրած պաշտոններին, ապա 24 տեղակալներից միայն 2-ի պաշտոններում են նշանակված կանայք⁶²⁶: Այսպիսի ցուցանիշներ ներկայացված են դեռ այն պարագայում, երբ կանայք կազմում են ՀՀ ընդհանուր բնակչության մոտ 51.9 տոկոսը⁶²⁷:

Կանանց աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցում

⁶²⁰«ՏԻՄ ընտրություններում կանանց քաղաքական մասնակցությունը. խնդիրներ և հեռանկարներ» http://ysu.am/files/Hasmik_Shapaghatyan_Final_Report_ARM.pdf

⁶²¹ՀՀ Ընտրական օրենսգրք, հոդված 108

⁶²²<http://gov.am/am/structure/>

⁶²³<http://gov.am/am/adjunct-bodies/>

⁶²⁴«2014թ.-ի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույց

⁶²⁵<http://gov.am/am/regions/>

⁶²⁶Տե՛ս նույն տեղում

⁶²⁷2015թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում բնակչությունն ըստ սեռի կազմում են տղամարդիկ՝ 1.439.148, կանայք՝ 1.571.450, տե՛ս, <http://armstat.am/>

գործազրկության խնդիրը շարունակել է արդի մնալ նաև 2015թ.-ի ընթացքում⁶²⁸:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2015թ.-ի դեկտեմբեր ամսվա դրությամբ Հայաստանում գործազուրկների թիվը կազմել է 77.004, որից 53.069-ը կանայք են, իսկ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) տվյալների համաձայն՝ 2015թ.-ի 3-րդ եռամսյակի դրությամբ Հայաստանում գործազուրկների թիվը կազմել է 219.700, որից 122.300-ը կազմում են կանայք⁶²⁹:

Թեև ՀՀ օրենսդրությամբ ամրագրվում է հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքը և արգելվելու է սեռի հատկանիշով տարաբաժանումը աշխատաշուկայում և զբաղվածության ոլորտում, այնուամենայնիվ փաստացի գոյություն ունի կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և սեկտորների) խտրականություն:

Այսպես, Հայաստանում կանանց ամսական միջին աշխատավարձը տնտեսության բոլոր հատվածներում զիջում է տղամարդկանց միջին աշխատավարձին և այդ ձեռքվածքը կազմում է 35.9 տոկոս⁶³⁰: Կանանց շրջանում աշխատանքի շուկայում հորիզոնական խտրական պատկերի առկայությունը զբաղվունակության տեսանկյունից կարող է պայմանավորված լինել նաև բարձրագույն մասնագիտական կրթության շրջանում մասնագիտությունների սահմանափակ ընտրությամբ: Այսպես, 2010-2014թթ.-ների ՀՀ ԱՎԾ վիճակագրության համաձայն՝ պետական և ոչ պետական բուհերում 28 մասնագիտական խմբերից միայն 7-ում է կանանց թիվը գերազանցել 50 տոկոսի շեմը⁶³¹: Այդ ցանկում են հիմնականում հումանիտար ու սոցիալական գիտությունները, մանկավարժությունն ու արվեստը, տնտեսագիտությունն ու սպասարկման ոլորտի մասնագիտությունները, իսկ տեխնիկական, բարձր տեխնոլոգիաների մասնագիտությունները շարունակում են մնալ «տղամարդկանց տիրույթ»-ում⁶³²:

Նման պրակտիկան բխում է, նախևառաջ, հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերից (օրինակ՝ փոքր քաղաքներում և գյուղական համայնքներում ընդունված է, որ տղամարդը պետք է աշխատի, կինը խնամի երեխաներին և այլն), ուստի անհրաժեշտ է հզորացնել կանանց հնարավորությունները՝ վեր հանելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը և զանգվածային լրատվական միջոցներով նպաստել կանանց

⁶²⁸Մանրամասները տե՛ս «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն» գլխում

⁶²⁹http://armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf

⁶³⁰ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, «Գենդերային ձեռքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ակտորոշիչ ուսումնասիրություն», 2016թ.

⁶³¹Գենդերային քաղաքականության 2011-2015թթ.-ների ռազմավարական ծրագրի և ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ.-ների ազգային ծրագրի իրականացման գնահատման զեկույց

⁶³²Ըստ Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի «Աշխատանքի շուկայում կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների և տնտեսական ռեսուրսների հավասար մատչելիության ապահովման հետ կապված իրավիճակի ուսումնասիրության», 2015թ.

դերի վերաբերյալ գոյություն ունեցող նմանատիպ կարծրատիպերի վերացմանը՝ հանրությանը ներկայացնելով կանանց քաղաքական, սոցիալական կերպարներ:

Ընթացիկ տարում կանանց առողջության պահպանման իրավունքի առումով մի շարք խնդիրներ են արձանագրվել: Թեև 2009թ.-ին ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման դեմ պայքարի կոմիտեն Հայաստանի վերաբերյալ իր հանձնարարականներում նշել էր, որ հատկապես գյուղաբնակ կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման, ինչպես նաև վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման ծառայությունների ընդլայնման ուղղությամբ անհրաժեշտ է համապատասխան միջոցներ ձեռնարկել, այնուամենայնիվ⁶³³, ոլորտի մի շարք խնդիրներ մինչ օրս լուծում չեն ստացել:

Ինչպես 2014, այնպես էլ 2015թ.-ին մարզերում և գյուղերում չի ապահովվել բժշկական ծառայությունների մատչելիությունը: Գյուղերում, մարզերում բնակվող կանայք, բժշկական հաստատությունների ոչ բավարար պայմանների պատճառով, հնարավորություն չեն ունենում լիարժեք կերպով հետազոտվել և ստանալ համապատասխան բուժօգնություն:

Ինչ վերաբերում է վերարտադրողական առողջության խնդիրներին, ապա, ըստ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, ներկայումս Հայաստանում անպտղության ցուցանիշները հասել են վտանգավոր՝ 17 տոկոսի շեմին, մինչդեռ Առողջության համաշխարհային կազմակերպության կողմից վտանգավոր շեմ սահմանվել է 15 տոկոսը⁶³⁴:

Բացի այդ, բժշկական ծառայությունների անմատչելիության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի, ինչպես նաև որոշ օրենսդրական բացերի հետևանքով վերարտադրողական ծառայություններից օգտվելիս հաշմանդամություն ունեցող կանայք հաճախ ենթարկվում են խտրականության: Խնդրի վերաբերյալ կատարված հետազոտությունը⁶³⁵ ցույց է տվել, որ հարցմանը մասնակցած բժշկական հաստատությունների ընդունարանի աշխատակիցների 13 տոկոսի գնահատմամբ՝ իրենք իրավունք ունեն մերժել հաշմանդամություն ունեցող հիվանդին մատուցել համապատասխան բժշկական ծառայություն՝ բժշկական հաստատությունում իրենց ունեցած սարքավորումների անմատչելիության հիմնավորմամբ: Ավելին, մի շարք բժշկական հաստատություններ առհասարակ նպատակ չեն հետապնդում իրենց ծառայությունները ներառական և մատչելի դարձնել նաև հաշմանդամություն ունեցող կանանց համար: Նշված խնդրին ականատես են եղել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան (ՄԱԲՀ) ներկայացուցչության հետ

⁶³³<http://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain/opendocpdf.pdf?reldoc=y&docid=52dd05364>

⁶³⁴http://civilnet.am/2014/07/24/c-academy-unfpa-garik-hayrapetyan-img_0231-6/#.VQ1FE9LLc6g;

<http://med.news.am/arm/news/1705/abotnern-u-seravaraknery-anptxutyany-himnakan-patcharnern-en.html>

⁶³⁵<http://disabilityinfo.am/wp-content/uploads/2015/02/Research-report-Zaruhi-Batoyan-ARM.pdf>

համատեղ ՀՀ-ում վերարտադրողական և սեռական առողջության իրավունքների զարգացման ոլորտում իրականացվող ուսումնասիրության շրջանակներում Երևան քաղաքում, ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Սյունիքի մարզերում իրականացրած ուսումնասիրությունների ընթացքում: Մասնավորապես մի շարք բուժաշխատողների հետ զրույցներից պարզ է դարձել, որ իրենց վերջին տարիներին հաշմանդամություն ունեցող կանայք չեն դիմել: Առանձին դեպքերում խնդրահարույց էր բուժաշխատողների վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող կանաց վերաբերյալ՝ ովքեր զարմանում էին, թե ինչու պետք է հաշմանդամություն ունեցող կինը դիմի իրենց վերարտադրողական առողջության վերաբերյալ բուժօգնություն ստանալու նպատակով:

Առողջապահական ծառայությունների մատչելիության առումով հաջորդ խնդիրը վերաբերում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող կանանց նկատմամբ կիրառվող խտրական վերաբերմունքին:

Թեև ՀՀ օրենսդրությամբ⁶³⁶ բոլոր մարդիկ ունեն բժշկական օգնություն և սպասարկում ստանալու հավասար իրավունք, այնուամենայնիվ, գրանցվել են դեպքեր, երբ կանայք խտրականության են ենթարկվել առողջապահական հաստատություններում բժիշկների կողմից (օրինակ՝ արձանագրված դեպքերից մեկով, բուժաշխատողները հղի կնոջը խորհուրդ չեն տվել երեխա ունենալ վերջինիս մոտ ՄԻԱՎ-ի առկայության պատճառով), ինչը հանգեցնում է նրան, որ գործնականում կանայք խուսափում են բարձրաձայնել իրենց խնդրի մասին: Նման մոտեցումները պայմանավորված են ՄԻԱՎ-ՁԻԱՀ-ի վերաբերյալ հասարակությունում դեռևս պահպանվող մոտեցումներով ու պատկերացումներով, ինչի արդյունքում խախտվում են անձի անձեռնմխելիության և բժշկական գաղտնիքի պահպանման սկզբունքները, ինչպես նաև խախտվում է այդ անձանց առողջության պահպանման իրավունքը:

Աշխատանքի շուկայում կանանց ներգրավվածության մակարդակը շարունակում է ցածր մնալ նաև 2015թ.-ի ընթացքում: Թեև իրականացվում են աշխատանքներ⁶³⁷ ոլորտում կանանց ներգրավվածությունն ապահովելու ուղղությամբ, այնուամենայնիվ փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում կանանց ներգրավվածությունը շարունակում է ցածր մնալ:

Կանանց գործարարության խթանումը տնտեսության զարգացմանը զուգահեռ մեծացնում է կանանց շրջանում զբաղվածների թիվը: Ձեռնարկությունների հետազոտության արդյունքները փաստում են, որ կանանց զբաղվածությունը

⁶³⁶«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, հոդված 4

⁶³⁷ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացված «Կանանց ձեռներեցության աջակցություն» ծրագրային միջոցառման ուղղությամբ՝ Ասիական զարգացման բանկի տեխնիկական աջակցության շրջանակներում իրականացվող «Կանանց ձեռներեցության զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացվել է «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» 4 ծրագիր:

ձեռնարկություններում, որտեղ ղեկավարը կին է, բավականին մեծ թիվ է կազմում⁶³⁸:

2015թ.-ի ընթացքում գյուղաբնակ կանայք նույնպես ենթարկվել են խտրական վերաբերմունքի և լինելով տնտեսության ոչ ֆորմալ հատվածի աշխատողներ՝ գյուղատնտեսության ոլորտում աշխատող կանայք հանդիպում են բազմաթիվ հավելյալ դժվարությունների (ցածր և ոչ կայուն եկամուտներ, մեծ ծախսեր, վատ աշխատանքային պայմաններ, երկար աշխատանքային օր, իրավական ցածր պաշտպանվածություն և այլն): Այսպես, Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի աշխատողների 50 տոկոսից ավելին կանայք են⁶³⁹, ինչը նրանց դարձնում է գյուղատնտեսության զարգացման առավել կարևոր մասնակից: Ըստ էության, գյուղատնտեսական արտադրանքի մեծ մասը ստեղծվում է կանանց կողմից, և նրանք համարվում են սննդամթերքի մատակարարման և գյուղական վայրերում տնային տնտեսությունների գոյատևման հիմնական երաշխավորները: Կանայք հաճախ աշխատում են այնպիսի պայմաններում, որոնք անդառնալի վնաս են հասցնում իրենց առողջությանը: Մինևույն ժամանակ, թեև օրենսդրական առումով որևէ սահմանափակում չկա գյուղի և քաղաքի կանանց միջև ձեռնարկատիրությամբ զբաղվելու առումով, սակայն անգամ փոքր բիզնեսն աշխատեցնելու համար գյուղի կանայք ավելի շատ խոչընդոտների են հանդիպում, իսկ այդ խոչընդոտներն առկա են բիզնեսի բոլոր ճյուղերում⁶⁴⁰: Մրա պատճառը, նախևառաջ, փոքր շուկան է և տվյալ համայնքի մարդկանց վճարունակության ցածր մակարդակը:

Վերոնշյալ բոլոր հիմնախնդիրները վկայում են, որ կանայք լրացուցիչ պաշտպանության և իրենց հնարավորությունների ընդլայնման ու ներուժի արդյունավետ օգտագործման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի ձեռնարկման կարիք ունեն:

⁶³⁸ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016թ.

⁶³⁹ <http://bit.ly/21yLUCL>

⁶⁴⁰ <http://bit.ly/19C0RAP>

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարդկության տեխնիկական առաջընթացի հետ մեկտեղ ավելանում է նաև բնության վրա հասարակության ազդեցությունը: Հետևաբար՝ բնապահպանական իրավունքների լիարժեք իրացումը կարևոր նախապայման է անձի առողջության, բարեկեցության, ինչպես նաև պետության սոցիալ-տնտեսական զարգացման ապահովման համար:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև⁶⁴¹: Նշված նպատակներին հասնելու կապակցությամբ ընդունվել են բազմաթիվ ներպետական օրենսդրական ակտեր: Շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված ՀՀ կողմից վավերացվել են նաև մի շարք միջազգային պայմանագրեր: Չնայած այս ամենի, առ այսօր առկա են խնդիրներ վերջիններիս իրականացման և անձանց բնապահպանական իրավունքների պատշաճ ապահովման վերաբերյալ:

Շրջակա միջավայրի պահպանության խնդրում կարևորագույն լծակներից է ՀՀ-ի կողմից 2001թ.-ին վավերացված «Շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998թ.-ի կոնվենցիան (Օրհուսի կոնվենցիա):

Օրհուսի կոնվենցիան ճանաչում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում և որ պարտավոր է անհատապես և այլոց հետ համատեղ պահպանել ու բարելավել շրջակա միջավայրը՝ ի օգուտ ներկա և ապագա սերունդների⁶⁴²: Օրհուսի կոնվենցիայում ներառված են նաև այնպիսի կարևոր սկզբունքներ, ինչպիսիք են պետության կողմից տնօրինվող էկոլոգիական տեղեկատվության մատչելիության ապահովումը, հասարակայնության մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացին և էկոլոգիական իրավունքների խախտման համար դատական և արտադատական պաշտպանության դիմելու իրավունքի ճանաչումը:

ՀՀ-ում շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով կարևորագույն նշանակություն ունեցող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում⁶⁴³, որն ընդունվել է 2014թ.-ի հունիսի 21-ին, առկա է Օրհուսի կոնվենցիայի հետ անհամապատասխանություն, որը խոչընդոտում է շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկմանը և հանրության

⁶⁴¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 12

⁶⁴² https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/ACtext/Aarhus_Convention_Armenian.pdf

⁶⁴³ Այսուհետ՝ 2014 թվականի Օրենք

պատշաճ ներգրավվածության ապահովմանը: Խնդրին անդրադարձել է նաև Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեն (Կոմիտե), որը վերահսկում և գնահատում է Օրհուսի Կոնվենցիան ստորագրած երկրների կողմից վերջինիս դրույթների կիրարկումը⁶⁴⁴:

Հատկանշական է, որ մինչ 2014թ.-ի հունիսի 21-ը գործում էր 1995թ.-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը⁶⁴⁵, որի՝ որ հանրային լուսմների վերաբերյալ հանրությանը ծանուցելու վերաբերյալ կարգավորումները⁶⁴⁶ 2011թ.-ին Կոմիտեի կողմից առաջարկվել է համապատասխանեցնել Կոնվենցիային⁶⁴⁷: Այնուամենայնիվ, չնայած 2014թ.-ին ընդունվել է ոլորտը կանոնակարգող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքն, այնուամենայնիվ, նշյալ օրենքով, նույնպես կարգավորում չի ստացել Կոմիտեի կողմից բարձրաձայնված խնդիրը⁶⁴⁸:

Հատկանշական է, որ Կոմիտեն մի շարք որոշումներ⁶⁴⁹ է կայացրել ՀՀ-ի վերաբերյալ՝ Օրհուսի կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարման և, հատկապես, ազգային օրենսդրության մեջ կոնվենցիայի դրույթները ներդնելու մասին⁶⁵⁰: Ավելին, ոլորտային մի շարք փորձագետների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների պնդմամբ, Հայաստանի կողմից Կոնվենցիայի դրույթների ներդրման ու իրականացման կապակցությամբ անբարեխիղճ վերաբերմունքի պատճառով Կոմիտեն Հայաստանին վերցրել է ամենամյա հսկողության տակ⁶⁵¹:

Վերոգրյալից հետևում է, որ որոշումների ընդունման գործընթացի վերաբերյալ 2014թ.-ի օրենսդրական փոփոխությունները լիարժեքորեն չնպաստեցին շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ հանրային իրազեկման և հանրային ներգրավվածության պատշաճ ապահովմանը⁶⁵² և 2015 թվականին քայլեր չձեռնարկվեցին խնդրի լուծման կապակցությամբ:

Ներկա և ապագա սերունդների յուրաքանչյուր անդամի առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքի պաշտպանությանն օժանդակելու համար, Օրհուսի Կոնվենցիայի դրույթներին

⁶⁴⁴ http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/CC_GuidanceDocument.pdf

⁶⁴⁵ Այսուհետ՝ 1995 թվականի Օրենք

⁶⁴⁶ ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին»(1995թ.), հոդված 6

⁶⁴⁷ http://www.un.am/res/UN%20Treaties/XVII_22.pdf (հայերեն),

<http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf> (անգլերեն)

⁶⁴⁸ և ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին»(2014թ.), հոդված 26

⁶⁴⁹ <http://www.unece.org/env/pp/ccimplementation.html> , <http://www.unece.org/env/pp/cc.html>

⁶⁵⁰ http://aarhus.am/?page_id=13226

⁶⁵¹ http://aarhus.am/?page_id=13226, <http://ecolur.org/hy/news/officials/aarhus-convention-compliance-committee-takes-certain-measures-to-armenia-up-to-probable-convention-termination/7790/>,

http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP5decisions/V.9a_Armenia/frPartyV9a_16.11.2015_email.pdf

⁶⁵² Decision IV/9a on compliance by Armenia with its obligations under the Convention, 4(b)

<http://bit.ly/1vqBkOC>

համապատասխան, յուրաքանչյուր պետություն երաշխավորում է շրջակա միջավայրին առնչվող հարցերով տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության իրավունքը⁶⁵³:

Մինչդեռ, անձի՝ առողջությանը և բարեկեցությանը նպաստող միջավայրում ապրելու իրավունքի իրացմանը խոչընդոտում են ջրային ռեսուրսների գերօգտագործման, գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրները, որոնք առաջացել են փոքր ՀԷԿ-երի (ՓՀԷԿ) շահագործման հետևանքով: ՓՀԷԿ-երի կառուցումը նաև անտառահատումների⁶⁵⁴ պատճառ է դարձել, իսկ ջրային ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործումը մեծ ազդեցություն է թողնում համայնքների սոցիալական վիճակի վրա՝ համայնքին թողնելով առանց ոռոգման և խմելու ջրի, ինչի հետևանքով նվազում են գյուղմթերքների արտադրությունը և բնակիչների եկամուտը⁶⁵⁵:

ՀՀ բնապահպանության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ ՓՀԷԿ-երի շահագործման հետևանքով շրջակա միջավայրին հասցվող վնասի վերաբերյալ 2015թ.-ին ստացվել է 8 դիմում-բողոք: Բողոքները վերաբերել են ՓՀԷԿ-երի շահագործման հետևանքով առաջացած բնապահպանական խնդիրներին, դրանց անօրինական շահագործմանը կամ անօրինական գործունեությանը, ինչպես նաև բնապահպանական թողքի չպահպանմանը: Ըստ Նախարարության հայտնած տվյալների՝ բողոքների հիման վրա կատարվել են տեսչական ստուգումներ ՀՀ Տավուշի մարզի 3, Սյունիքի մարզի 1, Վայոց ձորի մարզի 1, Լոռու մարզի 1, Կոտայքի մարզի 2 ՓՀԷԿ-երում, մինչդեռ որոշ տարածքներ ՓՀԷԿ-երի շահագործման արդյունքում դեռ շարունակվում են ջրազրկվել⁶⁵⁶:

Հետևաբար, ազդակիր համայնքներում բնակվող անձիք չեն կարողանում իրացնել իրենց՝ առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:

2015թ.-ի ընթացքում Քաջարան քաղաքում օդի աղտոտվածության խնդիրը շարունակում է մնալ լուրջ բնապահպանական խնդիր:

Քաջարան քաղաքում, ըստ ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի⁶⁵⁷ մակերևութային ջրերի և մթնոլորտային օդի որակի մոնիտորինգի, 2015 թվականի նոյեմբեր ամսին կատարվել են պասիվ նմուշառիչներով օդային ավազանի որակի դիտարկումներ, և քաղաքի 15 դիտակետից վերցվել է 120 փորձանմուշ, և մթնոլորտում որոշված ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական

⁶⁵³ Օրհուսի Կոնվենցիա, հոդված 1

⁶⁵⁴ <http://bit.ly/1ISvCjZ>; <http://bit.ly/1E0ISxE>

⁶⁵⁵ ՄԱԿ-ի՝ «Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի՝ Հայաստանի Հանրապետության 5-րդ ազգային զեկույց, Երևան 2014, մանրամասն՝ <http://bit.ly/1Fy3MEh>, <http://bit.ly/1zL65D8>

⁶⁵⁶ <http://bit.ly/1hVxvRh>, <http://bit.ly/1JeQm0v>

⁶⁵⁷ <http://www.armmonitoring.am/>

կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան նորմերը⁶⁵⁸:

Սակայն, բացի ծծմբի և ազոտի երկօքսիդներից, փոշին օդի գետնամերձ շերտի 4 աղտոտիչներից մեկն է և ներառված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցուցակում⁶⁵⁹: Այսպես, ըստ ՀՀ-ում ձևավորված գետնամերձ շերտի օդի որակի մոնիտորինգի հիբրիդային եռաշերտ մոնիտորինգային դիտացանցի⁶⁶⁰՝ օդի որակի տեսանկյունից Քաջարանը ռիսկային և խոշոր քաղաքներից է⁶⁶¹: Հետևաբար, Քաջարանում օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգի շրջանակներում անհրաժեշտ է կատարել նաև փոշու մոնիտորինգ:

ՀՀ բնապահպանության նախարարությունը, տեղյակ լինելով խնդրի առկայության մասին, դեռ չի իրականացրել Քաջարան քաղաքում մթնոլորտային օդում փոշու որոշման կապակցությամբ դիտարկում՝ չնայած նրան, որ վերջինիս կողմից արդեն ձեռք են բերվել համապատասխան սարքավորումներ⁶⁶²:

Օրհուսի կոնվենցիայի Նախաբանի մեջ նշվում է, որ կողմերը, այդ թվում՝ Հայաստանը ճանաչում են, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում, և որ պարտավոր է անհատապես և այլոց հետ համատեղ պահպանել ու բարելավել շրջակա միջավայրը՝ ի օգուտ ներկա և ապագա սերունդների:

Սակայն 2015թ.-ին պատշաճ կերպով վերահսկողություն չի իրականացվել ապօրինի անտառահատումների դեպքերի, ինչպես նաև վերջիններիս կանխարգելման և բացառման ուղղությամբ: Հետևաբար, անհրաժեշտ վերահսկողության բացակայությունը հանգեցրել է Օրհուսի կոնվենցիայի կողմերի կողմից ճանաչված առողջության և բարեկեցության համար նպաստավոր շրջակա միջավայրում ապրելու իրավունքի խախտմանը:

Այսպես, ինչպես 2014թ., այնպես էլ 2015 թ.-ին ապօրինի ծառահատումների վերաբերյալ պաշտոնական տվյալները դրական զարգացում չեն ապրել: ՀՀ անտառային տարածքներում իրականացրած աշխատանքների արդյունքում կազմվել է վարչական իրավախախտման 24.8 մլն.դրամի 358 տուգանքի ակտ և 134.5 մլն.դրամի շրջակա միջավայրին պատճառած վնասի հատուցման 395 ակտ: Ավելին, հայտնաբերվել է 2710 ապօրինի հատված ծառ:

Այսպիսով, ապօրինի ծառահատումները 2015 թվականին դեռևս շարունակվել են, չնայած խնդրի մասին ահազանգել են թե՛ բնապահպանները, թե՛ Մարդու իրավունքների պաշտպանը՝ 2014թ.-ի իր տարեկան զեկույցում:

Օրհուսի Կոնվենցիայի համաձայն՝ Կոնվենցիայի յուրաքանչյուր կողմ պետք է

⁶⁵⁸ http://www.armmonitoring.am/customPage.php?folder_name=2015&month_path=1&page_num=9

⁶⁵⁹ <http://bit.ly/1AXfppv>, «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ, Երևան 2011թ., «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ, ՀՀ բնապահպանության նախարարություն, <http://bit.ly/1DEzWys>

⁶⁶⁰ http://www.armmonitoring.am/index.php?page_name=0

⁶⁶¹ <http://bit.ly/1AXfppv>

⁶⁶² Պաշտպանի 2015 թվականի զեկույցի կապակցությամբ Նախարարությանը ուղղված հարցման պատասխանից

ձգտի ապահովել, որպեսզի պաշտոնատար անձինք և պետական մարմինները շրջակա միջավայրին առնչվող հարցերով ցուցաբերեն աջակցություն հասարակայնությանը և ուղղորդեն նրան տեղեկատվության մատչելիության հարցում, աջակցեն նրան որոշումների ընդունման գործընթացում և արդարադատության իրականացմանը մասնակցելու գործում⁶⁶³:

Սակայն 2015թ.-ին «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների իրականացման անհրաժեշտության հարցը շարունակում է մնալ չլուծված: Այսպես, ՀՀ բնապահպանության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն ընդգրկված է եղել նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության ստուգման ենթակա կազմակերպությունների՝ 2013, 2014⁶⁶⁴ և 2015 թվականների ցանկերում, սակայն այդ տարիներին տեսչական ստուգումներ չեն իրականացվել:

Մինչդեռ, մի շարք բնապահպաններ ահազանգում են, որ Թեղուտի հանքավայրը շահագործող ընկերությունը կոպտորեն խախտել է բնապահպանական օրենսդրության նորմերը, ինչի հետևանքով հանքարդյունաբերական թափոնները հարակից գետ են թափվել⁶⁶⁵: Ի պատասխան բնապահպանների ահազանգին՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Լոռու տարածքային բաժնի կողմից համապատասխան ցուցում է տրվել ընկերությանը՝ ձեռնարկել միջոցներ հարստացուցիչ ֆաբրիկայի շրջանառու ջրի պոմպակայանը լրացուցիչ հզորությունով համալրելու և հետագայում նման վթարային արտահոսքերը շրջակա միջավայր բացառելու ուղղությամբ⁶⁶⁶: Սակայն ստուգումներ այդպես էլ չեն իրականացվել, քանի որ ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի թիվ 839-Ա որոշմամբ ստուգումները կասեցվել են:

Այսպիսով, «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների խնդրի կապակցությամբ պետությունը չի ցուցաբերել անհրաժեշտ⁶⁶⁷ աջակցություն հասարակության անդամներին:

⁶⁶³ Օրհուսի Կոնվենցիա, հոդված 3

⁶⁶⁴ Թեև, ըստ նախարարության, «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումներ պետք է իրականացվեին 2013թ. չորրորդ եռամսյակում, հետագայում նախարարությունը հետաձգեց այդ ստուգումների իրականացումը՝ դրանք նախատեսելով իրականացնել 2014թ.: 2013թ.-ին նախատեսվող ստուգումների չանցկացումը պատճառաբանվում էր հանքավայրի փաստացի հանքշահագործում չիրականացնելու հանգամանքով, մինչդեռ ներկայումս հանքավայրը շահագործվում է առանց համապատասխան անհրաժեշտ ստուգումների: Այժմ դա նախատեսված է կատարել 2015թ.:

⁶⁶⁵ <http://www.ecolur.org/hy/news/teghout/teghout-supporters-applying-to-nature-protection-ministry-to-hold-inspections-in-teghout-mine/8040/>

⁶⁶⁶ <http://www.armecofront.net/mamlo-haghordagrutyunner/teghuti-hanqavayri-hetevanqneriy/>

⁶⁶⁷ Մանրամասն տես՝ «ՀՀ բնապահպանության նախարարություն» բաժնում

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ

Չնայած նրան, որ խտրականությունն արգելված է ՀՀ օրենսդրությամբ⁶⁶⁸, այնուամենայնիվ, իրավական համապատասխան կառուցակարգերի բացակայությունը զրկում է բնակչության առավել խոցելի խմբերի ներկայացուցիչներին, օրինակ՝ ազգային, կրոնական փոքրամասնություններին, հաշմանդամություն ունեցող անձանց խտրական վերաբերմունքից արդյունավետ պաշտպանվելու, խտրականության ենթարկվելու դեպքում արդյունավետ փոխհատուցում ստանալու և այլ հնարավորությունից: Այս առումով, կարևոր է խտրականությունը արգելող համապարփակ օրենքի ընդունումը, որով կսահմանվեն խտրականության հասկացությունը, տեսակները, խտրականությունը կանխարգելող հստակ մեխանիզմները և այլն: Խնդրին անդրադարձ է կատարվել նաև 2015թ. ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի զեկույցում⁶⁶⁹:

Այս նպատակով ՀՀ արդարադատության նախարարության պատվերով Եվրասիա համագործակցության հիմնադրամն իրականացրեց «Արդյոք անհրաժեշտ է խտրականության դեմ պայքարի մասին առանձին օրենքի ընդունումը» իրավագիտական հետազոտությունը⁶⁷⁰, որը հանրային լսումների դրվեց 2015 թվականի փետրվարին: Հետազոտության արդյունքում հիմնավորվեց Հայաստանում խտրականության դեմ պայքարի օրենսդրությունը կատարելագործելու և միասնական դարձնելու անհրաժեշտությունը: Ներկայումս պետությունը մշակում է միասնական օրենքի նախագիծ:

1. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին կից գործող Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդն (Համակարգող խորհուրդ), ունի 22 անդամ, որոնք ընտրվում են ռոտացիայի սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետությունում առկա 11 ազգային փոքրամասնությունների յուրաքանչյուր համայնքի ներկայացուցիչներից: Հայաստանում ասորական, եզդիական, ռուսական, հունական, քրդական էթնիկ համայնքներից զատ ակտիվորեն գործում են ուկրաինական, հրեական, լեհական, վրացական, բելառուսական, գերմանական էթնիկ համայնքների հասարակական կազմակերպությունները⁶⁷¹: Հարկ է նշել, որ Համակարգող խորհուրդը, 2012 թվականից սկսած, նախկին 10 մլն

⁶⁶⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1, ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 3, Քրեական օրենսգիրք, հոդված 6, «Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 6 և այլն

⁶⁶⁹ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_l8.pdf

⁶⁷⁰ http://am.epfarmenia.am/wp-content/uploads/2014/07/Research-Armenian_21.05.15.pdf

⁶⁷¹ Հայաստանի Հանրապետության չորրորդ զեկույցը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետ, http://www.gov.am/u_files/file/kron/charter%2015/3-ZEKUYC-4.pdf, կետ 75

դրամի փոխարեն ստանում է 20 մլն դրամ, որի բաշխումը համաձայնեցվում է Համակարգող խորհրդում ընդգրկված ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչների հետ⁶⁷²:

Այնուամենայնիվ, նշված գումարը չի բավականացնում միջազգային պարտավորությունների լիարժեք կատարման համար, ինչի մասին դեռևս 2014 թվականին «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի» (Խարտիա) Հայաստանի կողմից կիրառման վերաբերյալ զեկույցում նշել է նաև Եվրոպայի խորհուրդը և հորդորել ավելացնել ֆինանսավորումը՝ խթանելու փոքրամասնությունների լեզուների գործածությունը և պատշաճ կատարելու Խարտիայով ստանձնած պարտավորությունները⁶⁷³:

Տարրական կրթության շրջանակներում պետությունն ապահովում է ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցումը: Այսպես, եզդիների և քրդերի կոմպակտ բնակության վայրերի դպրոցներում եզդիերենի և քրդերենի ուսուցումը տարրական դասարաններում իրականացվում է համապատասխան մասնագետի առկայության դեպքում՝ անկախ սովորող երեխաների թվից, իսկ ասորերենի ուսուցումը տարրական դասարաններում իրականացվում է Վերին Դվին, Դիմիտրով, Արզնի, Նոր Արտագերս գյուղերի միջնակարգ դպրոցների, Երևանի Պուշկինի անվան հմ. 8 հիմնական դպրոցի տարրական դասարաններում և Ա.Մարգարյանի անվան հմ. 29 ավագ դպրոցում⁶⁷⁴: Այնուամենայնիվ, տարբեր համայնքներում նշյալ լեզուներով վերապատրաստված ուսուցիչների լուրջ պակաս կա, իսկ նախադպրոցական կրթության ծրագրում փոքրամասնությունների լեզուները հիմնականում ներառված չեն ինչը խնդրահարույց է նաև Խարտիայի պահանջների լիարժեք կատարման տեսանկյունից⁶⁷⁵:

Թեև կրթության ոլորտում որոշ համայնքների լեզուներով նոր հրատարակվել են ուսումնական նյութեր, այնուամենայնիվ, դեռևս բացակայում են ասորերենով, հունարենով, քրդերենով և եզդիերենով ամբողջ ուսումնական պլանի համար նախատեսված ուսումնական նյութերը⁶⁷⁶: Սոցիալ-տնտեսական խնդիրները հաճախ հանգեցնում են գյուղում բնակվող, հատկապես ռուս-մոլդկան ու եզդի երեխաների՝ դպրոցից վաղաժամկետ դուրս մնալուն և արտերկրում աշխատանք փնտրելուն⁶⁷⁷:

⁶⁷² «ԵՄ «Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության չորրորդ զեկույց», կետ 36, 2014թ. <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800cc828>

⁶⁷³ http://gov.am/u_files/file/kron/Hayastan_ECRML3_hay.pdf

⁶⁷⁴ Հայաստանի Հանրապետության չորրորդ զեկույցը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, http://www.gov.am/u_files/file/kron/charter%2015/3-ZEKUYC-4.pdf, կետ 92

⁶⁷⁵ http://gov.am/u_files/file/kron/Hayastan_ECRML3_hay.pdf

⁶⁷⁶ Տես՝ նույն տեղում

⁶⁷⁷ «Կրոնի ազատությունը և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաները և երիտասարդները», Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, էջ 23, 2014թ. http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Field_Study_Rights_of_Children_arm.pdf

Եզդիական համայնքում վաղ ամուսնությունները (հատկապես աղջիկների շրջանում) շարունակում են մտահոգիչ խնդիր մնալ, ինչի հետևանքով, երեխաները, որպես կանոն, դուրս են մնում կրթությունից: Տվյալ խնդրին անդրադարձել է ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ առաջարկելով ապահովել օրենքով⁶⁷⁸ նախատեսված ամուսնության կնքման պայմանների գործնականում կիրառումը, ինչպես նաև մշակել ծրագրեր՝ աղջիկ երեխաների առողջության, կրթության և զարգացման իրավունքի մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու համար՝ որպես թիրախ ընտրելով հատկապես ծնողներին և համայնքի ղեկավարներին⁶⁷⁹:

Նման առաջարկ է հնչեցվել նաև 2015 թվականին ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի զեկույցում⁶⁸⁰: Բայցևայնպես, եզդի համայնքը չի դիտարկում օրենքով սահմանված ամուսնության նվազագույն տարիքից ցածր տարիքում ամուսնությունը երեխայի իրավունքների ոտնահարում՝ համարելով այն ավանդույթի մաս, որը պետք է հարզվի պետության և միջազգային հանրության կողմից⁶⁸¹:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման ընդհանուր ժամաքանակը չպետք է գերազանցի հեռուստատեսությամբ շաբաթական մինչև 2 ժամը, իսկ ռադիոյով՝ օրական մինչև 1 ժամը⁶⁸²: Մինչդեռ, ազգային փոքրամասնությունների լեզուներով հատուկ ծրագրերի և հաղորդումների հեռարձակման համար առավելագույն եթերային ժամանակի սահմանումը խնդրահարույց է փոքրամասնությունների համար լրատվամիջոցների համընդհանուր հասանելիության ապահովման տեսանկյունից և անհարկի սահմանափակում է նրանց համար հանրային լրատվամիջոցների հասանելիությունը:

Նշենք, որ Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2007)3 հանձնարարականի համաձայն՝ պետությունները պետք է տեխնոլոգիական տարաբնույթ միջոցներով ապահովեն հանրային լրատվամիջոցների համընդհանուր հասանելիությունը բոլոր անհատների և հասարակության խմբերի, այդ թվում՝ փոքրամասնությունների և խոցելի խմբերի համար⁶⁸³: Հատկանշական է նաև, որ

⁶⁷⁸ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդված

⁶⁷⁹ http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fC%2f3-4&Lang=en

⁶⁸⁰ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

⁶⁸¹ http://www.coe.int/t/dg4/youth/Source/Resources/Publications/2014_Desk_Study_Children_and_Youth_arm.pdf

⁶⁸² «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի դ. ենթակետ

⁶⁸³ <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1089759>

տվյալ օրենսդրական խնդրին անդրադարձ է կատարվել նաև Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից, որը նշել է, որ օրենքի նշյալ դրույթը սահմանափակում է ազգային փոքրամասնությունների լեզուներով հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հեռարձակումները և անհրաժեշտ է երաշխավորել փոքրամասնության լեզվով հեռարձակման նվազագույն ժամանակահատվածը⁶⁸⁴, ինչը ենթադրում է նաև գործող օրենսդրությամբ փոքրամասնությունների լեզվով հեռուստառադիոհաղորդումների ընդհանուր ժամաքանակից որոշակի ժամաքանակը չգերազանցելու պահանջի վերացում:

2. Հայաստանի բնակչության մեծամասնությունը Հայ Առաքելական Եկեղեցու անվանական հետևորդ է⁶⁸⁵, միաժամանակ, 2016 թվականի սկզբի տվյալներով՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է 68 կրոնական կազմակերպություն, որոնցից մի մասն ազգային փոքրամասնությունների կազմակերպություններ են (այդ թվում՝ ռուսական, ասորական, հրեական, եզդիական կրոնական համայնքները)⁶⁸⁶:

Իրավապաշտպան մի շարք կառույցներ բազմիցս արձանագրել են, որ ՁԼՄ-ներում առկա են կրոնական փոքրամասնությունների նկատմամբ անհանդուրժողականության դրսևորումներ: Այսպես, մամուլում կրկին հրապարակվել են հոդվածներ, որտեղ այս կամ այն կրոնական կազմակերպությանն անդամակցելը ներկայացվել է որպես բացասական երևույթ, հոգեկան հիվանդություն: Կրոնական անհանդուրժողականություն տարածող նյութեր են հայտնվել նաև «Վիքիպեդիայի» հայկական հատվածում, որտեղ կրոնական շատ կազմակերպություններ հայտարարվել են «աղանդներ» և հանրության համար վտանգավոր կազմակերպություններ⁶⁸⁷: Հայաստանյան մամուլում նորից հրապարակվել են հոդվածներ, որտեղ մշակույթի տարբեր գործիչներին մեղադրել են «աղանդավոր» լինելու մեջ, նրանց անձնական կյանքից տվյալներ են հրապարակել, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին մեղադրել են հակապետական գործունեության մեջ: Այնուամենայնիվ, իրավապահ մարմինները այդ հայտարարությունների հիման վրա որևէ դեպքով քննություն չեն անցկացրել⁶⁸⁸:

Կրոնական տարբեր կազմակերպությունների և ազգային փոքրամասնությունների երեխաների հետ իրականացված հարցումների

⁶⁸⁴ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի (http://www.gov.am/u_files/file/kron/Resolution.pdf) իրականացման վերաբերյալ ԵԽ 2012 թվականի բանաձև

http://www.gov.am/u_files/file/kron/Opinion.pdf

⁶⁸⁵

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800cc828>

⁶⁸⁶ http://www.gov.am/u_files/file/kron/Tsutsak-%20herakhos%20gov_am2015.pdf

⁶⁸⁷ <http://bit.ly/1TTGdQs>

⁶⁸⁸ «Մարդու իրավունքները Հայաստանում. 2015թ. զեկույց», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, էջ 24

ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներից շատերը դրական են վերաբերվում «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային՝ դրա թեմաները համարելով ազգային պատմության մաս, և եթե այն չի հակասում իրենց համոզմունքներին, սովորում են հաճույքով⁶⁸⁹: Այնուամենայնիվ, ստացվում են նաև դժգոհություններ տվյալ առարկայի ուսուցման մեթոդաբանության վերաբերյալ, օրինակ՝ դասերի ժամանակ աղոթելու, կրոնական ծիսակատարություններ կատարելու կապակցությամբ:

Տեսակետ կա նաև, որ 5-10-րդ դասարաններում դասավանդվող «Հայոց եկեղեցու պատմություն» առարկային զուգահեռ չկա այլընտրանքային դասընթաց այն աշակերտների համար, որոնց ծնողները չեն ցանկանում, որ իրենց երեխան մասնակցի տվյալ դասընթացներին⁶⁹⁰: Բացի այդ, վերջերս վերահրատարակված այդ առարկաների դասագրքերից չեն հանվել այն հատվածները, որոնցում ազգային և կրոնական ինքնությունները նույնականացվում են, և այլ կրոնական կազմակերպությունների անդամները ներկայացվում են որպես ոչ լիարժեք հայեր⁶⁹¹: Նշենք, որ դեռևս 2013 թվականին ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն առաջարկել է Հայաստանին վերանայել դպրոցների ուսումնական ծրագիրը՝ արտացոլելով երեխաների կրոնի ազատությունը⁶⁹²:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը մի շարք թերություններ ու հակասություններ ունի և լիարժեք չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին: Արդյունքում, դեռևս 2011 թվականին շրջանառության մեջ դրվեց «Խղճի և կրոնական ազատությունների մասին» օրինագիծը: Չնայած նախագծով առաջարկվող դրական փոփոխություններին՝ այնուամենայնիվ, առկա են նաև մի շարք խնդիրներ, որոնց անդրադարձ է կատարվել Վենետիկյան Հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի համատեղ կարծիքում⁶⁹³: Այնուհանդերձ, 2015թ. դրությամբ նախագիծը զարգացումներ չի ունեցել:

Դեռևս 2013 թվականին ուժի մեջ մտած այլընտրանքային ծառայությանն առնչվող օրենսդրական փոփոխությունների արդյունքում⁶⁹⁴ վերացել են կրոնի ազատության սահմանափակման խնդիրները: Իրավապաշտպանների

⁶⁸⁹ Տես՝ նույն տեղում

⁶⁹⁰ «Կրոնական կրթության խնդիրները ՀՀ հանրակրթական դպրոցներում», Մ.Դանիելյան, Ա.Ղազարյան, Հ.Հովհաննիսյան, Ա.Ավթանդիլյան, 2012 թ., <http://www.religions.am/files/7318/pastathter/ps7.pdf>

⁶⁹¹ «Մարդու իրավունքները Հայաստանում. 2015թ. զեկույց», Հայաստանի Հեղինակյան կոմիտե, էջ 23

⁶⁹² http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fC.O%2f3-4&Lang=en

⁶⁹³ <http://www.osce.org/yerevan/85440?download=true>

⁶⁹⁴ «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքում և «ՀՀ քրեական օրենսգրքը գործողության մեջ դնելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրինագծերով այլընտրանքային զինվորական ծառայության տևողությունը կրճատվեց՝ դառնալով 30 ամիս, իսկ այլընտրանքային աշխատանքային ծառայությունը՝ 36 ամիս, ինչը համաչափ է մարդու իրավունքների տեսանկյունից և համապատասխանում է միջազգային չափանիշներին:

ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նշյալ փոփոխությունների արդյունքում այլընտրանքային ծառայություն անցնող կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից որևէ բողոք չի ստացվել: 2015-ին նույնպես կազմակերպության անդամները շարունակել են ծառայել առանց որևէ լուրջ միջադեպերի: 2015-ին տրված բոլոր դիմումները ՀՀ պաշտպանության նախարարության հանրապետական գորակոչային հանձնաժողովը ընդունել և դրական ընթացք է տվել⁶⁹⁵:

3. “Human Rights Watch” միջազգային իրավապաշտպան կազմակերպության Համաշխարհային զեկույցում նշվում է, որ Հայաստանում սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները շարունակում են ենթարկվել խտրականության, ոտնձգությունների և ֆիզիկական բռնության, իսկ գենդերային ինքնությունն և սեռական կողմնորոշումը չեն ներառվել խտրականությունն արգելող օրենսդրության մեջ⁶⁹⁶: Նշենք, որ դեռևս 2015 թվականին ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի զեկույցում Հայաստանին հանձնարարվել էր սեռական փոքրամասնություններին խտրականությունից արդյունավետ օրենսդրական և գործնական պաշտպանության ապահովման ուղղությամբ միջոցներ ձեռնարկել⁶⁹⁷:

2015 թվականին հասարակության մեջ սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ անհանդուրժողականության ցուցանիշն էական փոփոխություն չի կրել, գրանցվել են նաև վերջիններիս նկատմամբ բռնության գործադրման դեպքեր: Այսպես, տարբեր իրավապաշտպանների փոխանցմամբ՝ 2015թ. օգոստոսին Երևանի այգիներից մեկում 5 հոգի հարձակվել են 2 անձանց վրա՝ պատճառելով լուրջ վնասվածքներ, մինչև անգամ՝ ուղեղի ցնցում: Տուժողները փորձել են օգնություն ստանալ անվտանգության աշխատակիցներից, որոնք հրաժարվել են օգնել նրանց⁶⁹⁸:

Հարկ է նշել, որ սեռական փոքրամասնությունների նկատմամբ խտրականությունը դրսևորվել է, հիմնականում, զբաղվածության, առողջապահության, կրթության բնագավառներում: Այսպես, օրինակ, զբաղվածության ոլորտում տվյալ անձինք աշխատանք են փնտրում այնպիսի ոլորտներում, որտեղ վերաբերմունքը իրենց նկատմամբ ավելի հանդուրժողական է, օրինակ՝ սննդի սպասարկման, վարսահարդարման, ծաղիկների ձևավորման և այլ ծառայությունների մատուցման ոլորտներում: Միաժամանակ, սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչները խտրականության են ենթարկվում նաև

⁶⁹⁵ «Մարդու իրավունքները Հայաստանում. 2015թ. զեկույց», Հայաստանի Հելսինկյան կոմիտե, էջ 23

⁶⁹⁶ “Human Rights Watch”, 2016թ. Համաշխարհային զեկույց, <https://www.hrw.org/world-report/2016/country-chapters/armenia>

⁶⁹⁷http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

⁶⁹⁸ “Human Rights Watch”, 2016թ. Համաշխարհային զեկույց, <https://www.hrw.org/world-report/2016/country-chapters/armenia>

առողջապահական ծառայություններ ստանալիս: Գրանցվել են դեպքեր, երբ անձանց չեն տրամադրել բժշկական ծառայություններ՝ պայմանավորված վերջիններիս սեռական կողմնորոշմամբ:

Միասեռականները շարունակում են գտնվել առավել խոցելի իրավիճակում նաև ԲԿՀ-ներում: Փաստվել է, որ հիմնականում քրեակատարողական հիմնարկի տարածքում սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքներում (սանհանգույցների, աղբահանության) ներգրավված են միասեռական դատապարտյալները, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նման աշխատանքների կատարումը քրեական ենթամշակույթում համարվում է «ոչ հարիր»: Խնդրահարույց է, որ քրեակատարողական համակարգը որևէ միջոց չի ձեռնարկում այս ենթամշակույթը վերացնելու, դատապարտյալներին ուղղելու և վերաինտեգրելու ուղղությամբ⁶⁹⁹:

⁶⁹⁹ Մանրամասն տես ԲԿԱՄ բաժին:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՆՔՆԵՐ

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2015թ.-ին ՀՀ-ում ապաստան հայցող անձանց թիվը կազմել է 314 անձ, փախստական են ճանաչվել և ապաստան ստացել 202-ը: Ընդ որում, 2015թ. Հայաստանում ապաստան հայցողների մեծ մասը եղել է Սիրիայից (104 անձ), Ուկրաինայից (93 անձ), Իրաքից (75 անձ), և Իրանից էր (21 անձ): Հարկ է նշել, որ Հայաստանը տարիների ընթացքում ընդունել է մի քանի հարյուր հազար փախստականներ Ադրբեջանից և ավելի քան հազար մարդ Իրաքից, իսկ այժմ առավել սուր են կանգնած Սիրիայից և Ուկրաինայից տեղահանված անձանց խնդիրները: Այսպես, մոտավորապես 15000 մարդ, հիմնականում էթնիկ հայեր, Սիրիայում տեղի ունեցող բախումներից փրկվելով, ապաստան է ստացել Հայաստանում: Թեև 2015թ. դրությամբ Ուկրաինայից ապաստան ստանալու դիմում է ներկայացրել 93 անձ, սակայն ենթադրվում է, որ Հայաստանում ապաստան փնտրող ուկրաինացիների իրական թիվն ավելի մեծ է, քանի որ նրանցից շատերը չեն գրանցվում՝ օգտվելով առանց վիզաների ազատ տեղաշարժի ընձեռած հնարավորությունից:

Թեև նշյալ տվյալները համեմատաբար փոքր են Լիբանանում հանգրվանած ավելի քան 1.2 միլիոն⁷⁰⁰ կամ Հորդանանում հանգրվանած մոտ 650 հազար⁷⁰¹ փախստականների համեմատությամբ, ստեղծված իրավիճակը լուրջ մարտահրավեր է Հայաստանի նման փոքր պետության համար, որտեղ առկա են Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտություն, փակ սահմաններ, շրջափակում և տնտեսական բարդ իրավիճակ:

2015 թվականի ընթացքում 1988-1992թթ. Ադրբեջանից Հայաստան բռնազաղթած անձինք կրկին շարունակել են բախվել լուրջ բնակարանային խնդիրների, ինչը պետության կողմից շարունակաբար հիմնավորվում է բյուջետային միջոցների անբավարարությամբ: Չնայած միջազգային կառույցները ծավալուն աջակցություն են տրամադրում պետությանը փախստականների բնակարանային խնդրի ապահովման ուղղությամբ, այնուամենայնիվ, բնակարանային ապահովության առաջնահերթ կարիք ունեցող ինը հարյուրից ավել ընտանիք ավելի քան 25 տարի դեռևս շարունակում են բնակվել հիմնականում կենսաապահովման տարրական միջոցներից զուրկ պայմաններում⁷⁰²: Խնդրի լուծման համար պահանջվում է շուրջ 9,8 մլրդ դրամ, սակայն 2009 թվականից ի վեր այս ընտանիքների բնակարանային ապահովման նպատակով պետական բյուջեում

⁷⁰⁰ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/page?page=49e486676&submit=GO>

⁷⁰¹ <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/page?page=49e486566&submit=GO>

⁷⁰² Օրինակ՝ Երևանի Սողոմոն Տարոնցի 5 հասցեում գտնվող հանրակացարանի շենքը, որտեղ մի շարք փախստականներ են բնակվում, կիսաքանդ վիճակում է, տանիքից կաթում է, ոչ բարվոք սանիտարահիգիենիկ պայմաններ են:

միջոցներ չեն նախատեսվել⁷⁰³: Հարկ է նշել, որ բնակարանային խնդիրների տևական լուծման անհրաժեշտությունն առկա է ոչ միայն Ադրբեջանից Հայաստան բռնազաղթած բնակարանային ապահովության առաջնահերթ կարիք ունեցող անձանց, այլև Հայաստանում բնակվող տեղահանված անձանց բոլոր խմբերի համար: Բազմաթիվ փախստականների կենսաապահովման նվազագույն պայմանների բացակայությունն, ինչպիսիք են թերսնուցումն ու այլ վարակիչ հիվանդությունները, որոնք համոզուազործվող բնակելի տարածքներով պայմանավորված, հակում ունեն տարածվելու փախստականների համայնքներում, հանգեցնում են նաև լուրջ առողջական խնդիրների⁷⁰⁴: Ուստի, անհրաժեշտ է ուսումնասիրել և մշակել տեղահանված բնակչությանը բնակարանով ապահովելու այլընտրանքային ուղիներ⁷⁰⁵:

Կացարանով ապահովման խնդիրն բախվում են ոչ միայն փախստականի կարգավիճակ ստացած, այլև ապաստան հայցող անձինք: Նշենք, որ ապաստան հայցողներն ու նրանց ընտանիքի անդամները մինչև ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են Ժամանակավոր տեղավորման կենտրոնում (Կենտրոն)⁷⁰⁶: Ոլորտային ՀԿ-ները նշում են, որ Կենտրոնի կենցաղային պայմանները բավարար են, սակայն ժամանակ առ ժամանակ, բնակիչների միջև լինում են կոնֆլիկտներ, ինչպես նաև առկա է նորոգման, ենթակառուցվածքի բարելավման կարիք:

Միաժամանակ, Կենտրոնում կա ընդամենը 20 սենյակ, որոնցում տեղավորվում է 45 անձ: Բացի այդ, այն դեպքերում, երբ փախստականի կարգավիճակ ստացած անձը, ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով ի վիճակի չէ բնակարան վարձակալել, նրան թույլատրվում է մնալ Կենտրոնում, ինչը թեև միտված է՝ լուծելու փախստականների կացարանի ապահովման խնդիրը, սակայն միաժամանակ, սահմանափակում է նոր ապաստան հայցող անձանց Կենտրոնում տեղավորելու հնարավորությունը: Արդյունքում, ստեղծվում է ապաստան հայցողների անօթևան մնալու և կենսաապահովման նվազագույն պայմաններով ապահովման իրավունքից զրկվելու վտանգ⁷⁰⁷: Թեև խնդիրն փորձ է արվում լուծում տալ ՄԱԿ Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի

⁷⁰³ Մանրամասն, տես, Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն բաժնում

⁷⁰⁴

[http://un.am/up/file/External%20UNICEF%20Armenia%20ToR_International%20Consultancy%20on%20Refugeesdoc%20\(1\).pdf](http://un.am/up/file/External%20UNICEF%20Armenia%20ToR_International%20Consultancy%20on%20Refugeesdoc%20(1).pdf)

⁷⁰⁵ Վերջիններս կարող են հիմնվել մասնավոր հատվածի ակտիվ դերակատարության, բնակարանային ապահովությունը ներառող զբաղվածության տարբերակների, ինչպես նաև սոցիալական բնակարանային սխեմաների ստեղծման վրա, Submission by the UNHCR for the OHCHR Compilation Report - Universal Periodic Review: Armenia, 2014, p. 7,

<http://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/UPRAMUNContributionsS21.aspx>

⁷⁰⁶ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 14

⁷⁰⁷ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 24

(ՄԱԿ ՓԳՀ) ֆինանսավորմամբ կառուցվող «ինտեգրման տան» միջոցով⁷⁰⁸, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նաև պետության ակտիվ աջակցությունը:

Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան (Կոնվենցիա) աշխատավարձով վարձատրվող աշխատանքով զբաղվելու իրավունքի համատեքստում մասնակից պետությունների համար (այդ թվում՝ Հայաստանի) նախատեսում է առավելագույնս բարեհաճ վերաբերմունքի պարտավորություն⁷⁰⁹: Մինևույն ժամանակ, օրենսդրության համաձայն՝ ապաստան հայցողներն ու ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն Հայաստանում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ ՀՀ քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ⁷¹⁰: Այդուհանդերձ, գործնականում փախստականները Հայաստանում բախվում են իրենց աշխատանքային ինտեգրմանը խոչընդոտող մի շարք խնդիրների, ինչպիսիք են աղքատությունը, գործազրկության բարձր մակարդակը, ցածր եկամուտը, սահմանափակ տնտեսական ներուժը: Ցածր աշխատավարձերը խնդրահարույց են հատկապես բնակարանի վարձակալության հարցում, այն պարագայում, երբ տեղաբնակներն ունեն սեփական բնակարաններ:

Հայաստանում առկա կյանքի եկամտի և կյանքի արժեքի անհամապատասխանությունը, տնտեսական և աշխատանքային հեռանկարների բացակայությունը ստիպում է փախստականներին, մասնավորապես, Սիրիայից տեղահանվածներին փնտրել այլ հնարավորություններ: ՄԱԿ ՓԳՀ ներկայացուցչի խոսքերով՝ մոտ 3-4 հազար մարդ, ովքեր ժամանել էին Հայաստան՝ մեկ փուլով հեռացան այստեղից, դառնալով աշխատանքային միգրանտներ Պարսից ծոցի երկրներում կամ մեկնեցին այն երկրներ, որոնք առաջարկում էին ավելի լավ աշխատանքային պայմաններ կամ օգտվեցին ընտանիքի վերամիավորման իրավունքից, իսկ շատ հաճախ, ուղղակի ապաստան հայցեցին այլ երկրներում⁷¹¹: Տվյալ իրավիճակն, իր հերթին, հանգեցնում է ընտանիքների բաժանման խնդրին, որտեղ տղամարդիկ, թողնելով կանանց և մանկահասակ երեխաներին Հայաստանում, աշխատանքային առավել բարենպաստ հեռանկարների հույսով մեկնում են արտերկիր:

Փախստականների տարրական կրթության իրավունքը երաշխավորվում է ՄԱԿ-ի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով⁷¹²: ՀՀ քաղաքացիներին հավասար կրթության իրավունք է երաշխավորում նաև ներպետական օրենսդրությունը⁷¹³: Բայցևայնպես, հարցումների արդյունքում պարզվել է, օրինակ, որ թեև Հայաստանում բնակվող Սիրիայից տեղահանված երեխաների 91%-ը հաճախում է դպրոց, իսկ 51%-ը՝ մանկապարտեզ,

⁷⁰⁸ «Հայաստանում ապաստան հայցողների կացարանների կարողությունների գնահատում», 2015թ., էջ 11, <http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers/>

⁷⁰⁹ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդված 17

⁷¹⁰ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 21

⁷¹¹ Հարցազրույց ՄԱՓԳՀ ներկայացուցչի հետ, <http://www.un.am/hy/news/303>

⁷¹² Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդված 22

⁷¹³ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 25

այնուամենայնիվ, նրանցից ոմանք դժվարություններ են ունենում դասագրքերի բովանդակությունը հասկանալու, ուսուցիչների հետ շփման և առհասարակ դպրոցական ուսումնական ծրագիրը յուրացնելու հարցերում⁷¹⁴:

Այսպես, ոլորտային ՀԿ-ները նշում են, որ առկա է պարսկերենի տիրապետող ուսուցիչների կարիք, քանի որ բազմաթիվ փախստական երեխաների համար դա առայժմ միակ հասկանալի լեզուն է: Հայաստանում գործում է 6 դպրոց, որտեղ խոսում են այդ լեզվով, իսկ մնացածներում՝ ոչ, ինչի արդյունքում փախստական երեխաների մի զանգված չի հաճախում դպրոց և կրթությունից դուրս է մնում: Նշենք, որ փախստականների և ապաստան հայցողների կրթության հարցին 2015թ. անդրադարձ է կատարվել ՄԱԿ-ի Համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի կողմից: Մասնավորապես, նշվել է, որ վերջիններիս համար կրթության (ներառյալ՝ բարձրագույն) հասանելիությունը լիարժեքորեն չի ապահովվում և բարելավման կարիք ունի⁷¹⁵: Նույն խնդրին դեռևս 2013 թվականին անդրադարձել էր ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովը⁷¹⁶:

Ըստ օրենքի՝ Հայաստանի տարածքում ապաստան հայցողները, ապաստան ստացած փախստականներն, ինչպես նաև ապաստան չստացած փախստականներն իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար հիմունքներով ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում⁷¹⁷: Այնուամենայնիվ, առողջապահության ոլորտում առկա են ֆինանսավորման, կառավարման, կառուցվածքային և կազմակերպչական խնդիրներ, ժամանակակից սարքավորումների պակաս⁷¹⁸, որոնց հավասարապես բախվում են թե փախստականի կարգավիճակ ունեցողները, թե ապաստան հայցողները:

Օրինակ, ոլորտային հասարակական կազմակերպությունների փոխանցմամբ, չնայած վերջիններիս տրամադրվող անձր հաստատող վկայականը⁷¹⁹ բավարար հիմք է օրենքով սահմանված անվճար բուժօգնության ծառայություններից օգտվելու համար, սակայն որոշ դեպքերում, բուժաշխատողների կողմից այն չի ընկալվում որպես անձր հաստատող փաստաթուղթ ու համապատասխան բուժառայություն չի մատուցվում, կամ բուժհաստատությունների աշխատակիցները ոչ միշտ են տեղեկացված ապաստան հայցողներին բժշկական օգնություն տրամադրելու իրենց պարտավորության մասին⁷²⁰:

⁷¹⁴ Save the Children, “Integration challenges of displaced Syrian Armenians Needs Assessment Report“, April-June 2014, p.19

⁷¹⁵ http://www.upr-info.org/sites/default/files/document/armenia/session_21_-_january_2015/a_hrc_wg.6_21_1.8.pdf

⁷¹⁶ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողովի Հայաստանի վերաբերյալ եզրափակիչ դիտողություններ, կետ 48, 2013թ., http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRC%2fC%2fARM%2fCO%2f3-4&Lang=en/

⁷¹⁷ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 23

⁷¹⁸ http://publications.iom.int/bookstore/free/Assessment_of_health_ENG.pdf/ p. 5

⁷¹⁹ Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 29

⁷²⁰ «Հայաստանում ապաստան հայցողների կացարանների կարողությունների գնահատում», 2015թ., էջ

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի տվյալներով⁷²¹ սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված Հայաստանում փախստական կանայք առավել խոցելի են բռնության տարբեր տեսակներին ենթարկվելուն և ենթադրվում է նաև, որ, մասնավորապես, խոցելի են թրաֆիքինգի ենթարկվելու և մարմնավաճառության մեջ ներգրավվելու իմաստով: Բացի այդ, հարբեցողության բարձր ցուցանիշները փախստականների կողմից համոզագործվող բնակելի տարածքներում նպաստում են փախստական կանանց նկատմամբ բռնության ցուցանիշի աճին: Միննույն ժամանակ, փախստականների համայնքներում բնակվող երեխաների և երիտասարդների պարագայում բացակայում են վերջիններիս նկատմամբ բռնության տարբեր տեսակների գործադրման վերաբերյալ վիճակագրական տվյալներ: Փախստական երեխաների և երիտասարդների նկատմամբ բռնության դեպքերի մեծամասնության մասին չի հաղորդվում խնամք և ծառայություն մատուցողների կողմից՝ երեխաների չարաշահման ու անտեսման վերաբերյալ դեպքերի կանխարգելման, բացահայտման, հաղորդման և փոխանցման վերաբերյալ համապատասխան կանոնակարգման բացակայության պատճառով: Բացի այդ, հաշվի առնելով մի շարք սոցիալական գրկանքները, առկա է մի շարք փախստական երեխաների կողմից գողության կատարման, մարմնավաճառությամբ զբաղվելու, ոգելից խմիչքների կամ թմրանյութերի օգտագործման, մուրացկանությամբ զբաղվելու վտանգ: Ուստի անհրաժեշտ է պետության հետևողական ուշադրությունն ու սոցիալական աշխատանքների իրականացումը թե փախստական երեխաների, թե նրանց ծնողների հետ:

Ըստ օրենքի՝ փախստականի կարգավիճակի սահմանման հարցազրույցի ժամանակ հայերենին բավարար չտիրապետող ապաստան հայցողներին պետությունը պարտավոր է տրամադրել անվճար թարգմանիչ (ապաստան հայցողը կարող է նաև օգտվել իր միջոցներով վարձած թարգմանիչի ծառայություններից)⁷²²: Մակայն ոլորտային հասարակական կազմակերպությունները նշում են, որ գործնականում ապաստանի տրամադրման ընթացակարգերում առկա է վերապատրաստված թարգմանիչների քանակի խնդիր ոչ միայն ներկայում առավել պահանջարկ ունեցող լեզուների (արաբերեն, պարսկերեն, թուրքերեն) այլև, մասնավորապես, ապաստան հայցողի հետ հարցազրույցի ընթացքում ստացված տեղեկությունների գաղտնիության ապահովման երաշխիքի⁷²³ համատեքստում: Ապաստանի ընթացակարգերում թարգմանիչները տրամադրվում են, հիմնականում, ՄԱԿ ՓԳՀ-ի ֆինանսավորմամբ, ինչի բացակայության դեպքում պետությունը սեփական ռեսուրսներով ի վիճակի չի լինի, անհրաժեշտության դեպքում, ապահովել

15, <http://www.euadvisorygroup.eu/publications/policy-papers>

⁷²¹

[http://un.am/up/file/External%20UNICEF%20Armenia%20ToR_International%20Consultancy%20on%20Refugeesdoc%20\(1\).pdf](http://un.am/up/file/External%20UNICEF%20Armenia%20ToR_International%20Consultancy%20on%20Refugeesdoc%20(1).pdf)

⁷²² «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 51

⁷²³ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 52

ապաստանի ընթացակարգում ապաստան հայցողի՝ թարգմանչի ծառայությունից անվճար օգտվելու իրավունքը:

Չնայած «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով ամրագրվեց փախստականներից բացի ապաստան հայցողների՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի⁷²⁴, այնուամենայնիվ, նշյալ իրավունքի իրացումը խնդրահարույց է մինչև համապատասխան օրենսդրական լրացումների իրականացումը նաև «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով: Միաժամանակ, ապաստան հայցողների շահերը ներկայացնող համապատասխան ոլորտային փորձ և որակավորում ունեցող փաստաբանների թիվը սահմանափակ է, ինչպես նաև Հայաստանում ապաստան հայցողները հաճախ չեն կարող իրենց թույլ տալ սեփական միջոցներով հոգալ փաստաբանի ծառայության ծախսերը:

Համաձայն «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի՝ ապաստան հայցողները և փախստականները Հայաստան ապօրինի մուտք գործելու կամ գտնվելու համար չեն ենթարկվում քրեական կամ վարչական պատասխանատվության⁷²⁵, համանման կարգավորում է նախատեսված նաև ՀՀ քրեական օրենսգրքով⁷²⁶, ինչը համահունչ է նաև ՄԱԿ-ի Կոնվենցիայի պահանջներին⁷²⁷: Այնուամենայնիվ, չնայած ապօրինի մուտք գործած բոլոր ապաստան հայցողներին քրեական պատասխանատվությունից ազատող համապատասխան օրենսդրական երաշխիքներին՝ գրանցվել են ՀՀ պետական սահմանն ապօրինի հատած ապաստան հայցողների ձերբակալման և վերջիններիս նկատմամբ քրեական գործերի հարուցման դեպքեր:

2015թ. դեկտեմբերի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով «Փախստականների և ապաստանի մասին» օրենքի մի շարք դրույթներ համապատասխանեցվել են միջազգային ստանդարտներին: Մասնավորապես, օրենքով կանոնակարգվել են առկա մի շարք օրենսդրական բացեր, այդ թվում՝ առանց ուղեկցողի կամ ընտանիքից անջատված ապաստան հայցող երեխաների, ինչպես նաև հոգեկան խանգարման կամ հաշմանդամության հետևանքով ապաստանի ընթացակարգերի էությունը չգիտակցող ապաստան հայցողների համար ներկայացուցչի պարտադիր ներգրավումը:

⁷²⁴ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 16.1

⁷²⁵ «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 28

⁷²⁶ ՀՀ Քրեական օրենսգրքի 329-րդ հոդված

⁷²⁷ Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, հոդված 31 (1)



Տ Ա Ր Ե Կ Ա Ն Զ Ե Կ Ո Ւ Յ Ց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ
ՈՐՊԵՍ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ

ԵՐԵՎԱՆ 2016

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միավորված ազգերի կազմակերպության «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի Կամընտիր արձանագրությամբ (այսուհետ՝ Կամընտիր արձանագրություն) նախատեսվում է ստեղծել անկախ ազգային կանխարգելման մեխանիզմ, որը պետք է օժտված լինի լայն լիազորություններով, ունենա ազատ մուտքի և համապատասխան ուսումնասիրությունների անցկացման հնարավորություն բոլոր այն վայրերում, որտեղ մարդիկ կարող են պահվել անազատության կամ սահմանափակ ազատության մեջ: 2008 թվականին «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը լրացվել է 6.1 հոդվածով, որով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ճանաչվել է կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, որն իր գործունեությունն իրականացնում է անազատության կամ սահմանափակ ազատության վայրերում պլանային ուսումնասիրությունների (մոնիտորինգի) միջոցով: Կամընտիր արձանագրության 20-րդ հոդվածի համաձայն՝ կանխարգելման ազգային մեխանիզմը լիազորված է ստանալու ցանկացած տեղեկատվություն անազատության կամ սահմանափակ ազատության մեջ գտնվող անձանց վերաբերյալ: Այդ նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից աշխատակազմում ստեղծվել է բռնությունների կանխարգելման վարչություն: Բռնությունների կանխարգելման ազգային մեխանիզմի (այսուհետ՝ ԲԿԱՄ) փորձագետները պարբերական այցեր են կատարում փակ կամ կիսափակ հաստատություններ՝ համապատասխան վայրերում գտնվող անձանց պահման պայմանների ուսումնասիրության համար՝ նրանց նկատմամբ խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դրսևորումները կանխարգելելու նպատակով:

2015 թվականի ընթացքում ԲԿԱՄ փորձագետները կատարել են այցեր քրեակատարողական հիմնարկներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գործող հատուկ հանրակրթական դպրոցներ: Ընդ որում, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ և հատուկ հանրակրթական դպրոցներ այցերը կատարվել են կրկնակի և նպատակ են ունեցել ուսումնասիրել 2015 թվականի մարտի 27-ին հրապարակված «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում» թեմայով Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցները: Հարկ է նշել, որ բազմաթիվ խնդիրներ, որոնք բարձրացվել էին նշված արտահերթ

գեկույցում, արդեն իսկ ստացել էին լուծում (այդ թվում՝ օրենսդրական բարեփոխումների միջոցով) կամ գտնվում էին ընթացիկ փուլում:

ԲԿԱՄ փորձագետները 2015 թվականի ընթացքում իրականացրել են 253 այց: Այցերից 214-ը կատարվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներ, որից 16-ը պլանային կարգով և նախատեսված է եղել Պաշտպանի հաստատած ժամանակացույցով, իսկ 198-ն իրականացվել է ըստ անհրաժեշտության: Պաշտպանի հաստատած ժամանակացույցով կատարվել է նաև 16 պլանային կրկնայց մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններ: Մնացած 23 այցերը կատարվել են ըստ անհրաժեշտության: Այցեր են իրականացվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր գործող Բռնությունների կանխարգելման փորձագիտական խորհրդի (այսուհետ՝ Փորձագիտական խորհուրդ) կողմից⁷²⁸. 2015 թվականի ընթացքում կատարել է թվով 78 այց ՀՀ քրեակատարողական հիմնարկներ, ՀՀ ոստիկանության բաժիններ և ձերբակալված անձանց պահելու վայրեր (այսուհետ՝ ՁՊՎ):

2015 թվականի պլանային այցերը նպատակաուղղված են եղել դիտարկվող հաստատություններում առկա խնդիրների վերհանմանը և դրանց արդյունավետ լուծումներ գտնելու հնարավորությունների ուսումնասիրմանն ու կարգավորմանը: Իրականացված պլանային և արտապլանային այցերի ընթացքում արձանագրված խնդիրների, դրանց արդյունավետ լուծումների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել են քննարկումներ⁷²⁹, ԲԿԱՄ փորձագետներն առաջարկություններ են ներկայացրել նաև ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարման վերաբերյալ և ներկայումս իրականացվում են աշխատանքներ դրանց իրագործման ուղղությամբ (որոշ առաջարկներն ընդունվել են և կատարվել են համապատասխան փոփոխություններ): Բացի այդ, կատարած այցերի վերաբերյալ պատկան մարմիններին ուղարկվել են գրություններ՝ տեղեկացնելով ոլորտում առկա խնդիրների, ինչպես նաև դրանց հնարավոր լուծման տարբերակների վերաբերյալ:

⁷²⁸ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանը, խորհրդատվական օգնություն ստանալու նպատակով, կարող է ստեղծել փորձագիտական խորհուրդներ՝ կազմված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձանցից:

⁷²⁹ Համակարգային խնդիրների լուծման նպատակով աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են մի շարք հարցեր, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց պահման պայմաններին, բժշկական սպասարկման կազմակերպմանը, արտաքին զննության պատշաճ իրականացմանը վերաբերող խնդիրներ, ինչպես նաև ազատագրված անձանց իրավունքներին առնչվող հիմնահարցեր: Համակարգային խնդիրների լուծման նպատակով աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ են տեղի ունեցել նաև ՀՀ ԿԱ ոստիկանության ներկայացուցիչների հետ, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերի պահման, սանիտարահիգիենիկ պայմանների, տրամադրվող սննդի, իրականացվող արտաքին զննության հարցերին, ինչպես նաև կարևորվել է քաղաքացիների իրավունքների ու ազատությունների մասին իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը:

ԲԿԱՍ փորձագետների աշխատանքները հիմնականում չեն խոչընդոտվել, խոչընդոտ է արձանագրվել ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գտնվող հատուկ հանրակրթական դպրոցում, երբ արգելվել է ԲԿԱՍ փորձագետների մուտքը դպրոց: Կատարվածի մասին տեղեկացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարը. տրվել է նմանատիպ դեպքերն այսուհետ բացառելու հանձնարարական:

ԲԿԱՍ փորձագետների իրականացրած մշտադիտարկումների արդյունքում արձանագրված խնդիրները, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումները, ինչպես նաև առանձին խնդրահարույց դեպքերը ներկայացված են զեկույցում:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐ

2015 թվականի ընթացքում ԲԿԱՍ փորձագետներն այցելություններ են կատարել քրեակատարողական հիմնարկներ: Երկրորդ կիսամյակի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում կրկնակի այցերով մշտադիտարկումներ են իրականացրել նաև Փորձագիտական խորհրդի անդամները⁷³⁰:

Արձանագրված խնդիրներ

- Պահման և սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ, գերբնակեցում, անհավասարաչափ տեղաբաշխում խցերում,

⁷³⁰ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 10.04.2015թ., կրկնայց՝ 06.07.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Հրագրան» քրեակատարողական հիմնարկ՝ 15.04.2015թ., կրկնայց՝ 08.07.2015թ. և 26.10.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ՝ 20.04.2015թ., կրկնայց՝ 10.06.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ՝ 29.04.2015թ., կրկնայց՝ 07.10.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ՝ 07.05.2015թ., կրկնայց՝ 07.07.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ՝ 12.05.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ՝ 2015թ. մայիսի 19-20, կրկնայց՝ 09.11.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկ՝ 25.05.2015թ., կրկնայց՝ 14.10.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկ՝ 29.05.2015թ., կրկնայց՝ 12.06.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ՝ 2015թ. հունիսի 3-ին, 5-ին և 24-ին, կրկնայց՝ 11.11.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկ՝ 06.07.2015թ., կրկնայց՝ 08.10.2015թ.

ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկ՝ 2015թ. հուլիսի 27-28, կրկնայց՝ 25, 26.10.2015թ.

- Ջրոսանքի և լոգանքի ոչ պատշաճ կազմակերպում,
- «Տեղափոխում պատժախուց» տույժի մասին որոշումներ կայացնելու գործընթացի, պատժախցերի ոչ բավարար սանիտարահիգիենիկ պայմանների և զրոսանքի ոչ պատշաճ կազմակերպման խնդիրներ,
- Մննդամթերքի որակի, պատրաստվող կերակրատեսակների բազմազանության, քրոնիկ հիվանդություններով տառապող և բուժական հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց տրամադրվող սննդի, ինչպես նաև որոշ քրեակատարողական հիմնարկների խոհանոցների և ճաշարանների ոչ բարվոք պայմանների հետ կապված խնդիրներ,
- Որոշ քրեակատարողական հիմնարկներում հանձնուքների ընդունման տեխնիկական հագեցվածության ոչ բավարար պայմաններ,
- Զբաղվածության ապահովման, ինչպես նաև արտաքին աշխարհի հետ կապ հաստատելու խնդիրներ,
- Կարանտինային բաժանմունքներում պահման և սանիտարահիգիենիկ անբավարար պայմաններ, որոշ քրեակատարողական հիմնարկներում կարանտինային բաժանմունքների բացակայություն,
- Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց վերաբերող խնդիրներ,
- Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման խնդիրներ,
- Որոշ քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների ոչ բավարար աշխատանքային պայմաններ,
- Օրենսդրական կարգավորման ոլորտի խնդիրներ:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գերբնակեցում, անհավասարաչափ տեղաբաշխում խցերում

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի պահանջների համաձայն՝ ձերբակալված, կալանավորված, դատապարտված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար:

ԽԿԿ-ն 2-րդ ընդհանուր հաշվետվության մեջ փաստել է, որ բանտերում նախատեսվածից ավելի մեծ թվով բանտարկյալներ պահելու անհրաժեշտությունը ծայրահեղ վատ է ազդում այնտեղ մատուցվող բոլոր ծառայությունների և իրականացվող միջոցառումների վրա. զգալիորեն նվազեցնում է բանտերում կյանքի ընդհանուր մակարդակը: Ավելին, բանտի կամ նրա որևէ մասի գերբնակեցման աստիճանը ֆիզիկական առումով ինքնըստինքյան կարող է լինել անմարդկային կամ

նվաստացուցիչ (տե՛ս CPT/Inf(92)3, կետ 46):

Ընդ որում, Կոմիտեն ընդգծել է բանտերի գերբնակեցման և բանտարկյալների թվի աճի մասին Նախարարների կոմիտեի թիվ R (99) 22 հանձնարարականի կատարման կարևորությունը և հույս հայտնել, որ հանձնարարականում շարադրված սկզբունքները կկիրառվեն անդամ պետությունների կողմից:

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում անդրադարձ էր կատարվել ՀՀ արդարադատության նախարարության բոլոր քրեակատարողական հիմնարկների գերբնակեցման խնդրին, որոնցից ամենացայտուն օրինակը ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկն էր: Չեկույցում անդրադարձ էր կատարվել նաև ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նույն խցում պահվողների՝ առկա մահճակալների վրա հերթով քնելուն, կացարանի փոքր լինելուն և հակահիգիենիկ պայմաններին:

Քրեակատարողական հիմնարկներում շարունակում է չլուծված մնալ ոչ պատշաճ պահման պայմանների խնդիրը, այդ թվում՝ գերբնակեցում, անբավարար սանիտարահիգիենիկ և նյութակենցաղային պայմանները: Այսպես, քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի ընթացքում ԲԿԱՄ փորձագետներն ակնատես են եղել որոշ խցերում աղտոտվածության, վատ սանիտարահիգիենիկ պայմանների, ինչպես նաև կալանավորված անձանց և դատապարտյալների ոչ հավասարաչափ բնակեցման դեպքերի: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում կային խցեր, որտեղ տեղադրված էին 11 կամ 12-ական մահճակալներ, մինչդեռ՝ այնտեղ բնակվել են 16 հոգի⁷³¹: Արդյունքում, ազատությունից զրկված անձինք ստիպված են եղել քնել հերթափոխով. այցի պահին ազատությունից զրկված որոշ անձինք (թվով 5-6 հոգի) քնած են եղել: Միաժամանակ մի շարք այլ խցերում տեղաբաշխված ազատությունից զրկված անձանց թիվը խիստ նվազ է եղել (օրինակ՝ թիվ 17 խցում՝ 6 հոգի, թիվ 25 խցում՝ 9 հոգի և այլն): Խցերի անհավասարաչափ տեղաբաշխման խնդիր արձանագրվել է նաև գերբնակեցում չունեցող քրեակատարողական հիմնարկներում, որի արդյունքում կրկին չի պահպանվել ՀՀ օրենսդրությամբ ամրագրված ազատությունից զրկված մեկ անձին հատկացվող բնակելի տարածության չափը: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում այցի պահին գերբնակեցում չի արձանագրվել (լրակազմ՝ 245, փաստացի բնակվող՝ 195), սակայն ակնհայտ էր խցերում ոչ հավասարաչափ բաշխումը. այսպես, 16 քառակուսի մետր մակերես ունեցող խցերից մեկում 6 հոգի էր տեղաբաշխված, իսկ մեկ այլ 16 քառակուսի մետր խցում՝ 4, մյուսում՝ 2: ԲԿԱՄ փորձագետների դիտարկմամբ խցերում ազատությունից

⁷³¹ Նման իրավիճակ արձանագրվել է թիվ 15 և 16 խցերում:

զրկված անձանց անհավասարաչափ բաշխումը ոչ միշտ է պայմանավորված եղել օրենսդրությամբ սահմանված պահանջներով կամ անվտանգության, կամ համակեցության նկատառումներով:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի վերաբերյալ կայացված վճիռներով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) 3-րդ հոդվածի խախտում է արձանագրվել Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի⁷³², Կարապետյանն ընդդեմ Հայաստանի⁷³³ գործերով անձնական նվազագույն տարածքի բացակայության, մենախցի հակահիգիենիկ պայմանների, բնական լույսի և քնելու հարմարանքների բացակայության և հակասանիտարական գուգարանի առկայության պատճառով:

ԲԿԱՄ փորձագետները գերբնակեցում արձանագրել են նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում**, չնայած դատապարտյալներն ապահովված էին քնելու տեղերով (համապատասխանաբար լրակազմը՝ 373, փաստացի բնակվող՝ 402, լրակազմը՝ 640, իսկ այցի պահին փաստացի՝ 683 անձ):

2015 թվականի ընթացքում արձանագրվել է **ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի** բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների համար նախատեսված լրակազմի սակավաթիվ լինելու խնդիր: Այսպես, 03.06.2015 թվականի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ըստ լրակազմի բաց տեսակի ուղղիչ հիմնարկի համար սահմանված է 29 տեղ, բոլորը՝ համալրված (24.06.2015թ. այցի ժամանակ բաց ուղղիչ տեսակի հիմնարկում 1 տեղ արդեն ազատվել էր): Ըստ վարչակազմի՝ քրեակատարողական հիմնարկում պահվող դատապարտյալների մոտ 30%-ը ենթակա է տեղափոխման մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ, սակայն տեղ չլինելու պատճառով նրանց տեղափոխման հարցի քննարկումը հետաձգվում է, ինչը լրացուցիչ դժգոհություններ է առաջացնում դատապարտյալների շրջանում, հատկապես, որ սահմանափակվում է դատապարտյալների մի շարք իրավունքներ (օրինակ՝ աշխատանքային զբաղվածության, կարճաժամկետ մեկնումների հնարավորությունները և այլն):

ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում այցի պահին (07.05.2015թ.) գերբնակեցում կար կալանավորված անձանց (34 անձանց համար նախատեսված լրակազմի դեպքում փաստացի պահվում էր 67-ը) և կիսաբաց ուղղիչ հիմնարկում պահվող դատապարտյալների (70 անձանց համար նախատեսված լրակազմի դեպքում փաստացի պահվում էր 137 դատապարտյալ) համար նախատեսված մասնաշենքերում:

⁷³² ՄԻԵԴ, 02/12/2008, Կիրակոսյանն ընդդեմ Հայաստանի /Kirakosyan v. Armenia/, դիմում թիվ 31237/03, 40-59 կետեր:

⁷³³ ՄԻԵԴ, 27/10/2009, Կարապետյանն ընդդեմ Հայաստանի /Karapetyan v. Armenia/, դիմում թիվ 22387/05, 33-47 կետեր:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրված պաշտոնական տվյալների համաձայն՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց թվաքանակի և սահմանված լրակազմը հետևյալ պատկերն ունի (գերբնակեցված քրեակատարողական հիմնարկներն ընդգծված են)՝

Քրեակատարողական հիմնարկ	Ընդհանուր լրակազմ	Կալանավորված անձանց լրակազմ	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
			փաստացի	կալանի
«Նուբարաշեն»	820	550	942	750
«Վարդաշեն»	339	34	261	58
«Դատապարտյալներ ի հիվանդանոց»	464	6	145	27
«Վանաձոր»	245	80	202	43
«Արթիկ»	373	50	378	43
«Սևան»	548	չունի	499	-
«Կոշ»	640	չունի	595	-
«Արովյան»	265	100	182	55
«Հրազդան»	215	հարցման ժամանակահատվածում նախատեսված չի եղել	186	-
«Գորիս»	215	35	72	21
«Երևան-Կենտրոն»	60	45	47	41
«Արմավիր»	400	40	364	76
ԸՆԴԱՄԵՆԸ	4584	940	3873	1114

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում կալանավորված անձանց կամ դատապարտյալների տեղաբաշխումն ըստ խցերի կատարվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 68-րդ և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածների պահանջների համաձայն՝ հաշվի առնելով կալանավորված անձանց ու դատապարտյալների համակեցության և անվտանգության ապահովման նկատառումները:

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի բաց տիպի ուղղիչ հիմնարկի դատապարտյալների լրակազմի քանակի ավելացումը կախված է հիմնարկի տեխնիկական հնարավորություններից, մասնավորապես՝ այն կարող է ավելացվել նոր մասնաշենքի կառուցման դեպքում, որի համար, ըստ նախնական մոտավոր հաշվարկների, անհրաժեշտ կլինի մոտ 180 միլիոն ՀՀ դրամ, ուստի խնդրին հնարավոր կլինի անդրադառնալ համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Չնայած նշված հանգամանքին՝ 2015 թվականին ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի բաց տիպի ուղղիչ հիմնարկի դատապարտյալների լրակազմի քանակը 2014թ. համեմատությամբ ավելացվել է 15-ով:

Քրեակատարողական հիմնարկներում գերբնակեցման խնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը գրությամբ տեղեկացրել է, որ գերբեռնվածության խնդիրը մշտապես գտնվել է ծառայության ղեկավարության ուշադրության կենտրոնում, որի վերացման նպատակով իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ: 2015 թվականի դեկտեմբերի 15-ին ամբողջությամբ շահագործման են հանձնվել ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի ևս 4 մասնաշենքերը, որոնք հնարավորություն են ընձեռում քրեակատարողական հիմնարկում սահմանել ևս 800 անձի համար նախատեսված լրակազմ: 2014 թվականից մինչ օրս ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում սահմանված էր առավելագույնը 400 անձ պահելու համար նախատեսված լրակազմ:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի լրակազմն ամբողջությամբ 1200 անձի համար սահմանելու և այն համալրելու պարագայում կարելի է լուծված համարել անազատության մեջ պահվող անձանց ամենօրյա զբոսանքն ապահովելու և գերբնակեցվածության խնդիրները: ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավորվածներին պահելու վայրի գերբեռնվածությունը նվազեցնելու, Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերում տեղակայված վարույթն իրականացնող մարմինների գործունեությունն անհարկի չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով՝ 2015 թվականի մայիսի փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրամանում՝ ՀՀ արդարադատության

նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում սահմանելով կալանավորված անձանց պահելու վայր՝ 40 լրակազմով: Մշակվել է «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2012 թվականի փետրվարի 28-ի թիվ 30-Ն հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի նախագիծը, ըստ որի՝ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում նախատեսվում է սահմանել կալանավորված անձանց պահելու վայրի ևս 160 լրակազմ՝ թվաքանակը հասցնելով 200-ի: Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում տեղակայված վարույթն իրականացնող մարմինների գործունեությունն անհարկի չծանրաբեռնելու նկատառումներից ելնելով՝ 2016 թվականի առաջին եռամսյակին ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում նախատեսվել է սահմանել կալանավորված անձանց պահելու վայր՝ 80 լրակազմով, ինչը ևս նախկինում առկա չի եղել: Գերբնակեցման նվազեցմանն ուղղված հիշյալ իրավական-կազմակերպչական նախաձեռնության արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց պահելու վայրում գերբեռնվածություն այլևս առկա չի լինի: Բացի այդ, քրեակատարողական վարչության պետի մի շարք հրամաններով և հանձնարարականներով կանոնակարգվել են նաև կալանավորված անձանց և դատապարտյալների պահելու պայմանների չկանոնակարգված ոլորտները, ուժեղացվել է հսկողությունն օրենսդրության պահանջների պատշաճ պահպանման ուղղությամբ:

Քրեակատարողական հիմնարկում պահվող օտարերկրացիները

Միավորված ազգերի կազմակերպության փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից (այսուհետ՝ ՄԱՓԳՀ) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնել էին, որ ՄԱՓԳՀ ներկայացուցիչներն այցելել ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորների, ովքեր Աֆղանստանի Իսլամական Հանրապետության քաղաքացիներ են: ՄԱՓԳՀ ներկայացուցիչների հավաստմամբ՝ վերջիններս առանձնազրույցի ընթացքում գանգատվել են իրենց պահման պայմաններից և խցի սանիտարահիգիենիկ ոչ պատշաճ վիճակից:

Վերոգրյալի կապակցությամբ լրացուցիչ պարզաբանումներ ստանալու և խնդրին տեղում ծանոթանալու նպատակով ԲԿԱՄ փորձագետները 2015 թվականի դեկտեմբերի 4-ին և 9-ին այցելել են ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ, ծանոթացել թիվ «009» և թիվ «014» խցերում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների պահման պայմաններին և արձանագրել հետևյալ խնդիրները.

- նշված խցերում կալանավորված անձինք և դատապարտյալները պահվում են

միասին⁷³⁴:

- Նշված խցերը գերբեռնված են. թիվ «014» խցում, որը մոտ **25 քառակուսի մետր** տարածք ունի և որտեղ գործող օրենսդրության համաձայն կարող է պահվել **առավելագույնը 6 անձ, պահվում է՝ 15-ը**, իսկ մոտ 30 քառակուսի մետր տարածք ունեցող թիվ «009» խցում փաստացի բնակվում էր **12 անձ**:

- Խցերում մահճակալների քանակը չի համապատասխանում այնտեղ բնակվող անձանց քանակին: Այսպես, թիվ «009» խցում նախատեսված է **11 մահճակալ 15 հոգու համար**, իսկ թիվ «014» խցում՝ **9 մահճակալ 12 հոգու համար**: Արդյունքում, կալանավորված անձինք և դատապարտյալները քնում են հերթափոխով⁷³⁵:

- Խցերում պահպանված չեն սանիտարահիգիենիկ նորմերը (սանհանգույցը, անկողնու սպիտակեղենը կեղտոտ էին), ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ջրամատակարարումը շուրջօրյա չէ, այն իրականացվում է ժամանակացույցով:

Հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկներում պահվող օտարերկրացիների խնդիրներին, այդ թվում՝ գերբնակեցման և նյութակենցաղային պայմաններին, անդրադարձ է կատարվել նաև ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում:

Նկատի ունենալով նկարագրված իրավիճակը, հաշվի առնելով կալանավորված անձանց և դատապարտյալների անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող պայմաններում պահելու արգելքը՝ Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ արդարադատության նախարարին խնդրել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի թիվ «009» և թիվ «014» խցերում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների խախտումները վերացնելու ուղղությամբ:

⁷³⁴ Խախտվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին պարբերության 7-րդ կետի պահանջը՝ կալանավորված անձինք կալանավորվածներին պահելու վայրերում պահվում են անջատ՝ (...) դատապարտյալները և ձերբակալված անձինք՝ մյուսներից (...): Ընդ որում՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի № 1 ցուցումի 1-ին կետի համաձայն խցերում տեղաբաշխումները պետք է կատարել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ և Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածների պահանջներին համապատասխան (...):

⁷³⁵ Խախտվել են «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 75-րդ հոդվածի պահանջները, որոնց համաձայն՝ ձերբակալված, կալանավորված, դատապարտված անձանց տրամադրվում են քնելու անհատական տեղ և անկողնային պարագաներ:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ «(...) պետությունը պետք է ապահովի անձի պահման այնպիսի պայմաններ, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվության հետ, պետք է երաշխավորվի, որ պատժի կրման ձևն ու եղանակը չեն ենթարկում նրան անհանգստության կամ զրկանքի այնպիսի չափով, որը գերազանցում է ազատագրվման մեջ գտնվելու վիճակին ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը (...)»(տե՛ս Vladimir Belyayev v. Russia վճիռը, գանգատ թիվ 9967/06, կետ 27, ինչպես նաև Kudła v. Poland վճիռը, գանգատ թիվ 30210/96, կետ 94):

Նշվածի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության որոշ քրեակատարողական հիմնարկներում, այդ թվում նաև՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, մինչ օրս առկա է գերբեռնվածության խնդիր, որի լուծման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունը ձեռնարկել և ձեռնարկում է համապատասխան միջոցներ:

Միաժամանակ տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի վարչակազմին հանձնարարվել է միջոցներ ձեռնարկել թիվ 009 և 014 խցերում առկա թերությունները վերացնելու, մասնավորապես՝ սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու ուղղությամբ: Դատապարտյալներին և կալանավորված անձանց տրամադրվում են համապատասխան նյութեր ու պարագաներ՝ խցերում սանիտարահիգիենիկ պայմանների պահպանումը ապահովելու նպատակով: Հիմնարկն ունի լվացքատուն, որը շահագործվում է, իսկ ջրամատակարարումն իրականացվում է ջրամատակարար կազմակերպության կողմից սահմանված ժամանակացույցով՝ օրվա ընթացքում 12-24 ժամ տևողությամբ:

Նշվել է նաև, որ 2015 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ Մարդու իրավունքների պաշտպանի գրության մեջ նշված բոլոր թերություններն ու խախտումները վերացված են:

Սանիտարահիգիենիկ և պահման ընդհանուր պայմաններ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 73-րդ հոդվածի համաձայն՝ ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը:

Եվրոպական բանտային կանոնների⁷³⁶ 19.1-րդ կետի համաձայն՝ անազատության մեջ պահելու վայրերի տարածքները պետք է մշտապես պահվեն մաքուր և պատշաճ վիճակում:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի № 1 ցուցումի 4-րդ կետի համաձայն՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի պետերին ցուցում է տրվել պատշաճ հսկողություն սահմանել քրեակատարողական հիմնարկներում տարվող սանիտարական աշխատանքների կատարման նկատմամբ, հատկապես ամռան շոգ ամիսներին առանձնակի ուշադրություն դարձնել խցերում սանիտարահիգիենիկ պայմաններին, կատարել ախտահանիչ աշխատանքներ՝ բացառելով աղտոտվածությունը և

⁷³⁶ Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «Եվրոպական բանտային կանոնների մասին»

գարշահոտությունը:

Թե 2014 և թե 2015 թվականներին **ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում** կատարված այցերի ընթացքում դատապարտյալներն ու կալանավորված անձինք գանգատվել են խցերում առկա միջատներից, իսկ ԲԿԱՄ փորձագետներն ակնատես են եղել նաև դատապարտյալների ու կալանավորված անձանց՝ ձեռքերի և ոտքերի վրա բազմաթիվ խայթոցների հետքերի: Թեև ձեռնարկվում են միջոցներ նշված խնդրի լուծման ուղղությամբ (դեզինսեկցիոն աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների հաճախակի այցեր քրեակատարողական հիմնարկ, հատուկ դեղանյութերի օգտագործում), սակայն դրանք, ըստ էության, արդյունավետ չեն: Նույնը վերաբերում է նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի** հոգեբուժական բաժանմունքին, ինչպես նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներին:**

Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ սկսած 2015 թվականի սկզբից բոլոր քրեակատարողական հիմնարկներում պարբերաբար իրականացվել են սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային բազմաբնույթ գործողություններ: Մասնավորապես՝ «Երևանի կանխարգելիչ ախտահանում» փակ բաժնետիրական ընկերության մասնագետները սահմանված չափորոշիչներին համապատասխան պարբերաբար իրականացրել են քրեակատարողական հիմնարկների խոհանոցների, բուժմասերի ախտահանման (դեզինֆեկցիոն) աշխատանքներ: Նշված աշխատանքների իրականացմանը զուգահեռ հիմնարկների ճաշարաններում, խոհանոցներում և բուժմասերում պարբերաբար կատարվում են նաև միջատների վերացմանն ուղղված ախտահանման աշխատանքներ: Բացի այդ, քրեակատարողական հիմնարկների ամբողջ տարածքում միջատների վերացմանն ուղղված աշխատանքները կազմակերպելու նպատակով նախատեսվում է առաջիկայում «Երևանի կանխարգելիչ ախտահանում» ՓԲԸ-ի հետ կնքել նոր պայմանագիր: Այս հարցը քննարկվել է նաև քրեակատարողական վարչության աշխատակիցների հետ հանդիպման ընթացքում և պարզ է դարձել, որ ՀՀ վարչապետին գրություն է ուղարկվել նշված գործընթացի համար միջոցներ տրամադրելու թույլտվության համար: Նշվել է նաև, որ որոշ քրեակատարողական հիմնարկներում դա անիմաստ է, քանի որ շինությունները հին են:

Առանձին խնդիր է նաև քրեակատարողական հիմնարկներում պահման ընդհանուր պայմանները⁷³⁷: Այսպես, **ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկների** շենքերը բավականին խոնավ են, ընդհանուր ջրահեռացման խողովակները և համակարգը՝

⁷³⁷ Փորձագիտական խորհրդի կողմից իրականացված այցերի ընթացքում պարզվել է, որ որոշ ՁՊՎ-ներում դեռևս կան օդափոխության կազմակերպման և պատշաճ լուսավորության ապահովման հետ կապված խնդիրներ:

հին: **ՀՀ արդարադատության նախարարության «Հրագրան» քրեակատարողական հիմնարկում** լոգարանային հատվածներում առաստաղները խոնավացած (նույնիսկ թաց) են: Քրեակատարողական հիմնարկը մշտական ջուր չունի: Բուժսենյակում այցի պահին ցուրտ էր, սանհանգույցը՝ կեղտոտ, առանց էլեկտրական լուսավորության, չկար հոսանքի անջատիչ:

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկներում բոլոր խցերի սանհանգույցների օդափոխության համակարգերն այցի պահին պատշաճ չէին աշխատում, ինչի վերաբերյալ վարչակազմի ներկայացուցիչները նույնպես բողոքներ էին ներկայացնում⁷³⁸:

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում շարունակում է չլուծված մնալ կոյուղու հարցը:

Խիստ մտահոգիչ է Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղում տեղակայված **ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկի** պահման պայմանները: Շինությունը մասնակի վերանորոգվել է դատապարտյալների միջոցով: Այցի պահին սենյակները դռներ չունեին, դրանց փոխարինում էր փայտին ամրացված ցանցը և կտորից վարագույրը: Սենյակներից մեկի հատակը ցեմենտապատ էր, իսկ մյուսինը՝ ծածկված լինուլեումով : Պատուհաններին կային բազմաթիվ ձեղքեր: Սենյակները ցուրտ եղանակներին ջեռուցվում են փայտե վառարաններով, ընդ որում՝ փայտն անտառներից հավաքում են դատապարտյալները: Արտաքնոցը գտնվում է կիսապատ փայտե տնակում, որը կառուցել էին դատապարտյալները: Լոգարանը հարմարեցված էր կիսաքանդված շինությունում, առանց դռան: Շինության կիսաքանդ տանիքում տեղադրված էր ջրի համար նախատեսված մետաղե տարա, որը տաքանում է արևի օգնությամբ: Լվացքը արվում է ձեռքով՝ սուղ ջրով: Տեղամասում ջուր չկա, այն բերվում է 7-8 կմ հեռավորությունից տարաներով կամ հատուկ բեռնատար մեքենայով: Ջրի տարաները մամռապատ էին և ազատազրկված անձանց հավաստմամբ՝ ջուրը խմելուց առաջ անց է կացվում ինքնաշեն մաղով:

⁷³⁸ Հատկանշական է, որ ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում անդրադարձել էր ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի նյութակենցաղային պայմաններում պահվող ցմահ ազատազրկման դատապարտված երեք անձանց պահելու պայմաններին. «...նրանց խցերը փոքր էին՝ ընդամենը 6 քառակուսի մետր մակերեսից ավելի և չափազանց նեղ էին (այսինքն՝ պատերի միջև տարածությունը 2 մետրից էլ քիչ էր): Ավելին, բնական լույսի հնարավորությունը սահմանափակ էր, և բացակայում էր արտաքին տեսարանը (քանի որ պատուհանները նայում էին պատին): Թիվ 20 և 21 խցերը գտնվում էին վերանորոգման և սանիտարահիգիենիկ համեմատաբար լավ վիճակում, սակայն թիվ 18 խուցը կեղտոտ էր, մկներով լեցուն և ջրի ծորակը կտրված էր՝ ջրի անընդհատ հոսքով»: Անդրադարձ է կատարվել նաև ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի սանիտարահիգիենիկ ակնհայտորեն անբավարար պայմաններին. «...ընդհանուր զուգարանը բաղկացած էր 35 զուգարանախցերից, որոնք կեղտոտ էին և չէր ապահովում բավարար առանձնություն: Ավելին, լոգասենյակը քանդված էր, որից հնարավոր էր օգտվել լավագույնը երկու շաբաթը մեկ անգամ»:

Դատապարտյալները նշված վատ պայմանների պատճառով ցանկություն էին հայտնում տեղափոխվել ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ և պահվել փակ խցային պայմաններում. վերջիններս այդ մասին գրավոր դիմում էին ներկայացրել, սակայն վարչակազմը հրաժարվել էր ընդունել դրանք⁷³⁹:

Քրեակատարողական հիմնարկներում վերանորոգման աշխատանքներ նախաձեռնելու վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ 2015 թվականի ընթացքում իրականացվել են բազմաթիվ և բազմաբնույթ շինարարական աշխատանքներ բոլոր քրեակատարողական հիմնարկների բնակելի տեղամասերում, կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներում, բուժմասերում, ճաշարաններում, սանհանգույցներում, արտաքին արգելագոտու պարագծում և կարևորություն ներկայացնող այլ տեղամասերում: Մեկնարկել է քրեակատարողական վարչության և «Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության» հիմնադրամի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում էներգախնայողության ծրագիրը, որի արդյունքում կլուծվեն կալանավորված անձանց և դատապարտյալների բնակելի տեղամասերի լուսավորության, սենյակների ջեռուցման, տանիքների ջրամեկուսացման, ինչպես նաև պատշաճ սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման հարցերը:

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է նաև, որ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում վերանորոգվել են վարչական մասնաշենքի միջանցքը և մի շարք աշխատասենյակներ, բնակելի գոտու թերապևտիկ բաժանմունքի ընդհանուր օգտագործման խոհանոցը և հիվանդասենյակը, վիրաբուժական բաժանմունքի վիրահատարանը, թոքախտաբանական բաժանմունքի մի շարք հիվանդասենյակներ: ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում կապիտալ վերանորոգվել է արտաքին ջրամատակարարման ցանցը: Վերանորոգվել է ներքին ջրամատակարարման ցանցը: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Սևան» քրեակատարողական հիմնարկների խոհանոցներում, իսկ «Սևան» քրեակատարողական հիմնարկում ավարտվել են արգելագոտու պարիսպի կառուցման աշխատանքները: ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում հիմնովին վերանորոգվել են երկու ջեռուցման կաթսաների մարտկոցները: Ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել բնակելի գոտու կացարաններում: Հարդարման աշխատանքներ են իրականացվել երկարատև

⁷³⁹ Խնդիրը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել է նաև «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում (տե՛ս էջ 422)

տեսակցության սենյակներում: Վերանորոգվել է ճաշարանի մասնաշենքի տանիքը: ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում հարդարման աշխատանքներ են իրականացվել հանրակացարաններում: Ընթացքի մեջ են սանհանգույցների վերանորոգման աշխատանքները: ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ամբողջովին վերանորոգվել է խոհանոցը, մասնակի վերանորոգվել են սանհանգույցները, արտաքին կոյուղու ցանցը և 2 դիտահոր: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում տեղակայված օժանդակ շինությունը վերանորոգվել և նոր աշխատասենյակներ են կառուցվել աշխատակիցների համար:

ԶԲՈՍԱՆՔ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը նախատեսում է դատապարտյալի հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի իրավունքը: Իսկ օրենսգրքի 78-րդ հոդվածը սահմանում է, որ դատապարտյալի զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում, բացի այդ՝ դատապարտյալի զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից: Օրենսգիրքը նաև ամրագրում է, որ դատապարտյալի նկատմամբ պատիժը կատարող հիմնարկի պետը, սահմանված կարգով, կարող է կիրառել խրախուսման միջոցներ, այդ թվում նաև՝ զբոսանքի ժամանակի մեկ ժամով ավելացում՝ մինչև մեկ ամիս ժամկետով (ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 58):

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է նաև, որ անչափահաս դատապարտյալն օգտվում է առնվազն երկու ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքի իրավունքից:

Թեև 2014 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի արդյունքում հրապարակված զեկույցի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետը զեկույցում նշված թերությունները վերացնելու նպատակով, ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի պետերին հանձնարարել է. «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել կալանավորված անձանց և դատապարտյալների ամենօրյա զբոսանքը», այնուամենայնիվ, կալանավորված անձանց և դատապարտյալների հետ ունեցած առանձնազրույցների ընթացքում ԲԿԱՄ փորձագետները պարզել են, որ զբոսանքի իրավունքը պատշաճ չի ապահովվում: Այսպես, ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել է, որ **ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում զբոսանքը կազմակերպվում է**

միայն աշխատանքային օրերին, շաբաթ-կիրակի օրերին հիմնականում զբոսանք չի կազմակերպվում: Զբոսանքի ոչ պատշաճ կազմակերպման պատճառ է նաև քրեակատարողական հիմնարկների աշխատակիցների ոչ բավարար քանակը: Հարկ է նշել, որ նշված խնդիրները բարձրացվել էին նաև ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի գեկույցում, որտեղ, մասնավորապես, նշված էր, որ. «...«Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում բացօթյա զբոսանքների հարցը ԽԿԿ-ի 2002 թվականի առաջին այցից ի վեր շարունակում էր մնալ չլուծված: Բացօթյա զբոսանքը մինչ այժմ չէր կազմակերպվում շաբաթ և կիրակի օրերին, հիմնականում անձնակազմի սակավաթիվ լինելու պատճառով, և քրեակատարողական հիմնարկում պահվող՝ հարցված անձանց մեծ մասը նշել էր, որ գործնականում նրանց թույլատրվում էր զբոսնել միայն մեկ անգամ՝ շաբաթական երեք անգամ զբոսանքի փոխարեն»:

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում զբոսանքից հրաժարման պատճառ կարող է լինել նաև խցերի գերբնակեցման արդյունքում ազատությունից զրկված անձանց հերթափոխով քնելու հանգամանքը:

2015 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է նաև բողոքներ այն մասին, որ դատապարտյալներին չեն ապահովում կլիմայական պայմաններին համապատասխան կոշիկներով, որի պատճառով վերջիններս խուսափում են դուրս գալ զբոսանքի:

Խնդրահարույց են նաև մատյաններում արձանագրված մեծ թվով ազատությունից զրկված անձանց՝ զբոսանքից միաժամանակյա հրաժարման դեպքերը, որոնք, սակայն, հաստատված չեն ստորագրությամբ կամ առկա է միայն խցակիցներից մեկի ստորագրությունը՝ բոլորի փոխարեն: Մի շարք դեպքերում էլ չեն նշվում զբոսանքից հրաժարված անձանց տվյալները (ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկներ): Ազատությունից զրկված որոշ անձինք նշել են նաև, որ տեղյակ չեն զբոսանքից հրաժարվելու դեպքում որևէ տեղ ստորագրելու անհրաժեշտության մասին, չնայած, ըստ մատյանի, զբոսանքից հրաժարվող բոլոր անձանց անունների դիմաց դրված էին ստորագրություններ:

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կիսաբաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալները փաստել են, որ զբոսանքի սահմանափակում չի լինում՝ հաշվի առնելով շինությունների կառուցվածքը և պահման հնարավորությունները. դատապարտյալներն ամբողջ օրվա ընթացքում ազատ շրջում են հանրակացարանային շենքի տարածքում: Մինչդեռ, քրեակատարողական հիմնարկի մեկուսարանում պահվող կալանավորված անձանց հետ զրույցներից պարզվել է, որ վերջիններիս տրամադրվում է առավելագույնը 20 րոպե տևողությամբ զբոսանք, քանի որ տվյալ մասնաշենքում բնակեցված է մոտ 20 խուց, զբոսաբակերն էլ ընդամենը 4-ն են: Հարկ է նշել, որ «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝

կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից: ԲԿԱՄ փորձագետների կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում չեն պահպանվել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի (այսուհետ՝ Ներքին կանոնակարգ) 9-րդ գլխի պահանջները (կետ 87), որոնց համաձայն՝ կալանավորվածներին պահելու վայրում կամ ուղղիչ հիմնարկում անչափահաս կալանավորված անձանց կամ դատապարտյալների համար նախատեսված զբոսանքի վայրերը պետք է հարմարեցված լինեն ֆիզիկական վարժությունների, զանազան խաղերով ու սպորտով զբաղվելու համար: Մինչդեռ, նման հարմարանքներ դրված են եղել քրեակատարողական հիմնարկի շենքում, այլ ոչ՝ զբոսանքի վայրերում:

Չնայած քրեակատարողական հիմնարկի փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում պահման պայմանները միմյանցից տարբերվում են հիմնականում զբոսանքի տրամադրման ժամային սահմանափակումներով (համապատասխանաբար առնվազն 1 և 3 ժամ) **ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկ** կատարած այցի ժամանակ ԲԿԱՄ փորձագետներն առանձնագրույցների ընթացքում պարզել են, որ խցերի դռները բացվում են առավոտյան ժամը 11:00-ին, իսկ փակվում՝ 16:00-ին: Ուստի, հարկ է նշել, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից դատապարտյալներին առավել երկար ժամանակով բացօթյա զբոսանքի տրամադրման նախաձեռնությունը դրական փոփոխություն է: Հարցազրույցի ենթարկված դատապարտվածները նշել են, որ զբոսանքի տրամադրման հետ կապված խնդիրներ չկան, նույնիսկ՝ շաբաթ, կիրակի կամ տոնական օրերին:

Խնդրահարույց է, որ **ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի** երկարատև տեսակցության սենյակների մասնաշենքի զբոսաբակ չունենալու պատճառով երկարատև տեսակցության այցելող հարազատները զբոսանքի դուրս գալու հնարավորություն չունեն:

ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի զբոսանքի տրամադրման մատյանների ուսումնասիրությունից պարզվել է, որ եղել է զբոսանքից հրաժարման դեպք, որի անվան դիմաց տարբեր օրերի, տարբեր ստորագրություններ էին դրված, իսկ քննարկման ժամանակ պարզ դարձավ, որ տվյալ անձը նախկին «զոն նայողն» է, ով համաձայն քրեական կանոնների՝ չէր կարող ստորագրել իր անվան դիմաց, թեև մշտապես օգտվել է զբոսնելու իր իրավունքից: Ակնհայտ էր, որ մատյանների լրացումը պատշաճ չէ և ձևական բնույթ է կրում:

Նշված խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ կատարված

ուսումնասիրությամբ պարզվել է, որ ինչպես ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում, այնպես էլ մյուս քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալներին զբոսանքը տրամադրվում է մշտապես՝ առնվազն մեկ ժամ տևողությամբ, ընդ որում, շաբաթ, կիրակի և տոնական օրերին նույնպես: Նշել է նաև, որ Ներքին կանոնակարգի 62-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը կամ դատապարտյալն իրավունք ունի հրաժարվելու զբոսանքից, ինչն անպայման արձանագրվում է համապատասխան մատյանում: Միաժամանակ տեղեկացրել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի կալանավորված անձանց պահելու վայրում առկա է մարզական գույքով կահավորված սենյակ, որտեղ կալանավորված անձինք և դատապարտյալները ցանկության դեպքում կարող են զբաղվել ֆիզիկական վարժություններով ու սպորտով:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության աշխատակիցները Պաշտպանի ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում նշել են, որ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում համապատասխան աշխատակիցների թվաքանակը բավարար չէ, սակայն միջոցներ են ձեռնարկվում օրենքով սահմանված կարգով զբոսանքն ապահովելու ուղղությամբ:

ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի վերաբերյալ տեղեկացվել է, որ երկարատև տեսակցությունների սենյակները տեղակայված են ռեժիմային գոտու և պահպանության ապահովման բաժնի միջև, այդ իսկ պատճառով երկարատև տեսակցության եկող հարազատների համար զբոսահրապարակ կառուցելն առանց լրացուցիչ նախագծային և շինարարական աշխատանքների ներկայումս անհնար է՝ հաշվի առնելով անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայությունը: Միաժամանակ տեղեկացվել է, որ ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 4 արձանագրությամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության քրեակատարողական ծառայության ենթակառուցվածքային բարեփոխումների հայեցակարգը, ըստ որի՝ դատախիզական բարեփոխումների շրջանակներում քրեակատարողական ծառայության համակարգային բարելավման խնդիրները մշտապես ընկալվել ու ընկալվում են որպես խիստ սկզբունքային և արդար դատաքննության ինստիտուտի կայացման կարևոր բաղադրատարր: Իրականացվող բարեփոխումների շրջանակներում քրեակատարողական ծառայության զարգացման ռազմավարական ծրագրերում ներառվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի զարգացման ծրագիրը, որը նախատեսում է կառուցել 800 լրակազմ ունեցող հիմնարկ: Այս հիմնարկի հիմնական խնդիրը կլինի հանրապետության հյուսիս-արևմտյան տարածաշրջանների համար կալանավորված անձանց պահելու գործառնության կատարումը: Բացի այդ, այն իր վրա կվերցնի քրեակատարողական ծառայության

կիսափակ և կիսաբաց ուղղիչ հիմնարկների ծանրաբեռնվածությունը: Այս քրեակատարողական հիմնարկի գործունեության համար անհրաժեշտ է ոչ թե կառուցել ամբողջությամբ նոր ենթակառուցվածքներ, այլ միայն ազատազրկվածների պահման նոր, սահմանված միջազգային նորմերին համապատասխան խցային տիպի շինություններ: Մնացած ենթակառուցվածքները, մասնակի վերանորոգվելով, մնում են շահագործման մեջ: Քրեակատարողական հիմնարկը լրիվությամբ զագաֆիկացվում է: Ծրագրի իրականացման արդյունքում կլուծվի նաև զբոսանքի համար նախատեսված տարածքների հարցը:

ՊԱՏՄԱԽՈՒՑ

Ներքին կանոնակարգը խախտելու, իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու համար կալանավորված անձանց, իսկ Ներքին կանոնակարգով սահմանված պատիժը կրելու կարգի և պայմանների խախտման համար դատապարտյալների նկատմամբ կարող է կիրառվել նաև տեղափոխում պատժախուց տույժը («Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 35-րդ և ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 59-րդ հոդվածներ):

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ պատժախցում գտնվելու ընթացքում կալանավորված անձինք անկողնային պարագաներով ապահովվում են քնի համար սահմանված ժամերին: Պատժախցում պահվող կալանավորված անձինք գտնվում են բժշկական հսկողության ներքո:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցաղային ապահովման պայմանները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Պատժախցում պահվող դատապարտյալը գտնվում է բժշկական հսկողության ներքո:

ԽԿԿ չափանիշների համաձայն. «Մեկուսի բանտարկության համար օգտագործվող խցերը պետք է համապատասխանեն այլ բանտարկյալների պահման պայմանների նվազագույն չափանիշներին: Այնպես որ, դրանք պետք է լինեն համապատասխան չափի, ունենան բնական լուսավորություն և սարքավորված լինեն արհեստական լուսավորմամբ (երկու դեպքում էլ լուսավորությունը պետք է բավարար լինի ընթերցանության համար), ինչպես նաև ունենան համապատասխան ջեռուցում և օդափոխություն: Դրանք պետք է ապահովված լինեն նաև բանտի աշխատակազմի հետ հաղորդակցվելու միջոցներով: Պետք է ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ, որպեսզի բանտարկյալները կարողանան իրենց բնական կարիքները հոգալ նորմալ պայմաններում օրվա ցանկացած ժամին, ինչպես

նաև ցնցող ընդունել, համենայնդեպս, նույնքան հաճախ, որքան և սովորական ռեժիմով ապրող բանտարկյալները»⁷⁴⁰:

ԽԿԿ չափանիշների համաձայն. «Տարածված գործելակերպ է, երբ մեկուսի բանտարկության մեջ գտնվող բանտարկյալների նկատմամբ որպես պատիժ հատկացվում է սահմանափակ քանակության կահույք, ինչն էլ հաճախ ամրացված է լինում հատակին: Մակայն նման խցերում նվազագույնը պետք է լինի սեղան, նորմալ նստելու տեղ ցերեկվա ժամերին (այսինքն՝ աթոռ կամ նստարան), նորմալ մահճակալ և անկողնային պարագաներ գիշերը»⁷⁴¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ «(...) պետությունը պետք է ապահովի անձի պահման այնպիսի պայմաններ, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվության հետ, պետք է երաշխավորվի, որ պատժի կրման ձևն ու եղանակը չեն ենթարկում նրան անհանգստության կամ զրկանքի՝ այնպիսի չափով, որը գերազանցում է ազատագրկման մեջ գտնվելու վիճակին ներհատուկ տառապանքի անխուսափելի աստիճանը (...)» (տե՛ս *Vladimir Belyayev v. Russia* վճիռը, գանգատ թիվ 9967/06, կետ 27, ինչպես նաև *Kudła v. Poland* վճիռը, գանգատ թիվ 30210/96, կետ 94):

Պատժախցերի սանիտարահիգիենիկ պայմաններ

Առավել խնդրահարույց է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պատժախցերի սանիտարահիգիենիկ պայմանները, քանի որ պատժախցերի առաստաղներից կաթում են վերևի հարկում տեղակայված խցերի սանհանգույցների կոյուղաջրերը, իսկ պատժախցերի սանհանգույցների կոյուղաջրերի հեռացման խնդրի պատճառով սանհանգույցների կոյուղաջրերը հոսում են միջանցք, որտեղ առկա են սանիտարահիգիենիկ անմխիթար պայմաններ: Պատժախցերից մեկում ծորակ չկար, խմելու ջուրը տրվում էր պոլիէթիլենային շշերով: Պատժախցերի բնական լուսավորությունը բավարար չէ, արհեստականը՝ թույլ, ջուրը՝ ոչ մշտական (սովորաբար տարաներով ջուր է հավաքվում): Մտահոգիչ է նաև պատժախցերի կահավորվածությունը (սեղաններ չկան, որպես աթոռ է ծառայում մահճակալների համար նախատեսված երկաթե հենակները):

ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում պատժախցերը գտնվում են նկուղային հարկում, դրանք շատ խոնավ են, շենքի կառուցվածքի պատճառով անձրևի ժամանակ անձրևաջրերը պատուհաններից լցվում են խցեր, քանի որ պատուհանները գետնափոր են: Միաժամանակ, այցի պահին ամբողջ շինության ջրի պոմպերը տեղակայված էին նկուղային տարածքում, կոյուղաջրերի խողովակները նույնպես անցնում էին ամբողջ նկուղային

⁷⁴⁰ Տե՛ս CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 58

⁷⁴¹ Տե՛ս CPT/Inf/E (2002) 1 - Rev. 2011, կետ 60

միջանցքների տարածքով: Այցի պահին որոշ խողովակներ վնասված էին և ջրերը հոսում էին միջանցք: Մշտադիտարկման ընթացքում սանհանգույցը բավականին կեղտոտ վիճակում էր⁷⁴²:

ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում նույնպես պատժախցերը խոնավ էին, պատերը բորբոսնած ու ծեփոնները՝ թափված: Սանհանգույցը նույնպես ոչ բավարար սանիտարահիգիենիկ և անմխիթար վիճակում էր:

Հարկ է նշել, որ Միացյալ Ազգերի Կազմակերպությունը, հղում կատարելով Համաշխարհային բժշկական ասոցիացիայի բանաձևում մատնանշված բժշկական էթիկայի միջազգային նորմերին և բժիշկների պարտականություններին, շեշտել է, որ «...ապացուցված է և որևէ կասկածի տեղիք չի տալիս այն հանգամանքը, որ ազատագրվածների պատժախցում մեկուսացումը վնաս է հասցնում վերջիններիս առողջությանը: Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ը գտնում է, որ պատժախուց տեղափոխումը որպես պատժամիջոց չպետք է կիրառվի, իսկ կիրառվելու դեպքում՝ պետք է տևի առավելագույն կարճ ժամանակ»⁷⁴³:

Այս առումով առավել խնդրահարույց է «Տեղափոխում պատժախուց» տույժի կիրառումը ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, հատկապես, որ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղափոխված կալանավորված անձինք և դատապարտյալներն ունեն բուժման կարիք, իսկ նշված քրեակատարողական հիմնարկի պատժախցերի պայմանները բավականին անմխիթար են և չեն համապատասխանում ԽԿԿ-ի կողմից սահմանված նվազագույն չափանիշներին: Խցերը հիմնականում վատ լուսավորված են, թե բնական և թե արհեստական օդափոխության համակարգերը մատչելի չեն, խցերը ջեռուցվում են անհատական էլեկտրական ջեռուցիչներով, որոնք, սակայն, ԲԿԱՄ փորձագետները ոչ բոլոր խցերում են տեսել: Խցերն ապահովված չեն աշխատակազմի հետ հաղորդակցվելու միջոցներով. հաղորդակցությունն իրականացվում է խցերի դռներին հարվածելու և բղավելու միջոցով: Կալանավորված անձինք և դատապարտյալները չունեն լոգանք ընդունելու հնարավորություն, քանի որ չկան անհրաժեշտ հարմարանքներ (խցում առկա միակ խողովակի ջուրը թափվում էր պատժախցում (մոտ 5 քառակուսի մետր տարածք) գտնվող առանց պատնեշի ասիական տիպի զուգարան, ընդ որում՝ խողովակից հոսող ջուրն օգտագործվում էր նաև որպես խմելու ջուր): Բացի այդ,

⁷⁴² ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի պատժախցի վատ պայմանների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բողոք է ստացել դատապարտյալի կողմից, ով նշել էր, որ իրեն, անձնական անվտանգության նկատառումներից ելնելով, պահում են պատժախցում, որի պայմանները անբարենպաստ են՝ գտնվում է գետնի մակերեսից երկու մետր ցածր, խոնավ է և առկա են միջատներ:

⁷⁴³ St 'u Medical Manual: Torture, Principles of Expertise According to the Istanbul Protocol; Medical and Mental/Psychological Outcomes; Treatment and Rehabilitation; Principles of Medical Ethics; International Standarts on Health in Prison, p. 10, 11

խցերում ջրամատակարարումը շուրջօրյա չէ, այն իրականացվում է ժամանակացույցով և անհրաժեշտության դեպքում ջուրը խուց բերվում է տարաներով: Կալանավորված անձանց և դատապարտյալների հետ զրույցներից պարզվել է նաև, որ վերջիններս տեղյակ չեն, որ պատժախցում գտնվելու ընթացքում ցնցուղ ընդունելու, զբոսնելու իրավունք ունեն:

Նշվածը հաշվի առնելով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է քննարկել «Տեղափոխում պատժախուց» տույժի կիրառման նպատակահարմարությունը ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում, քանի որ ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ հաստատված կարգի 68-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձինք և դատապարտյալները բուժական ուղղիչ հիմնարկ են ընդունվում բացառապես բժշկական ցուցումների հիման վրա, հետևաբար, ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղափոխված կալանավորված անձինք և դատապարտյալներն ունեն բուժման կարիք: ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ պետք է տեղափոխվեն կալանավորված անձինք և դատապարտյալները բացառապես առողջական խնդիրների լուծման նպատակով, ինչպես նաև ծանր առողջական խնդիրներ ունեցողները:

Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից, ի թիվս այլ տեղեկությունների, հայտնվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում պատժախցերի համար նախատեսված առանձին մասնաշենքը 2015 թվականի մայիսի 26-ից չի շահագործվում:

Բժիշկների մասնակցությունը՝ «Տեղափոխում պատժախուց» կարգապահական տույժի մասին որոշումներ կայացնելու գործընթացին

Խնդրին անդրադարձ էր կատարվել նաև «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում, իսկ ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում նույնպես կրկնել է իր առաջարկությունն այն մասին, որ անհրաժեշտ է վերանայել կարգապահական հարցերում բուժանձնակազմի դերակատարմանը վերաբերող՝ գործող իրավական կարգավորումներն ու պրակտիկան:

Թեև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ քրեակատարողական հիմնարկների բժիշկների մասնակցությունը՝ «Տեղափոխում պատժախուց» կարգապահական տույժի մասին որոշումներ կայացնելու գործընթացին, այնուամենայնիվ, ԲԿԱՄ փորձագետները 2015 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած ուսումնասիրությունների արդյունքում մշտապես արձանագրել են, որ պատժախուց տեղափոխելու մասին որոշումներ կայացնելիս քրեակատարողական հիմնարկների (ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան», «Արթիկ», «Կոշ», «Հրազդան», «Սևան», «Վարդաշեն», «Գորիս» քրեակատարողական հիմնարկներ) բժիշկները մասնակցում են վերոնշյալ որոշման կայացման գործընթացին, ինչը փաստվում է համապատասխան որոշման մեջ տույժի ենթարկվող անձի առողջական վիճակի մասին բժշկի գրառումով: Այսպիսով, բժիշկն իր գրառումներով («առողջական վիճակը բավարար է պատժախցում գտնվելու..., առողջական վիճակը բավարար է պատժախցում պատիժը կրել..., առողջական վիճակը թույլ է տալիս պահել պատժախցում..., առողջական ներկա վիճակը թույլ է տալիս պատիժը կրել պատժախցում..., կարող է տույժը կրել պատժախցում... և այլն») փաստացի մասնակցում է պատժի կիրառման վերաբերյալ որոշման կայացմանը, ինչը չի բխում ինչպես ՀՀ օրենսդրության պահանջներից, այնպես էլ՝ միջազգային չափանիշներից: Հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում «Տեղափոխում պատժախուց» կարգապահական տույժ նշանակելիս որոշման ձևաթուղթը քրեակատարողական հիմնարկի պետի նախաձեռնությամբ փոփոխվել էր և նշված որոշման ձևաթղթում վերացվել էր բժշկի կողմից նշումների կատարման համար նախկինում նախատեսված գրառման տեղը՝ կալանավորված անձանց և դատապարտյալների առողջական վիճակից ելնելով պատժախուց տեղափոխելու թույլատրելիության վերաբերյալ:

Այս խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ ուսումնասիրելով քրեակատարողական հիմնարկներում «Տեղափոխում պատժախուց» կարգապահական տույժի կիրառման առկա իրավակիրառ պրակտիկան, հայտնաբերված թերությունները և «Տեղափոխում պատժախուց» տույժի կիրառման նկատմամբ միասնական վարչարարություն կիրառելու նպատակով՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի կողմից 08.06.2015թ. թիվ 40/7.1-2458 հանձնարարականով բոլոր քրեակատարողական հիմնարկների պետերին հանձնարարվել է. «Քրեակատարողական հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների նկատմամբ «Տեղափոխում պատժախուց» տույժը կիրառելու մասին որոշման մեջ բացառել վերջիններիս առողջական վիճակի և տույժի կիրառման նպատակահարմարության վերաբերյալ բժշկի կարծիքն արձանագրելու պրակտիկան»: Հանձնարարականը կանոնակարգում է նաև պատժախուց փոխադրված կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ ամենօրյա բժշկական հսկողություն իրականացնելու բժշկի պարտավորությունը: Պատժախուց այցելության վերաբերյալ բժշկական

անձնակազմի կողմից կատարվում են գրառումներ համապատասխան մատյանում»:

Քրեակատարողական վարչության աշխատակիցները ԲԿԱՍ փորձագետների հետ տեղի ունեցած քննարկման ընթացքում հայտնեցին մատնանշված հարցին հետևողական լինելու պատրաստակամությունը:

Ջրասանքի կազմակերպումը՝ «Տեղափոխում պատժախուց» տույժի կիրառման դեպքում

ԽԿԿ-ի չափանիշների համաձայն. «48. Հատուկ պետք է նշել բացօթյա պայմաններում անցկացվող ժամանակի կարևորությունը: Ազատագրված անձանց ամենօրյա բացօթյա առնվազն մեկժամյա զբոսանքի պահանջն ամենուր ընդունված առաջնահերթ իրավունքի երաշխիք է (նախընտրելի է, որ սա կազմի միջոցառումների ավելի լայն ծրագրի մի մաս): ԽԿԿ-ն ցանկանում է շեշտել, որ բոլոր ազատագրված անձինք առանց բացառության (այդ թվում նաև խցերում որպես պատիժ մեկուսացվածները) պետք է ամեն օր հնարավորություն ունենան որոշ ժամանակ անցկացնել դրսում: Նմանապես ակնհայտ է, որ բացօթյա տարածքները պետք է լինեն բավարար չափսի և հնարավորինս պաշտպանված վատ եղանակից:

61. (բ) (...) Նրանք պետք է իրավունք ունենան օրական առնվազն մեկժամյա բացօթյա զբոսանք կատարել մեկուսի բանտարկությունում գտնվելու առաջին օրից սկսած և նրանց պետք է խթանել կատարելու նման զբոսանքներ»:

Հարկ է նշել, որ ԲԿԱՍ փորձագետներն այցերի ընթացքում հանդիպել են այնպիսի դեպքերի, երբ կալանավորված անձինք և դատապարտյալները նշել են, որ պատժախցում գտնվելու ընթացքում իրենց չի տրամադրվում զբոսանք (ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Սևան» քրեակատարողական հիմնարկներ):

Նշված երևույթի կապակցությամբ կրկին անդրադարձ է կատարվել ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում, որտեղ, մասնավորապես, նշված է. «...թեև պատժախուց տեղափոխված՝ ազատությունից զրկված անձինք ամեն օր օգտվում էին մեկժամյա բացօթյա զբոսանքի իրավունքից, այնուամենայնիվ, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված որոշ անձինք վստահեցրել էին, որ իրենց թույլ չի տրվել դուրս գալ բացօթյա զբոսանքի իրենց կարգապահական կալանքը կրելու ամբողջ ընթացքում: ԽԿԿ-ն առաջարկել է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի պատժախցերում պահվող՝ ազատությունից զրկված անձանց համար ապահովել ամեն օր առնվազն մեկժամյա բացօթյա զբոսանք»:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ առավելագույնը 24 ժամով ժամանակավոր մեկուսացման պահանջի խախտում

ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի «ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անվտանգության ապահովման կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 194-Ն հրամանով հաստատված կարգի 23-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ կարգապահական խախտման, դրա պայմանները վերացնելու անհրաժեշտության, կալանավորված անձի կամ դատապարտյալի համապատասխան դիմելու դեպքերում հիմնարկի պետի բացակայության ժամանակ անվտանգությունն ապահովող հերթապահ խմբի կամ հիմնարկի այլ ծառայողի գրավոր զեկուցագրի հիման վրա կալանավորված անձին կամ դատապարտյալին առավելագույնը 24 ժամով ժամանակավոր մեկուսացնում է մինչև հիմնարկի պետի ժամանելը՝ կազմելով համապատասխան արձանագրություն:

Մինչդեռ, ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են դեպք, երբ դատապարտյալը մեկուսացվել է ոչ թե՛ 24, այլ՝ 72 ժամով: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում պատժախցերից մեկում պահվում էր դատապարտյալ, ով մեկուսացվել էր մինչ քրեակատարողական հիմնարկի պետի ժամանումը: Մեկուսացման մասին արձանագրությունները կազմվել էր 3 օր անընդմեջ և միայն 4-րդ օրը՝ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կայացվել է «Տեղափոխում պատժախուց» կարգապահական տույժ (15 օր)՝ ժամկետը հաշվարկելով առաջին օրվա մեկուսացման արձանագրության տարեթվից: Խնդրահարույց է այն հանգամանքը, որ քրեակատարողական հիմնարկի պետը կարող էր «Տեղափոխում պատժախուց» կարգապահական տույժը կիրառել օրինակ 2 օրով կամ ընդհանրապես «Տեղափոխում պատժախուց» կարգապահական տույժ չկիրառել՝ սահմանափակվելով նկատողությամբ, մինչդեռ, դատապարտյալը փաստացի արդեն իսկ 3 օր պահվել էր մեկուսի՝ պատժախցում և սահմանափակվել է վերջինիս կապն արտաքին աշխարհի հետ:

ՄՆՈՒՆԴ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

Եվրոպական բանտային կանոնների 22.1-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկված անձանց պետք է տրամադրվի սննդարար սննդակարգ՝ հաշվի առնելով

նրանց տարիքը, առողջական և ֆիզիկական վիճակը, կրոնը, մշակույթը և աշխատանքի բնույթը:

Թեև 2014 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի արդյունքում հրապարակված զեկույցի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետը զեկույցում նշված թերությունները վերացնելու նպատակով, ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի պետերին հանձնարարել է⁷⁴⁴. *«Հատուկ ուշադրություն դարձնել կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվող սննդի որակի, պահման պայմանների, ինչպես նաև պատրաստվող ճաշերի բազմազանության վրա: Պատրաստված ճաշերի որակի ստուգումները և այդ մասին գրառումները կատարել սահմանված կարգով, բացառել ձևական, նախօրոք կատարվող գրառումները»*, այնուամենայնիվ դեռևս առկա են մի շարք խնդիրներ:

Սննդի որակը և դրանից հրաժարման դեպքեր

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դատապարտյալի՝ պատիժը կրելու ընթացքում օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով ապահովելու երաշխիքը լիարժեք չի իրականացվում, քանի որ ԲԿԱՄ փորձագետների կողմից այցերի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում գրանցվել են սննդամթերքի⁷⁴⁵ որակի, պատրաստվող ճաշերի բազմազանության, պատրաստի կերակրատեսակներից ոչ պատշաճ նմուշառում կատարելու հետ կապված խնդիրներ: Նույն խնդիրը շոշափվել է նաև «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում:

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում այցի ընթացքում ճաշի տրամադրման ժամանակ ԲԿԱՄ փորձագետներին ներկայացված ճաշատեսակները չեն համապատասխանել ճաշացանկին: Ըստ նույն ճաշացանկի՝ հաճախակի նախաճաշին տրամադրվում է շոգեխաշած կաղամբի թթու: Գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկների կալանավորված անձինք և դատապարտյալները նախաճաշից հիմնականում չեն օգտվում, առավոտյան վերցնում են միայն հացը: Չեն օգտվում նաև ընթրիքից: Քրեակատարողական հիմնարկներում պատրաստվող սննդի մեծ մասը չի սպառվում: Կալանավորված և դատապարտված անձինք նշում էին, որ սննդից չօգտվելու հիմնական պատճառներից մեկը սննդի անորակությունն է. բազմաթիվ

⁷⁴⁴ <http://ced.am/notice.html>

⁷⁴⁵ Փորձագիտական խորհրդի կողմից իրականացված այցերի ընթացքում պարզվել է, որ որոշ ՁՊՎ-ներում դեռևս խնդրահարույց է սննդի տրամադրման գործընթացը, ինչպես նաև կա խմելու ջրի մատչելիության խնդիր:

գանգատներ են եղել ճաշի յուղի որակի վերաբերյալ, որը առաջացնում է այրոցք:

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում դատապարտյալները նշում էին, որ հաճախ հացը կիսահում է, թաց խմորով: Ըստ դատապարտյալների՝ սննդից չեն օգտվում մոտ 90 տոկոսը: Դժգոհությունները պայմանավորված են եղել նաև սննդի միատեսակությամբ: Ըստ դատապարտյալների՝ հիմնականում իրենց տրվում է խաշած թթվեցրած կաղամբ և կարտոֆիլ, թարմ կամ սեզոնային սննդամթերք, որպես կանոն, չի տրամադրվում, իսկ միսը տրվում է հիմնականում շոգեխաշուկի տեսքով ճաշերի մեջ:

Ուսումնասիրվել է **ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի** ճաշացանկը երկշաբաթյա կտրվածքով. ճաշատեսակները եղել են կրկնվող, մսի տեսականի ընդհանրապես չկար, կար միայն մանր ձկան պահածո, որը տրամադրվում էր որպես կերակրալցուկ:

ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում պատրաստվելիք ճաշի քանակը որոշվում է նախորդ օրվա երեկոյան հարցումների հիման վրա, ճաշը պատրաստվում է խոհարարական մասնագիտացում ստացած դատապարտյալի կողմից:

ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձինք սննդի վերաբերյալ դժգոհություններ չեն հայտնել, հակառակը, նշում էին, որ նախորդ տարիների համեմատ սննդի որակը բավականին լավացել է: Այնուամենայնիվ, քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց մի մասը հիմնարկի սննդից չէր օգտվում՝ նշելով, որ հանձնույթներով ստացվող սննդով է սնվում:

Որպես դրական առաջընթաց կարելի է նշել **ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում** սնունդ ընդունողների մեծաքանակ լինելու հանգամանքը:

Նշենք, որ ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում անդրադարձել էր սննդի որակի խնդրին (նշում կար ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում սննդի վատորակության վերաբերյալ), ինչպես նաև առաջարկել ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկներում պահվող օտարերկրացիների կարիքների բավարարման համար անհրաժեշտ հատուկ սննդակարգեր մշակել, սակայն դեռևս նման սննդակարգեր մշակված չեն:

Քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող սննդի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ քրեակատարողական հիմնարկներում սննդի կազմակերպման աշխատանքներն առավել ռացիոնալ դարձնելու և դատապարտյալների սննդի որակի բարձրացման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 91-Լ հրամանով ուժեղացվել է հսկողությունը քրեակատարողական հիմնարկներում

պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինների, որակի, ինչպես նաև ճաշարանների և սննդամթերքի պահման վայրերի սանիտարահիգիենիկ վիճակի, օգտագործվող սպասքի մաքրության նկատմամբ: Բացի այդ, քրեակատարողական ծառայության նախաձեռնությամբ ՀՀ արդարադատության նախարարի 09.06.2015թ. թիվ 251-Ն հրամանով հաստատվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի հատկացման ճաշացուցակի, սննդի պահեստից դուրս գրման ենթակա սննդամթերքի ցանկի և սննդի քանակի ու որակի հսկողության կարգը և ձևերը:

ԲԿԱՍ փորձագետների հետ հանդիպման ընթացքում քրեակատարողական վարչության աշխատակիցները հայտնեցին, որ սննդի հետ կապված նախատեսվող բարեփոխումների նպատակը մեկն է՝ խնայողությունների հաշվին տրամադրվող սննդի չափաբաժինը մեծացնել: Նշեցին նաև, որ նախատեսվում է, որպեսզի հացն առանձնացվի սննդակարգից, քանի որ հացից օգտվողներն ավելի շատ են:

Քրոնիկ հիվանդություններով տառապող և բուժական հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց տրամադրվող սնունդ⁷⁴⁶

Եվրոպական բանտային կանոնների 22.6-րդ կետի համաձայն. «Բժշկական հիմքերով անհրաժեշտություն ծագելու դեպքում բժիշկը կամ որակավորված բուժքույրը պետք է կոնկրետ բանտարկյալի սննդակարգի փոփոխություն կարգադրի»:

Քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել է խնդիր քրոնիկ հիվանդություններով տառապող և հատուկ սննդակարգի կարիք ունեցող անձանց (լուցային հիվանդություն, երիկամային հիվանդություն, լյարդի ցիռոզ, հեպատիտ C, քրոնիկ գաստրիտ, շաքարային դիաբետ և այլն) բուժական հատուկ սնունդ տրամադրելու հետ կապված: Եթե ազատազրկված անձին ցուցված է բուժական հատուկ սննդակարգ, ապա վերջինս ստանում է միայն հավելյալ սնունդ (1 ձու, ձեթ և կարագ): ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում պահվող դիետիկ սննդի կարիք ունեցող հիվանդներին, ըստ աշխատակցի, կալանավորված և դատապարտված անձանց խնդրանքով ճաշը մատուցվում է առանց յուղի և տոմատի, որից հետո նոր այն խառնվում է ընդհանուր ճաշին: Քրեակատարողական հիմնարկի բժիշկները գրառում են կատարում այն մասին, որ անհրաժեշտ է բուժական հատուկ սննդակարգ (դիետա) պահպանել, սակայն հստակ չեն նշում, որ սննդամթերքն է արգելվում կամ թույլատրվում ուտել կոնկրետ հիվանդությամբ տառապող անձին:

Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության

⁷⁴⁶ ԽԿԿ-ն իր չափանիշներով անդրադարձ է կատարել մեկուսի բանտարկության մեջ գտնվող անձանց և նշել, որ «նրանց տրվող սնունդը պետք է չտարբերվի բանտային սովորական սննդից, ներառյալ հատուկ դիետաները, երբ այն պահանջվում է» (կետ 59):

քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ ներկայումս քրեակատարողական հիմնարկներում համաձայն տարեկան հաշվետվությունների մոտ 1400 անձ վերցված է հաշվառման տարբեր բնույթի հիվանդություններով, որոնց պետք է ապահովել դիետիկ սննդով: Յուրաքանչյուր դիսպանսեր հսկողության վերցված կալանավորված անձի և դատապարտյալի համար բժշկագիտության բնագավառում սահմանված թվով 15 դիետիկ սեղաններից մեկը նշանակելու և ապահովելու համար անհրաժեշտ են լրացուցիչ հաստիքային, ֆինանսական և տեխնիկական միջոցներ, որոնցով ապահովելը ներկայումս իրատեսական չէ:

Պատրաստի կերակրատեսակից նմուշառում կատարելու հետ կապված խնդիրներ

ԲԿԱՄ փորձագետներն իրենց այցելությունների ընթացքում քրեակատարողական հիմնարկներում արձանագրել են պատրաստի կերակրատեսակից ոչ պատշաճ նմուշառում կատարելու դեպքեր: **ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի** սառնարանում պահվում էին տարբեր կերակրատեսակների նմուշներ, որոնց վրա նշված չէին ժամկետներ: Հաշվի առնելով, որ ճաշացանկը հաճախակի կրկնվում էր, դրանք կարող էին ներկայացվել որպես նախորդ օրվա կերակրատեսակների նմուշներ: Նախորդ օրվա ճաշացանկում նշված հնդկաձավարի օրինակը պահպանված չէր: Հարկ է նշել, որ երկու օր անց, այցի ժամանակ, վերը նշված խնդիրը վերացվել էր, բոլոր կերակրատեսակների նմուշներն առանձին փակ տարաներով և ժամկետային պիտակավորմամբ պահվում էին սառնարանում:

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում կերակրատեսակների նմուշները պահպանվում էին, սակայն որոշ տեսակները միմյանց էին խառնված:

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում կերակրատեսակների նմուշները պահվում էին 48 ժամ, սակայն պահպանված կերակրատեսակների նմուշների վրա ժամկետը նշված չէր:

Կերակրատեսակների նմուշների պահպանման վերաբերյալ **ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից** տեղեկացվել է, որ **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունն** ընդունվել է և քրեակատարողական հիմնարկներին հանձնարարվել ապահովել պատրաստվող ճաշատեսակների նմուշների պահպանումը սառնարաններում, առանձին փակ տարաներով, ժամկետային պիտակավորմամբ՝ 48 ժամյա պահպանման ժամկետով:

Միաժամանակ, **ՀՀ արդարադատության նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 251-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 624-Ն հրամանով** սահմանվել է, որ չափաբաժնով

պատրաստված կերակրատեսակները պետք է նմուշառվեն ամբողջ ծավալով, իսկ աղցանները, առաջին, երրորդ կերակրատեսակները և ճաշալրացները՝ 100 գրամից ոչ պակաս: Վերցված նմուշները պետք է պահպանվեն 48 ժամից ոչ պակաս հատուկ սառնարանում կամ սառնարանի հատուկ առանձնացված տեղում 4±20 C ջերմաստիճանի պայմաններում՝ նշելով նմուշառման ժամը, օրը, ամիսը: Ընդ որում, յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակի բացթողումն իրականացվում է նմուշառումից հետո:

Քրեակատարողական հիմնարկների խոհանոցների և ճաշարանների պայմաններ

ԲԿԱՄ փորձագետները կրկին արձանագրել են ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» և «Գորիս» քրեակատարողական հիմնարկների խոհանոցների անմխիթար վիճակ, որոնք ունեն վերանորոգման կարիք:

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ճաշարանը նախատեսված է ազատությունից զրկված մոտ 140 անձի համար, սակայն տարածքը շատ փոքր է, սեղանները՝ խիտ դասավորված: Աշխատակիցները խոհանոցում աշխատում են առանց այդ նպատակի համար նախատեսված ձեռնոցների, պահանջվող այլ հագուստի պարագաների⁷⁴⁷: Բացի այդ, այցի պահին ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի խոհարարը վատառողջ էր և ջերմում էր:

ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկում խոհանոցային տարածքը փոքր է. նույն տարածքում կատարվում են ինչպես ճաշ եփելու նախապատրաստական աշխատանքներ, այնպես էլ եփում են ճաշը:

Որպես դրական առաջընթաց կարելի է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի խոհանոցային մասնաշենքն այցի պահին վերանորոգվում էր և արդեն ավարտվել էր ճաշասրահի վերանորոգումը:

Քրեակատարողական հիմնարկների խոհանոցային պայմանների բարեկարգման ու վերանորոգման, սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման, ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ճաշարանի փոքր տարածքի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ խոհանոցային պայմանների բարեկարգման ու վերանորոգման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում ներկայումս սկսված են շինարարական

⁷⁴⁷ Սա այն դեպքում, երբ 2014 թվականին նույն քրեակատարողական հիմնարկում արձանագրվել էր թունավորման դեպք, որը կապված էր սննդի հետ առնչվող բացիլակիր խոհարարի միջոցով սննդամթերքին պաթոգեն հարուցիչի փոխանցման, ախտահարված սննդի կամ սննդի պատրաստման տեխնոլոգիայի խախտման և հիգիենայի նորմերին չհամապատասխանող պայմանների հետ:

աշխատանքները, իսկ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում նախատեսված է իրականացնել կլին և անչափահաս դատապարտյալների տեղամասերի փոփոխություն, որի արդյունքում հնարավոր կլինի ունենալ լրացուցիչ ազատ տարածք: Նախատեսված շինվերանորոգման աշխատանքներն իրականացնելուց հետո լուծում կստանա նաև ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի ճաշարանի հարցը: Ինչ վերաբերում է խոհանոցներում սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմանը, ապա տեղեկացվել է, որ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողություն իրականացնելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2015 թվականի ապրիլի 1-ի թիվ 91-Լ հրամանով ուժեղացվել է հսկողությունը քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինների, որակի, ինչպես նաև ճաշարանների և սննդամթերքի պահման վայրերի սանիտարահիգիենիկ վիճակի նկատմամբ: Բացի այդ, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 2015 թվականի հունիսի 24-ի թիվ 150-Լ հրամանով սահմանվել են հստակ կանոնակարգումներ՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում բժշկական կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ: Հիշյալ հրամանով հանձնարարվել է ուժեղացնել հսկողությունը ճաշարաններում, խոհանոցներում, հանձնուքների ընդունման կետերում, կրպակներում սանիտարահիգիենիկ պայմանների պահպանման նկատմամբ, ձեռնարկել համալիր միջոցառումներ հիմնարկները մաքուր ջրով ապահովելու ուղղությամբ, ապահովել շուտ փչացող սննդամթերքի պահպանման պայմանները, սահմանել մշտական հսկողություն քրեակատարողական հիմնարկների տարածքի մաքրման և աղբահանության աշխատանքների պատշաճ կատարման նկատմամբ, սահմանել հսկողություն սննդի պատրաստման, ինչպես նաև ճաշարանի սպասքի, գույքի լվացման և ախտահանման աշխատանքների պատշաճ կատարման, աղեստամոքսային խանգարումներով հիվանդների վաղ հայտնաբերման նկատմամբ և այլն:

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ վերանորոգման աշխատանքներ են իրականացվում ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Սևան» քրեակատարողական հիմնարկների խոհանոցներում, իսկ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ամբողջովին վերանորոգվել է խոհանոցը:

ՀԱՆՁՆՈՒՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված անձն արգելանքի տակ գտնվելու ընթացքում

կարող է ստանալ մինչև քսան կիլոգրամ հանձնուք, իսկ կալանավորված անձը՝ ամսվա ընթացքում մինչև յոթանասուն կիլոգրամ:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալներն իրավունք ունեն (...) հանձնուքներ (...) ստանալու (...):

Որոշ քրեակատարողական հիմնարկների (ՀՀ արդարադատության նախարարության «Հրագդան»⁷⁴⁸, «Գորիս», «Կոշ» քրեակատարողական հիմնարկներ) հանձնուքների ընդունման սենյակները գտնվել են անմխիթար վիճակում (օդափոխության համար համակարգ նախատեսված չէր, իսկ ցերեկային լուսավորությունը թույլ էր):

Ի տարբերություն նշված քրեակատարողական հիմնարկների՝ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի հանձնուքների ընդունման սենյակն ապահովված էր անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, կար քարտադարան հանձնուքների ընդունման ժամանակացույցը վարելու համար:

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է նաև հանձնուքների ընդունման հետ կապված իրականացված բարեփոխումների մասին: Այսպես, 2015թ. հոկտեմբերի 22-ին լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշման մեջ, որը նպատակ է հետապնդում դյուրացնել կալանավորված անձանց և դատապարտյալների հարազատների կողմից վերջիններիս ծանրոցներ, հանձնուքներ և փաթեթներ բերելու գործընթացը՝ կազմակերպելով այն առցանց պատվերի եղանակով: Գործընթացն իրականացվելու է միմիայն առցանց եղանակով՝ բացառելով հանձնուքն ընդունող քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների և քաղաքացիների անմիջական շփումը, ինչն իր հերթին կբացառի տվյալ ոլորտում հնարավոր կոռուպցիոն դրսևորումներն ու արգելված իրերի ներթափանցման հնարավորությունները:

Քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից քաղաքացիների դիմումների նկատմամբ կամայական մոտեցումները բացառելու նպատակով՝ քրեակատարողական վարչության պետի 2015 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ Ե40/7-4042 հանձնարարականով կանոնակարգվել են կալանավորված անձանց կամ դատապարտյալներին հասցեագրված ծանրոցները, հանձնուքները և փաթեթներն ընդունելու վերաբերյալ դիմումները, օրենսդրությամբ սահմանված արգելքների առկայության դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պատշաճ փաստաթղթավորելու իրավահարաբերությունները՝ միաժամանակ միատեսակ վարչարարությունն

⁷⁴⁸ Հաջորդ մշտադիտարկման արդյունքում (26.10.2015թ.) արդեն իսկ տեղադրված էր հանձնուքների սկանավորման համապատասխան սարք:

ապահովելու նպատակով՝ սահմանելով մերժման որոշումների օրինակելի ձևեր:

ԼՈԳԱՆՔ

Ներքին կանոնակարգի 36-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր կալանավորված անձ կամ դատապարտյալ (...) լոգանք կամ ցնցուղ պետք է ընդունի կլիմային համապատասխան ջերմաստիճանի պայմաններում՝ առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ, իսկ հնարավորության դեպքում՝ ավելի հաճախակի, եթե դա անհրաժեշտ է ընդհանուր հիգիենայի պահպանման համար (...):

ԽԿԿ-ն նշել է, որ «...ազատազրկված անձինք պետք է ունենան համապատասխան հնարավորություն օգտվելու ցնցուղներից կամ լողանալու համար նախատեսված այլ սարքավորումներից: Նմանապես ցանկալի է, որ խցերում լինի հոսող ջուր»:

ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում կոչ էր արվել Հայաստանի իշխանություններին, որպես միջնաժամկետ նպատակ, ավելացնել անազատության մեջ պահվող անձի լոգանք ընդունելու հաճախականությունը՝ հիմք ընդունելով Եվրոպական բանտային կանոնների 19.4 կետը, ըստ որի՝ պետք է համարժեք հնարավորություններ ստեղծվեն, որպեսզի յուրաքանչյուր բանտարկյալ կարողանա կլիմայական համապատասխան ջերմային պայմաններում ցնցուղ ընդունել կամ լողանալ, ընդ որում՝ հնարավորության դեպքում դա պետք է լինի ամեն օր, սակայն առնվազն շաբաթը երկու անգամ (կամ անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ), ելնելով ընդհանուր հիգիենայի պահպանության շահից:

Որպես դրական առաջընթաց կարելի է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում լոգանքը կազմակերպվում է ըստ ցանկության՝ շաբաթը երկու անգամ, թեև ըստ դատապարտյալների՝ ջրամատակարարման հետ կապված խնդիրներ կան և երբեմն ջուր չի լինում:

ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում նախկինում կալանավորված անձինք և դատապարտյալները լոգանք էին ընդունում 7-10 օրը մեկ անգամ, քանի որ ջրագիծը վնասված էր և կար ջրի մատակարարման խնդիր: Այժմ վերանորոգվել է ջրագիծը և ջրի մատակարարման հետ կապված խնդիր չի արձանագրվել: Կալանավորված անձինք և դատապարտյալներն առանձնազրույցների ընթացքում նույնպես փաստեցին, որ խնդիրը վերացել է:

Որոշ քրեակատարողական հիմնարկներում ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են, որ խախտվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված առնվազն յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ լոգանք ընդունելու պահանջը (ՀՀ արդարադատության նախարարության «Սևան», «Հրազդան», «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկներ), իսկ որոշ քրեակատարողական հիմնարկներում լոգանք ընդունելու պայմանները բավարար չէին (ՀՀ արդարադատության

նախարարության «Կոշ», «Գորիս» քրեակատարողական հիմնարկ):

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալի ուղղման հիմնական միջոցներն են (...) դատապարտյալի աշխատանքային, կրթական, մշակութային, մարզական և նման այլ զբաղվածությունը, ինչպես նաև հասարակական ներգործությունը:

Ներքին կանոնակարգի 107-րդ կետով սահմանվում է, որ կալանավորվածներին պահելու վայրերում, ինչպես նաև փակ և կիսափակ ուղղիչ հիմնարկներում կազմակերպվում են աշխատանքային զբաղվածության խցեր՝ կալանավորված անձին խցային պայմաններում աշխատանքներում ներգրավելու նպատակով: Կիսաբաց և բաց ուղղիչ հիմնարկներում կարող են կազմակերպվել արդյունաբերական կամ գյուղատնտեսական նշանակության աշխատանքային զբաղվածության խցեր կամ գոտիներ (կետ 108):

ԽԿԿ-ն նշել է, որ. «...ազատագրված անձանց նորմալ կեցության համար ծայրահեղ կարևոր է իրագործել միջոցառումների բավարար ծրագրեր (աշխատանք, կրթություն, սպորտ և այլն): Այս ծրագրերի իրականացումը կարևոր է բոլոր հիմնարկների համար անկախ նրանից, թե ում համար են նրանք նախատեսված՝ դատապարտյալների, թե հետաքննության տակ գտնվողների» (կետ 47):

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց զբաղվածության ծրագրերի սակավաթիվ լինելը նշվել էր դեռևս ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում: Մասնավորապես նշվել էր, որ. «...իրենց այցելության ընթացքում պարզ է դարձել, որ քրեակատարողական հիմնարկում պահվող սահմանափակ թվով անձինք են ներգրավված օրինակ՝ արհեստագործության, հեռավար ուսուցման ծրագրերում, կազմակերպված սպորտային գործունեության մեջ: ԽԿԿ-ն կցանկանար կրկին շեշտել, որ դատապարտյալներին լայնամասշտաբ և նպատակային զբաղվածությամբ ապահովելը նրանց սոցիալական վերականգնման ու վերաինտեգրման էական մասն է կազմում»:

ԲԿԱՍ փորձագետները կիսամյակային մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրել են կալանավորված անձանց և դատապարտյալների զբաղվածության խնդիրը: Փաստվել է, որ հիմնականում քրեակատարողական հիմնարկի տարածքում սանիտարահիգիենիկ մաքրման աշխատանքներում (սանհանգույցների, աղբահանության) ներգրավված են միասեռական դատապարտյալները, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ նման աշխատանքների կատարումը քրեական ենթամշակույթում համարվում է «ոչ հարիր» աշխատանք: Ավելին, քրեական ենթամշակույթով առաջնորդվող ազատությունից զրկված անձինք առանձնագրույցների ընթացքում մշտապես նշում են, որ ցանկացած աշխատանք լինելու պարագայում չեն ներգրավվի այդ աշխատանքներում, քանի որ դա հարիր չէ

իրենց: Խնդրահարույց է, որ այս երևույթը ԲԿԱՄ փորձագետների կողմից արձանագրվում է մի քանի տարի ի վեր և քրեակատարողական համակարգը որևէ միջոց չի ձեռնարկում այս ենթամշակույթը վերացնելու, դատապարտյալներին ուղղելու և վերահինտեգրելու ուղղությամբ: Արդյունքում, կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանում քրեական ենթամշակույթն ավելի է տարածվում, իսկ դատապարտյալներին ուղղելու հնարավորությունը՝ նվազում: Միաժամանակ, առկա է կալանավորված անձանց և դատապարտյալների մեծ զանգված, որոնք ներգրավված չեն քրեական ենթամշակույթում և պատրաստ են աշխատել, սակայն փաստում են, որ նման հնարավորություն իրենց չի ընձեռնվում:

Միաժամանակ պետք է փաստել, որ **ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներում** գործում են դպրոցներ, իսկ գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալների համար «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի կողմից ստեղծվել է բանտային արվեստով զբաղվելու հնարավորություն (փայտափորագրություն, հուշանվերների պատրաստում և այլն):

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ կալանավորված անձանց և դատապարտյալների զբաղվածության ապահովման նպատակով քրեակատարողական հիմնարկներում պարբերաբար կազմակերպվել են մարզական միջոցառումներ: Անցկացվել են շախմատի, շաշկիի, թենիսի, դոմինոյի, ֆուտբոլի հիմնարկային առաջնություններ: Դատապարտյալների շրջանում ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման, առողջ ապրելակերպի դրսևորման, ինչպես նաև զբաղվածության, անձնական, մշակութային, կրթական զարգացման պատշաճ պայմանների ապահովման համար «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի, ՀՀ ազգային կինոկենտրոնի, «Տազանկա» համույթի և այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ: Կալանավորված անձանց և դատապարտյալների հոգևոր պահանջմունքների բավարարման նպատակով Հայ Առաքելական եկեղեցու կողմից պարբերաբար կատարվել են այցելություններ, մկրտություններ, պատարագներ, տոնական օրերին՝ տոնակատարություններ: Անչափահաս դատապարտյալների զբաղվածության, հատկապես՝ կրթական, մշակութային և սպորտային ոլորտներում ներգրավելու ուղղությամբ ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անչափահաս դատապարտյալները մասնակցել են մշակութային դասընթացներին (նկարչություն, ժամանակակից կիրառական արվեստ, խեցեգործություն, խեցեգործության ներկման տեխնոլոգիա)՝ ելնելով յուրաքանչյուրի նախասիրություններից և առանձնահատկություններից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անչափահաս դատապարտյալները ներկայումս պատիժ են կրում միայն խցային պայմաններում, դասընթացները կազմակերպվել են խցերում:

Քրեակատարողական հիմնարկներում կահավորվել են համապատասխան վայրեր, որտեղ դատապարտյալները կարող են զբաղվել սպորտով: Կալանավորված

անձանց և դատապարտյալների համար քրեակատարողական հիմնարկներում և կալանավորված անձանց պահելու վայրերում պարբերաբար կազմակերպվում են նաև մշակութային միջոցառումներ՝ համերգ, թատերական ներկայացում, կինոդիտում և այլն:

«Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել է «Ծնողական հմտություններ» թեմայով ուսուցողական կուրսեր, որի արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի թվով 47 դատապարտյալներ ստացել են համապատասխան վկայականներ:

Կրթության և գիտության նախարարության հետ համագործակցության արդյունքում թիվ 2 արհեստագործական ուսումնարանում արհեստագործական կրթության կուրսեր են անցել ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի թվով 22 դատապարտյալներ, որոնց բոլորին տրվել են համապատասխան վկայականներ:

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում թվով 96 դատապարտյալներ անցել են խոհարարական, համակարգչային, փականագործական և այլ մասնագիտացումներով հատուկ ուսուցման կուրսեր, որոնց արդյունքում բոլոր դատապարտյալներին տրվել են համապատասխան վկայականներ:

«Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկի թվով 25 դատապարտյալներ անցել են մեքենաշինության, գազի սարքավորումների տեղադրման, ինչպես նաև համակարգչային դասընթացների հատուկ կուրսեր և ստացել համապատասխան վկայականներ:

2015 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց 20.3% ընդգրկվել են տարբեր բնույթի աշխատանքներում, մասնավորապես. աշխատանքներ կատարելու նպատակով դատապարտյալներն ընդգրկվում են քրեակատարողական հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում, պայմանագրային հիմունքներով աշխատում են «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամում, ընդգրկվում են ինքնագործ միավորումներում, իսկ բաց ուղղիչ հիմնարկի դատապարտյալներն աշխատում են հիմնարկի սահմաններից դուրս այլ գործատուի մոտ:

2015 թվականի ընթացքում «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի «Աբովյան» մասնաճյուղում աշխատել է 30 դատապարտյալ, որոնցից 2-ը՝ սննդի արտադրության ոլորտում, 5-ը՝ գորգագործության ոլորտում, 21-ը՝ կարի արտադրության ոլորտում, 2-ը՝ օժանդակ բանվորական աշխատանք են կատարել: «Վարդաշեն» մասնաճյուղում 1 դատապարտյալ աշխատել է հացի արտադրության ոլորտում: «Արմավիր» մասնաճյուղում 5 դատապարտյալ կատարել են օժանդակ

բանվորություն: «Կոշ» մասնաճյուղում աշխատել է 22 դատապարտյալ, որոնցից 2-ը հացի արտադրության ոլորտում, իսկ 20-ը կատարել են ստեղծագործական աշխատանքներ: «Մեդրի» մասնաճյուղում 13 դատապարտյալ աշխատել է այգեգործության ոլորտում: «Վանաձոր» մասնաճյուղում աշխատել է 15 դատապարտյալ, որոնցից 2-ը կատարել են օժանդակ բանվորական աշխատանք, իսկ 13-ը՝ ստեղծագործական աշխատանքներ: «Գորիս» մասնաճյուղում 2 դատապարտյալ աշխատել են հացի արտադրության ոլորտում: «Արթիկ» մասնաճյուղում աշխատել է 19 դատապարտյալ, որոնցից 1-ը հացի արտադրության ոլորտում, 2-ը կատարել են օժանդակ բանվորական աշխատանքներ, 16 դատապարտյալ կատարել են ստեղծագործական աշխատանքներ:

2015 թվականի ընթացքում անչափահաս կալանավորված անձինք և դատապարտյալները 100%-ով մասնակցել են կրթական, մշակութային և սպորտային միջոցառումներին:

Ազատված դատապարտյալների՝ հասարակություն վերաինտեգրումն ապահովելու ուղղությամբ, ընդհուպ մինչև պատժից ազատվելը, իրականացվում են մի շարք միջոցառումներ, մասնավորապես. հարցում է ուղարկվում տարածքային ոստիկանություն, ազատվող դատապարտյալի վերաբերյալ տվյալները վերջինիս համաձայնությամբ ուղարկվում է «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն, պատժից ազատվելուց հետո աշխատանքի տեղավորման հարցում աջակցելու համար, կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ՝ դատապարտյալներին որոշ մասնագիտական հմտություններ ուսուցանելու համար:

Հաշվի առնելով պատժից ազատված դատապարտյալների՝ հասարակություն վերաինտեգրումն ապահովելու խնդրի կարևորությունը՝ ՀՀ կառավարության 14.08.2014 թվականի օգոստոսի 14-ի թիվ 847-Ն որոշմամբ և ՀՀ արդարադատության նախարարի 2014 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 381-Ա հրամանով ընդլայնվել և վերակազմավորվել է ՀՀ արդարադատության նախարարության «Իրավախախտում կատարած անձանց վերականգնողական կենտրոն» ՊՈԱԿ-ի («Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի) գործունեությունը՝ ուղղված վերականգնողական ծրագրերի իրականացմանը ոչ միայն քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց, այլ նաև պատժից ազատված անձանց և նրանց ընտանիքների խնդիրների լուծման համար:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 9-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» թիվ 1044-Ն որոշման համաձայն՝ կենտրոնը, քրեակատարողական հիմնարկները և այլընտրանքային պատժի կատարման բաժանմունքները ներառվել են միջգերատեսչական սոցիալական համագործակցող կողմերի մեջ: Սույն կանոնակարգի պահանջներից ելնելով՝ ներկայումս ընթացքի մեջ են պատժից ազատված անձանց վերաինտեգրման և ուղղորդման կարգի մշակման աշխատանքները: Մինչ կարգի հաստատումը՝ պիլոտային ձևով իրականացվել են պատժից ազատված անձանց համար վերականգնողական ծրագրեր (սոցիալական,

հոգեբանական, մշակութային ծառայությունների տրամադրում), որի շրջանակում շուրջ 20 շահառուի ցուցաբերվել է աջակցություն փաստաթղթերի ձեռք բերման, սոցիալական ծառայությունների մեջ ներգրավվելու, աշխատանքի ձեռք բերման հարցում, ինչպես նաև դատապարտյալ անձանց 25 երեխաներ ներգրավվել են մշակութային ծրագրերում և հոգեբանական խմբային աշխատանքներում: Հարկ է նշել, որ մշակվել է նաև «Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերը, որոնց համաձայն նախատեսվում է այն դատապարտյալներին, որոնց պատժի կրման ավարտին մնացել է վեց ամիս, հիմնարկի վարչակազմի ներկայացմամբ և իրենց ցանկությամբ ընդգրկել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված մասնագիտական ուսուցման ծրագրերում: Նախագիծը ներկայումս գտնվում է ՀՀ Նախագահի աշխատակազմի հետ համաձայնեցման փուլում:

Քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատման ենթակա անձանց աշխատաշուկային ինտեգրվելուն ուղղված միջոցառումների իրականացման վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը գրությամբ տեղեկացրել է, որ 2015 թվականին քրեակատարողական հիմնարկներում գտնվող՝ ազատման ենթակա անձանց վերաբերյալ գործակալությունը ստացել է թվով 360 նամակ, զբաղվածության տարածքային կենտրոններ դիմել է 61 անձ, 12 անձ հաշվառվել է, զբաղվածության կարգավորման ծրագրերում ընդգրկվել է 4-ը, աշխատանքի է տեղավորվել 9 անձ:

ԿԱՊ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն իրավունքի ունի արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 92-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Ուղղիչ հիմնարկի վարչակազմը ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ»:

Եվրոպական բանտային կանոնների 24.1-րդ կետի համաձայն. «Բանտարկյալներին պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակով, հեռախոսով կամ հաղորդության այլ ձևերով հաղորդակցել իրենց ընտանիքների այլ անձանց և դրսի կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ»:

ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում նշել էր, որ. «... ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված որոշ անձինք հայտնել են, որ քրեակատարողական հիմնարկի անձնակազմը սպառնացել է նրանց նկատմամբ կիրառել կարգապահական տույժ, եթե նրանք բողոքներ ներկայացնեն: Կոմիտեն առաջարկել է Հայաստանի իշխանություններին ապահովել ազատությունից զրկված անձանց՝ բողոք ներկայացնելու իրավունքի լրիվ արդյունավետությունը՝ երաշխավորելով, մասնավորապես, բողոք ներկայացնող անձանց նկատմամբ հաշվեհարդարի բացառումը: Այս համատեքստում, բողոք ներկայացնելու ընթացակարգը պետք է վերանայվի՝ ապահովելու համար ազատությունից զրկված անձանց՝ բողոքների քննություն և հսկողություն իրականացնող մարմինների (այդ թվում՝ ԽԿԿ-ին) հետ ունեցած նամակագրության գաղտնիությունը»: Նման խնդիր ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են **ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում**, երբ առանձնագրույցի ընթացքում ազատությունից զրկված անձին առաջարկվել է դիմում ներկայացնել բարձրացված խնդիրն առավել մանրամասն ուսումնասիրելու համար, սակայն վերջինս հրաժարվել է՝ պատճառաբանելով, որ «զոն նայողը» հրահանգել է բողոքներ չներկայացնել, հակառակ դեպքում կզրկվեն մի շարք արտոնություններից (բջջային հեռախոս, տեսակցություն և այլն):

ԲԿԱՄ փորձագետների կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ազատությունից զրկված անձանց դիմումները գրաքննության են ենթարկվում⁷⁴⁹ (**ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր», «Հրազդան», «Սևան» քրեակատարողական հիմնարկներ**):

Միաժամանակ պետք է փաստել, որ ԲԿԱՄ փորձագետների կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ **ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ», «Հրազդան», «Գորիս» քրեակատարողական հիմնարկներում** ազատությունից զրկված անձանց նամակագրության հետ կապված խնդիրներ չեն առաջանում, նամակները վերցվում են բաց կամ ծրարով՝ ըստ վերջիններիս ցանկության:

Դեռևս շարունակում է չլուծված մնալ **ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում** երկարատև տեսակցության սենյակների խնդիրը (սենյակներ նախատեսված չեն)⁷⁵⁰: Բավականին

⁷⁴⁹ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն:

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ նամակագրության գրաքննություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Գրաքննությունը կատարում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

⁷⁵⁰ ՀՀ արդարադատության նախարարությունը գրությամբ տեղեկացրել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում երկարատև տեսակցությունների սենյակների բացակայությունը պայմանավորված է տարածքային պայմանների անհնարինությամբ: Չնայած դրան՝ դատապարտյալների երկարատև տեսակցության իրավունքը

վատ սանիտարահիգիենիկ վիճակում էին գտնվում ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» և «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի երկարատև տեսակցության սենյակները:

2015 թվականի ընթացքում արձանագրվել է նաև ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալների համար կարճատև մեկնման խնդիր: Վերջիններիս հավաստմամբ՝ վարչակազմը դիտավորյալ հետաձգում է կարճատև մեկնման մասին դիմումների ընդունումը՝ մինչև մեկնման գնացած մյուս դատապարտյալի վերադարձը, իսկ բերքահավաքը⁷⁵¹ սկսվում է սեպտեմբեր ամսին և այլևս հնարավոր չէ կարճաժամկետ մեկնել:

ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի Զեկույցում նշվել էր նաև, որ պատվիրակությունը քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանցից լսել է բազմաթիվ բողոքներ այն մասին, որ անձնակազմը նրանցից և (կամ) նրանց ազգականներից պահանջել է գումար կամ այլ տեսակի օգուտներ, որպեսզի նրանց թույլատրվի իրականացնել իրենց իրավունքը (օրինակ՝ «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում առանց բաժանարար միջնորմերի կարճատև տեսակցությունները): Խնդրահարույց է այն, որ նման արատավոր երևույթն առ այսօր շարունակվում է, ինչը ԲԿԱՄ փորձագետները պարզել են ազատությունից զրկված անձանց հարազատների հետ զրույցների ընթացքում:

ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

Ներքին կանոնակարգի 12-րդ կետի համաձայն. «Կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի կարանտինային բաժանմունքում անձն ապահովվում է կալանավորված անձանց կամ դատապարտյալներին պահելու համար սահմանված անհրաժեշտ գույքով, սննդով, անկողնային պարագաներով և սույն կանոնակարգով նախատեսված այլ իրերով, օգտվում է կալանավորված անձի կամ դատապարտյալի համար օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված բոլոր իրավունքներից, ինչպես նաև կրում է օրենքով և սույն կանոնակարգով սահմանված պարտականություններ: Կալանավորված անձը կամ դատապարտյալը կարանտինային բաժանմունքում պահվում է նվազագույնը նույն պայմաններում, ինչպիսի պայմաններում կալանավորված անձը կամ դատապարտյալը պահվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի այլ խցում կամ կացարանում»:

պատշաճ կերպով ապահովվում է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

⁷⁵¹ ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալները ներգրավված են մրգատու այգիների մշակման աշխատանքներում:

ԲԿԱՄ փորձագետներն իրենց այցելությունների ընթացքում արձանագրել են կարանտինային խցերի անբարեկարգ, ոչ պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակ (**ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներ**), ինչպես նաև հանդիպել են դեպքերի, երբ ազատությունից զրկված անձինք չեն ունեցել անկողնային սպիտակեղեն (**ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն», «Սևան» քրեակատարողական հիմնարկներ**):

Խնդրահարույց է, որ **ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» և «Կոշ» քրեակատարողական հիմնարկներում** նախատեսված չեն կարանտինային բաժանմունքներ: Այդ իսկ պատճառով կալանավորված անձինք կամ դատապարտյալներն անմիջապես տեղավորվում են բնակելի գոտում: Փաստացի, վերջիններս չեն ենթարկվում պատշաճ բժշկական զննության, ինչպես նաև չեն հասցնում ծանոթանալ ուղղիչ հիմնարկի պայմաններին՝ հարմարվելու նպատակով: Մինչդեռ, ըստ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 65-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ուղղիչ հիմնարկ փոխադրված դատապարտյալը բժշկական զննություն անցնելու և ուղղիչ հիմնարկի պայմաններին հարմարվելու նպատակով մինչև յոթ օր ժամկետով տեղավորվում է կարանտինային բաժանմունքում:

Նշված խնդրի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ 2014-2016թթ. ընթացքում նախատեսված կապիտալ շինարարության իրականացման ռազմավարական ծրագրի մեջ ներառված է նաև ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի նախկին ուժեղացված ռեժիմի հանրակացարանի և կարանտինային մասնաշենքերի վերակառուցման, հանրակացարանները խցայինի ձևափոխման, արտաքին կոյուղագծի կապիտալ վերանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը, կապիտալ շինարարական աշխատանքների իրականացումը:

ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց խնդիրները մշտապես գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից քննարկման են ընդունվել ցմահ ազատագրկման դատապարտված անձանց կողմից ներկայացված մի շարք բողոքներ, որոնք հիմնականում վերաբերում էին պատշաճ բուժօգնության չտրամադրման, այդ թվում՝ բուժական ուղղիչ հիմնարկ կամ ուղղիչ հիմնարկների բուժական ստորաբաժանումներ չտեղափոխելու, անհրաժեշտ բժշկական հետազոտություններ չիրականացնելու կամ ձգձգելու դեպքերին (բարձրացված հարցերը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի միջամտության արդյունքում հիմնականում լուծվել են): Ցմահ ազատագրկման դատապարտված անձանց պարբերաբար տրամադրվել է իրավական խորհրդատվություն ինչպես գրավոր ընթացակարգով, այնպես էլ՝ այցելությունների ընթացքում:

Ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքում բացահայտվել են նաև այնպիսի խնդիրներ, որոնք կարող են լուծվել օրենսդրական բարեփոխումների արդյունքում և ՀՀ արդարադատության նախարարության հավաստմամբ դրանք զտնվում են ընթացիկ փուլում⁷⁵²:

Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում է եղել նաև ցմահ ազատազրկվածների կողմից 2015 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում երկու անգամ հայտարարված զանգվածային հացադուլը (մոտ 40-50 հոգի)⁷⁵³, այդ թվում՝ ստուգվել և մանրակրկիտ ուսումնասիրվել են ցմահ ազատազրկվածների նկատմամբ հնարավոր ճնշումների գործադրման փաստերը, դրանք բացառելու ուղղությամբ ձեռնարկվել են միջոցներ:

Հացադուլ հայտարարելու հիմնական պատճառներ էին գործերի վերանայման արդյունավետ մեխանիզմների, ցմահ ազատազրկման դատապարտված անձանց պայմանական վաղաժամկետ ազատման և մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ ճկուն համակարգի բացակայությունը և այլն:

Պայմանական վաղաժամկետ ազատմանն առնչվող օրենսդրական խնդիրների ու դրանց հետագա կատարելագործմանը վերաբերող լուծման հնարավոր ուղիների կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ Ազգային ժողովի խմբակցություններից մեկին և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին ներկայացրել է որոշ առաջարկներ⁷⁵⁴: Իսկ մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխելու խնդրի առնչությամբ առաջարկներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն և ՀՀ քրեակատարողական վարչություն⁷⁵⁵:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից քննարկվել են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող ցմահ ազատազրկման դատապարտված **12 դատապարտյալների**

⁷⁵² Մանրամասն տե՛ս Զեկույցի «Օրենսդրական կարգավորման ոլորտի խնդիրներ» բաժնի «Նոր հանցագործություն կատարած ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ուղղիչ հիմնարկի տեսակը մեկուսացվածության ավելի ցածր աստիճանի փոխելու հնարավորության հետ կապված խնդիր» ենթաբաժնում:

⁷⁵³ <http://hetq.am/arm/news/63087/anzhamket-hacadul-nubarashen-qkh-um-qreakan-gortseri-veranayman-pahanjov.html>
<http://hetq.am/arm/news/63881/nubarashen-qkh-um-versksvel-e-zhamanakavorapes-dadarecvats-hacaduly.html>

⁷⁵⁴ Մանրամասն տե՛ս Զեկույցի «Օրենսդրական կարգավորման ոլորտի խնդիրներ» բաժնի «Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առկա կարգավորումների և ընթացակարգերի անհամապատասխանություն միջազգային չափանիշներին» ենթաբաժնում:

⁷⁵⁵ Մանրամասն տե՛ս Զեկույցի «Օրենսդրական կարգավորման ոլորտի խնդիրներ» բաժնի «Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու գործընթացին վերաբերող խնդիրներ» ենթաբաժնում:

պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցեր, որից 8-ը մերժվել է, իսկ 4-ը՝ հետաձգվել:

Մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2015 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչակազմերի կողմից ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի տեղաբաշխման հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել են՝ ցմահ ազատազրկման դատապարտված և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներին առավել ցածր աստիճանի՝ կիսափակ ուղղիչ հիմնարկ տեղափոխման վերաբերյալ 9 միջնորդություններ, որոնք բավարարվել են:

Չնայած իրականացվող որոշակի միջոցառումների (թեև ցմահ ազատազրկման դատապարտված անձանցից մեկը պայմանագրային հիմունքներով աշխատում է ծրագրավորող, 4 ցմահ դատապարտյալներ ստանում են բարձրագույն կրթություն), պետք է փաստել, որ նշված խնդիրներից բացի, ցմահ ազատազրկվածների հետ կապված առկա են նաև այնպիսի համակարգային չլուծված խնդիրներ, ինչպիսիք են ոչ պատշաճ սոցիալ-հոգեբանական ծառայությունը (նախատեսված է մեկ հոգեբան 100-ից ավելի ցմահ դատապարտյալի համար), արդյունավետ վերականգնողական ծրագրերի (չկան մշակութային, սպորտային միջոցառումների կազմակերպման, դատապարտյալի ազատ ժամանակն արդյունավետ տնօրինելու պայմաններ) բացակայությունը:

Մեկ այլ խնդիր է ցմահ դատապարտված անձանց պահման պայմանները: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի կիսափակ ուղղիչ հիմնարկում պահվող ցմահ ազատազրկվածների խուցը բավականին խոնավ է, պատերը բորբոսնած են և նորոգման կարիք ունեն: ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի որոշ խցեր, որտեղ բնակվում են ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, նույնպես անմխիթար վիճակում են:

Հարկ է նշել, որ ԽԿԿ-ն 2013 և 2014 թվականներին Հայաստան կատարած այցերի արդյունքում հրապարակված երկու զեկույցներով լուրջ մտահոգություններ է արտահայտել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց իրավունքների ապահովման հարցերի վերաբերյալ⁷⁵⁶, որտեղ, մասնավորապես, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գտնվող ցմահ դատապարտյալների պահման պայմաններն անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող են համարվել:

Միաժամանակ, ԽԿԿ-ն խնդրահարույց է համարել այն, որ ցմահ դատապարտյալներին օրենքով սահմանված տեսակցությունների քանակն էապես

⁷⁵⁶ <http://www.cpt.coe.int/documents/arm/2015-10-inf-eng.pdf>, <http://www.cpt.coe.int/documents/arm/2015-08-inf-eng.pdf>

տարբերվել է որոշակի ժամկետով դատապարտված անձանց համար նախատեսված տեսակցությունների քանակից: Այսպես, որոշակի ժամկետով դատապարտվածներն ունեն ամսական առնվազն մեկ կարճաժամկետ տեսակցության և յուրաքանչյուր երկու ամիսը մեկ երկարաժամկետ տեսակցության հնարավորություն, մինչդեռ, ցմահ դատապարտյալներին տրամադրվում է ընդամենը երեք կարճաժամկետ և մեկ երկարաժամկետ տեսակցության հնարավորություն յուրաքանչյուր տարի:

ԽԿԿ-ն անդրադարձել է նաև պայմանական վաղաժամկետ ազատմանն առնչվող օրենսդրական խնդիրների ու դրանց հետագա կատարելագործման անհրաժեշտությանը, ինչպես նաև նշել է, որ ցմահ դատապարտյալները խցից դուրս չեն ունեցել գործունեություն ծավալելու հնարավորություն: ԽԿԿ-ն նշել է նաև, որ դեռևս սահմանված չէ ցմահ դատապարտյալների աշխատանքի, կրթության, սպորտի կամ այլ զբաղվածության հնարավորությունը, իսկ համապատասխան իրավական ակտերով արգելվում է խցից դուրս ցմահ դատապարտյալների աշխատելը: Ուստի, անհրաժեշտ է ապահովել ցմահ դատապարտյալների՝ խցից դուրս աշխատելու, կրթվելու, սպորտով և այլ գործունեությամբ զբաղվելու հնարավորությունը:

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ մշակվել է «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» նախագիծը, որով նախատեսվում է 10 տարի ժամկետով պատիժը կրելուց հետո կրկնապատկել ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվող կարճատև և երկարատև տեսակցությունների նվազագույն քանակը և նշել, որ նշված նախագիծը ներկայումս գտնվում է Ազգային ժողովում:

Միաժամանակ տեղեկացվել է, որ 2012-2016 թվականների ՀՀ իրավական և դատական բարեփոխումների ծրագրի 2015 թվականին նախատեսված միջոցառումների շրջանակում նաև պետք է բարեփոխել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգը, որի կապակցությամբ «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն: Բացի այդ, նախագիծը լրամշակվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հստակ չափանիշներով և կրկին ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Ներկայումս ստացված կարծիքներն ամփոփվում են:

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ դատապարտյալն ունի առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու իրավունք:

Եվրոպական բանտային կանոնների 39-րդ կետի համաձայն. «Քրեակատարողական մարմինները պետք է երաշխավորեն իրենց խնամքի ներքո գտնվող բոլոր բանտարկյալների առողջությունը»:

Թեև 2014 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի արդյունքում հրապարակված զեկույցի հիման վրա ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետը զեկույցում նշված թերությունները վերացնելու նպատակով, դեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկի պետերին հանձնարարել է⁷⁵⁷. «*Բուժօգնությունը և բուժապասարկումը կազմակերպել պատշաճ կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2006 թվականի թիվ 825-Ն որոշման համաձայն՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կալանավորված անձանց և դատապարտյալներին տրամադրվող անհապաղ բուժօգնությանը և բժիշկների ամենօրյա այցերին պատժախցեր, ակտիվացնել աշխատանքները քրեակատարողական հիմնարկները բուժաշխատողներով համալրելու ուղղությամբ: Բժշկական քարտերը, հիվանդության պատմագրերը, մատյանները և սահմանված այլ փաստաթղթերը լրացնել ժամանակին և պատշաճ ձևով, ընթեռնելի ձեռագրով*», այնուամենայնիվ դեռևս առկա են մի շարք խնդիրներ:

Քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումների և բժշկական սպասարկման բաժինների պայմանները և հազեցվածությունը

Բժշկական սպասարկման բարդության և կարևորության հարցին անդրադարձ է կատարել ԽԿԿ-ն (CPT/Inf (93) 12, 04.06.1993թ.), որտեղ, մասնավորապես, նշվել է (կետ 36), որ ազատագրված անձին պետք է անմիջականորեն հասանելի լինի լավ համայրված հիվանդանոցային կամ քաղաքացիական հիվանդանոցի ծառայությունը: Կետ 38-ում նշվել է, որ ազատագրված վայրերում գտնվող անձինք պետք է ապահովված լինեն այնպիսի խնամքով և բուժման հնարավորություններով, այդ թվում՝ դիետիկ սննդով, ֆիզիոթերապևտիկ բուժմամբ, վերականգնողական և այլ անհրաժեշտ հատուկ բժշկական միջամտությունների հնարավորություններով, որոնք հասանելի են ազատագրված վայրերում չգտնվող հիվանդների համար:

ԲԿԱՄ փորձագետների կողմից քրեակատարողական հիմնարկներում արձանագրվել են բժշկական օգնության և սպասարկման ոչ պատշաճ կազմակերպման, բժշկական ստորաբաժանումների, բժշկական սպասարկման բաժինների անբավարար պայմանների, ինչպես նաև բժշկական անձնակազմի համալրվածության, դեղորայքի, սարքավորումների և գործիքների ոչ բավարար

⁷⁵⁷ <http://ced.am/notice.html>

հազեցվածության խնդիրներ:

Բժշկական անձնակազմ

Ըստ ԽԿԿ չափանիշների՝ «...ազատագրված անձինք պետք է ցանկացած ժամանակ բժշկին դիմելու հնարավորություն ունենան, անկախ իրենց ազատագրված ռեժիմից: Բժշկական սպասարկումը պետք է կազմակերպված լինի այնպես, որ բժշկի խորհրդատվությունից օգտվելու խնդրանքը բավարարվի առանց ավելորդ հապաղման» (կետ 34):

Հարկ է նշել, որ ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում անդրադարձել էր այն խնդրին, որ ՀՀ քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմը համալրման կարիք ունի և առաջարկել է Հայաստանի իշխանություններին համապատասխան գործողություններ ձեռնարկել «Նուբարաշեն», «Կոշ» և «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմը բուժակներով և (կամ) բուժքույրերով համալրելու ուղղությամբ:

Քրեակատարողական հիմնարկներում շարունակում է առաջնային խնդիր մնալ բժշկական անձնակազմի համալրվածության հարցը: Թեև գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներն ապահովված են բժշկական շուրջօրյա սպասարկմամբ, այնուամենայնիվ բժշկական անձնակազմը համալրված չէ (համապատասխան հաստիքները թափուր են) և բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպումը պատշաճ չի իրականացվում: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկում բուժակը կամ բժիշկն այցելում են ըստ անհրաժեշտության, իսկ ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկում բժշկական հաստիք նախատեսված չէ. նախկինում հիմնարկի բժշկական սպասարկումն իրականացրել է Նոնաձոր գյուղի բուժքույրը, ով այլևս նման գործառույթ չունի: ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում բուժանձնակազմը 9:00-18:00 ընկած ժամանակահատվածում (բացի շաբաթ և կիրակի օրերից) լինում է հիմնարկում, իսկ 18:00-ից հետո ընկած ժամանակահատվածում և հանգստյան օրերին այցելում է ըստ անհրաժեշտության: ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկում բժիշկները քրեակատարողական հիմնարկ այցելում են շաբաթը 3-4 անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

Մեկ այլ խնդիր է բժշկական ծառայության կազմակերպումը գիշերային ժամերին: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում գիշերային հերթափոխում ներգրավված էր մեկ բուժակ, ով սպասարկում էր ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի ստացիոնար բաժանմունքում, ինչպես նաև հիմնարկում պահվող բոլոր կալանավորված անձանց և դատապարտյալներին, ինչը կարող է ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրման պատճառ հանդիսանալ (2015 թվականի դեկտեմբերի 31-ի

դրությամբ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում պահվում էին 942 կալանավորված անձինք և դատապարտյալներ): **ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում** գիշերային հերթապահության մնում է մեկ բժիշկ և մեկ բուժակ կամ բուժքույր (այցի պահին պահվում էին 158 հիվանդ ազատությունից զրկված անձ, որոնցից 54-ը՝ ծանր):

Նմանատիպ խնդիր առկա է նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում**, որտեղ մեկ բուժքույրը սպասարկում է շուրջօրյա հերթափոխային գրաֆիկով՝ երեք տեղամասեր (մեկուսարան, կանանց և անչափահասների տեղամաս): Խնդրահարույց է նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում** մանկաբուժական ծառայության կազմակերպումը. այցելության պահին քրեակատարողական հիմնարկում դատապարտյալ կանանցից երկուսի խնամքի տակ էին գտնվում մինչև 3 տարեկան երեխաներ, ովքեր ունեին անհրաժեշտ բժշկական մասնագիտական օգնության կարիք (այցի պահին մանկահասակ երեխաներից մեկն անհրաժեշտ բժշկական խորհրդատվություն ստանալու համար առանց մոր տեղափոխվեց Մայակովսկի գյուղի բուժամբուլատորիա, քանի որ մորը քրեակատարողական հիմնարկի տարածքից դուրս գալու համար անհրաժեշտ էր Քրեակատարողական վարչության թույլտվությունը (բժիշկը նպատակահարմար չէր գտել հետաձգել երեխայի այցը մանկաբույժի խորհրդատվության համար)):

Հարկ է նաև նշել, որ, ընդհանուր առմամբ, բժշկական մատյանները, քարտերը և հիվանդության պատմագրերը լրացվում են բացթողումներով և թերություններով:

Բուժանձնակազմի համալրվածության կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ քրեակատարողական հիմնարկներում բուժանձնակազմի համալրման հարցով քրեակատարողական վարչությունը սերտ համագործակցում է ՀՀ գիտության և կրթության նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության և մարզային առողջապահական կառույցների հետ, մշտապես տարվում են աշխատանքներ թափուր հաստիքների համալրման համար: ՀՀ արդարադատության նախարարությունն առաջարկություն է ներկայացվել քրեակատարողական հիմնարկների բուժծառայությանը լրացուցիչ բժշկական հաստիքների հատկացման, այդ թվում՝ հերթապահ բժշկական անձնակազմի վերաբերյալ: Հաստիքների համալրման նպատակով մշտապես հայտարարություններ են տրվում նաև ԶԼՄ-ներով և Քրեակատարողական ծառայության պաշտոնական կայքով: Ինչպես նաև բժիշկների և բուժանձնակազմի համալրման, քրեակատարողական հիմնարկներում բժշկական սպասարկման կազմակերպական, կառուցվածքային ապահովման և բժշկական սպասարկման ստորաբաժանումներում ծառայության բարելավման նկատառումներից ելնելով՝ ՀՀ

քրեակատարողական վարչության պետի հավաստմամբ, մշակվել և ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ըստ որի՝ առաջարկվում է բժշկի մասնագիտությամբ անձանց համար Քրեակատարողական ծառայությունում ծառայության ընդունելու տարիքային ստորին շեմը սահմանել 45 տարեկանը, իսկ սահմանային տարիքը՝ անկախ պաշտոնից 65 տարեկանը:

Մեկ այլ խնդիր է նաև բուժանձնակազմի նեղ մասնագիտական վերապատրաստումները:

Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ 2014թ.-ին Երևանի Միխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում պետական պատվերի շրջանակում վերապատրաստման դասընթացներ են անցել 6 բժիշկ և միջին բուժաշխատողներ: Քրեակատարողական համակարգի բժշկական անձնակազմը պարբերաբար մասնակցում է տուբերկուլոզի դեմ պայքարի, մեթադոնային փոխարինող բուժման և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված դասընթացների, ինչպես նաև արտերկրում կազմակերպվող խորհրդածոլոգների (2014թ. ԱՄՆ):

Պայմաններ

Քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանումների և բժշկական սպասարկման բաժինների պայմաններն են: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան», «Մևան», «Կոշ», քրեակատարողական հիմնարկների բժշկական ստորաբաժանման տարածքը կենտրոնացված ջեռուցման համակարգ չունի:

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկի բժշկական ստորաբաժանումը հոսող ջրի հնարավորություն չունի, իսկ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում չկա վերակենդանացման բաժանմունք, ինֆեկցիոն բաժանմունքի հիվանդասենյակներ, վիրաբուժական բաժանմունքի մանիպուլյացիոն բաժինը տաք ջրով ապահովված չէր, պատին կար էլեկտրական բաց լարեր (ըստ վարչակազմի՝ լարերը հոսանքազրկված էին):

Հիմնականում արձանագրվել է նաև սանիտարահիգիենիկ ոչ պատշաճ պայմաններ: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ատամնաբուժական կաբինետը կեղտոտ էր, ամանի մեջ կար հեռացված ատամ, օգտագործված և չվարակազերծված գործիքներ, այցի պահին գործիքների ստերիլիզացում չէր կազմակերպվել, իսկ ՀՀ արդարադատության նախարարության «Հրազդան» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի մեկուսարանն ու սանհանգույցն այցի պահին կեղտոտ էին, էլեկտրական լուսավորություն չկար, վարդակները բաց էին: ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում

հիվանդասենյակներում տիրող սանիտարահիգիենիկ պայմաններն անբավարար էին, գրեթե բոլոր հիվանդասենյակներում առկա էին միջատներ և սարդոստայններ: Ընտանի կենդանիները (շներ, կատուներ) ազատ ելումուտ էին անում սենյակներ՝ բարձրանալով նաև մահճակալներին, որն առանց այն էլ անբարենպաստ սանիտարահիգիենիկ պայմանների պարագայում խնդրահարույց էր:

Բժշկական սարքավորումներ և գործիքներ

Եվրոպական բանտային կանոնների 40.2-րդ կետի համաձայն. «Բանտերում առողջության պահպանման քաղաքականությունը պետք է ներհյուսված և համահունչ լինի առողջության պահպանման ազգային քաղաքականությանը»:

Այնուամենայնիվ, բոլոր քրեակատարողական հիմնարկների բժշկական սպասարկման բաժինները լիցենզավորված չեն, համալրված չեն քաղաքացիական առաջնային բժշկական օգնության (ընտանեկան բժշկի գրասենյակի)⁷⁵⁸ համար նախատեսված բժշկական սարքավորումներով և գործիքներով: Օրինակ՝ գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում չկան արյան մեջ շաքարի որոշման համար շաքարաչափ սարքեր և թեստ երիզներ (թեև հիմնարկներում հանդիպել են բազմաթիվ շաքարային դիաբետով հիվանդ ազատությունից զրկված անձինք), էլեկտրասրտագիր և այլն:

ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում գինեկոլոգիական ծառայության համար անհրաժեշտ են մեկանգամյա օգտագործման գինեկոլոգիական գդալներ, հայելիներ և ընդարձակիչներ: Բժշկական գործիքներից կար միայն ջերմաչափ և տոնոմետր:

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Հրազդան» քրեակատարողական հիմնարկները համալրված չեն ախտահանիչ սարքավորումներով, թեև հիմնարկներում մատուցվում են ատամնաբուժական ծառայություններ և իրականացվում են վիրաբուժական փոքր միջամտություններ:

Որպես դրական առաջընթաց կարելի է նշել, որ **ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկը** համալրվել է նոր թվային ռենտգեն հետազոտման սարքավորումով: Այնուամենայնիվ, քրեակատարողական հիմնարկում առկա բազմաթիվ այլ բժշկական սարքավորումներ հին են, իսկ շատերն օգտագործման ենթակա չեն, հետվիրահատական ինտենսիվ թերապիա ապահովելու հնարավորություն չկա:

Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ բժշկական սարքավորումների, պարագաների և տեխնիկական հագեցվածության պակասը

⁷⁵⁸ Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 1936-Ն որոշում

կամ բացակայությունը պայմանավորված է ֆինանսական միջոցների բացակայությամբ: Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ պաշտոնապես մեկնարկել է «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բանտերում» ծրագիրը: Ծրագրի նպատակն է ամրապնդել մարդու իրավունքները՝ բարելավելով բուժօժանոթության, այդ թվում՝ հոգեկան առողջության հետ կապված խնամքի տրամադրումը Հայաստանի բանտերում: 24 ամիս տևողությամբ ծրագիրը նախատեսվում է ավարտին հասցնել 2017 թվականի փետրվարի 28-ին: Ծրագրի բյուջեն կազմում է 900.000 եվրո: Ծրագրի շրջանակում կբարելավվի Հայաստանի Հանրապետության քրեակատարողական հիմնարկներում առողջապահության իրավական և ինստիտուցիոնալ շրջանակը, կվերապատրաստվեն դրանց անձնակազմը, ինչպես նաև օժանդակություն կցուցաբերվի ՀՀ կառավարությանը՝ քրեակատարողական հիմնարկների բուժմասերի նյութական պայմանները բարելավելու հարցում:

Ղեղորայք

ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում անդրադարձել է քրեակատարողական հաստատություններին դեղորայքով ապահովելու (բացառությամբ տուբերկուլոզի բուժման համար անհրաժեշտ դեղորայքի) խնդրին՝ նշելով, որ այս հարցը մշտապես մտահոգել է Կոմիտեին: 2010 թվականի այցի ժամանակ որևէ առաջընթաց այս բնագավառում ԽԿԿ-ն չէր արձանագրել: Ավելին, նշել էր, որ դեղորայքի գնման համար անհրաժեշտ բյուջեն շատ սահմանափակ է, և անազատության մեջ պահվող անձինք հաճախ ստիպված են եղել բժշկի կողմից նշանակված դեղորայքը գնել իրենց կամ իրենց ազգականների ֆինանսական միջոցներով:

ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են, որ դեղորայքի համար նախատեսված անհրաժեշտ բյուջեն սահմանափակ է, և ազատությունից զրկված անձինք հաճախ ստիպված են բժշկի կողմից նշանակված դեղորայքը գնել իրենց միջոցներով: Խնդիրներ են արձանագրվել դեղորայքի անբավարար լինելու վերաբերյալ: Որպես այդպիսին, նշվում էին հակահիպերտենզիվ, ոչ ստերոիդային, հակաբորբոքային, ցավազրկող, հոգեմետ դեղորայքը, ինսուլինային պրեպարատները և այլ դեղատեսակներ: Միաժամանակ, քրեակատարողական հիմնարկների դեղորայքի հաշվառման մատյանում հարազատների կողմից բերվող բազմատեսակ դեղորայք էր գրանցված, որոնցից շատերը կային քրեակատարողական հիմնարկում (օրինակ՝ «Ասպիրին», «Կատվախոտի ոգեթուրմ» և այլն):

Ստահոգիչ է Սյունիքի մարզի Նոնաձոր գյուղում տեղակայված ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի բաց ուղղիչ հիմնարկի դեղորայքային ապահովվածությունը խիստ սահմանափակ էր (առկա էր միայն «Յոդ», «Կատվախոտի հաբեր» և բամբակ): Տարածքում կան սև կարիճներ, օձեր (գյուրգա տեսակի), սակայն հակահիստամինային, հակաշոկային

որևէ պրեպարատ նախատեսված չէր, ինչպես նաև չկար հակագյուրզին դեղամիջոց, իսկ մոտակա բժշկական կենտրոնը 10 կիլոմետր հեռավորության վրա էր գտնվում ու ճանապարհը հաճախ անանցանելի էր:

Հատուկ ուշադրության կարիք ունի **ՀՀ արդարադատության նախարարության «Արմվյան» քրեակատարողական հիմնարկում** մինչև 3 տարեկան երեխաներին դեղորայքով ապահովելու խնդիրը:

Բժշկական զննություն

«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Ներքին կանոնակարգի 9-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձը կալանավորվածներին պահելու վայր, իսկ դատապարտյալն ուղղիչ հիմնարկ ընդունվելիս նախնական բժշկական զննությունը սահմանված կարգով անցնում են կարանտինային բաժանմունքում:

Ըստ ԽԿԿ չափանիշների. «Ազատագրված անձանց բուժզննումը (ժամանման պահին կամ ավելի ուշ) պետք է կատարվի ազատագրկման վայրում աշխատող անձնակազմի լսելիության սահմաններից և, եթե համապատասխան բժիշկը հակառակը չպահանջի՝ տեսադաշտից դուրս: Ազատագրված անձի բուժզննումը պետք է կատարվի ոչ թե խմբերով, այլ անհատականորեն» (կետ 51):

ԲԿԱՍ փորձագետներն ինչպես և 2014, այնպես էլ 2015 թվականի ընթացքում կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզել են, որ բժշկական զննությունը քրեակատարողական հիմնարկներում իրականացվում է ոչ պատշաճ: Բոլոր քրեակատարողական հիմնարկներում նախնական բժշկական զննությունը կատարվում է քրեակատարողական հիմնարկի աշխատակիցների՝ անվտանգության ապահովման բաժնի աշխատակցի, օրվա հերթապահ պատասխանատուի ներկայությամբ (թեպետ **ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում** բժշկական զննությունն իրականացվում է համապատասխան սենյակում (կահավորված և ապակեպատ), սակայն այն գտնվում էր անմիջապես օրվա հերթապահ

պատասխանատուի սենյակի դիմաց և վերջինիս տեսողության սահմաններում), խուզարկության հետ համատեղ, որտեղ ներկա է լինում նաև ազատությունից զրկված անձին ուղեկցող դասակի պատասխանատու ոստիկանության ծառայողը: Նախնական բժշկական զննությունը կատարվում է բուժանձնակազմի ներկայացուցչի (բժշկի, բուժքրոջ կամ բուժակի) «մասնակցությամբ»⁷⁵⁹: Ավելին, երբեմն ազատությունից զրկված մի քանի անձանց բժշկական զննությունն իրականացվում է միաժամանակ և համատեղ, երբեմն էլ ազատությունից զրկված անձինք ստորագրությամբ կամ այլ կերպ չեն ծանոթանում զննության արդյունքների հետ, որը հաստատվում է նաև համապատասխան արձանագրությունների ուսումնասիրությամբ: Բացի այդ, բժշկական զննության համար նախատեսված սենյակներն անհարմարավետ են, սանիտարահիգիենիկ պայմաններն անբավարար (**ՀՀ արդարադատության նախարարության «Մևան» քրեակատարողական հիմնարկ**):

Քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձինք հիմնականում ենթարկվում են մակերեսային բժշկական զննության, վնասվածքները պատշաճ չեն նկարագրվում, երբեմն գրառումները կատարվում են միայն ազատությունից զրկված անձի խոսքերից⁷⁶⁰, ինչպես նաև ջնջումներով և ուղղումներով⁷⁶¹: Այսպես, **ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում** այցի պահին ԲԿԱՍ փորձագետները տեսել են ամբողջությամբ ջնջված արձանագրություն, որը ստորագրված էր օրվա հերթապահ պատասխանատուի կողմից և հաջորդ օրվա ամսաթվով (09.05.2015թ.) կազմվել էր նույն անձի վերաբերյալ նոր արձանագրություն: Արձանագրությունը կազմող օրվա հերթապահ պատասխանատուն պարզաբանել է, որ նախապես տեղյակ է եղել անձին բերելու մասին, այդ պատճառով կազմվել է արձանագրություն առանց զննություն կատարելու. տվյալ անձը հետագայում չէր բերվել, որի պատճառով արձանագրությունը ջնջվել էր:

Մտահոգիչ է նաև, որ բժշկական զննության մատյանները պահվում են օրվա հերթապահ պատասխանատուի մոտ (բացառությամբ **ՀՀ արդարադատության նախարարության «Հրագրան» քրեակատարողական հիմնարկից**), մինչդեռ, ԽԿԿ չափանիշներով (76-77-րդ կետ) և ՀՀ օրենսդրությամբ⁷⁶² սահմանված է, որ բժշկական գաղտնիքը պետք է երաշխավորված և պահպանված լինի բժշկական

⁷⁵⁹ Փորձագիտական խորհրդի կողմից իրականացված այցերի ընթացքում պարզվել է, որ ՁՊՎ-ներ ընդունվող ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական զննությունն իրականացվում է ոստիկանության ծառայողների կողմից (անձնական խուզարկությանը զուգահեռ)՝ բուժաշխատողի բացակայության պատճառով (բացառությամբ՝ Երևան քաղաքի վարչության ՁՊՎ):

⁷⁶⁰ Նույն խնդիրն արձանագրվել է նաև ՁՊՎ-ներում Փորձագիտական խորհրդի կողմից իրականացված այցերի ընթացքում:

⁷⁶¹ Փորձագիտական խորհրդի կողմից իրականացված այցերի ընթացքում պարզվել է, որ ՁՊՎ-ներում լրացվող գրանցամատյանները լրացվում են բացթողումներով, հաճախ կատարվում են ուղղումներ:

⁷⁶² ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժասնիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետ

անձնակազմի կողմից:

Հարկ է նաև նշել, որ ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում բժշկական գննության ենթարկելու առնչությամբ նշել է, որ քրեակատարողական հիմնարկների բժշկական ծառայությունը կարող է և պետք է էական դերակատարություն ունենալ վատ վերաբերմունքի կանխման գործում: Կոմիտեն Հայաստանի իշխանությանը կոչ է արել մանրամասն ցուցումներ տալ բուժանձնակազմին՝ ազատությունից զրկված անձանց բժշկական գննության ենթարկելու առնչությամբ⁷⁶³:

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում 2015 թվականի հունվարից մինչ այցի պահը քրեակատարողական հիմնարկ մուտք գործած ազատությունից զրկված 141 անձանցից միայն թվով 66-ն էին ենթարկվել բժշկական գննության, փաստորեն, ազատությունից զրկված թվով 75 անձինք չէին ենթարկվել բժշկական գննության:

Ուսումնասիրությունների ընթացքում հանդիպել են նաև այնպիսի գրառումներ, որոնք մտահոգության տեղիք են տալիս: Օրինակ՝ արձանագրության մեջ նշվում է՝ «թարմ մարմնական վնասվածքներ չկան: 1 օր առաջ վայր ընկնելու հետևանքով «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ճակատային հատվածում ստացել է քերծված վերք»:

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում բժշկական գննության մասին հաշվառում չի վարվում համապատասխան մատյանում, այդ մասին գրառում է կատարվում միայն կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական քարտում, որտեղ

⁷⁶³ ԽԿԿ-ն ընդգծել է, որ «...քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուն պես անձը պետք է ենթարկվի բժշկական գննության, գննությունը երբեք չպետք է իրականացվի ոստիկանության ուղեկցող անձնակազմի ներկայությամբ, եթե անձը վնասվածքներ է ստացել հնարավոր վատ վերաբերմունքի պատճառով, դրա մասին միշտ պետք է անհապաղ ծանուցվի համապատասխան դատախազին, և նրան փոխանցվի վնասվածքների մասին զեկույցը: Անազատության մեջ գտնվող անձը և նրա պաշտպանը նույնպես պետք է իրավունք ունենան միաժամանակ ստանալու տվյալ զեկույցի պատճենը: Ամեն տեսակի բժշկական գննության առնչությամբ (անկախ այն հանգամանքից, թե դրանք իրականացվում են քրեակատարողական հիմնարկ փոխադրվելիս, թե հիմնարկում տեղի ունեցած բռնության հետևանքով)՝ ազատությունից զրկված անձանց բժշկական գննությունը պետք է իրականացվի քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց լսողության, իսկ մինչև համապատասխան բուժաշխատողի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս, դրանք պետք է լինեն համապարփակ՝ ներառելով վնասվածքների համապատասխան գննությունը. նման գննության ընթացքում ազատությունից զրկված համապատասխան անձի կողմից արված հայտարարությունները, բժշկական գննության օբյեկտիվ արդյունքները և բժշկական եզրակացությունները չպետք է հասանելի լինեն քրեակատարողական հիմնարկի բուժանձնակազմի անդամ չհանդիսացող անձանց համար (ազատությունից զրկված անձանց գննող բուժանձնակազմը կարող է, ըստ անհրաժեշտության, տեղեկացնել քրեակատարողական հիմնարկի անձնակազմին քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց առողջական վիճակի, այդ թվում՝ անցկացվող բուժման և առողջությանը սպառնացող կոնկրետ վտանգների մասին)»:

հիմնականում կատարվում է «այս պահին գանգատներ չի նշում, թարմ մարմնական վնասվածքներ չունի» գրառումը⁷⁶⁴:

Վերոգրյալ երևույթները, ինչպես նաև համապատասխան մատյաններում արդեն իսկ կատարված գրառումների ակնհայտ ջնջումներն ու շտկումները բռնությունների ու հնարավոր խոշտանգումների դրսևորումների բացահայտման լուրջ խոչընդոտ կարող են հանդիսանալ:

Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկ մուտք գործած կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական զննությունը հնարավորինս անց է կացվում անհատական կարգով՝ այլ ծառայողների կամ ուղեկցող ոստիկանության ծառայողների լսողության և տեսողության սահմաններից դուրս: Քրեակատարողական հիմնարկների վարչակազմին հրահանգվել է բացառել բժշկական զննության համատեղումը խուզարկության իրականացման հետ: Յուրաքանչյուր զննության արդյունքները գրանցվում են բժշկական քարտում: Բռնության հատկանիշների առկայության դեպքում համապատասխան մատյանում կազմվում է արձանագրություն, որին պարտադիր ծանոթանում է զննվողը: Կալանավորներին պահելու վայր ընդունված (այդ թվում՝ տարանցմամբ), ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրից փոխադրված անձանց նախնական բժշկական զննությունը լիարժեք, ոչ մակերեսային իրականացնելու, զննության արդյունքները ճիշտ արձանագրելու և օրենքով սահմանված մյուս պահանջների անշեղ կատարման նկատմամբ հսկողությունն ուժեղացնելու նպատակով դեռևս 08.06.2015 թվականին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի թիվ 40/7.1-2459 հանձնարարականով բոլոր քրեակատարողական հիմնարկների պետերին հանձնարարվել է խստորեն ղեկավարվել ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի «Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը հաստատելու մասին» թիվ 825-Ն որոշմամբ հաստատված կարգի 5-րդ գլխի պահանջներով՝ բացառելով բժշկական զննությունների իրականացման նկատմամբ մակերեսային մոտեցումը, զննության արդյունքներն արձանագրություններում ամրագրել օբյեկտիվորեն և լրիվությամբ: Բժշկական զննությունը պատշաճ կազմակերպելու, ինչպես նաև զննության արդյունքներն

⁷⁶⁴ Այս կապակցությամբ ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում նշել է, որ «...այցելած քրեակատարողական հաստատություններում ազատությունից զրկված անձինք տվյալ քրեակատարողական հիմնարկ փոխադրվելուց կարճ ժամանակ անց ենթարկվել էին բժշկական զննության: Այնուամենայնիվ, «Կոշ» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձինք անցնում էին մակերեսային նախնական բժշկական զննություն (օրինակ՝ չէին ենթարկվում ֆիզիկական զննության)»:

արձանագրելու համար առաջիկայում նախատեսվում է քրեակատարողական հիմնարկների բուժանձնակազմի վերապատրաստումներ՝ Ստամբուլյան արձանագրությունների պահանջների թեմայով:

Բժշկական սպասարկման կազմակերպումը ուղղիչ հիմնարկների բուժական ստորաբաժանումներում, բուժական ուղղիչ և առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում

Հոգեկան առողջության պահպանման խնդիրներ

Եվրոպական բանտային կանոնների 47.2-րդ կանոնի համաձայն. «Բանտի բժշկական ծառայությունը պետք է կազմակերպի հոգեբուժական բուժման կարիք ունեցող բոլոր բանտարկյալների բուժումը...»:

Ըստ ԽԿԿ չափանիշների՝ «...հոգեկան հիվանդությամբ տառապող ազատագրված անձանց անհրաժեշտ է պահել և խնամել բավականաչափ սարքավորումներ և պատշաճ ձևով պատրաստված անձնակազմ ունեցող բուժական հիմնարկում: Այդպիսի հիմնարկ կարող է լինել սովորական հոգեբուժական հիվանդանոցը կամ ուղղիչ համակարգի շրջանակներում գործող հատուկ սարքավորված հոգեբուժական բաժանմունքը» (կետ 43):

Հոգեկան առողջության պահպանման համար քրեակատարողական ծառայությունում նախատեսված է հոգեբուժական բաժանմունք **ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում**: Վերջինս գտնվում է թերապևտիկ բաժանմունքի հետ նույն մասնաշենքի երկրորդ հարկում: Բաժանմունքի շենքի հին լինելու պատճառով հիվանդասենյակները վերանորոգման խիստ կարիք ունեն, որոշ հիվանդասենյակների սանիտարական վիճակն անբավարար է, հիվանդասենյակները մաքրում են հիվանդները, քանի որ սանիտարական անձնակազմ չկա, այցի պահին հատակին խավարասերներ կային:

Բաժանմունքի մուտքն ու ելքն ազատ է: Որպես դրական առաջընթաց կարելի է նշել, որ հոգեկան խնդիրներ ունեցող անձինք կարող են զբոսնել, քանի որ հիվանդասենյակների դռները բաց են, շփվել բակում մյուս հիվանդների հետ, սակայն մտահոգիչ է, որ հոգեկան խնդիրներ ունեցող անձինք առանց համապատասխան մասնագիտական հսկողության, ելնելով պայմաններից, զբոսնում են այլ բաժանմունքների հիվանդների հետ (թերապևտիկ, վիրաբուժական, ինֆեկցիոն) և ազրեսիվ վարք ցուցաբերելու դեպքում կարող են միջամտել այլ բաժանմունքի հիվանդները՝ նրանց զսպելու նպատակով:

Հոգեբուժական բաժանմունքում նախատեսված էին բաժանմունքի պետի և 2 գլխավոր մասնագետի, երկու 2-րդ կարգի մասնագետի հաստիքներ, որոնցից մեկը ցերեկային բուժքույր է, մյուսը ներգրավված է քրեակատարողական հիմնարկի հերթապահ խմբում և աշխատում է հերթափոխով՝ սպասարկելով ամբողջ

քրեակատարողական հիմնարկը (փաստացի բաժանմունքում չի լինում) և 3 սանիտարի հաստիքներ (քաղաքացիական), որոնցից մեկը կրկին ներգրավված է հերթապահ խմբում, մյուսն էլ կես դրույքով է աշխատում, երրորդ հաստիքն այցի պահին թափուր էր: Փաստացի հոգեբուժական բաժանմունքի հիվանդների հսկողությունը պատշաճ չէր կազմակերպվում:

Նշված բաժանմունքի համար առանձին անվտանգության ապահովման աշխատակից նախատեսված չէր: Հիվանդները հսկվում էին ընդհանուր մասնաշենքի մեկ անվտանգության ծառայողի կողմից: Գիշերային ժամերին բաժանմունքում բժշկական անձնակազմ չի լինում, իսկ ընդհանուր մասնաշենքի անվտանգությունն ապահովող ծառայողը գտնվում է մոտ 50 մետր հեռավորության վրա գտնվող պահակակետում: Քնի ժամին (երեկոյան 21:00-ից հետո) հոգեբուժական մասնաշենքի մուտքի մետաղական դռները (ճաղավանդակները) փակվում են: Խիստ անհրաժեշտության դեպքում կամ արտակարգ դեպքերում հիվանդ ազատազրկվածները բարձր բղավում են մասնաշենքի օրվա հերթապահ պատասխանատուին (չկա կանչի այլ միջոց), ով, եթե լսում է բղավոցը, ըստ անհրաժեշտության, տեղեկացնում է պատասխանատուներին և կազմակերպվում է անհրաժեշտ բժշկական օգնություն հերթապահ խմբի օգնությամբ:

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում բաժանմունքի պետի հավաստմամբ ֆիզիկական զսպման միջոցներ չկան: Որպես զսպման միջոց կիրառվում է դեղորայքային ներարկումը, իսկ մինչ այդ ֆիզիկական ուժով (բժիշկների (նույնիսկ այլ բաժանմունքներից են օգնության գալիս), բուժքույրերի, օրվա հերթապահ պատասխանատուի, հիվանդների օգնությամբ) բռնվում է ագրեսիվ հիվանդը: Այդ ներարկման մասին նշվում է հիվանդ ազատազրկվածի հիվանդության պատմագրում որպես հանդարտեցման բժշկական մեթոդ, սակայն առանձին մատյան չի վարվում կատարված միջամտությունն արձանագրելու համար:

Այս խնդրին ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում անդրադարձ է կատարել՝ նշելով. «... ըստ անձնակազմի՝ զսպման մեխանիկական միջոցներ այլևս չէին օգտագործվում, և ագրեսիվ հիվանդները տեղափոխվել էին հոգեբուժական այլ հաստատություններ: Այլ կերպ ասած՝ բացակայում էր զսպման դեպքերի հատուկ գրանցամատյանը (լինի դա ձեռքով, մեխանիկական, թե քիմիական զսպում)»:

Որոշ ազատազրկված անձինք, հաշվառված լինելով մի բաժանմունքում, բնակեցված էին մեկ այլ բաժանմունքում ազատ հիվանդասենյակ չլինելու պատճառով, երբեմն էլ՝ անվտանգության ապահովման կամ ուղղիչ հիմնարկի տեսակի նկատառումներով: Օրինակ՝ հոգեբուժական բաժանմունքում 22-ից 3-ն այլ բաժանմունքում էին հաշվառված: Հոգեբուժական բաժանմունքում բնակվում էին նաև մոտ 10 ինֆեկցիոն (ՄԻԱՎ/ՉԻԱՎ վարակակիրներ) հիվանդներ, քանի որ ինֆեկցիոն բաժանմունքը չունի անհրաժեշտ հիվանդասենյակներ: Նույն

պատճառով տուբերկուլյոզային բաժանմունքի առանձին հարկում (4-րդ) գտնվում են ինֆեկցիոն բաժանմունքում հաշվառված 8 հիվանդներ («բենզինիստներ»):

ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում նշել էր, որ հոգեկան խանգարում ունեցող հիվանդները հոգեբուժական բաժանմունքում տեղավորված էին մոտ 15 սոմատիկ հիվանդների հետ՝ հիվանդանոցում հիվանդների տեղավորման դժվարությունների պատճառով: ԽԿԿ-ն ընդգծել էր, որ դա բացասաբար էր անդրադարձել հոգեկան խանգարում ունեցող հիվանդների բուժման վրա՝ առաջարկելով առանձնացնել հիվանդներին:

Այս հարցի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ շենքային պայմաններից ելնելով՝ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի բաժանմունքը չունի հատկացված առանձին հիվանդասենյակներ և հիվանդները պահվում են այլ բաժանմունքներում, սակայն ապահովվում են մեկուսացման պայմանները: Տեխնիկական և ֆինանսական միջոցների առկայության դեպքում կկազմակերպվի նաև ինֆեկցիոն բաժանմունք՝ առանձնացված հիվանդասենյակներով:

Մյուս քրեակատարողական հիմնարկներում պատշաճ չի կազմակերպվում հոգեբուժական օգնությունը, քանի որ հիմնարկներում չկան հոգեբույժներ (բացառություն է կազմում ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկը), ինչպես նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք պահվում են այլ դատապարտյալների կամ կալանավորված անձանց հետ բնակելի գոտում կամ մեկուսացվում են, իսկ երբեմն՝ պահվում բժշկական սպասարկման բաժնում: Ազատազրկվածները պնդում էին, որ հաճախ հոգեբուժական խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց բուժումը նշանակվում է հեռախոսազանգի միջոցով հոգեբույժի խորհրդատվության արդյունքում՝ առանց օբյեկտիվ գննության:

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում նախատեսված չէր հոգեբուժական բաժանմունք և բժշկական անձնակազմում ներգրավված էր մեկ բժիշկ-հոգեբույժ:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատազրկվածները պահվում էին առաջին հարկի խցերում, որոնք փակ ուղղիչ տեսակի հիմնարկի համար նախատեսված խցեր էին, ընդ որում, նրանց լավագույն դեպքում տրամադրվում էր 1 ժամ զբոսանք: Այցի պահին հաշվառված էր մոտ 70 հոգեկան առողջության խնդիր ունեցող անձ: Բժշկի հավաստմամբ՝ վերջիններիս նկատմամբ զսպման միջոցներ չեն կիրառվում, քանի որ չկան ազրեսիվ հիվանդներ: Հաճախ հոգեկան առողջության հետ կապված խնդիր ունեցող ազատազրկվածներին ստացիոնար բուժում ստանալու նպատակով տեղափոխում են ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ այլ քրեակատարողական հիմնարկներից՝ առանց հաշվի առնելու տվյալ դատապարտյալի ուղղիչ հիմնարկի տեսակի մեկուսացվածության աստիճանը:

Թեև **ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում** չկա հոգեբույժ, այնուամենայնիվ, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ցմահ ազատազրկվածներին հաճախակի այցելում են հոգեբույժներ, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր հոգեբույժը: Հոգեբուժական ծառայության կազմակերպման նպատակով մեկ տարվա ընթացքում 4-5 անգամ այցելում է մասնագետների խումբ⁷⁶⁵:

Խնդրահարույց է **ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում** հոգեբուժական օգնության կազմակերպումը, քանի որ քրեակատարողական հիմնարկում հոգեբույժ չկա, որի արդյունքում ստացիոնար հոգեբուժական օգնություն ստանալու անհրաժեշտության դեպքում փաստացի չեն օգտվում ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկից (չկա կանանց բաժանմունք): ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկից հոգեբուժական մասնագիտացված հիվանդանոց բուժում ստանալու համար ազատազրկված անձը կարող է տեղափոխվել միայն ծայրահեղ կամ փորձաքննության անհրաժեշտության դեպքում, այլ դեպքերում բուժում ստանում են տեղում:

Մտահոգիչ է, որ որոշ քրեակատարողական հիմնարկներում (**ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ», «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկներ**) արձանագրվել են դեպքեր, երբ հոգեբուժական խնդիրներ ունեցող դատապարտյալները հրաժարվում են ընդունել հոգեբույժի կողմից խորհրդատվական կարգով նշանակված դեղորայքը: Արդյունքում, փաստացի չի կազմակերպվում անձի բուժումը: Հիվանդներից շատերը հրաժարվում են «Հալոպերիդոլ» և «Տրիֆտազին» դեղատեսակներից, քանի որ չեն վստահում քրեակատարողական հիմնարկի կողմից տրամադրված դեղորայքի որակին, ինչպես նաև հոգեբույժի՝ հեռախոսով տրամադրված խորհրդատվությանը:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց արդյունավետ բուժմանը խոչընդոտում է նաև քրեակատարողական հիմնարկի վատ նյութակենցաղային պայմանները, ինչպես նաև այլ բուժման միջոցների բացակայությունը (աշխատանքային թերապիա, հոգեթերապիա և այլն):

Ատամնաբուժական ծառայություն

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» թիվ 318-ն որոշմամբ սահմանված է, որ ձերբակալվածները, կալանավորված անձինք և ազատազրկման դատապարտվածներն օգտվում են

⁷⁶⁵ ԽԿԿ-ն 2010 թվականի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցում նշել է, որ «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում պահվող՝ ցմահ ազատազրկման դատապարտված երկու անձանց մոտ մենախցում երկար ժամանակով պահվելու պատճառով առաջացել էին հոգեկան առողջության խնդիրներ, որոնք չէին լուծվել (տե՛ս 71-րդ պարբերությունը):

պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից, քանի որ վերջիններս ընդգրկված են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում (թիվ 1 Հավելվածի 19-րդ կետ):

Եվրոպական բանտային կանոնների 41.5-րդ կետի համաձայն՝ «Յուրաքանչյուր բանտարկյալի պետք է հասանելի լինեն որակավորված ատամնաբույժի և ակնաբույժի ծառայություններ»:

Ըստ ԽԿԿ չափանիշների՝ «...ազատագրված ամեն մի անձ պետք է հնարավորություն ունենա օգտվելու բարձրակարգ ատամնաբույժի ծառայություններից: Բացի այդ, ազատագրված վայրերում աշխատող բժիշկները պետք է մասնագետներ ներգրավելու հնարավորություն ունենան» (կետ 35):

ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են, որ որոշ դեպքերում ատամնաբուժական ծառայությունը պատշաճ չի կազմակերպվում: Թեև փաստացի քրեակատարողական հիմնարկներում նախատեսված են ատամնաբուժական կաբինետներ, այնուամենայնիվ, դրանք լիցենզավորված չեն, բավարար տարածք նախատեսված չէ, տեխնիկական հագեցվածությունը թերի է (նախատեսված կամ բավարար չեն պլոմբանյութերը, անհրաժեշտ գործիքների հավաքածուները, ստերիլիզատորները և այլն)⁷⁶⁶:

Մեկ այլ խնդիր է, որ բժշկական սպասարկման բաժնի հաստիքներում ատամնաբույժ նախատեսված չէ: Այս պարագայում ատամնաբույժն ըստ անհրաժեշտության այցելում է քրեակատարողական հիմնարկ կամ վարչակազմն ատամնաբուժական ծառայությունը կազմակերպում է բուժակի հաստիքում ատամնաբուժական կրթություն ունեցող մասնագետի միջոցով (ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներ): Որոշ դեպքերում էլ ծառայությունը դառնում է դժվարամատչելի, կազմակերպվում է ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկված անձանց հիմնականում սպասարկում է Բժշկական աշխատանքային հանձնաժողովի հետ ժամանած ատամնաբույժը տեղում կամ ազատագրված անձինք սպասարկվում են մասնավոր ատամնաբուժական կլինիկաներում՝ վճարովի հիմունքներով (ազատությունից զրկված անձինք ստիպված են լինում իրենք հոգալ ատամնաբուժական ծախսերը, քանի որ Բժշկական աշխատանքային հանձնաժողովը հիմնականում այցելում է տարին 2

⁷⁶⁶ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի «Ստոմատոլոգիական կենտրոնների, պոլիկլինիկաների և կաբինետների գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու և Հ՝այաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 17-ի N 1662-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1275-Ն որոշում:

անգամ), իսկ **ՀՀ արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում** ատամնաբույժը գրեթե ամեն օր էր այցելում հիմնարկ (բացի կիրակի օրերից) և համապատասխան վճարի դիմաց սպասարկում ազատությունից զրկված անձանց:

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում կար ատամնաբույժ, ատամնաբուժական կաբինետում նախատեսված էր երկու ատամնաբուժական բազկաթոռ, որոնցից մեկն առանձնացված էր ՄԻԱՎ-ՉԻԱՀ-ով և տուբերկուլյոզով հիվանդների համար: Կաբինետը համալրված չէր ռենտգեն սարքով:

ՀՀ արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում ատամնաբուժական կաբինետ նախատեսված չէր, ատամնաբուժական բազկաթոռը տեղադրված էր բժշկական սպասարկման սենյակում և ինչպես նախորդ այցերին, այն կրկին սարքին չէր:

Պալիատիվ բժշկական օգնություն

Պացիենտների իրավունքների եվրոպական խարտիայի 11-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր մարդ, իր հիվանդության յուրաքանչյուր փուլում, ունի տառապանքից ու ցավից հնարավորինս խուսափելու իրավունք: Այս նպատակով բժշկական ծառայությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները. օրինակ՝ պալիատիվ օգնության տրամադրումը և պացիենտների համար դրանց մատչելիության բարձրացումը»:

«Եվրոպայում պացիենտների իրավունքների խթանման մասին» հռչակագրի 5-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասեր. Պացիենտներն ունեն իրենց տառապանքը թեթևացնելու իրավունք՝ գոյություն ունեցող գիտելիքներին համապատասխան: ...Անբուժելի հիվանդությունների դեպքում պացիենտներն ունեն մարդկային բուժման:

Պալիատիվ բժշկական օգնության տրամադրման հարցին անդրադարձ է կատարվել ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 9 նիստի «2. Հայաստանի Հանրապետությունում պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնության հայեցակարգին և հայեցակարգի կատարումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» թիվ 32 արձանագրության քաղվածքով:

Հարկ է նաև նշել, որ պալիատիվ խնամքի առավել հրատապ ներդրման և օրենսդրորեն պատշաճ կարգավորման հարցերին անդրադարձ էր կատարվել «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում:

Պալիատիվ (ցավամոքիչ) բժշկական օգնության տրամադրման կազմակերպումը խնդրահարույց է նաև քրեակատարողական հիմնարկներում:

Տառապանքից և ցավից հնարավորինս խուսափելու իրավունքն ամրագրված է մի շարք եվրոպական պացիենտների իրավունքների խարտիաներում և

հոշակագրերում: Նման խնամքի հասանելիությունն իրավական պարտավորություն է, որն աջակցություն է ստանում միջազգային կազմակերպությունների կողմից և հիմնվում է ֆիզիկական ու հոգեկան առողջության լավագույն աստիճանի հասնելու հիմնարար իրավունքի վրա: Այն դեպքերում, երբ հիվանդները տառապում են սաստիկ ցավերից, և պետությունը ձախողում է պալիատիվ խնամքի տրամադրումը, ապա դա դիտարկվում է որպես դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք⁷⁶⁷:

Բուժօգնություն ստանալիս հիվանդի կարևորագույն իրավունքներից է ցավից և տառապանքներից զերծ մնալու իրավունքը: Այդ իրավունքի իրականացման գործում կարևոր խնդիր է անբուժելի հիվանդների արդյունավետ հակացավային բուժման կազմակերպումը և խնամքը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բողոքներ պալիատիվ օգնության չկազմակերպման վերաբերյալ, իսկ ԲԿԱՄ փորձագետները հանդիպել են նման դեպքերի: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում ԲԿԱՄ փորձագետները հանդիպել են դատապարտյալի, ով շուրջ 5 ամիս գտնվում էր անկողնային ռեժիմում: Վերջինիս խուցը գտնվում էր հակասանիտարական վիճակում, խցում գարշահոտ էր: Դատապարտյալի մոտ ախտորոշվել էր «սուբարախնտիդալ արյան զեղում», որի հետևանքով վերջինիս մոտ պարալիզացվել էին ստորին վերջույթները և ձախ վերին վերջույթը, նա չէր կարողանում խոսել, հասկացնում էր դժվարությամբ: Վերջինիս համար նույնիսկ տակդիրներ նախատեսված չէին, դրանք գնում էր բժշկական անձնակազմն իր հաշվին: Անկողինը կեղտոտ էր (հակասանիտարական վիճակում), սպիտակեղեն չկար: Խնամք իրականացնող սանիտարներ քրեակատարողական հիմնարկում նույնպես չկային: Վերջինիս խնամքը, սննդի տրամադրումը և լոգանքը կազմակերպվում էր բժշկական անձնակազմի և մյուս դատապարտյալների կողմից: ՀՀ արդարադատության նախարարության Բժշկական աշխատանքային հանձնաժողովի կողմից վերջինս բազմաթիվ անգամ ենթարկվել է զննության, սակայն որևէ գրառում նրա առողջական վիճակի մասին հիվանդության պատմագրում չկար: Չկար նաև որևէ անդրադարձ վերջինիս հիվանդության համապատասխանությանը՝ պատժի կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում ներառված համապատասխան ախտորոշման հետ:

Մեկ այլ դեպքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղած դիմումով հայտնվել է, որ դատապարտյալը գտնվում է ծանր վիճակում՝ վերջինիս մոտ ախտորոշված է «Ստամոքսի և 12-մատնյա աղու քաղցկեղ, T3N2M1, լյարդի մետաստատիկ ախտահարում, մեզենտերիալ լիմֆադենոպաթիա»: Դատապարտյալը նշել է, որ պարբերաբար ունենում է տանջալի ցավեր, իսկ քրեակատարողական հիմնարկում տրամադրվող ցավազրկող դեղորայքը («Դիկլոֆենակ», «Կետոնալ»,

⁷⁶⁷ <http://www.eapcnet.eu/LinkClick.aspx?fileticket=WSwfXJuCR4Q%3D&tabid=1871>

«Անալզին-դիմեդրոլ») որևէ արդյունք չի տալիս: Քրեակատարողական հիմնարկի բժշկական անձնակազմը նույնպես փաստել է նշվածը և հավելել, որ դեղորայքի այլընտրանք չունեն:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի թմրամիջոցների նկատմամբ միջազգային վերահսկողության վերաբերյալ մի շարք կոնվենցիաներով⁷⁶⁸ սահմանված է որոշակի հոգեմետ դեղորայքի օգտագործման անհրաժեշտությունը բժշկական և գիտական նպատակներով:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը սահմանել է, որ «(...) քաղցկեղով հիվանդ դատապարտյալին երկարատև անազատության մեջ պահելը, ինչի հետևանքով վերջինս ենթարկվել է ֆիզիկական տառապանքների, համարվում է անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք (...)»⁷⁶⁹:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալի հիվանդության կապակցությամբ պալիատիվ բուժումն ապահովելու նպատակով ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից մատակարարող դեղատնային ցանցին հայտարարվել է գնման մրցույթ, որը կայացել է 2015 թվականի դեկտեմբերի 16-ին: Մինչդեռ հարկ է նշել, որ միայն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների բազմաթիվ զանգերից հետո գնման մրցույթի կայացման պահից մոտ 15 օր անց դատապարտյալին տրամադրվել է համապատասխան դեղորայքը:

Եվս մեկ դեպք արձանագրվել է դեռևս 2012 թվականին ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում, երբ ԲԿԱՄ փորձագետները հանդիպել են ցմահ դատապարտյալի, ով 5-րդ հարկի խցերից մեկում պահվում էր միայնակ: Երբ ԲԿԱՄ փորձագետները փորձել են ուսումնասիրել վերջինիս պահման պայմանները և հանդիպել նրան, պարզվել է, որ խուց հնարավոր չէ մուտք գործել, քանի որ խուցը թափթփված էր և ապահովված չէին սանիտարահիգիենիկ նվազագույն պայմանները: Երբ դատապարտյալը մոտեցել էր խցի ճաղավանդակին, նրա դեմքով անցնում էին խավարասերներ: Թեև 2013 թվականին դատապարտյալը տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի բժշկական սպասարկման բաժին, դատապարտյալը կրկին մեկուսացված էր, խցում սանհանգույց չկար ու վերջինս իր բնական կարիքները հոգում էր խցի տարածքում՝ չնայած աշխատակիցների հավաստմամբ՝ անհրաժեշտության դեպքում նրան ուղեկցում էին 2-րդ հարկում գտնվող սանհանգույց: Խցի դռան երկայնքով լցված էր

⁷⁶⁸ ՄԱԿ-ի 1961 թվականի «Թմրամիջոցների մասին» միասնական կոնվենցիա, ՄԱԿ-ի 1971 թվականի «Հոգեներգործուն նյութերի մասին» կոնվենցիա:

⁷⁶⁹ *Sté u Mouisel v. France* վճիռը, զանգատ թիվ 67263/01, կետ 34:

մոտ 10 սմ բարձրությամբ քլորակրի փոշի, որը, ըստ աշխատակիցների, կատարվել էր տհաճ հոտի և որդերի տարածումը կանխելու նպատակով:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ձեռնարկված միջոցների արդյունքում խցում կառուցվեց սանհանգույց, սակայն խցի սանիտարահիգիենիկ վիճակը չբարելավվեց:

Այս իրավիճակն արձանագրվել էր նաև ԽԿԿ-ի Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2014 թվականի զեկույցում և առաջարկվել անհապաղ տեղափոխել մասնագիտացված հոգեբուժական կլինիկա, որից հետո դատապարտյալը տեղափոխվել է ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունք, որոշ ժամանակ պահվել ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պատժախցում, որտեղ անհրաժեշտ պայմաններ չկային պատշաճ խնամք իրականացնելու համար: 2015 թվականի նոյեմբերի 9-ին դատապարտյալը մահացել է «Էրեբունի» բժշկական կենտրոնում:

Մտահոգիչ է նաև, որ հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև հետվիրահատական շրջանում գտնվող ազատազրկվածներին, ովքեր ունեն խնամքի կարիք կամ տեղաշարժման հետ կապված խնդիրներ, խնամում են այլ ազատությունից զրկված անձինք:

Բժշկական սպասարկման կազմակերպումը բուժական ուղղիչ և առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում

Եվրոպական բանտային կանոնների 40.3-րդ կետի համաձայն. «Առանց իրենց իրավական կարգավիճակով պայմանավորված որևէ խտրականության օգտվել երկրի առողջապահական ծառայություններից»:

Նույն կանոնների 46.1-րդ կետի համաձայն. «Հիվանդ բանտարկյալները, որոնք մասնագիտացված բուժման կարիք ունեն, տեղափոխվում են մասնագիտացված հիմնարկներ կամ քաղաքացիական հիվանդանոցներ, եթե տվյալ բուժումը հնարավոր չէ կազմակերպել բանտի ներսում»:

Ըստ ԽԿԿ չափանիշների՝ «...ամեն անգամ, երբ ազատազրկված անձանց հիվանդանոց տեղավորելու կամ հիվանդանոցի մասնագետների կողմից բուժնման ենթարկելու անհրաժեշտություն է ծագում, նրանց հարկավոր է տեղափոխել այնպես և այնքան շտապ, որքան պահանջում է նրանց առողջական վիճակը» (կետ 37):

Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունն արդյունավետ ապահովելու նպատակով վերջիններս, ըստ անհրաժեշտության, տեղափոխվում են ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ կամ առողջապահական մարմիններ (քաղաքացիական հիվանդանոցներ): Այդ նպատակով անհրաժեշտ է ստանալ ՀՀ

արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի կողմից տրվող կարգագիրը, որի կողմից մերժման դեպքերը հայտնվում են գրավոր՝ նշելով «բուժումը կազմակերպել տեղում»: Այս դեպքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ բուժող բժիշկը, ելնելով առկա պայմաններից, տեխնիկական հագեցվածությունից և մասնագիտական կարողություններից, գտնում է, որ ազատությունից զրկված անձի արդյունավետ բուժումն անհրաժեշտ է կազմակերպել այլ մասնագիտացված բուժհաստատությունում, մինչդեռ, քրեակատարողական վարչությունը գրավոր հրահանգում է, որ բուժումը կազմակերպվի տեղում: Երբեմն էլ, կարգագրի պահանջը թողնվում է անպատասխան (մոտ 2-3 ամիս)՝ ակնկալելով, որ այդ հարցը դեռևս քննարկվում է կամ հրատապ չէ, կամ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության համաձայնությունը երբեմն ստանում են բանավոր (դեռևս հանդիպում են դեպքեր, երբ կարգագրի պահանջագիրը ուղարկվում է Քրեակատարողական վարչություն միայն վարչությունից բանավոր համաձայնությունը ստանալուց հետո): Այսպես, ԲԿԱՄ փորձագետները **ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում** կատարած ուսումնասիրության արդյունքում արձանագրել են, որ այցի օրը՝ 29.05.2015 թվականին, դեռևս 16.03.2015 թվականից պահանջված կարգագիրը չէր ստացվել (անձն ուներ հոգեկան առողջության խնդիր⁷⁷⁰ և հրաժարվում էր ընդունել հոգեբույժի նշանակված դեղամիջոցները)⁷⁷¹:

Քրեակատարողական վարչության ներկայացուցիչների հավաստմամբ՝ բացառվել են տեղափոխումների բանավոր համաձայնեցման պրակտիկան և տեղափոխումները կատարվում են կարգագրերի հիման վրա, սեղմ ժամկետներում, առանց անհարկի ձգձգումների: Այնուամենայնիվ, շտապ դեպքերում կարող են ուղղակի հեռախոսազանգով ստանալ համաձայնություն: Դրական պատասխանները, որպես կանոն, ստացվում են 2-3 շաբաթվա ընթացքում:

Մտահոգիչ է նաև, որ ոչ բոլոր դեպքերում է ազատությունից զրկված անձը կարողանում օգտվել իր բժշկին ընտրելու իրավունքից: Օրինակ՝ եթե

⁷⁷⁰ Ըստ ԽԿԿ չափանիշների «...հոգեկան հիվանդությամբ տառապող ազատազրկված անձանց անհրաժեշտ է պահել և խնամել բավականաչափ սարքավորումներ և պատշաճ ձևով պատրաստված անձնակազմ ունեցող բուժական հիմնարկում: Այդպիսի հիմնարկ կարող է լինել սովորական հոգեբուժական հիվանդանոցը, կամ ուղղիչ համակարգի շրջանակներում գործող հատուկ սարքավորված հոգեբուժական բաժանմունքը»:

⁷⁷¹ ԽԿԿ-ն 2010թ. Հայաստան կատարած այցելության վերաբերյալ զեկույցում անդրադարձ էր կատարել ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում անազատության մեջ պահվող անձանց այլ բուժկետեր, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ տեղափոխելու լուրջ ուշացման դեպքեր (այսինքն՝ մինչև 6 ամիս ժամկետով): Այս խնդիրը ԽԿԿ-ի համար լուրջ մտահոգության առարկա էր և Կոմիտեն հորդորել է Հայաստանի իշխանություններին ապահովել հիվանդանոցային բուժման կարիք ունեցող՝ ազատությունից զրկված անձանց արագ տեղափոխումը համապատասխան բուժկետեր: ԽԿԿ-ն առաջարկել է նաև անհրաժեշտության դեպքում վերանայել որոշումների ընդունման գործընթացը:

ազատությունից զրկված անձը պատրաստ է իր իսկ միջոցներով խորհրդատվություն կամ բուժում ստանալ քաղաքացիական հիվանդանոցում իր նախընտրած բժշկի մոտ, ապա նման իրավունքը հաճախ խոչընդոտվում է (ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2015 թվականի ընթացքում ստացել է նման բողոքներ):

Առանձնակի մտահոգիչ է նախկին իրավապահ մարմինների աշխատակիցների, կանանց և անչափահասների նեղ մասնագիտական բժշկական օգնության կազմակերպումը, քանի որ **ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկում** վերը նշված անձանց համար բժշկական օգնություն և սպասարկում կազմակերպելու համար պայմաններ նախատեսված չեն:

Մեկ այլ խնդիր է այն, որ քրեակատարողական հիմնարկներից քաղաքացիական հիվանդանոցներ կամ «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ ազատությունից զրկված անձինք տեղափոխվում են վարչակազմի ծառայողական կամ անձնական շահագործման մեքենաներով կամ տարածքային սպասարկման շտապօգնության վճարովի ծառայության միջոցով (օրինակ՝ **ՀՀ արդարադատության նախարարության «Սևան», «Կոշ», «Հրազդան», «Աբովյան» քրեակատարողական հիմնարկներից**):

Մասնավորապես, **ՀՀ արդարադատության նախարարության «Սևան» քրեակատարողական հիմնարկից** հիվանդ դատապարտյալների փոխադրումը ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» կատարվում է «Հրազդան» բժշկական կենտրոն շտապ օգնության ծառայության օգնությամբ սահմանված 20.000 ՀՀ դրամ գումարը վճարելուց հետո կամ առանձին դեպքերում տեղափոխումն իրականացվում է աշխատակիցների մեքենաներով:

Մտահոգիչ է, որ 2015 թվականի երկրորդ կիսամյակում կալանավորված անձանց և դատապարտյալների, ինչպես նաև նրանց ազգականների կողմից ստացվել են բազմաթիվ բողոքներ այն մասին, որ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում կալանավորված անձանց և դատապարտյալների հետազոտությունները և բուժումը չեն կատարվում: Այսպես օրինակ՝ **ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի** դատապարտյալին դիմաձևնոտային վիրաբույժը գննության արդյունքներով առաջարկել է կատարել պունկցիոն դիագնոստիկա, ինչպես նաև դենտալ համակարգչային տոմոգրաֆիա: Մինչդեռ, նշված հետազոտությունները հետաձգվել են անհայտ ժամանակով: Մեկ այլ դեպքով, **ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի** ցմահ դատապարտյալին ցուցված վիրահատական միջամտությունը, իսկ **ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի** դատապարտյալին բազմապրոֆիլ կլինիկայում բժշկական օգնությունը չի կազմակերպվել: Նմանատիպ բողոքներ ստացվել են նաև

ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկից, «Հրագդան» քրեակատարողական հիմնարկից (դատապարտյալներից մեկին «Հրագդան» բժշկական կենտրոնում կատարել են հետազոտություն, որի համար ստիպված վճարել էր դատապարտյալը) և այլն:

Հանդիպել են նաև դեպքեր, որ ազատագրված անձը տեղափոխվել է շտապ օգնության ծառայության միջոցով քաղաքացիական հիվանդանոց և ներկայացվել է տեղեկանք, որ վերջինս կալանավորված անձ է (մեկ այլ դեպքով դատապարտյալ), սակայն քաղաքացիական հիվանդանոցը վիրահատության կամ բժշկական միջամտության համար գումար է պահանջել: Երբեմն ազատագրված անձինք քաղաքացիական հիվանդանոցից դուրս են գրվում վիրահատության հաջորդ օրը՝ մեկնաբանելով, որ հիվանդանոցը ծանրաբեռնված է և հետվիրահատական բուժումը շարունակվում է քրեակատարողական հիմնարկի բուժմասում: Այսպես, **ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում** ԲԿԱՄ փորձագետները հանդիպել են նախորդ օրը վիրահատված դատապարտյալի, ով դուրս էր գրվել «Էրեբունի» բժշկական կենտրոնից դեռևս դրենաժավորված: Արդյունքում, դատապարտյալի ինքնազգացողությունը վատացել է և ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկ մի քանի անգամ հրավիրվել է վիրաբույժ՝ անհրաժեշտ բժշկական խորհրդատվություն և օգնություն ցուցաբերելու համար (հարազատները հայտնել են, որ նման իրավիճակը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ հնարավոր չի եղել պետպատվերի շրջանակներում կազմակերպել հետվիրահատական բուժումը, իսկ իրենք ֆինանսական միջոցներ չունեին հոգալու այդ ծախսերը): Մեկ այլ դեպքով, դատապարտյալը վիրահատվել է «Արմենիա» բժշկական կենտրոնում, հաջորդ օրը դրենաժավորված տեղափոխվել **ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկ** և առաջացած բարդության հետևանքով կրկին տեղափոխվել է «Արմենիա» բժշկական կենտրոն՝ կրկնակի, ավելի ծավալուն վիրահատության (ազատագրվածը հայտնել է, որ նման իրավիճակը պայմանավորված է եղել իր նկատմամբ «հատուկ վերաբերմունքով», որի պատճառով լրացուցիչ պահակակետ և պահակախումբ չի տրամադրվել մինչև հետվիրահատական շրջանի ավարտն իրեն քաղաքացիական հիվանդանոցում պահելու համար):

Այս հարցի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ ՀՀ առողջապահության նախարարին ուղարկված առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում կալանավորված անձանց և դատապարտյալների հետազոտությունների և բուժման կազմակերպելու վերաբերյալ գրություններին՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավարի կողմից պատասխանվել է, որ ՀՀ առողջապահության բյուջեի՝ հիվանդանոցային բժշկական օգնության ու պետության կողմից

երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների ծրագրերով արդեն իսկ առաջացել են գերակատարումներ, որոնց համար լրացուցիչ ֆինանսավորում չի նախատեսվել և առայժմ հարցին լուծում տալ հնարավոր չէ:

ՀՀ առողջապահության նախարարությանն ուղղված համապատասխան հարցմանն ի պատասխան՝ տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի 2015 թվականի հուլիսի 9-ի թիվ 02/23.19/11920-15 հանձնարարականի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ներհողվածային կամ միջհողվածային վերաբաշխումները, խիստ նպատակային և արդյունավետ իրականացնելու անհրաժեշտությունից ելնելով, կարող են կատարվել միայն Հայաստանի Հանրապետության վարչապետի հետ գրավոր համաձայնեցման դեպքում: Ներկայումս ՀՀ առողջապահության նախարարությունը դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ վերը նշված կարգով վերաբաշխումների համաձայնեցում ստանալու համար:

Միաժամանակ հայտնվել է, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 4-ով հաստատված կարգի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայություններն իրականացվում են հերթագրման եղանակով՝ բացառությամբ անհետաձգելի բժշկական օգնության, Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների բժշկական օգնության, հոգեկան և նարկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության, նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց բժշկական օգնություն և սպասարկման, ծննդօգնության և արտահիվանդանոցային բժշկական օգնության (բացառությամբ մասնագիտացված ստոմատոլոգիական բժշկական օգնության և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների), որոնք բժշկական կազմակերպություններում պետք է իրականացվեն արտահերթ կարգով:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՅ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Գրեթե բոլոր քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատությունից զրկված անձինք բարձրաձայնում էին բժշկասոցիալական փորձաքննության կազմակերպման համար բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից նշանակված հետազոտությունների կազմակերպման ձգձգման հարցը, քանի որ հետազոտությունների կատարումը երկարատև է կարգազրեթի ստացման ձգձգման և պետության կողմից երաշխավորված բժշկական սպասարկման շրջանակներում սահմանափակ ֆինանսավորման պատճառով (մինչև 6 ամիս): Որոշ

կալանավորված անձանց կողմից բարձրացվել է նաև այն խնդիրը, որ վերջիններս չեն ենթարկվում բժշկասոցիալական փորձաքննության՝ պատճառաբանելով, որ նման փորձաքննության ենթարկվում են միայն դատապարտյալները:

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալները բողոքում էին տրամադրված հագուստի և կոշիկի փոքր կամ մեծ չափերից: Դատապարտյալները բողոքում էին նաև սոցիալ-հոգեբանական ծառայության աշխատակիցների ոչ պրոֆեսիոնալ, երբեմն՝ մակերեսային վերաբերմունքից:

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի դատապարտյալները բողոքում էին, որ որոշ իրերի (թուղթ, դեղ, հավելյալ ծածկոց, էլեկտրական տաքացուցիչ) կարիք ունենալու դեպքում վարչակազմը դրանք չի տրամադրում:

Թեև դատապարտյալներին անձնագրերով (նույնականացման քարտերով) փաստաթղթավորման գործընթացը գտնվում է Քրեակատարողական վարչության ղեկավարության ուշադրության կենտրոնում և միջոցներ են ձեռնարկվում այն արագ և արդյունավետ կազմակերպելու համար, այնուամենայնիվ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2015 թվականի ընթացքում նույնպես ստացել է մի շարք բողոքներ:

ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» քրեակատարողական հիմնարկում դեռևս շուրջ 300 դատապարտյալ ունի անձնագրավորման խնդիր (մի դեպքում լրացել է վավերականության ժամկետը, մյուս դեպքում ընդհանրապես անձը հաստատող փաստաթուղթ չկա և այլն): Նույն խնդիրն արձանագրվել է նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» և «Գորիս» քրեակատարողական հիմնարկներում**: Անձնագրավորման հետ կապված մեկ այլ խնդիր է պետական տուրքի վճարման հարցը, քանի որ որոշ դատապարտյալներ համապատասխան վճարումներ կատարելու հնարավորություն չունեն: Որոշ դեպքերում այս հարցը լուծվում է քրեակատարողական հիմնարկի պետի, աշխատակիցների և խցակիցների անձնական ֆինանսական միջոցների հաշվին:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ դատապարտյալների անձնագրերով (նույնականացման քարտերով) փաստաթղթավորման գործընթացը մշտապես գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ղեկավարության ուշադրության կենտրոնում, ուստի, համապատասխան միջոցներ են ձեռնարկվում գործընթացն արագ և արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ: Ներկայումս անձնագրավորվել են և տվյալ գործընթացի փուլում են գտնվում շուրջ 350 դատապարտյալ: Գործընթացն այսուհետ ևս կրելու է շարունակական բնույթ: Ինչ վերաբերում է պետական տուրքին, ապա դրա վճարումը կարգավորվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի դրույթներով և ենթակա է վճարման: Դատապարտյալների համար պետական տուրքի վճարման հետ կապված արտոնություններ կարող են սահմանվել միայն օրենքում համապատասխան

փոփոխություններ կատարվելու դեպքում:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀՀ արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի հոգեբուժական բաժանմունքում բուժանձնակազմի կամ ծառայողների համար սանհանգույց նախատեսված չէ, աշխատակիցները ստիպված օգտվում են ազատազրկված անձանց սանհանգույցից, իսկ կանայք օգտվում են վարչական մասնաշենքի սանհանգույցից: Վիրաբուժական մասնաշենքի սանհանգույցը, որ նախատեսված է հիվանդների համար, գտնվում է երկրորդ հարկում, համատեղված լոգարանի հետ և անմխիթար վիճակում: Աշխատակիցները հիմնականում օգտվում են լվացքատան մասնաշենքի սանհանգույցից:

Սանհանգույց նախատեսված չէ նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում** երկրորդ հարկի հերթապահ ծառայողների համար: Սանհանգույցներ նախատեսված չլինելու խնդիր կար նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում**⁷⁷² շուրջօրյա ծառայություն իրականացնող հերթապահ ծառայողների համար կալանավորված անձանց կամ դատապարտյալների մասնաշենքերում. հերթապահ ծառայողներն օգտվում էին չբնակեցված խցերի սանհանգույցից:

ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերը միմյանցից գտնվում են մեծ հեռավորության վրա և առանձնացված են արգելապատնեշներով և առանձին մուտքերով: Աշխատակիցների հետ զրույցում պարզվել է, որ վերջիններիս արգելված է իրենց մոտ ունենալ բջջային հեռախոսներ, իսկ միմյանց հետ կապ հաստատելու համար վերջիններիս չեն տրամադրվում ռադիոսարքեր (ռացիաներ), ինչն առաջացնում է լրացուցիչ անհարմարություններ⁷⁷²:

Նույն խնդիրն արձանագրվել է նաև **ՀՀ արդարադատության նախարարության «Կոշ» և «Մևան» քրեակատարողական հիմնարկներում**, սակայն աշխատակիցները, ելնելով անհրաժեշտությունից, միմյանց հետ կապ հաստատում են իրենց բջջային հեռախոսներով:

ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում խնդրահարույց է նաև անվտանգության բաժնի աշխատակիցների սակավությունը:

⁷⁷² Այս կապակցությամբ ԽԿԿ-ն Հայաստան կատարած այցելության վերաբերյալ 2010 թվականի զեկույցում նշել է, որ «...անձնակազմը չունի համապատասխան անվտանգության ապահովման սարքավորումներ (ինչպես օրինակ՝ անհատական ռադիոկապ կամ ազդանշանային համակարգեր). իրավիճակն այնպիսին էր, որ կարող էր վտանգավոր լինել ինչպես անձնակազմի, այնպես էլ ազատությունից զրկված անձանց համար:

ՀՀ արդարադատության նախարարության «Հրագրան» քրեակատարողական հիմնարկի տարածքում աշխատակիցները կապը պահում են ներքին հեռախոսների միջոցով: Հարկ է նշել, որ բոլոր աշխատակիցները բարձրաձայնում էին ռադիոսարքեր (ռացիաներ) չունենալու խնդիրը: ՀՀ արդարադատության նախարարության «Հրագրան» քրեակատարողական հիմնարկում նույնպես խնդրահարույց է անվտանգության բաժնի աշխատակիցների սակավությունը: Առավել խնդրահարույց է և հատուկ ուշադրության արժանի այն հանգամանքը, որ 211 դատապարտյալի սպասարկում է ընդամենը մեկ հոգեբան:

ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տեղեկացվել է, որ քրեակատարողական հիմնարկի բնակելի գոտում շուրջօրյա ծառայություն իրականացնող աշխատակիցների համար սանհանգույցի կառուցումը նախատեսված է 2015թ. շինարարական աշխատանքների իրականացման ծրագրում: Ինչ վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկների մասնաշենքերին, ապա հիշյալ շինությունների ներկայիս կառուցվածքային պարամետրերը հնարավորություն չեն ընձեռում կառուցել առանձին սանհանգույցներ: Նշել է նաև, որ քրեակատարողական վարչության կողմից 2014-2016թթ. ընթացքում նախատեսված է իրականացնել կապիտալ շինարարության և վերանորոգման, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման որոշակի աշխատանքներ, այդ թվում՝ ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի արտաքին կոյուղագծի, բաղնիքների, շենք-շինությունների, տանիքների կապիտալ վերանորոգման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմում, կապիտալ վերանորոգման աշխատանքների իրականացում: Իսկ ՀՀ արդարադատության նախարարության «Արթիկ» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերի պահակետերն ապահովված են ներքին հեռախոսակապով հերթապահ մասի հետ: Մյուս քրեակատարողական հիմնարկներում անվտանգության ապահովման ժամանակավոր և մշտական պահակետերում ծառայությունն արդյունավետ կազմակերպելու նպատակով տարվում են աշխատանքներ ինժեներատեխնիկական կապի միջոցներով ապահովելու ուղղությամբ:

ՀՀ արդարադատության նախարարությունը գրությամբ քրեակատարողական հիմնարկների վարչակազմերը համալրելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկացրել է, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում կրտսեր խմբերի հաստիքները համալրելու նպատակով քրեակատարողական ծառայության կողմից զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հրապարակվում են հայտարարություններ՝ ծառայության ընդունվելու, ծառայության պայմանների և կարևորություն ներկայացնող այլ հանգամանքների վերաբերյալ: Հաստիքների համալրման, տեղաբաշխման, ինչպես

նան դրանց արդյունավետ օգտագործման խնդիրը պահանջում է դինամիկ մոտեցում, որի կապակցությամբ մշտապես ուսումնասիրվում և առաջ են քաշվում արդիական լուծումներ՝ պարբերաբար իրականացվող կառուցվածքային փոփոխությունների և հաստիքների տեղաբաշխման միջոցով:

ՕՐԵՆՄԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐ

1. Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առկա կարգավորումների և ընթացակարգերի անհամապատասխանությունն միջազգային չափանիշներին

Դեռևս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում (տե՛ս էջ 430) անդրադարձ էր կատարվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ առկա կարգավորումների և ընթացակարգերի անհամապատասխանությանը միջազգային չափորոշիչներին:

Նշված կարգավորումների և ընթացակարգերի անհամապատասխանության արդյունքում պրակտիկայում առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք դատապարտյալների շրջանում առաջացնում են դժգոհություններ և վերջիններս դիմում են ծայրահեղ քայլերի (2015 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում զանգվածային հացադուլի դեպքեր⁷⁷³ և այլն):

Հատկանշական է, որ ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ ևս ամրագրվել է, որ անհրաժեշտ է.

- Բարեփոխել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգը,
- Ուսումնասիրել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ որոշում կայացնող մարմինների համակարգը պարզեցնելու և յուրաքանչյուր մարմնի գործառույթները հստակեցնելու հնարավորությունները,
- Սահմանել այն օբյեկտիվ չափանիշները, որոնց հիման վրա համապատասխան մարմինները պետք է որոշեն դատապարտյալին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը,

⁷⁷³<http://www.azatutyun.am/content/article/27335809.html>,
<http://www.a1plus.am/1414465.html>, <http://hetq.am/arm/news/63477/vardashen-qkh-um-sharunakvum-e-hacaduly.html>

- Սահմանել պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգ:

Նշվածի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը գրությամբ ՀՀ Ազգային ժողովի խմբակցություններից մեկին և Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին է ներկայացրել պայմանական վաղաժամկետ ազատմանն առնչվող օրենսդրական խնդիրներն ու դրանց հետագա կատարելագործմանը վերաբերող լուծման հնարավոր ուղիները: Գրությամբ նշվել է հետևյալը.

- առկա է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ ներկա կարգավորումների և ընթացակարգերի անհամապատասխանություն միջազգային չափորոշիչներին, մասնավորապես, անհամապատասխանություն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec (2003) 22 հանձնարարականին:

- Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովների (այսուհետ՝ Անկախ հանձնաժողով) կողմից կայացվող որոշումներն ընդհանրապես զուրկ են որևէ պատճառաբանական մասից⁷⁷⁴:

- Առկա են նաև լուրջ օրենսդրական բացեր՝ վարչական և Անկախ հանձնաժողովների կայացրած որոշումների ընդունման հիմքում ընկած չափանիշների և ընթացակարգերի տեսանկյունից:

- Խնդրահարույց է նաև գործող ենթահանձնաժողովների աշխատանքի չկանոնակարգված լինելու հանգամանքը: Այսպես, ենթահանձնաժողովների կողմից դատապարտյալի անձնական գործին ծանոթանալու, մեկուսի նրա հետ հանդիպման վերաբերյալ արձանագրությունների կամ այլ փաստաթղթերի կազմման, ինչպես նաև Հանձնաժողովի նիստի ընթացքում ենթահանձնաժողովի անդամների ներկայացրած կարծիքների արձանագրման պահանջ չի սահմանվում, ենթահանձնաժողովների կողմից դատապարտյալի անձնական գործին ծանոթանալու և մեկուսի նրա հետ հանդիպման վերաբերյալ արձանագրություններ (ձայնագրություններ) չեն կազմվում, իսկ Հանձնաժողովի նիստի ընթացքում ենթահանձնաժողովի անդամների կարծիքները ներկայացվում են բանավոր և չեն արձանագրվում⁷⁷⁵:

Պայմանական վաղաժամկետ ազատման դրույթները պետք է հիմնված լինեն

⁷⁷⁴ Հետևությունը հիմնված է այն հանգամանքի վրա, որ ԲԿԱՄ փորձագետներն ուսումնասիրել են 2013թ. չորրորդ եռամսյակի և 2014թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարության բոլոր քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների ներկայացված ցուցակները (այդ թվում՝ որոշումները, արձանագրությունները, բնութագրերը), Անկախ հանձնաժողովների կայացրած որոշումներն ու կազմած արձանագրությունները և Անկախ հանձնաժողովների կողմից կայացվող որոշումներից որևէ մեկը պատճառաբանված չի եղել:

⁷⁷⁵ Ըստ մի շարք դատապարտյալների՝ ենթահանձնաժողովների անդամները կամ ընդհանրապես առանձնազրույց չեն ունենում իրենց հետ (ուսումնասիրվում են միայն փաստաթղթերը և կարծիք է ճշտվում քրեակատարողական վարչակազմից) կամ առանձնազրույցը կրում է ձևական բնույթ:

հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

ա) նվազագույն ժամկետը, որը դատապարտյալները պետք է կրեն պայմանական վաղաժամկետ ազատվելուն ենթակա լինելու համար, պետք է սահմանված լինի օրենքով (ներկայացված մասով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի ներկա կարգավորումը (հոդված 114), ընդհանուր առմամբ, համապատասխանում է նշված սկզբունքին և միջազգային պրակտիկային),

բ) օրենքով նաև պետք է ապահովվի պայմանական վաղաժամկետ ազատում ազատագրկման դատապարտված բոլոր անձանց, այդ թվում՝ ցմահ ազատագրկման դատապարտվածների համար,

գ) պետք է ձգտել որոշումը կայացնել դատապարտյալի կողմից նվազագույն ժամկետը կրելուց հետո որքան հնարավոր է շուտ,

դ) պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները պետք է լինեն պարզ և հստակ: Դրանք պետք է լինեն նաև իրատեսական՝ այն իմաստով, որ պետք է հաշվի առնեն դատապարտյալի անձնային առանձնահատկությունները, սոցիալական և տնտեսական հանգամանքները, ինչպես նաև սոցիալական վերականգնման ծրագրերի առկայությունը,

ե) պայմանական վաղաժամկետ ազատելուց հետո աշխատանքի հնարավորությունների բացակայությունը կամ մշտական ապրելավայր ունենալու բացակայության հանգամանքը չպետք է հիմք հանդիսանան այն մերժելու կամ հետաձգելու համար: Միաժամանակ դատապարտյալի մոտ ֆինանսական միջոցների բացակայության կամ ոչ բավարար լինելու հանգամանքն ինքնին չի կարող պայմանական վաղաժամկետ ազատումը մերժելու հիմք լինել, եթե առկա է կանխատեսում, որ ազատվելուց հետո տվյալ դատապարտյալի կողմից կրկին հանցագործություն կատարելու ռիսկը բացակայում է կամ ցածր է,

զ) պայմանական վաղաժամկետ ազատելու չափանիշները պետք է կիրառվեն այնպես, որպեսզի ազատման թույլտվություն տրվի բոլոր այն դատապարտյալներին, ովքեր համապատասխանում են օրինապահ քաղաքացիներ դառնալու նվազագույն երաշխիքներին: Հակառակ դեպքում, իրավասու մարմինը պարտավոր է ցույց տալ, որ դատապարտյալը չի համապատասխանում այդ չափանիշներին,

է) եթե որոշում կայացնող մարմինը որոշում է մերժել կամ հետաձգել պայմանական վաղաժամկետ ազատելը, ապա այն պետք է սահմանի հարցը վերանայելու օր (վերանայման ժամկետը պետք է լինի ողջամիտ և հստակ): Բոլոր դեպքերում, դատապարտյալները պետք է հնարավորություն ունենան կրկին դիմել որոշում կայացնող մարմնին՝ այն պահից սկսած, երբ վերջիններիս իրավիճակն էականորեն փոխվել է հոգուտ իրենց⁷⁷⁶:

⁷⁷⁶ ՀՀ գործող օրենսդրության համեմատական վերլուծությունը վկայում է, որ, մասնավորապես, պարզորոշ ու հստակ սահմանված չեն պայմանական վաղաժամկետ ազատելու համար պահանջվող չափանիշները: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների, քրեական դատավարության օրենսգրքի ու քրեակատարողական օրենսգրքի՝ քննության առարկա դրույթների ու դրանց փոփոխությունների, համապատասխան ենթաօրենսդրական ակտերի համեմատական վերլուծությունը վկայում է, որ

Տուժողին պատճառած վնասը հարթելու կամ փոխհատուցելու դրույթները պետք է հիմնված լինեն հետևյալ ելակետային պահանջների վրա.

ա) տուժողին պատճառած վնասը հարթելը կարող է սահմանվել որպես պայմանական վաղաժամկետ ազատման պարտականություններից մեկը, սակայն նման պարտականություն սահմանելիս պետք է հաշվի առնել դատապարտյալի ֆինանսական և սոցիալական դրությունը, վնասը հարթելու իրական հնարավորությունը,

բ) իրավասու մարմինն անձին պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելու ընթացքում պարտադիր պետք է հաշվի առնի տուժողի դիրքորոշումը, բայց միևնույն ժամանակ չպետք է կաշկանդված լինի այդ կարծիքով:

Եռաստիճան համակարգը պահպանելու պարագայում Անկախ հանձնաժողովների գործընթացի կարգավորման սկզբունքները:

Անկախ հանձնաժողովի կազմը և լիազորությունները

ա) Անկախ հանձնաժողովի կազմում պետք է ընդգրկված լինեն տարբեր ոլորտներից ձեռնհաս (կոմպետենտ) մասնագետներ (սոցիալ-հոգեբաններ, կրիմինոլոգներ, բժիշկներ և նշված հարցի քննարկման համար վերաբերելի այլ մասնագետներ),

բ) Անկախ հանձնաժողովը կազմում է պատճառաբանված որոշում, որն իր մեջ կներառի Հանձնաժողովի անդամների ներկայացրած տեղեկությունները, նկատառումները (անդամները պետք է հնարավորություն ունենան հայտնել հատուկ կարծիք),

գ) պատճառաբանված որոշում ընդունելուց առաջ Հանձնաժողովը լսում է դատապարտյալին, ով իրավունք ունի ներկայանալ պաշտպանի կամ իրավապաշտպան այլ կազմակերպությունների ներկայացուցչի հետ: Հանձնաժողովի նիստին կարող են հրավիրվել նաև այլ մասնագետներ,

դ) Անկախ հանձնաժողովի որոշումները պետք է ենթակա լինեն բողոքարկման դատական կարգով:

Միջազգային պրակտիկա/լավագույն փորձ

Ելնելով դատաիրավական համակարգի, ընդհանուր պատժողական քաղաքականության և այլ հանգամանքներից՝ յուրաքանչյուր երկիր ունի իր ուրույն փորձը: Այսպես օրինակ՝ **Ֆինլանդիան, Ավստրալիան և Գերմանիան** պայմանական վաղաժամկետ ազատումը կիրառում են մեխանիկորեն՝ պատժի սահմանված ժամկետի որոշ մասը կրելուց հետո: **Խորվաթիայի** փորձը վկայում է, որ պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշումը կայացնում է հանձնաժողովը: Այն բաղկացած է չորս անդամից, որոնք նշանակվում են արդարադատության նախարարի

իրավաչափ կլիներ, որպեսզի պատժի պայմանական վաղաժամկետ ազատման ողջ գործընթացը (այդ թվում՝ ժամկետները, չափանիշները, պետական մարմինների գործունեության կարգը և հայեցողական լիազորությունների շրջանակը)՝ ՀՀ կողմից որդեգրված կոնկրետ կարգի շրջանակներում, առավել հստակ սահմանվեր օրենսդրությամբ:

կողմից, ով նաև սահմանում է Հանձնաժողովի գործունեության կարգը: Անդամներից մեկը քրեակատարողական վարչության կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչ է, մյուսը՝ պետական փաստաբանների գրասենյակի ներկայացուցիչ, երկու դատավոր և մեկ ոչ մշտական հիմունքներով պատիժը նշանակող դատավոր, ում ենթակա են տվյալ պատժի կրման վայրի գործեր:

Հատկանշական է ցմահ դատապարտյալների նկատմամբ պայմանական վաղաժամկետ կիրառման փորձը: Հիմնականում վաղաժամկետ ազատումը կիրառվում է օրենքով սահմանված պատժի նվազագույն չափը կրելուց հետո: Ներկայումս նման մոտեցում առկա է բազմաթիվ երկրներում: Օրինակ, Ալբանիայում՝ 25 տարի պատիժ կրելուց հետո, Ավստրիայում՝ 15, Բելգիայում՝ 15 և այլն:

Ընդհանուր առմամբ, արտասահմանյան երկրների քրեակատարողական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առկա է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ինստիտուտի երեք մոդել՝ **պարտադիր, հայեցողական և խառը**: Առաջինի դեպքում միայն դատարանը կարող է որոշում կայացնել անձին պայմանական ազատել կամ ոչ: Երկրորդի պարագայում՝ և՛ դատարանով կարող է լինել պայմանական ազատումը, և՛ հանձնաժողովային կարգով: Իսկ խառը տիպի դեպքում՝ երկու ձևը կարող է կիրառվել միանգամից: Հայաստանում գործում է պայմանական ազատման ինստիտուտի հենց խառը տիպը, որն, ընդհանուր առմամբ, համահունչ է մեր երկրի պենիտենցիար քաղաքականությանը և իրավական համակարգի գաղափարախոսությանը:

ՀՀ արդարադատության նախարարությունից գրությամբ տեղեկացվել է, որ «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել և ներկայացվել ՀՀ կառավարություն: Միաժամանակ, նախագիծը լրամշակվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հստակ չափանիշներով և կրկին ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Նշվել է նաև, որ ներկայումս ստացված կարծիքներն ամփոփվում են:

Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրվել է տեղեկություններ 2015 թվականի ընթացքում (դեկտեմբերի 31-ի դրությամբ) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացված դատապարտյալների թվաքանակի վերաբերյալ: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների վարչական հանձնաժողովների կողմից 2015 թվականի ընթացքում պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 677 դատապարտյալի վերաբերյալ միջնորդություններ (որից 5 դատապարտյալ մինչև անկախ հանձնաժողովի նիստը

տույժ են ստացել), իսկ 85 դատապարտյալի վերաբերյալ պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցի քննարկումը հետաձգվել է: Անկախ հանձնաժողովի կողմից 2015 թվականի ընթացքում քննարկվել է 674 (դատարանի որոշման համաձայն, Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է ևս 2 դատապարտյալ վերաբերյալ հարց) դատապարտյալի պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարց, որից մերժվել է 497-ը, բավարարվել՝ 177-ը: Անկախ հանձնաժողովի կողմից բավարարված 177 հարցերից 131-ի դեպքում անձիք դատարանի որոշմամբ պայմանական վաղաժամկետ ազատվել են, իսկ 13-ի դեպքում պատժի չկրած մասը փոխարինվել է ավելի մեղմ պատժատեսակով:

Ուսումնասիրելով 2012 թվականից մինչ 2015 թվականը (դեկտեմբերի 31-ի դրությամբ)⁷⁷⁷ ընկած ժամանակահատվածում Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացված, ինչպես նաև Անկախ հանձնաժողովի հավանությունը ստացած և մերժված միջնորդագրերի քանակը՝ պարզվել է հետևյալը.

- **2012 թվականին** Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է **838** դատապարտյալի միջնորդագիր, մերժվել է **535**, հավանություն է տվել **303**:
- **2013 թվականին** Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է **1012** դատապարտյալի միջնորդագիր, մերժվել է **691**, հավանություն է տվել **321**:
- **2014 թվականին** Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է **673** դատապարտյալի միջնորդագիր, մերժվել է **460**, հավանություն է տվել **204**:
- **2015 թվականին** Անկախ հանձնաժողովի քննարկմանը ներկայացվել է **677** դատապարտյալի միջնորդագիր, մերժվել է **497**, հավանություն է տվել **177**:

2. Ազատագրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին պատժից և/կամ կալանավորված անձին կալանքից ծանր հիվանդության հիմքով ազատելու կարգի հետ կապված հիմնախնդիրներ

Դեռևս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում (տե՛ս էջ 433) ևս անդրադարձ էր կատարվել նշված խնդրին: 2015 թվականին ազատագրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին պատժից և/կամ կալանավորված անձին կալանքից ծանր հիվանդության հիմքով ազատելու կարգի կիրառման հետ կապված խնդիրների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը ստացել է դիմում-բողոքներ: Այսպես, ցմահ ազատագրկման դատապարտված Սողոմոն Քոչարյանի մայրը դիմել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ խնդրելով վերջինիս աջակցությունը ծանր

⁷⁷⁷ Տե՛ս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցի էջ 431-432:

հիվանդության հիմքով իր որդուն հետագա պատժի կրումից ազատելու հարցում:

Պաշտպանի կողմից կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ թեև առկա էր բժշկական կենտրոնի կողմից տրված էպիկրիզ, այնուամենայնիվ, էպիկրիզում նշված ախտորոշումը հիմք չընդունվեց այն պատճառաբանությամբ, որ ախտորոշումը տրվել է «Նյույորքյան» դասակարգման հիման վրա, ինչը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2006թ. թիվ 825-Ն որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածով սահմանված համապատասխան ախտորոշմանը (մինչդեռ, նշված որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածում «Նյույորքյան» կամ որևէ այլ դասակարգում մատնանշված չէ):

Միայն այն բանից հետո, երբ բժշկական կենտրոնը, որտեղ բուժում էր ստանում Սողոմոն Քոչարյանը, տրամադրեց ընթացիկ էպիկրիզ, որով փաստվում էր վերջինիս առողջության վատթարացումը, բժշկական աշխատանքային հանձնաժողովը քննարկեց Սողոմոն Քոչարյանի մոտ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության համապատասխանությունը պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին:

Այսպիսով, համապատասխան չափորոշիչների և ընթացակարգերի լիարժեք կարգավորման բացակայության պատճառով անհարկի ձգձգվում է պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդության հիմքով պատժի հետագա կրումից ազատելու գործընթացը:

Հատկանշական է, որ ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ ևս ամրագրվել է, որ անհրաժեշտ է.

- Բարեփոխել ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատելու կարգը,
- Վերանայել ներկայումս բժշկական փորձաքննություն իրականացնող մարմնի լիազորությունները և սահմանել վերջինիս գործունեության իրավական ընթացակարգերը,
- Սահմանել ազատազրկման ձևով պատիժը կրող դատապարտյալին ծանր հիվանդության հիմքով պատժից ազատման վերաբերյալ դատական գործերի քննության արդյունավետ կարգ:

Պատժի կրման հետ անհամատեղելի համարվող հիվանդությունների ցանկն ու չափորոշիչները հստակեցնելու և միջազգային չափանիշերին համապատասխանեցնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ «Օրենսդրական կարգավորման ազգային կենտրոն» պետական հիմնարկի հետ համատեղ մշակվել են ՀՀ կառավարության 2006 թվականի թիվ 825-Ն և ՀՀ կառավարության 2003 թվականի թիվ 1636-Ն որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագծեր, որոնք ներկայումս գտնվում են ՀՀ կառավարությունում: Հայտնվել է նաև,

որ Եվրոպայի խորհրդի կողմից ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ իրականացվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի բնակչության» ծրագրի շրջանակներում նախատեսվում է մի շարք համապատասխան օրենսդրական փոփոխություններ կատարել նաև վերոնշյալ իրավական ակտերում:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ դատապարտյալների կողմից ստացվել են **3 դիմումներ**, որոնք բժշկական աշխատանքային հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են և **1-ը մերժվել է, 2-ն՝ ուղարկվել են լրացուցիչ հետազոտությունների:**

Բժշկական աշխատանքային հանձնաժողովի նախաձեռնությամբ ուսումնասիրվել են **14 հիվանդների** վերաբերյալ գործեր, որից **12-ի վերաբերյալ կայացվել է դրական որոշում, իսկ 2-ը մերժվել է** (մերժումները նույնպես ներկայացվել են միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի քննարկմանը):

Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից **2015 թվականին հետազոտվել են 13 հիվանդներ, որոնցից 2-ի վերաբերյալ ներկայացվել է բացասական եզրակացություն, 11-ի վերաբերյալ՝ դրական եզրակացություն:** Մեկ դրական եզրակացությունը կայացվել է 2016 թվականին, քանի որ բժշկական աշխատանքային հանձնաժողովի որոշումը կայացվել է տարվա վերջին աշխատանքային օրերին: Քրեակատարողական հիմնարկների վարչակազմերը 12 դրական միջնորդագրերից 10-ը ներկայացրել են դատարան 2015 թվականին, իսկ 2 միջնորդագիր՝ 2016 թվականին (քանի որ Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի որոշումը կայացվել է 2015 թվականի վերջին աշխատանքային օրերին):

Բժշկական աշխատանքային հանձնաժողովի և միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից դիմումի հիման վրա եզրակացություններ տրամադրելու գործընթացը տևում է մոտ 15 օր:

2015 թվականին դատարանների կողմից բավարարվել է 9 միջնորդագրեր, 2016 թվականին՝ 2, նախքան դատական նիստի կայանալը մեկ դատապարտյալ մահացել է, իսկ մերժում չի եղել:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում խրոնիկ հոգեկան կամ այլ ծանր հիվանդության պատճառով արձանագրվել է 1 մահվան դեպք (պատժի կրմանը խոչընդոտող հիվանդությունների ցանկին համապատասխանող), որի վերաբերյալ միջգերատեսչական բժշկական հանձնաժողովի կողմից միջնորդությունը ներկայացված է եղել դատարան:

3. Դատապարտյալների կողմից դատական գործերի նյութերի պատճենները ստանալու գործընթացում խոչընդոտներ՝ պայմանավորված պետական տուրքի վճարման չհիմնավորված պահանջով

2014 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ստացված դիմում-բողոքների քննարկման շրջանակում իրականացված ուսումնասիրման ընթացքում ի հայտ են եկել **դատապարտյալների կողմից դատական գործերի նյութերի պատճենները ստանալու գործընթացում խոչընդոտներ՝ պայմանավորված պետական տուրքի վճարման չհիմնավորված պահանջով**⁷⁷⁸:

Այս կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ՀՀ արդարադատության նախարարությանն առաջարկվել է քննարկել դատական գործի բոլոր փաստաթղթերի տրամադրման համար անհրաժեշտ իրավակարգավորման նախատեսման հարցը: Ընդ որում, նկատի ունենալով դատական գործերի փաստաթղթերի միջին ծավալները՝ նման իրավակարգավորման պարագայում առաջարկվել է նախատեսել միայն փաստաթղթերի տրամադրման համար փաստացի կատարված ծախսերի գանձման կարգ (բացառությամբ օրենքով նախատեսված՝ պետական տուրքի գանձման դեպքերի), քանի որ դատական գործերի բոլոր նյութերի տրամադրման համար պետական տուրքի գանձումը կարող է առաջացնել արդար դատաքննության իրավունքի անհամաչափ սահմանափակման վտանգ:

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը և առաջադրված խնդիրները կկարգավորվեն նախագծին կից փաթեթում ներառվող «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով:

4. Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց՝ փաստաբանին տեսակցելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման պրակտիկա

«2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց՝ փաստաբանին տեսակցելու իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակման պրակտիկային (տե՛ս էջ 449), ինչպես նաև 2015 թվականին ստացված լրացուցիչ բողոքների հիման վրա, առաջարկել քննարկել կալանավորված անձին՝ առանձին, անարգել տեսակցություններ տրամադրելու հնարավորության հարցը՝ քրեական գործով պաշտպան չհանդիսացող փաստաբանի հետ (առանց տեսակցությունների թվի

⁷⁷⁸ Տե՛ս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցի էջ 446-449:

և տևողության սահմանափակման, եթե դա կապված է կալանավորված անձին քրեական գործի քննության հետ չկապված իրավաբանական օգնություն ցույց տալու անհրաժեշտության հետ):

Արդյունքում, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով, որն ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 21-ին և ուժի մեջ մտել 2016 թվականի հունվարի 9-ին, սահմանվել է հետևյալը.

- **Պաշտպանի և պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանի հետ տեսակցության հնարավորությունն նաև ոչ աշխատանքային օրերին կամ ժամերին (այսպիսով՝ լուծվում է պրակտիկայում առաջացող այն խնդիրը, երբ խոչընդոտում են ձերբակալված կամ կալանավորված անձանց իրավաբանական օգնության լիարժեք և համապարփակ ապահովումը: Օրինակ՝ խափանման միջոց ընտրվում է շաբաթ օրը, և վերջինս նույն օրը տեղափոխվում է քրեակատարողական հիմնարկ: Տվյալ իրավիճակում ստացվում է, որ անձը զրկվում է ձերբակալման, խափանման միջոցի ընտրման պահից իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից: Վերոնշյալ կարգավորումներն հավասարապես վերաբերում են նաև քրեակատարողական հիմնարկներում պահվող այն դատապարտյալներին, ովքեր իրենց մասնակցությամբ իրականացվող քրեական վարույթին ներգրավված են որպես մեղադրյալ:**

- **Կալանավորված անձի տեսակցությունը պաշտպան չհանդիսացող փաստաբանի հետ:**

Տվյալ կարգավորումը կարևոր է այն տեսակետից, որ ամիսներ շարունակ անազատության մեջ գտնվող անձը կարող է ունենալ քաղաքացիական, վարչական, աշխատանքային կամ այլ ոլորտներում իրավաբանական օգնության կարիք:

- **Սահմանվել է նաև, որ տեսակցությունն իրականացվում է քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստագրի հիման վրա:**

Այսպիսով, քրեական վարույթն իրականացնող մարմինը պաշտպան չհանդիսացող փաստաբանի հետ տեսակցության համար կալանավորված անձի միջնորդության հիման վրա կայացրած որոշմամբ տալիս է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղղված հավաստագիր, որը հիմք է հանդիսանում վարչակազմի համար փաստաբանի մուտք գործելու թույլատրություն տալու համար: Այսպիսով, կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը տեղյակ չի լինում, թե ինչ կոնկրետ խնդրի հետ կապված է անձը տեսակցում փաստաբանի հետ:

- **Կարգավորվել է նաև օրինական ներկայացուցչի հետ տեսակցության հարցը:** Մասնավորապես, փոխվել է սկզբունքը և օրինական ներկայացուցչի հետ ձերբակալված կամ կալանավորված անձի տեսակցությունները թույլատրելի են դարձել, քանի դեռ չեն արգելվել վարույթն իրականացնող մարմնի կողմից:

- **Միաժամանակ կատարված փոփոխություններով տեսակցության եկած ոչ բոլոր փաստաբանների կամ պաշտպանների հետ միաժամանակյա տեսակցության հնարավորություն է ընձեռնվում՝ նախատեսելով, որ եթե ձերբակալված կամ**

կալանավորված նույն անձի հետ տեսակցության համար ներկայացել է մի քանի փաստաթղթեր կամ պաշտպան, ապա ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի որոշմամբ ձերբակալված կամ կալանավորված անձի հետ միաժամանակյա տեսակցության հնարավորություն կարող է տրվել ոչ բոլոր փաստաթղթերին կամ պաշտպաններին: Ընդ որում, նախատեսվում է նաև նշված սահմանափակման հիմքը, այն է՝ քրեակատարողական վայրի անվտանգության և բնականոն աշխատանքի ապահովումը: Բացի այդ, իրավաբանական օգնության լիարժեք ապահովման տեսանկյունից որպես լրացուցիչ երաշխիք ամրագրվում է, որ ձերբակալված կամ կալանավորված անձն ինքը կարող է ընտրել այն փաստաթղթերին կամ պաշտպաններին, ում հետ ցանկանում է տեսակցել: Որպես լրացուցիչ մեխանիզմ՝ նախատեսվում է, որ ձերբակալվածներին կամ կալանավորվածներին պահելու վայրի պետը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը պետք է կայացնի գրավոր որոշում, որի պատճենը ենթակա է տրամադրման ձերբակալված կամ կալանավորված անձին, ինչպես նաև տեսակցության եկած փաստաթղթերին կամ պաշտպաններին:

- Ինչ վերաբերում է **տեսակցելու տևողության սահմանափակման իրավական հնարավորությանը**, ապա պաշտպանի և ձերբակալված անձի տեսակցությունների վրա տարածվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը⁷⁷⁹:

5. «Խոշտանգում» հանցակազմը միջազգային չափանիշներին համապատասխանեցումը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական փոփոխությունների և լրացումների կատարումը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան զեկույցներում մշտապես անդրադարձել է «խոշտանգում» հանցակազմը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու, ինչպես նաև համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հարցին, ինչպես նաև 2014-2015 թվականներին ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովին առաջարկել է նման կարգավորման տարբերակները՝ համապատասխան լուծումներով:

⁷⁷⁹ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 211-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ձերբակալված կասկածյալն իրավունք ունի հարցաքննվելու պաշտպանի մասնակցությամբ: Պաշտպանի մասնակցությունն անհապաղ ապահովելու անհնարինության դեպքում քննիչը պարտավոր է նրա մասնակցությունն ապահովել կասկածյալին արգելանքի վերցնելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում: Հարցաքննությունից առաջ կասկածյալին իր ցանկությամբ հնարավորություն է տրվում առանձին, խորհրդապահական կարգով (կոնֆիդենցիալ), անարգել տեսակցելու իր պաշտպանի հետ: Եթե առկա է կասկածյալի մասնակցությամբ դատավարական այլ գործողություններ կատարելու անհրաժեշտությունը, ապա հետաքննության մարմինը կամ քննիչը տեսակցության տևողությունը կարող է սահմանափակել՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով կասկածյալին և նրա պաշտպանին: Պաշտպանի հետ տեսակցության ժամկետը չի կարող երկու ժամից պակաս լինել»:

Որպես դրական առաջընթաց կարելի է նշել, որ 2015 թվականի հունիսի 9-ին ընդունվել և նույն թվականի հուլիսի 18-ին ուժի մեջ է մտել «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով ապահովվել է լիարժեք համապատասխանություն խոշտանգման՝ ներպետական օրենսդրությամբ և «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ» 1984 թվականի դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) սահմանված բնորոշումների միջև:

Նախքան օրենսդրական համապատասխան փոփոխություններ նախատեսելը՝ խոշտանգմանը նվիրված էր ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 119-րդ հոդվածը, որի 1-ին մասը խոշտանգում էր համարում պարզապես ցանկացած այնպիսի գործողություն, որի միջոցով դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, եթե դա չի առաջացրել նույն օրենսգրքի 112-րդ և 113-րդ հոդվածներով (դիտավորությամբ առողջությանը ծանր և միջին ծանրության վնաս պատճառելը) նախատեսված հետևանքներ: Մեջբերված դիսպոզիցիայի և միջազգային չափանիշների⁷⁸⁰ համակարգային վերլուծությունը վկայում էր, որ «խոշտանգման» հանցակազմի բնորոշումը չէր համապատասխանում Կոնվենցիայով առաջադրվող չափանիշներին: Մասնավորապես՝

1. ՀՀ քրեական օրենսգրքում վերոնշյալ հանցակազմը սահմանված էր մարդու դեմ ուղղված հանցագործությունների, այլ ոչ թե պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների բաժնում և ավելի մեղմ պատիժ էր սահմանում, քան անձի առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հանցակազմը:

2. Նշված արարքը պատժվում էր ազատազրկմամբ մինչև երեք տարի ժամկետով⁷⁸¹ և չէր ներառում առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը, ինչը մեծապես նվազեցնում էր խոշտանգման հանրային վտանգավորությունը՝ այն դասելով միջին ծանրության հանցագործությունների շարքին:

3. Հանցակազմի հատուկ սուբյեկտը, այն է՝ պաշտոնատար անձն իբրև հանցակազմի պարտադիր հատկանիշ սահմանված չէր:

4. Բացակայում էր կոնկրետ նպատակը, այն է՝ տուժողից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն ստանալու, կատարած կամ ենթադրյալ արարքի համար պատժելու, վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն հարկադրելու նպատակ և այլն:

5. Կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է, որ մասնակից պետությունների իրավապահ մարմինները պետք է պատշաճ և անաչառ քննություն

⁷⁸⁰ Կոմիտեն Հայաստանի վերաբերյալ 2012 թվականի հուլիսի 6-ի 3-րդ պարբերական զեկույցում մտահոգություն է հայտնել ՀՀ ներպետական օրենսդրության մեջ «խոշտանգման» հանցակազմի՝ կոնվենցիոն պահանջներին անհամապատասխանության վերաբերյալ և առաջարկել է անհապաղ ձեռնարկել համապատասխան օրենսդրական միջոցներ: Այսպիսի գնահատականներ հնչել են նաև Հայաստանի վերաբերյալ այլ կազմակերպությունների զեկույցներում ու վերլուծական նյութերում:

⁷⁸¹ Որպես կանոն, խոշտանգման համար Կոնվենցիային մասնակից պետությունները սահմանում են առավել խիստ պատժաչափեր: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=4952&Reading=0#>

իրականացնեն, երբ առկա են խոշտանգման բավարարող ռոջամիտ հիմքեր: Այս առումով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված խոշտանգման հանցակազմի վրա տարածում էր քրեական գործի հարուցման մասնավոր մեղադրանքի ռեժիմը, նշանակում է, որ քրեական գործի հարուցման համար անհրաժեշտ էր տուժողի բողոքի առկայություն, իսկ կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ տուժողի հաշտվելու դեպքում քրեական գործը ենթակա է կարճման: Նման կարգավորումը հակասում էր խոշտանգման և ընդհանրապես վատ վերաբերմունքի դեպքերի կապակցությամբ արդյունավետ և անաչառ քննություն իրականացնելու պետության պոզիտիվ պարտականությունների հայեցակարգին⁷⁸²:

2015 թվականի հունիսի 9-ին ընդունված և նույն թվականի հուլիսի 18-ին ուժի մեջ մտած «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով Օրենսգրքի 309.1-րդ հոդվածով ամրագրվեց խոշտանգման հետևյալ ձևակերպումը.

«Պաշտոնատար անձի կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձի կողմից կամ նրա դրոմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով»:

Այսպիսով՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի վերնագիրը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը» և միաժամանակ օրենսգիրքը լրացվել է «Խոշտանգումը» վերնագրով 309.1-րդ հոդվածով՝ խոշտանգման կոնվենցիոն հատկանիշներն արտացոլող բովանդակությամբ:

Նման պարագայում կոնվենցիոն իմաստով խոշտանգման առանձնահատկությունները ակնհայտորեն տարանջատվել են մասնավոր անձանց միջև կատարվող միևնույն արարքներից. 309.1-րդ հոդվածում շեշտվել է հատուկ սուբյեկտը, այն է՝ պաշտոնատար անձը կամ պետական մարմնի անունից հանդես գալու իրավասություն ունեցող այլ անձը, և արարքի հատուկ նպատակը՝ սահմանելով

⁷⁸² Արտասահմանյան երկրների օրենսդրական փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ այդ երկրների քրեական օրենսգրքերը, ամրագրելով խոշտանգման հանցակազմը, համարժեք արտացոլում են այն նվազագույն չափանիշները, որոնք նախատեսված են Կոնվենցիայով (օրինակ՝ Ֆինլանդիա, Խորվաթիա, Մոլդովա, Ալբանիա, Ուկրաինա և մի շարք այլ երկրներ):

արարքի վտանգավորության աստիճանին համապատասխան առավել խիստ պատասխանատվություն:

- ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածը փոփոխության է ենթարկվել այնպես, որ քրեական պատասխանատվություն սահմանված լինի նաև ընդհանուր սուբյեկտի կողմից անձին դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար:

- Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածից, որտեղ թվարկված են այն հանցակազմերը, որոնց պարագայում գործը հարուցվում է բացառապես տուժողի բողոքի հիման վրա, հանվել է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով նախատեսված խոշտանգման հանցակազմը:

- Հստակեցվել են նաև ՀՀ քրեական օրենսգրքի 341-րդ հոդվածի կարգավորումները՝ հոդվածի 1-ին մասում սահմանելով հետևյալ դիսպոզիցիան. «Դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից բռնություն կամ սպառնալիք գործադրելու կամ այլ ապօրինի գործողություններով՝ դատավարությանը մասնակցող անձանց ցուցմունք կամ բացատրություն կամ փորձագետին կեղծ եզրակացություն տալուն, ինչպես նաև թարգմանչին սխալ թարգմանություն կատարելուն հարկադրելը»: Դրանից բացի, հոդվածի 3-րդ մասում լրացվել են ծանրացնող հանգամանքներ:

6. Նոր հանցագործություն կատարած ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ուղղիչ հիմնարկի տեսակը մեկուսացվածության ավելի ցածր աստիճանի փոխելու հնարավորության հետ կապված խնդիր

ԲԿԱՄ փորձագետների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ պատիժը կրելու ընթացքում նոր հանցագործություն կատարած ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ուղղիչ հիմնարկի տեսակը մեկուսացվածության ավելի ցածր աստիճանի փոխելու հնարավորությունն առաջանում է նոր կատարած հանցագործության համար նշանակված պատժի սկզբից 20 տարի անց, քանի որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը կարող է փոխվել մեկուսացվածության առավել ցածր աստիճանի՝ հիմք ընդունելով որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի դրսևորած դրական վարքագիծը, մասնավորապես՝ կիսափակ ուղղիչ հիմնարկ կարող են տեղափոխվել՝ ցմահ ազատազրկման դատապարտված և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո:

Հաշվի առնելով, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի համապատասխան դրույթների նման մեկնաբանությունն ու կիրառումը չի բխում դատապարտյալի ուղղման և սոցիալական վերականգնման սկզբունքից, քանի որ օրինակ ցմահ ազատազրկման դատապարտված անձի կողմից կարող է կատարվել ոչ մեծ

ծանրության հանցագործություն, սակայն վերջինիս՝ մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հարցի քննարկումը կհետաձգվի ևս 20 տարով, այն դեպքում, երբ անձն արդեն իսկ կրել է պատժի 19 տարին, միաժամանակ, գիտակցելով առկա օրենսդրական ոչ լիարժեք կարգավորումը, որը թույլ է տալիս նման մեկնաբանություն, առաջարկվել է քննարկել խնդրի օրենսդրական կարգավորման անհրաժեշտության հարցը, օրինակ, մեկուսացվածության առավել ցածր աստիճանի ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հարցի քննարկման կասեցում՝ նշանակված պատժի ժամկետով:

Նշված առաջարկի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից ներկայացվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, նախագծի ընդունման հիմնավորումը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված տեղեկանքները:

Նախագծով առաջարկվող լրացման արդյունքում պատիժը կրելու ընթացքում նոր հանցագործություն կատարած ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ուղղիչ հիմնարկը մեկուսացվածության ավելի ցածր աստիճանի փոխելու հնարավորություն կլինի ոչ թե նոր կատարած հանցագործության համար նշանակված պատժի սկզբից 20 տարի անց, այլ ավելի վաղ՝ հաշվի առնելով նոր հանցանքի համար նշանակված պատժի ժամկետը և պատժի կրած մասը:

7. Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու գործընթացին վերաբերող խնդիրներ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2015 թվականի ընթացքում բազմաթիվ դիմումներ է ստացել մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխելու խնդրի կապակցությամբ: Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու գործընթացին վերաբերող խնդիրները նաև հանգեցրել են հացադուլների, այդ թվում զանգվածային (օրինակ՝ ՀՀ արդարադատության նախարարության «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկ), ընդ որում հիմնական բողոքները վերաբերել են կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներին առավել ցածր աստիճանի՝ բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխելու հարցին⁷⁸³:

⁷⁸³ ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2015 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ տրամադրված պաշտոնական տեղեկությունների համաձայն՝ կիսաբաց ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներին առավել ցածր աստիճանի՝ բաց ուղղիչ հիմնարկ տեղափոխման վերաբերյալ ներկայացվել է 98 միջնորդություններ, որոնցից 42-ը բավարարվել են, իսկ 56-ը՝ մերժվել:

Պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ քրեակատարողական օրենսգրքով և մի շարք այլ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխում է սույն օրենսգրքի 100-րդ հոդվածով նախատեսված Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հաշվի առնելով որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի դրսևորած վարքագիծը, մեկուսացվածության աստիճանի նպատակահարմարությունը և սույն օրենսգրքի 68-րդ հոդվածի պահանջները:

ՀՀ արդարադատության նախարարի 2012 թվականի մարտի 14-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի գործունեության կարգը հաստատելու մասին» թիվ 34-Ն հրամանի (այսուհետ՝ Հրաման) 1-ին հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ **ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու հարցով Հանձնաժողովի քննարկմանը ենթակա յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ կազմվում է միջնորդագիր և համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից ներկայացվում Հանձնաժողովին:** Վկայակոչված կետի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իմպերատիվ բնույթ չի կրում, հետևաբար, քրեակատարողական հիմնարկի պետը կարող է Հանձնաժողովին պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու վերաբերյալ միջնորդագիրն ինչպես ներկայացնել, այնպես էլ՝ չներկայացնել:

Գործնականում քրեակատարողական հիմնարկի պետի վերը նշված հայեցողական գործառույթը հանգեցնում է մարդու իրավունքների խախտումների: Այսպես օրինակ՝ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ կիսափակ ուղղիչ հիմնարկ կարող է տեղափոխվել՝ (...) ցմահ ազատազրկման դատապարտված և փակ ուղղիչ հիմնարկում պատիժը կրող դատապարտյալը՝ նշանակված պատժի առնվազն քսան տարին կրելուց հետո: Այսպիսով, վերլուծության ենթարկելով ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 101-րդ և 102-րդ հոդվածները՝ կարելի է ենթադրել, որ դրական բնութագրվող և նշանակված պատժի քսան տարին կրած ցմահ դատապարտյալը կարող է չտեղափոխվել կիսափակ ուղղիչ հիմնարկ, քանի որ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից **միջնորդագիր չի ներկայացվում** Հանձնաժողովին:

Իսկ այն դեպքում, երբ դատապարտյալն ինքն է դիմում Հանձնաժողովին, վերջինս պատասխանում է, որ անհրաժեշտ է **քրեակատարողական հիմնարկի պետի միջնորդագիրը:**

Հրամանը չի սահմանում նաև հստակ ժամկետներ միջնորդագիրը կազմելու և ներկայացնելու համար: Այս առումով, ուսումնասիրելով Հանձնաժողովի կողմից հրավիրվող նիստերի հաճախականությունը և այդ գործընթացի

առանձնահատկությունը՝ գալիս ենք այն եզրակացության, որ միջնորդագիրը կազմելու համար միջինում անհրաժեշտ է 10 օր, իսկ այն ներկայացնելու համար՝ 5 օր:

Ի դեպ, քննարկվող կետը չի համապատասխանում նաև օրենսդրական տեխնիկայի կանոններին: Այսպես, ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 5-ի նիստի թիվ 13 արձանագրային որոշման Հավելվածի 114-րդ կետի համաձայն՝ իրավական նորմի տեքստից պետք է հստակորեն և միանշանակ երևա, որ պահանջվում է որոշակի պարտադիր վարքագիծ:

Ըստ նույն Հավելվածի 115-րդ կետի՝ **եթե բայի միայն սահմանական ներկա եղանակով իմպերատիվ պահանջների ձևակերպումը չի ապահովում դրա իմպերատիվ բնույթի հարցում բավարար հստակություն, ապա խորհուրդ է տրվում օգտագործել պարտականության ձևակերպումը արտահայտող և նորմի հրամայական բնույթն ընդգծող բառեր, օրինակ՝ «պարտավոր է», «պետք է», «անհրաժեշտ է» և այլն:**

Ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտի ոճն իմպերատիվ-հրամայական ու պաշտոնական է:

Ելնելով վերոշարադրյալից՝ առաջարկվել է փոփոխության ենթարկել Հրամանի 1-ին Հավելվածի 3-րդ կետի առաջին նախադասությունը և այն խմբագրել հետևյալ բովանդակությամբ.

«3. Ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու հարցով Հանձնաժողովի քննարկմանը ենթակա յուրաքանչյուր դատապարտյալի վերաբերյալ տասնօրյա ժամկետում պարտադիր կազմվում է միջնորդագիր, որը համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետի կողմից հինգօրյա ժամկետում պետք է ներկայացվի Հանձնաժողովին:»:

Այս օրենսդրական առաջարկը քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարությունում և ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում: Այսպես, ՀՀ արդարադատության նախարարությունից, ի թիվս այլ տվյալների, տեղեկացվել է, որ այն դեպքում, երբ դատապարտյալը բավարարում է օրենքով նախատեսված պայմաններին, ապա նրա վերաբերյալ քրեակատարողական հիմնարկի պետի կողմից կազմվում և ներկայացվում է միջնորդագիր՝ Հանձնաժողովի կողմից ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու հարցը քննարկելու համար: Ընդ որում՝ նշվել է նաև, որ վերոնշյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր դատապարտյալի պարագայում բավարար պայմանների առկայության դեպքում՝ համապատասխան քրեակատարողական հիմնարկի պետը կազմում և ներկայացնում է այն՝ հաշվի առնելով օրենքով առաջադրված չափանիշները:

Ինչ վերաբերում է այն դիտարկմանը, որ Հրամանը չի սահմանում հստակ ժամկետներ միջնորդագիրը կազմելու և ներկայացնելու համար, ապա տեղեկացվել է, որ ներկայումս մշակման փուլում է գտնվում ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագիծը, որի շրջանակներում անդրադարձ կկատարվի նաև հիշյալ խնդրին:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից քննարկվող հարցի վերաբերյալ, ի թիվս այլ տվյալների, հայտնվել է. «(...) միայն 2015 թվականի 10 ամիսների ընթացքում Հանձնաժողովի որոշումներով բավարարվել է 309

դատապարտյալների ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու վերաբերյալ միջնորդություններ: Ուշադրության է արժանի նաև այն իրողությունը, որ 2014-2015 թվականների ընթացքում պատժի կրման ռեժիմի (փակից-կիսափակ) փոփոխություններ են իրականացվել նաև ցմահ ազատազրկման դատապարտված դատապարտյալների նկատմամբ, որի արդյունքում թվով 12 ցմահ դատապարտյալներ ներկայումս պատիժ են կրում կիսափակ ուղղիչ հիմնարկում (2014թ.՝ 3, 2015թ.՝ 9)»:

8. Ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ տառապող դատապարտյալներին առնչվող խնդիրներ

Ըստ ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կարգ հաստատելու մասին» թիվ 44-Ն հրամանով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 68-րդ կետի. «Կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառման են վերցվում որպես ռիսկային, եթե նրանց մոտ առկա են փախուստի, ինքնավնասման, **ալկոհոլի, թմրամիջոցների**, ագրեսիվության և կոնֆլիկտայնության, ինչպես նաև հանցածին դիրքորոշումների հակումներից մեկը. (...):

3) Որպես **ալկոհոլի, թմրանյութերի նկատմամբ հակում ունեցող հաշվառելու հիմք են հանդիսանում՝**

ա. դատավճռով տրված հարկադիր բուժման որոշումը,

բ. բժշկական եզրակացությունը,

գ. մեկ տարվա ընթացքում երկու և ավելի անգամ ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության ենթարկվելը»:

Նույն Կարգի 72-րդ կետի համաձայն՝ **ալկոհոլի, թմրամիջոցների** օգտագործման հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել համապատասխան բուժում ստանալուց հետո 1 տարվա ընթացքում, ոգելից խմիչք պատրաստելու, օգտագործելու համար կարգապահական պատասխանատվության չենթարկվելու դեպքում:

Գործնականում լինում են դեպքեր, երբ ալկոհոլամոլությամբ կամ թմրամոլությամբ տառապող դատապարտյալները ցանկանում են համապատասխան բուժում ստանալ, սակայն խուսափում են այդ մասին հայտնել բժշկին, քանզի գիտեն, որ հաշվառումից կարող են հանվել բուժումը ստանալուց հետո 1 տարվա ընթացքում (թեև վերը նշված կետում նշված է «1 տարվա **ընթացքում**» արտահայտությունը, սակայն կատարված ուսումնասիրությամբ փաստվում է, որ գրեթե բոլոր դեպքերում դատապարտյալները հաշվառումից հանվում են ուղիղ 1 տարի հետո): Հաճախ լինում են դեպքեր, երբ հենց այդ մեկ տարվա ընթացքում պետք է քննարկվեն պատիժը կատարելու համար ուղղիչ հիմնարկի տեսակը փոխելու հարցը և մի շարք այլ կարևոր հարցեր:

Նշվածի վերաբերյալ առաջարկվել է Կարգի 72-րդ կետը փոփոխության ենթարկել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«Ալկոհոլի, թմրամիջոցների օգտագործման հակված կալանավորված անձինք և դատապարտյալները հաշվառումից կարող են հանվել բուժման համապատասխան կուրսն անցնելուց հետո»:

Ի դեպ, պատահական չէ, որ նմանատիպ կերպով է հարցը լուծվում նաև ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» թիվ ԱԺՈ-80-Ն որոշման 11-րդ կետում, որի համաձայն՝ ազատագրված վայրերում ալկոհոլամոլությունից կամ թմրամոլությունից հարկադիր կարգով բուժվող անձանց նկատմամբ սույն որոշումը *կիրառվում է բուժման համապատասխան կուրսն անցնելուց հետո:*

Բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնվել է, որ ներկայումս քրեակատարողական ծառայությունում իրականացվում են մի շարք բարեփոխումներ. մասնավորապես՝ նախատեսվում է իրականացնել ՀՀ արդարադատության նախարարի 2008 թվականի մայիսի 30-ի «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը հաստատելու մասին» թիվ 44-Ն հրամանի ամբողջությամբ նոր նախագծի մշակման աշխատանքներ, որոնց ընթացքում հաշվի կառնվեն նաև ԲԿԱՄ փորձագետների կողմից ներկայացված մոտեցումները:

9. Պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոց կիրառելու գործնական հիմնահարցերը

Կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին: *Բողոքարկումը տույժի միջոցի կիրառումը չի կասեցնում* (տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության՝ կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի (այսուհետ՝ Ներքին կանոնակարգ) 229-րդ կետը):

Նմանատիպ իրավական կարգավորում առկա է նաև Ներքին կանոնակարգի 222-րդ կետում: Այսպես, նշված կետի համաձայն՝ կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից տույժի միջոցի բողոքարկումը չի կասեցնում տույժի կիրառումը:

Նախքան բուն խնդրին անդրադառնալը, հարկ է նշել, որ Ներքին կանոնակարգի 229-րդ կետում առկա է օրենսդրական տեխնիկայի խոտան (*խոսքը գնում է քննարկվող կետում շեղատառերով նշված վերջին նախադասության մասին*): Այս կապակցությամբ

նշենք, որ Ներքին կանոնակարգի 222-րդ կետում արդեն իսկ առկա է նմանատիպ կարգավորում, հետևապես անհրաժեշտ է Ներքին կանոնակարգի **229-րդ կետի վերջին նախադասությունը հանել**: Ի դեպ, ըստ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի՝ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները (...):

Անդրադառնալով բողոքարկման խնդիրներին՝ նշենք, որ գործնականում պատժախուց տեղափոխելը որպես տույժի միջոցի բողոքարկումը, գրեթե անհնարին է, իսկ որոշ դեպքերում էլ հնարավոր է, սակայն՝ անիմաստ:

Այսպես, պրակտիկայում հաճախ հանդիպում ենք այսպիսի դեպքերի. դատապարտյալի նկատմամբ որոշում է կայացվել 5 օր ժամկետով պատժախուց տեղափոխելու մասին: Վերջինս որոշել է բողոքարկել այդ որոշումը, ինչի մասին կազմում է համապատասխան փաստաթուղթ: Անկախ այն հանգամանքից, թե ով է կազմում այդ փաստաթուղթը, ինքը, թե իր իրավաբանը, տվյալ գործողությունը, որպես կանոն, պահանջում է առնվազն մեկ օր: Մեկ աշխատանքային օր պահանջվում է այն ուղարկելու համար (տե՛ս Ներքին կանոնակարգի 49-րդ կետը), մեկ օր՝ հասցեատիրոջը առաքելու համար, իսկ առնվազն մեկ օր անհրաժեշտ կլինի բողոքարկման մասին փաստաթուղթն ուսումնասիրելու և մեկ օր էլ հասցեատիրոջը կամ այլ պաշտոնական անձին պատասխանելու համար:

Հաշվի առնելով, որ այսպիսի իրավական կարգավորումն արդարացված չէ, առաջարկվել է Ներքին կանոնակարգի 222-րդ կետը փոփոխության ենթարկել և շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«222. Կալանավորված անձի կամ դատապարտյալի կողմից տույժի միջոցի բողոքարկումը կասեցնում է տույժի կիրառումը: Այդ դեպքում կալանավորված անձի կամ դատապարտյալի նկատմամբ տույժի կիրառումը պետք է հետաձգվի մինչև կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինների որոշում կայացնելը»:

Սույն առաջարկության կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ տույժի միջոցը հանդես է գալիս որպես զսպիչ մեխանիզմ հանրային վտանգավորության առավել բարձր մակարդակի վարքագծի հակված դատապարտյալների համար: Նման պայմաններում գտնում եմ, որ դատապարտյալի կամ կալանավորված անձի կողմից տույժի միջոցի բողոքարկման հիմքով տույժի միջոցի կիրառումը կասեցնելու վերաբերյալ ԲԿԱՄ փորձագետների կողմից արված առաջարկությունն ընդունելի չէ, քանի որ նման կարգ սահմանելը ոչ միայն էականորեն կնվազեցնի տվյալ տույժի դաստիարակչական և կանխարգելիչ նշանակությունը, այլև դատապարտյալների մոտ կստեղծի կատարված կարգապահական խախտման համար անպատժելիության պատրանք, որն էլ իր հերթին կհանգեցնի անհնազանդության դրսևորումների՝ վտանգելով օրենսդրությամբ քրեակատարողական հիմնարկներին վերապահված խնդիրների պատշաճ իրականացման երաշխիքների արդյունավետությունը:

Միաժամանակ հայտնվել է, որ կարգապահական տույժի ենթարկված դատապարտյալը կամ կալանավորված անձը որևէ կերպ կաշկանդված չէ տույժի մասին կայացված որոշումը բողոքարկել: Այդ անձանց նկատմամբ տույժի միջոցի կիրառումը բողոքարկելու իրավունքը նախատեսված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 7-րդ հոդվածով (օրինականության սկզբունք) և Կանոնակարգի 229 կետով, իսկ կալանավորված անձանց և դատապարտյալների կողմից բողոքներ ներկայացնելու ընթացակարգը հստակ նախատեսված է նույն Կանոնակարգի 169-173-րդ կետերով:

Անդրադառնալով Կանոնակարգի 222-րդ և 229-րդ կետերում առկա դրույթի կրկնության (Բողոքարկումը տույժի միջոցի կիրառումը չի կասեցնում) հիմքով 229-րդ կետի վերջին նախադասությունը հանելու վերաբերյալ առաջարկին՝ ՀՀ արդարադատության նախարարությունը նշել է, որ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 2-րդ մասի ամրագրումն առ այն, որ իրավական ակտերում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները, առաջարկը համարում է ընդունելի:

10. Ազատագրկման դատապարտված անձին տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելու կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնելու հետ կապված հիմնախնդիրներ

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար *առավելագույնը յոթ տարի ժամկետով* ազատագրկման դատապարտված անձը, որը պատիժը պետք է կրի կամ կրում է կիսաբաց կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում, կարող է ուղարկվել փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկ կամ թողնվել կալանավորվածներին պահելու վայրում՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու նպատակով:

Գործնականում վերը նշված պահանջը առաջացնում է լուրջ խոչընդոտներ: Հաճախ աշխատատեղերը թափուր են մնում, քանի որ քրեակատարողական հիմնարկի դատապարտյալների այն մասը, ովքեր ցանկություն են հայտնել աշխատելու, դատապարտվել են ազատագրկման յոթ տարուց ավելի ժամկետով:

Վերոգրյալի հետ մեկտեղ անհասկանալի է, թե ինչի՞ է քննարկվող հոդվածում խոսքը գնում հենց *առավելագույնը յոթ տարի ժամկետով* ազատագրկման դատապարտված անձանց մասին, այլ ոչ թե օրինակ՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություն կատարած անձանց մասին: Բարձրացված հարցի կապակցությամբ կարծիքներ չկան նաև պատժագիտական գրականության մեջ:

Ի դեպ, մեր կողմից ուսումնասիրված, **Բելառուսի**⁷⁸⁴, **Ադրբեջանի**⁷⁸⁵, **Ղազախստանի**⁷⁸⁶, **Ռուսաստանի**⁷⁸⁷ և **Ուկրաինայի**⁷⁸⁸ քրեակատարողական օրենսգրքերը

⁷⁸⁴http://etalonline.by/?type=text®num=HK0000365#load_text_none_1

⁷⁸⁵http://catholic.az/caritas/wp-content/uploads/cezalarin_icrasi_mecellesi_rus.pdf

⁷⁸⁶<http://www.nomad.su/?a=3-201407180040>

⁷⁸⁷ http://www.consultant.ru/popular/uikrf/12_19.html#p1453

նման պահանջ չեն պարունակում: Ավելին՝ որոշ օրենսգրքեր սահմանում են նաև ցմահ դատապարտյալներին համապատասխան աշխատանքներին ներգրավելու կարգը:

Առաջարկվել է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխության ենթարկել և շարադրել հետևյալ կերպ.

«1. Դիտավորությամբ կատարված հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը, որը պատիժը պետք է կրի կամ կրում է կիսաբաց կամ կիսափակ ուղղիչ հիմնարկում, կարող է ուղարկվել փակ կամ կիսափակ ուղղիչ հիմնարկ կամ թողնվել կալանավորվածներին պահելու վայրում՝ տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու նպատակով:»:

Շարկ է նաև ՀՀ քրեակատարողական օրենսգրքում սահմանել նոր դրույթ, որը կկարգավորեր ցմահ ազատազրկման դատապարտված անձանց աշխատանքների մեջ ներգրավվելու կարգը:

Բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածում «առավելագույնը յոթ տարի ժամկետով ազատազրկման» սահմանափակումը չի բխում քրեակատարողական օրենսդրության էությունից և բովանդակությունից:

Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված իրավանորմը հանդես է գալիս որպես ընդհանուր բնույթի նյութաիրավական նորմ, իսկ նյութական իրավունքի նորմերը կյանքի են կոչվում ընթացակարգային նորմերի միջոցով: Պատիժների համակարգը և բովանդակությունը սահմանող նյութական (քրեական) իրավունքի նորմերի բացակայության պարագայում ընթացակարգային (քրեակատարողական իրավունքի նորմերի մի մասը) նորմերը չեն կարող սահմանել դրանց իրականացման կարգը և պայմանները: Մա ենթադրում է այս երկու իրավունքի ճյուղերի նորմերի միջև տրամաբանական անքակտելիություն: ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածով նախատեսված իրավանորմը մասնավորեցվում է ՀՀ քրեակատարողական օրենսգրքում, սակայն «առավելագույնը յոթ տարի ժամկետով ազատազրկման» իրավադրույթի նախատեսման պայմաններում այս երկու նորմերի միջև տրամաբանական փոխկապակցվածությունը բացակայում է:

ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասը նպատակահարմար է խմբագրել՝ հաշվի առնելով վերոհիշյալ առաջարկությունները և հիմնավորումները: Հետևաբար, անհրաժեշտ է այդ իրավական լուծումը նախատեսել ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի մշակման շրջանակներում:

Ավելին՝ փոփոխությամբ կապահովվի իրավական ներդաշնակություն և իրավակարգավորման միասնականություն, որի արդյունքում առավել մեծ քանակի դատապարտյալներ ի վիճակի կլինեն ներգրավվել աշխատանքներում, ինչը կնպաստի և՛ նրանց սոցիալական վիճակի բարելավմանը, և՛ դրական ազդեցություն կունենա դատապարտյալի ուղղման գործընթացի վրա, որը, որպես պատժի գլխավոր նպատակ,

⁷⁸⁸ <http://pravoved.in.ua/section-kodeks/80-uiku.html>

ուղղակիորեն կապված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված պատժի և ուղղման միջոցների գուգակցման սկզբունքի հետ:

11. ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» թիվ ԱԺՈ-80-Ն որոշման խնդրահարույց հարցերը

11.1. ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի հոկտեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 22-րդ տարեդարձի կապակցությամբ համաներում հայտարարելու մասին» թիվ ԱԺՈ-80-Ն որոշման (այսուհետ՝ Համաներման ակտ) 9-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն. «Համաներումը չկիրառել՝ (...) այն անձանց նկատմամբ, որոնք մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը չեն հատուցել կամ այլ կերպ չեն հարթել ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն պատճառած վնասը, կամ առկա է վեճ հանցագործությամբ պատճառված և հատուցման ենթակա վնասի կամ դրա չափի կապակցությամբ, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, ովքեր չեն հատուցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը»:

Իհարկե, հասկանալի և ընդունելի է, որ նշված սահմանափակումների նպատակը՝ հանցագործությամբ նյութական վնաս պատճառած անձանց շահագրգռելն է, որպեսզի վերջիններս հատուցեն վերոնշյալ վնասը, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ անձը դատարանի վճռով սնանկ է ճանաչվել (փաստացի անվճարունակ է), հետևապես հարց է առաջանում, թե ինչպե՞ս պետք է սնանկ ճանաչված անձը հատուցի հանցագործությամբ պատճառած վնասը:

Հետևաբար, անհրաժեշտ է ունենալ այնպիսի իրավական կարգավորում, որը հնարավորություն կընձեռնի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սնանկ ճանաչված անձի նկատմամբ կիրառել Համաներման ակտը:

Այս կապակցությամբ առաջարկել ենք կատարել լրացում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունում⁷⁸⁹:

Ելնելով վերոգրյալից, տեղեկացված լինելով Արդարադատության նախարարության կողմից քրեակատարողական ոլորտը կարգավորող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու քարտեզագրման աշխատանքների մասին, միաժամանակ կարևորելով կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների պաշտպանության համար լրացուցիչ երաշխիքներ սահմանելու անհրաժեշտությունը՝ առաջարկվել է քննարկել նշված առաջարկների հիման վրա գործող օրենսդրության շրջանակներում անհրաժեշտ

⁷⁸⁹ Համաներման ակտի չկիրառելիության վերաբերյալ այս և այլ հարցերի վերաբերյալ տեղեկացվել է նաև ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովը:

փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորության հարցը, ինչպես նաև հաշվի առնել դրանք իրականացվող քարտեզագրման աշխատանքներում:

Սույն հարցի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացվել է, որ ՀՀ Սահմանադրության 14.1-րդ հոդվածն ամրագրում է. «Բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջև: Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:

Համանման կարգավորում է նախատեսված նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև: Նույն հոդվածի 2-րդ մասը նախատեսում է, որ իրավունքների, ազատությունների և պարտականությունների խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով սահմանված է, որ քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե ընդունվել է համաներման ակտ:

Նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի առաջին մասի 13-րդ կետում նշված հիմքով գործի հարուցման մերժում, վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ: Այս դեպքում ևս գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով:

Համաներման ակտի կիրառման վերաբերյալ օրենսդրական արգելքը (ՀՀ քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մաս) վերլուծության է ենթարկվել ՀՀ վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներում:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանն իր 2012 թվականի մարտի 30-ին կայացված թիվ ՏԴ/0088/01/11 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «19. Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի վերլուծությունից բխում է, որ Համաներման ակտն անձի նկատմամբ կիրառելի չէ բոլոր այն դեպքերում, երբ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով այդ անձի վրա դրված է նյութական վնասը հատուցելու պարտականություն, և այդ պարտականությունը վերջինիս կողմից չի կատարվում: Վճռաբեկ դատարանը ընդունում է, որ նշված սահմանափակման նպատակն է հանցագործությամբ նյութական վնաս պատճառած անձանց շահագրգռել

հատուցելու վերոնշյալ վնասը:

Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետից բխում է նաև, որ պատճառված վնասը հատուցելուց հետո Համաներման ակտի կիրառման սահմանափակումը վերանում է: Այլ կերպ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը հատուցելու հանգամանքը վերացնում է Համաներման ակտի կիրառման արգելքը:

Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե հանցագործությամբ պատճառված նյութական վնասը հատուցվել է, սակայն Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի վկայակոչմամբ վերոնշյալ ակտը չի կիրառվել, ապա դա հանգեցնում է անձի իրավունքների խախտման: (...) 28. Սույն գործով քննարկման առարկա հանդիսացող՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման վերլուծությունից երևում է, որ այն ուղղակիորեն կապված է համաներման ակտի հետ և սահմանում է դրա կիրառման արգելք: Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածում կատարված լրացման համաձայն՝ արգելվում է համաներման հիմքով գործի հարուցումը մերժել, վարույթը կարճել, քրեական հետապնդումը դադարեցնել, եթե չի հատուցվել կամ այլ կերպ չի հարթվել պատճառված վնասը, կամ առկա է վեճ հատուցման ենթակա վնասի կապակցությամբ» (տե՛ս Գագիկ Նորիկի Ղազարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից 2012 թվականի մարտի 30-ին կայացված թիվ ՏԴ/0088/01/11 որոշումը):

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վկայակոչված դրույթները, ինչպես նաև քննարկվող հարցի շուրջ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումները՝ գտնում եմ, որ ԲԿԱՄ փորձագետների կողմից ներկայացված առաջարկն այն մասին, որ համաներման ակտը կիրառվի նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սնանկ ճանաչված անձի նկատմամբ, չի համապատասխանում հիշյալ իրավական ակտերի պահանջներին, հետևաբար, համաներման ակտի կիրառման դեպքում վնասի հատուցման պայմանից որևէ շեղում անթույլատրելի է՝ անկախ սնանկ ճանաչվելուց կամ ոչ բարվոք նյութական դրությունից:

11.2. Ըստ Համաներման ակտի 9-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության. «Համաներման ակտը կիրառելի չէ՝ (...) այն անձանց նկատմամբ, որոնց նկատմամբ վերջին տասը տարվա ընթացքում՝ նշանակված պատժաչափը կրճատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ ներում շնորհելու մասին հրամանագրի կամ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի՝ համաներում հայտարարելու մասին որոշման հիման վրա և **կարող են մեղադրվել** կամ մեղադրվում են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու մեջ կամ դատապարտվել են կրկին դիտավորյալ հանցագործություն կատարելու համար»:

Հիշյալ ենթակետում տեղ գտած **«կարող են մեղադրվել»** արտահայտությունն անհասկանալի է և գործնականում կարող է բարդություններ ստեղծել, բացի այդ, այն կրում է կանխատեսական, մոտավոր բնույթ, քանի որ ենթադրում է ապագային

վերաբերող իրադարձություններ, ուստիև, հիմք չեն կարող հանդիսանալ համաներում չկիրառելու համար:

Այն անհամատեղելի է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված մեղադրանք առաջադրելու կարգի հետ (այս մասին մանրամասն տե՛ս նշված օրենսգրքի 27-րդ գլուխը):

Գտնում ենք, որ ճիշտ և նպատակահարմար կլինի Համաներման ակտի քննարկվող դրույթում տեղ գտած **«կարող են մեղադրվել»** արտահայտությունը հանել կամ փոխարինել հետևյալ արտահայտությամբ. **«վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ ներգրավվել են որպես մեղադրյալ»:**

Վերոգրյալը վերաբերելի է նաև Համաներման ակտի 9-րդ կետի 2-րդ ենթակետի «ա», «բ», «գ», «դ» պարբերություններին և նույն կետի 3-րդ և 9-րդ ենթակետերին:

11.3. Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետի համաձայն. «Համաներումը չկիրառել՝ (...) այն անձանց նկատմամբ, որոնք մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը չեն հատուցել կամ այլ կերպ չեն հարթել ենթադրյալ հանցագործությամբ անմիջականորեն պատճառած վնասը, կամ առկա է վեճ հանցագործությամբ պատճառված և հատուցման ենթակա վնասի կամ դրա չափի կապակցությամբ, ինչպես նաև այն անձանց նկատմամբ, որոնք չեն հատուցել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված նյութական վնասը»:

Իհարկե, հասկանալի և ընդունելի է, որ նշված սահմանափակումների նպատակը՝ հանցագործությամբ նյութական վնաս պատճառած անձանց շահագրգռելն է, որպեսզի վերջիններս հատուցեն վերոնշյալ վնասը, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ անձը դատարանի վճռով սնանկ է ճանաչվել (փաստացի անվճարունակ է), հետևապես հարց է առաջանում, թե ինչպե՞ս պետք է սնանկ ճանաչված անձը հատուցի հանցագործությամբ պատճառած վնասը:

Կարծում ենք, որ անհրաժեշտ է քննարկվող ենթակետում վերապահում նախատեսել դատարանի վճռով սնանկ ճանաչված անձանց մասով: Այս կապակցությամբ առաջարկում ենք Համաներման ակտի 9-րդ կետի 6-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. **«Բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է անձին սնանկ ճանաչելու մասին օրինական ուժի մեջ մտած դատական ակտ»:**

Եթե այսպիսի լրացում կատարվի, ապա անհրաժեշտ կլինի նաև համապատասխան լրացում կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունում⁷⁹⁰:

11.4. Համաներման ակտի 9-րդ կետի 7-րդ ենթակետը սահմանում է, որ. «Համաներումը չկիրառել՝ (...) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 12-րդ կետով, 112-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով, 138-րդ հոդվածով, 139-րդ հոդվածով, 141-րդ հոդվածով, 142-րդ հոդվածով, 217-224-րդ

⁷⁹⁰ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտության մասին տեղեկացվել է նաև ՀՀ արդարադատության նախարարությունը:

հողվածներով, 263-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 266-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 272-րդ հողվածի 2-րդ և 3-րդ մասերով, 299-րդ հողվածով, 300-300.2-րդ հողվածներով, 301.1-ին հողվածով, 302-305-րդ հողվածներով, 329-րդ հողվածի 2-րդ մասով, 336-րդ հողվածով, 379-397.1-ին հողվածներով նախատեսված հանցագործությունները կատարելու մեջ մեղադրվող կամ այդ հանցագործությունները կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ»:

Համաներման ակտի ուսումնասիրությունից ընդհանրապես և վերը վկայակոչված ենթակետի վերլուծությունից, մասնավորապես, երևում է, որ Համաներման ակտը **կիրառելի է** ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-ին հողվածով նախատեսված հանցագործությունը (այն է՝ խոշտանգումը) կատարելու մեջ մեղադրվող կամ այդ հանցագործությունը կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ:

Այս առնչությամբ նշենք, որ ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի դիրքորոշման համաձայն՝ խոշտանգման դեպքերում համաներում կիրառելն անհամատեղելի է Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների հետ, այդ թվում՝ տուժողի՝ վնասի հատուցման իրավունքի լիարժեք իրացման խախտման տեսակետից⁷⁹¹:

Կոմիտեն նաև նշել է, որ. «Համաներումը կամ այլ արգելքները, որոնք վկայում են պետության կողմից արագ և արդար քննություն իրականացնելու և խոշտանգողներին պատժելու պատրաստակամության բացակայության մասին կամ խոչընդոտում են այդ գործընթացը, խախտում են խոշտանգումների բացարձակ արգելքի անբախտելիության սկզբունքը»⁷⁹²: Անհրաժեշտ է նշել, որ ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտեն 2012 թվականին արդեն հայտնել է իր մտահոգությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի այլ հողվածներով խոշտանգման դրսևորման համար դատապարտված որոշ անձանց նկատմամբ համաներում կիրառելու դեպքերի կապակցությամբ⁷⁹³: Ընդ որում, իր վճիռներում ՄԻԵԴ-ը նույնպես ընդգծել է, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի ենթարկելու մեջ մեղադրվող պաշտոնատար անձանց նկատմամբ համաներման կիրառումն անթույլատրելի է⁷⁹⁴: Ի դեպ, քննարկվող խնդրի վերաբերյալ իր մտահոգությունն է արտահայտել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը⁷⁹⁵:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է Համաներման ակտի 9-րդ կետի 7-րդ ենթակետը **«302-305-րդ հողվածներով,»** բառերից հետո լրացնել **«309.1-ին հողվածով,»** բառերով:

⁷⁹¹Տե՛ս ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն 3, պարբերություններ 38, 41:

⁷⁹²Տե՛ս Նույն տեղը, պարբերություն 5:

⁷⁹³Տե՛ս ՄԱԿ-ի՝ Խոշտանգումների դեմ կոմիտե, Եզրափակիչ դիտարկումներ Հայաստանի զեկույցի վերաբերյալ, 2012, պարբերություն 10 <http://bit.ly/1N3KP0I>:

⁷⁹⁴Տե՛ս ՄԻԵԴ-ի *Türkmen v. Turkey (2006թ.)*, *Abdulsamet Yaman v. Turkey (2004թ.)* վճիռները:

⁷⁹⁵Տե՛ս «2014 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին» տարեկան զեկույցը: Եր., 2015թ., էջեր 39-40:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի վերը նշված առաջարկների կապակցությամբ ՀՀ Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովից տեղեկացվել է, որ Մահմանադրության փոփոխությունների նախագիծն ընդունվելու դեպքում Համաներման ակտի վերաբերյալ հարցերը կարող են լուծվել համապատասխան օրենքով:

12. Մահվան դեպքերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումների կայացում՝ առանց դատաբժշկական փորձաքննության եզրակացության

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում քրեակատարողական հիմնարկներում մահվան դեպքերը: Այդ կապակցությամբ Պաշտպանի կողմից ՀՀ արդարադատության նախարարության «Նուբարաշեն» և «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկներում արձանագրված մահվան դեպքերով իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ նշված դեպքերով նախապատրաստվել են նյութեր, նշանակվել դատաբժշկական փորձաքննություն, սակայն չունենալով դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը՝ որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Նման պրակտիկան խնդրահարույց է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներում ամրագրված՝ «արդյունավետ» քննություն իրականացնելու սկզբունքի տեսանկյունից⁷⁹⁶: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ամրագրել է, որ քննությունը պետք է լինի անկախ, մանրակրկիտ, համապատասխանի հանգամանքներին, նյութերը և կատարված եզրահանգումները պետք է հասանելի լինեն հարազատներին, որքանով դա ազդեցություն չի ունենա քննության արդյունավետության վրա և այլն: Դատարանն ընդգծել է նաև, որ երբ գործը վերաբերում է անձի մահվան այնպիսի հանգամանքներին, որոնք հնարավոր է վերաբերեն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ հոդվածի խախտմանը, ապա պետության պարտականությունն է դիտարկել կազմակերպելը, որպեսզի ստեղծվի ամբողջական և ճշգրիտ պատկերացում հնարավոր վատ վերաբերմունքի և մահվան պատճառների վերաբերյալ⁷⁹⁷:

Ընդ որում, մանրակրկիտ քննություն ասելով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ պետությունը պետք է մշտապես, ամենայն լրջությամբ միջոցներ ձեռնարկի պարզելու, թե ինչ է կատարվել և չպետք է հիմնվի արագ և չհիմնավորված կամ սակավ հիմնավորված եզրահանգումների վրա, որպեսզի փակի գործը կամ որոշում կայացնի: Դատարանը փաստել է նաև, որ պետությունը պետք է ձեռնարկի բոլոր հնարավոր/հասանելի միջոցներն ապացույցների հավաքագրման համար, այդ թվում նաև՝ վկայություններ, դատաբժշկական

⁷⁹⁶ Finogenov and Others v. Russia, nos. 18299/03 and 27311/03, §§ 270 - 272, ECHR 2011

⁷⁹⁷ Salman v. Turkey, § 105.

փորձաքննություն և այլն: Դատարանը պարտադիր է համարել, որ քննության եզրահանգումները հիմնված լինեն մանրակրկիտ, օբյեկտիվ և անաչառ վերլուծության վրա⁷⁹⁸:

Դատարանը, Գեպպան ընդդեմ Ռուսաստանի Դաշնության գործով⁷⁹⁹, անդրադառնալով պետության կողմից իրականացված նախաքննությանը, փաստել է, որ մարդու ներկայացրած բողոքը հիմնավոր չէ, իսկ նախաքննությունն ամբողջական, օպերատիվ և մանրակրկիտ է, քանի որ հիմնված է քննության ընթացքում ներկայացված հիմնավոր փաստարկների, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունների վրա: Վերը մեջբերված պատճառաբանություններից հետևում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մահվան դեպքերի քննության կարևորագույն տարր է համարում դատաբժշկական փորձաքննության իրականացումը և դրա արդյունքը:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածը մահվան պատճառի հաստատման միակ ապացույցն է համարում դատաբժշկական փորձագետի եզրակացությունը: Հետևաբար՝ քրեական հետապնդման մարմնի կողմից առանց նշված եզրակացությունը ստանալու և հետազոտելու քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման կայացումը կասկածի տակ է դնում քննության լրիվությունը և որոշման հիմնավորվածությունը:

Հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված դիրքորոշումը, ՀՀ օրենսդրությամբ ամրագրված դրույթները, այդ թվում՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման պահանջը, օրենսդրությամբ նախատեսված նյութերի նախապատրաստման սուղ ժամկետները, այնուամենայնիվ, հատկապես, քրեակատարողական հիմնարկներում արձանագրվող մահվան դեպքերը, կարծում ենք, պետք է հնարավորինս մանրակրկիտ քննության առարկա դառնան:

ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԱՍՔԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում» արտահերթ զեկույցում (այսուհետ՝ Արտահերթ զեկույց) նշված մի շարք խնդիրների, դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված (ձեռնարկվող) միջոցներին ծանոթանալու նպատակով ԲԿԱՍ փորձագետները 2015թ. ընթացքում կատարել է 16 կրկնակի այցեր մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններ, մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ մարզպետարանների (ՀՀ տարածքային

⁷⁹⁸ Timurtas v. Turkey, no. 23531/94, § 89, ECHR 2000-VI.

⁷⁹⁹ Geppa v. Russia, no. 8532/06, § 91, 3 February 2011.

կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության⁸⁰⁰) ենթակայության տակ գործող հատուկ հանրակրթական դպրոցներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ:

ՀԱՏՈՒԿ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

«Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հատուկ կրթության համակարգը ներառում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաների ուսուցման և կրթության համակարգը: Այս երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով պետությունը ստեղծում է հատուկ հաստատություններ (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ)՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու նպատակով: Գործող 23 պետական հատուկ հանրակրթական հաստատությունները նախատեսված են մտավոր և /կամ/ ֆիզիկական զարգացման խնդիրներ ունեցող երեխաների համար: Հատուկ կրթության համակարգում է նաև Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնը, որի գործունեության հիմնական առարկան և նպատակը երեխաների ֆիզիկական, մտավոր և /կամ/ հոգեկան զարգացման առանձնահատկությունների բացահայտումն ու գնահատումն է, նրանց ընդունակություններին ու կարողություններին համապատասխան կրթության իրականացման ձևի ընտրությունն ու հատուկ կրթական բնույթի գործունեության իրականացումը⁸⁰¹:

ԲԿԱՄ փորձագետները 2015 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կրկնակի այցեր են կատարել ՀՀ մարզպետարանների (ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության) ենթակայության տակ գործող թվով 6 հատուկ հանրակրթական դպրոց:

1. ԳՈՐԻՍԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ

Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցում (այցը կատարվել է 18.09.2015թ.), ի տարբերություն նախորդ այցի, լուծվել էր ջրամատակարարման խնդիրը և հաստատությունն ապահովվել էր տաք ջրով, զուգարաններում հիգիենիկ պարագաների և յուրաքանչյուր երեխայի ոտքերի լվացման համար նախատեսվել էին թասեր, առկա էր մաքուր սպիտակեղեն, նորացվել էին ներքնակների երեսները (դրանք

⁸⁰⁰ «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» 2016թ.-ի փետրվարի 20-ի ՀՀ ՀՕ-25-Ն օրենքով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը տարանջատվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների:

⁸⁰¹ <http://www.edu.am/index.php?menu1=9&menu2=137>

կարել էին աշխատակիցները դպրոցում առկա կտորով)⁸⁰²: Երեխաների աստամների խոզանակներն ու մածուկները պահվում էին անվանական բաժակներում: Ի տարբերություն նախորդ այցի՝ հագուստի պահարաններում պահվում էին երեխաների հագուստներն ու անձնական իրերը⁸⁰³: Ճաշարանում կերակրատեսակների նմուշները պահպանվում էին 48 ժամ՝ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի համաձայն⁸⁰⁴:

Միաժամանակ հարկ է նշել, որ հատուկ հանրակրթական դպրոցում ԲԿԱՄ փորձագետները նաև արձանագրել են մի շարք խնդիրներ: Այսպես.

- կրկնայցի ընթացքում պարզվեց, որ յուրաքանչյուր ամիս երեխաների մի խումբ պարտադիր գիշերում է դպրոցում, իսկ հաջորդ ամսում մյուս խումբն է գիշերում: Տնօրենը նշում էր, որ սահմանվել է գրաֆիկ, ըստ որի՝ երեխաների երկու առանձին խմբերը (10-13 հոգանոց) փոխարինում են միմյանց յուրաքանչյուր ամիս: Այսինքն, խնդիրը դեռևս կարգավորված չէ և երեխաներն իրենց կամքին հակառակ ստիպված գիշերում են հաստատությունում⁸⁰⁵:

- Ըստ երեխաների (ինչը փաստվեց նաև ճաշացանկերի ուսումնասիրության արդյունքում)՝ կերակուրները կրկնվող և միատեսակ են, գրեթե ամեն օր տրամադրվում է մակարոնով կամ վերմիշելով փլավ: Միս տրամադրվում է շաբաթը 1-2 անգամ⁸⁰⁶:

- Դպրոցում բացի կարագից և պանրից այլ կաթնամթերք չէր տրամադրվում⁸⁰⁷:

⁸⁰² Նախորդ այցին (17.09.2014թ.) երեխաների հետ առանձնագրույցներից պարզվել էր, որ սպիտակեղենը չի լվացվում, փոխարենն այն ուղղակի փոխանակվում է տղաների և աղջիկների սպիտակեղենի հետ: Երեխաները նշել էին նաև, որ անկողնուց մեզի հոտ է գալիս:

⁸⁰³ Նախորդ այցին (17.09.2014թ.) ննջարանների հագուստի պահարաններում հագուստ չկար:

⁸⁰⁴ Նախորդ այցին (17.09.2014թ.) վերոգրյալ սանիտարական կանոնները և նորմերը խախտվել էին:

⁸⁰⁵ Նախորդ այցին (17.09.2014թ.) երեխաները նշել էին, որ իրենց զգուշացվել է, որ դպրոցում գիշերելուց հրաժարվելու դեպքում կհեռացվեն:

⁸⁰⁶ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի 24-րդ կետի պահանջների խախտում: Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի պարզաբանման համաձայն՝ նշված սանիտարական կանոնները և նորմերը կիրառելի են նաև երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների համար:

⁸⁰⁷ Չի պահպանվում ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 815-Ն որոշմամբ հաստատված թիվ 13 Հավելվածով սահմանված՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխաների սննդամթերքի տեսականու և քանակի (մեկ սովորողի հաշվարկով) վերաբերող պահանջը:

- Սննդի պահեստում սննդի պահման համապատասխան պայմաններ չկային⁸⁰⁸, սառնարանները չէին բավարարում:

- Երեխաների հետ առանձնագրույցից ակնհայտ պարզ էր, որ վերջիններս ԲԿԱՄ փորձագետների նախորդ այցից հետո ահաբեկվել էին մանկավարժների կողմից և վախենում էին խոսել ուսուցիչների վերաբերմունքի մասին:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացվել է, որ ՀՀ Սյունիքի մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների մասնագետները տեղում ուսումնասիրել են Սյունիքի մարզի Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի բռնությունների կանխարգելման վարչության կողմից արձանագրված թերությունները: Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցը 2016 թվականի հունվար ամսից սննդի կազմակերպումը կիրականացնի ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոններին և նորմերին համապատասխան: Միաժամանակ, ըստ ճաշացուցակի ուսումնասիրության՝ բացի կարագից և պանրից սննդակարգում ընդգրկվել է նաև թթվասերը:

2. ՄԻՍԻԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ

Միսիանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցում (այցը կատարվել է 17.09.2015թ.) բուժկետը համապատասխան կահավորված էր, նախատեսվել էին ընդունարան և հիվանդասենյակներ: Զուգարաններում տեղադրվել էին համապատասխան հիգիենիկ պարագաներ: Լուծվել էր ջրամատակարարման խնդիրը և հաստատությունն ապահովվել էր տաք ջրով:

Հատուկ հանրակրթական դպրոցում սառնարան չիլինելու պատճառով կերակրատեսակների նմուշները պահպանվում էին սառը ջրով լցված թասում: Ըստ տնօրենի՝ ծնողները մտահոգված են դպրոցի վերակազմավորման կապակցությամբ, քանի որ ներառական կրթության ծրագրին երեխաները դեռ պատրաստ չեն, նման դեպքերում երեխաները հաճախ ինքնամեկուսանում են և չեն շփվում մյուսների հետ, դրսևորում են ագրեսիվ վարք և վտանգ կա, որ երեխաներից շատերը կհայտնվեն փողոցում դասերին չմասնակցելու պատճառով:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների

⁸⁰⁸ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացրել են, որ ԲԿԱՄ փորձագետների այցից հետո ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացված ստուգման արդյունքում պարզվել է, որ սննդի պահեստի պահման պայմանները բավարար են (05.10.2015 թվականի թիվ 960 արձանագրության 7.6 կետ):

նախարարությունից տեղեկացվել է, որ Միսիանի թիվ 1 հատուկ դպրոցում լուծվել է սառնարանի խնդիրը, կերակրատեսակների նմուշները պահպանվում են սառնարանում:

Նախարարությունից հայտնել են նաև, որ Միսիան համայնքում գործող 4 հիմնական և Միսիանի ավագ դպրոցներում գործում է ներառական կրթություն: Մտավոր հետամնացություն ունեցող սովորողների սոցիալական հարմարումը և կրթական միջավայրում ներառումն ընդգրկված է ներառական կրթության ծրագրում:

3. ԳՅՈՒՄՐՈՒ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԹԻՎ 3 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ

Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոցի (այցը կատարվել է 22.09.2015թ.) մուտքը և ամբողջ տարածքը վերանորոգվել էր, նախասրահում բազմոցների փոխարեն տեղադրվել էր սեղան և աթոռ, որը ծառայում էր որպես ընդունարան: Շքամուտքում տեղադրված էր աղբաման: Նախասրահում առկա էր 5 անվասայլակ: Ի տարբերություն նախորդ այցերի՝ միջանցքի և սանհանգույցների առջև ջրային կուտակումներ չկային: Սանհանգույցներում լվացարանները տեղափոխվել էին այլ հատված, որով կարգավորվել էր նաև ջրահեռացման խնդիրը: Խոհանոցի և ճաշարանի հատակը սալիկապատվել էր: Ապահովվել էր համապատասխան լուսավորություն, տարածքը մաքուր էր⁸⁰⁹: Խոհանոցում առանձնացվել էին առանձին սեղաններ տարբեր մթերքների մշակման համար: Ապահովված էր սննդի բազմատեսակությունը: Պահեստի տարածքը տեղափոխվել էր ավելի լուսավոր և բարեկարգ տարածք: Ձեռք էին բերվել նոր սառնարաններ, որտեղ առանձնացված մասերում և առանձին սառնարաններում պահվում էին խոզի և տավարի մսերը, կաթնաշոռը, պանիրը, կարագը, ձուն և այլն: Առանձին պահարաններ էին նախատեսվել ձավարեղենը պահելու համար: Վերացվել էր ժամկետանց և արգելված սննդատեսակները⁸¹⁰: Ննջասենյակները մաքրվել էին, իսկ իրերը՝ կոկիկ դասավորվել: Ի տարբերություն նախորդ այցի՝ բոլոր դասասենյակները մաքուր էին և բավարար լուսավորված: Դպրոցում գործող նախակրթարանը փակվել էր⁸¹¹, սկսվել էին խաղահրապարակի կառուցման աշխատանքները: Դպրոցը ստացել էր 12 համակարգիչ:

Թեև հատուկ հանրակրթական դպրոցում արձանագրվել են դրական մի շարք

⁸⁰⁹ Նախորդ այցին (14.11.2014թ.) խոհանոցում և ճաշարանում սանիտարական վիճակը բավարար չէր: Ճաշարանում միայն մեկ լամպ էր աշխատում և անգամ ցերեկային ժամին լուսավորությունը բավարար չէր:

⁸¹⁰ Նախորդ այցին (14.11.2014թ.) պահեստում հայտնաբերվել էր ժամկետանց թեյ, լոլիկի բորբոսնած պահածո, մրգային կոմպոտներ, որոնք պատրաստվել էին հաստատության աշխատակիցների կողմից (աշխատակիցների հավաստմամբ նաև երեխաների մասնակցությամբ):

⁸¹¹ Նախորդ այցին (14.11.2014թ.) ԲԿԱՄ փորձագետների համար անհասկանալի էր դպրոցում գործող նախակրթարանի առկայությունը, հատկապես, որ որևէ համապատասխան պայման նախակրթարանի համար նախատեսված չէր:

փոփոխություններ, այնուամենայնիվ, ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են հետևյալ խնդիրները.

- խոհանոցում գտնվող սառնարանի մեջ հայտնաբերվել է 4 շիշ գազավորված հյութ (լիմոնադ), որը տնօրենի հավաստմամբ աշխատակիցների համար է, սակայն հարկ է նշել, որ բաղնիքի տարածքում ուսումնասիրության ընթացքում առկա էր մեկ արկղ նույնանման լիմոնադների դատարկ շշեր⁸¹²:

- Դպրոցի սաներին ատամնաբուժական որևէ ծառայություն չէր մատուցվում, չնայած որ երեխաների մեծ մասը ատամների բուժման կարիք ուներ:

- Հիվանդ երեխաների մեկուսացման հնարավորություն չկար և ջերմոդ հիվանդները կամ մեկուսացման կարիք ունեցող երեխաները բուժում էին ստանում ննջարանում:

- Դպրոցի բուժանձնակազմը և վարչակազմը տեղեկացված չէր դեղորայքի ոչնչացման մեխանիզմների մասին և ԲԿԱՄ փորձագետներին հայտնել էին, որ դեղորայքը ոչնչացվում է աղբանոցում՝ պոլիէթիլենով փաթեթավորելուց հետո նավթով այրելով⁸¹³:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացվել է, որ 2014 թվականի մարտի 27-ի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում» արտահերթ զեկույցում՝ Շիրակի մարզի Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 3 հատուկ (օժանդակ) դպրոցի վերաբերյալ նշված խախտումները քննարկվել են դպրոցի տնօրինության հետ:

- Գազավորված ըմպելիքի օգտագործման հարցը քննարկվել է ընդհանուր ժողովում և այսուհետ դպրոցում արգելվել է գազավորված ըմպելիքի օգտագործումը:

- Դպրոցում մասսայականացվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ բնապահպանության նախարարի 2008 թվականի հունիսի 6-ի «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 209-Ն հրամանով հաստատված կարգի պահանջները:

- «Ստոմա-Ստիլ» ատամնաբուժական կլինիկա ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր՝ դպրոցում պարբերաբար ատամնաբուժական ծառայություն մատուցելու համար:

- Հիվանդ երեխաների մեկուսացումը ապահովելու նպատակով դպրոցում

⁸¹² Հարկ է նշել, որ նախորդ այցի ընթացքում արձանագրվել էր նույն խնդիրը՝ խոհանոցում արկղով դրված էր գազավորված ըմպելիք (լիմոնադ), որն ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի ««Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի՝ համարվում է չօգտագործվող սննդամթերք:

⁸¹³ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ բնապահպանության նախարարի 2008 թվականի հունիսի 6-ի «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 209-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների խախտում:

առանձնացվել է համապատասխան հարմարություններով սենյակ:

4. ՎԱՆԱՁՈՐԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ

Վանաձորի մտավոր թերգարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցում (այցը կատարվել է 11.09.2015թ.) արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- դպրոցը գտնվում է բնակելի տարածքներից բավականին հեռու, քաղաքային տրանսպորտն անհասանելի է և չունի երեխաներին տուն-դպրոց ուղեկցելու տրանսպորտային միջոց⁸¹⁴:

- Ննջարանների պահարաններում առկա ատամի մածուկը ժամկետանց էր (2011թ.):

- Դպրոցի սաներին ցուցաբերված անհրաժեշտ բժշկական օգնության, ինչպես նաև տրամադրած դեղորայքի հիմնավորումների վերաբերյալ գրառումներ չէին կատարվում:

- Բուժմասում չկար անհրաժեշտ դեղորայք⁸¹⁵:

- Կապը երեխայի բուժող բժշկի կամ բնակության վայրի ամբուլատոր բժշկական հաստատության բժշկի հետ չէր պահպանվում:

- Հայտնաբերվել են ժամկետանց «Բետադինոկ», «Կարբամազեպին», «Ակտիվ ածուխ» դեղորայք և ներարկիչներ: Խնդրահարույց էր, որ բուժքույրը մատնանշված ժամկետանց դեղորայքը նետեց աղբամանը⁸¹⁶: Երբ ԲԿԱՄ փորձագետը փորձել է ճշտել, թե արդյոք այդպես են ոչնչացնում ժամկետանց դեղորայքը, բուժքույրը հավաստիացրել է, որ դեղորայքը նաև դուրս կգրվի:

- Ճաշացանկերի ուսումնասիրությամբ պարզվել էր, որ կերակուրները կրկնվող և միատեսակ էին: Կաթնամթերքներից տրամադրվում էր միայն կարագը և պանիրը⁸¹⁷:

⁸¹⁴ Խնդիրն արձանագրվել է նաև նախորդ այցի ժամանակ (29.10.2014թ.):

⁸¹⁵ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի ««Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.III.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոնների խախտում:

⁸¹⁶ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ բնապահպանության նախարարի 2008 թվականի հունիսի 6-ի «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 209-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների խախտում:

⁸¹⁷ Չի պահպանվել ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 815-Ն որոշմամբ հաստատված թիվ 13 Հավելվածով սահմանված՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխաների սննդամթերքի տեսականու և քանակի (մեկ սովորողի հաշվարկով) վերաբերող պահանջը:

- Մննդամթերքի պահեստի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել էր մեծ քանակով 3 կիլոգրամանոց ապակե տարաներով պահածոյացված չպիտակավորված դեղձի ջեմ և խոհարարների կողմից պահածոյացված մրգային կոմպոտներ (մրգերը դպրոցի այգուց հավաքել էին երեխաները), ինչպես նաև՝ գազավորված ըմպելիք⁸¹⁸: Սառնարանի պարունակությունն ուսումնասիրելու ընթացքում բացի դպրոցի սաների համար նախատեսված մսամթերքից, առկա էր նաև այլ մսամթերք (մեծ քանակությամբ «խաշի տոտիկներ»), որն, ըստ տնօրենի, նախատեսված էր իր անձնական օգտագործման համար:

- Գրեթե բոլոր երեխաները գտնվում էին անխնամ և կեղտոտ վիճակում, հագուստը՝ կեղտոտ:

- Երեխաները չունեին հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար նախատեսված դասագրքեր և դասավանդվում էին ԽՍՀՄ շրջանի դասագրքերով:

- Մանկավարժներն ունեին վերապատրաստման կարիք հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար. տնօրենի հավաստմամբ ուսուցիչները նման վերապատրաստումներ չեն անցում:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացվել է, որ Վանաձորի թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցի տնօրինության հավաստմամբ.

- դպրոցը ձեռք է բերել 26 տեղանոց տրանսպորտային միջոց:

- Ննջարանի պահարանում հայտնաբերված ատամի մածուկը բերված էր երեխաների կողմից: Արդեն իսկ զգուշացվել է ծնողներին, որ նմանատիպ հիգիենիկ պարագաները տնից չբերվեն:

- 2015 թվականի սեպտեմբերի 1-ից կես դրույքով դպրոցում աշխատանքի է ընդունվել բժիշկ, ով, որպես մանկաբույժ, աշխատանքը համատեղում է թիվ 5 պոլիկլինիկայում և ծնողների հետ մշտապես գտնվում է կապի մեջ: Այսուհետ անհրաժեշտ բժշկական օգնության, ինչպես նաև տրամադրվող դեղորայքի հիմնավորումների վերաբերյալ գրառումները կատարվում են բժշկի կողմից:

- Դպրոցում առկա է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի ««Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.III.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոններով հաստատված անհրաժեշտ դեղերի ցանկով նախատեսված դեղորայքը:

- Հայտնաբերված ժամկետանոց դեղորայքը և ներարկիչները ոչնչացվել են ՀՀ բնապահպանության նախարարի 2008 թվականի հունիսի 6-ի «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգը և պայմանները հաստատելու մասին»

⁸¹⁸ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի ««Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի խախտում:

թիվ 209-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան:

- Քանի որ այցը կատարվել էր ուսումնական տարվա սկզբին, դեռ ձեռք չէր բերվել կաթնամթերքի տեսականի, հետագայում բացի կարագից և պանրից, երեխաներին տրվել է նաև կաթնաշոռ, թթվասեր և կաթ:

- Դպրոցում հայտնաբերված խաշի տոտիկները և երկու շիշ զագավորված ըմպելիքը բերվել էին աշխատողների կողմից և նախատեսվել իրենց անձնական օգտագործման համար: Սննդամթերքի պահեստում հանձնարարված է, որ սառնարաններում այսուհետ պահպանվի միայն երեխաների համար նախատեսված սննդամթերք: Դպրոցի այգուց երեխաների կողմից հավաքված և խոհարարների կողմից պահածոյացված չպիտակավորված դեղձի ջեմը և մրգահյութերը ոչնչացվել են:

- Դպրոցում առկա է տաք և սառը ջուր, որը հնարավորություն է տալիս երեխաներին շաբաթը մեկ անգամ լողանալու, իսկ ամեն երեկո ներքին հիգիենիկ մաքրությամբ զբաղվելու (ոտքեր լվանալ, ատամների մաքրում): Գործում է նաև լվացքատուն, որտեղ լվացվում և արդուկվում են երեխաների կեղտոտ հագուստը:

- Դպրոցի մանկավարժները բոլորը փորձառու և հմուտ մանկավարժներ են, կան հատուկ մանկավարժներ, հոգեբան, լոգոպեդ և առարկայական մասնագետներ, ովքեր սաների հետ աշխատում են անհատական ուսումնական պլանով (ԱՌԻՊ): Թեպետ մանկավարժները հատուկ չեն վերապատրաստվել, բայց հաճախակի մասնակցել են սեմինարների, որոնք կազմակերպվել են դպրոցում բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի կողմից:

5. ԱՇՏԱՐԱԿԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ

Ի տարբերություն նախորդ այցի՝ այս անգամ **Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի** (այցը կատարվել է 12.10.2015թ.) պահեստն ակնհայտ մաքուր ու կոկիկ էր, պահեստից վերացվել էր աղբը⁸¹⁹: Առաջին հարկի միջանցքները բավարար լուսավորված էին, տեղադրվել էին անհրաժեշտ քանակությամբ լամպեր⁸²⁰: Խոհանոցը և ճաշարանը վերանորոգված էր⁸²¹ (առանձնագրույցներից պարզվել է, որ վերանորոգման աշխատանքներն իրականացվել են աշխատակիցների ֆինանսական միջոցներով), ճաշարանը համալրվել էր անհրաժեշտ նոր գույքով՝ սեղաններ,

⁸¹⁹ Նախորդ այցին (28.10.2014թ.) դպրոցի պահեստը լցված էր հնամաշ անպիտան տարբեր իրերով (կոտրված սեղաններ, դռներ, պատուհաններ, արկղեր, փոշոտ հագուստներ և այլն): Նույն պահեստի տարածքում էր պահվում նաև տնտեսական պարագաները, քլորը թափված էր հատակին, ամբողջ տարածքը չխնամված և փոշոտ էր:

⁸²⁰ Նախորդ այցին (28.10.2014թ.) առաջին հարկի միջանցքում ապահովված չէր բնական և արհեստական լուսավորությունը:

⁸²¹ Նախորդ այցին (28.10.2014թ.) ճաշարանը բարվոք չէր և հակասանիտարական պայմաններ էին: Խոհանոցային տարածքը նույնպես հակասանիտարական վիճակում էր, այն լցված էր խոհանոցի հետ կապ չունեցող բազմաթիվ իրերով և պարագաներով (հագուստ, հողաթափեր, թել, գործվածք հյուսելու շյուղեր և այլն):

աթոռներ և նոր սպասք: Հատուկ մանկավարժի և հոգեբանի աշխատասենյակներն առանձնացված էին և պատշաճ կահավորված⁸²²: Հարկ է նաև նշել, որ դպրոցը համալրված էր անհրաժեշտ դեղորայքով: Հաստիքացուցակը համալրվել էր գիշերային բուժքրոջ հաստիքով: Պետք է նշել, որ, ի տարբերություն նախորդ այցի, դպրոցի բոլոր սաներն արդեն ունեին բժշկական քարտեր, որոնցում գրառվում էին միայն տարեկան բժշկական զննության արդյունքները: Դասապատրաստմանն, ի տարբերություն նախորդ այցի, ուսուցչի հետ ներկա էին և որոշ երեխաների հետ աշխատում էին հատուկ մանկավարժները:

Այնուամենայնիվ, հատուկ հանրակրթական դպրոցում արձանագրվել են մի շարք խնդիրներ, այսպես.

- Դպրոցում սպորտային պարագաներն ու գույքը սակավաթիվ էր (ծակ գնդակ, հնամաշ և ոչ պիտանի լախտ):

- Դպրոցի սաներին ցուցաբերված անհրաժեշտ բժշկական օգնության, ինչպես նաև տրամադրվող դեղորայքի հիմնավորումների վերաբերյալ գրառումներ չէին կատարվում:

- Դպրոցի բուժքրոջ և բնակության վայրի ամբուլատոր բժշկական հաստատության միջև կապ չէր պահպանվում: Օրինակ՝ սաներից մեկին սպասարկող ամբուլատոր բժշկական հաստատությունը հրաժարվել էր տրամադրել հոգեմետ դեղորայքի անհրաժեշտությունը հավաստող փաստաթուղթ, որը հիմք կհանդիսանա երեխային դպրոցում պատշաճ բուժում ստանալու համար, ինչի պատճառով էլ երեխան դեղորայքը ստանում է տանը, հետո՝ այցելում դպրոց: Այսինքն, երեխան ստիպված ուշ էր այցելում դպրոց և դեռևս դեղի ազդեցության տակ (ըստ տնօրենի՝ շշմած, բժժած վիճակում), ինչն էլ ազդում է երեխայի կրթություն ստանալու արդյունավետության վրա:

- Ինչպես՝ նախորդ, այնպես էլ այս մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է դասամատյանների թերի լրացումներ. մատյաններում նշված չէին բացակաները, դասաժամերը լրացված չէին կամ լրացված՝ նախապես: Բոլոր նմանատիպ թերությունները պատճառաբանվում էին այն հանգամանքով, որ երկուշաբթի էր և երեխաները դեռ ճանապարհին էին (չնայած արդեն ժամը 13:00-ի սահմաններում էր):

- Երգի դասաժամին երեխաների մի մասը զբաղված էր նկարչությամբ, իսկ մյուս մասը՝ տառեր գրելով:

- Դասարանում երեխաները պատմում էին ուսուցչական կազմի կողմից ցուցաբերվող վատ և կոպիտ վերաբերմունքի մասին, և այդ պահին մտավ հոգեբանը և երեխաներից մեկին կանչեց իր մոտ՝ վերջինիս հետ աշխատելու պատրվակով, սակայն ակնհայտ էր, որ փորձ էր արվում ընդհատել առանձնագրույցը:

- Երեխաները երկու կոպիտ դաստիարակի մասին էին պատմում՝ նշելով

⁸²² Նախորդ այցին (28.10.2014թ.) հատուկ մանկավարժի աշխատասենյակը համատեղված էր բուժմասի հետ, իսկ հոգեբանի սենյակը պատշաճ կահավորված չէր:

անգամ փայտով հարվածելու դեպքերի մասին, եթե քնի ժամին երեխաները խոսում են:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացվել է, որ Աշտարակի թիվ 1 հատուկ դպրոցի տնօրենի գրավոր բացատրության համաձայն.

- բժշկական փաստաթղթերում և դասամատյաններում առկա թերությունները վերացվել են:

- Երաժշտության ուսուցչուհին և կոպիտ վարք ցուցաբերած դաստիարակները ենթարկվել են կարգապահական տույժի:

- 2016 թվականի 1-ին կիսամյակում նախատեսվում է կահավորել մարզադահլիճը, ձեռք բերել մարզական գույք:

6. ԱԲՈՎՅԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ

Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցում (այցը կատարվել է 15.09.2015թ.), ի տարբերություն նախորդ այցերի, սուր տհաճ հոտը վերացվել էր, ննջարաններում օդը մաքուր էր: Դեղամիջոցները խոհանոցի տարածքից վերացվել էին: Ննջարաններում տեղադրվել էին անձնական պահարաններ: Պահեստային մասը մաքրվել և դասավորվել էր, առանձնացվել էին սննդի և տնտեսական ապրանքների պահեստային սենյակները: Սննդի պահեստում առկա սնունդը ժամկետի մեջ էր⁸²³:

Թեև հատուկ հանրակրթական դպրոցում արձանագրվել են դրական մի շարք փոփոխություններ, այնուամենայնիվ, ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են հետևյալ խնդիրները.

- կերակրատեսակների նմուշների վրա ժամկետներ նշված չէին⁸²⁴:
- Բուժմասում բացակայում էր անհրաժեշտ դեղորայքը⁸²⁵:
- Երեխաներից 4-ն ունեին նաև հենաշարժական խնդիրներ, տեղաշարժվում էին անվասայլակների օգնությամբ, սակայն դպրոցի մուտքը և առհասարակ շինության որևէ հատված հարմարեցված չէր անվասայլակով տեղաշարժվող երեխաների համար:

⁸²³ Նախորդ այցին (06.03.2014թ.) հայտնաբերվել են ժամկետանց հավկիթներ:

⁸²⁴ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի 58-րդ կետի խախտում:

⁸²⁵ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.ՈՒ.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոնների խախտում:

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունից տեղեկացվել է, որ Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցում արձանագրված խնդիրները վերացվել են՝

- կերակրատեսակի նմուշների վրա նշվում է դրանց վերցման ժամը, օրը, ամիսը:

- 2015 թվականի սեպտեմբերի 20-ին, ըստ նշված դեղորայքի ցուցակի, համապատասխան դպրոցի գնումների տարեկան պլանի, ուսումնական հաստատությունը ձեռք է բերել անհրաժեշտ դեղորայքը:

- համապատասխան աշխատանքների արդյունքում 2015 թվականի հոկտեմբերի 1-ից դպրոցն արդեն ունի թեքահարթակ՝ սայլակավոր երեխաների տեղաշարժի համար:

ԲԿԱՄ փորձագետները 2015 թվականի նոյեմբեր ամսին կրկնակի այց են կատարել նաև Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող **Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոց**՝ Արտահերթ զեկույցում մատնանշված ընթացիկ խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված (ձեռնարկվող) միջոցառումներին ծանոթանալու նպատակով:

7. ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹԻՎ 2 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ

Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոցում (այցը կատարվել է 03.11.2015թ.) արձանագրվել են մի շարք դրական փոփոխություններ: Դպրոցի դահլիճը վերանորոգվել էր, կահավորվել, որտեղ սեպտեմբեր ամսից կազմակերպվում էին պարի և երգի խմբակներ, որոնց, փոխտնօրենի հավաստմամբ, երեխաները մեծ հաճույքով են հաճախում: Վերանորոգվել և կահավորվել էին խաղասենյակները, ինչպես նաև 2 աշխատասենյակներ, որոնցից մեկը՝ հոգեբանի, իսկ մյուսը նախատեսվում էր կահավորել որպես խաղասենյակ: Հարկ է նշել, որ ննջարանների գույքը նորացվել էր. փոխվել էին մահճակալները, ավելացվել՝ կողապահարաններ, հագուստի պահարաններ, փափուկ գույք (բազկաթոռ, բազմոցներ)⁸²⁶, երեխաներին տրամադրված կողապահարանները փակվում էին բանալիներով, որոնք, ըստ փոխտնօրենի, երեխաները պահում են իրենց մոտ⁸²⁷: Շախմատի դասարանը կահավորվել էր Հայաստանի Շախմատային Ֆեդերացիայի կողմից: Երեխաների հետ զրույցների ընթացքում պարզվել է, որ լոգանքը կազմակերպվում է ուրբաթ, շաբաթ և

⁸²⁶ Նախորդ այցին (12.11.2014թ.) արձանագրվել էր, որ երեխաները ննջասենյակներում հագուստի անհատական պահարաններ և կողապահարաններ չունեին:

⁸²⁷ Նախորդ այցին (12.11.2014թ.) երեխաներն անընդհատ նշում էին, որ դպրոցում գողության դեպքեր կան և կցանկանան, որ նման դեպքերը վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկվեն:

կիրակի օրերին⁸²⁸: Ննջարաններում և սանհանգույցներում, ինչպես նաև միջանցքներում վերացվել էր տհաճ հոտը:

Ըստ ուսումնասիրված ճաշացանկերի (նախորդ 10 օրերի), ի տարբերություն նախորդ այցի, սննդակարգում ավելացվել էր մսամթերքը: Մսի մշակման արտադրամասում վերացվել էր մեծ քանակությամբ կարմիր կծու պղպեղի և կանաչու չորացումը⁸²⁹: Ի տարբերություն նախորդ այցի՝ այս անգամ վատ վերաբերմունքի դրսևորումների մասին երեխաները չեն հայտնել, ավելին՝ շեշտում էին իրենց գոհունակությունն աշխատակիցների վերաբերմունքից:

Հարկ է նշել, որ այցի պահին Առաջին համալսարանական կլինիկայի ատամնաբույժները երեխաների բերանի խոռոչի ուսումնասիրության նպատակով այցելել էին դպրոց՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանի համաձայն:

Փոխտնօրենը նշեց նաև, որ ուսուցիչներից մեկը, ով երեխաներին վատ էր վերաբերվում, աշխատանքից ազատվել է⁸³⁰:

Միաժամանակ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոցում արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- շենքը նորոգման խիստ կարիք ունի. դպրոցի տարածքի ամբողջ մանրահատակը վնասված էր, պատուհանները և դռները՝ հին, ոչ պիտանի հետագա օգտագործման: Դպրոցի բոլոր ննջարանների էլեկտրական լուսավորությունը թերի էր, լամպերից միայն մեկն էր աշխատում:

- Դպրոցում բավականին ցուրտ էր, որոշ դասասենյակներում ջերմաստիճանը համեմատաբար տաք էր՝ պայմանավորված արևային եղանակով և շենքի դիրքով: Ջեռուցումը պետք է միացվեր նոյեմբերի 15-ից (փոխտնօրենի հավաստմամբ առկա էին տեխնիկական խնդիրներ): Ամբողջ անձնակազմը, ի տարբերություն երեխաների, վերարկուներով էր: Դասարաններում սենյակային ջերմաչափեր չկային:

- Ինչպես՝ այս, այնպես էլ նախորդ այցի (12.11.2014թ.) ընթացքում փոխտնօրենի հավաստմամբ հաստատությունը ոչ աշխատանքային օրերին իրականացնում էր երեխաների խնամք, թեև դպրոցը որևէ ֆինանսավորում չի ստանում ոչ երեխաների սննդի, ոչ էլ աշխատակիցների աշխատանքի կամ տնտեսական ծախսերի համար:

- Բուժմասում չկար որոշ դեղորայք, սարքավորումներ և գործիքներ⁸³¹, իսկ

⁸²⁸ Նախորդ այցին (12.11.2014թ.) երեխաները պնդում էին, որ կրթահամալիրում լոգանք հիմնականում չեն ընդունում ջրամատակարարման հետ կապված խնդիրների պատճառով:

⁸²⁹ Նախորդ այցին (12.11.2014թ.) արձանագրվել էր, որ մսի մշակման արտադրամասում չորացվում էր մեծ քանակությամբ կարմիր կծու պղպեղ և կանաչի:

⁸³⁰ Նախորդ այցին (12.11.2014թ.) երեխաները մատնանշում էին դայակ, ով փայտով իրենց ծեծում էր, հայիոյում, մանրահատակի կտորներով հարվածում իրենց գլխին:

⁸³¹ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.III.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոնների և ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային (մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ

առկա դեղորայքը գնվել էր բարեգործների կամ հենց աշխատակիցների միջոցներով: Չէին ստանում նաև աղջիկների համար հիգիենիկ պարագաներ (միջադիրներ)⁸³²: Ըստ աշխատակիցների՝ բացակայում է նաև ֆինանսավորումն ըստ անհրաժեշտության երեխաների դեղորայքային բուժումը կազմակերպելու համար (օրինակ՝ երեխաներից մեկն ունեցել էր մաշկաբանի խորհրդատվության կարիք, ինչը կազմակերպվել էր դժվարությամբ, ընկերական հարաբերությունների շնորհիվ, իսկ նշանակված դեղորայքը գնվել էր աշխատակիցների միջոցներով):

- Աշխատակիցների հավաստմամբ՝ կանոնակարգված չէ բժշկական նեղ մասնագետների խորհրդատվության կազմակերպումն ըստ անհրաժեշտության, քանի որ երեխաները ներգրավված են ՀՀ տարբեր մարզերից և սպասարկվում են իրենց բնակության վայրի բժշկական ամբուլատորիաներում:

- «Տեսորացիկին» քսուկի տարան պատված էր և պիտանելի չէր օգտագործման համար, իսկ «Անեստեզին» դեղամիջոցի ժամկետն անցած էր (ժամկետը լրանում էր 2010թ.). նշված դեղամիջոցներն աշխատակիցը նետեց աղբամանը⁸³³:

- Առաջին բժշկական օգնության ցուցաբերման հաշվառման մատյանում նշվում էին միայն դպրոցում գտնվելու ընթացքում ստացված վնասվածքները, ընդ որում այն դեպքերը, որոնցով միջամտության կարիք է եղել: Իսկ երեխաների՝ տանից վնասվածքներով վերադառնալու դեպքում նշումներ չէին կատարվում:

- Մանկական հաշմանդամություն ունեցող երեխաների հաշվառում չէր վարվում:

- Ինչպես՝ նախորդ, այնպես էլ այս մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ դասամատյանները թերի են լրացվում (ոչ բոլոր դասաժամերն էին լրացված), մատյաններում չէին նշվում բացակաները: Բացականեր չնշելը պատճառաբանվել է «երեխաները դեռ գալու են» հանգամանքով:

- Երեխաներին կրկին դասավանդում էին ԽՍՀՄ շրջանի դասագրքերով՝ պատճառաբանելով, որ ներկայիս դասագրքերն այդքան պատկերավոր և բովանդակային չեն:

- Փոխտնօրենը, ինչպես և նախորդ անգամ, իր մտահոգությունն էր հայտնում

տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 1936-Ն որոշմամբ սահմանված պահանջների խախտում:

⁸³² Չի պահպանվել ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 815-Ն որոշմամբ հաստատված թիվ 8 Հավելվածով սահմանված պահանջները (մեկ տարվա կտրվածքով կանանց հիգիենիկ միջադիրների 12 փաթեթ տրամադրելու կարգը՝ ամսական կտրվածքով 1 փաթեթ):

⁸³³ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ բնապահպանության նախարարի 2008 թվականի հունիսի 6-ի «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 209-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների խախտում:

այն մասին, որ չնայած ունեն դասավանդման ուղեցույցներ, սակայն մեթոդական ձեռնարկները հիմնականում հին են և շատ քիչ: Ուսուցիչներն անցել էին վերապատրաստումներ, սակայն ոչ հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու համար:

Երևանի քաղաքապետարանից տեղեկացվել է, որ Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոցում բարձրացված հարցերը ուսումնասիրվել են և պարզվել է.

- դպրոցի ջեռուցումը միացվել է նոյեմբերի 9-ից և դասասենյակների ջերմային ռեժիմը համապատասխանում է սանիտարական նորմերին:

- Ննջասենյակներում տեղադրված են երկրորդ էլեկտրական լամպերը, և լուսավորությունը կարգավորվել է:

- Սահմանված որոշակի դեղորայքի պակասը բուժմասում լրացված է, սակայն նեղ մասնագիտական բուժապասարկման հետ կապված դժվարությունները մնում են, քանի որ աշակերտները հիմնական բուժապասարկումը ստանում են իրենց բնակավայրերի ամբուլատորիաներում և պոլիկլինիկաներում:

- Մատյանավարության մեջ առկա բացթողումները վերացվել են:

- Գործող կարգի համաձայն բոլոր աշակերտները վկայագրված են:

- Երևանի քաղաքապետարանի կողմից ՀՀ քաղաքաշինության նախարարություն ներկայացված առաջնահերթությամբ վերանորոգման կարիք ունեցող դպրոցների ցանկում թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոցը ընդգրկված է:

- Դպրոցի ուսուցիչները սահմանված կարգով վերապատրաստվել են հանրակրթական ծրագրերի շրջանակներում, իսկ հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու համար վերապատրաստման գործընթացը իրականացվում է «Անմիջական օգնության ընկերակցություն» և «Save the Children» հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ:

- Դպրոցն, ըստ ներկայացվող պահանջագրերի, ստացել և օգտագործում է անհրաժեշտ քանակի դասագրքեր, սակայն հատուկ դպրոցների համար դասագրքեր չեն հրատարակվում, և դպրոցն օգտագործում է նաև իր պահուստային ֆոնդում եղած, օժանդակ դպրոցների համար նախկինում հրատարակված դասագրքերը, մեթոդական ձեռնարկները:

ԲԿԱՄ փորձագետները կրկնակի այց են կատարել նաև ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության տակ գտնվող թվով 5 հատուկ դպրոց (Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց, Երևանի թիվ 12 հատուկ դպրոց, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոց, Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց, Երևանի թիվ 16 հատուկ դպրոց⁸³⁴)՝ Արտահերթ զեկույցում մատնանշված ընթացիկ խնդիրների

⁸³⁴ ՀՀ կրթության և գիտության նախարարին սույն թվականի նոյեմբերի 11-ին ՀՀ մարդու իրավունքների
436

լուծման ուղղությամբ ձեռնարկված (ձեռնարկվող) միջոցառումներին ծանոթանալու նպատակով:

8. ՄՊԻՏԱԿԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԹԻՎ 1 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆՂԱԿ) ԴՊՐՈՑ

Այսպես, ի տարբերություն նախորդ այցի, այս անգամ **Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցում** (այցը կատարվել է 10.09.2015թ.) իրականացված կրկնակի վերազնահատման (վերազնահատումն իրականացվել էր 2014 թվականի նոյեմբերի 30-ին) արդյունքում մի շարք երեխաներ տեղափոխվել էին հանրակրթական դպրոցներ, որոնց մի մասը ստանում է ներառական կրթություն⁸³⁵: Ի տարբերություն նախորդ այցի՝ ննջարաններում տեղադրվել էին անձնական պահարաններ, որտեղ պահվում էին երեխաների հիգիենայի պարագաները՝ ատամի խոզանակը, մածուկը (որը ժամկետի մեջ էր⁸³⁶), օձառը և այլն: Արդեն լուծվել էր գազաֆիկացման խնդիրը, ջեռուցման համակարգն աշխատում էր և ննջասենյակներում առկա էին ջերմաչափեր: Բուժմասում, ի տարբերություն նախորդ այցի, վարվում էին ամենօրյա ընդունելության և ինֆեկցիոն հիվանդների հաշվառման մատյաններ: Սենյակներից մեկն առանձնացվել էր սոցաշխատողի և հոգեբանի համար որպես աշխատասենյակ: Դպրոցն ունի նաև արհեստանոց, որտեղ երեխաները մասնակցում էին տարբեր արհեստագործական դասընթացների: Գործում էին նաև երգի և պարի խմբակներ: Ի տարբերություն նախորդ այցի՝ կահավորվել էր խաղասենյակը, իսկ դասասենյակներից մահճակալները հանվել էին: Ի տարբերություն նախորդ այցի՝ ձեռնարկվել էին անհրաժեշտ միջոցներ դպրոցի տարածքում մկների վերացման համար: Սանհանգույցները վերանորոգվել էին, զուգարաններում տեղադրվել էին նոր զուգարանակոնքեր:

Միաժամանակ Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոցում արձանագրվել են հետևյալ խնդիրները⁸³⁷.

պաշտպանի կողմից հասցեագրվել է գրություն՝ Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի փոխտնօրենի կողմից ԲԿԱՄ փորձագետներին խոչընդոտելու վերաբերյալ: Նշվածի վերաբերյալ տեղեկացվել է, որ Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի տնօրենին հանձնարարվել է առաջնորդվել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետերով և ապահովել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների անարգել մուտքը դպրոց և արդյունքների մասին ներկայացնել հաշվետվություն: Մտահոգված լինելով ստեղծված խոչընդոտների իրական պատճառներով, հատկապես, որ նախորդ այցի (2014 թվականի դեկտեմբեր) ընթացքում արձանագրվել էին լուրջ խնդիրներ՝ 2015 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարականով ԲԿԱՄ փորձագետները կրկին այց են կատարել Երևանի թիվ 16 հատուկ դպրոց:

⁸³⁵ Նախորդ այցի (31.10.2014թ.) ընթացքում արձանագրվել էր, որ դպրոցում սովորում են նաև հատուկ կարիքներ չունեցող երեխաներ:

⁸³⁶ Նախորդ այցի (31.10.2014թ.) ընթացքում հայտնաբերվել էր ժամկետանց ատամի մածուկ:

⁸³⁷ Խնդիրների վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարության ձեռնարկված միջոցառումները՝ տես էջ --

- ննջարանները, ինչպես և նախորդ այցին, մաքուր չէին, միջանցքներում չէր վերացվել գարշահոտությունը, որը հիմնականում պայմանավորված էր կոյուղու ոչ նորմալ ջրահեռացման հետ (այս խնդիրն առկա էր նաև նախորդ այցին):

- Բուժմասում որոշ դեղորայք չկար (հակաշոկային՝ «Դեքսամետազոն», հակաալերգիկ, «Կոֆեին» դեղատեսակները)⁸³⁸, իսկ առկա դեղորայքը գնվել էր բարեգործների միջոցով:

- Դեղապահարանում հայտնաբերվել էին ժամկետանց ներարկիչներ՝ առանց ասեղների:

- Ժամկետանց դեղորայքի ոչնչացման մեխանիզմները հստակեցված չէին և դրանք խոտանվում էին կոտրելու և աղբը նետելու միջոցով⁸³⁹:

- Ճաշարանում փակցված չէր ճաշացանկը: Խոհանոցում այն նույնպես չկար, իսկ խոհարարի օգնականը չէր կարողանում բացատրել, թե ինչի հիման վրա է պատրաստել ոլոռով ապուրը: Բժիշկը կամ բուժքույրը ճաշացանկի կազմման և վերահսկողության գործընթացին մասնակցություն չունեին և որևէ վերահսկողություն չէին իրականացնում նաև խոհանոցի սանիտարական վիճակի կամ առողջ սննդով ապահովելու ուղղությամբ⁸⁴⁰:

- ԲԿԱՄ փորձագետներին երեխաները զրույցի ընթացքում հայտնում էին, որ գրեթե ամեն օր ոլոռ են ուտում, իսկ մսամթերքի և կաթնամթերքի մասին ընդհանրապես չէին նշում: Ըստ երեխաների՝ պանիր տրամադրվել էր նախորդ տարի⁸⁴¹:

- Դպրոցի միջանցքում տեղադրված էր պահարան, որի վրա դրված էր երեք բաժակ, իսկ կողքին՝ աթոռին, ջրով լի տարա (նախկինում, հավանաբար, ներկի տարա է եղել)՝ առանց կափարիչի. երեխաները ջուր խմում էին այդ տարայից:

- Ինչպես նախորդ երեք այցերին, այնպես էլ այս այցին նույնպես արձանագրվել է, որ կերակրատեսակների նմուշները չէին պահպանվում⁸⁴²:

⁸³⁸ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.III.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոնների խախտում:

⁸³⁹ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ բնապահպանության նախարարի 2008 թվականի հունիսի 6-ի «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 209-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների խախտում:

⁸⁴⁰ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի 52-րդ կետի պահանջների խախտում:

⁸⁴¹ Խախտվել է ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 815-Ն որոշմամբ հաստատված թիվ 13 Հավելվածով սահմանված՝ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխաների սննդամթերքի տեսականու և քանակի (մեկ սովորողի հաշվարկով) պահանջը:

⁸⁴² «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը

- Մննդի համար պահեստ առանձնացված չէր, ամբողջ մթերքը պահվում էր խոհանոցի տարածքում, իսկ հացի պահարանում դրված էին նաև աշխատակիցների անձնական իրերը (պայուսակ, օժանելիք, հագուստ, ինչպես նաև՝ կեղտոտ սպասք):

- Լվացված սպասքի վրա ճանճեր էին վիստում, չէին պահպանվում սանիտարական կանոնները:

- Դպրոցը մշտական ջրամատակարարում չունի: Երեխաները նշում էին, որ դպրոցում 2015-2016 թթ. ուսումնական տարվա ընթացքում լոգանք չեն ընդունել, ինչն ակնհայտ էր նաև բաղնիքում առկա սարդոստայններից:

- Տաք ջրի բացակայության պատճառով գիշերող երեխաները ոտքերը լվանալու հնարավորություն չունեին, չնայած որ բաղնիքում առկա էր ջրատաքացնող կաթսա: Փոխտնօրենի հավաստմամբ, ըստ անհրաժեշտության, երեխաների ոտքերը լվանալու համար տաքացվում է ջուր, սակայն երեխաներն առանձնագրույցների ընթացքում նման բան չէին նշում:

- Երեխաներն առանձնագրույցների ընթացքում մատնանշում էին ուսուցիչներից մեկին, ով ծեծում է իրենց, երբ «խելոք չեն մնում»:

Չնայած վերը նշված թերությունների՝ հարկ է նշել, որ երբ հաջորդ օրը ԲԿԱՄ աշխատակիցները կրկին այցելեցին դպրոց, վերջիններս արձանագրեցին, որ կատարվում էին աշխատանքներ նախորդ օրվա մատնանշված որոշ թերությունների շտկման ուղղությամբ (խոհանոցի, ննջարանների մաքրման աշխատանքներ և այլն):

9. ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 12 ՀՍՏՈՒԿ ԴՊՐՈՑ

Երևանի թիվ 12 հասուկ դպրոցում (այցը կատարվել է 05.11.2015թ.) մի շարք դրական փոփոխություններ: Դպրոցում գործում էին ռուսաց լեզվի և պարի խմբակներ: Դպրոցում երեխաների համար կազմակերպվում էին էքսկուրսիաներ, այցեր գազանանոց, կրկես: Այս այցի ընթացքում, ի տարբերություն նախորդ այցի, արձանագրվել է, որ դպրոցի տարածքում իրականացվել էին մի շարք վերանորոգման աշխատանքներ: Ըստ տնօրենի՝ վերանորոգման աշխատանքներն իրականացվել էին դպրոցի տնտեսած գումարներով: Տնօրենի նախաձեռնությամբ և միջոցներով դպրոցի տարբեր մասերում, այդ թվում՝ խոհանոցում, տեղադրվել էին տեսախցիկներ, որոնք հնարավորություն էին տալիս անընդհատ վերահսկել դպրոցի տարածքում կատարվող իրադարձությունները: Ննջարանները, ի տարբերություն նախորդ այցի⁸⁴³, մաքուր էին: Վերացել էր տհաճ հոտը, ննջարաններում մահճակալների քանակը նվազեցվել էր, սակայն գերբնակեցման խնդիրը չէր լուծվել: Ննջարաններում էլեկտրական լամպերը փոխվել էին, անկողինները հարդարված էին, երեխաների մահճակալների կողքին առկա էին անձնական կողապահարաններ: Նախորդ այցի ժամանակ արձանագրվել էր, որ թվով 2 ննջարաններ վերանորոգված չէին, իսկ այս

հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի խախտում:

⁸⁴³ Նախորդ այցին (19.12.2014թ.) արձանագրվել էր ննջարանների հակասանիտարական վիճակ, տհաճ հոտ (կեղտոտ գուլպաների):

այցին արդեն նշված ննջարանները վերանորոգվել և պատշաճ կահավորվել էին: Զուգարանում լվացարանի տակ առկա քիմիական մաքրող նյութերը վերացվել էին, զուգարանում առկա էր օճառ և զուգարանի թուղթ: Ննջարանային երրորդ հարկի զուգարանները վերանորոգվել և շահագործվում էին⁸⁴⁴: Ճաշարանը վերանորոգվել էր⁸⁴⁵, մաքուր էր, սանիտարական վիճակը՝ բավարար: Նախասրահում լվացարանների կողքին կախված էին սրբիչներ, կային նաև էլեկտրական չորացուցիչներ, օճառներ: Պահեստում առկա էր սննդի բազմազանություն՝ կաթնամթերք, մսամթերքի տեսականի, բանջարեղեն, միրգ, հյութեր, ձավարեղեն, ձեթ, յուղ և այլն: Կաթը ստանում էին շաբաթը երկու անգամ, կաթնաշոռն ու թթվասերը՝ 1 անգամ: Օդափոխության համակարգն աշխատում էր: Դասասեղանները դասավորված էին պատշաճ⁸⁴⁶:

Դպրոցի բժշկի հավաստմամբ՝ ընթացիկ տարում դպրոց էին այցելել համալսարանական թիվ 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկայի բժիշկներ, ստուգել 1-ին և 7-րդ դասարանի երեխաների ատամները, որոնցից մի քանիսին տրվել են ուղեգրեր իրենց պոլիկլինիկայում ատամնաբուժական օգնություն ստանալու համար:

Ի տարբերություն նախորդ այցի՝ երեխաներն այս անգամ գանգատներ չէին ներկայացնում իրենց նկատմամբ վատ վերաբերմունքի մասին:

Միաժամանակ ԲԿԱՄ փորձագետների կողմից նշված հատուկ հանրակրթական դպրոցում արձանագրվել են մի շարք խնդիրներ⁸⁴⁷.

- երեխաների կոշիկն ու հագուստը հայթայթում են ընկերների և ծանոթների միջոցով:

- Հաստատությունն ապահովված չէ տրանսպորտային միջոցով:

- Դասագրքերը չէին թարմացվել, օգտվում էին նույն ԽՍՀՄ շրջանի դասագրքերից: Ըստ տնօրենի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից տրամադրվել են նաև նոր դասագրքեր, սակայն դրանք նախատեսված են հանրակրթական դպրոցներում դասավանդման համար:

- Ուսուցիչներն անցնում էին ընդհանուր հանրակրթական դպրոցների վերապատրաստում, սակայն հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար ունեին վերապատրաստման կարիք:

- Այս այցի ընթացքում զուգարաններում կրկին արձանագրվել է ցածր

⁸⁴⁴ Նախորդ այցին (19.12.2014թ.) զուգարանում լվացարանի տակ առկա էին քիմիական մաքրող նյութեր, որոնք հասանելի էին երեխաներին: Ննջարանային երրորդ հարկի զուգարանները չէին աշխատում, երեխաներն օգտվում էին երկրորդ հարկում տեղակայված զուգարանից:

⁸⁴⁵ Նախորդ այցին (19.12.2014թ.) ճաշարանն ուներ վերանորոգման կարիք (պատերին առկա էին բազմաթիվ ձեղքեր, պատերի ծեփը թափվում էր):

⁸⁴⁶ Նախորդ այցին (19.12.2014թ.) արձանագրվել էր, որ դասասենյակներից մեկում տեղադրված էր 5 գրասեղան, որոնցից մեկը տեղադրված էր ուղղահայաց գրատախտակին, և աշակերտը ստիպված էր թեքվելով նայել գրատախտակին:

⁸⁴⁷ Խնդիրների վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարության ձեռնարկած միջոցառումները՝ տես էջ --

ջերմաստիճան⁸⁴⁸:

- Դպրոցում հայտնաբերված ոջլակրության մասին շտապ հաղորդում չէր ներկայացվել, ինչպես դա նախատեսված է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի դեկտեմբերի 17-ի «Վարակիչ հիվանդությունների «իրական ժամանակում» էլեկտրոնային համաճարակաբանական հսկողություն սանիտարահամաճարակային նորմերի և կանոնների հաստատման մասին» թիվ 35-Ն հրամանով սահմանված նորմերով և կանոններով: Ոջլակրության դեպքում օգտագործում են շամպուններ, որոնք, ըստ տնօրենի, արդյունավետ չեն կամ երեխաների մազերը մշակվում են քացախով:

- Մի քանի բժշկական քարտերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ օրինակ՝ երեխան նյարդաբանի կողմից գնահատվել էր առողջ, չնայած, որ գնահատման կենտրոնն արձանագրել էր թեթև մտավոր հետամնացություն և վկայագրվել էր հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների դպրոց:

- Բժիշկն անտեղյակ էր դպրոցում սովորող մանկական հաշմանդամություն ունեցող սաներից:

- Դպրոցի և երեխաների բնակության վայրի ամբուլատոր բժշկական հաստատության միջև կապը մատչելի չէր, որի հետևանքով երեխաների բժշկական օգնությունը պատշաճ չէր իրականացվում:

- Դասամատյանները, ինչպես և նախորդ անգամ, լրացվում էին դասերից հետո: Որոշ առարկաների թեմաներն առհասարակ լրացված չէին մատյաններում (օրինակ՝ նոյեմբերի 4-ին և 5-ին մայրենի լեզվի դասերի թեմաները լրացված չէին), բացակասները հիմնականում չէին նշվում:

10. ԵՐԵՎԱՆԻ ՀԵՆԱՇԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽԱՒՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԹԻՎ 17 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ

Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների թիվ 17 հատուկ դպրոցն (այցը կատարվել է 09.11.2015թ.) ունի երկու «Գազել» մակնիշի տրանսպորտային միջոց, հարմարեցված անվասայլակով տեղաշարժվող երեխաների երթևեկությունը կազմակերպելու համար: Երեխաների ձմեռային կոշիկները և բաճկոններն ամեն տարի գնվում է դպրոցի կողմից, իսկ այլ հագուստը երեխաներին տրամադրվում է հիմնականում որպես նվեր՝ Ամանորին: Ըստ տնօրենի՝ 2015 թվականին ավելացել է թվով 2 հատուկ մանկավարժ: Այցի պահին վերանորոգման աշխատանքներ էին ընթանում: Հիմնովին վերանորոգվում էր նոր մասնաշենքը, որտեղ նախատեսում էին կառուցել խաղասենյակներ և հանգստի սենյակներ, լոգարաններ և սանհանգույցներ, ինչպես նաև՝ թեքահարթակներ: Վերանորոգվում

⁸⁴⁸ ՀՀ առողջապահության նախարարի 2002թ. փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 82 հրամանով հաստատված թիվ 2.III.4.2... սանիտարական կանոնների 36-րդ կետի համաձայն՝ զուգարաններում անհրաժեշտ է պահպանել +17 - +21 C աստիճան տաքություն:

Էին նաև ֆիզկուլտուրայի դահլիճը և հանդիսասրահը: Դպրոցի բակային մասում Նոր-Նորք վարչական շրջանի աջակցությամբ կառուցվել էր խաղահրապարակ և տեղադրվել՝ սղարան: Շենքի մուտքը հարմարեցված էր թեքահարթակներով: Ննջարաններն այցի պահին մաքրվում էին, անկողինները մաքուր էին⁸⁴⁹, տեղադրվել էին հագուստի անհատական պահարաններ: Ի տարբերություն նախորդ այցի՝ ննջարաններում էլեկտրական վարդակները վերանորոգվել էին: Պատրաստված կերակրատեսակների նմուշները պահպանվում էին 48 ժամ: Արձանագրվել է նաև, որ երեխաների մոտ լարվածություն չկար, մթնոլորտը հանգիստ էր:

Միաժամանակ, հատուկ հանրակրթական դպրոցում արձանագրվել են հետևյալ խնդիրները⁸⁵⁰.

- դպրոցում այցի պահին շատ ցուրտ էր: Դասասենյակներում համեմատաբար տաք էր, քանի որ միացված էին էլեկտրական տաքացուցիչներ, սակայն ննջարաններում ցուրտ էր⁸⁵¹: Ամբողջ անձնակազմը, ինչպես նաև երեխաները վերարկուներով էին: Ըստ տնօրենի՝ ջեռուցումը պետք է միացվեր մոտակա օրերին:

- Բոլոր միջանցքների մանրահատակը վնասված էր, ինչը դժվարացնում էր անվասայլակով երեխաների տեղաշարժը, ննջարանները բնակեցված էին խիտ, մահճակալների դասավորվածությունն անհարմար էր անվասայլակով երեխաների համար:

- Ինչպես՝ նախորդ, այնպես էլ այս այցին արձանագրվել է, որ զուգարանները վերանորոգման կարիք ունեին, գտնվում էին հակասանիտարական վիճակում, մի քանիսը դուռ չունեին, զուգարանի թուղթ չկար:

- Նախորդ այցին (16.12.2014թ.) ննջարաններում հայտնաբերվել էին ժամկետանց ատամի մածուկներ (2007թ. և 2013թ.), որոնք, ըստ աշխատակիցների, տրամադրել էին բարեգործական կազմակերպությունները: Միաժամանակ պահեստում կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել էր, որ այնտեղ առկա բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրված ատամի մածուկների պիտանելիության ժամկետները մինչև 2016 թվականն էր: Այս այցի ընթացքում ննջասենյակներում ատամի մածուկ առհասարակ չկար (աշխատակիցների պարզաբանմամբ՝ երեխաները մածուկը պահում են իրենց պայուսակներում):

- Անկողիններին առկա սրբիչները կեղտոտ էին (աշխատակիցներն արդարանում էին՝ նշելով, որ այցի օրը սրբիչները պետք է փոխվեին):

- Երեխաների հետ զրույցում պարզվել է նաև, որ դպրոցում չեն լողանում,

⁸⁴⁹ Նախորդ այցին (16.12.2014թ.) արձանագրվել էր ննջարանների և անկողինների հակասանիտարական և կեղտոտ վիճակ, ննջարանների գերբնակեցում:

⁸⁵⁰ Խնդիրների վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարության ձեռնարկած միջոցառումները՝ տես էջ --

⁸⁵¹ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.ՈՒ.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոնների 36-րդ կետի համաձայն՝ առանձնասենյակներում անհրաժեշտ է պահպանել +17 - +20 C աստիճան տաքություն:

սակայն աշխատակիցների հավաստմամբ՝ դպրոցում լոգանքը հիմնականում կազմակերպվում է ըստ անհրաժեշտության:

- Ըստ ճաշացանկերի՝ միսն ամեն օր նախատեսված էր, սակայն այցի օրը տրամադրվող սննդում միս չկար:

- Երեխաների ջուր խմելու համար ճաշարանի տարածքում կրկին դրված էր ջրով լի դույլ և 2 բաժակ (չնայած խոհանոցում կար հոսող ջուր):

- Բժշկական քարտերում երեխաներին դեղորայքի տրամադրումը ոչ բոլոր դեպքերում էր հիմնավորված կամ առկա չէր որևէ տեղեկանք: Երեխաներից մեկի անհատական պահարանին դրված էր «Ֆիզոպտին» դեղը, որի օգտագործման հիմնավորումը որևէ փաստաթղթում նշված չէր (բժիշկը հիմք էր ընդունել ծնողի բանավոր խնդրանքը):

- Հայտնաբերվել է ժամկետանց դեղորայք՝ «Ադրենալին», «Կոֆեին», «Ռեվանոլ», «Սպազմալգոն», «Ֆուրասեմիդ»:

- Առկա էր առաջին օգնության դեղարկղիկ, որը տրամադրվել էր «Save the children» կազմակերպության կողմից, սակայն աշխատակիցների հավաստմամբ՝ կազմակերպության կողմից ցուցվել է դեղարկղի պարունակությունից չօգտվել:

- Անձնական գործերի ուսումնասիրությունից պարզ էր դարձել, որ դպրոցում սովորում էին ոչ միայն մտավոր և հենաշարժական խնդիրներ ունեցող, այլ նաև խոսքի խանգարում ունեցող կամ հոգեբանական զարգացման խնդիրներ ունեցող երեխաներ: Պետք է նշել, որ դպրոցի կանոնադրությամբ նախատեսվում է իրականացնել միայն մտավոր և հենաշարժական խնդիրներ ունեցող երեխաների ուսուցում:

- 3-րդ դասարանի աշակերտները բավականին աշխույժ էին և վարժ արտասանում էին, սակայն հետագայում անձնական գործերի ուսումնասիրությունից պարզվել էր, որ օրինակ, աշակերտներից մեկի (ով շատ վարժ արտասանում էր) անձնական գործում առկա էր խոսքի ծանր խանգարումով վկայագիր:

11. ԵՐԵՎԱՆԻ ՄՏԱՎՈՐ ԹԵՐՉԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՄԱՆԵՐԻ ԹԻՎ 11 ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ

Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոցն (այցը կատարվել է 12.11.2015թ.) ուներ հանդերձարան, որտեղ առանձին պահարաններում պահվում էր յուրաքանչյուր երեխայի հագուստը: Հագուստ բերում էին ծնողները կամ տրամադրվում էր դպրոցի կողմից (դպրոցին տրամադրում են բարեգործները): Դպրոցում ծնողի հետ տեսակցությունների կազմակերպման համար առանձնացված էր կահավորված սենյակ: Ըստ աշխատակցի՝ ծնողի կողմից սնունդ բերելու դեպքում տեսակցությունը կազմակերպվում էր ճաշարանում: Դպրոցի տարածքում, այդ թվում՝ որոշ դասապատրաստման սենյակներում տեղադրվել էին տեսախցիկներ: Ի տարբերություն նախորդ այցի (16.12.2014թ.)՝ այս անգամ ջեռուցումը միացված էր,

դպրոցում տաք էր: Դպրոցն ունի առանձին կաթսայատուն: Պահեստում վերացվել էր թթուն (պահեստապետը նշեց, որ այլևս «թթու չեն դնում»): Այցի պահին դպրոց էին այցելել տարածքային հիգիենիկ հակահամաճարակային կենտրոնից և կատարում էին կանխարգելիչ հետազոտություններ և պատվաստումներ: Ատամնաբուժական սպասարկումը կազմակերպվում էր բարեգործական ատամնաբուժական կենտրոնում (Հովարդ Կարագյոզյանի անվան ատամնաբուժարան), իսկ 2015 թվականին Առողջապահության նախարարի հրամանով դպրոց են այցելել նաև «Նորադենտ» ատամնաբուժական կլինիկայից և կատարել նախնական զննություններ⁸⁵²: Մի քանի երեխաների ատամներ վերոնշյալ կլինիկայում արդեն իսկ բուժվել էին: Ի տարբերություն նախորդ այցի՝ այս անգամ բուժկետի մեկուսարանը մաքուր էր: Պահեստը հագեցված էր անհրաժեշտ ապրանքներով. կենցաղային ապրանքներ, գրենական պիտույքներ, սպիտակեղեն, վերմակներ, հագուստ, կոշիկներ, տակդիրներ և այլն:

Հարկ է նշել, որ հատուկ հանրակրթական դպրոցում, այնուամենայնիվ, արձանագրվել են հետևյալ խնդիրները⁸⁵³.

- շենքն ունի վերանորոգման կարիք:

- Ննջարաններում առկա էր միզահոտ, համեմատաբար ցուրտ էր, քանի որ պատուհաններն օդափոխելու և տհաճ հոտը մեղմելու նպատակով բաց էին: Ննջարաններում գրեթե բոլոր անկողինները հարդարված չէին, քանի որ ներքնակները մեզի հետևանքով խոնավ էին: Որոշ անկողիններում առկա էին մոմլաթներ, որոնք փաստորեն մեզի արտահոսքը չէին կանխում: Գիշերվա ընթացքում մի քանի անգամ միզող երեխաներին արթնացնում և տանում են միզելու: Ըստ տնօրենի՝ տակդիրներ չեն օգտագործում, քանի որ դրանք վնասակար են: ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են նաև, որ գիշերամիզող երեխաներին վերմակների փոխարեն տրամադրում են ծածկոցներ, քանի որ թրջված վերմակն, ըստ աշխատակիցների, հնարավոր չէ լվանալ և չորացնել:

- Յուրաքանչյուր ննջասենյակում տեղադրված էր ընդամենը 1 կողապահարան,

⁸⁵² Նախորդ այցի (16.12.2014թ.) ժամանակ արձանագրվել էր, որ հաստատության կողմից միջոցներ չեն ձեռնարկվում ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 11-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բնակչությանը ցուցաբերվող ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման տրամադրման չափորոշիչը, «երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագրի շրջանակներում համապատասխան տարիքային խմբի երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգը և պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անվճար ստոմատոլոգիական խորհրդատվության և/կամ բուժման ուղեգրի ձևը հաստատելու մասին» թիվ 45-Ն հրամանով սահմանված կարգի երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում անվճար ստոմատոլոգիական օգնության և սպասարկման պահանջներից օգտվելու համար, որով նախատեսվում է նաև սոցիալապես անապահով և հատուկ (առանձին) խմբերում ընդգրկված մինչև 18 տարեկան երեխաների ստոմատոլոգիական բժշկական օգնության կազմակերպումը:

⁸⁵³ Խնդիրների վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարության ձեռնարկած միջոցառումները՝ տես էջ --

նույնիսկ այն դեպքում, երբ ննջարանը նախատեսված էր 4 և ավելի երեխաների համար:

- Ջուգարաններում զուգարանի թուղթ չկար:

- Երրորդ հարկի զուգարաններն ասիական տիպի են և շատ երեխաներ չեն կարողանում օգտվել, այդ իսկ պատճառով հարմարեցված են աթոռներով:

- Դասասենյակներից մեկում սեղանների դասավորվածության պատճառով երեխաների մի մասը գրատախտակը չէր տեսնում:

- Կերակրատեսակների նմուշները պահպանվում էին 48 ժամ, սակայն ոչ սահմանված չափաքանակով⁸⁵⁴:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունից հավաստիացրել են, որ Նախարարության 30.11.2015 թվականի թիվ 04/07.1/14291-15 գրությամբ Սպիտակի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N1 հատուկ (օժանդակ), Երևանի N12 հատուկ, Երևանի հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների N17 հատուկ, Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N11 հատուկ (օժանդակ) դպրոցների տնօրեններին հանձնարարական է տրվել ուսումնասիրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությամբ բարձրացված հարցերը և ձեռնարկել միջոցառումներ դրանց լուծման համար:

Հանձնարարվել է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում պատշաճ ընթացիկ սանիտարական վիճակ ապահովելու և երեխաների սննդի կազմակերպումն իրականացնելու համար առաջնորդվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 815-Ն որոշման Հավելված 13-ի, 2011թ. հունվարի 20-ի N 34-Ն որոշմամբ հաստատված «Սննդամթերքի հիգիենային ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվական փետրվարի 11-ի N 82 և 2013 թվականի նոյեմբերի 1-ի N 70-Ն հրամանների պահանջներով:

⁸⁵⁴ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի համաձայն չափաբաժնով պատրաստված կերակրատեսակները նմուշառվում են ամբողջ ծավալով, իսկ աղցանները, առաջին, երրորդ կերակրատեսակները և ճաշալրացները 100 գրամից ոչ պակաս:

12. ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 16 ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ

Երևանի թիվ 16 հատուկ դպրոցում, ի տարբերություն նախորդ այցի, այս անգամ չի հայտնաբերվել ժամկետանց դեղորայք, բուժմասում կար անհրաժեշտ դեղորայք, սարքավորումներ և գործիքներ: Խոհանոցի համար ձեռք էր բերվել մթերքների կտրատման համար տախտակներ և դանակներ, առանձնացվել էին յուրաքանչյուր մթերքի մշակման առանձին սեղաններ:

Այս այցի ընթացքում ևս դպրոցում արձանագրվել են մտահոգիչ մի շարք խնդիրներ.

- դպրոցը հիմնովին վերանորոգման կարիք ունի, մասնավորապես, դպրոցի տանիքը վթարային է, տեղ-տեղ առաստաղների և պատերի վրա կան ճեղքեր և թափված ձեփոններ, դպրոցի մանրահատակը որոշ տեղերում վնասված էր, որոշ պատուհաններ չունեին ապակիներ, դրանց փոխարինում էր ստվարաթուղթը և պոլիէթիլենը: Մտահոգիչ էր այն հանգամանքը, որ նշված խնդիրներն արձանագրվել էին նաև նախորդ այցի ժամանակ (ՀՀ կրթության և գիտության նախարարությունից տեղեկացվել էր, որ Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի տանիքի և շենքի հիմնանորոգման համար նախագծանախահաշվային փաստաթղթեր մշակելու նպատակով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով գումար է հատկացվել):

- Թե միջանցքներում, թե ննջարաններում լուսավորությունը շատ թույլ էր: Որոշ ննջարաններում և խմբակների դասարաններում չկային էլեկտրական լամպեր, իսկ միջանցքներում դրանց թիվը քիչ էր, ինչի պատճառով լիարժեք լուսավորություն չէր ապահովվում, և դա այն դեպքում, որ դպրոցը նախատեսված է տեսողության խանգարումով երեխաների համար: Հարկ է նշել, որ այս խնդիրը կար նաև անցյալ տարի: Նախորդ և 2015 թվականի ընթացքում կատարած այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ դպրոցի ննջասենյակներում վարդակները բաց էին (աշխատակիցները հավաստիացնում էին, որ դրանք հոսանքազրկված են):

- Ինչպես և նախորդ տարիներին, 2015 թվականին ևս սպորտդահլիճում ցուրտ էր⁸⁵⁵, երեխաները մարզական դահլիճում բաճկոններով էին և հենց այդպես էլ մասնակցում էին դասին, վազում և կատարում այլ ֆիզիկական վարժություններ:

- Չէր լուծվել երեխաների լոգանքի խնդիրը, քանի որ դպրոցը չունի բաղնիք, ինչի պատճառով դպրոցում լոգանք հիմնականում չի կազմակերպվում, ինչը հաստատում էին նաև երեխաները, նշում էին, որ լավագույն դեպքում լվանում են միայն ոտքերը:

⁸⁵⁵ Չէր պահպանվում ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.III.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոնների 36-րդ կետով սահմանված ջերմաստիճանը, որի համաձայն մարզական դահլիճում անհրաժեշտ է պահպանել +15 - +17 C աստիճան տաքություն:

- Ինչպես և նախորդ այցին, այս անգամ ևս ոչ պատշաճ կարգով էին պահպանվում կերակրատեսակների նմուշները, պահվում էին միայն ճաշին տրամադրվող կերակրատեսակների նմուշները (նախաճաշին և ընթրիքին տրամադրվող կերակրատեսակների նմուշները չեն պահպանվում), սակայն նշված չէր պահման օրը⁸⁵⁶:

- Մտահոգիչ էր, որ օգտագործվող սպասքում եղել են ճաքերով և կոտրված եզրերով ափսեներ⁸⁵⁷:

- Այս այցին ԲԿԱՄ փորձագետները կրկին արձանագրել են, որ մատյաններում երեխաների հաճախելիության գրառումները պատշաճ չէին արվում:

- Ինչպես և նախորդ տարի, 2015 թվականին ևս բժշկական քարտերում ոչ միշտ էր լրացվում կամ հիմնավորվում դեղորայքի տրամադրումը:

Ինչպես արդեն նշվեց, դպրոցը նախատեսված է տեսողության խանգարումներ ունեցող երեխաների կրթությունն ապահովելու համար, սակայն տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար հատուկ դասագրքեր չկային, ավելին, ԲԿԱՄ փորձագետներն այցելության ընթացքում արձանագրել են, որ դպրոցում որևէ երեխա օպտիկական ակնոց չէր կրում, նույնիսկ՝ դասաժամերին: Ընդ որում, գրատախտակից մոտ 4 (չորս) մետր հեռավորության վրա նստած երեխաներին ԲԿԱՄ փորձագետները խնդրել են կարդալ գրատախտակին գրված մանր գրառումը, ինչը երեխաներն առանց դժվարանալու կարդացին:

Երևանի թիվ 16 դպրոցում արձանագրված խնդիրների վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից տեղեկացվել է, որ դպրոցում ստեղծված են բոլոր հնարավոր պայմանները ուսումնական գործընթացը կազմակերպելու համար: Դպրոցում գործում են աշխարհագրության, ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, համակարգչային կաբինետներ, որոնք ապահովված են մեթոդական նյութերով, սարքավորումներով և դպրոցական գույքով: Ճաշարանի սրահը վերանորոգված է, կահավորված և ապահովված նոր սպասքով: Դպրոցի ննջարանային հատվածը կահավորված է հանդերձապահարանով, մահճակալներով, ապահովված է նոր սպիտակեղենով, սանհիգիենիկ պարագաներով: Երրորդ հարկի մի հատվածը չի օգտագործվում, բացառությամբ մեկ բարվոք սենյակի, որն

⁸⁵⁶ Խախտվել է ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 32-Ն հրամանի պահանջները, որի համաձայն՝ չափաբաժնով պատրաստված կերակրատեսակները նմուշառվում են ամբողջ ծավալով, իսկ աղցանները, առաջին, երրորդ կերակրատեսակները և ճաշալրացները 100 գրամից ոչ պակաս: Վերցված նմուշները պահպանվում են 48 ժամից ոչ պակաս (չհաշված հանգստյան և տոն օրերը) հատուկ սառնարանում կամ սառնարանի հատուկ առանձնացված տեղում 4±20 C ջերմաստիճանի պայմաններում՝ նշելով նմուշառման ժամը, օրը, ամիսը (57, 58 կետեր):

⁸⁵⁷ ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 20-ի «Մանկավարժների հիգիենային ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 34 որոշմամբ հաստատված կանոնակարգի 9.9-րդ և 39.2-րդ կետերի խախտում:

օգտագործվում է որպես ռիթմիկայի պարապմունքների սենյակ: Զօգտագործվող տարածքում լուսամուտները պատված են պոլիէթիլենի թաղանթով պատշաճ ջերմաստիճան ապահովելու համար:

Դպրոցի համար վերջին տարիներին կառուցվել է կաթսայատուն, գործում է ջեռուցման անհատական համակարգ: Սպորտդահլիճը նույնպես ջեռուցվում է, գործում է 6 տաքացուցիչ, ննջարանային հատվածում առկա է հիգիենայի սենյակ, որը ապահովված է տաք և սառը ջրով: Բուժկաբինետը ապահովված է անհրաժեշտ պարագաներով և դեղորայքով: Դեղորայքի տրամադրումը բուժքրոջ կողմից գրանցվում է համապատասխան բաշխման մատյանում:

Դպրոցում սովորում են թույլ տեսողությամբ երեխաներ, որոնց ուսումնառությունը կազմակերպելու համար բրայյան տետրերի կարիք չկա: Դպրոցն ապահովված է բոլոր անհրաժեշտ դասագրքերով:

Ինչ վերաբերում է դպրոցի շենքային պայմաններին, ապա տեղեկացվել է, որ դեռևս 2012 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը դպրոցի հիմնանորոգման հարցով դիմել է ՀՀ կառավարության: Քննարկման արդյունքում Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն ընդգրկվել են ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ին հավանության արժանացած «Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» թիվ 28 արձանագրային որոշման ցանկերում և ՀՀ 2015-2017 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտերում: Նախարարության առաջարկությամբ դեռևս 2015թ. ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից սահմանված կարգով մշակվել և փորձաքննության է ենթարկվել դպրոցի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը:

Միաժամանակ տեղեկացվել է, որ դեռևս 05.08.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված 2016 թվականի պետական բյուջեի հայտում Նախարարության կողմից ներկայացվել է Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի հիմնանորոգման հայտը, սակայն բյուջետային միջոցների սղության պատճառով չի ընդունվել:

Դրանից հետո ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 20.11.2015թ. թիվ 01/12.2/13977-15 գրությամբ դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմ՝ Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելու համար և խնդրել է հանձնարարել համապատասխան պետական մարմիններին անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու համար, որն ընթացքի մեջ է:

Այսպիսով՝ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը նշել է, որ իր իրավասության շրջանակներում ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցառումները Երևանի թիվ 16 հատուկ դպրոցի վերանորոգման խնդիրը լուծելու համար:

Բացի այդ, Երևանի թիվ 16 դպրոցում արձանագրված խնդիրների վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից հայտնվել է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի փորձագետների այցից հետո միջանցքներում և

ննջարաններում լուսավորությունն ուժեղացնելու համար տեղադրվել են լրացուցիչ լամպեր, բաց հոսանքալարերը մեկուսացվել են:

Երեխաների համար լոզանք չի կազմակերպվում, երեխաները շաբաթ և կիրակի օրերին գիշերում են տանը: Մակայն ամենօրյա հիգիենա ապահովելու համար ննջարանային հատվածում գործում է հիգիենայի սենյակ, որը ապահովված է տաք և սառը ջրով:

Արձանագրված թերությունները հնարավորությունների սահմաններում վերացված են, ձեռնարկվում են միջոցառումներ հետագայում թերացումները բացառելու ուղղությամբ:

Միաժամանակ տեղեկացվել է, որ դպրոցի ճաշարանի սրահը վերանորոգված է ԱՄՆ-ի դեսպանատան կողմից: Դպրոցը կահավորված է նոր գույքով, որը տրամադրել է Ճապոնիայի դեսպանատունը:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ԳԻՇԵՐՕԹԻՎ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1112-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության ներքո գտնվող՝ բնակչության սոցիալական պաշտպանության խնամքի գիշերօթիկ հաստատություններն ապահովում են երկարաժամկետ կամ որոշակի ժամկետով կացարան, շուրջօրյա լրիվ խնամք ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական տվյալների՝ ներկայումս (18.01.2016թ. դրությամբ) երեխաների խնամքի և պաշտպանության թվով 7 գիշերօթիկ հաստատություններում խնամվում է սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 660 երեխա:

ԲԿԱՄ փորձագետները 2015 թվականի սեպտեմբեր, նոյեմբեր ամիսներին կրկնակի այցեր են կատարել երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ մի շարք հաստատություններ (թվով 3 գիշերօթիկ հաստատություն):

1. **ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԳԻՇԵՐՕԹԻՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ**

Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության (այցը կատարվել է 15.09.2015թ.) սաները դժգոհություններ չեն հայտնել իրենց նկատմամբ վատ կամ խտրական վերաբերմունքից, ավելին՝ ուսումնասիրությունից պարզվել է, որ երեխաների նկատմամբ վատ վերաբերմունք դրսևորող աշխատակիցն ազատվել է աշխատանքից: Հաստատությունում իրականացված լոգարանների և սանհանգույցների վերանորոգման, մասնակի կոսմետիկ վերանորոգման, դասապատրաստման սենյակների պատշաճ կահավորման⁸⁵⁸, սննդակարգի բարելավման⁸⁵⁹, հիգիենիկ պարագաների պատշաճ տրամադրման, ժամկետանց դեղորայքի և ոջլոտության վերացման ուղղությամբ ձեռնարկվել են միջոցառումներ: ԲԿԱՄ փորձագետների կողմից 2015 թվականի նոյեմբերի 11-ին իրականացված այցի ժամանակ փաստվել է, որ, ի տարբերություն 2014 թվականի, երեխաներից մեկի հետ տարված աշխատանքներն ակնհայտ տվել են արդյունքներ (երեխան տառաձանաչ է, կարողանում է գրել և կարդալ): Մեկ այլ սանի մոտ արձանագրվել էր առաջընթաց այնքանով, որքանով դա կարող էր թույլ տալ վերջինիս կարողությունները (երեխայի կարողությունները գնահատվել են Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից):

Թեև երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում արձանագրվել են դրական մի շարք փոփոխություններ, այնուամենայնիվ, ԲԿԱՄ փորձագետներն արձանագրել են մի շարք խնդիրներ: Այսպես.

- հայտնաբերվել է չպիտակավորված կաթնաշոռ, մածուն, որոնց ժամկետներն անհայտ էին, ինչպես նաև նշված չէին արտադրողի տվյալները⁸⁶⁰:

- Երեխաներն առանձնագրույցների ընթացքում իրենց դժգոհությունն են հայտնել սպորտային խմբակի (բոնցքամարտ, ձյուդո և սամբո) մարզիչի փոխվելու կապակցությամբ, ում հետ երեխաները շատ կապված էին և վերջինիս հմտություններով էին պայմանավորվում իրենց արձանագրած հաջողությունները: Երեխաները ցանկանում էին շարունակել հաճախել նախկին մարզիչի խմբակ:

- Երեխաները դժգոհություն էին հայտնում նաև այն հանգամանքից, որ իրենց զրկել են բջջային հեռախոս ունենալու հնարավորությունից: Դժգոհությունը

⁸⁵⁸ Նախորդ այցերին (04.04.2014թ. և 26.11.2014թ.) արձանագրվել էր, որ երեխաները կանգնած դիրքով են կատարում գրառումները՝ համապատասխան գույքի սակավ լինելու պատճառով:

⁸⁵⁹ Նախորդ այցերին (04.04.2014թ. և 26.11.2014թ.) արձանագրվել էր ժամկետանց սնունդ:

⁸⁶⁰ ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1925-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 38-րդ կետի և «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված կանոնների և նորմերի 26-րդ կետի խախտում:

պայմանավորված էր նրանով, որ երեխաների հիմնական մասը տեղեկացված չէր տնօրինության նախաձեռնության՝ թվով 3 բջջային օպերատորների կողմից տրամադրված հեռախոսների մասին, որոնց միջոցով հնարավոր էր ապահովել հարազատների հետ կապը:

- Դեռևս մասնակի է լուծվել Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության սաների տարբեր տարիքային խմբերում մի քանի ոչ տառաճանաչ երեխաների խնդիրը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից նշված խնդիրների վերաբերյալ տեղեկացվել է, որ Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության պահեստապետին չափտակավորված կաթնամթերք ընդունելու համար հայտարարվել է խիստ նկատողություն, զգուշացում է տրվել նաև մատակարարին: Երեխաների կապն ընտանիքների հետ պահպանելու նպատակով ՎիվաՄելլ, Օրանժ և Բիլայն օպերատորների աջակցությամբ ապահովվել է շուրջօրյա հեռախոսից օգտվելու հնարավորություն: 2015 թվականի սեպտեմբերի մեկից երեխաները սպորտով զբաղվում են հաստատության սպորտդահլիճում: Աշխատանքներ են տարվում նաև սպորտգույք ձեռքբերելու համար:

Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տառաճանաչության խնդրի վերաբերյալ ՀՀ կրթության և գիտության նախարարությունից տեղեկացվել է, որ նախարարության 20.11.2015թ. թիվ 04/07.1/13940-15 գրությամբ հանձնարարվել է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնին՝ համագործակցելով Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության հետ կազմակերպել Մարդու իրավունքների պաշտպանի կողմից գրությամբ մատնանշված երեխաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում, անհրաժեշտության դեպքում աջակցել դպրոցներին՝ երեխաների հետագա կրթության համար կազմել անհատական ուսուցման պլաններ:

2. ԿԱՊԱՆԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության (այցը կատարվել է 17.09.2015թ.) սաները շեշտեցին, որ հանրակրթական դպրոցում առկա խտրական վերաբերմունքի դրսևորման խնդիրը ստացել է լուծում և նրանք որևէ դժգոհություն չունեն:

Միաժամանակ գիշերօթիկ հաստատությունում արձանագրվել են մի շարք խնդիրներ.

- բուժաշխատակիցները տեղեկացված չէին ժամկետանց դեղերի խոտանման կարգի և/կամ մեխանիզմների մասին (ըստ աշխատակիցների՝ ժամկետանց

դեղորայքը «թաղում են հողում»⁸⁶¹):

- Խոհանոցի ու ճաշարանի պատուհանները ցանցապատ չէին, ինչի պատճառով խոհանոցում ու ճաշարանում ճանճեր կային:

- Կաթնամթերք պահվող սառնարանում առկա էր մեծ քանակով չպիտակավորված մածուն: Պահեստապետի պնդմամբ՝ այն ստացել էին առավոտյան, սակայն տարաների վրա որևէ նշում չկար: Կաթնաշոռը նույնպես պիտակավորված չէր⁸⁶²:

- Շուրջ երկու տարի չեն կազմակերպվում ամառային ճամբարներ:

- Հաստատությունում լոգարանի վերանորոգման անհրաժեշտություն կար: Երեխաները հնարավորություն չունեին լոգարանից օգտվելու, ըստ անհրաժեշտության նրանց լոգանքը կազմակերպվում էր լվացարանային սենյակում, իսկ ոտքերը լվանում էին սառը ջրով: Խնդրի վերաբերյալ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարը տեղեկացրել էր, որ թեև վերանորոգման համար ունեն բոլոր տեսակի շինանյութերը, սակայն չեն կարողանում կազմակերպել վերանորոգման բուն աշխատանքները՝ աշխատողի վարձատրության բացակայության պատճառով:

- Երկրորդ հարկի աղջիկների զուգարանում օձառ և զուգարանի թուղթ չկար: Երեխաներն առանձնագրույցների ընթացքում նշում էին, որ իրենց զուգարանի թուղթ չի տրամադրվում: Տրամադրվել է օձառ և շամպուն, սակայն զգուշացվել, որ մինչ հունվար այլևս չի տրամադրվելու:

- Մտահոգիչ էր երեխաների կողմից հայտնված տեղեկությունն այն մասին, որ կան դայակներ, ովքեր երեխաների անկարգությունների համար սպառնում են, որ ականջները կպոկեն, խփում են և ըստ երեխաների՝ «քացու տակ են տալիս»: Միաժամանակ երեխաների հայտնած տեղեկության համաձայն՝ դայակներն ուշադիր չեն իրենց նկատմամբ, պատմում էին՝ «երբ գիշերամայրերը քնած են լինում, միացնում ենք բջջային հեռախոսները, պարում, երգում և ինչ ուզում անում ենք...»: Երեխաները հայտնում էին նաև իրենց դժգոհությունը բուժքույրի վերաբերմունքից, ով չի հավատում նրանց առողջության վերաբերյալ գանգատներին, իսկ փորացավի դեպքում ասում է՝ «գնա զուգարան կանցնի»:

- Երեխաները նշում էին, որ հոգեբանին իրենց խնդիրների մասին չեն հայտնում («հո հոգեկան հիվանդ չենք, որ իրա հետ խոսենք»): Ընդհանուր առմամբ՝ երեխաների մոտ անվստահություն կար անձնակազմի նկատմամբ, քանի որ իրենք չէին ցանկանում բողոքներ, դժգոհություններ հայտնել:

⁸⁶¹ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի և ՀՀ բնապահպանության նախարարի 2008 թվականի հունիսի 6-ի «Օգտագործման համար ոչ պիտանի դեղերի ոչնչացման կարգը և պայմանները հաստատելու մասին» թիվ 209-Ն հրամանով հաստատված կարգի պահանջների խախտում:

⁸⁶² ՀՀ կառավարության դեկտեմբերի 21-ի «Կաթին, կաթնամթերքին և դրանց արտադրությանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 1925-Ն որոշմամբ հաստատված կանոնակարգի 38-րդ կետի և ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» թիվ 32-Ն հրամանով հաստատված 2.3.1-02-2014 սանիտարական կանոնների և նորմերի 26-րդ կետի խախտում:

- Երեխաները մտահոգություն էին հայտնում հաստատությունում շարունակաբար տեղի ունեցող գողությունների, ինչպես նաև հաստատության վարչակազմի կողմից դրանք կանխելու ուղղությամբ միջոցներ չձեռնարկելու վերաբերյալ (օրինակ, կողապահարանները կարող են ապահովել կողպեքներով): Երեխաները պատմում էին, որ հաստատության մուտքն ազատ է, փաստացի չի վերահսկվում:

- Երեխաները բողոքում էին, որ հարևան թաղամասի տղաները, ովքեր հաստատության սաներ չեն, հաճախ գիշերվա ժամերին հաստատության անմիջական հարևանությամբ աղմկում են և կռվում («ռազբորկաներ»): Վարչակազմը, այս հարցին անդրադառնալով, պարզաբանել է, որ խնդիրը հնարավոր չէ կարգավորել, քանի որ հաստատության պահակը, ով քաջատեղյակ է այդ խնդրին, ճանաչում է այցելող երիտասարդներին, ապրում է նրանց հետ նույն բակում, և վերջինս իրեն չի կարող թույլ տալ դիմել ոստիկանություն (չի ցանկանում, չի համարձակվում «գործ տալ նրանց վրա»):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից նշված խնդիրների վերաբերյալ տեղեկացվել է, որ Կապանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում նկատողություն, խիստ նկատողություն և վերջին նախազգուշացումով խիստ նկատողություն է հայտարարվել հաստատության մի շարք աշխատակիցների՝ բուժքրոջը, դիետաբանին, պահեստապետին, տնտեսուհուն, դայակներին:

Վերացվել են արձանագրված մի շարք թերություններ, մասնավորապես, ցանցապատվել են ճաշարանի և խոհանոցի պատուհանները, իրականացվել է հաստատությունում խնամվող երեխաների ամառային հանգստի կազմակերպում՝ հանրապետական և մարզային նշանակության ճամբարներում, կարգավորվել են սանհանգույցի և տաք ջրամատակարարման հետ կապված խնդիրները, պատշաճ վերահսկողություն է իրականացվում հաստատության մուտքի նկատմամբ:

Աշխատանքներ են տարվում հաստատության բուժկետում ժամկետանց դեղորայք պահելու դեպքերը բացառելու, շենքի տարածքում միջանձնային կոնֆլիկտները («ռազբորկաները») վերացնելու և նմանատիպ այլ երևույթները կանխելու ուղղությամբ:

3. ՎԱՆԱՁՈՐԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԻՇԵՐՕԹԻՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության (այցը կատարվել է 10.09.2015թ.) սաները որևէ դժգոհություն չեն հայտնել ինչպես գիշերօթիկ հաստատության անձնակազմի վատ վերաբերմունքի, այնպես էլ հանրակրթական դպրոցներում խտրական վերաբերմունքի

դրսևորումների մասին⁸⁶³: Փոփոխվել էր նաև անձնակազմը և համալրվել էրիտասարդ ու փորձառու մասնագետներով: Գրենական պիտույքներն արդեն տրամադրում է հաստատությունը⁸⁶⁴:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հայտնվել է, որ Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության վերաբերյալ արձանագրված դրական փոփոխությունները նախարարությունում նույնպես նկատելի են:

ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐ

Արտահերթ զեկույցում բարձրացրած հարցերի հիման վրա կատարվել են օրենսդրական ոլորտի բարեփոխումներ.

1. 2014 թվականին կատարված ուսումնասիրությունների ընթացքում հարց էր առաջացել ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի ապրիլի 9-ին թիվ 874-Ա հրամանով սահմանված բուժկետի սարքավորումներով և գործիքներով հագեցվածությանն առնչվող և ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի «Հանրակրթական դպրոցների կառուցվածքի և պահպանման» թիվ 2.III.4.2... սանիտարական կանոնները հաստատելու մասին» թիվ 82 հրամանով սահմանված կանոններով հաստատված բժշկական առանձնասենյակների (բուժկետում) սարքավորումների և գործիքների ցանկին վերաբերող դրույթների հարաբերակցության վերաբերյալ:

Արդյունքում, ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 44-Ն հրամանով հաստատվել է նախադպրոցական կամ հանրակրթական ուսումնական հաստատության բուժկետ/կաբինետի անհրաժեշտ դեղերի և բժշկական նշանակության ապրանքների ցանկը, իսկ դպրոց-նախադպրոցական հաստատությունների բուժկետ/կաբինետ սարքավորումների և բժշկական գործիքների ցանկը նախատեսվել է ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի «Պոլիկլինիկաների (խառը, մեծահասակների և մանկական), առանձին մասնագիտացված կաբինետների, ընտանեկան բժշկի գրասենյակների, բժշկական ամբուլատորիաների, գյուղական առողջության կենտրոնների, բուժակ-մանկաբարձական կետերի, կանանց կոնսուլտացիաների և հիվանդանոցային

⁸⁶³ Նախորդ այցին (24.10.2014թ.) երեխաները պատմել էին իրենց նկատմամբ հաստատության անձնակազմի կողմից վատ վերաբերմունքի և հանրակրթական դպրոցներում խտրական վերաբերմունքի դրսևորումների մասին:

⁸⁶⁴ Նախորդ այցին (24.10.2014թ.) արձանագրվել էր, որ երեխաները իրենց տրվող գումարներից վճարում են տետրերի համար:

(մասնագիտացված) բժշկական օգնության ու սպասարկման համար անհրաժեշտ տեխնիկական և մասնագիտական որակավորման պահանջներն ու պայմանները հաստատելու մասին» թիվ 1936-Ն որոշմամբ սահմանված պահանջներով:

2. 2014 թվականին կատարված ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել էր, որ երեխաները, փաստացի գտնվելով երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում, շարունակում էին բժշկական սպասարկում և օգնություն ստանալ իրենց բնակության վայրի ամբուլատոր բժշկական հաստատությունում, որի արդյունքում բժշկական սպասարկումը և օգնությունն արդյունավետ չէր կազմակերպվում:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ ընդունվել է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1112-Ն որոշումը, որով սահմանվել է խնամք տրամադրելու համար դիմելու կարգը՝ համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների միասնական ընդունարանների ստեղծման լույսի ներքո, հստակ սահմանվել է խնամքի տրամադրման մասին որոշում կայացնելը, խնամքի ձևերն ու տեսակները, տրամադրող հաստատությունների տիպերը, տարբեր կազմակերպությունների լիազորությունները, տեղեկատվության փոխանակման կարգը, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններին և սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններին ներկայացվող ընդհանուր պահանջները: